ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՆԸՆԴՄԵՋ ՇՂԹԱՆ ԴԱՐԵՐԻ ԽՈՐՔԻՑ ՄԻՆՉԵՎ XXI դ. ՍԿԻԶԲ

ՊԱՏՄԱԲԱՆ-ՄԻՋԱԶԳԱՅՆԱԳԵՏԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2020

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Հ 854

Տպագրվում է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի
արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Գիտական խմբագիրներ՝
ԱՐՇԱԿ ՓՈԼԱԴՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր, արտակարգ և լիազոր դեսպան,
արաբագետ-քրդագետ
ԱՐՄԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու,
արտակարգ և լիազոր դեսպան, արաբագետ

Նիկոլայ Հովհաննիսյան
Հ 854 Հայոց պատմության անընդմեջ շղթան դարերի խորքից մինչև XXI դ. սկիզբ (պատմաբան-միջազգայնագետի դիտարկումներ) Ն. Հովհաննիսյան:– Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 428 էջ:

Սույն ուսումնասիրության մեջ **պատմական կտրվածքով** քննարկվում են Հայաստանի զարգացման փուլերը և հիմնահարցերը, նրա՝ անկախ և սուվերեն պետություն ու միջազգային հանրության լիիրավ անդամ դառնալու ֆենոմենը և ողջ հայության համար այդ երևույթի համաշխարհային պատմական իմաստն ու նշանակությունը: Կարևորվում են պատմական դժվար, միաժամանակ փառապանծ ու հերոսական ուղի անցած Հայաստան աշխարհի տեղն ու դերը միջազգային համակարգում: Լուսաբանվում են Հայաստանի աշխարհաքաղաքական, ռազմաստրատեգիական, տնտեսական և արևելագիտական քաղաքականության արդիական ասպեկտները:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-5-8080-1424-4
© Հովհաննիսյան Ն., 2020

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Համաշխարհային պատմությունն անհնար է պատկերացնել առանց հայոց պատմության, և դա ոչ միայն այն պատճառով, որ հայերն աշխարհի ամենահին ժողովուրդներից են, իսկ նրանց պատմությունն աշխարհի ամենահին ժողովրդի պատմությունն է, այլև այն պատճառով, որ հնագույն մի շարք ժողովուրդներ, որոնք եղել են հայերի ժամանակակիցները, ինչպես շումերները, բաբելոնացիները, ասորիները և այլն, տարբեր պատճառներով անհետացել են պատմության թատերաբեմից, կամ մնացել են նրանց լոկ բեկորները, ինչպես ասորիները: Իսկ հայերը շարունակել են իրենց պատմական գործընթացը մերթ որպես պետականություն, մերթ որպես կայսրություն, երբեմն կորցրել են իրենց պետականությունը, այնուհետև վերականգնել այն, նորից կորցրել, սակայն նորից վերականգնել և դարեր շարունակ այդպես: Հայերը մշտապես եղել և մնում են քաղաքակիրթ ժողովուրդ, պետութենաստեղծ ազգ, համընթաց քայլել են նորահայտ ժողովուրդների հետ, նրանց շատ բան սովորեցրել անտիկ աշխարհից և անտիկ ժողովուրդներից, և իրենք էլ իրենց հերթին նրանցից, այդ նորերից, շատ բան վերցրել:

Հանրահայտ ճշմարտություն է, որ աշխարհը մի բան էր մինչև Հիսուս Քրիստոսի հայտնվելը, բոլորովին այլ բան քրիստոնեության հայտնվելուց հետո:Աշխարհն այդպիսի ցնցում չէր տեսել: Բայց դա սովորական ցնցում չէր: Աշխարհն արմատապես փոխվեց: Նվաստս հպարտ է, որ ինքը մի ժողովրդի զավակ է, որը մ.թ. 301 թվականին աշխարհում առաջինը պաշտոնապես ընդունեց քրիստոնեությունը և դարձավ աշխարհի առաջին քրիստոնեադավան ժողովուրդը, առաջին քրիստոնյա երկիրը, առաջին քրիստոնյա պետությունը: Նա դարձավ քրիստոնեության դրոշակակիրը և ջահակիրը՝ առաջ անցնելով աշխարհի բոլոր ժողովուրդներից:

Դա հրաշք էր:

Եվ հայությունը տասնյոթ դար այդ հրաշքի արժանապատիվ կրողն է:

Սույն ուսումնասիրության մեջ **պատմական կտրվածքով** քննարկվում են Հայաստանի զարգացման փուլերը և հիմնահարցերը, նրա անկախ և սուվերեն պետություն ու միջազգային հանրության լիիրավ անդամ դառնալու ֆենոմենը և ողջ հայության համար այդ երևույթի համաշխարհային պատմական իմաստն ու նշանակությունը: Կարևորվում են պատմական դժվար, միաժամանակ փառապանծ ու հերոսական ուղի անցած Հայաստան աշխարհի տեղն ու դերը միջազգային համակարգում: Հայությունը, լինելով **պետութենաստեղծ ազգ,** շատ հարցերում ուսուցչի դեր է կատարել նոր կազմավորված պետությունների համար: Լուսաբանվում են Հայաստանի աշխարհաքաղաքական, ռազմաստրատեգիական, տնտեսական և արևելագիտական քաղաքականության արդիական ասպեկտները:

Այդ հարցերը քննարկվում են աշխատության Առաջին՝ **«Նախապատմություն. Պատմագիտական հայացք»** մասում:

Աշխատության Երկրորդ մասում՝ **«Հայաստանը անկախ պետականության մատույցներում»,** քննարկվում են Հայաստանի տեղն ու դերը համաշխարհային ընտանիքում, աշխարհի ազդեցիկ պետությունների, միջազգային կազմակերպությունների, ականավոր պետական-քաղաքական գործիչների և մասնագետ գիտնականների դիրքորոշումը Հայաստան աշխարհի և հայոց պետության հանդեպ, լուսաբանվում նրանց փոխհարաբերությունները:

Աշխատության Երրորդ մասի վերնագիրն է՝ **«Խորհրդային Միության փլուզումը և Հայաստանի անկախության վերականգնումը: Անկախ Հայաստանը միջազգային հարաբերությունների հոլովույթում: Հայ արևելագետի վկայությունները և գրառումները: 1990-2018թթ.ապրիլ»:**

Նախատեսվում է հայ ընթերցող հասարակության համար:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔ

Մ ՈՒ Տ Ք

Պատմության թատերաբեմում հազարամյակներ առաջ հայտնված ժողովուրդներից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները և յուրահատկությունները: Այդ ժողովուրդները ոչ միայն մաքառել են իրենց գոյապահպանման համար, այլև ձգտել դառնալ կարևոր քաղաքական և ռազմական գործոն և նշանակալի դեր խաղալ միջազգային հարաբերություններում: Այդ խոհերն են ակամայից առաջանում, երբ քննարկում ենք հինավուրց ժողովուրդների պատմության ընթացքը և նրանց զարգացման օրինաչափությունները:

Դրա դասական օրինակն է Հայաստանը:

Ես հարկ եմ համարում այդ տեսանկյունից դիտարկել հայոց պատմությունը, այն դիտարկել որպես մեկ ամբողջություն, որպես մեկ միասնական շղթա հնագույն շրջանից, դարերի խորքից մինչև Հայաստանի Երրորդ հանրապետություն, լուսաբանել նրա առաջացման և գոյության, արդի միջազգային հարաբերություններում նրա տեղի ու դերի հիմնախնդիրները: Շատ կարևոր է և վերին աստիճանի հետաքրքիր հայոց պատմությունն ուսումնասիրել և ընթերցողին ներկայացնել գենետիկական կապակցության մեջ, երբ պատմական դարաշրջանները փոխարինում են մեկը մյուսին: Հայ ժողովրդի պատմության կարևոր յուրահատկություններից մեկն այն է, որ նա ներկայանում է իր տիրոջը՝ համայն հայությանը, ոչ թե կցկտուր կամ տրոհված, այլ ամբողջական, լիակատար, ավելի հետաքրքիր և ավելի հասկանալի ու ըմբռնելի: Նման մոտեցման դեպքում, ըստ էության, անհետանում են անհասկանալի դրույթները և երևույթները, և պատմությունը ներկայանում է իր ամբողջության մեջ, ավելի լիակատար և ավելի ըմբռնելի: Ահա այսպիսին է մեր մոտիվացիան՝ Հայաստանի պատմության դիտարկումը մեկ, միևնույն շղթայի մեջ, շղթայի բոլոր օղակների ներառումով, այդ թվում և նրա արևելագիտական ասպեկտը:

Նման մոտեցման դեպքում ավելի հասկանալի և ընդունելի են լինում հայերի վերելքներն ու վայրէջքները, հաղթանակները և պարտությունները, նրա տեղը, դերը և կարևորությունը համաշխարհային պատմության մեջ:

Հայերի գոյությունը և զարգացումը պատմական առումով մի անընդմեջ շղթա է, որի հիմնական օղակներն են եղել նրա՝ որպես էթնոսի, ժողովրդի և ազգի, առաջացումը և ձևավորումը, պետականության, հատկապես հայկական կայսրության ստեղծումը, որի հիմնադիր կայսր Տիգրան Մեծը կրել է ոչ ամեն մի թագակրին մատչելի «Արքայից Արքա» փառահեղ տիտղոսը, Հայաստանի հզորության գագաթնակետին հասնելը, նաև պարտությունները և ձախողումները, կրկին հաղթանակների և նվաճումների հասնելը, մրցունակության ընդունակ պետական-քաղաքական կառույցների ստեղծումը, ռազմական կարողությունները և անպարտելի Հայոց այրուձին, իրեն բնորոշ պատվավոր տեղի գրավումը տարբեր ժողովուրդների շարքերում և միջազգային հարաբերություններում, և այսպես շարունակ: Ահա թե ինչու իրավունք ունենք ասելու, որ Հայկ Նահապետի ստեղծած Հայաստանը և նրա պատմությունը հնագույն ժամանակներից մինչև Հայաստանի Երրորդ հանրապետություն կազմում են մի ամբողջություն: Մենք ավելի քան հավատացած ենք, որ Հայաստան աշխարհը հավերժորեն գրանցված է Բարձրյալի Գոյության Մատյանում:

Հարգելի՛ ընթերցող, թող ներվի ինձ, եթե ասեմ, որ ես մեկն եմ այն սակավաթիվ պատմաբաններից, որ բարոյական իրավունք ունի քո դատին ներկայացնելու վերոշարադրյալը, քանի որ նվաստս հեղինակ է մոտ 100 մենագրությունների և 485 հոդվածների, որոնք հրատարակվել են աշխարհի մոտ 25 պետություններում՝ Հայաստանում, ԱՄՆ-ում, Արաբական Միացյալ Էմիրություններում, Անգլիայում, Գերմանիայում, Բուլղարիայում, Եգիպտոսում, Թուրքիայում, Իտալիայում, Իրանում, Իրաքում, Իսրայելում, Լիբանանում, Կանադայում, Հորդանանում,

Հունաստանում, Հունգարիայում, Ճապոնիայում, Չինաստանում, Ռուսաստանում, Ռումինիայում, Սիրիայում, Ֆրանսիայում, Քուվեյթում, Վրաստանում և այլ երկրներում: Այդ աշխատությունները հրատարակվել են վերոնշյալ երկրների լեզուներով, նրանց նախաձեռնությամբ և հովանավորությամբ:

Ոչ բոլոր ժողովուրդներն են, անգամ նախկինում հզոր պետականություն և ինքնատիպ մշակույթ ստեղծած, որ դիմացել են պատմության քննությանը և հարվածներին: Նրանցից մի ստվար խումբ տարբեր հանգամանքների բերումով անդառնալիորեն անհետացել է պատմության թատերաբեմից՝ դառնալով միայն հուշ պահպանված սեպագիր արձանագրություններում, իմաստագրերում, գրավոր մատյաններում կամ մշակութային կոթողներում: Դրա վառ օրինակներն են պատմության փորձությանը չդիմացած և ընդմիշտ անհետացած շումերները, Խեթական կայսրությունը, Միտանին, Ասորեստանը, Բաբելոնը, Հռոմեական և Բյուզանդական կայսրությունները և այլ մեծ ու փոքր, հզոր ու տկար պետական միավորումներ, որոնք ժամանակին նշանակալի, երբեմն նույնիսկ վճռորոշ դեր են խաղացել Առաջավոր Ասիայի և ընդհանրապես համաշխարհային պատմության մեջ:

Բայց և դրանց կողքին հայտնի է ժողովուրդների մի բույլ, որը, մեկնելով դարերի խորքից, դիմանալով բազում դաժան փորձությունների, ապացուցել է իր կենսունակությունը, նվաճել գոյատևելու իրավունքը և պատմության ծանր բեռը ուսերին՝ հասել մինչև մեր ժամանակները:

Այդ բույլի ամենափայլուն և օրգանական մասն են կազմում հայերը, Հայաստան աշխարհը և հայոց պետականությունը: **Հայը, ինչպես վկայում է պատմությունը, պետութենաստեղծ ազգ է:**

Հնուց ի վեր բոլոր ժողովուրդների առջև կանգնած է եղել արևի տակ տեղ գրավելու բախտորոշ գերխնդիրը, որը ժամանակակից տերմինաբանությամբ նշանակում է ոչ այլ ինչ, եթե ոչ գործոնի խնդիրը: Իսկ քանի որ բախտը, ինչպես վկայում է պատմությունը, մշտապես փոփոխական է ոչ միայն անհատների, այլև

ժողովուրդների և պետությունների համար, ուստի և փոփոխական է նաև միջազգային գործոնի հարցը: Տվյալ պետությունը կամ ժողովուրդը մերթ կարևոր գործոն է, որի հետ հարկադրված հաշվի են նստում այլ պետություններ, մերթ նա կորցնում է իր նշանակությունը, նվազում է նրա՝ որպես գործոնի ազդեցությունը և անգամ անտեսվում նրա գոյությունը: Այս վերջին տարբերակն ի հայտ է գալիս, երբ այդ պետությունը զանազան հանգամանքների բերումով, առավելապես այլ պետության կողմից նվաճվելու դեպքում, դադարում է գոյություն ունենալ:

Հայաստանը՝ աշխարհի հնագույն երկրներից և պետություններից մեկը, քանիցս հարկադրված է եղել լուծել իր գործոն լինելու հարցը, որն առաջին հերթին կապված է անկախ պետություն լինելու հանգամանքի հետ:

Հայաստանը պատմության ընթացքում, ի տարբերություն աշխարհի ժողովուրդների, երկրների և պետությունների ճնշող մեծամասնության, ոչ միայն եղել է հենց այնպես, սովորական պետություն, այլև կայսրություն, ինչպիսին էր Տիգրան Մեծի կայսրությունը մ.թ.առաջին դարում: Մատների վրա կարելի է հաշվել այն ժողովուրդներին և երկրներին, որոնք երբևիցե եղել են կայսրություն:

Կարծում ենք, որ հայ պատմաբանները պետք է իրենց ուշադրության կենտրոնում պահեն Հայաստանի՝ կայսրություն լինելու բացառիկ պարագան, մշտապես հայերին ներարկեն, ներշնչեն և թույլ չտան մոռացության մատնել հաղթանակի և հզորության բարձրակետ հանդիսացող այդ վսեմ պարագան, մշտապես հպարտանան պատմական այդ բացառիկությամբ: Ուստի կարծում ենք, որ տրամաբանական կլինի Հայաստանի պատմությունը հնագույն շրջանից մինչև Հայաստանի Երրորդ հանրապետության դարաշրջանը ներառյալ դիտարկել, լուսաբանել և ներկայացնել որպես մեկ ամբողջություն, որպես մեկ շղթա՝ իր տարաբնույթ օղակներով հանդերձ, և այդ իրողություններից քննարկել նրա՝ միջազգային գործոն լինելու հարցը, հայոց տեղը

համաշխարհային պատմության մեջ՝ ո՛չ ավելացնելով և ո՛չ էլ պակասեցնելով ուշադրության արժանի այդ պատմական երևույթը:

Ահա թե ինչու մենք ընդգրկել ենք պատմական մի այդպիսի վիթխարի ժամանակաշրջան:

Համոզված ենք, որ դա կնպաստի ճիշտ ըմբռնելու և մեկնաբանելու Հայաստանի Երրորդ հանրապետության առջև կանգնած արդիական խնդիրները և գտնելու դրանց օպտիմալ լուծումների բանալին:

1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՆԻ ԻՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ

Գործոնի հարցն անխուսափելիորեն կանգնում է այն բոլոր երկրների առջև, որոնք ոտք են դնում քաղաքական ասպարեզ և կամա թե ակամա դառնում տեղական (լոկալ), շրջանային (ռեգիոնալ) և միջազգային (գլոբալ) ռազմաքաղաքական համակարգերի բաղկացուցիչ մաս: Եվ եթե «գործոնի» իմաստը բացահայտելու լինենք սովորական բառերով, ապա դա նշանակում է որոշել տվյալ պետության տեղն ու դերը միջազգային համակարգում և նրա ազդեցության ու ներգործության աստիճանն այդ համակարգի, նրա ձևավորման և հոգևոր-մշակութային գործընթացների վրա: Դա թե՛ տեսական և թե՛ գործնական խնդիր է, որը դամոկլյան սրի նման կախված է անխտիր բոլոր պետությունների գլխին, անկախ նրանց մեծ ու փոքր, հզոր կամ թույլ լինելուց: Այլ կերպ ասած, դա ուղղակիորեն առնչվում է այն խնդրի հետ, թե տվյալ պատմական շրջանում պետությունները, առաջին հերթին աշխարհի հզոր և մեծ տերությունները, որքանով են հաշվի առնում մյուս, ոչ մեծ պետությունների շահերը, ինչ հիմքի վրա են կառուցվում նրանց փոխհարաբերությունները, և ինչ աստիճանի է յուրաքանչյուր պետության գործնական մասնակցության չափն աշխարհի գործերում:

Այդպես է եղել հին ժամանակներում, այդպես է նաև մեր օրերում:

Պատմությունը գալիս է հաստատելու, որ գործոնի աստիճանը և արդյունավետությունը միշտ չէ, կամ համարյա ոչ միշտ է ուղղակի համեմատական տվյալ պետության տարածքային ծավալներին, ռազմական և տնտեսական ներուժին, ազգաբնակչության թվաքանակին և այլն: Դրանք, անշուշտ, խիստ կարևոր ցուցիչներ են, որոնք երբեմն կարող են դառնալ վճռորոշ: Սակայն, այդուհանդերձ, դրանք ինքնաբերաբար չեն կարող ապահովել «բարձր դիրք» և դառնալ վճռորոշ լծակներ միջազգային համակարգում՝ առանց հաշվի առնելու այլ գործոններ կամ

չափորոշիչներ: Մենք նկատի ունենք տվյալ պետության աշխարհագրական դիրքը, նրան շրջապատող քաղաքական միջավայրը, ուժերի փոխհարաբերությունը և հավասարակշռությունը երեք՝ լոկալ, ռեգիոնալ և գլոբալ մակարդակներով, ռազմաքաղաքական բլոկների առկայությունը, բարենպաստ և կանխարգելիչ ազդակների գոյությունը և այլն, և այլն:

Շատ կարևոր են նաև տվյալ երկրներում, կոնկրետ տվյալ պատմական ժամանակաշրջանում, տիրող ներքին իրադրությունը, քաղաքական կայունության աստիճանը, համախմբվածության և կոնսոլիդացիայի մակարդակը:

Եվ, վերջապես, գործոնի արդյունավետությունը զգալիորեն կախված է պետության ղեկավարության հմուտ, բանիմաց, խելացի և ճկուն, կարելի է ասել իմաստուն քաղաքականությունից, նրա հեռատեսությունից, մանևրելու և ճիշտ դաշնակիցներ ու գործընկերներ ընտրելու ունակությունից:

Միայն այս բոլոր ազդակների և գործոնների համադրումից ու զուգադրումից կարելի է ստանալ այս կամ այն պետության միջազգային գործոն լինելու իրական պատկերը և գաղափար կազմել նրա հնարավորությունների սահմանների մասին:

Այս տեսադրույթներն ապացուցելու համար անհրաժեշտ ենք գտնում բերել մի շարք օրինակներ պատմական տարբեր դարաշրջաններից և վերցված տարբեր ժողովուրդների ու պետությունների, այդ թվում և հայերի ու Հայաստանի պրակտիկայից:

Դասական մոտեցման դեպքում, եթե այն խարսխված է ամեն ինչ տարածքային և ազգաբնակչության մեծությունից կամ թվաքանակից բխեցնելու սկզբունքի վրա, ոչ օրինաչափ, նույնիսկ անհեթեթ է թվում Ալեքսանդր Մակեդոնացու ֆենոմենը: Դուրս գալով Հունաստանի մի փոքրիկ նահանգից՝ Մակեդոնիայից, նա, որ մարմնավորում էր հանճարեղ զորավարի, ստրատեգի և պետական այրի բոլոր հատկանիշները, կարողացավ ստեղծել մի վիթխարի կայսրություն, որը Հունաստանից ձգվում էր մինչև

Հնդկաստան: Նա իր ճանապարհին կործանեց բազում երկրներ և թագավորություններ, այդ թվում և Աքեմենյան Պարսկաստանը, որն իր տարածքով, ազգաբնակչությամբ և ներուժով ավելի մեծ էր, քան Մակեդոնիան Հունաստանի հետ միասին: Ալեքսանդրի օրոք հելլենական պետությունը դարձավ աշխարհի ամենազորեղ և անմրցելի գործոն, որը, ըստ իր հայեցողության, տնօրինում էր բազում ժողովուրդների և երկրների ճակատագիրը:

Այս օրինակը լավագույն ապացույցն է այն թեզի, որ գործոնի վճռական լինելու հանգամանքն ուղիղ համեմատական չէ տվյալ պետության բացառապես տարածքային չափերին և բնակչության քանակին, քանի որ այդ պարամետրերով, օրինակ, Հունաստան-Մակեդոնիան զիջում էր Աքեմենյան կայսրությանը:

Չինաստանը դեռևս XX դարի սկզբներին բոլոր տվյալներն ուներ դառնալու մեծ տերություն և ձեռք բերելու գործոնի ամենաբարձր աստիճանակարգ միջազգային հարաբերություններում: Նրա տարածությունն այնքան է, որքան ամբողջ Եվրոպայինը, բնակչության թվաքանակով նա վաղուց աշխարհում գրավում է առաջին տեղը, ունի անսպառ բնական հարստություններ և այլն: Սակայն այս վիթխարի հսկան չկարողացավ դիմակայել ճապոնական ագրեսիային: Ճապոնիան, որը Չինաստանի համեմատ կարող է համարվել փոքր պետություն, 1930-ական թվականներին և Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում կարողացավ գրավել Չինաստանի կենսատարածքները և այնտեղ իր ռազմաքաղաքական տիրապետությունը հաստատել: Այսպիսի պայմաններում ավելորդ է խոսել Չինաստանի՝ որպես միջազգային հարաբերությունների շատ թե քիչ էական գործոն լինելու մասին: Նա ազատագրվեց ճապոնական օկուպացիայից և վերածվեց կարևոր միջազգային գործոնի միայն Ճապոնիայի ջախջախումից հետո, որն իրականացվեց ԱՄՆ-ի, ԽՍՀՄ-ի, Մեծ Բրիտանիայի և հակաֆաշիստական կոալիցիայի մյուս անդամ-երկրների համատեղ ջանքերով:

Չինաստանի օրինակը ևս խոսում է հօգուտ այն թեզի, որ

գործոնի հարցն ուղիղ համեմատական չէ տվյալ պետության տարածքի և ազգաբնակչության չափերին: Չինաստանի պարագայում 1920-1930-ական թվականներին շատ կարևոր էր ներքին կոնսոլիդացիայի և համախմբվածության հարցը, որը բացակայում էր ասիական այդ գիգանտում: Չինաստանը թուլացել էր ներքին պառակտվածության և կենտրոնական իշխանության տկարության պատճառով, բազմաթիվ մեծ ու փոքր տեղական կառավարիչների գոյությամբ, որոնք անընդհատ պատերազմներ էին մղում միմյանց դեմ: Չինաստանը տնքում էր չինական կոմունիստների և գոմինդանականների քաղաքացիական պատերազմի բեռի տակ, որն ուժասպառ էր արել նրան: Դրանից օգտվեց Ճապոնիան, որը կազմակերպվածության, կարգապահության և նպատակասլացության առումով ավելի բարձր, կարելի է ասել, նախանձելի մակարդակ էր ներկայացնում:

Եվ, վերջապես, Իսրայելի օրինակը, որը բոլոր պարամետրերով դասվում է փոքր պետությունների շարքում: Նա աշխարհի քարտեզի վրա որպես անկախ պետություն հայտնվեց 1948 թվականին Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի օգնությամբ և ԽՍՀՄ-ի աջակցությամբ: Նրա տարածքը 20 հազար քառակուսի կիլոմետր է, որը կազմում է Հայաստանի Հանրապետության տարածքի ընդամենը երկու երրորդը, իսկ բնակչությունը՝ մոտ վեց միլիոն: Չնայած այդ հանգամանքին՝ ընդամենը 70 տարի առաջ ստեղծված այս փոքր պետությունն այսօր էական ազդեցություն ունի Մերձավոր և Միջին Արևելքում և միջազգային հարաբերություններում: Դրանում կարևոր դեր է խաղում աշխարհով մեկ սփռված և հիանալի կազմակերպված հրեական բազմամիլիոն սփյուռքը, որին հաջողվել է իր ցանցերի մեջ ներքաշել տարբեր երկրների ականավոր պետական և քաղաքական գործիչներին, կառույցներին, ազդեցիկ կազմակերպություններին, միություններին և ասոցիացիաներին և նրանց ծառայեցնել ի շահ Իսրայելի: Հրեական սփյուռքի կարևորության հետ միասին նա շատ ազդեցիկ հզորագույն գործիք է Իսրայելի ձեռքում և նրա միջազ-

գային ազդեցության զորավոր հենարաններից մեկն է:

Իսրայելի օրինակը, մասնավորապես հրեական սփյուռքի առկայությունը, ուսանելի շատ բան է պարունակում Հայաստանի և հայկական սփյուռքի համար: Սփյուռքի առումով Իսրայելը և Հայաստանը կարելի է համարել համարժեք մեծություններ, սակայն ֆինանսաբանկային ցանցի առումով Հայաստանն էականորեն զիջում է Իսրայելին: Այդ համակարգն է Իսրայելը վերածել համաշխարհային առումով ազդեցիկ երկրի:

Այս և բազմաթիվ այլ օրինակներ շատ կարևոր և ուսանելի դասեր են բոլոր ոչ մեծ երկրների համար, որոնք տառապում են ոչ լիարժեքության բարդույթով, մտատանջ են, թե «Մենք ի՞նչ ենք ներկայացնում, որ մեզ հետ հաշվի նստեն», և կամ «Աշխարհի ճակատագիրը մի քանի մեծ և հզոր պետությունների ձեռքում է» և այլն: Կարծում ենք, որ նման մոտեցումը ճիշտ չէ, քանի որ դա բխում է գործոնի հարցը բացառապես ուժի դիրքերից լուծելու և գնահատելու ելակետից՝ անտեսելով այլ հանգամանքներ, որոնց մասին նշեցինք վերևում:

2. ՊԱՏՄԱՀԱՅՐ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՀԱՆՃԱՐԵՂ ԲԱՆԱՁԵՎԸ

Յուրաքանչյուր պետություն իր ուրույն տեղը և գործոնի չափն ու բաժինն ունի միջազգային հարաբերություններում: Դա շատ նրբորեն է նկատել Պատմահայր Մովսես Խորենացին, որն արտահայտված է նրա արդեն դասական դարձած բանաձևում՝ «Թեպետ մենք փոքր ածու ենք և թվով շատ սահմանափակ ու զորությամբ թույլ և շատ անգամ օտար թագավորությունների կողմից նվաճված, բայց և այնպես մեր երկրում էլ գրելու և հիշատակելու արժանի շատ սխրագործություններ են կատարվել»[1]:

[1] **Մովսես Խորենացի**, Պատմություն Հայոց: Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրություններն ակադեմիկոս **Ստ. Մալխասյանցի**, Երևան,

Դժվար չէ այստեղ կռահել, ժամանակակից քաղաքական տերմինաբանությամբ ասած, Հայաստանի յուրահատուկ գործոն լինելու հանգամանքը: Հայոց Պատմահոր այս հանճարեղ բանաձևը բանալի է հայոց՝ մեկը մյուսին հաջորդած դինաստիաների և թագավորությունների՝ Երվանդունիների, Արտաշեսյանների, Արշակունիների և Բագրատունիների, պատմական նշանակությունը և կարևորությունը ճշգրտորեն գնահատելու և արժևորելու համար՝ հենց գործոն լինելու տեսանկյունից: Հայաստանի բազմադարյան պատմությունը գալիս է փաստելու այս անհերքելի, այսինքն՝ գործոն լինելու իրողությունը: Պատմահայրն ինքը «Հայոց պատմության» մեջ ներառած բազմաթիվ օրինակներով տալիս է դրա ապացույցը:

Նշենք միայն մեկը կապված Մեդիայի՝ Մարաստանի և Հայաստանի համագործակցության հետ ընդդեմ Ասորեստանի: Մովսես Խորենացին նշում է. «Սկայորդուց ծնված Պարույրն առաջին անգամ թագավորում է Հայաստանում, օգնում է մարացի Վարբակեսին՝ Սարդանապալից թագավորությունը վերցնելու»[2]: Իր այդ ծրագիրը Վարբակեսն ի վիճակի չէր իրագործելու միայնակ, ուստի նա «իր կողմն է գրավում մեր քաջ նախարար Պարույրին՝ խոստանալով նրան թագավորության շուք ու ձև»[3]: Իր կողմը գրավելով Պարույր Սկայորդուն և այլ քաջերի՝ Վարբակեսը «այս կերպով Սարդանապալից թագավորությունը գրավելով՝տիրում է Ասորեստանին և Նինվեին»[4]:

Համաշխարհային-պատմական նշանակություն ունեցող այս իրադարձությունը տեղի է ունեցել մ.թ.ա. 612թ., որի հետևանքով ստեղծվեց ուժերի ստրատեգիական նոր դասավորություն Առաջավոր Ասիայում: **Քաղաքական կենտրոնը Միջագետքից և սեմական աշխարհից տեղափոխվեց Պարսկաստան և**

«Հայաստան» հրատարակչություն, 1968, էջ 70:

[2] Նույն տեղում, էջ 106:

[3] Նույն տեղում, էջ 107:

[4] Նույն տեղում:

արիական աշխարհ:

Խորենացու այս զողտրիկ պատմությունից երևում է այն նշանակալի դերը, որ Հայաստանն ունեցել է այդ ժամանակ, այլապես մեդացի Վարբակեսը չէր ջանա իր կողմը գրավել Պարույր Սկայորդուն և նրան խոստանալ թագավորական շուք ու ձև: Միաժամանակ կարելի է եզրակացնել, որ Հայաստանը Նինվեի անկումից հետո դառնում է նոր ձևավորված աշխարհաքաղաքական համակարգի ազդեցիկ բաղադրամասը:

X X X

Ըստ Պատմահայր Մովսես Խորենացու՝ հայ ժողովրդի պատմության սկիզբն է համարվում մ.թ.ա. 2492թ., երբ հայ ժողովրդի անվանադիր նախահայրը՝ Հայկ Նահապետը, Հայոց ձորում հաղթեց Ասորեստանի թագավոր Բելին և անկախություն նվաճեց:

Ըստ ավանդության՝ Հայոց անվանադիր նախնին **Հայկն է,** և նրա սերունդները նրա անունով կոչվել են **Հայկազունք, հայք, հայեր, իսկ երկիրը՝ Հայոց աշխարհ**: Հետագայում՝ միջնադարում, «Հայ» արմատին ավելանում է իրանական ծագմամբ **«ստան»** վերջածանցը, որը նշանակում է «տեղանք»: «Հայ» արմատի և «տեղանք» վերջածանցի միացումից առաջանում է մեր երկրի նոր անվանակոչումը՝ «Հայաստան»: Բացի Հայաստանից, կան նաև մի շարք այլ երկրներ, որոնց անվանակոչման վերջածանցը նույնպես իրանական «ստանն» է, ինչպես, օրինակ՝ Հնդկաստան, Պակիստան, Չինաստան, Ռուսաստան, Պարսկաստան, Ղազախստան, Ղրղզստան, Տաջիկստան, Թուրքմենստան, Ուզբեկստան և այլն:

Իսկ «Արմինա» անունը՝ հունական արտասանությամբ «Արմինիա», ինչպես փորագրված է Բեհիսթունի արձանագրությունում, առաջացել է հայկական «Արմե» ցեղի անվանումից:

3. «ՏԻԳՐԱՆ ՄԵԾՆ ԱՍԻԱՅԻ ԱՄԵՆԱՄԵԾ ԱՐՔԱՆ Է - ՑԻՑԵՐՈՆ»

Հանրահայտ է այն կարևոր դերը, որ Հայաստանը որպես գործոն խաղացել է Արտաշեսյան դինաստիայի օրոք (մ.թ.ա. 189-մ.թ. 1): Իսկ Տիգրան Մեծի թագավորության շրջանում (մ.թ.ա. 99-55թթ.) Հայաստանի դերը եղել է բացառիկ, մի իրողություն, որը չի վիճարկվում և հաստատվում է Ստրաբոնի, Հուստինիանոսի, Հովսեփիոս Փլավիոսի, Ապպիանոսի, Դիոնիս Կասիոսի և անտիկ աշխարհի այլ հեղինակավոր պատմիչների կողմից: Դա են հաստատում նաև արդի արաբ ականավոր պատմաբաններ, եգիպտացի Ֆուադ Հասան Հաֆիզը, սիրիացի Մարվան ալ-Մուդավարը, լիբանանցիներ Սամիր Արբաշը, Սալիհ Զահր ալ-Դինը և ուրիշներ[5]: Դա հաստատված է Հակոբ Մանանդյանի, Գագիկ Սարգսյանի և հայ այլ պատմաբանների, այդ թվում և մեր աշխատություններում[6]: Հայաստանի դերն այնքան կարևոր,իսկ երբեմն էլ այնքան վճռորոշ է եղել, որ ո՛չ Հռոմը և ո՛չ էլ Պարսկաստանը ոչ միայն չէին կարող անտեսել նրան, այլև իրենց քաղաքականությունը մշակելիս և իրագործելիս պարտադիր հարկադրված էին հաշվի առնել Հայաստանի դիրքորոշումը: Տիգրան Մեծի, ապա նաև նրա որդու՝ Արտավազդ Բ-ի (մ.թ.ա. 55-34 թթ.) օրոք Հայաստանն իր դերակատարումով մեր տարածաշրջանի երկրորդ- երրորդ պետությունն էր՝ առաջ անցնելով Պարսկաստանից և զիջելով միայն Հռոմին: Նա եռանկյունու այն կողմն էր, որի մյուս կողմերն էին Հռոմը և Պարթևական Պարսկաստանը:

Հայաստանը Տիգրան Մեծի օրոք հզոր ռազմական ուժ ներկայացնող պետություն էր: Հայկական բանակի թվաքանակը հասնում էր 700 000-ի և կազմված էր հետևակից և հեծելազորից: Հայոց արքան մ.թ.ա. 83-85թթ. պարտության մատնեց պարթև-

---

[5] **Նիկոլայ Հովհաննիսյան**, Արքայից Արքա Տիգրան Մեծը և Հայկական կայսրությունը արաբական արդի պատմագիտության գնահատմամբ, եռալեզու՝ անգլերեն, ռուսերեն, հայերեն, Երևան, 2012, էջ 63:

[6] Նույն տեղում:

ներին, և պարսից շահը Տիգրան Մեծին զիջեց «Արքայից արքա» տիտղոսը: Տիգրան Մեծի թագավորության մեջ մտան Սիրիան, Լիբանանը, Միջագետքը, Հորդանանը, Պաղեստինը, Հրեաստանը, Կապադովկիան, Ասորիքը, Կիլիկիան և այլ տարածքներ: Տիգրան Մեծին ենթարկվեցին Ատրպատականի, Ադիաբենի և Կորդուքի թագավորությունները: Նրանից վասալական կախման մեջ էին Եգիպտոսը, Վրաստանը, Միջինասիական երկրները, ամբողջ Մերձավոր Արևելքը: Արքայից արքա Տիգրան Մեծի Հայկական թագավորությունը մ.թ.ա. 83թ. վերածվեց Տիգրան Մեծի Հայկական կայսրության: **Հռոմի սենատոր, ականավոր հռետոր Ցիցերոնը Տիգրան Մեծ կայսրին կոչում էր «Ասիայի Ամենամեծ Մեծ Արքան»**[7]:

Տիգրան Մեծի ֆենոմենը ձեռք բերեց համաշխարհային պատմական նշանակություն: Հայկական ռազմաքաղաքական գործոնը Տիգրանի օրոք խախտեց հռոմեա-պարթևական (իրանական) ավանդական գերակայությունը և աշխարհի քաղաքական քարտեզն ըստ իրենց շահերի և կամոք վերաձևելու իրենց բացարձակ իրավունքը: Տիգրան Մեծի ստեղծած Հայկական կայսրությունը, մխրճվելով հռոմեական-պարթևական հարաբերությունների տիրույթը, չզիջելով հռոմեական գործոնին, գերազանցելով և պատմական մի որոշ ժամանակահատվածում անգամ հետին պլան մղելով պարթևական գործոնը, իր օրինական և ազդեցիկ տեղը գրավեց տվյալ պատմական դարաշրջանի միջազգային հարաբերություններում: **Այդ շրջանում «համաշխարհային» հասկացությունը ներառում էր նաև հայկական ռազմաքաղաքական գործոնը: Այս հանգամանքը հայերը երբեք չպետք է մոռացության տան:**

Տիգրան Մեծի ժամանակաշրջանը, անշուշտ, եղել է Հայաստանի հզորության և ազդեցության բարձրակետը: Թեև դրանից հետո Հայաստանը վայրէջք է ապրել, բայց երբեք չի դադարել ուշադրության արժանի գործոն լինելուց և իր որոշակի դերը

[7] Նույն տեղում, էջ 78:

խաղալ Առաջավոր Ասիայում և Հռոմ-Պարսկաստան հակամարտության մեջ:

4. ՍՊԱՐԱՊԵՏ ՎԱՍԱԿ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԸ- ՊԱՐՍԻՑ ԱՐՔԱ ՇԱՊՈՒՀ ԵՐԿՐՈՐԴԸ - ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴԸ

Հայաստանի այդ յուրահատուկ դերը միջազգային հարաբերություններում իր արտացոլումն է գտել նաև Փավստոս Բուզանդի «Պատմություն հայոցի» հետևյալ ուշագրավ դրվագում: Պարսկաստանի արքա Շապուհ Երկրորդը Հայաստանի հետ հաշտություն հաստատելու պատրվակով իր մոտ է հրավիրում հայոց արքա Արշակ Երկրորդին և հայոց սպարապետ Վասակ Մամիկոնյանին: Հրամայելով իր մոտ բերել հայոց սպարապետին՝ պարսից արքան անարգում է նրան, որին ի պատասխան Վասակ Մամիկոնյանն ասում է.«Բայց ես մինչ Վասակն էի, ես հսկա էի, մի ոտքս մի լեռան վրա էր, մյուս ոտքս մի այլ լեռան վրա. երբ աջ ոտքիս վրա էի հենվում, աջ լեռն էի գետին տանում, երբ ձախ ոտքիս վրա էի հենվում, ձախ լեռն էի գետին տանում»: Շապուհը հետաքրքրվում է, թե ինչ լեռներ էին դրանք: Եվ հայոց սպարապետը պատասխանում է. «Երկու լեռներից մեկը դու էիր, մյուսը՝ Հունաց թագավորը. քանի դեռ աստված հաշտ էր մեզ հետ, քեզ էլ էի գետին տանում, Հունաց թագավորին էլ»[8]:

Սույն դրվագը վկայություն է այն մասին, որ **Հայաստանը ոչ երկրորդական դեր է խաղացել տվյալ պատմական ժամանակաշրջանի միջազգային հարաբերություններում և ներազդել է աշխարհաքաղաքական (գեոպոլիտիկ) իրադրության ձևավորման վրա:**

5. ՀԱՅԵՐԸ ՊԵՏՈՒԹԵՆԱՍՏԵՂԾ ԱԶԳ

---

[8] **Փավստոս Բուզանդ,** Պատմություն Հայոց : Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները ակադեմիկոս **Ստ. Մալխասյանցի,** «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1968, էջ 215:

Աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկը՝ հայ ժողովուրդը, ունի իրեն բնորոշ մի շարք բարձրարժեք որակներ և յուրահատկություններ: Մենք համաշխարհային պատմության խորքային ուսումնասիրության հիման վրա հանգել ենք այն եզրակացության, որ հայերը **պետութենաստեղծ ազգ են**: Դարերի ընթացքում մի անգամ չէ, որ հայությունը հիմնել է իր պետականությունը, կորցրել, նորից վերականգնել և նորից կորցրել: Բայց անկախ պետականություն ունենալու հայերի ձգտումը մնացել է անկոտրում: Այդպես է եղել հնագույն շրջանում, այդպես է եղել միջին դարերում,այդպես է եղել նոր և նորագույն շրջանում, այդպես է մեր օրերում: Դա դրսևորվել է երկու կերպ:

Առաջին, ազգային պետականության հաստատում իր բնօրրանում՝ բուն Հայաստանում:

Երկրորդ, օտար երկրների և ժողովուրդների պետականության ստեղծում, պահպանում և օժանդակում: Դա համաշխարհային պատմության մեջ բացառիկ երևույթներից մեկն է:

Առաջին կամ բուն Հայաստանի առումով պետութենաստեղծումն իրականացվել է մեկը մյուսին հաջորդած Վանի (մ.թ.ա. 858-մ.թ.ա.585), Երվանդունիների (մ.թ.ա. 570-մ.թ.ա.195), Արտաշեսյանների (մ.թ.ա.189-մ.թ.1), Արշակունիների (54-428 թթ.) և Բագրատունիների (885-1045թթ.) հայկական թագավորական դինաստիաներով, Կիլիկյան Հայաստանով (1080-1375թթ.): Պետության գաղափարն ամուր նստած է հայության գեներում, և նա ուր գնում է, որ երկրում հաստատվում է, պետության գաղափարն իր հետ է տանում:

Հաստատվելով օտար երկրներում՝ հայկական հավաքականությունը որպես կանոն ակտիվ դերակատարում է ունեցել և շարունակում է ունենալ օտար ժողովուրդների պետական կառավարման համակարգում, այդ պետությունների ամրապնդման ու կայացման գործում, որը հաստատվում է բազմաթիվ օրինակներով:

428թ.՝ Արշակունիների անկումից հետո, թեև Հայաստանը կորցրեց ինքնուրույն գործոն լինելու իր կարգավիճակը, սակայն անգամ այդ պայմաններում V-VII դարերում՝ մարզպանության շրջանում, Հայաստանը հլու-հնազանդ ենթակա չէր, այլ կարողանում էր յուրահատուկ ձևով դրսևորել իր կամքը և պահպանել իր ազգային կերպարը, որի հետ հարկադրված էր հաշվի նստել Սասանյան Պարսկաստանը: Ընդ որում հայ նախարարները պահպանում էին իրենց ժառանգական իրավունքները, տիրույթները, համապատասխան տեղը կառավարման համակարգում: Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ հայկական ռազմական ուժերը չլուծարվեցին կամ չտարրալուծվեցին պարսկական ռազմական ուժերի մեջ: Նրանք պահպանեցին նաև այլ արտոնություններ: Այս բոլորը հիմք է ծառայել այն տեսակետի համար, որ Արշակունիների անկումից հետո էլ յուրահատուկ կերպով պահպանվել է թագավորական, այսինքն՝ պետական իշխանությունը, որն անցել էր հայ նախարարներին[9]:

Այդ շրջանում՝ 640-ական թվականներին, քաղաքական քարտեզի վրա հայտնվում է մի նոր պետություն՝ Արաբական խալիֆայությունը, որը պարտության է մատնում Սասանյան Պարսկաստանին, նվաճում այն և այլ տարածքներ: Տեղի են ունենում նաև բախումներ խալիֆայության և Հայաստանի միջև: Հայաստանի իշխան Թեոդորոս Ռշտունին, որը շատ հեռատես, ճկուն և խելացի պետական այր էր, մտահոգ Հայաստանի ապագայով և անվտանգության խնդիրներով, որդեգրում է նոր ռազմավարություն, որի արդյունքում 652թ. ստորագրվում է հայ-արաբական պայմանագիր, որը հայ պատմիչ Սեբեոսը բնութագրում է որպես «Հաշտության պայմանագիր»: Թեոդորոս Ռշտունին արաբական խալիֆայի կողմից վերստին հաստատվեց ոչ միայն հայոց իշխանի իր պաշտոնում, այլև նշանակվեց նաև Վիրքի և Աղվանքի իշխան: Այսպիսով, Թեոդորոս Ռշտունու իշ-

[9] **Ն.Հովհաննիսյան**, Արաբական երկրների պատմություն, հ. I, Երևան, 2003, էջ 73,74:

խանության ներքո հայտնվեցին Հայաստանը, Վրաստանը, Աղվանքը և Կովկասը մինչև Ճորա պահակ: Հետագայում իրադրությունը փոխվում է, և արաբները ներխուժում են Երուսաղեմ, Հայաստան, Քարթլի և կովկասյան այլ շրջաններ: Երուսաղեմի Հայ եկեղեցու ղեկավարը, կանխատեսելով արաբների մոտակա ներխուժումը Երուսաղեմ, ճանապարհորդում է Մեքքա, հանդիպում իսլամի հիմնադիր Մուհամմադ մարգարեին և նրանից ստանում հրովարտակ, որը երաշխավորում էր Երուսաղեմում բնակվող հայերի կյանքի և գույքի ապահովությունը: Միաժամանակ մարգարեն ճանաչում է Հայ եկեղեցու իրավունքները Երուսաղեմի բոլոր այն սրբատեղերի վրա, որոնք գտնվում էին նրա վերահսկողության տակ: Երբ խալիֆա Օմարը 638թ. գրավում է Երուսաղեմը, իր նոր հրովարտակով հաստատում է բոլոր այն երաշխիքները, որ Մուհամմադ մարգարեն տվել էր Երուսաղեմի Հայ եկեղեցուն: Հետագայում Սալահ ադ-Դինը նույնպես ճանաչում է Երուսաղեմի Հայ եկեղեցու բոլոր այն իրավունքները, որ նրան տվել էին իր նախորդները[10]:

VII դարի կեսերին վերսկսվում են արաբական նվաճումները, որոնք ծավալվում են երեք ուղղություններով՝ արևմտյան, արևելյան և հյուսիսային: Արաբական խալիֆայությունը, ձգտելով ծավալվել դեպի հյուսիս, նպատակ ուներ նվաճել Կովկասը: 701թ. իրականացվեց Հայաստանի նվաճումը: Նույն այդ թվականին Արաբական խալիֆայությունը նվաճեց նաև Վրաստանը, Աղվանքը և մերձկասպյան տարածքները: Հարավային Կովկասն ամբողջությամբ անցավ խալիֆայության տիրապետության տակ: Եվ դրանից հետո տեղի ունեցավ մի կարևոր իրադարձություն: Արաբական խալիֆայությունը վերոնշյալ նվաճված տարածքներից **701թ. ստեղծեց նոր վարչական տարածք կամ միավոր, որը կոչվեց Արմինիա՝ Հայաստան**: Նրա մեջ մտնում էին Հայաստանը, Վրաստանը (Ջուրզան),Աղվանքը (Առանը),

---

[10] Տե՛ս **Azarya Victor,** The Armenian Quarter of Jerusalem. The Urban Life Behind Monastery Walls, London , 1984; **Ն. Հովհաննիսյան,** նույն տեղում, էջ 88:

մերձկասպյան շրջանները, որոնց հիման վրա հետագայում ձևավորվեցին Շիրվանը և Դերբենդը (Բաբ ալ-Աբվաբ): Արմինիա վարչատարածքային միավորի կառավարիչը կոչվում էր ոստիկան, որի նստավայրը Հայոց հին մայրաքաղաք Դվինն էր: Սա նույնպես բացառիկ իրողություն է: Արմինիան ըստ էության մի պետություն էր պետության մեջ, տվյալ դեպքում Արաբական խալիֆայության մեջ: Դա ուղղակի շշմեցուցիչ փաստ է:

Հետագա տարիներին սրվում են հարաբերությունները Արաբական խալիֆայության և Հայաստանի միջև, որի արդյունքում, ի վերջո, 885թ. Հայաստանին հաջողվեց նվաճել իր անկախությունը: Արաբական խալիֆա Մութամիդը ստիպված հաշտվում է կատարված իրողության հետ և Աշոտ Բագրատունուն ճանաչում Հայաստանի թագավոր, նրան թագ ուղարկում, ինչպես նաև արքային վայել նվերներ՝ թագավորական զգեստներ, պարգևներ, ընծաներ, հրեղեն երիվարներ, զենքեր ու զարդեր: Նա օծվում է «Հայոց թագավոր Աշոտ I» անվամբ, իսկ Բագրատունիները հաստատվում են որպես կառավարող թագավորական դինաստիա:

Այսպիսով, Արշակունիների անկումից 457 տարի և արաբական նվաճումից մոտ 200 տարի անց Հայաստանը վերականգնեց իր անկախ պետականությունը: Նա դարձավ իրենից որոշակի ուժ ներկայացնող երկիր, ներազդում էր աշխարհաքաղաքական մթնոլորտի ձևավորման և քաղաքական ուժերի հավասարակշռության հաստատման գործընթացի վրա: Ասվածն ավելի է հաստատվում, եթե նկատի ունենանք, որ արաբական խալիֆան և բյուզանդական կայսրը մշտապես մրցակցում էին Հայաստանն իրենց կողմը գրավելու և դրանով տարածաշրջանում իրենց դիրքերն ամրապնդելու և ազդեցությունն ուժեղացնելու համար: Այդ պարագան բարձրացնում էր Հայաստանի կարևորությունը հաչս կայսեր և խալիֆայի:

Բյուզանդիային հաջողվեց տապալել Բագրատունիների դինաստիան և իրեն ենթարկել Հայաստանը: Ահա, այսպես,

Հայաստանը կրկին կորցրեց իր անկախությունը և մոտ հինգ դար հայտնվեց օտար նվաճողների իշխանության ներքո, որոնք մորեխի նման հայտնվում էին տարածաշրջանում:

Սակայն պետք է նշել, որ տարբեր երկրներում, մասնավորապես արաբական երկրներում, Բյուզանդիայում, Կիլիկիայում, Ռուսաստանում կենտրոնացված էին ազդեցիկ հայկական համայնքներ, որոնք կարևոր քաղաքական, ռազմական, տնտեսական և մշակութային դիրքեր ունեին և ներգրավված էին հյուրընկալ երկրների հասարակական և քաղաքական, անգամ կառավարման համակարգում: Ահա հենց այս հայկական համայնքներն էին, որ ներգրավվել էին հյուրընկալ երկրների և ժողովուրդների պետականաստեղծ գործունեության մեջ, ակտիվորեն մասնակցել նրանց կայացմանը և զարգացմանը: Կանգ առնենք դրանցից մի քանիսի լուսաբանության վրա:

1.**Բյուզանդական կայսրություն**: **Հայկական դինաստիա**: Հայտնի է, որ Հռոմեական կայսրությունը 395թ. բաժանվեց երկու մասի՝ արևմտյան, որը շարունակվեց կոչվել Հռոմեական կայսրություն, և արևելյան, որը կոչվեց Բյուզանդական կայսրություն: Դրանք առանձին, միմյանցից անկախ կայսրություններ էին: Բյուզանդական կայսրությունում մեծաքանակ էին հայերը, այդ թվում՝ պաշտոնյաները, զինվորական գործիչները, հոգևորական այրերը, որոնք մեծ ազդեցություն և դիրքեր ունեին: Նրանք այնքան ուժեղ էին, որ 867 թ. գրավեցին իշխանությունը, Բյուզանդիայի կայսրությունում հաստատվեց Հայկական դինաստիան: Հայկական դինաստիայի հիմնադիրը հայազգի Բարսեղ Առաջինն էր: Հայ կայսրերը Բյուզանդիան կառավարել են համարյա երկու դար, մոտ 190 տարի՝ 867-1057 թթ.:

2. Ռուսիայի ուղղափառության ընդունումը և հայազգի Աննա իշխանուհու դերը: Սկզբնական շրջանում Բյուզանդական կայսրությունը կառավարում էին համակայսր երկու հայ եղբայրները՝ Բարսեղ Երկրորդ Բուլղարասպանը և Կոնստանտինը: Հայերի ղեկավար դերակատարումը չի սահմանափակվել միայն

Բյուզանդիայով: Հայկական դինաստիան բախտորոշ դերակատարում է ունեցել նաև Ռուսիայի ճակատագրում՝կապված 988թ. Ռուսիայի՝ քրիստոնեություն ընդունելու հետ: Նրանց քրոջ՝ Աննայի հետ ամուսնանալու ցանկություն է հայտնում Ռուսիայի իշխան Վլադիմիր Սվյատոսլավովիչը: Ամուսնանալու համար Աննան պայման է դնում, որ Վլադիմիրը պետք է ընդունի քրիստոնեություն: Վերջինս համաձայնվում է, և «Վերադառնալով մայրաքաղաք (Կիև-Ն.Հ.)՝ Վլադիմիրը հրամայում է ոչնչացնել կուռքերը, իսկ ժողովուրդը մկրտվեց Դնեպրում»[11]: Ռուսիան ընդունում է ուղղափառ քրիստոնեություն: Ուղղափառությունը՝ **Պրավոսլավիեն, ինչպես հայտնի է, ռուսական պետության հիմքերի հիմքն է**: Մյուս կողմից, եթե մի պահ ենթադրենք, որ Ռուսիան ընդուներ իսլամ, ապա դժվար է պատկերացնել, թե ինչպես կընթանար համաշխարհային պատմությունը: Հայոց իշխանուհի Աննան, որը դարձավ Ռուսիայի իշխանի առաջին տիկին, բախտորոշ և դրական դերակատարում ունեցավ ոչ միայն Ռուսիայի, այլև համաշխարհային մասշտաբով:

3. Ֆաթիմյան խալիֆայություն: Բադր Գամալ ալ-Արմանին: Ֆաթիմյան խալիֆայությունը պատմության մեջ հայտնվեց 909թ., որը ստացավ Ֆաթիմյան անվանակոչումը Մուհամմադ մարգարեի դստեր՝ Ֆաթիմայի անունից: Ֆաթիմյան խալիֆայությունը հաստատվեց Հյուսիսային Աֆրիկայում, և նրա կենտրոնը դարձավ Եգիպտոսը: Նրան միացվեցին Իֆրիկիան, Ալժիրը, Մաղրիբը, Սիրիան, Արաբիան, Իրաքի որոշ շրջաններ, Հիջազը Մեքքայով և Մադինայով: Դա դարձավ մի կայսրություն, որը ձգվում էր Ատլանտյան օվկիանոսից մինչև Կարմիր ծով: Ֆաթիմյան խալիֆաները խաղալիք դարձան էթնիկական տարբեր խմբերից կազմավորված իրենց գվարդիայի, առաջին հերթին թուրքերի ձեռքում: Ֆաթիմյան խալիֆայի՝ Մուսթանսիրի զինված ուժերը և թիկնապահ գնդերը կազմված էին բերբերների, սուդանցիների և

[11] www.grandars.ru/shkola/istoriya-russii/krescenie-rusi.html; Տե՛ս նաև **Н.М.Карамзин,** История государства Российского, т.1.

թուրքերի գումարտակներից: Նրանք ոչ միայն հաշտ չէին, այլև բացահայտ թշնամանք էին տածում միմյանց նկատմամբ: Անելանելի դրության մեջ հայտնված խալիֆա ալ-Մուսթանսիրը 1073թ. հարկադրված դիմեց Ակրի կառավարիչ հայազգի Բադր ալ-Գամալ ալ-Արմանիի օգնությանը՝ հրավիրելով նրան և նրա հայկական գնդերը Կահիրե՝ անհնազանդ թուրքական զվարդիականներին սանձահարելու և երկրում կարգ ու կանոն հաստատելու համար: Բադր ալ-Արմանին ընդունեց խալիֆայի հրավերը և հայերից կազմված իր քսանհազարանոց զորքով 1074թ. մտավ Կահիրե: Նա շատ արագ և փայլուն իրականացրեց իր առաքելությունը, ջախջախեց թուրքական զորքերին, պատժեց նրանց հրամանատարներին և նրանց հետ համագործակցած եգիպտացի պաշտոնյաներին:

Բադր ալ-Արմանին և նրա քսանհազարանոց հայոց զորքը Մերձավոր Արևելքում էր հայտնվել Սասունից:

Ալ-Մուսթանսիրը Բադր ալ-Արմանիին օժտեց ամենալայն պետական և ռազմական լիազորություններով: Նա նշանակվեց վազիր և խալիֆայական զորքերի ընդհանուր հրամանատար, ինչպես նաև իսլամական միսիոներական կորպուսի ղեկավար: Նրա ձեռքում կենտրոնացվեց ամբողջ իշխանությունը, և նա 20 տարի՝ 1074-1994թթ. մինչև իր մահը, եղավ երկրի փաստական և անսահմանափակ իշխողը: Նա կարողացավ երկիրը դուրս բերել քաոսային վիճակից, հաստատել օրինականություն և նոր շունչ հաղորդել հոգեվարքի մեջ հայտնված Ֆաթիմյան խալիֆայությանը:

Նրա մահից հետո՝ 1094թ., խալիֆա Մուսթանսիրը վազիրի և զորքերի հրամանատար նշանակեց Բադր Գամալ ալ-Արմանիի որդուն՝ հայազգի Մելիք ալ-Աֆդալին, որը հայտնի էր նաև Շահնշահ անունով: Նա իր ձեռքում կենտրոնացրեց ամբողջ բարձրագույն իշխանությունը և դարձավ Ֆաթիմյան խալիֆայության իրական կառավարողը՝ ձևական դարձնելով խալիֆայի պաշտոնը:

Այսպիսով, մոտ կես դար Ֆաթիմյան խալիֆայության փաստացի կառավարողները եղան երկու հայազգի ականավոր պետական, քաղաքական, ռազմական գործիչներ, հայր և որդի Բադր Գամալ ալ-Արմանին և Աֆդալ Շահնշահը, որոնք անջնջելի հետք են թողել Ֆաթիմյան խալիֆայության, ի մասնավորի՝ Եգիպտոսի, պատմության մեջ: Նրանց կառավարման տարիներին Եգիպտոսը դարձավ օրինակելի երկիր, զարգացած պետություն, որին նախանձով էին նայում հարևան երկրները: Նրանց դերը հենց այդպես է գնահատվում պատմագրության մեջ: Ժամանակի արաբ պատմիչներ Մաքրիզին և Իբն Խալիքանին շեշտում են, որ խալիֆա ալ-Մուսթանսիրը ալ-Արմանիին իր հայոց զորագնդով Կահիրե կանչեց մի այնպիսի ծանր պահի, երբ Եգիպտոսում սաստիկ սով էր, տարբեր էթնիկական խմբերից կազմված զորքերը խռովություններ էին բարձրացնում, վազիրների հրամանները չէին գործադրվում, երբ սևամորրթները գրավել էին Վերին Եգիպտոսը և այլն, «որպեսզի իր պետությունը կարգի բերելու պաշտոնը ստանձնե»: Եվ նա, ընդունելով խալիֆայի առաջարկությունը, փայլուն է կատարում այդ գործը, մայրաքաղաքում և գավառներում «բնաջինջ է անում բոլոր կենտրոնախույս տարրերին»: Հատուկ ընդգծվում է նրա բարյացակամ վերաբերմունքը գյուղացիության հանդեպ: Եվրոպացի պատմաբան Մյուլլերը հայազգի Բադր Գամալ ալ-Արմանիին Կահիրե հրավիրելը և իշխանական լայն լիազորություններով օժտելը համարում է «խելացի միտք»: Նա ընդգծում է, որ ալ-Արմանին խաղաղություն հաստատեց Եգիպտոսում, որը սկսեց ոտքի կանգնել և ծաղկել՝ ավելացնելով, որ նա այդպիսի վիճակում Եգիպտոսի կառավարումը փոխանցեց իր որդուն, որն «ընդունեց «ալ-Մելիք ալ-Աֆդալ»՝ «Ամենակատարյալ թագավոր» տիտղոսը: Նա հենց այդպիսին էլ էր երկիրը կառավարելիս»:

Արաբ մեկ այլ հայտնի պատմաբան Ֆիլիպ Հիթթին Բադր ալ-Արմանիի անվան հետ է կապում ծանր դրության մեջ հայտնըված «Ֆաթիմյան խալիֆայությանը կյանքի նոր շունչ տալը»,

«երկիրը քաոսից դուրս բերելը»:

Բաղր Գամալ ալ-Արմանիի և Աֆդալի գործունեությունը շատ բարձր գնահատականի է արժանացրել խորհրդային արաբագետ Ի. Ֆիլշտինսկին: «Նրանց ժամանակ,- գրում է պատմաբանը, - Եգիպտոսում հաստատվեց խաղաղություն և կարգ ու կանոն: Նրանք կարողացան բարելավել երկրի տնտեսական դրությունը **և փաստորեն կասեցրին Ֆաթիմյան խալիֆայության կործանումը մի ամբողջ հարյուրամյակ»**[12]:

Հետագայում ևս, հատկապես XIX դարի երկրորդ կեսերին, հայ պետական և քաղաքական գործիչներն անջնջելի հետք են թողել Եգիպտոսի պատմության մեջ: Բավական է նշել, որ XIX դարի 80-ականներին Եգիպտոսի առաջին վարչապետը եղել է Նուբար Նուբարյանը, որն անգնահատելի դեր է խաղացել Եգիպտոսի անկախության և ինքնության պահպանման գործում: Բացի դրանից, դարձյալ XIX դարում, հայերը բազմիցս զբաղեցրել են Եգիպտոսի արտաքին գործերի նախարարի պաշտոնը և կարևոր դեր խաղացել կառավարական համակարգի այլ բնագավառներում:

4. Կիլիկիայի հայկական թագավորությունը: Ռուբինյաններ և Հեթումյաններ:

1045թ.՝ Բագրատունիների անկումից հետո, սկսվեց հայերի արտագաղթը, այդ թվում և Կիլիկիա:

Արտագաղթողների մեջ էին Բագրատունիների շառավիղ Ռուբինյանները, որոնցից ամենաաչքի ընկնողը Ռուբեն իշխանն էր: Նա Բագրատունիների վերջին թագավոր Գագիկ II-ի մերձավորներից էր: Ռուբեն իշխանը 1080թ. Կիլիկիայում հիմնեց հայկական պետությունը, որը սկզբում իշխանապետություն էր, իսկ 1198թ. վերածվեց թագավորության և անվանակոչվեց Կիլիկիայի հայկական թագավորություն: Նրա առաջին թագավորը եղավ Լևոն II Մեծագործ Ռուբինյանը: Հայ կաթողիկոսի նստա-

---

[12] Տե՛ս **Ն.Հովհաննիսյան**, Արաբական երկրների պատմություն, հ.I, Երևան, 2003, էջ 310:

վայրը տեղափոխվում է Կիլիկիա և հաստատվում Հռոմկլա քաղաքում:

Կիլիկիայի հայկական պետությունը գոյություն է ունեցել նրա համար շատ բարդ միջազգային իրադրության պայմաններում: Նա շրջապատված էր տարբեր պետություններով, որոնցից յուրաքանչյուրը ձգտում էր տիրանալ Կիլիկիային: Դրանց մեջ էին Բյուզանդական կայսրությունը, Ռումի կամ Իկոնիայի Սելջուկյան սուլթանությունը, Հռոմի պապը, մոնղոլները և եգիպտական մամլուքները: Կիլիկիայի հայ թագավորները ստիպված էին մեծ խիզախություն և դիվանագիտական բարձր հմտություն ցուցաբերել՝ հայկական պետական նավի համար անվտանգ նավարկություն ապահովելու համար: Եվ, ի պատիվ նրանց, երկար ժամանակ հիմնականում հաջողվում էր լուծել այդ խնդիրը, որի փայլուն ապացույցն է Կիլիկիայի հայկական պետության մոտ երեքդարյա գոյությունը՝ 1080-1375թթ.:

1226 թ. գահը Ռուբինյաններից անցավ Հեթումյաններին: Հարաբերությունները Եգիպտոսի և Կիլիկյան Հայաստանի միջև այդ շրջանում և հետագա տարիներին լարվում են: Եգիպտական մամլուքները ներխուժում են Կիլիկիա, գրավում Դաշտային Կիլիկիան, իսկ 1375թ.՝ համառ դիմադրությունից հետո, գրավեցին Կիլիկիայի հայկական թագավորության մայրաքաղաք Սիսը:

Այդ թվականը համարվում է Կիլիկիայի հայկական թագավորության անկման տարեթիվը:

5. Հայազգի Միքայել Լոռիս-Մելիքովը՝ Ռուսաստանի վարչապետ, դիկտատոր: Հայերը XIX դարում ազդեցիկ դիրքեր են ունեցել ցարական Ռուսաստանում, երբ ռուսաց ցար Ալեքսանդր II-ը կայսրության ներքին գործերի նախարար նշանակեց Ռուսաստանի պետական Դումայի անդամ հայազգի զորապետ, գեներալ Միքայել Լոռիս-Մելիքովին՝ օժտելով նրան բացառիկ իշխանությամբ: Նա փաստորեն դարձավ Ռուսաստանի վարչապետ դիկտատոր (1880-1881թթ.), կայսրության երկրորդ դեմքը՝ ցարից հետո: Լոռիս-Մելիքովը ցարին է ներկայացնում վար-

չական և տնտեսական վերափոխումների մի ընդարձակ ծրագիր, ըստ որի՝ ցարական Ռուսաստանը ինքնակալ միապետությունից վերածվում էր սահմանադրական միապետության: Ցարը հավանություն է տալիս Լոռիս-Մելիքովի այդ ծրագրին և նույնիսկ 1881թ. մարտի 13-ին ստորագրում համապատասխան հրամանագիր (указ), այսինքն՝ միայն մի քայլ էր մնացել Ցարական Ռուսաստանը սահմանադրական միապետության վերածվելու համար, սակայն նույն օրը՝ 1881թ. մարտի 13-ին, Ալեքսանդր II-ը ահաբեկչության զոհ դարձավ[13]: Նրան հաջորդած Ալեքսանդր III-ը չեղյալ հայտարարեց իր հոր բարեփոխումների վերաբերյալ բոլոր հրամանները, իսկ զորապետ Լոռիս-Մելիքովը հեռացավ քաղաքական ասպարեզից և ընդհանրապես Ռուսաստանից և բնակություն հաստատեց Ֆրանսիայում՝ Նիցցա քաղաքում: Նա մահացել է 1888թ. և թաղվել Թբիլիսիում՝ հայկական գերեզմանոցում:

6. Հայերի նշանակալի դերը շահական Իրանի պետական և քաղաքական կյանքում:

Բացառիկ է եղել հատկապես Եփրեմ խանի (Դավթյան) դերակատարումը Իրանի՝ 1905-1911թթ. Սահմանադրական հեղափոխության կազմակերպման, ղեկավարման և Իրանի շահի տապալման գործում: Եփրեմ խանը եղել է իրանական հակաշահական ուժերի գլխավոր կազմակերպիչը և ղեկավարը: Այդ ուժերի ճնշման տակ Իրանի շահ Մոհամեդ Ալին հրատարակեց սահմանադրություն մտցնելու հրովարտակ: Բայց դա լոկ խորամանկ քայլ էր: 1908թ. հունիսին շահը հեղաշրջում կատարեց և ցրեց մեջլիսը՝ պառլամենտը: 1909թ. հուլիսին Գիլանի ֆիդայիները, հայ կամավորները և սահմանադրականները Եփրեմ խանի և Ռեշտի նահանգապետ Սիփահդարի ղեկավարությամբ, բախտիարները Սարդար Ասադի գլխավորությամբ արշավեցին Թեհրան, գրավեցին այն և գահընկեց արին շահին: Եփրեմ խանը նշանակվեց Թեհրանի ոստիկանապետ: Հաղթողները ստեղծեցին

[13] https://hy.wikipedia.org/Միքայել Լոռիս-Մելիքով:

ժամանակավոր կառավարություն: Եփրեմ խանը նշանակվեց Իրանի զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատար, դիկտատոր, որը վերականգնեց սահմանադրությունը: Շարունակելով պայքարը՝ հեղափոխական ջոկատները, հայ կամավորներն ու ֆիդայիները Եփրեմ խանի հրամանատարությամբ հակահարված տվեցին շահին և նրան օգնության հասած եղբորը և կանխեցին միապետության վերականգնումը: Եփրեմ խանի հեղինակությունը շատ բարձր էր, նրան համարում էին Իրանի հերոս և տաղանդավոր զորավար: Ընդհանրապես այդ ժամանակ շատ բարձր էր իրանահայերի հեղինակությունը: Իրանի ականավոր պատմաբան Էբրահիմ Սաֆայիի վկայությամբ. «Իրանական հեղափոխության 24 նշանավոր գործիչներից 16-ը հայեր էին»[14]:

Ցավոք, Եփրեմ խանը սպանվեց 1912թ. մայիսի 6-ին Համադանի շրջանում տեղի ունեցած մարտերում: Նրա մարմինը հանգչում է Թեհրանի հայկական Հայկազյան դպրոցի բակում: Իրանական հեղափոխության ակտիվ մասնակիցներից էր նաև հայ ֆիդայի Քեռին՝ Արշակ Գաֆավյանը և ուրիշներ:

Մասնագետների կարծիքով իրանական հեղափոխությունը XX դարի սկզբին առաջին հեղափոխությունն էր Արևելքում: Նա Իրանի բազմադարյան պատմության մեջ ամենակարևոր իրադարձություններից մեկն էր, որը խոշոր հետք է թողել Իրանի պատմության մեջ:

Իրանական հեղափոխությունն իր հետևանքներն ունեցավ նաև հայության համար: Շնորհիվ իրանական հեղափոխության հայերն ընտրվեցին տեղական ինքնավարական մարմիններում՝ էնջումեններում, և իրավունք ստացան երկու պատգամավոր ունենալու Իրանի մեջլիսում: Այդ իրավունքը մինչև օրս պահպանվում է, և հայերը երկու դեպուտատներ ունեն իրանական մեջլիսում, մեկը՝ Հյուսիսային Իրանի, իսկ մյուսը՝ Հարավային

[14] «https://hy.wikipedia.org/w/index.php?

Իրանի հայության կողմից: Դրանով իսկ իրանահայերը պահպանում են իրենց պետութենաստեղծ գործունեությունը Իրանում:

Իրանի մեծանուն պատմաբան Էբրահիմ Սաֆայիի նշած՝ իրանական հեղափոխության 24 նշանավոր գործիչներից 16-ի հայ լինելու հանգամանքը շատ խոսուն փաստ է: Դրանց մեջ պետք է առանձնացնել իրանական պետական ականավոր գործիչ և դիվանագետ հայազգի Միրզա Մելքում խանին՝ Հովսեփ Հակոբի Մելքումյանին, որն Իրանի լուսավորական շարժման կնքահայրն է: Նա սոցիալական ռեֆորմատոր էր և առաջին քրիստոնյան, ով Պարսկաստանի մեջ ստացել է «միրզա» (իշխան) տիտղոսը: Պարսիկ հանրահայտ գրող Համիդ Ալգարը հաստատում է, որ Միրզա Մելքում խանի հայազգի նախնիները Արցախից էին և սերում էին հայկական ազնվական տոհմից: Մելքում խանը քննադատում էր ֆեոդալական կարգերը և ջանք չէր խնայում բարձրացնելու իրանցիների ինքնագիտակցությունը: Նա գտնում էր, որ արժանապատիվ ապագայի միակ ճանապարհը խորհրդարանական համակարգն է, և պայքարում էր դրա համար: 1871թ. նա եղել է Իրանի վարչապետի խորհրդական: Իսկ նրա հիմնած «Ֆարամուշխանե» ընկերությունը պրոպագանդում էր Իրանը հանուն եվրոպական ձևով բարեփոխելու:

Շատ մեծ և կարևոր է եղել Միրզա Մելքում խանի դիվանագիտական գործունեությունը՝ բարձր դիրքեր գրավելով այդ ոլորտում: Նա եղել է Իրանի դեսպանը Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում, պարսկական դեսպանատան խորհրդական Ֆրանսիայում, Պարսկաստանի դեսպանորդ Հռոմում: Նա Իրանն արժանապատվորեն ներկայացրել է միջազգային համաժողովներում, ինչպես Բեռլինի կոնգրեսը (1878թ.), որտեղ նա պաշտպանել է Պարսկաստանի շահերն ընդդեմ Թուրքիայի և այլն[15]:

Միրզա Մելքում խանը մահացել է 1908թ.՝ խոշոր հետք թողնելով Պարսկաստանի քաղաքական, դիվանագիտական և գի-

[15] Նույն տեղում:

տական-գրական կյանքում:

7. Լիբանանահայերի ներդրումը Լիբանանի անկախ պետության ստեղծման և պահպանման գործում:

Այն տարածքը, որ կազմում է ժամանակակից Լիբանանը, յուրահատուկ կարգավիճակ ուներ Օսմանյան կայսրության կազմում: 1861թ. ընդունված Օրգանական ստատուտի համաձայն՝ ստեղծվել էր Լեռնալիբանանի ինքնավար մարզը՝ մութասարիֆությունը, որը կառավարում էր օսմանյան սուլթանի կողմից նշանակվող կաթոլիկ քրիստոնյա մութասարիֆը՝ կառավարիչը:

Առաջին մութասարիֆը եղավ հայազգի Կարապետ Արթին Դաուդյանը: Այդ կարգավիճակը պահպանվեց մինչև 1914թ., երբ սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը: Օսմանյան կառավարությունը խախտեց Օրգանական ստատուտը և իր զորքերը մտցրեց Լեռնալիբանան՝ պաշտոնանկ անելով Լեռնալիբանանի վերջին քրիստոնյա մութասարիֆ հայազգի Հովհաննես Կույումջյանին: Լիբանանն ընկավ աներևակայելի ծանր դրության մեջ: Լիբանանի ազատագրումն օսմանյան լծից ավարտվեց 1918թ. աշնանը, որն իրագործվեց անգլիական զորքերի և արաբական ապստամբ բանակի միջոցով, որոնք մի շարք ճակատամարտերում պարտության մատնեցին թուրքական բանակներին: Դաշնակիցների՝ Անգլիայի և Ֆրանսիայի Գերագույն խորհրդի՝ 1920 թվականի որոշումով Լիբանանի կառավարման մանդատը տրվեց Ֆրանսիային: Դա առաջ բերեց լիբանանցիների դժգոհությունը, և ծայր առան հակաֆրանսիական ելույթներ, որի արդյունքում, ի վերջո, 1943թ. նոյեմբերի 8-ին վերացվեց ֆրանսիական մանդատը: Այդ օրը պատմության մեջ մտել է որպես ֆրանսիական մանդատի վերացման, Լիբանանի անկախության և ինքնիշխանության հաստատման օր: Լիբանանի առաջին պրեզիդենտ ընտրվեց Բիշարա ալ-Խուրին, իսկ Ռիյադ Սոլիը գլխավորեց անկախ Լիբանանի առաջին կառավարությունը:

1946թ. դեկտեմբերին ֆրանսիական վերջին զինվորը հեռացավ Լիբանանից[16]:

Լիբանանի պետական կառուցվածքի հիմքում դրվեց կոնֆեսիոնալիզմի՝ կրոնադավանական սկզբունքը: Ըստ այդ սկզբունքի՝ Լիբանանի պրեզիդենտ կարող է լինել միայն քրիստոնյա-մարոնի համայնքի, պրեմիեր մինիստր՝ մուսուլման-սուննի, իսկ պառլամենտի նախագահ՝ մուսուլման-շիա համայնքի ներկայացուցիչը: Սահմանվեց նաև, որ երկրի ռազմական ուժերի գլխավոր հրամանատարի, պետական անվտանգության ղեկավարի և մի շարք այլ բարձրաստիճան պաշտոններ կարող են զբաղեցնել միայն քրիստոնյա-մարոնի համայնքի ներկայացուցիչները: Հաստատվեց նաև մեկ այլ կարևոր սկզբունք՝ Լիբանանի պառլամենտի մուսուլմանական յուրաքանչյուր հինգ դեպուտատի դիմաց ընտրել վեց քրիստոնյա դեպուտատ, որով մշտապես ապահովվում է քրիստոնյա դեպուտատների գերակշռությունը երկրի բարձրագույն օրենսդիր մարմնում:

Այդ բոլորի հետ միասին Լիբանանի կրոնադավանական համայնքներ ճանաչվեցին վեց համայնքներ՝ քրիստոնյա մարոնիների, դրուզների, հայերի, մուսուլման սուննիների, շիաների և քրիստոնյա ուղղափառների համայնքները: Հայերի համայնքը 1970-ական թվականներին կազմում էր մոտ 250 հազար և թվաքանակով զիջում է շիա, մարոնի և սուննի համայնքներին և մոտավորապես հավասար է դրուզ ու քրիստոնյա-ուղղափառ համայնքներին:

Հայերը տեղաբաշխված են Լիբանանի տարբեր շրջաններում, սակայն նրանց հիմնական մասը կենտրոնացած է Բեյրութ մայրաքաղաքում: Մայրաքաղաքն ունի թաղամասեր, որոնք բնակեցված են հայերով, ինչպես Բուրջ Համուդը, Խալիլ Բադա-

---

[16] Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս **Ն.Հովհաննիսյան**, Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում (1939-1958թթ.), Երևան, 1967:

վին, Նոր Հաճընը, Աշրաֆիեն, Հայաշենը, Անթիլիասի շրջանը, Զալքան և այլն: Զգալի թվով հայեր բնակվում են Զահլեում, Սայդայում, Տրիպոլիում, Ալեյում, Բիբլոսում, Զունիում, Շուֆի, Մեթնի, Քեսրվանի և այլ շրջաններում:

Լիբանանահայության մոտ 47 տոկոսը զբաղված է արդյունաբերության ոլորտում, ֆաբրիկաներում, գործարաններում, շինարարության մեջ, պետական ձեռնարկություններում և այլն, 45 տոկոսը՝ առևտրի և սպասարկման ոլորտում, 2 տոկոսը՝ գյուղատնտեսության մեջ, 2 տոկոսն էլ կազմում է մտավորականությունը՝ ուսուցիչներ, գրողներ, բժիշկներ, նկարիչներ, երաժիշտներ, 4 տոկոսն էլ պատկանում է արդյունաբերական և առևտրաֆինանսական վերնախավին:

Բոլորի կողմից ընդունված է, որ մեծ է հայ համայնքի ներդրումը Լիբանանի առաջընթացի մեջ, և նա խաղում է նշանակալի դեր արդի Լիբանանի տնտեսական կյանքում: Հայերը մեծապես նպաստել են արհեստների զարգացմանը և արդյունաբերության նոր ճյուղերի ձևավորմանը Լիբանանում: Հայերը մեծ ծառայություն են մատուցել Լիբանանում ժամանակակից իմաստով արդյունաբերություն ստեղծելու գործում: Բեյրութի Ամերիկյան համալսարանի պրոֆեսոր Ա.Մեյերը Լիբանանում և արաբական մյուս երկրներում արդյունաբերական հին ձևերի փոխարինումը նորերով կապում է եվրոպացիների և հայերի անվան հետ[17]: Իսկ արաբ տնտեսագետ Յուսուֆ Սայըղը հատկապես ընդգծում է հայերի տեխնիկական մեծ ունակությունները և փորձառությունը, որոնք որոշակի ազդակ են հանդիսացել Լիբանանի արդյունաբերության գործում[18]:

Մոտավոր հաշվարկներով քաղաքացիական պատերազմին նախորդած տարիներին հայկական մեծահարուստներին պատկանում էր Լիբանանի խոշոր արդյունաբերական ձեռնար-

---

[17] **A.Meyer,** Enterprenership: the missing link in the arab states?- "Middle East Economic Papers", Beirut, 1954, p . 124-125.

[18] **Yusif Sayigh,** Enterpreners of Lebanon , Cambridge , 1962, p.71.

կությունների 18 և միջին ու մանր արդյունաբերական ձեռնարկությունների 43 տոկոսը, իսկ երկրի ներմուծման հայ կապիտալի բաժինը կազմել է 10 տոկոս: 60-ական թվականներին Լիբանանի խոշոր արդյունաբերության մեջ ներդրված 375 մլն լիբանանյան լիրայից 125 մլն լիրան կամ 33 տոկոսը պատկանում էր հայ արդյունաբերական կապիտալին[19]: Հայ համայնքը, չնայած քաղաքացիական պատերազմի արհավիրքներին, կարողացել է պահպանել իր դիրքերը երկրի տնտեսության մեջ, նույնիսկ ամրապնդել: «Թեև նա (լիբանանահայ համայնքը-Ն.Հ.), նշում է՝ «Մանդի Մորնինգը»- կազմում է Լիբանանի բնակչության 8 տոկոսը, սակայն տալիս է ազգային արտադրանքի 25 տոկոսը»[20]: Սա խոսում է այն մեծ կշռի մասին, որ հայ համայնքը ձեռք է բերել ժամանակակից Լիբանանի տնտեսական համակարգում:

Մեծ է նաև հայերի դերակատարումը Լիբանանի պետական- քաղաքական և հասարակական կյանքում: Այդ տեսանկյունից արժանի է հատուկ և բարձր գնահատականի այն կարևոր դերակատարումը, այն մեծ կշիռը, որ ունի հայ համայնքը Լիբանանի քաղաքական և հասարակական կյանքում՝ որպես կրոնադավանանքային համայնք: Այդ հիմքի վրա յուրահատուկ է նրա գործունեությունը լիբանանյան պետականության զարգացման և ամրապնդման ոլորտում: Հայ համայնքը լիբանանյան պառլամենտում ունի դեպուտատական 6 տեղ, որը փոքր թիվ չէ: Բացի այդ, Լիբանանում գործող բավականին բարդ ընտրական համակարգի հետևանքով 21 դեպուտատի ճակատագիրը ևս զգալիորեն կախված է հայ համայնքի դիքորոշումից: Այսպիսով, հայ համայնքը որոշիչ ազդեցություն ունի լիբանանյան պառլամենտի մեկ քառորդի՝ 26 դեպուտատների ընտրության հարցում:

Հարկ է նշել ևս մեկ կարևոր հանգամանք: Լիբանանում գործող օրենքների համաձայն՝ հայ համայնքին պատկանում է նախարարական երկու պորտֆել: Կառավարության այդ երկու

---

[19] «Մեր նշանաբանն է Հառաջ», Բեյրութ, 21.8. 1960:
[20] "Monday Morning", Beirut, vol.8, N.378, Sepember 17-23, 1979. p 26.

անդամները որպես կանոն ակտիվ գործունեություն են ծավալում Լիբանանի ներքին և արտաքին քաղաքականության հարցերում:

Եվ, վերջապես, ակտիվ են նաև հայ քաղաքական կուսակցությունները՝ Հայ հեղափոխական դաշնակցությունը, Հայ ռամկավարների կուսակցությունը և սոցիալ-դեմոկրատական Հնչակյան կուսակցությունը:

Այսպիսին է հայերի պետութենաստեղծ ֆենոմենի պատկերը, որն իր անալոգիան և զուգահեռները չունի:

6. ՀԱՅԱՍՏԱՆՆ ՕՏԱՐ ՆՎԱՃՈՂՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿ

Մենք արդեն նշել ենք, որ Հայաստանը, կորցնելով իր անկախությունը, հայտնվեց օտար նվաճողների իշխանության տակ: Կցանկանայինք համառոտակի անդրադառնալ այդ հարցի լուսաբանությանը:

1.ՊԱՐՍԿԱ-ՕՍՄԱՆՅԱՆ ԲԱԽՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՐՈՀՈՒՄԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ

XVI դարի սկզբներին Մերձավոր Արևելքի քաղաքական ասպարեզում հայտնվում է թուրքական՝ Օսմանյան կայսրությունը, որն անմիջապես աչքի է ընկնում իր նվաճողական, դաժան, ազգասպան քաղաքականությամբ: Նա 1516 թվականից սկսում է արաբական երկրների՝ Սիրիայի, Եգիպտոսի, Միջագետքի՝ Իրաքի, Լիբանանի, Պաղեստինի, իսկ հետո Հյուսիսային Աֆրիկայի՝ Ալժիրի, Թունիսի, Սուդանի, Լիբիայի և արաբական մյուս երկրների նվաճումը: Արաբական երկրները մոտ 400 տարի մնացին օսմանյան դժնդակ տիրապետության տակ:

Այդ քաղաքականությունն իրականացնելիս թուրքական պետությունը բախվեց Սեֆյան Պարսկաստանի հետ, որն ուղղա-

կիորեն առնչվում էր նաև Հայաստանի ճակատագրին: Դեռևս 1502թ. Պարսկաստանում հաստատվել էր Սեֆյան դինաստիան: Սեֆյաններին հաջողվել էր իրենց մականի ներքո միավորել բուն Պարսկաստանը, Ատրպատականը, Միջագետքը, Վրաստանը և Հայաստանը: Երկու պետությունների միջև սահմանագիծ էր Եփրատ գետը: Օսմանյան սուլթան Սելիմ I Յավուզը (Ահեղը) 1514թ. Չալդրանի մոտ տեղի ունեցած ճակատամարտում ջախջախեց շահ Իսմայիլին և գրավեց Արևելյան Հայաստանը: Պատերազմական գործողությունները շարունակվեցին մինչև 1555թ., երբ Հայաստանի Սեբաստիա մարզի Ամասիա քաղաքում ստորագրվեց հաշտության պայմանագիր: Հայաստանը բաժանվեց երկու մասի՝ Արևմտյան և Արևելյան: Արևմտյան Հայաստանը, Վանի և Բագրևանդի նահանգներով հանդերձ, անցավ Օսմանյան կայսրությանը, իսկ մնացյալը կամ Արևելյան Հայաստանը մնաց Պարսկաստանի տիրապետության ներքո:

Սակայն Ամասիայի հաշտության պայմանագիրը չէր գոհացնում երկու կողմին էլ և շատ չանցած խախտվեց: Օսմանյան կողմը չէր կարողանում հաշտվել, որ նրան չէր հաջողվել նվաճել ամբողջ Հայաստանը, իսկ պարսկական կողմին չէր գոհացնում Հայաստանի մի մասը թուրքերին զիջելը: 1578թ. վերսկսվեցին պատերազմական գործողությունները նրանց միջև, որը տևեց մոտ տասը տարի:

Նախահարձակը դարձյալ թուրքական կողմն էր, որին հաջողվեց գրավել ամբողջ Հայաստանը: Պատերազմական գործողությունները շարունակվում էին: Պարսկաստանը կարողացավ ի վերջո ստիպել թուրքերին հեռանալ գրաված տարածքներից, և կողմերի միջև 1639թ. Կասրե Շիրինում ստորագրվեց հաշտության պայմանագիր: Դա ըստ էության Ամասիայի՝ 1555թ. հաշտության պայմանագրի վերարտադրությունն էր, որով ամրագրվեց Հայաստանի բաժանումը: Այդ պայմանագրով Հայաստանը դադարեց միասնական լինելուց: Նա բաժանվեց երկու մասի՝ Արևելյան Հայաստանի, որը մնաց Պարսկաստանի կազ-

մում, և Արևմտյան Հայաստանի, որը Օսմանյան կայսրության մաս կազմեց: Դա շատ ծանր հարված էր Հայաստանին և ողջ հայությանը[21]: Հարցը միայն այն չէ, որ Հայաստանը նվաճվեց ասիական այդ երկու պետությունների կողմից, այլ նաև այն, որ նա կոտորակվեց, կորցրեց իր միասնականությունը, ինչը թուլացնում էր նրա դիրքերը և նպաստում զանազան բարդությունների առաջացմանը՝ նրա գոյության և զարգացման տեսակետից:

Արևելյան և Արևմտյան Հայաստանի զարգացումն ընթացավ տարբեր կերպ:

Բայց դա դեռևս վերջին գործողությունը չէր: Խաղի մեջ մտավ բարձրացող Ռուսաստանը,որը ձգտում էր դուրս գալ Մերձավոր Արևելք և ամրապնդել իր միջազգային դիրքերը ստրատեգիական առումով ասիական այդ կարևոր հատվածում: Նրա շահերը բախվեցին Պարսկաստանի շահերի հետ: Պարսկաստանը պարտություն կրեց 1804-1813 թթ. և 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմներում, և Արևելյան Հայաստանն իր Երևան, Նախիջևան, Արցախ, Շիրակ, Գուգարք և մի շարք այլ շրջաններով անցավ Ռուսական կայսրությանը: Իսկ Արևմտյան Հայաստանը շարունակեց մնալ Օսմանյան կայսրության կազմում: Այդ պահից հետո շրջանառության մեջ դրվեցին «Արևելյան կամ Ռուսական Հայաստան» և «Արևմտյան կամ Թուրքական Հայաստան» տերմինները (եզրույթները), որը Հայաստան աշխարհի քաղաքական կարգավիճակի յուրահատուկ արտացոլումն էր: Օսմանյան կայսրության քաղաքական և տնտեսական համակարգը և պետական կառուցվածքը չէին նպաստում ոչ թուրք ժողովուրդների զարգացմանը և առաջընթացին, որոնց գլխին մշտապես կախված էր նրանց էթնիկական ինքնությունը պահպանելու

---

[21] Տե՛ս **Նիկոլայ Հովհաննիսյան**, Օսմանյան կայսրությունում Հայկական հարցի լուծման Լիբանանյան մոդելը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXI, Երևան, 2002, էջ 80, 81:

վտանգը: Այդպիսի պայմաններում խոսք չէր կարող լինել Հայաստանի գործոն լինելու մասին:

2.ՕՍՄԱՆՅԱՆ ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱՏՎԱԾՈՒՄ

Օսմանյան քաղաքականությունն այդ հարցում շատ վտանգավոր էր:

Արևմտյան Հայաստանը զբաղեցնում էր նախկին միասնական Հայաստանի մեծագույն մասը՝ մոտ 230 հազար քառակուսի կիլոմետր: Այստեղ կենտրոնացված էր հայ ազգաբնակչության ճնշող մեծամասնությունը՝ մոտ 2,5 միլիոն: Իսկ եթե նկատի առնենք նաև Արևմտյան Հայաստանից դուրս՝ Օսմանյան կայսրությունում, այդ թվում՝ մայրաքաղաք Ստամբուլում, Զմյուռնիայում և այլ քաղաքներում ու բնակավայրերում ապրող հայերին, ապա այդ թիվը XIX դարի կեսերին մոտենում էր 3 միլիոնի:

Օսմանյան կառավարությունն Արևմտյան Հայաստանը զավթելուց հետո անմիջապես ձեռնամուխ եղավ նրա ժողովրդագրական պատկերի շեշտակի փոփոխությանը՝ նպատակ ունենալով նվազեցնելու հայերի տեսակարար կշիռը հայկական մարզերում: Նա խրախուսում և հովանավորում էր ոչ հայկական էթնիկական տարրերի՝ թուրքերի, հատկապես քրդերի ներթափանցումը և բնակեցումը Արևմտյան Հայաստանի բոլոր շրջաններում: Օսմանյան իշխանությունների աջակցությամբ թուրքերը և քրդերը բնակեցվում էին հայկական գյուղերում և շրջաններում, նրանց ցեղապետերի և ավատական ավագանու ձեռքն էին անցնում հայերին պատկանող լավագույն վարելահողերը և արոտավայրերը: Հայերը ոչ միայն տնտեսապես, այլև իրավական տեսակետից կախման մեջ էին ընկնում թուրքական վերնախավից և քուրդ ցեղապետ-շեյխերից, աշիրաթապետերից, աղաներից և բեգերից:

Շարունակելով իրենց այդ քաղաքականությունը՝ օսմանյան իշխանությունները հետագայում, հատկապես XIX դարում, սկսեցին հայկական նահանգներում բնակեցնել նաև չերքեզներին՝ տալով նրանց զանազան արտոնություններ:Նրանց տիրապետության տակ «սեփականության իրավունքով» անցան հայերին պատկանող հողամասերը, որտեղ նրանք տեր ու տնօրեն էին:

Եվ, վերջապես, XX դարի 10-ական թվականներին, հատկապես 1912-1913թթ. Բալկանյան առաջին պատերազմում օսմանյան պետության կրած պարտությունից հետո, Բալկաններից մեծաթիվ գաղթականներ տեղափոխվեցին Փոքր Ասիա, որոնց հիմնական զանգվածը բնակեցվեց դարձյալ հայկական տարածքներում:

Նրանք XVII-XIX դարերում բազմիցս վերաձևավորում և վերակազմավորում էին Արևմտյան Հայաստանի մարզերը, որի հիմքում դրված էր հայկական շրջանները կոտորակելու, տրոհելու գաղափարը, այն հաշվով, որ դրանք միացվեն թուրքական շրջաններին և այդ ուղիով «փոքրացնեն» բուն հայկական տարածքները և նրա հայ ազգաբնակչության տոկոսային հարաբերակցությունը թուրք, քուրդ և մահմեդական այլ ժողովուրդների համեմատությամբ: Նա խրախուսում և հովանավորում էր ոչ հայկական էթնիկական տարրերի՝ թուրքերի, քրդերի, չերքեզների և այլոց ներթափանցումը կամ վերաբնակեցումը Արևմտյան Հայաստանում: Թուրքերի, քրդերի և չերքեզների բնակեցումը հայկական շրջաններում և տեղաբնիկ հայերի պապենական հողերի բռնագրավումը օսմանյան իշխանությունների հակահայկական հարցի մի կողմն էին: Հարցի մյուս կողմն այն էր, որ օսմանյան իշխանություններն անընդհատ բախումներ և ընդհարումներ էին հրահրում եկվոր մահմեդականների և տեղաբնիկ հայերի միջև, արհեստականորեն նրանց լարում միմյանց դեմ՝ պաշտպանելով նորաբնակներին ընդդեմ հնաբնակ հայերի:

Ի մի բերելով կարելի է ասել, որ օսմանյան իշխանությունները հայկական շրջաններում ոչ հայկական էթնիկական և

մահմեդական տարրերի բնակեցման քաղաքականությամբ երկու կարևոր նպատակ էին հետապնդում:

Առաջին, արհեստականորեն նվազեցնել հայերի թվաքանակն իր հայրենիքում՝ Արևմտյան Հայաստանում, և հասնել այն բանին, որ նրանք հայկական ոչ մի վիլայեթում բացարձակ մեծամասնություն չկազմեն: Այդուհանդերձ, ընդհուպ մինչև Առաջին համաշխարհային պատերազմը հայերը շարունակում էին կազմել ամբողջ Արևմտյան Հայաստանի բնակչության մեծամասնությունը:

Երկրորդ, կիրառելով «Բաժանիր, որ տիրես» քաղաքականությունը, օսմանյան կառավարությունը ոչ հայկական էթնիկական խմբերին արհեստականորեն լարում էր հայերի դեմ, հրահրում զինված բախումներ և այդ տարրերին օգտագործում որպես գործիք իր քաղաքականության նպատակների համար և դրանով իսկ փորձում շեղել նրանց ուշադրությունը գլխավոր չարիքի՝ օսմանյան դաժան ռեժիմի դեմ պայքարից:

Այսպիսին էր ընդհանուր գծերով օսմանյան կառավարության քաղաքականությունը հայերի նկատմամբ Արևմտյան Հայաստանում XVII-XIX դարերում: Եվ եթե բնութագրելու լինենք Հայկական հարցի բովանդակությունը հայերի ազգային խնդիրների տեսանկյունից, ապա կարելի է ասել, որ հայերը հետամուտ էին երեք կարևոր նպատակների:

Առաջին, պահպանել Արևմտյան Հայաստանի տարածքներն իրենց ձեռքում և կանխել դրանց բռնագրավումը թուրքերի, քրդերի և չերքեզների կողմից: Հայերի ելակետն այս հարցում այն էր, որ տարածքների կորուստն անխուսափելիորեն կհանգեցներ հայերի՝ որպես էթնոսի անհետացմանը, քանի որ տարածքն է այն հուսալի հիմքը, որի վրա կարող է գոյություն ունենալ տվյալ ժողովուրդը որպես էթնիկական ինքնություն:

Երկրորդ, պահպանել Արևմտյան Հայաստանի հայկական էթնիկական-ազգային և կրոնական դիմապատկերը, դիմագրավել նրա դեմոգրաֆիական էությունը և պատկերն արհեստա-

կանորեն փոփոխության ենթարկելու և աղճատելու օսմանյան կառավարության քաղաքականությանը:

Երրորդ, դիմակայել հայերի էթնիկական և կրոնական ձուլման բոլոր փորձերին, որ դրսևորվում էին Օսմանյան կայսրությունում՝ իշխանական բոլոր մակարդակներով:

Հատկապես խիստ վտանգավոր, կարելի է ասել կործանարար եղան սուլթան Աբդուլ Համիդ II-ի կառավարման տարիները (1876-1909թթ.), որը պատմության մեջ մտել է որպես **զուլումի դարաշրջան,** և ոչ միայն հայերի, այլև արաբների, հույների և բալկանյան ժողովուրդների համար, որոնք կանգնեցին ֆիզիկական ոչնչացման վտանգի առջև:

Վերադառնալով վարչատարածքային հարցերում հայերի նկատմամբ օսմանյան իշխանությունների քաղաքականությանը՝ պետք է նշել, որ նրանք, այսինքն՝ օսմանյան իշխանությունները, անընդհատ վերաձևում և վերակազմավորում էին Արևմտյան Հայաստանի մարզերը, մինչև որ գտնվեց այն տարբերակը, որն առավելագույնս էր համապատասխանում ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ կիրառվող քաղաքականությանը: Այդ քաղաքականության հիմքում դրված էր հայկական շրջանները տրոհելու գաղափարը, այն հաշվով, որ դրանք կցեն որևէ թուրքական շրջանի և այդ ուղիով «փոքրացնեն» բուն հայկական տարածքները և նրա հայ ազգաբնակչության տոկոսային հարաբերակցությունը թուրքական, քրդական և այլ մահմեդական ժողովուրդների համեմատ:

Այսպես, օրինակ, 1639թ. Կասրե Շիրինի պայմանագրից հետո Արևմտյան Հայաստանը բաժանվեց յոթ փաշայությունների՝ Էրզրումի, Սեբաստիայի, Վանի, Դիարբեքիրի, Բայազետի, Չըլդրի և Կարսի: Հետագայում կատարվեցին մի քանի վերաբաժանումներ: XIX դարի կեսերին փաշայությունների փոխարեն մտցվեց վիլայեթների՝ նահանգների համակարգը, և Արևմտյան Հայաստանը բաժանվեց Էրզրումի, Խարբերդի, Սվազի (Սեբաստիայի), Տրապիզոնի և Դիարբեքիրի վիլայեթների: Նախկին յոթ

վիլայեթների փոխարեն ստեղծվեցին հինգ վիլայեթներ: Վերացվեցին բուն հայկական Վանի, Բայազետի, Չըլդրի և Կարսի վիլայեթները: Հետապնդելով հայկական մարզերը տրոհելու և մահմեդական բնակչության թվաքանակն այդ մարզերում արհեստականորեն բարձրացնելու հակահայկական քաղաքականությունը՝ սուլթան Աբդուլ Համիդ II-ը 1879-1880 թթ. ստեղծեց Բիթլիսի նահանգը՝ դրա համար համապատասխան տարածքներ անջատելով Վանի և Դիարբեքիրի նահանգներից: 1880-ական թվականներին նա Էրզրումի վիլայեթը, որն ամենամեծն էր հայկական վարչական միավորների շարքում, բաժանեց չորս գավառների՝ Էրզրումի, Վանի, Մուշի և Հաքյարիի, իսկ մի փոքր անց վերացրեց Մուշի գավառը, որտեղ գերակայում էին հայերը, և կազմվեց մի նոր վիլայեթ՝ Դերսիմի վիլայեթը, որտեղ մեծամասնություն էին կազմում քրդերը և թուրքերը: Եվ վերջապես 1897թ. տեղի ունեցավ նոր բաժանում: Կազմավորվեցին Էրզրումի, Խարբերդի, Սվազի (Սեբաստիայի), Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի և Տրապիզոնի վիլայեթները:

Արևմտյան Հայաստանի վարչատարածքային այս բաժանումը, որն ավելի ճիշտ կլինի կոչել խեղկատակություն, այլևս հիմնական փոփոխության չենթարկվեց մինչև հայերի ցեղասպանությունը և էրգրի հայաթափումը:

Այս փուլում Հայկական հարցը, բացի վերոնշյալ խնդիրներից, ուներ նաև մեկ այլ կողմ, որի լուսաբանությամբ միայն հնարավոր է ամբողջական պատկերացում կազմել նրա էության և բնույթի մասին: Խոսքն արևմտահայության իրավական և քաղաքական վիճակի մասին է:

Հայերը, ինչպես Օսմանյան կայսրության մյուս բոլոր քրիստոնյա ժողովուրդները՝ ասորիները, բուլղարները, հույները, սերբերը, ռումինները և այլն, իրավազուրկ վիճակում էին: Նրանք համարվում էին ռայյա՝ հոտ, ըստ էության ճորտական վիճակում գտնվող ոչ լիարժեք, թուրքերի հետ համեմատած երկրորդ կարգի ժողովուրդներ: Նման ծանր վիճակում էին գտնվում նաև ոչ թուրք

մահմեդական ժողովուրդները, մասնավորապես արաբները:

Օսմանյան կայսրությունում չկար սահմանադրություն, երկրում տիրում էր սուլթանի՝փադիշահի կամքը, իսկ տեղերում տեր ու տնօրեն էին վալիները և փաշաները, որոնք հայտնի էին իրենց կամայականություններով: Գործում էին շարիաթի՝ մուսուլմանական իրավունքի, և ադաթի՝ սովորութային իրավունքի նորմերը, որոնք իրավական առումով չէին պաշտպանում հայերի, ինչպես և մյուս քրիստոնյաների շահերը: Հայերը՝ որպես քրիստոնյաներ, զրկված էին զենք կրելու իրավունքից, որը նրանց լրիվ անպաշտպան էր դարձնում զենք կրելու իրավունք ունեցող թուրքերի, քրդերի և չերքեզների հարձակումների և ոտնձգությունների դեմ հանդիման: Հայերը չէին կարող դատարաններում վկայություն տալ, իրավունք չունեին ձի նստելու, քանի որ հեծյալ կարող էր լինել միայն թուրքը, որին հանդիպելիս քրիստոնյա հայը, ըստ ադաթի, պարտավոր էր նրան զիջել ճանապարհը: Նման ստորացուցիչ և հայի արժանապատվությունը նսեմացնող սահմանափակումները և արգելքները շատ ու շատ էին: Հայերը չունեին զույքի և անձի ապահովություն և անձեռնմխելիություն: Գործող օրենքները, նորմերը և սովորույթները նրան նման երաշխիքներ չէին տալիս: Հային մշտապես հետապնդում էր անպաշտպանվածության զգացումը, որը նրա և նրա ընտանիքի կյանքը վերածում էր մղձավանջի:

Կար և կրոնի հարցը: Օսմանյան կայսրությունում սովորական երևույթ էր քրիստոնյա հայերի կրոնական զգացումների ոտնահարումը: Կրոնական հալածանքները, բռնի թուրքացման՝ իշխանությունների քաղաքականությունը, միահյուսված հայերի ծանր, նույնիսկ կարելի է ասել անելանելի սոցիալ-տնտեսական վիճակի հետ, շատ հաճախ ստիպում էին հայերին դավանափոխ լինել և ընդունել իսլամ: Ճիշտ է, դա հայերի մոտ զանգվածային բնույթ չկրեց, ինչպես մյուս քրիստոնյա ժողովուրդների, օրինակ՝ վրացիների մոտ, սակայն, այդուհանդերձ, դրա վտանգը մշտապես կախված էր հայերի գլխին:

Համանման վիճակում էին գտնվում Օսմանյան կայսրության տարածքում բնակվող, առանց բացառության, նաև մյուս բոլոր քրիստոնյա ժողովուրդները: Ահա թե ինչու պատմագիտական գրականության մեջ մի շարք ականավոր մասնագետներ, այդ թվում՝ արաբ մուսուլման պատմաբաններ Իբրահիմ Յազբեկը, Ֆուադ Հասան Հաֆիզը, Մարվան ալ-Մուդավարը և այլք, Օսմանյան կայսրությունը բնութագրում են որպես ժողովուրդների բանտ[22]: Այդ բանտում հայտնված ժողովուրդները փորձեր էին անում ինչ-որ չափով շտկելու դրությունը և բարելավելու իրենց վիճակը:

Այդ փորձերը հատկապես ակտիվացան XIX դարի սկզբներին, երբ ուժեղացավ ոչ թուրք ժողովուրդների, այդ թվում և հայերի ազգային ինքնագիտակցությունը: Նրանց ընդվզումներն ընդդեմ իրավական անարխիայի և կամայականությունների, շատ հաճախ վերածվում էին զինված պայքարի: XIX դարի 20-ական թվականներին ապստամբեցին հույները, որոնց հաջողվեց ի վերջո թոթափել օսմանական լուծը և 1830 թվականին դառնալ անկախ պետություն: Դրան հաջորդեց 1831-1841թթ. Եգիպտական ճգնաժամը, երբ Եգիպտոսի կառավարիչ Մուհամմադ Ալին զինված պայքար սկսեց թուրքական սուլթան Մահմուդ II-ի դեմ: Նրա բանակները մի շարք փայլուն հաղթանակներ տարան թուրքական զորքերի նկատմամբ: Մուհամմադ Ալին մոտ էր վերջնական հաղթանակին, միայն Ռուսաստանը և եվրոպական տերությունների միջամտությունը փրկեց Ստամբուլը վերջնական պարտությունից: 1862թ. ապստամբեցին Զեյթունի հայերը: Նրանք քաջաբար դիմագրավեցին թուրքական կանոնավոր բանակի զորամիավորումների հարձակումները և կարողացան ստիպել հակառակորդին հարգել իրենց իրավունքները և ազգային արժանապատվությունը: Ուժեղ խմորումներ և հակաթուրքական ելույթներ էին տեղի ունենում կայսրության համար-

---

[22] **Ն. Հովհաննիսյան,** Հայոց ցեղասպանությունն արաբական պատմագիտության քննական լույսի ներքո, Երևան, 2004, էջ 65:

յա բոլոր շրջաններում: Օսմանյան կայսրությունը, որը տիպաբանորեն պատկանում էր ռազմաֆեոդալական կայսրությունների կատեգորիային, խոր համակարգային ճգնաժամ էր ապրում, որը ներառել էր պետական, քաղաքական, իրավական, տնտեսական, սոցիալական, ազգամիջյան, կրոնական և հոգևոր-մշակութային ոլորտները:

7. ԼԵՌՆԱԼԻԲԱՆԱՆԻ ՄՈՒԹԱՍԱՐԻՖԻԱՆ. ՍԱՆ ՍՏԵՖԱՆՈՅԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ. ԲԵՌԼԻՆԻ ԿՈՆԳՐԵՍԸ

Այժմ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ Լեռնալիբանանի մոդելին, բացահայտել նրա էությունը և Հայկական հարցի լուծման համար այդ մոդելի կիրառման կարևորությանը և հնարավորություններին: Դա անհրաժեշտ է նաև Բեռլինի կոնգրեսում (1878թ.) Հայկական հարցի քննարկման կապակցությամբ:

Լեռնալիբանանում, որը գտնվում էր օսմանյան Թուրքիայի տիրապետության ներքո, XVII դարի վերջին և XIX դարի կեսերին քրիստոնյա և մահմեդական տարբեր համայնքների, մասնավորապես մարոնիների և դրուզների միջև պարբերաբար տեղի էին ունենում արյունալի բախումներ և ջարդեր: Անգլիան սովորաբար հովանավորում էր դրուզներին, իսկ Ֆրանսիան՝ մարոնիներին: 1860թ. գարնանը բռնկվեցին զանգվածային նոր բախումներ, որոնք դարձյալ վերածվեցին զանգվածային ջարդերի: Մարոնիների և դրուզների զինված խմբերը միմյանց կոտորում էին Բեյրութում, Զահլեում, Սայդայում, Դեյր ալ-Կամարում: Նույն թվականի հուլիսին ջարդեր սկսվեցին նաև Դամասկոսում: Սպանվեց 20000 մարդ, ոչնչացվեցին 380 քրիստոնեական գյուղ, 540 եկեղեցի, 40 տաճար և այլն: Ստեղծված պայմաններում 1860թ. սեպտեմբերի 5-ին Անգլիան, Ռուսաստանը, Ֆրանսիան, Պրուսիան և Ավստրիան ստեղծեցին միջազգային հանձնաժողով, որին նրանց ճնշման ներքո միացավ նաև Օսմանյան կայսրությունը: Հանձնաժողովի հիմնական նպատակը ոչ միայն և ոչ

այնքան այդ սպանդի պատճառների բացահայտումը և մեղավորներին պատժելն էր, որքան այնպիսի միջոցառումների մշակումը, որը կանխեր նման իրադարձությունների կրկնումը և, ամենակարևորը, մշակեր Լիբանանի կառավարման նոր վարչաձև կամ իրավական նոր ստատուտ:

Երկար բանակցություններից հետո հանձնաժողովն ավարտեց այդ քաղաքական-իրավական փաստաթղթի մշակումը, որը ստորագրվեց 1861թ. հունիսի 9-ին Ստամբուլում Անգլիայի, Ավստրիայի, Պրուսիայի, Ռուսաստանի, Ֆրանսիայի և Օսմանյան կայսրության կողմից, և որը ստացավ «Լիբանանի օրգանական ստատուտ» անվանումը: Դա մի կանոնադրություն էր, որը ներառում էր Լեռնալիբանանին վերաբերող վարչակառավարական, օրենսդրական, դատական, տնտեսական, ոստիկանական և տեղական մարմիններին վերաբերող բոլոր հարցերը:

Ըստ այդմ, Լեռնալիբանանը հռչակվում էր ինքնավար նահանգ՝ մութասարիֆիա, որը ղեկավարում էր քրիստոնյա նահանգապետը՝ մութասարիֆը: Մութասարիֆը նշանակվում էր սուլթանի կողմից, և նա կարող էր լինել միայն քրիստոնյա, իսկ նրա թեկնածությունը պետք է նախօրոք համաձայնեցված լիներ համաձայնագիրը ստորագրած վերոնշյալ եվրոպական հինգ պետությունների կողմից: Վերջիններս հանդես էին գալիս որպես Լեռնալիբանանի ինքնավարության երաշխավորներ: Մութասարիֆի քրիստոնյա լինելը պարտադիր պայման էր:

Շատ հետաքրքիր և կարևոր է, որ Լեռնալիբանանի առաջին փոխարքա կամ մութասարիֆ եվրոպական պետությունների ներկայացմամբ օսմանյան սուլթանը նշանակեց հայազգի Կարապետ Արթին Դաուդյանին[23]: Կարապետ Արթին Դաուդյանը՝ այդ երևելի հայը, օժտված էր պետական գործչին բնորոշ բարձր հատկանիշներով, արդարամիտ մի անձնավորություն, որի ջան-

[23] **Оганесян Н.О.** Арабская историография по новой идтории Армении-Новая историая Армении в трудах современных зарубежных авторов, Ереван, 1993, с.118-119.

քերի շնորհիվ խաղաղություն հաստատվեց նրան վստահված ինքնավարությունում: Նա շատ բարի հիշողություն է թողել Լիբանանի պատմության մեջ, իսկ նրա գործունեությունն արժանացել է այնպիսի հեղինակավոր մասնագետների դրական գնահատականին, ինչպես պրոֆեսորներ Քամալ Սալիբին, Ֆիլիպ Հիթթին և ուրիշներ: Լիբանան մեր այցելությունների ժամանակ, հանդիպումներ ունենալով նրանց և լիբանանյան ականավոր պետական գործիչների հետ, նրանցից միայն գովեստներ եմ լսել, որոնք գտնում էին, որ Լիբանանը շատ բանով է պարտական հայազգի այդ գործչին:

Լիբանանյան այս մոդելը հետագայում՝ ռուս-թուրքական 1877-1878թթ. պատերազմից հետո, կիրառվեց նաև Բուլղարիայում:

Այսպիսով, այդ մոդելը կիրառություն գտավ Օսմանյան կայսրության արաբական և բալկանյան տարածքներում: Դա առաջադիմական քայլ էր, որը նվազագույնի հասցրեց սուլթանական իշխանության միջամտությունը մութասարիֆության ներքին գործերին: Երկրամասում կրոնական համայնքների միջև հաստատվեցին խաղաղություն և համագործակցություն, արձանագրվեց նաև որոշակի առաջադիմություն տնտեսական, սոցիալական և կրթամշակութային մարզերում: Կարապետ Արթին Դաուդյանն իր փայլուն գործունեությամբ որպես Լիբանանի ղեկավար, մի ավելորդ անգամ հաստատում է մեր այն տեսակետը, որ **հայերը պետութենաստեղծ ազգ են**:

Հայերը մեծ հույսեր էին կապել Ռուսաստանի հետ, մանավանդ ռուս-թուրքական 1877-1878թթ. պատերազմից հետո, պատերազմ, որի ընթացքում Ռուսաստանը ջախջախիչ հարված հասցրեց թուրքական բանակին թե՛ եվրոպական և թե՛ ասիական ճակատներում: Ռուսաստանին կրկին անցան հայկական պատմական մի շարք շրջաններ, այդ թվում և հայկական հինավուրց քաղաքները՝ Կարսը, Արդահանը, Բայազետը և այլ բնակավայրեր: Հայերի ուրախությանը սահման չկար: Նրանք հավա-

տացած էին, որ իրենց նկատմամբ ևս կկիրառվի Լեռնալի-բանանի մոդելը՝ստատուտը, որն արդեն կիրառվել էր արա-բական երկիր Լիբանանի և Բալկանյան երկիր Բուլղարիայի պարագաներում: Պարտություն կրած Թուրքիան դիմեց Ռուսաս-տանին հաշտություն կնքելու խնդրանքով, որը ստորագրվեց 1878թ. հունվարի 31-ին: Թուրքական կողմն ընդունեց ռուսական կառավարության կողմից մշակված հաշտության պայմանները, որի 16-րդ հոդվածն ամբողջովին վերաբերում էր Հայկական հարցին[24], Արևմտյան Հայաստանում կիրառվող բարենորոգում-ներին: Ռուսաստանը հանդես էր գալիս որպես այդ բարե-փոխումների երաշխավոր: 16-րդ հոդվածում արձանագրված էր. «Բարձր Դուռը պարտավորվում է անհապաղ կենսագործել հա-յաբնակ մարզերի տեղական կարիքներից հատուցվող բարելա-վումներ և բարենորոգություններ և զերծ պահել հայերի ան-վտանգությունը քրդերից ու չերքեզներից»[25]: Պայմանագիրը պա-րունակում էր ևս մի շատ կարևոր դրույթ առ այն, որ Կողմերը, այսինքն՝ Ռուսաստանը և Օսմանյան կայսրությունը, համաձայն-վում են, որ Ասիական Թուրքիայում, այսինքն՝ Արևմտյան Հա-յաստանում, ռուսական զորքերը կմնան վեց ամիս ժամանակով, որի ընթացքում այնտեղ պետք է կիրառվեն բարեփոխումներ: Ռուսական զորքերի ներկայությունը բարեփոխումների իրակա-նացման յուրօրինակ երաշխիք էր:

Այսպիսով, XIX դարի վերջերին հայկական գործոնը կրկին հայտնվեց քաղաքական ասպարեզում, բայց կերպարանափոխ-ված ձևով՝ «Հայկական հարցի» տեսքով: Հայկական հարցը նախ և առաջ դառնում է ավելի մեծ՝ Արևելյան հարցի մի մասը, որը տնականորեն եվրոպական դիվանագիտության ուշադրության կենտրոնում էր: Ապա, սկսած Բեռլինի՝ 1878թ. միջազգային կոնգ-

---

[24] Дипломатический словарь, т.III, М. 1964, с. 122-123. Главная редакция**: А. А. Громыко, С,А. Голунский, В. М. Хвостов.**

[25] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Երևան, 1972 , էջ 92:

րեսից, նա դառնում է միջազգային դիվանագիտության քննարկման առարկա՝ իր վրա սևեռելով Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի և Ավստրո-Հունգարիայի ուշադրությունը, որոնք կազմում էին «Եվրոպական կոնցերտը»:

Բեռլինի կոնգրեսը հաջորդեց 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմին, որն ավարտվեց Թուրքիայի պարտությամբ և Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի ստորագրումով: Սան Ստեֆանոյի պայմանագիրը Հայկական հարցի լուծման հեռանկարների տեսանկյունից ընդհանուր առմամբ արժանի է դրական գնահատականի: Այդ պայմանագիրը ռուսական դիվանագիտության հաղթանակն էր, որն անհանգստացրեց եվրոպական մրցակից երկրներին՝ Գերմանիային, Ֆրանսիային, Մեծ Բրիտանիային, Ավստրո-Հունգարիային և Իտալիային: Նրանք վախենում էին, որ Օսմանյան կայսրությունը կընկնի լիակատար կախման մեջ Ռուսաստանից, և Արևելյան հարցում հավասարակշռությունը կփոխվի հօգուտ Ռուսաստանի, որը նրանք չէին կարող թույլ տալ: Ելնելով այդ մտայնությունից՝ վերոնշյալ եվրոպական պետությունները, հատկապես Մեծ Բրիտանիան, Գերմանիան և Ավստրո-Հունգարիան մեծ ջանքեր գործադրեցին Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի վերանայման համար, այն հաշվով, որ թուլացնեն Թուրքիայի կախվածությունը Ռուսաստանից, և իրենք կարողանան Թուրքիային պարտադրել իրենց պայմանները և թուլացնել Ռուսաստանի դիրքերը:

Բեռլինի կոնգրեսը կայացավ 1878թ. հունիսի1-ից հուլիսի 1-ը: Հայկական պատվիրակությունը Խրիմյան Հայրիկի գլխավորությամբ մեկնեց Բեռլին՝ մասնակցելու կոնգրեսին և եվրոպական պետություններին ներկայացնելու Հայկական հարցը և նրա լուծման խնդիրները: Բայց կոնգրեսը նրան, ինչպես նաև Կոստանդնուպոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանին թույլ չտվեց մասնակցել Վեհաժողովին՝ պատճառաբանելով, որ «Պատվիրակությունը որևէ պետության չի ներկայացնում»: Եվ թեև պատվիրակության կողմից Վեհաժողովին ներկայացվեց

համապատասխան Հուշագիր, բայց դա ուշադրության չարժանացավ:

Իսկ ի՞նչ էին ուզում հայերը, նրանց հոգևոր և քաղաքական առաջնորդները: Այդ շրջանում շատ էր խոսվում և քննարկվում Լեռնալիբանանի մոդելը: Հայերը դեմ չէին այդ մոդելի կիրառմանը: Արաբ հայտնի միջազգայնագետ Մուսա Պրենսը, որը շատ հանգամանորեն է ուսումնասիրել այդ հարցը, ահա թե ինչ է գրում. «Ոգեշնչված լիբանանյան նախադեպով, հայերը ցանկանում էին ստանալ մի համեստ վարչական ինքնավարություն, նվազ հավակնորդ, քան Լեռնալիբանանի միջազգային ստատուտը»[26]:

Բեռլինի կոնգրեսին հայկական պատվիրակության մասնակցության և Լեռնալիբանանի մոդելի կիրառման հարցին անդրադարձել է նաև եգիպտացի ականավոր պատմաբան Ֆուադ Հասան Հաֆիզը, որի հետ այդ հարցը մենք հանգամանորեն քննարկել ենք Կահիրեում մեր այցելության ժամանակ: Նա նկատեց մի նրբություն, որ թեև հայ պատվիրակությանը թույլ չտրվեց մասնակցել Բեռլինի կոնգրեսին, պատվիրակությունը, այդուհանդերձ, Վեհաժողովի մասնակիցներին հանձնեց մի Հուշագիր, որտեղ շարադրված էին արևմտահայերի պահանջները: Հենվելով այդ պահանջների վրա՝ եգիպտացի պատմաբանը հավաստում է, որ հայերը հանդես չէին գալիս հանուն Օսմանյան կայսրությունից անջատվելու, այլ խնդրում էին ստեղծել ինքնավար քրիստոնեական վարչություն՝ միջազգային երաշխիքներով, ինչպես 1861թ. հիմնված լիբանանյան վարչությունը[27]:

Ահա սա է եղել հայերի գլխավոր պահանջը, և նրանց անջատողական նկրտումներ վերագրելը հերյուրանք է, որը հրապարակ է նետվել օսմանյան կառավարության ջարդերի և ցե-

---

[26] **Moussa Prince, Avec la collaboration de Marie-Ange M,Prince**, L`Armenocide;, Lebanon, 1967, p,28.

[27] **Ֆուադ Հասան Հաֆիզ**, Հայ ժողովրդի պատմություն: Սկզբից մինչև մեր օրերը, Կահիրե,էջ199, **արաբերեն**:

դասպանության քաղաքականությունն արդարացնելու համար:

Հայկական գործոնի նման կերպարանափոխումը և յուրահատկությունն այդ շրջանում այն էր, որ եվրոպական տերությունները Հայկական հարցը, հայկական վիլայեթներում բարեփոխումներ կատարելու պատրվակով, օգտագործում էին Օսմանյան կայսրության ներքին գործերին միջամտելու և սուլթանից քաղաքական զիջումներ կորզելու համար, որից հետո նրանք լքում էին հայերին՝ անպաշտպան թողնելով նրանց սուլթանական ճնշիչ մեքենայի դեմ հանդիման: Հայկական գործոնի նման կերպարանափոխումը հայության, առաջին հերթին նրա արևմտյան հատվածի վիկտիմիզացիայի (զոհաբերության) պատճառ հանդիսացավ, որի գագաթնակետը 1915թ. Հայոց ցեղասպանությունը դարձավ:

Եթե Սան Ստեֆանոյի պայմանագրով ռուսական զորքերը պետք է մնային Օսմանյան կայսրությունում, Ստամբուլի շրջակայքում, առնվազն վեց ամիս, որի ընթացքում պետք է իրագործվեին բարեփոխումներ Արևմտյան Հայաստանում, և Ռուսաստանը դառնում էր այդ բարեփոխումների երաշխավորը, ապա Բեռլինի Վեհաժողովում ընդունված փաստաթղթի 61-րդ հոդվածով Սան Ստեֆանոյի Հաշտության պայմանագրի 16-րդ հոդվածը վերացվեց, և նրանից ընդհանրապես հանվեց ռուսական զորքերի՝ Օսմանյան կայսրությունում վեց ամսով մնալու հարցը: Վեհաժողովում ընդունված փաստաթղթով պահանջվում էր, որ Ռուսաստանն անհապաղ դուրս բերի իր զորքերը: Ռուսաստանը ենթարկվեց Բեռլինի կոնգրեսում ընդունված այդ որոշմանը, որով Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ կիրառելը թողնվում էր բացառապես օսմանյան սուլթանի հայեցողությանը: Դա շատ ծանր հարված էր հայերի սպասումներին, քանի որ նրանք, ինչպես նաև «եվրոպական կոնցերտի» անդամ-պետությունները շատ լավ գիտեին, որ նման հարցերը սուլթանը լուծում էր յաթաղանով: Եվ այդպես էլ եղավ: Կարծում ենք, որ Ռուսաստանի նման դիրքորոշումը, որն արդեն հայանպաստ չէր

դառնում, բացատրվում է նաև նրանով, որ Ռուսաստանի համար ավելի կարևոր էր Բուլղարիայի հարցը, որտեղ արդեն կիրառվել էր Լեռնալիբանանի մոդելը, և Բեռլինի կոնգրեսում այդ հարցը կասկածի տակ չառնվեց:

Ինչ վերաբերում է Արևմտյան Հայաստանին, ապա արյունարբու սուլթան Աբդուլ Համիդ II-ը շատ սպասել չտվեց, և այստեղ նա բարենորոգումների հարցը կիրառեց թուրքավարի, ավելի ճիշտ՝ **աբդուլհամիդավարի**: Քաղաքագետ-արաբագետ Էմիլ Թումայի դիպուկ բնութագրմամբ. «Սուլթանական հակահեղափոխությունն անցավ հարձակման»: Դրա համար մեղադրվում էր ոչ միայն Աբդուլ Համիդը, այլև եվրոպական պետությունները, առաջին հերթին Անգլիան և Գերմանիան: «Անգլո-գերմանական մրցակցությունը և բիսմարկյան մաքիավելիզմը թույլ չտվեցին կենսագործել Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը»,– նշում է Մուսա Պրենսը:

Բարեփոխումներ չիրականացվեցին հայկական բոլոր վեց վիլայեթներում-մարզերում՝ Խարբերդում, Սվասում (Սեբաստիայում), Բիթլիսում, Էրզրումում, Վանում և Դիարբեքիրում: Աբդուլ Համիդ II-ը գտնում էր, որ «Հայկական հարցին վերջ տալու համար պետք է նախ և առաջ վերջ տալ հայերին»[28]: Առաջնորդելով այդ հակամարդկային գաղափարներով՝ օսմանյան արյունարբու սուլթանը սկսեց հայկական ջարդերը, որոնք իրենց գագաթնակետին հասան 1894-1896թթ. բոլոր վիլայեթներում, ինչպես նաև Ստամբուլում և կայսրության հայաբնակ այլ շրջաններում և վայրերում: Կոտորվեց մոտ 300 հազար հայ: Մասնագետները գտնում էին, որ կոտորածները նախապատրաստվել էին հանգամանորեն: Դա մինչ այդ Օսմանյան կայսրությունում եղած բոլոր կոտորածներից ամենախոշորն էր և սարսափելին, որն իր բնույթով ցեղասպանություն էր: Սիրիացի պատմաբան

[28] Տե՛ս **Նիկոլայ Հովհաննիսյան**, Արաբական երկրների պատմություն, II, Երևան, 2004, էջ 457:

Խեյրի Համա այդ ջարդերն անվանել է «զազանային»[29]: Այդ ջարդերից հետո, որը պատմագրության մեջ կոչվել է Հայոց ցեղասպանության սկիզբ, Աբդուլ Համիդը ստացավ «Մեծ ոճրագործ» մականունը:

8. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԵՎ ՑԱՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թեև Բեռլինի կոնգրեսը մերժեց հայերի պահանջը և նրանց ներկայացուցչի Հուշագիրը քննության առարկա չդարձան, այդուհանդերձ, այդ հարցը օրակարգից չհանվեց: Հայկական վիլայեթներում բարենորոգումներ անցկացնելու, այդ թվում և ըստ Լեռնալիբանանի մոդելի, որպես Հայկական հարցի լուծման հնարավոր տարբերակ, երբեմն-երբեմն հիշեցվում էր հայերի կողմից՝ սպասելով ավելի հարմար պահի նրան կրկին վերադառնալու համար:

Հայերը վերսկսեցին իրենց դիմումները եվրոպական պետություններին՝ կոչ անելով նրանց պարտադրել Ստամբուլին իրագործելու դեռևս Բեռլինի կոնգրեսում խոստացված բարենորոգումները հայաբնակ շրջաններում: Դրա մասին է վկայում Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Հինգերորդի ուղերձը Լոնդոնում 1912թ. գումարված կոնֆերանսի մասնակից եվրոպական երկրներին: Չբավարարվելով դրանով՝ հայոց կաթողիկոսը Լոնդոն ուղարկեց հատուկ պատվիրակություն Եգիպտոսի առաջին վարչապետ Նուբար Նուբարյանի որդու՝ Պողոս Նուբարի գլխավորությամբ, հանձնարարելով նրան կոնֆերանսում բարձրացնել հայկական վիլայեթներում բարեփոխումների իրականացման հարցի քննարկումը: Սակայն կոնֆերանսը հրաժարվեց քննար-

[29] Նույն տեղում, էջ 458, 459:

կել հայերի խնդրանքը[30]: Մուսա Պրենսը շատ դիպուկ նկատել է, որ «Հայկական վիլայեթներում բարենորոգումներ կիրառելու խոստումները մնացել էին մեռյալ կետի վրա, իսկ կառավարական պաշտոնյաները և քրդական ցեղերը շարունակում էին բոլոր իրավական նորմերի խախտումը և ավազակությունը»[31]:

Հայկական հարցը նորից բարձրացնելու համար նպաստավոր պայմաններ ստեղծվեցին 1912-1914թթ., որը կապված էր 1912-1913թթ. Բալկանյան պատերազմների և Թուրքիայի կրած պարտությունների հետ: Եվ կրկին նախաձեռնությամբ հանդես եկավ հայոց կաթողիկոս Գևորգ Հինգերորդը:

Ցարական կառավարությունը, ընդառաջելով կաթողիկոս Գևորգ Հինգերորդի խնդրանքին, մշակեց և 1912-1913թթ. եվրոպական մեծ տերությունների քննարկմանը ներկայացրեց Հայկական հարցի կարգավորման մի առաջարկություն, որի հիմքում դրված էին Լեռնալիբանանի մութասարիֆության՝ ինքնավարության սկզբունքները: Ռուսական առաջարկությունը քննարկման առարկա դարձավ 1913թ. հուլիսի 3-24-ին Ստամբուլում հավատարմագրված եվրոպական մեծ տերությունների դեսպանների ժողովում Ռուսաստանն առաջարկում էր հայկական վեց վիլայեթները՝ Էրզրում, Բիթլիս, Խարբերդ, Սվաս, Վան և Դիարբեքիր, միավորել և ստեղծել հայկական մեկ նահանգ, որի գլուխ կանգնած էր լինելու նահանգապետը: Նա նշանակվում էր օսմանյան սուլթանի կողմից եվրոպական պետությունների համաձայնությամբ, հինգ տարի ժամանակով: Նահանգապետը պետք է լիներ ամբողջ գործադիր իշխանությունը, ստեղծվում էր վարչական խորհուրդ և ընտրվում նահանգական խորհուրդ, որտեղ քրիստոնյաները և մահմեդականները ներկայացվելու էին հավասար քանակով:

Առաջարկությունը պարունակում էր նաև այլ կարևոր

---

[30] **Ուսման ալ-Թուրք**, Էջեր հայ ազգի պատմությունից, Հալեբ, 1960, էջ 191, **արաբերեն:**

[31] **Moussa Prince,** L'Armenocide, p. 31.

կետեր՝ քրդերից կազմված համիդիե հեծելազորի վերացում, որը պատուհաս էր դարձել արևմտահայության գլխին, հայերից բռնագրավված հողերի վերադարձ հայերին կամ դրա դիմաց փոխհատուցման վճարում, հայկական նահանգներում Բալկաններից գաղթած մահմեդականների բնակեցման արգելում և այլ պահանջներ: Այս վերջին հարցը շատ ցավոտ հարց էր հայերի համար: Եվ դա հասկանալի է, քանի որ Բալկաններից Արևմտյան Հայաստան էին եկել ավելի քան 500 000 մահմեդական գաղթականներ: Ահա թե ինչ է գրել այդ մասին իմ ասպիրանտ և իմ ղեկավարությամբ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում իր թեկնածուական ատենախոսությունը հաջողությամբ պաշտպանած Սալիհ Զահիր ադ-Դինը. «Կայսրությանը համակեց ազգայնամոլական և ռասայական մի ալիք, որի հետևանքով բարդացավ հայ ժողովրդի վիճակը, սաստկացան թալանի և անպատիժ ոճրագործությունների դեպքերը: Ամայացած հայկական գյուղերը վերաբնակեցվում էին թուրք գաղթականներով»[32]:

Եվրոպական պետությունները տարբեր դիրքեր գրավեցին Ռուսաստանի ներկայացրած ծրագրի նկատմամբ: Անգլիան և Ֆրանսիան, որ Անտանտի գծով Ռուսաստանի դաշնակիցներն էին, սկզբունքորեն համաձայնվեցին այդ առաջարկությանը, սակայն ակտիվություն չցուցաբերեցին այն պաշտպանելու ուղղությամբ: Գերմանիան, Ավստրո-Հունգարիան և Թուրքիան դեմ արտահայտվեցին ռուսական առաջարկությանը: Նրանք հատկապես դեմ էին հայկական վեց վիլայեթները միացնելու և հայկական նահանգ ստեղծելու գաղափարին, ինչպես նաև նահանգապետ նշանակելուն, նահանգային և տեղական ժողովներում պետական պաշտոններում քրիստոնյաների և մահմեդականների պարիտետի հաստատմանը և այլն:

Գերմանիան Ավստրո-Հունգարիայի և Թուրքիայի հետ

---

[32] **Սալիհ Զահիր ալ-Դին**, Օսմանյան կառավարության քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում և մեծ տերությունների դիրքորոշումը, Բեյրութ, 1996, էջ 23, **արաբերեն**:

միասին առաջարկեց բանակցությունների հիմք ընդունել թուրքական նախագիծը, որտեղ բացակայում էր հայկական նահանգ ստեղծելու կետը: Դրա փոխարեն առաջարկվում էր վերականգնել վեց վիլայեթների նախկին կարգավիճակը: Թուրքիան դեմ էր նաև եվրոպական վերահսկողության հաստատմանը՝ կապված պաշտոնյաների նշանակման և նախագծի իրականացման հետ:

Գերմանիան Ավստրո-Հունգարիայի և Թուրքիայի հետ միասին առաջարկեց որպես հիմք ընդունել թուրքական նախագիծը, որտեղ, ինչպես նշվեց, բացակայում էին հայկական նահանգ ստեղծելու կետը և, բնականաբար, նահանգապետի պաշտոնը:

Երկու առաջարկությունների շուրջ սկսվեց դիվանագիտական երկարատև պայքար, որի ընթացքում Ռուսաստանը հարկադրված դիմեց զիջումների: Խոսքը Ռուսաստանի և Գերմանիայի կողմից առաջարկված մի կարևոր կետի մասին է: Այն ժամանակ, երբ հայերը պահանջում էին բարենորոգումներ անցկացնել Ռուսաստանի վերահսկողության պայմաններում, Գերմանիան առաջարկեց մերժել այդ պահանջը և բարենորոգումների հսկողությունն իրականացնել միջազգային երկու կոմիսարների կողմից, որոնք պետք է լինեին չեզոք պետություններից: Այդ պահանջն իր արտացոլումը գտավ ռուս-թուրքական պայմանագրի մեջ: Դժվար չէ կռահել, որ գերմանական հակաառաջարկը նպատակ էր հետապնդում չթողնել Ռուսաստանի դիրքերի ուժեղացումը՝ մի կողմից, և բարենորոգումների սքողված իրականացումը թողնել օսմանյան կառավարության իրավասությանը՝ մյուս կողմից: Գերմանական առաջարկը վերջին հաշվով ուղղված էր հայերի ազգային շահերի դեմ:

Սակայն դրա դիմաց Ռուսաստանին հաջողվեց Թուրքիային ստիպել 1914թ. հունվարի 26-ին ստորագրել համաձայնագիր հայկական բարենորոգումների վերաբերյալ:

Ռուս-թուրքական համաձայնագիրը վարչատարածքային հարցում, որը կենտրոնական հարցն էր, ընդունեց բոլորովին նոր

տարբերակ: Կողմերը համաձայնվեցին Արևմտյան Հայաստանը բաժանել երկու գոտու: Առաջին գոտու մեջ միավորեցին Էրզրումի, Սվասի և Տրապիզոնի վիլայեթները, որով Հայաստանը ելք էր ստանում դեպի ծով: Իսկ երկրորդ գոտու մեջ միավորեցին Բիթլիսի, Վանի, Խարբերդի և Դիարբեքիրի վիլայեթները: Յուրաքանչյուր գոտու ղեկավար էր նշանակվում ընդհանուր տեսուչը, որը պետք է լիներ օտարերկրացի, այսինքն՝ ոչ թուրքահպատակ: Նրան նշանակում էր օսմանյան կառավարությունը եվրոպական մեծ տերությունների երաշխավորությամբ: Ընդհանուր տեսուչն օժտվում էր գործադիր իշխանություն իրականացնելու որոշակի լիազորություններով, իրավասու էր աշխատանքի ընդունել և ազատել պաշտոնյաների, լուծել հողային վեճերը և այլն:

Ստեղծվում էին տեղական խորհուրդներ, որի անդամներն ընտրվելու էին քրիստոնյաների և մահմեդականների միջև թվական հավասարության՝ պարիտետի պահպանման սկզբունքով: Վերացվում էր համիդիե հեծելազորը, և նրա փոխարեն ստեղծվում էր պահեստային հեծելազոր[33]:

Ահա այսպիսին էր ընդհանուր գծերով լիբանանյան մոդելի այն տարբերակը, որն առաջարկվում էր Հայկական հարցը կարգավորելու համար, և որն ընդունելի եղավ թե՛ Օսմանյան կայսրության և թե՛ եվրոպական պետությունների՝ Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Ռուսաստանի, Անգլիայի ու Ֆրանսիայի համար: Դրանով իսկ Հայկական հարցի լուծումը դուրս էր գալիս բացառապես օսմանյան սուլթանի իրավասության շրջանակներից և տեղափոխվում այլ՝ նոր հարթություն: Ինքնին վերցրած՝ սա մեծ առաջընթաց էր, որը հույս էր ներշնչում, որ վերջապես Հայկական հարցի լուծումը շարժվում էր մեռյալ կետից և մտնում գործնական փուլ:

[33] Сборник дипломатических документов. Реформы в Армении 26 нвября 1912 года-10 мая 1914 года, С.П., 1915, с. 158-180.

Եվ, իսկապես, համաձայնագրին հաջորդած առաջին քայլերը որոշակի հիմք էին տալիս նման լավատեսական մոտեցումների համար:

Սուլթանը եվրոպական պետությունների համաձայնությամբ նշանակեց երկու գոտիների ընդհանուր տեսուչներին: Ընդհանուր տեսուչն առանցքային անձնավորություն էր լիբանանյան մոդելի համակարգում, քանի որ նա օժտված էր լայն լիազորություններով, և նրանից շատ բան էր կախված տերությունների միջև ձեռք բերված համաձայնության հետևողական կիրառման համար:

Առաջին գոտու, որի մեջ միավորվել էին Էրզրումի, Սվասի և Տրապիզոնի վիլայեթները, ընդհանուր տեսուչ նշանակվեց Հոլանդիայի քաղաքացի Վեստենենկը, իսկ երկրորդ գոտում, որը կազմված էր Բիթլիսի, Խարբերդի, Վանի և Դիարբեքիրի վիլայեթներից, ընդհանուր տեսուչ նշանակվեց Նորվեգիայի քաղաքացի Հոֆը:

Վերլուծելով ռուս-թուրքական պայմանագրով ընդունված լիբանանյան մոդելը որպես հիմք Հայկական հարցի կարգավորման համար՝ պետք է որպես նորություն առանձնացնել այն պարագան, որ Տրապիզոնի վիլայեթը նույնպես ներառվել էր այն վիլայեթների շարքում, որոնց վրա պետք է տարածվեին բարենորոգումները: Նորություն էր նաև, ինչպես նշվեց, եվրոպական երկու տեսուչների նշանակումը:

Իսկ ինչպե՞ս զարգացան հետագա իրադարձությունները:

Երկու ընդհանուր տեսուչներն էլ ժամանեցին Կոստանդնուպոլիս՝ պատրաստ մեկնելու Էրզրում և Վան՝ ձեռնամուխ լինելու իրենց դժվարին և պատասխանատու պարտականությունների կատարմանը: Սակայն դա հաջողվեց միայն Հոֆին, որը, իրոք, 1914թ. հուլիսին ժամանեց իր նստավայրը՝ Վան: Իսկ ինչ վերաբերում է Վեստենենկին, ապա նա մի փոքր հապաղեց և այդպես էլ չկարողացավ մեկնել Էրզրում: Նա, ինչպես և Հոֆը, որը թեև հասել էր Վան, այդպես էլ չկարողացան անցնել իրենց

պարտականությունների կատարմանը: 1914թ. օգոստոսի 1-ին սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը, որի ժամանակ Ռուսաստանը, Անգլիան և Ֆրանսիան՝ մի կողմից, և Գերմանիան, Ավստրո-Հունգարիան ու Թուրքիան՝ մյուս կողմից, հայտնըվեցին հակադիր ռազմաքաղաքական բլոկներում և դարձան միմյանց դեմ պատերազմող կողմեր:

Այդ նոր ստեղծված ռազմաքաղաքական իրադրությունից փայլուն օգտվեց Թուրքիան, որի թիկունքում կանգնած էին Գերմանիան և Ավստրո-Հունգարիան, և չեղյալ հայտարարեց 1914թ. հունվարյան ռուս-թուրքական պայմանագիրը Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ կիրառելու մասին: Ընդհանուր տեսուչներ Հոֆը և Վեստենենկը թուրքական իշխանությունների կողմից արտաքսվեցին Օսմանյան կայսրության տարածքներից:

Այս առնչությամբ արաբ պատմաբան Ասադ Դաղիրն արտահայտել է մի կարծիք, որն այլ կերպ, քան համարձակ, չի կարելի անվանել. «Հայկական հարցը,-գրում է նա,- դարձավ եվրոպական մեծ պատերազմի պատճառներից մեկը, որը հնարավորություն ստեղծեց լուծելու Արևելյան հարցն իր բոլոր ճյուղավորումներով՝ ռասիզմի հիմքի վրա»[34]:

Ահա այսպիսի վախճան ունեցավ լիբանանյան մոդելի ոդիսականը՝ կապված Հայկական հարցի լուծման հետ: Այդ փուլում արևմտահայությունը ձգտել է իր հարցը լուծել Օսմանյան կայսրության շրջանակներում և չի դրել Օսմանյան կայսրությունից անջատվելու հարցը: Նրա համար ընդունելի է եղել և՛ բարենորոգումների, և՛ ապակենտրոնացման, և՛ լիբանանյան մոդելի տարբերակը:

Թեև պատմությունը «եթե» չի սիրում, և դյուրին է պատմության խորքերից դատողություններ անել, սակայն կարծում ենք, որ սխալված չենք լինի, եթե ասենք, որ հայերը երբեք այդքան մոտ չեն եղել իրենց հարաբերություններն օսմանյան իշխանությունների հետ նոր սկզբունքների վրա կառուցելու և սկզբուն-

[34] **Ասադ Դաղիր**, Արաբական ապստամբությունը, Հալեբ,1989, էջ 31:

քային նոր քայլ կատարելու Հայկական հարցի լուծման ուղղությամբ, ինչպես 1914թ. ռուս-թուրքական պայմանագրի ստորագրումից հետո: Դա, հավատացած ենք, կարող էր դառնալ շրջադարձային արևմտահայության և ընդհանրապես համայն հայության պատմության մեջ: Նման եզրակացության հանգելու համար հիմք ենք ընդունում այն իրողությունը, որ լիբանանյան մոդելը և՛ Լիբանանին, և՛ Բուլղարիային առաջնորդեց դեպի անկախություն: Երկուսն էլ ի վերջո դարձան անկախ պետություններ: Իսկ ինչու՞ չէր կարող նույնը պատահել նաև Հայաստանի հետ:

Ամփոփելով կարող ենք ասել, որ արևմտահայությունը ձգտել է իր հարցը լուծել Օսմանյան կայսրության շրջանակներում: Հայերի համար ընդունելի են եղել և՛ բարենորոգումները, չնայած դրա որոշ ամորֆ լինելուն, և՛ ապակենտրոնացումը, և՛ Լեռնալիբանանի ինքնավար ստատուտի տարբերակը: Եվ բնավ էլ հայերի մեղքը չէր, որ այդ տարբերակներից և ոչ մեկը զանազան հանգամանքների բերումով հնարավոր չեղավ կենսագործել: Գործադրվեց միայն մի տարբերակ, զանգվածային, կարելի է ասել տոտալ կոտորածների տարբերակը:

Եվ ջարդերի ողողանջների ներքո Հայկական հարցը մտավ իր զարգացման մի նոր և ամենառողբերգական՝ Ցեղասպանության փուլը, որին կանդրադառնանք հետագա բաժիններում:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՅՑՆԵՐՈՒՄ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՀՈՇՈՏՈՒՄԸ ՔԵՄԱԼԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿՈՂՄԻՑ 1918- 1920թթ.

Շարունակելով հայկական գործոնի մետամորֆոզի և նրա հայտնության ու անհետացման ամպլիտուդի դիտարկումները՝ ցանկանում ենք նշել, որ հայկական գործոնը՝ որպես ռազմաքաղաքական երևույթ, սկսեց վերակենդանացման նշաններ ցույց տալ 1918-1920թթ.:

Սակայն մինչ այդ հարկ ենք համարում անդրադառնալ Հայկական հարցի լուծման ևս երկու մոդելի:

1.ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ՄՈԴԵԼԸ

Դա ներկայացվում էր զանազան մոդիֆիկացիաներով և նախատեսվում էր հայկական վեց վիլայեթների համար: Նշված մոդելը ձևականորեն ընդունելի էր Հայկական հարցի մեջ ընդգրկված բոլոր երեք կողմերի համար. ա) արևմտահայության, բ) եվրոպական պետությունների՝ Անգլիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի և Ավստրո-Հունգարիայի, և գ) Օսմանյան կայսրության: Սակայն այդ մոդելն այդպես էլ չունեցավ իրական և ազդեցիկ լծակներ, որն այն դարձներ պարտադիր, անկասելի և անշրջելի: Եվրոպական պետությունները բավարարվում էին ընդունված որոշումներով և լոկ զանազան հայտարարություններով և հարկ չէին համարում դիմել գործնական և արդյունավետ քայլերի:

Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա նրա կառավարողներն այս հարցում մշտապես վարել են երկդիմի քաղաքականություն: Նրանք մի կողմից հրապարակայնորեն ընդունում էին հայկական շրջաններում բարեփոխումների անհրաժեշտությունը և իրենց ստորագրությունը դնում միջազգային համապատասխան փաստաթղթերի տակ, իսկ մյուս կողմից՝ արտակարգ եռանդով իրագործում հայկական ջարդեր:

2.ԼԱՄԱՐՔԱԶԻԱՅԻ՝ ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ՄՈԴԵԼԸ

Այս մոդելը մեծ տարածում գտավ առանձին ազգային-քաղաքական գործիչների մոտ, ինչպես օրինակ՝ Աբդուլ Համիդ II-ի զարմիկի՝ քրոջ որդու՝ իշխան Սալահէդդինի: Նրա կարծիքով անհրաժեշտ էր բոլոր ոչ թուրք ժողովուրդներին տալ լայն ինքնավարություն և դրա հիման վրա **ստեղծել իրավահավասար պետական կազմավորումների կոնֆեդերացիա**: Իշխան Սալահէդդինի կարծիքով նման իրավունքից պետք է օգտվեին նաև հայերը: Սակայն սուլթանի զարմիկի տեսակետները հանդիպեցին սուլթանական պալատի դիմադրությանը, և նա զգալով, որ իր կյանքին արդեն վտանգ է սպառնում, փախավ Շվեյցարիա:

Կոնֆեդերացիայի փոխարեն արևմտահայությունը կանգնեց ցեղասպանության առջև:

Սակայն վերադառնանք Հայաստանի Առաջին հանրապետության հռչակման հարցին:

3.1918թ. ՄԱՅԻՍԻ 28-Ը: ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ

1918թ. գարնանը, հատկապես մայիս ամսվա վերջերին, խիստ լարված իրավիճակ էր Անդրկովկասում: Անդրկովկասի Ֆեդերալ Դեմոկրատական Հանրապետությունը, որի կազմի մեջ մտնում էին Ադրբեջանը, Հայաստանը և Վրաստանը, հայտնվել էր ծանր վիճակում: Թուրքական զորքերը զգալի տարածքներ էին գրավել և առաջ էին շարժվում՝ սպառնալով գրավել նոր տարածքներ: Կենսական հարց էր դարձել թուրքական զորքերի լայնածավալ հարձակումը և նորանոր տարածքներ գրավելու Թուրքիայի անսքող նկրտումները կասեցնելու խնդիրը:Սակայն այդ հարցում, այսինքն՝ պատերազմի ավարտի և խաղաղության հաստատման հարցում նրանց միջև չկար միասնական դիրքո-

րոշում: Այդ հարցում ամենից շատ շահագրգռված էր Հայաստանը, ինչ-որ չափով նաև Վրաստանը: Ինչ վերաբերում էր Ադրբեջանին, ապա նա բացահայտորեն մերժում էր պատերազմել Թուրքիայի դեմ: Այդ հարցը քննարկվեց Անդրկովկասի Սեյմում 1918թ. մայիսի 26-ին, սակայն կողմերը համաձայնության չեկան, և հենց այդ նույն օրը Անդրկովկասյան ֆեդերացիան լուծարվեց: Ստեղծվեց քաղաքական նոր իրադրություն, և նույն օրը՝ մայիսի 26-ին, Վրաց ազգային խորհուրդը, որի նախագահն էր Նոյ Ժորդանիան, հռչակեց Վրաստանը որպես անկախ պետություն: Նույն ուղղությամբ գնաց նաև Ադրբեջանը: 1918թ. մայիսի 27-ին Մուսուլմանների Ազգային խորհուրդն ընդունեց հռչակագիր Անդրկովկասյան Մուսուլմանական Հանրապետության անկախության մասին, որին թուրքերն անվանակոչեցին Ադրբեջան:

Իսկ Հայաստա՞նը:

Նրա անկախության հարցը և դրա հետ կապված պետության հռչակումը տեղի ունեցան ոչ թե բուն Հայաստանում, այլ Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսում (Թբիլիսիում), հայերին և վրացիներին հանրահայտ մեծահարուստ Արամյանցի տանը կայացած քննարկման արդյունքում: Այստեղ կայացավ Հայոց ազգային խորհրդի նիստը: Հանգամանալից քննարկումից հետո՝ **1918թ. մայիսի 28-ին, Հայոց ազգային ժողովը հռչակեց Հայաստանի անկախությունը:** Անկախության հռչակագիրը մշակել էր Նիկոլ Աղբալյանը: Նրանում ասված էր. **«Հայոց ազգային խորհուրդն իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն: Որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մոտիկ օրերում կազմել հայոց ազգային կառավարություն, Ազգային խորհուրդը ժամանակավորապես ստանձնում է կառավարական բոլոր ֆունկցիաները հայկական գավառների՝ քաղաքական և վարչական ղեկավարման համար»**[35]:

Դա կապված էր Արևելյան Հայաստան թուրքական զոր-

[35] hy.wikipedia.org /wiki/ Հայաստանի Առաջին հանրապետություն:

քերի ներխուժման և նրանց ջախջախման հետ, որն իսկապես հրաշք էր: Թուրքական զորքերը, գրավելով Ալեքսանդրապոլը և այլ կարևոր բնակավայրեր, սրընթաց շարժվում էին դեպի Երևան՝ հույս ունենալով, որ իրենց կհաջողվի գրավել Հայոց մայրաքաղաքը և անուղղելի հարված հասցնել Հայաստանին և հայությանը: Հայերը, հայկական քաղաքական ուժերը և համայն հայությունը հստակ գիտակցում էին, թե դա ինչ է նշանակում, և ուժ գտան դիմագրավելու մեր պատմական ոսոխին: Տեղի ունեցավ վճռորոշ երեք ճակատամարտ: Առաջինը Սարդարապատի ճակատամարտն էր 1918թ. մայիսի 21-29-ը, երկրորդը՝ Բաշ Ապարանի՝ 1918թ. մայիսի -23-29-ը և երրորդը՝ Ղարաքիլիսայի՝ 1918թ. մայիսի 24-28-ը:

Հայոց բանակը ջախջախիչ հարված հասցրեց և հաղթանակեց Սարդարապատի և Բաշ Ապարանի ճակատամարտերում և մեծ դիմադրություն ցույց տվեց Ղարաքիլիսայի ճակատամարտում: Բոլորն ապշած էին հայ զինվորների հերոսությունից և իրենց երկիրը՝ Հայոց աշխարհը, պաշտպանելու նրանց կարողությունից: **Ուստի և պատահականություն չէր, որ Կովկասյան ճակատում թուրքական զորքերի գլխավոր հրամանատար Մեհմեդ Վեհիբ փաշան հայտարարեց հայ զինվորների մասին. «Նրանք կարող են լինել աշխարհի լավագույն զինվորները»**[36]:

Եվ, այսպես, **Հայաստանի Հանրապետությունը ստեղծվել է 1918թ. մայիսի 28-ին՝ Հայաստանի արևելյան հատվածում, Սարդարապատի, Բաշ Ապարանի և Ղարաքիլիսայի մայիսյան հերոսամարտերից հետո: Եվ այստեղ ի՞նչն է ամենակարևորը: Դա ոչ թե նվեր կամ շնորհ էր հայերին, այլ արդյունք նրանց հերոսական մաքառման, հայոց արքայից արքա Տիգրան Մեծ կայսրի ժառանգորդների արիության և անձնազոհության, որը ստիպեց արյունախում թուրքերին խոնարհվել Մեհմեդ Վեհիբ փաշայի բնութագրմամբ «աշխարհի լավագույն զինվորների»՝**

[36] Նույն տեղում:

հայերի առջև:

Հայաստանի Առաջին հանրապետության հիմնադիրը Արամ Մանուկյանն էր: Այդ բնագավառում բացառիկ դերակատարում են ունեցել նաև Մովսես Սիլիկյանը, Դրաստամատ Կանայանը, գեներալ Թովմաս Նազարբեկյանը, Անդրանիկը, Գարեգին Նժդեհը և այլք:

Կազմվեց Հայաստանի Առաջին հանրապետության կառավարությունը: 1918թ. հուլիսի 24-ին հրապարակվեց կառավարության կազմը, որը բաղկացած էր վեց անդամներից՝ 1. Հովհաննես Քաջազնունի՝ կառավարության նախագահ-վարչապետ, 2. Արամ Մանուկյան՝ Ներքին գործերի նախարար, 3. Ալեքսանդր Խատիսյան՝ Արտաքին գործերի նախարար, 4. Խաչատուր Կարճիկյան՝ Ֆինանսների նախարար, 5. Հովհաննես Հախվերդյան՝ Զինվորական նախարար և 6. Գրիգոր Տեր-Պետրոսյան՝ Արդարադատության նախարար:

Կառավարության առաջին կարևոր քայլերից մեկը եղավ Արտաքին գործերի նախարար Ալեքսանդր Խատիսյանի գլխավորությամբ նորաստեղծ Հայաստանի պաշտոնական պատվիրակության մեկնումը Բաթումի՝ մասնակցելու Թուրքիայի հետ բանակցություններին, որը սկսվեց 1918թ. մայիսի 30-ին և ավարտվեց հունիսի 4-ին:

Բաթումիում Հայաստանին Թուրքիայի ներկայացված պայմանագիրը վերջնագրի բնույթ էր կրում, և ծանր դրության մեջ գտնվող նորաստեղծ Հայաստանի Առաջին հանրապետությունը հարկադրված էր ընդունել Թուրքիայի կողմից թելադրված պայմանները. **հայկական կողմի համար դա ըստ էության տարածքների կորուստների պայմանագիր էր:** Բաթումի պայմանագրով Հայաստանը Թուրքիային էր զիջում Կարսը, Կաղզվանը, Արդահանը, Օլթին, Ախալքալաքը, Սուրմալուն, Իգդիրը, Ալեքսանդրապոլը,Ալեքսանդրապոլի և Էջմիածնի գավառների երեք քառորդը, Երևանի գավառի կեսը և Շարուր-Դարալագյազի մեկ հինգերորդը: Թուրքիան մեծ ջանք ու եռանդ էր ցուցաբերում նաև

Նախիջևանին տիրելու համար: Իսկ եթե նշենք, որ Թուրքիայի տիրապետության տակ էր գտնվում նաև համարյա ամբողջ Արևմտյան Հայաստանը, ապա դժվար չէ պատկերացնել, թե ինչ-պիսի կորուստներ էր կրել և ծանր վիճակում հայտնվել նորաստեղծ Հայաստանի Առաջին հանրապետությունը: Այդպիսի կորուստներից հետո Հայաստանի տնօրինության տակ էր մնում ընդամենը.... 12 հազար քառակուսի կիլոմետր: Դա Սևանա լճի ավազանն էր և Արարատյան դաշտի մի մասը[37]:

Ուղղակի կարելի էր խելագարվել:

Պատմության ընթացքում բազմիցս հզոր պետականություն, այդ թվում՝ կայսրություն, ստեղծած հայ ազգը հանգամանքների բերումով հարկադրված էր պատսպարվել լոկ մի փոքրիկ տարածքում: Պատմության մեջ միշտ էլ գտնվում են սրամիտներ, որոնք իրենց սրամտությամբ լիցքաթափում են էլեկտրականացված մթնոլորտը: Հավանաբար նման սրամիտ է եղել Ստամբուլում Գերմանիայի դեսպան Բրենսդորֆը, որը, նկատի ունենալով, որ թուրքերը նվաճեցին հայկական վիթխարի տարածքներ, սրամտորեն նկատել է. «Թուրքերը հայերին տեղ տվեցին Սևանում լողանալու համար, բայց դուրս գալու, չորանալու համար տեղ չտվեցին»:

4.ՔԵՄԱԼԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐԱՍՏԵՂԾ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ

Դա, չենք սխալվի, եթե ասենք, շատ բարդ, նույնիսկ խճողված հարց էր, որի գաղտնիքները մինչև վերջ դեռ բացահայտված չեն: Բայց և միևնույն ժամանակ դա հայության, հայկական պետության ստեղծման և գոյության տեսակետից վերին աստիճանի կարևոր հարց էր: Քեմալական Թուրքիան և Խորհրդային Ռուսաստանը բազմիցս են անդրադարձել Հայկական հարցին և

[37] Նույն տեղում:

դրա հետ կապված տարածքային հարցերի քննարկմանը: Այդ առումով շատ կարևոր էր ռուս-թուրքական կոնֆերանսը, որը կայացավ 1920թ. հուլիսի վերջերին-օգոստոսի սկզբներին Մոսկվայում: Այդ կոնֆերանսի նպատակն էր կնքել երկու երկրների միջև հարաբերությունները կարգավորող պայմանագիր: Պետք է նշել, որ մինչ այդ էլ նրանց միջև կայացել էին տարբեր հանդիպումներ, քննարկումներ և այլն: Բանակցությունները Ռուսաստանի կողմից վարում էին Խորհրդային Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Գեորգի Չիչերինը և նրա տեղակալ հայազգի Լևոն Կարախանը, իսկ Թուրքիայի կողմից՝ Բեքիր Սամին՝ պատվիրակության ղեկավար, և Յուսուֆ Քեմալ Բեյը: Պայմանագրի նախագծի նախապատրաստման համար կողմերը համաձայնվում են ստեղծել երկու հանձնաժողով՝ քաղաքական և ռազմական: Շատ ակտիվ էր գործում ռազմական հանձնաժողովի թուրք պատվիրակ, փոխգնդապետ Մեյֆին:Նա հանուն Թուրքիայի պահանջում է, որ Ռուսաստանն առանց հետաձգելու, շատ կարճ ժամանակում Թուրքիային տրամադրի զենք, զինամթերք, նավթ, ֆինանսական միջոցներ և այլն: Ռուսաստանը մեծ պատրաստակամություն է ցուցաբերում՝ բավարարելու թուրքական կողմի պահանջները: Նա համաձայնվում է Թուրքիային տրամադրել 5 միլիոն ռուբլի ոսկով և անհրաժեշտ քանակի զենք ու զինամթերք[38]: Թուրքիան, Խորհրդային Ռուսաստանից ստանալով «Զգալի ֆինանսական և ռազմական օգնություն, դա օգտագործեց արևմուտքում Հունաստանի, արևելքում Հայաստանի Հանրապետության դեմ: Կոնֆերանսն ավարտվեց օգոստոսի 24-ին: Թուրքական կողմի պահանջով Ռուսաստանը ճանաչեց 1920թ. հունվարի 28- ին օսմանյան խորհրդարանի ընդունած «Ազգային ուխտը»: Իսկ դա նշանակում էր, որ խորհրդային կառավարությունն ընդունում էր Թուրքիայի իրավունքը Կարսի, Արդահանի, Կաղզվանի, Սուրմալուի, Իգդիրի, Բաթումի և հա-

[38] Տե՛ս Մոսկվայի ռուս-թուրքական կոնֆերանսներ (1920, 1921), Վիկիպեդիա ազատ հանրագիտարան:

ռակից տարածքների վրա: Քեմալականները ձեռնարկում են գործուն քայլեր Բաթումի և Նախիջևանի գրավման համար՝ ձգտելով Ռուսաստանին կանգնեցնել կատարված փաստի առաջ:

Ռուսաստանից ստանալով տպավորիչ ռազմական և ֆինանսական օգնություն՝ թուրքական բանակը 1920-ի սեպտեմբերին անցավ հարձակման: Անկարայի կառավարությունը, նորանոր հողեր զավթելով, հայ ժողովրդի արևելյան հատվածին կոտորելով, ձգտում էր զրկել հայերին սեփական պետություն վերաստեղծելու հնարավորությունից»[39]:

Այսպիսով, իրադարձությունների անաչառ և սկզբունքային վերլուծությունն իրավունք է տալիս մեզ ասելու, որ քեմալական Թուրքիան և բոլշևիկյան -լենինյան Ռուսաստանը 1918-1920թթ. ըստ էության հոշոտեցին Հայաստանի Առաջին հանրապետությունը և նրան ծվեն-ծվեն արեցին՝ չթողնելով նրան Բագրատունյաց Հայաստանի անկումից 453 տարի անց ամուր ոտքի կանգնել և իր արժանի տեղը գրավել լիարժեք անկախ պետությունների համակարգում, թեև նա ընդհուպ մոտեցել էր դրան: Ահա թե ինչու մենք գրում ենք, որ «Հայաստանն ընդհուպ մոտեցել էր անկախ պետության մատույցներին»:

Նկատի ունենալով վերոնշյալ հանգամանքները՝ Հայաստանի Առաջին հանրապետության օրհասական դրությունը, Հայաստանի տարածքների գերակշիռ մասի կորուստները, որևէ կողմից օգնություն ստանալու անհնարինությունը, **մենք եկանք այն եզրակացության, որ Հայաստանին չի հաջողվել ստեղծել կայուն և հուսալի անկախ պետականություն, այլ նա հայտնվել է լոկ դրա մատույցներին:**

Երբ 1920թ. սեպտեմբերին Թուրքիան հարձակվեց Հայաստանի Առաջին հանրապետության վրա, Հայաստանի կառավարությունը միամտորեն կարծում էր, թե Հայաստանին օգնության կհասնեն Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան և ԱՄՆ-ը՝ ի կատարումն 1920թ. օգոստոսի 10-ին ստորագրված Սևրի հաշ-

[39] «Հայկական հարց» հանրագիտարան, Երևան, 1996,էջ 235,236:

տության պայմանագրի պայմանների: Բայց նրանք տեղից չշարժվեցին: Հայաստանի կառավարությունն այնուհետև դիմեց Ազգերի լիգային՝ խնդրելով, որ նա համապատասխան քայլերի դիմի, ներազդի Թուրքիայի վրա և ստիպի նրան դադարեցնել հարձակողական գործողությունները Հայաստանի դեմ: Բայց ապարդյուն: Հայաստանը մնաց միայնակ Թուրքիայի դեմ հանդիման: Միայն Ռումինիայի կառավարությունն առաջարկեց օգնել Հայաստանի Հանրապետությանը, սակայն, բնականաբար, հաջողության չհասավ[40]:

2.ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ

1.Հայաստանի խորհրդայնացումը:

1920թ. նոյեմբերի 24-ին Ալեքսանդրապոլում սկսվեցին հայ-թուրքական հաշտության բանակցություններ, որոնք ավարտվեցին դեկտեմբերի 2-ին:

Այդ ընթացքում տեղի ունեցան ճակատագրական իրադարձություններ:

Մինչ Ալեքսանդրապոլում ընթանում էին հայ-թուրքական բանակցություններ,1920թ. նոյեմբերի 29-ին կարմիր բանակը (11-րդ բանակը) և Ռազմահեղափոխական կոմիտեն՝ Հեղկոմը, որ ձևավորվել էր Բաքվում Մոսկվայի որոշումով և օժանդակությամբ, և որի նախագահն էր բոլշևիկ Սարգիս Կասյանը, մտան Իջևան և հայտարարեցին ա) դաշնակցական կառավարությունը տապալված, և բ) Հայաստանը խորհրդայնացված է: 1920թ. դեկտեմբերի 2-ին արդեն Երևանում ստորագրվեց համաձայնագիր առ այն, որ Հայաստանը հռչակվում է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն, իսկ իշխանությունն անցնում է Ռազմահեղափոխական կոմիտեին:

---

[40] Նույն տեղում, էջ 236:

Այսպիսով, Հայաստանը որպես պետական նոր կազմավորում ստացավ նոր անվանակոչում՝ Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն /ՀԽՍՀ/: Ճիշտ է, պատմագիտական գրականության մեջ երբեմն օգտագործվում է նաև «Հայաստանի Երկրորդ հանրապետություն» անվանումը, բայց պաշտոնապես նրա անվանումը եղել է ՀԽՍՀ:

2. ՍՏԱԼԻՆԻ ԳԱՆԳԱՏԸ ԼԵՆԻՆԻՆ ՉԻՉԵՐԻՆԻ ԴԵՄ

Ինչպես նշվեց, ռուս-թուրքական առաջին կոնֆերանսը տեղի ունեցավ Մոսկվայում 1920թ. հուլիս -օգոստոս ամիսներին: Ռուս-թուրքական երկրորդ կոնֆերանսը կայացավ դարձյալ Մոսկվայում 1921թ. փետրվարի 26-ից մինչև մարտի 26-ը: Կոնֆերանսի աշխատանքների հիմքում դրված էր 1920թ. հուլիս-օգոստոս ամիսներին կայացած ռուս-թուրքական առաջին կոնֆերանսում մշակված և ընդունված Պայմանագրի նախագիծը: Սակայն նախքան ռուս-թուրքական երկրորդ կոնֆերանսում քննարկված հարցերին անցնելը, ցանկանում ենք անդրադառնալ շատ կարևոր մի հարցում Ստալինի դիրքորոշմանը, որից շատ պարզ երևում է, թե ինչ բացասական դերակատարում է ունեցել նա Հայկական հարցում: Խոսքը Լենինին գրած Ստալինի նամակի մասին է: Ահա այդ նամակի լրիվ տեքստը.

«Ընկ. Լենին:

Ես միայն երեկ իմացա, որ Չիչերինը թուրքերին մի ժամանակ իսկապես ուղարկել է հիմար և պրովոկացիոն պահանջ Վանը, Մուշը և Բիթլիսը (թուրքական պրովինցիաներ, թուրքերի ահռելի գերակշռությամբ) հօգուտ Հայաստանի մաքրելու համար: Այս հայ իմպերիալիստական պահանջը չի կարող լինել մեր պահանջը: Պետք է արգելել Չիչերինին ազգայնականորեն տրամադրված հայերի թելադրանքով նոտաներ ուղարկել թուրքերին:

Ստալին. 12 փետրվարի, 1921թ.»[41]:

Այդ նամակը գռեհկության, մեծամտության և անգրագիտության մի դասական օրինակ է, որով Ստալինը տառապել է մշտապես և այդ ոճով հետագայում, դառնալով Խորհրդային Միության ղեկավար, կառավարել է երկիրը՝ դրան ավելացնելով միլիոնավոր անմեղ մարդկանց զանգվածային աքսորները և սպանությունները: Նա Ռուսաստանի արտաքին գործերի նախարարին՝ կրթված մարդկանցից մեկին, ցինիկաբար որակում է «հիմար», իսկ նրա գործունեությունը դիտարկում «պրովոկացիոն արարք»: Ստալինը, չտիրապետելով պատմությանը, հայկական տոհմիկ նահանգները և մարզերը՝Վանը, Մուշը և Բիթլիսը, համարում է թուրքական պրովինցիաներ:Նույնիսկ 1878թ. Բեռլինի կոնգրեսում ոչ միայն նրա մասնակից եվրոպական առաջատար երկրները՝ Անգլիան, Ֆրանսիան, ցարական Ռուսաստանը, Ավստրո-Հունգարիան, այլև անգամ Թուրքիան, Վանը և Բիթլիսը համարել են հայկական վիլայեթներ-նահանգներ, իսկ Մուշը՝ Բիթլիսի վիլայեթի մեջ մտնող մի շրջան, որը հաստատված է Բեռլինի Վեհաժողովի ընդունած պաշտոնական որոշման մեջ:

Ստալինը, կորցնելով չափի զգացումը, հայկական պահանջը համարում է «հայ իմպերիալիստական պահանջ», որն արվել է «ազգայնականորեն տրամադրված հայերի թելադրանքով»: Թե ինչպես են հայերը կարողացել ներկայացնել «իմպերիալիստական պահանջ», անհասկանալի է, մանավանդ որ Հայաստանը թուրքական ամեն մի հարձակման դեպքում մեծ տարածքներ էր կորցնում, և նրանց տնօրինության տակ մնացել էր մի ողորմելի, աննկատ տարածք՝ մոտ 12 հազ.քառ.կմ: Ավելացնենք, որ Ստալինն ընդհանրապես երբեք հարգանքով չի վերաբերվել Չիչերինին, ինչպես սովորաբար վարվում են անկիրթ մարդիկ մտավորականների հետ:

Եվ, այսպես, կրկնենք՝ Հայաստանի Առաջին հանրապետությունը գոյություն ունեցավ ընդամենը երկուս ու կես տարի:

[41] Центральный архив института Марксизма-ленинизма, ф.3, сп.1, ед,хр. 5214, л.2.

Միջազգային անբարենպաստ իրադրությունը՝ մի կողմից, և քեմալական Թուրքիայի ու բոլշևիկյան Ռուսաստանի քաղաքական շահերի համընկնումը և հակահայկական դիրքորոշումը՝ մյուս կողմից, Հայաստանի Առաջին հանրապետության անկման պատճառ հանդիսացան: Հայաստանի՝ տարածաշրջանում իր ուրույն տեղը գրավելու գործընթացն արհեստականորեն ընդհատվեց: Հայաստանի Առաջին հանրապետությանը փոխարինելու եկավ Հայաստանի Երկրորդ հանրապետությունը՝ Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը:

3.ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ

1921թ. փետրվարի 26-ից մինչև մարտի 16-ը դարձյալ Մոսկվայում կայացած կոնֆերանսում Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետությունը (ՌԽՖՍՀ) ներկայացնում էր Գեորգի Չիչերինը, իսկ Թուրքիան՝ Յուսուֆ Քեմալ Բեյը: Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը Մոսկվա էր հրավիրել նաև Հայաստանի և Ադրբեջանի պատվիրակություններին, սակայն Թուրքիան հրաժարվում է միացյալ կոնֆերանսի սկզբունքից, և նշյալ երկու երկրների պատվիրակությունները զրկվում են կոնֆերանսին մասնակցելու հնարավորությունից:

Կոնֆերանսի ընթացքում Թուրքիան և Ռուսաստանը ստորագրում են «Բարեկամության և եղբայրության պայմանագիր Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության և Թուրքիայի միջև»[42], որում ասվում էր, որ պայմանավորվող կողմերը «Կիսում են եղբայրության և ժողովուրդների ինքնորոշման իրավունքի սկզբունքները» և ցանկություն արտահայտեցին միմյանց միջև հաստատել «Մշտական սրտագին փոխհարաբերություններ և անխզելի անկեղծ բարեկա-

[42] Дипломатический словарь, т.III, Советско-турецкие договоры, Москва , 1964, с. 273.

մություն»[43]: Պայմանագիրը որոշեց Թուրքիայի նոր հյուսիս-արևելյան սահմանները, որով Կարսի, Արդահանի և Արդվինի մարզերն անցնում էին Թուրքիային, իսկ Բաթումին՝ Վրաստանին: Թուրքիան հավակնում էր նաև Նախիջևանի և Սուրմալուի շրջաններին: Չիչերինը հայտարարում է, որ Խորհրդային Ռուսաստանը պատրաստ է ճանաչելու թուրքերի կողմից հռչակված «Ազգային ուխտի» սահմանները՝ ընդգծելով, որ Ռուսաստանը չի պնդում սահմանը Արփաչայից արևմուտք և Արաքսից հարավ անցկացնելուն: Չիչերինը մի շատ կարևոր զիջում էլ է կատարում Թուրքիային: Նա առաջարկում է սահմանափակել Նախիջևանի մարզը ուղղակի Ադրբեջանի հովանավորությանը հանձնելով: Եվս մեկ այլ քայլ ի նպաստ Թուրքիայի. Ռուսաստանը պարտավորվում է Թուրքիային անհատույց տրամադրել 10 միլիոն ռուբլի ոսկով, զենք, զինամթերք և այլն»[44]: Ահա այսպիսի երկրի հետ էր «Արդարությունից» խոսող բոլշևիկյան Ռուսաստանը «եղբայրական», «անկեղծ մշտական բարեկամական պայմանագիր» ստորագրում:

4.ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՏԻՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ /ԱՍՖԽՀ/

Միայն վերոնշյալով չավարտվեց պետական շինարարության գործընթացն Անդրկովկասում:

Հաջորդ քայլը եղավ Անդրկովկասյան երեք հանրապետությունների միավորումը: Մենք արդեն նշել ենք, որ դեռևս 1920թ.մայիսի 26-ին իր անկախությունն էր հայտարարել Վրաստանը, մայիսի 27-ին՝ Ադրբեջանը, իսկ մայիսի 28-ին՝ Հայաս-

---

[43] Նույն տեղում:

[44] Տե՛ս «Մոսկվայի ռուս-թուրքական կոնֆերանսներ (1920, 1921)», Վիկիպեդիա.ազատ հանրագիտարան: Ուշագրավ է, որ այդ մասին «Дипломатический словарь -ում» ոչինչ չկա գրված:

տանը: Թվում էր, թե սրանով ավարտվում էր պետականության կառուցման գործընթացը: Բայց այդպես չեղավ: Դա չէր բավարարում Վ. Լենինին: Եվ նա առաջ քաշեց «…քաղաքացիական պատերազմից հետո այդ երեք Անդրկովկասյան հանրապետությունների տնտեսական և ռազմաքաղաքական միավորման գաղափարը, քաղաքացիական պատերազմից հետո քայքայված տնտեսության վերականգնման, հակահեղափոխական ուժերի մնացուկների ոչնչացման, ազգամիջյան թշնամանքի և անվստահության վերացման համար»:

Այդ նպատակով 1922թ. մարտի 12-ին տեղի ունեցավ Ադրբեջանական ԽՍՀ-ի, Հայկական ԽՍՀ-ի և Վրացական ԽՍՀ-ի Կենտրոնական գործադիր կոմիտեների ներկայացուցիչների կոնֆերանսը, որը գումարվեց Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում: Կոնֆերանսը հաստատեց Անդրկովկասյան Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության պայմանագիրը:

1922թ. դեկտեմբերին Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվում գումարվեց Խորհուրդների Առաջին Անդրկովկասյան համագումարը, որը որոշում ընդունեց վերանայել պետության անվանակոչումը և այն կոչել **Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետություն (ԱՍՖԽՀ)**: Համագումարը նաև հաստատեց ԱՍՖԽՀ Սահմանադրությունը, ստեղծեց Անդրկովկասյան Կենտրոնական գործադիր կոմիտե և կառավարություն՝ ԱՍՖԽՀ- ժողովրդական կոմիսարների խորհուրդ, որը գլխավորեց Ի.Դ. Օրախելաշվիլին: Թիֆլիսը հռչակվեց ԱՍՖԽՀ-ի մայրաքաղաք:

5. ԱՍՖԽՀ-Ի ԼՈՒԾԱՐՈՒՄԸ ԵՎ ԽՍՀՄ-Ի ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Այնուհետև տեղի ունեցավ ևս մեկ քայլ պետական կառուցվածքի ոլորտում: Խոսքն այն մասին է, որ դեռևս ԱՍՖԽՀ-ից

առաջ գործում էին Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետությունը (ՌՍՖԽՀ), Ուկրաինական ԽՍՀ -ն և Բելառուսական ԽՍՀ-ն: 1922թ.դեկտեմբերի 30-ին նրանք և Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետությունը, որի մեջ մտնում էին Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը, այսինքն՝ վեց խորհրդային սոցիալիստական հանրապետություններ, միավորվեցին, և ստեղծվեց նոր տեսակի և նոր որակի պետություն՝ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը՝ ԽՍՀՄ-ը: Այդ վեց պետությունները՝ Ռուսաստանը, Ուկրաինան, Բելառուսը, Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը, համարվում են ԽՍՀՄ-ի հիմնադիր պետություններ:

Պետութենաստեղծ գործունեությունը, ինչպես նշված և ցույց է տրված այս աշխատության մեջ, պատմականորեն Հայաստանի համար եղել է սովորական բան, մինչդեռ մնացած հինգի համար դա նորություն էր:

Վերադառնանք կրկին Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության կառավարման համակարգին:

Ըստ ԽՍՀՄ-ում հաստատված կարգի՝ բարձրագույն ղեկավարությունն իրականացնում էին Համամիութենական կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցության Անդրկովկասյան շրջանային կոմիտեի առաջին քարտուղարները: ԱՍՖԽՀ-ի գոյության 15 տարիներին դրանք համարյա բոլորը ազգությամբ եղել են վրացի:

Դրա մասին է վկայում ստորև բերվող ցուցակը.

Սերգո Օրջոնիկիձե- 1922-1926

Մ. Օրախելաշվիլի-1926-1929

Ա. Կրինիցկի -նոյեմբեր 1929-1930

Ռ. Լոմինաձե - 1930 նոյեմբեր-1930 դեկտեմբեր

Լ. Քարտվելաշվիլի-1930-11 նոյեմբեր 1931

Մ.Օրախելաշվիլի- 11 նոյեմբեր 1931-17 հոկտեմբեր 1932

Լավրենտի Բերիա-17 հոկտեմբեր 1932- 23 նոյեմբեր 1937

Գլխակեր Լավրենտի Բերիան եղել է ԱՍՖԽՀ-ի վերջին ղեկավարը:

Կարծում ենք, որ հետաքրքիր են նաև տվյալները ԱՍՖԽՀ-ի անդամ-պետությունների բնակչության թվաքանակի վերաբերյալ: Ըստ 1926թ. տվյալների՝ ԱՍՖԽՀ-ի բնակչությունը կազմել է 5 861 600 մարդ, այդ թվում՝ Ադրբեջանի ԽՍՀ-ում՝ 2 314 600 մարդ, Հայկական ԽՍՀ-ում՝ 850 500 մարդ, Վրացական ԽՍՀ-ում՝ 2 666 500 մարդ[45]: Ադրբեջանում ադրբեջանցիները կազմել են բնակչության՝ 62,1%-ը, հայերը՝ 12,2%-ը, ռուսները՝ 9,5%-ը, Հայաստանում հայերը կազմել են բնակչության 84,45%-ը, ադրբեջանցիները՝ 8,73%-ը, ռուսները՝ 2,21%-ը, Վրաստանում վրացիները կազմել են բնակչության 67%-ը, հայերը՝ 11,5%-ը, ադրբեջանցիները՝ 5,2%-ը, ռուսները՝ 3,6%-ը[46]:

Եվ, վերջապես պետական շինարարության և կառուցվածքային ոլորտում տեղի ունեցած ամենաանսպասելի և ամենակարևոր նորարարությունը կապված է այսպես կոչված «Ստալինյան սահմանադրության» ընդունման հետ:

1936թ. դեկտեմբերի 5-ին այդ սահմանադրությամբ լուծարվեց Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետությունը: Իսկ նրա անդամ երեք հանրապետությունները՝ Ադրբեջան, Հայաստան և Վրաստան, անմիջականորեն մտան ԽՍՀՄ-ի կազմի մեջ՝ **որպես միութենական հանրապետություններ:**

Այնուհետև ԽՍՀՄ-ը կազմած վեց հանրապետություններին աստիճանաբար միացան նաև Միջինասիական հինգ երկրներ՝ Ղազախստանը, Ուզբեկստանը, Թուրքմենստանը, Ղրղզստանը և Տաջիկստանը, ապա նաև Մոլդովիան և Մերձբալթյան երեք հանրապետությունները՝ Լատվիան, Լիտվան և Էստոնիան:

---

[45] Закавказская Социалистическая Федеративная Советская Республика, Википедия, с.1

[46] Նույն տեղում:

Այսպիսով, ԽՍՀՄ -ը կազմված էր 15 միութենական հանրապետություններից, և նա այլևս որևէ փոփոխության չենթարկվեց:

1936 թ. ընդունված սահմանադրությունը պարունակում էր մի հոդված, ըստ որի՝ ԽՍՀՄ անդամ միութենական հանրապետություններն իրավունք ունեին դուրս գալու ԽՍՀՄ կազմից: ԽՍՀՄ-ը գոյություն ունեցավ 1922-1991թթ., ընդամենը 69 տարի, բայց այդպես էլ միութենական հանրապետություններից և ոչ մեկն այդ ընթացքում չի փորձել օգտվել նրա կազմից դուրս գալու «հնարավորությունից»: ԽՍՀՄ-ի կազմի մեջ մտած մյուս բոլոր 15 հանրապետությունները,այդ թվում և Հայաստանը, Խորհրդային Միության կառավարությանը զիջեցին կառավարման բոլոր կարևոր լծակները, առաջին հերթին արտաքին քաղաքականություն վարելու մենաշնորհը: Բոլոր առանցքային հարցերը տնօրինում էր Խորհրդային Միության կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի ամենազոր Քաղաքական բյուրոն՝ Քաղբյուրոն: Դրանով իսկ Հայաստանը կորցրեց միջազգային գործոն լինելու գործառույթները: Նման ցանկությունը տոտալիտար ԽՍՀՄ-ում հավասար էր զրոյի, ավելի ճիշտ ինքնասպանության: Պատճառը ոչ թե այն էր, որ նրանցից ոչ մեկը ցանկություն չուներ դուրս գալու նրա կազմից, այլ այն, որ ԽՍՀՄ-ը տոտալիտար, բռնատիրական պետություն էր, և ոչ մեկը չէր համարձակվի անգամ նման բան իր մտքով անցկացնել: Նման բան երազողին և ցանկացողին սպասում էր երեք բան՝ բանտարկություն, աքսոր Սիբիր, տանջահար սպանություն, ընդ որում ոչ միայն իրեն, այլև նրա ընտանիքի անդամներին՝ չխնայելով ո՛չ տարեցներին, ո՛չ կանանց և ո՛չ էլ երեխաներին: Ամենավտանգավոր հանցանքներից մեկը նացիոնալիզմի մեջ մեղադրվելն էր: Այդ մեղադրանքով և դրա հետ կապված համապատասխան հոդվածով միլիոնավոր մարդիկ են ձերբակալվել, արտաքսվել, սպանվել հանուն կարծեցյալ «ինտերնացիոնալիզմի»:

6. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ՊՈՏՍԴԱՄԻ ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ (1945թ. ՀՈՒԼԻՍԻ 17- ՕԳՈՍՏՈՍԻ 2):

Երկրորդ համաշխարհային պատերազմն ավարտվեց ֆաշիստական Գերմանիայի և նրա դաշնակիցների պարտությամբ և հակահիտլերյան կոալիցիայի և նրա ղեկավար պետությունների՝ ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի հաղթանակով: Սովորաբար ընդունված է, որ նման, այսինքն՝ համաշխարհային պատերազմներից հետո, հաղթանակած առաջատար պետությունները գումարում են միջազգային կոնֆերանսներ՝ ամփոփելու պատերազմի արդյունքները և ուղենշելու հետպատերազմյան զարգացման հիմնախնդիրները: Այդպես եղավ Առաջին համաշխարհային պատերազմի (1914-1918թթ.) ավարտից հետո, երբ հաղթանակած երկրները 1919թ. հունվարին Փարիզում գումարեցին Խաղաղության կոնֆերանս: Այդպես եղավ և Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ Բեռլինում (Պոտսդամում) 1945թ. հուլիսի 17-ից օգոստոսի 2-ը գումարվեց երեք դաշնակից տերությունների՝ ԽՍՀՄ-ի,ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի ղեկավարների կոնֆերանսը:

Խորհրդային Միության պատվիրակությունը գլխավորում էր ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Իոսիֆ Ստալինը, ԱՄՆ-ի պատվիրակությունը՝ ԱՄՆ-ի պրեզիդենտ Հարրի Տրումենը, իսկ Մեծ Բրիտանիայինը՝ վարչապետ Ուինստոն Չերչիլը[47]:

Կոնֆերանսի ընթացքում Մեծ Բրիտանիայում տեղի ունեցան պառլամենտական ընտրություններ, որի ժամանակ Չերչիլի գլխավորած պահպանողական կուսակցությունը պարտվեց, և Չերչիլը լքեց կոնֆերանսն ու մեկնեց Լոնդոն: Նրան հուլիսի 28-ին Պոտսդամի (Բեռլինի) կոնֆերանսում փոխարինեց Կլեմենտ

[47] Советский Союз на международных конференциях периода Великой Отечественной войны 1941-1945гг. Берлинская (Потсдамская) конференция руководителей трех союзных держав-СССР, США, Великобритании (17 июля-2 августа 1945г).. Сборник документов , Москва, 1984.

Էտլին՝ ընտրություններում հաղթանակած լեյբորիստների կուսակցության ղեկավարը:

Պոտսդամի կոնֆերանսը եղավ վերջին կոնֆերանսը, որտեղ Խորհրդային Միության նախաձեռնությամբ քննարկվեց Թուրքիայի կողմից 1921թ. հայկական գրավյալ տարածքները Հայաստանին վերադարձնելու հարցը:

7. ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՐԻՏՈՐԻԱՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԽՍՀՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ ՎՅԱՉԵՍԼԱՎ ՄՈԼՈՏՈՎԻ ԵՎ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ ԱՆՏՈՆԻ ԻԴԵՆԻ ՄԻՋԵՎ

Ստորև ներկայացնում ենք այդ հարցի քննարկումն ամբողջապես:

«No 1.

ԽՍՀՄ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարի զրույցի գրառումը Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարի հետ: Պոտսդամ, 16 հուլիսի 1945թ., ժամը 18-ին:

Իդենն ասում է, որ իր մոտ՝ Լոնդոն են եկել թուրքերը:

Մոլոտովը պատասխանում է, որ ինքը գիտի, որ թուրքերը տեղեկացրել են Իդենին Մոսկվայում բանակցությունների մասին, և նա հույս ունի, որ ճշմարտացիորեն: 1921թ. թուրքերն օգտվեցին խորհրդային պետության թուլությունից և խլեցին նրանից Խորհրդային Հայաստանի մի մասը: Հայերը Խորհրդային Միությունում իրենց վիրավորված են զգում: Այդ պատճառով էլ խորհրդային կառավարությունն արդեն վաղուց է խոսում այն մասին, որ Մոնտրյոյի կոնվենցիան նրան չի բավարարում[48]: Իդենը հայտարարում է, որ անգլիացիները երբեք նախկինում չեն լսել Թուրքիայի հանդեպ Խորհրդային Միության տարածքային պահանջների մասին: Բրիտանական կառավարությունը գիտեր

[48] Նույն տեղում, էջ 38:

միայն խորհրդային առաջարկությունների մասին նեղուցների կարգավիճակի վերաբերյալ:

Մոլոտովն ասում է, որ Թուրքիայի հանդեպ Խորհրդային Միության տարածքային պահանջները ծագել են այն պատճառով, որ թուրքերն առաջարկել են խորհրդային կառավարությանը նրա հետ կնքել պայմանագիր դաշինքի մասին և հարցում են արել խորհրդային կառավարությանը, թե ինչ հիմքերի վրա նա պատրաստ կլինի դա անել: Բնականաբար, խորհրդային կառավարությունը պատասխանել է թուրքական կառավարության այդ հարցմանը՝ ներկայացնելով իր պահանջները:

Իդենն ասում է, որ թուրքերը համաձայն չեն բավարարել Խորհրդային Միության տարածքային պահանջները:

Մոլոտովն ասում է, տերիտորիան, որի մասին խոսվում է, չի պատկանում թուրքերին: Նրանք վարվել են անարդարացիորեն՝ խլելով այն: Լեհերը նույնպես վարվել են անարդարացիորեն՝ 1921թ. զավթելով խորհրդային տերիտորիայի մի մասը: Սակայն լեհերը որոշել են վերանայել իրենց դիրքորոշումը և համաձայնվել են այժմ վերադարձնել այդ տերիտորիան Խորհրդային Միությանը: Նա՝ Մոլոտովը, այդ օրինակը բերել է թուրքերին: Իդենը պատասխանում է, որ Թուրքիայում չկա Քերզոնի գիծը:

Մոլոտովն ասում է, որ այդուհանդերձ անգլիական կառավարությունը նախկինում մեկ անգամ չէ, որ հանդես է եկել ի պաշտպանություն թուրքական տիրապետության տակ գտնվող հայկական բնակչության: Բոլորովին վերջերս այդ հարցում հայերի պաշտպանությամբ հանդես եկավ դոկտոր Հյուլեթ Ջոնսոնը:

Իդենը հարցնում է՝ արդյո՞ք շատ հայ է բնակվում Թուրքիայի տարածքներում:

Մոլոտովը պատասխանում է, որ նրանք այնտեղ մոտ 400-500 հազար են: Ամբողջ Խորհրդային Հայաստանում բնակվում է մոտ 1 մլն հայ, իսկ Հայաստանից դուրս՝ արտասահմանում,

բնակվում է 1 մլն -ից ավել հայություն: Երբ հայերի տերիտորիան ընդարձակվի, բազմաթիվ հայեր, որոնք ապրում են արտասահմանում, կձգտեն վերադառնալ հայրենիք: Հայերը շատ ընդունակ և եռանդուն մարդիկ են, հատկապես տնտեսական հարցերում: Թող թուրքերը հետ տան Խորհրդային Միությանը հայերին, դա արդար կլինի:

Իդենը շնորհակալություն է հայտնում Մոլոտովին զրույցի համար»[49]:

8.ԽՍՀՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ ՄՈԼՈՏՈՎԻ ԶՐՈՒՅՑԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԴԵՍՊԱՆ ՍԱՐՊԵՐԻ ՀԵՏ: ՀՈՒՆԻՍ, 1945թ.

Մոլոտովն իր այդ զրույցի մասին տեղյակ է պահում Պոտսդամի կոնֆերանսի մասնակից - դաշնակիցներին:

Ահա այդ տեքստն ամբողջությամբ:

«Մոլոտով. թուրքական կառավարությունը, դրսևորելով նախաձեռնություն, առաջարկել է խորհրդային կառավարությանը կնքել դաշնակցային պայմանագիր:

Հունիսի սկզբին ես երկու զրույց եմ ունեցել Մոսկվայում Թուրքիայի դեսպան Սարպերի հետ:

Ի պատասխան թուրքական կառավարության առաջարկությանը՝ կնքել դաշնակցային պայմանագիր, տրվել է պատասխան, որ Խորհրդային Միությունը դեմ չէ նման պայմանագիր ստորագրել որոշակի պայմանների հիման վրա: Ես նշել եմ, որ պայմանագրի ստորագրման պարագայում մենք պետք է կարգավորենք փոխադարձ հավակնությունները: Մեր կողմից կա երկու հարց, որոնք պետք է կարգավորվեն: Դաշնակցային պայմանագրի ստորագրումը նշանակում է, որ մենք պետք է միասին պաշտպանենք մեր սահմանները. ԽՍՀՄ-ը՝ ոչ միայն իր սահմանը, այլև Թուրքիայի սահմանը, իսկ Թուրքիան՝ ոչ միայն իր,

[49] Նույն տեղում:

այլև խորհրդային սահմանը: Սակայն մենք գտնում ենք, որ որոշ մասերում սահմանը ԽՍՀՄ-ի և Թուրքիայի միջև անարդար է: Իրոք, 1921 թվականին Թուրքիան Խորհրդային Հայաստանից և Խորհրդային Վրաստանից խլել է տերիտորիաներ. դրանք Կարսի, Արդվինի և Արդահանի մարզերի տարածքներն են: Ահա թուրքերի կողմից բռնազավթված տերիտորիաների քարտեզը (Մոլոտովը փոխանցում է քարտեզը ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի պատվիրակություններին):Այդ պատճառով ես հայտարարել եմ, որ դաշնակցային պայմանագիր կնքելու համար հարկ է կարգավորել Վրաստանից և Հայաստանից բռնազավթված տերիտորիաների հարցը, նրանց վերադարձնել այդ տերիտորիաները: Երկրորդ կարևոր հարցը սևծովյան նեղուցների հարցն է:

Թուրքական կառավարությանն ասվել է, որ եթե նա պատրաստ է կարգավորելու այդ հիմնական վիճելի հարցերը, ապա դրանց կարգավորումից հետո մենք պատրաստ ենք կնքել դաշնակցային պայմանագիրը»[50]:

Թուրքիան հրաժարվեց վերադարձնել Խորհրդային Հայաստանից և Խորհրդային Վրաստանից բռնազավթած տերիտորիաները: Անգլիան ակտիվորեն պաշտպանում էր Թուրքիային, իսկ ԱՄՆ-ի պրեզիդենտ Տրումենը Պոտսդամի կոնֆերանսում բոլոր հիմնական հարցերում աջակցում էր Մեծ Բրիտանիային և դեմ էր Խորհրդային Միության պահանջների բավարարմանը, մանավանդ այն բանից հետո, երբ Բեռլինի կոնֆերանսի օրերին ԱՄՆ-ը փորձարկեց աշխարհում առաջին միջուկային ռումբը:

Ստալինը մեր կարծիքով այդ հարցերում առանձնապես ակտիվ չէր, այլ բավականին պասիվ էր: Նա այդ հարցի քննարկումը հանձնարարել էր բացառապես Մոլոտովին և հանդես չեկավ ի պաշտպանություն Մոլոտովի տեսակետների և Թուրքիայի կողմից բռնազավթված տերիտորիաները Հայաստանին և Վրաստանին վերադարձնելու հարցում: ԱՄՆ-ի կողմից հաջողությամբ փորձարկված ատոմային ռումբից հետո, որի մա-

[50] Նույն տեղում, էջ 135, 136:

սին պրեզիդենտ Հարրի Տրումենը տեղյակ պահեց Չերչիլին և Ստալինին, վերջինս շատ մտահոգ էր, եթե չասենք վախեցած, թեև տեսք էր ընդունել, որ ոչ մի վտանգավոր բան էլ չի պատահել: Նա հավանաբար հասկացավ, որ դրանով նոր փուլ է սկսվում միջազգային հարաբերություններում, և բոլորովին պատրաստ չէր նման պայմաններում հակադրվելու անգլո-ամերիկյան բլոկին Թուրքիայի կողմից հայկական տարածքները վերադարձնելու հարցում: Եվ, ամենակարևորը, Ստալինն ինքն ուներ մեղքի իր բաժինը հայկական տարածքները քեմալական Թուրքիային նվիրաբերելու հարցում: Ծանոթանալով Պոտսդամի կոնֆերանսում Ստալինի անթաքույց պասիվությանը՝ մենք նորից կրկնում ենք, որ քեմալական Թուրքիան և բոլշևիկյան Ռուսաստանը հոշոտեցին Հայաստանը: Կրկնում ենք, դրանում անձամբ մեղավոր է եղել Ստալինը: Ուստի Ստալինն այն մարդը չէր, որ Պոտսդամում պետք է դիմակայեր Չերչիլին և Տրումենին՝ հանուն Հայաստանի:

Արդյունքում ունենք այն, ինչ որ այսօր ունենք:

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՓԼՈՒԶՈՒՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՅԹՈՒՄ

ՀԱՅ ԱՐԵՎԵԼԱԳԵՏԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԸ 19 9 0 - 2018 թթ. ԱՊՐԻԼ

1. ԽՍՀՄ-Ի ՓԼՈՒԶՈՒՄԸ ԵՎ «ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԸ» ԸՍՏ ԱՄԵՐԻԿԱՑԻ ՊԱՏՄԱԲԱՆ ՖՈՒԿՈՒՅԱՄԱՅԻ՝ **«The End of History»- Fukuyama**

Պատմությանը հայտնի առաջին «սոցիալիստական» պետությունը քաղաքական ասպարեզում հայտնվեց 1917 թ. հոկտեմբերի 25-ին (նոյեմբերի 7- ին) Ռուսաստանում, որը 1922թ., իր շուրջը բոլորելով և իրեն ենթարկելով Ուկրաինայի, Բելառուսի, Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի Հանրապետություններին, որոնք նույնպես կոչվեցին «սոցիալիստական», վերակոչվեց ԽՍՀՄ-ի՝ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության: Հետագայում՝ տարբեր տարիների, նրան միացան ևս 9-ը պետություններ, որոնք նույնպես կոչվեցին «սոցիալիստական», և ԽՍՀՄ-ը վերածվեց 15 Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության:

Սակայն այդ պետությունը՝ Խորհրդային Միությունը, իր ծննդյան առաջին օրվանից, չնայած պաշտոնական լոզունգներին, երբեք էլ չեղավ ո՛չ սոցիալիստական, ո՛չ ազատական և ո՛չ էլ իրավահավասարության վրա խարսխված, մարդու և տարբեր ժողովուրդների իրավունքները հարգող ու պաշտպանող պետություն: Այն տոտալիտար, բռնատիրական պետություն էր՝ ամբողջատիրական վարչակարգով, որում զանգվածային բռնությունները, աքսորները և այսպես կոչված դատական «եռյակների» որոշումներով գնդակահարությունները սովորական երևույթներ էին:

Այդ պետությունն այդպես էլ չունեցավ կրթված, ազա-

տամիտ, ազատասեր և դեմոկրատ առաջին դեմքեր և պետական լիդեր: Այն խարսխված էր կառավարման սխալ, քաղաքական դաժան և անմարդկային հիմքերի վրա, նրանում փառաբանվում էր անզուսպ դասակարգային պայքարը՝ որպես միակ ճշմարիտ ուղի: Դրա սերմերը կային դեռևս Լենինի մոտ, որոնք ծաղկեցին և փթթեցին Ստալինի դիկտատուրայի ժամանակ: Նրան փոխարինած Խրուշչովն իր «ձնհալի» քաղաքականությամբ ապակողմնորոշեց և շփոթեցրեց երիտասարդ սերունդներին, որ նրանք իբրև կտեսնեն կոմունիզմը կառուցված-ավարտված, իսկ պետական հեղաշրջումով իշխանությունը գրաված Բրեժնևը դարձավ խորհրդային հասարակության լճացման ճարտարապետը: Ղեկավար բիձաներին փոխարինելու եկած Գորբաչովը վերակառուցման աղմուկ-աղաղակի տակ Շևարդնաձեի հետ ձեռք ձեռքի տված սնանկացրին պետությունը և նրան կանգնեցրին կործանման առջև:

Խորհրդային քաղաքագետ Ալեքսանդր Լավրենտևը իր «Բարի քեռի Շևարդնաձեն: Ինչպես Խորհրդային Միության արտաքին գործերի նախարարը ծախեց իր երկիրը» հոդվածում նշում է. «**Այժմ ոչ ոքի մոտ կասկած չկա, որ սկսած Միխայել Գորբաչովի իշխանության գլուխ գալուց՝ կուսակցական վերնախավն ամեն ինչ արեց, որ վերջ տա ԽՍՀՄ-ին: Հասարակարգի գերեզմանափորների մեջ ամենից հաճախ նշում են իրեն՝ Գորբաչովին, Ռուսաստանի առաջին պրեզիդենտ Բորիս Ելցինին, Վերակառուցման «ճարտարապետ» Ալեքսանդր Յակովլևին և նույնիսկ Յուրի Անդրոպովին, որը հպարտանում էր այն բանով, որ կարողացավ «ճզմել» ռուս ժողովրդի ինքնագիտակցությունը»**[51]: Շարունակելով իր վերլուծական մեկնաբանությունները՝ Ա.Լավրենտևը նշում է.«Բոլոր անունների մեջ միշտ առանձին կնշվի Էդվարդ Շևարդնաձեի

[51] **Александр Лаврентьев,** Добрый дядя Шеварднадзе. Как министр иностранных дел Советского Союза предавал свою страну, "Загадки истории:", No 40, Москва , 2019, с. 6.

անունը, մի մարդու, որը սուսուփուս զրկեց Ռուսաստանին նավթաբեր աղբյուրից»[52]:

Ա.Լավրենտևը նշում է ևս մի կարևոր հանգամանք՝ կապված Գորբաչովի և Շևարդնաձեի հետ. «1985 թվականին հասնելով իշխանության՝ Գորբաչովը կարևոր պաշտոններում տեղավորեց «իր» մարդկանց, և Շևարդնաձեն նրան պետք եկավ: Գորբաչովը նշանակեց նրան՝ ոչ մի օտար լեզու չիմացողին և դիվանագիտական փորձ չունեցողին, ԽՍՀՄ արտաքին գործերի նախարար: Գորբաչովի համար կարևոր չէր, որ Շևարդնաձեն ձեռնահաս չէ, կարևորն այն էր, որ երկուսն էլ փայփայում էին երազանքներ լիբերալ փոփոխությունների վերաբերյալ և սիրում էին գեղեցիկ կյանք»[53]:

Պատմության և նրա անհերքելի փաստերի ուսումնասիրությունը համոզիչ ցույց է տալիս, որ ԽՍՀՄ-ն իր ծննդյան օրվանից արդեն պարունակում էր սեփական կործանման բոլոր նախադրյալները:

Խորհրդային Միության հանրապետությունների համար յուրատեսակ քաղաքական նպաստավոր պայմաններ ստեղծվեցին 1980-ական թվականների վերջերին և 1990-ական թվականների սկզբներին, երբ փլուզվեց Խորհրդային Միությունը, և նրա փլատակների վրա բարձրացան նորանկախ պետությունները: Դրանց շարքերում էր նաև Հայաստանը:

Միխայիլ Գորբաչովը, որը իշխանության գլուխ եկավ 1985թ. մարտին՝ զառամյալ, թուլամիտ Կոնստանտին Չեռնենկոյի մահվանից հետո, հռչակեց վերակառուցման քաղաքականություն, որը դարձավ նրա քաղաքականության անկյունաքարը: Սակայն դա չդարձավ մշակված, խելացիորեն հաշվառված, սկզբունքային և հեռանկարային քաղաքականություն, որի հիմքի վրա հնարավոր լիներ ԽՍՀՄ-ի զարգացումը և նոր թափ հաղորդվեր նրա վերելքին: Ընդհակառակը, Գորբաչովի վերակա-

---

[52] Նույն տեղում:

[53] Նույն տեղում:

ռուցման քաղաքականությունը հանգեցրեց ներքաղաքական դրության սրման, երկրի քայքայման բոլոր ասպարեզներում, հետընթացի և կործանման: Խիստ վատացավ բնակչության տնտեսական վիճակը: Ուժեղացան միութենական հանրապետությունների ձգտումները՝ դուրս գալ ԽՍՀՄ-ի կազմից և դառնալ իրոք անկախ, ինքնիշխան պետություններ:

Սրվեցին նաև հարաբերությունները կառավարման բոլոր աստիճաններում, մասնավորապես ԽՍՀՄ պրեզիդենտ Գորբաչովի և Ռուսաստանի պրեզիդենտ Բորիս Ելցինի միջև: Ըստ էության ԽՍՀՄ առաջին պրեզիդենտ Միխայիլ Գորբաչովը կորցրեց կառավարման լծակները, և սաստկացավ դժգոհությունը նրա, նրա զինակիցների և ընդհանրապես կառավարող կոմունիստական կուսակցության դեմ: Անհանգիստ վիճակ էր տիրում բոլոր 15 միութենական հանրապետություններում: Լարված իրավիճակը լիցքաթափելու նպատակով ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը Մ. Գորբաչովի թույլտվությամբ և աջակցությամբ 1990 թվականի ապրիլի 3-ին ընդունեց հատուկ օրենք, որը վերահսկելու էր ԽՍՀՄ-ի կազմից միութենական հանրապետությունների դուրս գալու գործընթացը, և նրանք՝ միութենական հանրապետությունները, չհապաղեցին օգտվել դրանից: Սկսվեցին ԽՍՀՄ-ի կազմից միութենական հանրապետությունների դուրս գալու արշավը և ԽՍՀՄ-ի փլուզման անշրջելի գործընթացը:

Անդրադառնանք այդ գործընթացի մի քանի հանգուցային հարցերի լուսաբանությանը:

1991 թվականի օգոստոսի 24-ին Ուկրաինայի Գերագույն խորհուրդը հայտարարեց Ուկրաինայի անկախության մասին, որն այնուհետև՝ 1991թվականի դեկտեմբերի 1-ին, հաստատվեց համաուկրաինական հանրաքվեով: Դրանով իսկ սկսվեց ԽՍՀՄ-ի փլուզման գործընթացը: Ուղիղ մեկ շաբաթ անց՝ 1991 թվականի դեկտեմբերի 8-ին, ԽՍՀՄ երեք սլավոնական հանրապետությունների պրեզիդենտները՝ Ռուսաստանի պրեզիդենտ Բորիս Ելցինը, Ուկրաինայի պրեզիդենտ Լեոնիդ Կրավչուկը և Բելառուսի պրե-

զիդենտ Ստանիսլավ Շուշկևիչը, Մինսկից ոչ հեռու գտնվող Բելովեժսկ անտառում ստորագրեցին համաձայնագիր, որով հայտարարվեց ա/ ԽՍՀՄ-ի փլուզման և գործունեության դադարեցման, և բ/ Անկախ Պետությունների Համագործակցության՝ ԱՊՀ-ի ոչ պետական կազմավորման ստեղծման մասին[54]:

Շատ հետաքրքիր բան ստացվեց: Ռուսաստանը, Ուկրաինան և Բելառուսը այն երեք սլավոնական հանրապետություններն էին, որ միավորվելով Անդրկովկասյան Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության հետ՝ 1922թ. դեկտեմբերի 30-ին ստեղծեցին ԽՍՀՄ-ը: Իսկ 1991թ. դեկտեմբերի 8-ին այդ նույն երեք պետությունները դարձան ԽՍՀՄ-ի գերեզմանափորը:

Սակայն դեկտեմբերյան կործանարար հեղաշրջումները դրանով չավարտվեցին: 1991թ. դեկտեմբերի 21-ին Ղազախստանի մայրաքաղաք Ալմա-Աթայում կայացավ ութ միութենական հանրապետությունների՝ Ադրբեջանի, Հայաստանի, Ղազախստանի, Ղրղզստանի, Մոլդովայի, Տաջիկստանի, Թուրքմենստանի և Ուզբեկստանի նախագահների հանդիպումը, որոնք ընդունեցին հռչակագիր ԱՊՀ-ին միանալու մասին: Հռչակագրին չէին մասնակցում Մերձբալթիկայի երկրները և Վրաստանը: Գորբաչովին այլևս ոչինչ չէր մնում անել, քան հեռանալ իր գրաված պաշտոնից: Եվ նա դա արեց 1991 թվականի դեկտեմբերի 25-ին՝ հայտարարելով ԽՍՀՄ պրեզիդենտի պաշտոնից իր լիազորությունների դադարեցման մասին[55]:

Այդ նույն օրը՝ 1991թ. դեկտեմբերի 25-ին, տեղի ունեցավ ԽՍՀՄ պետական դրոշի իջեցումը: Իսկ հաջորդ օրը՝ 1991 թվականի դեկտեմբերի 26-ին, ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը ընդունեց համապատասխան որոշում՝ ԽՍՀՄ-ի գոյության դադարեցման

---

[54] (https://www.1in .am/139823.html): «1in.am»:

[55] «Խորհրդային վերջին առաջնորդ Գորբաչովը հրաժարական է տալիս» (http://www.nytimes.com/
/learning/general /onthisday/big/1225.html //article)

մասին[56]: Այսպիսով, ԽՍՀՄ-ը պաշտոնապես լուծարվեց:

Դրանով ավարտվեց մի ամբողջ դարաշրջան, որն ամերիկացի պատմաբան-քաղաքագետ Ֆուկույաման բնութագրեց որպես «Պատմության վերջը»՝ «The end of history»: Նա այն կարծիքին էր, որ երբ կար ԽՍՀՄ-ը՝ ԱՄՆ-ից հետո աշխարհի երկրորդ հզոր պետությունը, աշխարհն ըստ էության բաժանված էր երկու միմյանց հակադիր մասի: Այդ հակադրությունն իր կնիքն էր դրել համաշխարհային քաղաքական, տնտեսական և գաղափարական զարգացումների, համաշխարհային պատմության վրա: Այդ բաժանումը, չնայած քաղաքական և ռազմական վտանգներին, այնուհանդերձ, յուրատեսակ շարժիչ ուժի գործառույթ էր կատարում: ԽՍՀՄ-ի փլուզումը հանգեցրեց նրա և նրա կողմից ղեկավարվող սոցիալիստական աշխարհի փլուզման: Ֆուկույամայի կարծիքով դա կարող է նպաստել համաշխարհային պատմության լճացմանը, որի արդյունքը կլինի պատմության ավարտը: Արդյոք այդպես կլինի, թե ոչ, դա արդեն նշանակություն չունի: Մի բան պարզ է: Աշխարհն այլևս այն չէ, ինչ որ էր երկու հակադիր հզոր պետությունների՝ ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի գոյության և նրանց միջև մրցակցության ժամանակ: Իսկ ԽՍՀՄ-ի և սոցիալիստական աշխարհի փլուզումից հետո համաշխարհային պատմությունը դարձավ միապաղաղ, մի տեսակ անհետաքրքիր, որն իր արտացոլումը գտավ նաև միջազգային լիդերների փոքրացման, այնուհետև նրանց անհետացման մեջ: Դա մեզ համար հիմք ծառայեց գրելու մի երկու տող.

«Ինչ իմանաս, էս աշխարհում, լավն ու վատը որն է հիմա:
Էս աշխարհի չարն ու բարին, ինչ իմանաս, որն է հիմա»:

[56] Декларация Совета Республик ВС СССР от 26 декабря, 1991 No 142-Н

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿԱԳԻՐԸ. 23 ՕԳՈՍՏՈՍԻ 1990 ԹՎԱԿԱՆ

Նախորդ գլխում մենք հանգամանորեն անդրադարձանք ԽՍՀՄ-ի կործանման և փլուզման հարցերին, ԽՍՀՄ-ի առաջին պրեզիդենտ Գորբաչովի և նրա մերձավոր զինակիցների ապաշնորհ քաղաքականությանը և այն ծանր վիճակին, որում հայտնվել էր Խորհրդային Միությունը: Համոզված ենք, որ Խորհրդային Միությունը՝ որպես պետություն, արդեն սպառել էր իրեն, և նրա ղեկավարները չգտան այլ ելք, քան դադարեցնել նրա գոյությունը: Լուսաբանվեցին նաև միութենական հանրապետությունների դիրքորոշման հարցերը և նրանց միահամուռ տեսակետը, ըստ որի՝ միակ փրկությունը համարվեց ԽՍՀՄ-ի լուծարումը:

Այդ նույն տեսակետին էր նաև Հայաստանի ղեկավարությունը, որն իր վճռական խոսքն ասաց և կարևոր ներդրում ունեցավ ԽՍՀՄ-ի լուծարման և անկախ, ինքնիշխան Հայաստանի Հանրապետության ստեղծման մեջ, որը համարվում է Հայաստանի Երրորդ հանրապետություն:

Այդ հարցը քննարկվել է Հայաստանի Գերագույն խորհրդում, երբ ընդունվեց Հայաստանի անկախության Հռչակագիրը, որն ընթերցել և դեպուտատներին է ներկայացրել դեպուտատ Արամ Մանուկյանը: Կարծում ենք՝ պատահականություն չէր նման անուն-ազգանուն ունեցողին հանձնարարել այդ պատմական, դարակազմիկ նշանակություն ունեցող փաստաթղթի ընթերցումը: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ դա յուրահատուկ հարգանքի տուրք էր Բագրատունյան Հայաստանի կործանումից 453 տարի անց՝ 1918թ. մայիսի 28-ին, Հայաստանի Առաջին հանրապետության հիմնադիր Արամ Մանուկյանին, որը միևնույն ժամանակ նշանակում էր հայոց պետականության վերականգնում:

Մենք արժանի համարեցինք այդ պատմական փաստա-

թղթի տեքստը ստորև ներկայացնել ամբողջությամբ, այնպես, ինչպես գրվել, ներկայացվել և ընթերցվել է:

«Դա եղել է մայրաքաղաք Երևանում 1990 թվականի օգոստոսի 23-ին, Մելիք-Ադամյան փողոցի վրա գտնվող կառավարության նիստերի լեփ-լեցուն դահլիճում:

Ընդունող մարմինը՝ Գերագույն խորհուրդ

Ընդունման վայրը՝ Երևան

Ընդունման ամսաթիվը՝ 23.08.1990

Ստորագրման ամսաթիվը՝ 23.08.1990

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ 23.08.1990

«Հ Ռ Չ Ա Կ Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը, արտահայտելով Հայաստանի ժողովրդի միասնական կամքը, գիտակցելով իր պատասխանատվությունը հայ ժողովրդի ճակատագրի առջև, համայն հայության իղձերի իրականացման և պատմական արդարության վերականգնման գործում, ելնելով մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի սկզբունքներից և միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերից, կենսագործելով ազգերի ազատ ինքնորոշման իրավունքը, հիմնվելով 1989 թվականի դեկտեմբերի 1-ի «Հայկական ԽՍՀ-ին Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ որոշման վրա, զարգացնելով 1918 թվականի մայիսի 28-ին ստեղծված անկախ Հայաստանի Հանրապետության ժողովրդավարական ավանդույթները, խնդիր դնելով ժողովրդավարական, իրավական հասարակարգի ստեղծումը,

Հ Ռ Չ Ա Կ ՈՒՄ Է

անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը:

1.Հայկական ԽՍՀ-ն վերանվանվում է Հայաստանի Հան-

ռապետություն՝ կրճատ՝ Հայաստան: Հայաստանի Հանրապետությունն ունի իր դրոշը, զինանշանը և հիմնը:

2. Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան պետություն է՝ օժտված պետական իշխանության գերակայությամբ, անկախությամբ, լիիրավությամբ: Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում գործում են միայն Հայաստանի Հանրապետության սահմանադրությունը և օրենքները:

3.Հայոց պետականության կրողը Հայաստանի Հանրապետության ժողովուրդն է, որն իր իշխանությունը իրագործում է անմիջականորեն և ներկայացուցչական մարմինների միջոցով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրության և օրենքների հիման վրա:

Հանրապետության ժողովրդի անունից հանդես գալու իրավունքը պատկանում է բացառապես Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդին:

4.Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող բոլոր քաղաքացիների համար սահմանվում է Հայաստանի քաղաքացիություն:

Արտերկրի հայությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիության իրավունք ունի: Հայաստանի Հանրապետության քաղաքացիները գտնվում են նրա պաշտպանության և աջակցության ներքո:

Հայաստանի Հանրապետությունը ապահովում է իր քաղաքացիների ազատ ու իրավահավասար զարգացումը՝անկախ ազգությունից, ռասայական պատկանելությունից և դավանանքից:

5.Հայաստանի Հանրապետությունը իր անվտանգությունը և սահմանների անձեռնմխելիությունը ապահովելու նպատակով ստեղծում է Գերագույն խորհրդին ենթակա սեփական զինված ուժեր, ներքին զորքեր, պետական և հասարակական անվտանգության մարմիններ:

Հայաստանի Հանրապետությունն ունի ԽՍՀՄ սպառազինության իր մասնաբաժնի իրավունքը:

Հայաստանի Հանրապետությունը ինքն է որոշում իր քաղաքացիների զինվորական ծառայության կարգը:

Այլ երկրների զորամիավորումները, նրանց ռազմական բազաները և շինությունները կարող են տեղաբաշխվել Հայաստանի Հանրապետության տարածքում միայն նրա Գերագույն խորհրդի որոշմամբ:

6. Հայաստանի Հանրապետությունը՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, վարում է անկախ արտաքին քաղաքականություն, անմիջական հարաբերություններ է հաստատում այլ պետությունների, ԽՍՀՄ ազգային-պետական կազմավորումների հետ, մասնակցում է միջազգային կազմակերպությունների գործունեությանը:

7. Հայաստանի Հանրապետության ազգային հարստությունը՝ հողը, ընդերքը, օդային տարածությունը, ջրային և այլ բնական պաշարները, տնտեսական, մտավոր, մշակութային կարողությունները, նրա ժողովրդի սեփականությունն է: Դրանց տիրապետման, օգտագործման և տնօրինման կարգը որոշվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով:

Հայաստանի Հանրապետությունն ունի ԽՍՀՄ ազգային հարստության, այդ թվում՝ ոսկու պաշարների, ալմաստի և վալյուտային ֆոնդերի մասնաբաժնի իրավունք:

8.Հայաստանի Հանրապետությունը սեփականության բազմաձևության հիման վրա որոշում է իր տնտեսավարման սկզբունքները և կարգը, հիմնում սեփական դրամ, ազգային բանկ, ֆինանսավարկային համակարգ, հարկային և մաքսային ծառայություններ:

9. Հայաստանի Հանրապետությունը իր տարածքում ապահովում է խոսքի, մամուլի, խղճի ազատություն, օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատում, բազմակուսակցություն, կուսակցությունների իրավահավա-

սարություն, իրավապահ մարմինների և զինված ուժերի ապաքաղաքականացում:

10.Հայաստանի Հանրապետությունը ապահովում է հայերենի՝ որպես պետական լեզվի գործառությունը հանրապետության կյանքի բոլոր ոլորտներում, ստեղծում կրթության, գիտության և մշակույթի սեփական համակարգ:

11. Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգնում 1915 թվականին օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործին:

12. Սույն Հռչակագիրը հիմք է ծառայում Հայաստանի Հանրապետության սահմանադրության մշակման, իսկ գործող սահմանադրության մեջ՝ փոփոխությունների և լրացումների կատարման, պետական մարմինների գործունեության, հանրապետության նոր օրենսդրության մշակման համար»[57]:

Այս Հռչակագիրը շատ կարևոր, հիմնարար պաշտոնական, բազային, դարակազմիկ փաստաթուղթ է:

Նրանում արձանագրված է Հայաստանի Հանրապետության ինքնիշխան պետություն լինելու պարագան:

Դա ուղենշային փաստաթուղթ է, որում ընդգրկված և ներառված են փաստաթղթի կարևորությունից բխող բոլոր սկզբունքային պետական, քաղաքական, տնտեսական, ազգային, ռազմական, արտաքին քաղաքական, ֆինանսական-դրամական, հայոց լեզվի՝ որպես պետական լեզվի կիրառման, ցեղասպանության հետ կապված և այլ հարցեր:

Հռչակագիրը միանգամայն գրագետ, ճիշտ սահմանումներով և բոլորին միանգամայն մատչելի, միջազգային բնույթի պատմական փաստաթուղթ է:

[57] http://www.gov.am/am/independence ; www.historyofarmenia..am

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՔՎԵՆ, 1991 Թ.

1990 թվականի օգոստոսի 23-ին Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության (ՀԽՍՀ) Գերագույն խորհրդի ընդունած Հռչակագրի հենց սկզբում ասվում էր. «1990 թվականի օգոստոսի 23-ին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդն ընդունեց «Հայաստանի անկախության մասին հռչակագիրը», որը նշանավորեց անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը: Հայտարարվեց հանրապետության տարածքում ԽՍՀՄ Սահմանադրության և օրենքների գործունեության դադարեցման մասին»[58]:

Ի պատիվ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի, պետք է նշել, որ դրանից հետո նա գործեց շատ արագ: 1991թվականի մարտի 1-ին որոշվեց համաժողովրդական քվեարկության դնել այդ հարցը: Քվեարկության դնելու հարցը ձևակերպվեց հետևյալ կերպ. «Համաձա՞յն եք, որ Հայաստանի Հանրապետությունը լինի անկախ ժողովրդավարական պետություն ԽՍՀՄ-ի կազմից դուրս»:

Հանրաքվեն նշանակվեց 1991 թվականի սեպտեմբերի 21-ին: Այդ ժամանակ իրադրությունը երկրում խիստ լարված էր և հայտնի չէր՝ հարցերը ինչպես կարող են լուծվել: Նկատի ունենալով այդ հանգամանքը՝ «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահությանն իրավունք վերապահվեց «իրադրության կտրուկ փոփոխության դեպքում որոշում կայացնել հանրաքվեն ավելի վաղ ժամկետում անցկացնելու մասին»[59]:

---

[58] Legislation:National Assemly of RA (http//www.parliament.am/legislation .php?sel_show ID-2602 lang-rus

[59] «ՀՀ Գերագույն խորհրդի որոշումը Հայաստանի Հանրապետության տարածքում ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու վերաբերյալ հանրաքվե անցկացնելու մասին- Վիքիդարան» (https://hy. wikisource.org/wiki/

Մարտի 25-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահին ուղարկվեց եզրակացություն, որտեղ նշվեց, որ այդ որոշումը համապատասխանում է 1990 թվականի ապրիլի 3-ի՝ ԽՍՀՄ-ի՝ «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության ելքի հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» օրենքի սուբյեկտի մաս հանդիսացող, որը իր նախաձեռնությամբ հանրաքվե անցկացնելու մասին» (հոդված 2), դրա անցկացման ժամկետների (ոչ շուտ, քան վեց, և ոչ ուշ, քան ինն ամիս հետո՝ ԽՍՀՄ-ի կազմից միութենական հանրապետության դուրս գալու որոշումն ընդունելուց հետո (հոդվածի 3 -րդ մասը 2)[60]:

Օգոստոսի 5-ին Գերագույն խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը նամակ ուղարկեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահ Անատոլի Լուկյանովին, որով խնդրեց «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության ելքի հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» օրենքի 5-րդ հոդվածի համաձայն որոշում կայացնել մասնակցությամբ Հայաստանի տարածքում ԽՍՀՄ, միութենական և ինքնավար հանրապետությունների, ինքնավար կազմավորումների հավատարմագրված ներկայացուցիչների, ինչպես նաև հրավիրել Միավորված ազգերի կազմակերպության ներկայացուցիչների[61]:

1991 թվականի սեպտեմբերի 21-ին հանրաքվեն կայացավ[62]: Ընտրելու իրավունք ունեցող քաղաքացիների մեծամասնությունն առաջադրված հարցին դրական պատասխան տվեց[63]:

Հանրաքվեի արդյունքում 1991թ. սեպտեմբերի 23-ին Հայաստանի Գերագույն խորհուրդը հաստատեց հանրապետության

---

[60] Заключение по постановлению ВС Республики Армения от 01.03.1991-Викитека(https//ru.wikisource.or g/wiki/

[61] «Письмо Председателя ВС Республики Армения Председателю ВС СССР от 05.08.1991-Викитека (https://ru.wikisource.org/wiki)

[62] Референдум: точки над «I» (https://www.yeltsincente.ru.digest/release.den -za-dnem -21-sentyabrya-1991-goda) // «Российская газета», 21 сентября 1991, No 197 (243).

[63] Армения тоже стала независимой (http://www.yeltsincenter .rudigest/release/den-za-dnem-23-sentyabrya-1991 goda

ելքը ԽՍՀՄ-ի կազմից»[64]:

Ահա քվեարկության արդյունքները .

«Հայաստանի անկախության հանրաքվե

Համաձա՞յն եք, որ Հայաստանի Հանրապետությունը լինի անկախ ժողովրդավարական պետություն ԽՍՀՄ-ի կազմից դուրս

Այո 2 042 627 99, 51 o/o

Ոչ 10 002 0,49 o/o

Վավեր քվեներ 2 052 629 99, 80 o/o

Անվավեր կամ չօգտագործված ձայներ 4129 0,2 o/o»

Այսպիսով, Հանրաքվեի արդյունքները ցույց են տալիս, որ քվեարկությանը մասնակցել է 2 մլն 56 հազար 758 մարդ, որոնցից «ԱՅՈ» են ասել 2 մլն 42 հազար 627 մարդ կամ 99,51 տոկոսը: «Ոչ» են ասել 10 հազար 2 մարդ կամ քվեարկողների 0,49 տոկոսը:

Այս թվերը հանրապետության բնակչության ազատ կամքի դրսևորում են և ինքնին ցույց են տալիս, որ անկախությունը եղել է հանրապետության քվեարկող բնակչության երազանքը:

Մի կարևոր հանգամանք ևս: Հայաստանում բնակվում են նաև այլազգիներ՝ եզդիներ, հույներ, ռուսներ, ասորիներ, քրդեր և այլն, որոնք մեր հանրապետության լիիրավ քաղաքացիներ են: Այդ բոլոր ազգությունների ներկայացուցիչները ներկայացված էին հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովում, մասնակցել են հանրաքվեին և իրենց ձայնը տվել հանուն Հայաստանի Հանրապետության անկախության[65]:

Հաշվի առնելով 1991թվականի սեպտեմբերի 21-ին հանուն անկախության կայացած հանրաքվեի փայլուն արդյունքները՝ 1991թ. սեպտեմբերի 23-ին Հայաստանի Գերագույն խորհուրդը Հայաստանի Հանրապետությունը հռչակեց անկախ պետություն:

---

[64] Сергей Маркедонов. самоопределение по ленинским принципам (http://www.webcitation.org/659qNDmSP

[65] «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 21 սեպտեմբերի 1991թ.:

1991թ.հոկտեմբերի 16-ին նախագահական ընտրությունների արդյունքում ձայների 83 տոկոսով Հայաստանի Հանրապետության նախագահ ընտրվեց պատմական գիտությունների դոկտոր Լևոն Տեր-Պետրոսյանը: Իսկ 1991թ. դեկտեմբերի 21-ին խորհրդային տարածքում դադարեց ԽՍՀՄ-ի գոյությունը:

Դա եղավ նրա վերջին դողանջը:

4.ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ

Նորաստեղծ Հայաստանի Երրորդ հանրապետությունը սրընթաց մտավ միջազգային հարաբերությունների ոլորտ և աստիճանաբար իր արժանի տեղը գրավեց այդ կարևոր համակարգում: Դա այնքան էլ դյուրին գործ չէր, սակայն բազմադարյան պատմություն ունեցող և պատմության արհավիրքներում թրծված Հայաստանը մեծ փորձ ուներ կուտակված, և նա այդ փորձը փայլուն կիրառեց XX դարի վերջերին:

Հայաստանի Երրորդ հանրապետության առջև ծառացած **Առաջին** կարևոր խնդիրը նրա միջազգային ճանաչման հարցն էր: Աշխարհում առաջին պետությունը, որը ճանաչեց Հայաստանի անկախությունը, **Վրաստանն էր**: **Դա պատմական Քարթլոսի մեծ ծառայությունն էր իր ավագ եղբորը՝ Հայոսին**: Այդ գործընթացը մեծ արագությամբ առաջ գնաց, և Հայաստան-Արմենիայի անկախությունը ճանաչեցին Ասիայի, Եվրոպայի, Աֆրիկայի, Հյուսիսային և Հարավային Ամերիկաների,Ավստրալիայի ավելի քան 160 պետություն: Դրանց թվում էին Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի հինգ մշտական անդամները՝ Ռուսաստանը (16-12-1991), ԱՄՆ-ը (27-12-1991), Չինաստանը (27-12-1991), ապա նաև Մեծ Բրիտանիան

և Ֆրանսիան[66]: Այստեղ պետք է նշել, որ Հայաստանի անկախությունը ճանաչեց նաև Թուրքիան (16-12-1991), ընդ որում նույն օրը, ինչ Ռուսաստանը:

Երկրորդ կարևոր խնդիրը Հայաստանի Հանրապետության հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման հարցն էր, որն ուղղակիորեն առնչվում է անկախության ճանաչման հետ:

Առաջին պետությունը, որը դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Հայաստանի հետ, **Լիտվան էր**[67]: Հայաստանի հետ պաշտոնապես դիվանագիտական հարաբերություններ հաստատած երկրների շարքում էին ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Ռուսաստանը, Գերմանիան, Չինաստանը, Իտալիան, Ավստրիան, Արգենտինան, Հունաստանը, Իրանը, Եգիպտոսը, Լիբանանը, Սիրիան, Գանան և այլն, և այլն:

Թուրքիան, որ ճանաչել էր Հայաստանի անկախությունը, նրա հետ մինչև օրս էլ չի հաստատել դիվանագիտական հարաբերություններ:

Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա այդ պետությունը, որը պատմության մեջ առաջին անգամ հայտնվել է 1918 թվականին, չի ճանաչել Հայաստանի ո՛չ անկախությունը և ո՛չ էլ դիվանագիտական հարաբերություններ հաստատել նրա հետ: Ամփոփելով այդ հարցը՝ կարող ենք ասել հետևյալը: Հայաստանի Հանրապետությունն ունի չորս հարևան պետություն՝ Իրան, Վրաստան, Ադրբեջան և Թուրքիա: Սակայն, ինչպես նշվեց, Հայաստանի անկախությունը ճանաչել են միայն երեքը՝ Իրանը, Վրաստանը և Թուրքիան: Իսկ ինչ վերաբերում է դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը, ապա միայն երկուսը՝ Իրանը և Վրաստանն են Հայաստանի հետ հաստատել դիվանագիտական հարաբերություններ և իրենց դեսպանու-

---

[66] Հայաստանի Հանրապետութեան Արտաքին Գործերի Նախարարութեան Դիվանագիտական Բանբեր, Վենետիկ, 1993, էջ 4:

[67] Նույն տեղում, էջ 5:

թյունները բացել Երևանում: Փաստորեն Թուրքիան և Ադրբեջանը ցամաքային, ջրային և օդային բլոկադայի են ենթարկել Հայաստանը, որը միջազգային իրավունքի կոպիտ խախտում է:

Այս ֆենոմենի գլխավոր պատճառը կամ պատճառներից մեկն այն է, որ Լեռնային Ղարաբաղը, ավելի ճիշտ Հայկական պատմական Արցախը, որը 1988թ. սկսված ազգային-ազատագրական պայքարից հետո կարողացավ 1994թ. ազատվել ադրբեջանական լծից, և հռչակվեց Արցախի Հանրապետությունը՝ հայկական երկրորդ անկախ պետությունը: Ադրբեջանը չի կարողանում հաշտվել այդ իրողության հետ և պայքարում է իր տիրապետությունն Արցախի վրա վերականգնելու համար: Նրան աջակցում և օգնում է Թուրքիան, որն առաջ քաշեց «Մեկ ազգ երկու պետություն» խոցելի տեսակետը:

Իսկ Արցախի թիկունքում կանգնած է աշխարհի ողջ հայությունը՝ Հայաստանի Հանրապետության գլխավորությամբ: Հայաստանի համար շատ կարևոր է ընդլայնել միջազգային գործոն լինելու իր դերը, ուժեղացնել իր միջազգային դիրքերը և դառնալ արդի միջազգային հարաբերությունների լիիրավ անդամ, որը հեշտ գործ չէր: Սակայն Երրորդ հանրապետությունն այդ խնդիրը լուծեց փայլուն:

Դրա մասին են վկայում հետևյալ փաստերը:

Հայաստանն առաջին հերթին 1992թ. մարտի 2-ին դարձավ աշխարհի ամենահեղինակավոր կազմակերպության՝ Միավորված ազգերի կազմակերպության անդամ: Դա տեղի ունեցավ Նյու Յորքում՝ ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայում, որը նրան միաձայն ընտրեց ՄԱԿ-ի անդամ: Նրա կազմում ընդգրկված են 193 պետություն, և դրանցից մեկը Հայաստանի Երրորդ հանրապետությունն է: Այդ օրը՝ մարտի 2-ին, Նյու Յորքում՝ ՄԱԿ-ի կենտրոնական շենքի առջև, տեղի ունեցավ հանդիսավոր արարողություն, և բարձրացվեց Հայաստանի պետական դրոշը՝ Եռագույնը[68]: Քանի որ ՄԱԿ-ում **գրավոր տեքստի ներկայացման հիմքում դրված է**

[68] Նույն տեղում, էջ 8:

անգլիական այբուբենը, ուստի ՄԱԿ-ում շատ հարցեր, այդ թվում և սկզբունքային, իրականացվում են այբբենական կարգով: Ուստի և Հայկական դրոշը բարձրացվել և ծածանվում է Արգենտինայի դրոշի կողքին (**Argentina**, **Armenia**):

ՄԱԿ-ն իր անդամ-երկրներում հիմնում է գրասենյակներ: 1992թ. դեկտեմբերին Երևանում նույնպես հիմնվեց ՄԱԿ-ի գրասենյակը:

Գլխավոր Ասամբլեայում ելույթ ունեցավ Հայաստանի արտաքին գործերի նախարար Ռաֆֆի Հովհաննիսյանը, որը նշեց.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ ՌԱՖՖԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

«Մեծարգո՛ պարոն գլխավոր քարտուղար,

Միավորված ազգերի կազմակերպության մեծարգո՛ անդամներ,

1992 թվականի մարտի 2-ը Հայաստանի պատմության մեջ կմնա որպես ամենանշանակալի տարեթվերից մեկը, կմնա որպես հիրավի կարևորագույն օր, երբ մեր հինավուրց երկիրը ոտք դրեց ՄԱԿ-ի շեմից ներս՝ դառնալով ազգերի ընկերակցության լիիրավ անդամ:

Դառնալով ՄԱԿ-ի անդամ՝ Հայաստանի Հանրապետությունը հանդիսավոր հայտարարում է, որ հարգում է և լի է վճռականությամբ՝ ղեկավարվելու այդ կազմակերպության որդեգրած սկզբունքներով և գործելակերպով, որոնք շարադրված են ՄԱԿ-ի խարտիայում, կանոնադրությունում և կարևորագույն այլ փաստաթղթերում: Խաղաղության, անվտանգության, ազգերի ինքնորոշման, մարդու իրավունքների և ազատության գաղափարներն ավելի քան համահունչ են ներկայիս Հայաստանի քաղաքական մտածողությանը, քանի որ բխում են և՛ հայ ժողովրդի, և՛ թե մյուս ժողովուրդների ու համաշխարհային ընկերակցության շահերից: Իսկ այդ գաղափարներն անցողիկ չեն, դրանք մնայուն են և հաստատուն: Հետևապես Հայաստանի Հան-

ռապետության քաղաքականությունը չի կարող ուղղված լինել որևէ ժողովրդի, որևէ երկրի դեմ: Մենք լիովին պաշտպանում ենք պետությունների տարածքային ամբողջականության և անձեռնմխելիության սկզբունքը: Նաև հայտարարում ենք, որ մեզ համար կարևոր նշանակություն ունի ազգերի ազատ ինքնորոշման իրավունքի սկզբունքը: Թե որքան աղետաբեր ու ողբերգական հետևանքների կարող են հանգեցնել այս սկզբունքի անտեսումն ու ոտնահարումը, համոզիչ ցույց են տալիս Լեռնային Ղարաբաղում ծավալվող իրադարձությունները: Այդ իրադարձությունները կարող են բերել ամենածանր հետևանքների, եթե համաշխարհային ընկերակցությունը և առաջին հերթին ՄԱԿ-ը՝ որպես այդ ընկերակցության ամենահեղինակավոր մարմին, ժամանակին ձեռք չառնի անհրաժեշտ միջոցները:

Հայաստանի Հանրապետության, հայ ժողովրդի անունից թո՛ւյլ տվեք շնորհակալություն հայտնել Ձեզ, պարո՛ն գլխավոր քարտուղար, և ՄԱԿ-ի անդամ-պետությունների ներկայացուցիչներին այն բանի համար, որ ձեր աջակցության և ջանքերի շնորհիվ ՄԱԿ-ի անդամ-պետությունների դրոշների կողքին այսօր ծածանվեց նաև մեր եռագույնը՝ մեր իղձերի, մեր ինքնության, մեր ազատության դրոշը:

Թո՛ւյլ տվեք վստահություն հայտնել նաև, որ, դառնալով ՄԱԿ-ի անդամ, Հայաստանի Հանրապետությունն առավելագույնը կանի՝ անշեղորեն պահպանելու և կիրառելու նրա սկզբունքները, իր լուման կներդնի ազգերի խաղաղության, անվտանգության, փոխըմբռնման և մերձեցման գործում, որը ժողովուրդների բարգավաճման և երջանիկ ապագայի անհրաժեշտ ու անխուսափելի պայմանն է»[69]:

Հարկ է ավելացնել, որ Հայաստանն անդամ է նաև մի շարք այլ միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝

1. ՀԱՊԿ-ի՝ Հավաքական անվտանգային պայմանագրի կազմակերպության:

2. ԱՊՀ-ի՝ Անկախ Պետությունների Համագործակցության,

---

[69] Նույն տեղում: Ելույթի տեքստը տրվում է ամբողջությամբ:

երբ ԽՍՀՄ-ը լուծարվեց: Դրա փոխարեն Բորիս Ելցինը, Լեոնիդ Կրավչուկը և Ստանիսլավ Շուշկևիչը հիմնեցին ԱՊՀ-ն:

3. ԵԱՀԽ՝ Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդի անդամ:

4.Եվրախորհրդի՝ Եվրոպական խորհրդի անդամ:

Նրան անդամակցում են 47 պետություն, որոնք զբաղվում են մարդու իրավունքների հարցերով:

5. ԵՏՄ՝ Եվրոպական տնտեսական միության անդամ:

6. Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության անդամ և այլն:

Ընդհանուր առմամբ Հայաստանի Հանրապետությունն անդամ է ավելի քան 40 միջազգային կազմակերպությունների:

Դա շատ լավ ցուցանիշ է: Այդ տվյալներն իրավունք են տալիս հաստատելու, որ Հայաստանի Երրորդ հանրապետությունն արդի միջազգային հարաբերությունների լիիրավ անդամ է և կարևոր գործոն:

Հարգելի՛ ընթերցող

Տողերիս հեղինակը 2019 թվականին ռուսաց լեզվով հրատարակեց «Մերձավորարևելյան և Արևելաասիական քաղաքական հորձանուտում: Արևելագետի գրառումները» մենագրական ուսումնասիրությունը[70]: Այդ աշխատանքը կատարել ենք, երբ դեռ կար ԽՍՀՄ-ը, և նա դեռ չէր լուծարվել: Այդ և համանման այլ աշխատանքներ մեր կողմից կատարվեցին Խորհրդային Միության Կոմունիստական կուսակցության Քաղբյուրոյի հանձնարարությամբ՝ հաշվի առնելով իմ մասնագիտությունը՝ արևելագետ-արաբագետ լինելու հանգամանքը և իմ լայն կապերը արաբական երկրների բարձրագույն ղեկավարության, քաղաքական գործիչների, գիտնականների և հոգևորական-առաջնորդների հետ և լեզուների իմացությունը:

---

[70] Николай Оганесян, В ближневосточном и восточноазиатском политическом вовдовороте. Записки востоковеда.Аналитические материалы, представленные высшему руководству Советского Союза, Ереван, 2019, 208 с.

ԽՍՀՄ-ի փլուզումից և Քաղբյուրոյի լուծարումից հետո, բնականաբար, մեր այդ աշխատանքները դադարեցվեցին: Սակայն մեր համագործակցությունն արաբական երկրների, մասնավորապես Լիբանանի, Սիրիայի, Եգիպտոսի, Իրաքի, Հորդանանի, Արաբական Միացյալ Էմիրությունների ղեկավարների և գիտնականների հետ շարունակվեց, բայց արդեն իմ հայրենիքի՝ անկախ Հայաստանի Երրորդ հանրապետության ղեկավարության հանձնարարությամբ:

Սույն աշխատությունը խարսխված է այդ երկրների ղեկավարների, քաղաքական և հասարակական ականավոր գործիչների, գիտնականների հետ ունեցած իմ բազմաբնույթ հանդիպումների, զրույցների, գիտաժողովների քննարկումների և այլ նյութերի հիման վրա:

Տիպաբանորեն այս աշխատությունը նման է իմ՝ «Մերձավորարևելյան և արևելասիական քաղաքական հորձանուտում » մենագրությանը, Բայց եթե այս ԽՍՀՄ-ի ղեկավարությանն էր հասցեագրված, այս աշխատությունը հասցեագրված է Հայաստանի Երրորդ հանրապետությանը, նրա ղեկավարությանը և ողջ հայությանը, Հայաստանի Հանրապետության առաջին երեք պրեզիդենտներին՝

1.Լևոն Հակոբի Տեր-Պետրոսյանին, Հայաստանի Հանրապետության **Առաջին նախագահին**՝ 1991-1998 թվականներ:

Նա նախագահի պաշտոնից հրաժարվել է 1998 թվականի փետրվարի 3-ին:

2. Ռոբերտ Սեդրակի Քոչարյանին, Հայաստանի Հանրապետության **Երկրորդ նախագահին**՝ 1998-2008 թվականներ:

3. Սերժ Ազատի Սարգսյանին, Հայաստանի Հանրապետության **Երրորդ նախագահին**՝ 2008-2018 թվականներ: Նա 2018 թ. ապրիլի 17-ին Ազգային ժողովի կողմից ընտրվել է վարչապետի պաշտոնում, իսկ 2018թ. ապրիլի 23-ին ներկայացրել է իր հրաժարականը:

5. ՀԱՅԱՍՏԱՆ-ՌՈՒՍԱՍՏԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ, ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Մոսկվայում՝ Ռուսաստանի Սպիտակ տանը, 1991թ. դեկտեմբերի 29-ին կայացան Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության պաշտոնական պատվիրակությունների բանակցությունները: ՀՀ պատվիրակությունը գլխավորում էր նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը: Պատվիրակության կազմում էին փոխնախագահ, վարչապետ Գագիկ Հարությունյանը, նախագահի ազգային անվտանգության գծով գլխավոր խորհրդական Աշոտ Մանուչարյանը և պաշտոնական այլ անձինք:

Ռուսաստանի Դաշնության կողմից բանակցություններին մասնակցում էին նախագահ Բորիս Ելցինը, կառավարության նախագահի առաջին տեղակալ Բուրբուլիսը, տեղակալ Գայդարը, Գերագույն խորհրդի նախագահի տեղակալ Շախրայը և պաշտոնական այլ անձինք:

Ողջունելով հյուրերին՝ Բորիս Ելցինը նշեց, որ Ռուսաստանը երկկողմանի պայմանագրեր է կնքել մի շարք հանրապետությունների հետ, սակայն դրանց բոլորի հիմքում ընկած էր մեկ ընդհանուր երկրի շրջանակներում լինելու գաղափարը: Հայաստանի Հանրապետության հետ կնքվող պայմանագիրը, շարունակեց Ելցինը, առանձնանում է որպես անկախ իրավահավասար պետությունների միջև ստորագրվող քաղաքական փաստաթուղթ, և այդ տեսակետից այն առաջինն է:

Իր հերթին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը,կարևորելով Հայաստանի և Ռուսաստանի միջև միջպետական պայմանագրի կնքումը, ընդգծեց, որ վերջին 300 տարվա ընթացքում առաջին անգամ է Հայաստանը հավասարը հավասարի նման բանակցությունների է նստում Ռուսաստանի հետ: Դա, ինչ խոսք, պատմական կարևոր իրադարձություն է:

Բանակցություններից հետո նախագահներ Լևոն Տեր-Պետ-

ռոսյանը և Բորիս Ելցինը ստորագրեցին Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ անվտանգության պայմանագիրը:

Ահա պայմանագրի ամբողջական տեքստը:

«Ռուսաստանի Դաշնությունը և Հայաստանի Հանրապետությունը, ելնելով Ռուսաստանի Խորհրդային Դաշնակցային Սոցիալիստական Պետության պետական ինքնիշխանության մասին 1990թ. հունիսի 12-ի հռչակագրից և «Անկախ պետականության հիմնադրույթների մասին» Հայաստանի Հանրապետության՝ 1991թ. սեպտեմբերի 25-ի սահմանադրական օրենքից, ուշադրության առնելով Անկախ պետությունների համագործակցության շրջանակներում համագործակցելու ձգտումը,

հենվելով իրենց ժողովուրդների մշակույթների մոտիկության, մշակութային հաղորդակցման և բարեկամական հարաբերությունների բազմադարյան ավանդույթների վրա,

տոգորված լինելով իրենց տարածքներում ժողովրդական իրավական պետություններ կառուցելու վճռականությամբ,

գիտակցելով, որ իրենց միջև բարեկամության, բարիդրացիության և փոխշահավետ համագործակցության հարաբերությունների հետագա զարգացումը և ամրապնդումը համապատասխանում են երկու պետությունների ժողովուրդների շահերին և լավագույնս կաջակցեն նրանց տնտեսական զարգացմանը,

համարելով, որ երկու պետությունների փոխհարաբերությունների ապագան անխզելիորեն կապված է Եվրոպայում, աշխարհում խաղաղության, անվտանգության ու կայունության ամրապնման հետ,

հաստատելով իրենց նվիրվածությունը Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության և Հելսինկիի եզրափակիչ ակտի և Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդի մյուս փաստաթղթերի նպատակներին և սկզբունքներին, նաև հաստատելով իրենց նվիրվածությունը

մարդու իրավունքների բնագավառի հանրաճանաչ միջազգային ստանդարտների պահպանմանը, համաձայնության եկան ներքո-հիշյալի շուրջը.

Հոդված 1.

Բարձր Պայմանավորվող Կողմերն իրենց հարաբերությունները կզարգացնեն որպես բարեկամ պետություններ: Իրենք պարտավորվում են անշեղորեն առաջնորդվել իրենց պետական իշխանության անկախությունը փոխադարձաբար հարգելու, իրավահավասարության և միմյանց ներքին գործերին չմիջամտելու, ուժ կամ ուժի սպառնալիք, ներառյալ ճնշման այլ եղանակներ չգործադրելու, տարածքային ամբողջականության, սահմանների անխախտության, վեճերի խաղաղ կարգավորման սկզբունքները, մարդու իրավունքներն ու հիմնական ազատությունները հարգելու, պարտավորությունները բարեխղճորեն կատարելու սկզբունքներով և միջազգային իրավունքի մյուս հանրաճանաչ նորմաներով:

Հոդված 2.

Բարձր պայմանավորվող Կողմերը կփոխգործակցեն ինչպես ամբողջական, այնպես էլ տարածաշրջանային մասշտաբով խաղաղության ամրապնդման, կայունության և անվտանգության բարձրացման նպատակով: Իրենք կնպաստեն զինաթափման գործընթացի շարունակմանը, կոլեկտիվ անվտանգության համակարգերի ստեղծմանն ու ամրապնդմանը, ինչպես նաև ՄԱԿ-ի խաղաղարար դերի ուժեղացմանն աջակցող կառույցների ու հաստատությունների ձևավորմանը և տարածաշրջանային մեխանիզմների արդյունավետության բարձրացմանը: Իրենք նաև ջանքեր կգործադրեն տարածաշրջանային կոնֆլիկտների և Կողմերի շահերը շոշափող այլ իրավիճակների կարգավորմանն աջակցելու համար:

Բարձր Պայմանավորվող Կողմերն այդ նպատակներով կա-

նոնավոր հիման վրա խորհրդակցություններ կանցկացնեն փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող միջազգային հիմնահարցերի շուրջ:

Հոդված 3.

Այնպիսի իրավիճակ առաջանալիս, որը Պայմանավորվող Բարձր Կողմերի կարծիքով սպառնում է խաղաղությանը, խախտում է խաղաղությունը կամ նրա անվտանգության էական շահերը, այդ Կողմը կարող է դիմել մյուս Կողմին՝ խնդրելով ցույց տալ անհետաձգելի օգնություն, որի անհրաժեշտությունը, տեսակներն ու չափերը որոշվում են համապատասխան խորհրդակցություններ անցկացնելով:

Հոդված 4.

Բարձր Պայմանավորվող Կողմերից յուրաքանչյուրը իր տարածքում արգելում և խափանում է այնպիսի կազմակերպությունների ու խմբերի ստեղծումն ու գործունեությունը, որոնք ուղղված են մյուս Բարձր Պայմանավորվող Կողմի պետական ինքնիշխանության, անկախության և տարածքային ամբողջականության դեմ:

Հոդված 5.

Բարձր Պայմանավորվող Կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է ձեռնպահ մնալ մյուս Բարձր Պայմանավորվող Կողմի դեմ ուղղված որևէ գործողության կամ միջոցառման մասնակցելուց և թույլ չտալ, որ իր տարածքն օգտագործվի մյուս Բարձր Պայմանավորվող Կողմի դեմ ուղղված ագրեսիայի կամ այլ բռնի գործողությունների նպատակով:

Հոդված 6.

Բարձր Պայմանավորվող Կողմերը, ինքնուրույն վճռելով ազգային անվտանգության ապահովման և պաշտոնական շինա-

րարության հարցերը, սերտորեն կհամագործակցեն այդ բնագավառներում և կորոշեն փոխգործողության ձևերը, այդ թվում՝ մի Կողմի տարածքում մյուս Կողմի զինված ուժերի զորաբաժնի գտնվելու հարցը՝ առանձին համաձայնագրին համապատասխան:

Հոդված 7.

Բարձր Պայմանավորվող Կողմերն իրենց քաղաքացիների համար, անկախ նրանց ազգությունից, սեռից, լեզվից, կրոնից քաղաքական և այլ համոզմունքներից, երաշխավորում են հավասար իրավունքներ և ազատություններ:

Բարձր Պայմանավորվող Կողմերից յուրաքանչյուրն իր տարածքում բնակվող բոլոր անձանց համար երաշխավորում է քաղաքացիական, քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքներ և հիմնական ազատություններ՝ միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմաներին և իր օրենսդրությանը համապատասխան:

Բարձր Պայմանավորվող Կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է իր տարածքում բնակվող անձանց առջև խոչընդոտներ չհարուցել իրենց կամքի ազատ դրսևորմամբ պահպանելու տեղեկատու պետության քաղաքացիությունը կամ ձեռք բերելու մյուս Կողմի քաղաքացիությունը, հավասարապես նաև ունենալու երկու Կողմերի քաղաքացիությունը՝ քաղաքացիության մասին Կողմերի օրենսդրությանը համապատասխան:

Բարձր Պայմանավորվող Կողմերը առանձին համաձայնագրեր կկնքեն մյուս Բարձր Պայմանավորվող Կողմի տարածքում բնակվող իրենց քաղաքացիների ապահովման ու պաշտպանության նպատակով, ինչպես նաև կկնքեն երկքաղաքացիության մասին համաձայնագիր:

Բարձր Պայմանավորվող Կողմերը առանձին համաձայնագրով նաև կկարգավորեն Հայաստանի Հանրապետությունում ռուս փոքրամասնության և Ռուսաստանի Դաշնությունում հայ

փոքրամասնության իրավունքների ապահովագրմանը վերաբերող հարցերը:

Հոդված 8.

Բարձր Պայմանավորվող Կողմերը կզարգացնեն իրավահավասար և փոխշահավետ համագործակցությունը քաղաքականության, տնտեսության, մշակույթի, առողջապահության, էներգետիկայի, բնապահպանության, գիտության, տեխնիկայի, առևտրի բնագավառներում, մարդասիրական և այլ ոլորտներում, կաջակցեն լրատվական լայն փոխանակմանը: Իրենց համագործակցության առաջնային ուղղությունները, բացի 2-րդ, 3-րդ և 7-րդ հոդվածներում նշվածներից, մասնավորապես կլինեն գործողությունների կազմակերպումը, ներառյալ համաձայնեցված նախաձեռնությունների իրականացումը զանազան միջազգային կազմակերպություններում, մարդու իրավունքների ապահովումը այդ բնագավառում գործող հիմնարար միջազգային փաստաթղթերին համապատասխան, համագործակցությունը ընդհանուր տնտեսական տարածության կազմավորման ու զարգացման գործում, էներգետիկայի, տրանսպորտի ու կապի համակարգերի կառավարման կազմակերպումը, համագործակցությունը շրջակա միջավայրի պահպանության բնագավառում, համագործակցությունը կազմակերպված հանցագործության, ահաբեկչության և թմրաբիզնեսի դեմ ուղղված պայքարում:

Բարձր Պայմանավորվող Կողմերն առանձին համաձայնագիր կկնքեն այս և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցերում համագործակցելու մասին:

Հոդված 9.

Բարձր Պայմանավորվող Կողմի՝ մյուս Բարձր Պայմանավորվող Կողմի տարածքում գտնվող պետական ունեցվածքի, իրավական անձանց ու քաղաքացիների ունեցվածքի իրավական ռեժիմը կարգավորվում է ունեցվածքի գտնվելու վայրի Կողմի

օրենսդրությամբ,եթե Կողմերի միջև կնքված համաձայնագրով այլ բան նախատեսված չէ:

Եթե Բարձր Պայմանավորվող Կողմերից մեկը հայտարարում է մյուս Բարձր Պայմանավորվող Կողմի տարածքում իրեն պատկանող այն ունեցվածքը իրեն պատկանելու մասին, որի մասին պահանջներ են ներկայացնում երրորդ անձինք կամ պետություններ, ապա մյուս Կողմը պարտավոր է բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռնարկել մինչև դրա պատկանելության հարցի վերջնական լուծումը այդ ունեցվածքը պահելու և պահպանելու համար և իրավունք չունի այն որևէ մեկին հանձնելու առանց առաջին Կողմի որոշակիորեն արտահայտված համաձայնության:

Սեփականության հարաբերությունների մյուս բոլոր հարցերը, որոնք շոշափում են Բարձր Պայմանավորվող Կողմերի շահերը, ենթակա են կարգավորման առանձին համաձայնագրերերով:

Հոդված 10.

Բարձր Պայմանավորվող Կողմերի տնտեսական և առևտրական հարաբերությունները կկառուցվեն առավելագույնս բարենպաստ ռեժիմ տրամադրելու հիման վրա:

Բարձր Պայմանավորվող Կողմերը միմյանց վաղօրոք կտեղեկացնեն այն տնտեսական վճիռների մասին, որոնք կարող են շոշափել մյուս Բարձր Պայմանավորվող Կողմի՝ երկկողմ հարաբերությունների ոլորտում համաձայնեցված իրավունքները և օրինական շահերը:

Հոդված 11.

Բարձր Պայմանավորվող Կողմերը, ապահովելով տարանցիկ բեռնափոխադրումները և ուղևորափոխադրումները սեփական գետային, ծովային նավահանգիստներով և օդանավակայաններով, երկաթուղային և ավտոխճուղային ցանցով և խողո-

վակաշարերով, առանձին համաձայնագիր կկնքեն իրենց տարածքով բեռների և ուղևորների տարանցիկ փոխադրման հարցերը առավելագույն բարենպաստ ռեժիմի տրամահիմնադրման վրա կարգավորելու մասին:

Հոդված 12.

Բարձր Պայմանավորվող Կողմերը կփոխանակեն դիվանագիտական ներկայացուցչություններ: Ներկայացուցչությունների փոխանակման կարգը և նրանց կարգավիճակը կսահմանվեն առանձին համաձայնագրով:

Հոդված 15.

Պայմանավորվող Կողմերը սույն Պայմանագրի կատարման հարցերի առնչությամբ երկկողմ խորհրդակցություններ կանցկացնեն ըստ անհրաժեշտության, բայց առնվազն տարին մեկ անգամ:

Սույն Պայմանագրի իրագործման նպատակով Բարձր Պայմանավորվող Կողմերը կհիմնեն համագործակցության մշտապես գործող միջխորհրդարանական հանձնաժողով և միջկառավարական կազմակերպիչ կոմիտե:

Հոդված 16.

Սույն Պայմանագիրը ենթակա է վավերացման և ուժի մեջ կմտնի վավերագրերի փոխանակման օրը, որը կկատարվի Երևան քաղաքում:

Հոդված 17.

Սույն պայմանագիրը կգործի տասը տարի, սկսած ուժի մեջ մտնելու օրվանից:

Սույն Պայմանագիրը ուժի մեջ կմնա հաջորդ տասնամյա ժամանակամիջոցներում, եթե Բարձր Պայմանավորվող Կողմերից մեկն այն չչեղարկի այդ մասին մյուս Բարձր Պայմա-

նավորվող Կողմին գրավոր ծանուցելով ընթացիկ տասնամյա ժամանակամիջոցը վերջանալու օրվանից առնվազն վեց ամիս առաջ:

Կնքված է Մոսկվա քաղաքում 1991 թվականի դեկտեմբերի 29-ին երկու օրինակով՝ յուրաքանչյուրը ռուսաց և հայոց լեզուներով, ընդ որում երկու օրինակներն էլ համազոր են[71]:

Ռուսաստանի	Հայաստանի
Դաշնության	Հանրապետության
Անունից	անունից
Բ.Ն. Ելցին	Լ. Հ. Տեր-Պետրոսյան

Կասկածից վեր է, որ Ռուսաստանի և Հայաստանի միջև կնքված Բարեկամության, համագործակցության և փոխադարձ անվտանգության սույն պայմանագիրը շատ կարևոր դիվանագիտական և ոչ միայն դիվանագիտական, փաստաթուղթ է, որը նպատակաուղղված է Հայաստանի Հանրապետության միջազգային դիրքերի և ազգային անվտանգության հետագա ամրապնդմանը՝ մի կողմից, և ծառայում է Անդրկովկասում և Մերձավոր ու Միջին Արևելքի տարածաշրջանում Ռուսաստանի երբեմնի ուժեղ դիրքերի, ազդեցության ու հեղինակության վերականգնմանը՝ մյուս կողմից: Համոզված ենք, որ Հայաստանին ոչ բարեկամ որևէ երկիր, առաջին, հերթին Թուրքիան, նախքան Հայաստանի դեմ որևէ թշնամական քայլի դիմելը, ծանրութեթև կանի և հաշվի կառնի Ռուս-հայկական փոխադարձ անվտանգության պայմանագրի առկայությունը:

[71] Հայաստանի Հանրապետութեան Արտաքին Գործերի Նախարարութեան Դիվանագիտական Բանբեր, Վենետիկ, Իտալիա, 1993, էջ 10-13:

6. ԳՅՈՒՄՐԻՈՒՄ ՌՈՒՍԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՀԻՄՆՈՒՄԸ

1991թ. Հայաստանի և Ռուսաստանի միջև Բարեկամության, համագործակցության և փոխադարձ անվտանգության պայմանագրից չորս տարի անց՝ 1995թվականին, Հայաստանի և Ռուսաստանի միջև ստորագրվեց միջազգային պայմանագիր Գյումրիում ռուսական 102-րդ ռազմական բազան հիմնելու վերաբերյալ: Դա շատ կարևոր քայլ էր Հայաստանի Երրորդ հանրապետության անվտանգությունն ապահովելու ուղղությամբ: Կարելի է ասել, որ Բարեկամության պայմանագրի ստորագրումից հետո Հայաստանի անվտանգության ապահովումը բարձրացավ մի նոր, ավելի բարձր մակարդակի: 102-րդ բազայի ստեղծումը Գյումրիում շատ կարևոր նշանակություն ուներ նաև Ռուսաստանի համար, քանի որ նա ձեռք է բերում շատ կարևոր ռազմական հենարան՝ իր դիրքերն Անդրկովկասում, Մերձավոր և Միջին Արևելքում և ընդհանրապես այդ տարածաշրջանում ամրապնդելու համար:

Ռուսական բազան Հայաստանում կատարում է կայունացման դեր ռեգիոնում, որը հաշվի են առնում տարածաշրջանի, և ոչ միայն տարածաշրջանի, բոլոր պետությունները:

Ռուսական Դաշնությունը և Հայաստանի Հանրապետությունը 2010թ. օգոստոսի 20-ին ստորագրեցին Արձանագրություն, որով պայմանագրի գործողության ժամկետը երկարացվեց մինչև 2044 թվականը: Դրա հետ միասին Արձանագրությունը նախատեսում է երկարացնել ոչ միայն պայմանագրի գործողության ժամկետը, այլև ընդարձակել նրա աշխարհագրական և ստրատեգիական պատասխանատվության սֆերան՝ ոլորտը, որը բացառիկ կարևոր նշանակություն ունի Ռուսաստանի և Հայաստանի անվտանգության տեսանկյունից:

Գյումրիում տեղակայված 102-րդ ռազմական բազայի մարտական խնդիրն է հարավային սահմանների պաշտպանությունը Հայաստանի Հանրապետության ռազմական ուժերի հետ համագործակցությամբ:

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՄԵԿԸ

Այս ձևակերպումը պատկանում է Ռուսաստանի Դաշնության պրեզիդենտ Բորիս Նիկոլաևիչ Ելցինին: Դա շատ տարողունակ, երկու երկրների փոխհարաբերությունները բնութագրող, գիտական, քաղաքական, և թող թույլ տրվի ասել, վերին աստիճանի հուսադրող բանաձև է:

Հարկ է նշել, որ Հայաստանի աշխարհաքաղաքական գործոն լինելն առավելագույնս արժեքավորվեց հայ-ռուսական ստրատեգիական համագործակցության հաստատումով, որը 90-ական թվականների երկրորդ կեսից վերածվեց ստրատեգիական գործընկերության: Դա պայմանավորված էր մի քանի հանգամանքով, որոնց հաշվառումը աստիճանաբար հանգեցրեց Ռուսաստանի կողմից Հայաստանի քաղաքական դերի կարևորության ըմբռնմանը և դրան համապատասխան ամենաբարձր մակարդակով քաղաքական հարաբերությունների հաստատմանը երկու սուվերեն պետությունների միջև:

Իհարկե, դա միանգամից չեղավ: Երկու երկրներն էլ ահագին ճանապարհ անցան, մինչև որ հանգեցին այն ճշմարտությանը, որ նրանց ստրատեգիական շահերը համընկնում են: Իսկ դա նշանակում էր նրանց կողմից մեկը մյուսի համար կարևոր գործոն լինելու ճանաչում:

1990-ական թվականների սկզբներին՝ Խորհրդային Միության փլուզումից հետո, յուրահատուկ իրավիճակ ստեղծվեց Անդրկովկասում: Առաջացավ «քաղաքական դատարկություն»,

որն ի վիճակի չէին լրացնելու նորաստեղծ և դեռևս թույլ անդրկովկասյան հանրապետությունները՝ Ադրբեջանը, Հայաստանը և Վրաստանը: Դեռ ավելին. նրանք կախման մեջ էին գտնվում արտասահմանյան երկրներից և ակնկալում էին նրանց օգնությունն ու օժանդակությունը:

Նորաստեղծ քաղաքական իրավիճակը լայն հնարավորություններ ու հեռանկարներ ստեղծեց Անդրկովկաս ներթափանցելու համար, որի հնարավորությունը չկար նախկինում, երբ նա կազմում էր մեծ ու հզոր Խորհրդային Միության բաղկացուցիչ մասը: Այժմ այդ հնարավորությունն ստեղծվել էր, և պայքար սկսվեց առաջին հերթին Ռուսաստանի, Իրանի և Թուրքիայի միջև Անդրկովկասում տիրապետող դիրքեր գրավելու համար, երբ յուրաքանչյուրը պայքարում էր իր ազդեցությունն այդ տարածաշրջանի վրա տարածելու կամ այն իր ազդեցության ոլորտի մեջ առնելու համար:

Հետագայում այդ խաղի մեջ մտան նաև ԱՄՆ-ը, որը սկզբնական շրջանում փորձում էր գործել Թուրքիայի միջոցով, իսկ այնուհետև անմիջականորեն՝ հռչակելով Անդրկովկասը ԱՄՆ-ի համար կարևոր կենսատարածք, Արևմտյան Եվրոպայի երկրները, գլխավորապես Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Գերմանիան, ապա նաև այլ երկրներ, ի մասնավորի Չինաստանը, թեև անհրաժեշտ է նշել, որ Չինաստանը լոկ առաջին քայլերն է կատարում, և նրա գործունեության ծավալները դեռևս անհամեմատելի են Ռուսաստանի, Թուրքիայի, Իրանի, ԱՄՆ-ի և Արևմտյան Եվրոպայի երկրների գործողությունների հետ: Գլխավոր դերակատարները, այնուամենայնիվ, մնում են Ռուսաստանը, Թուրքիան և Իրանը, որոնք անմիջականորեն սահմանակից են Անդրկովկասին, և ԱՄՆ-ը: Նրանք առավել շահագրգիռ են Անդրկովկասում տրապետող դիրքեր գրավելու հարցում:

Այդ քաղաքական նպատակներն իրագործելու համար վերոնշյալ պետությունները, բացի այլ լծակներից, կարիք ունեն հաստատելու, եթե ոչ դաշնակցային, ապա գոնե սերտ հարա-

բերություններ անդրկովկասյան որևէ պետության, իսկ ավելի լավ, եթե բոլորի հետ: Դա նրանց համար հիմք կծառայեր Անդրկովկասում իրենց ներկայությունն ապահովելու, ազդեցությունը հաստատելու և համապատասխանաբար չեզոքացնելու այլ պետությունների ազդեցությունը:

Սակայն ստացվեց այնպես, որ ո՛չ Ռուսաստանին, ո՛չ Իրանին և ո՛չ էլ Թուրքիային չհաջողվեց հավասարապես լավ հարաբերություններ հաստատել միաժամանակ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հետ և նրանց օգտագործել որպես գործոն Անդրկովկասում իրենց ազդեցությունը հաստատելու համար: Նրանց քաղաքական-ստրատեգիական շահերը ոչ միայն չեն համընկնում, այլև ուղղակի հակասության մեջ են գտնվում: Այդպիսի պայմաններում առաջին պլան են գալիս անդրկովկասյան այս կամ այն հանրապետության գործոնի հարցը և այդ գործոնն իր ստրատեգիական նպատակների համար օգտագործելու խնդիրը:

Ռուսաստանի համար աշխարհաքաղաքական-ստրատեգիական գործոն դարձավ Հայաստանը: Սա չի նշանակում, թե Ռուսաստանը կամավոր ընտրություն կատարեց հօգուտ Հայաստանի՝ հրաժարվելով վրացական և ադրբեջանական գործոններից: Ռուսաստանը, անշուշտ, կցանկանար լիարժեք օգտագործել այդ երկու գործոնները ևս: Սակայն չստացվեց: Վրաստանը պրեզիդենտ Զվիադ Գամսախուրդիայի կառավարման ժամանակ գրավեց բացահայտ հակառուսական դիրք, որն ակնհայտ թշնամական բնույթ էր կրում: Նրա սպանվելուց հետո նոր պրեզիդենտ Էդվարդ Շևարդնաձեն թեև փոքր-ինչ մեղմացրեց նախկին ղեկավարության կոշտ դիրքորոշումը, այդուհանդերձ, ստրատեգիական բնույթի փոփոխություն չիրականացրեց Վրաստանի քաղաքականության մեջ Ռուսաստանի հանդեպ: Ռուս-վրացական հարաբերությունները մնում էին լարված:

Իսկ Ադրբեջանը, սկսած Աբուլֆազ Էլչիբեյից, բացահայտորեն կողմնորոշվեց դեպի Թուրքիան և անթաքույց հակառու-

սական քաղաքականություն որդեգրեց: Ներկա պրեզիդենտ Հեյդար Ալիևը այլ ձևերով և փոքր «շտկումներով» ըստ էության նույն կուրսն էր շարունակում:

Ստեղծված պայմաններում դրված էր Անդրկովկասում Ռուսաստանի մնալու, այնտեղ քաղաքական կշիռ ու դեր ունենալու հարցը:

Ռուսաստանին հաջողվեց այդ հարցը դրականորեն լուծել շնորհիվ հայկական գործոնի: Ստեղծված քաղաքական նոր իրողությունները, ուժերի հաշվեկշիռը և փոխհարաբերությունը բարձրացրին Հայաստանի քաղաքական կշիռը, դերն ու նշանակությունը Ռուսաստանի անդրկովկասյան-մերձավորարևելյան քաղաքականության մեջ:

Ի՞նչն է հայկական գործոնի իմաստը և կարևորությունը Ռուսաստանի համար:

Ռուսաստանը գտնում է, որ, շնորհիվ հայկական գործոնի և հայ-ռուսական բարեկամական հարաբերությունների, կարող է լուծել աշխարհաքաղաքական և ստրատեգիական մի շարք խնդիրներ:

Առաջին, ապահովել Ռուսաստանի ստրատեգիական դիրքերն Անդրկովկասում և ի նպաստ Ռուսաստանի օգտագործել այդ տարածաշրջանում ստեղծված հայ-ռուսական բարեկամական մթնոլորտը:

Երկրորդ, Ռուսաստանը անմիջականորեն, ցամաքային ճանապարհով սահմանակից չէ մերձավորարևելյան տարածաշրջանին և երկրներին, որոնք կարևոր դեր են խաղում միջազգային հարաբերություններում: Հայաստանը, դառնալով Ռուսաստանի ստրատեգիական դաշնակիցը, հնարավորություն է ստեղծում նրա համար ընդլայնելու իր հարաբերությունները մերձավորարևելյան երկրների հետ, ակտիվացնելու իր քաղաքականությունը և շփումները նրանց հետ, ներազդելու այդ տարածաշրջանի քաղաքական մթնոլորտի վրա, տարածաշրջան, որի կարևորությունը Ռուսաստանի համար կասկածից դուրս է:

Երրորդ, լուծել Կովկասում անվտանգության և խաղաղության հարցերը: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Կովկասը վերածվել էր պատերազմի դաշտի (Չեչնիա, Դաղստան և հարակից երկրներ), անկայունության և ահաբեկչության վտանգավոր գոտու: Ռուսաստանի համար խիստ կարևոր էր ապահովել Կովկասը թիկունքից, որը հնարավոր է սերտ համագործակցություն հաստատելով անդրկովկասյան երեք հանրապետությունների՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հետ: Սակայն Ռուսաստանի հարաբերությունները Վրաստանի և Ադրբեջանի հետ այդ ժամանակ ոչ միայն լարված էին, այլև նրանք բացահայտորեն որդեգրել էին Ռուսաստանին Կովկասյան տարածաշրջանից դուրս մղելու քաղաքականություն: Այդ մասին շատ հստակ և որոշակի ընդգծեց Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Իգոր Իվանովը 1999թ. սեպտեմբերի սկզբներին Անդրկովկաս իր այցի և Ադրբեջանի, Հայաստանի ու Վրաստանի ղեկավարների հետ ունեցած հանդիպումների ժամանակ: «Մեզ անհրաժեշտ է,- նշեց նա,- կայուն Կովկաս, առանց որի հնարավոր չէ Ռուսաստանի հարավային սահմանների անվտանգությունը, նաև հնարավոր չէ կանխել ահաբեկիչների և կրոնական էքստրեմիստների մուտքը Ռուսաստան: Միայն հարևանների հետ բարիդրացիական հարաբերություններով կարելի է դրան հասնել: Այդ պատճառով մեր կովկասյան մարտավարությունը հօգուտ Ադրբեջանի, Հայաստանի ու Վրաստանի հետ փոխշահավետ կապերի համակողմանի զարգացումն է»:

Սակայն լարվածության առկայությունը Վրաստանի և Ադրբեջանի հետ Ռուսաստանի փոխհարաբերություններում լուրջ խոչընդոտ է այդ խնդրի իրագործման ճանապարհին: Ադրբեջանից և Վրաստանից ազատորեն Ռուսաստան են թափանցում ահաբեկիչները և կրոնական էքստրեմիստները: Միակ պետությունն Անդրկովկասում, որ կանխում է ահաբեկչական ուժերի ներթափանցումը Ռուսաստան, Հայաստանն է:

Ռուսաստանի Պետական դումայի նախագահ Գ. Սելեզնյովը 1999թ. հոկտեմբերի 18 -ին Հայաստանի Ազգային ժողովի պատվիրակության հետ հանդիպման ժամանակ նշեց, որ Հայաստանը ԱՊՀ տարածքում Ռուսաստանի լավագույն գործընկերներից է, որի վրա կարող է հենվել Ռուսաստանը: Իսկ Մոսկվայի քաղաքագլուխ Յու. Լուժկովը հաստատեց, որ «Հայաստանը Ռուսաստանի ամենահուսալի գործընկերն է ԱՊՀ երկրների մեջ»:

Չորրորդ, կանխել Ռուսաստանի դուրսմղումը Կովկասից: Կան բազմաթիվ ուժեր, որոնք կցանկանային Ռուսաստանի արտաքսումը տարածաշրջանից: Դրանց թվին են պատկանում ոչ միայն Թուրքիան և ԱՄՆ-ը, այլև Ադրբեջանը և Վրաստանը: Անդրադառնալով այդ հարցին՝ Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Իգոր Իվանովը հայտարարեց. «Մենք թույլ չենք տա տարածաշրջանում Ռուսաստանի շահերի անտեսում: Առանց Ռուսաստանի, առավել ևս հակառակ Ռուսաստանի, Կովկասում հնարավոր չէ ռեալ անվտանգություն հաստատել»: Ահա այստեղ կրկին դրսևորվում է հայկական գործոնի կարևորությունը Ռուսաստանի համար:

Քննարկելով այդ հարցը՝ մոսկովյան ազդեցիկ «Նեզավիսիմայա գազետան» հետևյալ տեսակետն է արտահայտել. «Լարվածությունը ռուս-ադրբեջանական և ռուս-վրացական հարաբերություններում օբյեկտիվ իրողություն է դարձել, որի հետ Մոսկվան ավելի հաճախ և ավելի ուժեղ է բախվում իր հարավային սահմանների մոտ: **Տվյալ իրողության մեջ Ռուսաստանին կենսականորեն անհրաժեշտ է թույլ չտալ, որ իրեն դուրս մղեն Մեծ Կովկասյան տարածաշրջանից, որտեղ մեզ մնացել է մեկ ստրատեգիական գործընկեր՝ Հայաստանը»:**

Կարելի է պնդել, որ հայկական գործոնն այն լծակներից մեկն է, որի օգնությամբ Ռուսաստանն ապահովում է իր ներկայությունը և պահպանում իր ստրատեգիական դիրքերն աշխարհաքաղաքական առումով կարևոր մեր տարածքում:

Եվ, վերջապես, հայկական գործոնի օգնությամբ Ռուսաստանը ձգտում է չեզոքացնել Անդրկովկասում գերակայության ձգտող այլ պետությունների քաղաքականությունը և սահմանափակել նրանց ազդեցությունը: Այս առումով խիստ արժեքավոր է Ռուսաստանի պաշտպանության նախարարության պաշտոնաթերթ «Կրասնայա Զվեզդայի» արտահայտած տեսակետը: Նշելով մեր տարածաշրջանի կարևորությունը Ռուսաստանի համար՝ թերթն ընդգծում է. «Ռուսաստանը, իհարկե, շահագրգռված է, որպեսզի ներկա գտնվի այստեղ և աշխարհաքաղաքական առումով ավելի հաջող տեղ, քան Հայաստանն է, հազիվ թե գտնվի»:

Վերևում շարադրվածից թող այն սխալ տպավորությունը չստացվի, թե Հայաստանի դերն այս հարցում կրավորական է, և նա յուրատեսակ «սպասարկում է» Ռուսաստանի ստրատեգիական շահերը: Իհարկե, այդպես չէ:

Հայ-ռուսական մերձեցումը և համագործակցությունը ստացվում են այն պատճառով, որ դա համապատասխանում է նաև Հայաստանի ազգային-պետական շահերին, հանուն որի նա օգտագործում է ռուսական գործոնը:

Առաջինը, հայ-ռուսական ստրատեգիական համագործակցությունը և ռուսական գործոնն ամրապնդում են Հայաստանի ազգային անվտանգությունը և բարենպաստ աշխարհաքաղաքական պայմաններ ստեղծում դրա համար:

Երկրորդ, կանխում է Հայաստանի համար ոչ նպաստավոր և վտանգավոր քաղաքական կոմբինացիաների ձևավորումը մեր տարածաշրջանում, իսկ նման իրադրության առաջացման դեպքում ավելի մեծ հնարավորություններ է ստեղծում դրանց չեզոքացման և բացասական հետևանքները նվազագույնի հասցնելու համար:

Երրորդ, ամրապնդում է Հայաստանի թիկունքը, որի շնորհիվ նա իրեն ավելի վստահ ու ապահով է զգում:

Չորրորդ, նպաստում է քաղաքական կայունության հաստատմանը Անդրկովկասում և Մերձավոր ու Միջին Արևելքում:

Իսկ դա համապատասխանում է Հայաստանի պետական շահերին, քանի որ Անդրկովկասը և Մերձավոր ու Միջին Արևելքը Հայաստանի կենսատարածքն են, և Հայաստանի համար բնավ էլ միևնույնը չէ, թե ինչ իրադրություն է տիրում, և ուժերի ինչպիսի հավասարակշռություն է հաստատվում այստեղ:

Հայաստանի և Ռուսաստանի ստրատեգիական շահերի համընկնումը և հայկական ու ռուսական գործոնների կարևորությունը փոխադարձաբար միմյանց համար հնարավոր և անհրաժեշտ դարձրին «Բարեկամության, Համագործակցության և Փոխադարձ Օգնության Պայմանագրի» ստորագրումը, որը տեղի ունեցավ Մոսկվայում 1991թ. դեկտեմբերի 29-ին: Պայմանագիրը հանդիսացավ հայկական և ռուսական գործոնների կարևորության իրավական ձևակերպումը: Սակայն Պայմանագրի նշանակությունը չի սահմանափակվում միայն հայ-ռուսական հարաբերությունների շրջանակներով: Նա կարևոր է ամբողջ տարածաշրջանի համար: Անդրկովկասի և Մերձավոր Արևելքի բոլոր պետությունները, առաջին հերթին Ադրբեջանը և Թուրքիան, ինչպես նաև Վրաստանը, Իրանը և մյուս երկրները ուզեն թե չուզեն պետք է հաշվի նստեն այդ փաստաթղթի գոյության հետ, դրանից բխող բոլոր հետևանքներով:

Հայաստանի և Ռուսաստանի ղեկավարները բազմիցս ընդգծել են, որ հայ-ռուսական հարաբերություններն ունեն ստրատեգիական բնույթ: Այդ կարևոր իրողությունը վերստին հաստատեց Ռուսաստանի պրեզիդենտ Բորիս Ելցինը 1999թ. օգոստոսի 30-ին կատարած իր հայտարարության մեջ՝ նշելով, որ «Ռուսաստանի արտաքին քաղաքականության գերակայություններից մեկը Հայաստանի հետ հարաբերությունների զարգացումն է: Այս երկրի հետ ստրատեգիական գործակցության ամրապնդման գիծն անփոփոխ է»:

Հայաստանի ղեկավարությունը ևս վճռական է Ռուսաստանի հանդեպ իր որդեգրած քաղաքականությունը շարունակելու մեջ:

Երկու երկրների միջև, իհարկե, ժամանակ առ ժամանակ ծագում են զանազան խնդիրներ: Ռուսական որոշ շրջանների անհանգստացնում է Եվրոպայի և ԱՄՆ-ի հետ հարաբերություններն ընդլայնելու և խորացնելու Հայաստանի քաղաքականությունը: Որոշ գործիչներ դրա մեջ տեսնում են Ռուսաստանից հեռանալու կամ Հայաստանի կողմից Ռուսաստանի դերն ու նշանակությունը թերագնահատելու միտում: Կրակի վրա փորձում են յուղ լցնել արևմտյան որոշ քաղաքագետներ, որոնք այն կարծիքն են արտահայտում, թե Ռուսաստանը քաղաքական, ռազմական և տնտեսական տեսակետից խիստ թուլացել է, և նրան միայն իներցիայի ուժով կարելի է համարել մեծ տերություն: Այդ տեսակետը բացորոշ արտահայտեց ԱՄՆ-ի Հարվարդի համալսարանի պրոֆեսոր, հայտնի սովետագետ Ռիչարդ Փայփսը 1999թ. սեպտեմբերի 17-18-ը Թբիլիսիում կայացած «Խաղաղ Կովկասը և Եվրասիական միջանցքը. Արևելք-Արևմուտք ինտեգրացիայի ասպեկտները» միջազգային կոնֆերանսում, որն ընթացավ Վրաստանի պրեզիդենտ Էդվարդ Շեվարդնաձեի հովանավորությամբ, և որտեղ Հայաստանը ներկայացնելու պատիվը մեզ էր վստահված:

Այդ կապակցությամբ կցանկանայինք ասել հետևյալը:

Առաջին, մերօրյա իրողություններն այնպիսին են, որ ոչ մի երկիր, մեծ կամ փոքր, չի կարող պարփակվել միայն իր տարածաշրջանով և սահմանափակվել միայն մեկ պետության հետ ամենաբարձր մակարդակի հարաբերություններ ունենալով: Այդպես են վարվում բոլոր պետությունները, այդ թվում և Ռուսաստանը, որը մշտապես ձգտում է սերտ հարաբերություններ հաստատել, օրինակ, Եվրոպայի, ԱՄՆ-ի և այլ երկրների հետ, որը միանգամայն հասկանալի և պատճառաբանված է: Իսկ եթե դա այդպես է, ապա Հայաստանը ոչ միայն իրավունք ունի, այլև պարտավոր է նույնպես նման քաղաքականություն վարել: Հայաստանը չի կարող անտեսել Եվրոպան և եվրոպական երկրները, ԱՄՆ-ը և այլն: Դա կհանգեցներ նրա միջազգային դիրքերի

թուլացմանը և մեկուսացմանը, որի պատճառով Հայաստանը կկանգներ համաշխարհային գործընթացներից դուրս մնալու վտանգի առջև: Հարաբերությունների զարգացումը և ընդարձակումը Եվրոպայի կամ ԱՄՆ-ի հետ չի նշանակում հեռացում Ռուսաստանից կամ նրա նկատմամբ ոչ բարյացակամ դիրքի գրավում: Հայաստանի պրեզիդենտ Ռոբերտ Քոչարյանը 1999թ. նոյեմբերի 5-ին Մոսկվա կատարած իր այցի ժամանակ, անդրադառնալով Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Եվրոպայի հետ Հայաստանի փոխհարաբերությունների հարցին, հայտարարեց, որ չի դրվում կամ-կամի հարցը: Հայաստանը հավատարիմ է 1991թ. Ռուս-հայկական Բարեկամության պայմանագրին, որի հոդվածներից մեկում արձանագրված է, որ Պայմանավորվող Կողմերը պարտավորվում են չմասնակցել մյուս կողմի դեմ ուղղված գործողություններին, դաշինքներին և բլոկներին:

Կարծում ենք, որ այս տեսանկյունից պետք է մոտենալ իր միջազգային դաշտն ընդարձակելու Հայաստանի Հանրապետության ձգտումներին: Եվ ռուսական որոշ քաղաքական շրջաններ, ցուցաբերելով սթափ և իրատեսական մոտեցում, հասկանում են Հայաստանի արտաքին քաղաքականության նման մոտեցումները: Արտահայտելով այդ շրջանների քաղաքական տրամադրությունները՝ մոսկովյան «Նեզավիսիմայա գազետան» ընդգծում է. «Այսօր պաշտոնական Երևանը նույնպես հայտարարում է, որ նրա կողմից կիրառվող արտաքին քաղաքականությունը խարըսխվում է լիակատարության և փոխադարձ լրացման սկզբունքի վրա, իսկ հարաբերությունները մյուս պետությունների հետ կառուցվում են հավասարակշռության սկզբունքով: Հայաստանը ստիպված է «հավասարակշռել» ոչ միայն Ռուսաստանի և Արևմուտքի միջև, այլև, որը պակաս կարևոր չէ, Իրանի, Թուրքիայի և արաբական երկրների միջև»:

Փորձել Ռուսաստանը հաշվից դուրս նետել որպես համաշխարհային չափանիշով գործոն և անտեսել նրա ներգործության

լծակները, ինչպես դա անում է Ռիչարդ Փայփսը, նշանակում է ճակատագրական սխալ թույլ տալ:

Բարեբախտաբար Հայաստանը դրանց թվին չի պատկանում:

Վերադառնալով կրկին հայկական գործոնի գնահատականին՝ կցանկանայինք նշել, որ Ռուսաստանի քաղաքական և ռազմական ղեկավարները հայ-ռուսական միջպետական հարաբերությունները դիտում են որպես «Պարտնյորություն, որը նպատակաուղղված է դեպի XXI դարը»[72]:

Դա Հայկական աշխարհաքաղաքական գործոնի առհավատչյան է:

Հարգելի՛ ընթերցող, հայ-ռուսական հարաբերությունների պատկերը և Հայաստանի ու հայերի նկատմամբ Ռուսաստանի Դաշնության քաղաքականությունն ու վերաբերմունքն ավելի կատարյալ և ամբողջական լինելու համար հարկ ենք համարում անդրադառնալ Ռուսաստանի երկու ականավոր լիդերների բացառիկ, կարևոր և իմաստուն տեսակետներին:

Առաջինը Խորհրդային Միության Մինիստրների խորհրդի երկարամյա նախագահ **Նիկոլայ Ռիժկովի** մասին է: Նա արտակարգ դերակատարում ունեցավ Սպիտակի՝ 1988թ. երկրաշարժի հետևանքների վերացման և Հայաստանին մեծ օգնություն ցույց տալու գործում, որի համար երախտապարտ հայ ժողովուրդը նրան շնորհեց Գյումրիի պատվավոր քաղաքացու կոչում: Հետագայում, երբ արդեն փլուզվել էր ԽՍՀՄ-ը, նա, անդրադառնալով Հայաստանի դերակատարմանը, նշում է. **«Մենք գտնում ենք, որ փոխհարաբերությունները Հայաստանի հետ հատուկ հարաբերություններ են: Համենայն դեպս, մենք չենք թաքցնում, որ դուք մեր հենարանն եք Անդրկովկասում»**[73] - **"Мы**

---

[72] Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս մեր աշխատությունը՝ Nikolay Hovhannisyan, The Foreign Policy of Armenia,Chapter Two, The Russian Policy in the Region and the Armenian-Russian Relations,Yerevan 1998, p.17-28.

[73] :«Голос Армении»м Ереван, 1 декабря 2012г., с.1.

считаем, что взаимоотношеня с Арменией - это особые отношения. По крайней мере мы не скрываем,что вы наш оплот в Закавказже,"Голос Армении", Ереван, 1 декабря 2012г.

Երկրորդը Բորիս Ելցինին Ռուսաստանի Դաշնության պրեզիդենտի պաշտոնում փոխարինած մերօրյա պրեզիդենտ **Վլադիմիր Վլադիմիրովիչ Պուտինի** մասին է:

Նա ընդհանրապես ժլատ չէ անհրաժեշտության դեպքում գովեստներ անելու և բարձր գնահատականներ տալու, որը նա բազմիցս արել է՝ կապված Հայաստանի, նրա պատմության, արվեստի, գիտության և ժառանգության հետ:

2012թ. հոկտեմբերին Վլադիմիր Պուտինը ողջույնի ուղերձ հղեց Հայկական համաշխարհային կոնգրեսի II համագումարին, որն ընթանում էր Երևանում: Ուղերձում ասվում էր .

«Ուրախ եմ ողջունելու Երկրորդ համագումարի հյուրերին և մասնակիցներին: Հայտնի է հայ ժողովրդի ներդրումը համաշխարհային մշակույթում, գիտության մեջ և արվեստում: Հայ ժողովրդի պատմական ժառանգությունը եզակի արժեք է, որը պատկանում է համայն մարդկությանը: Դարերի ընթացքում ռուս և հայ ժողովուրդներին միավորել են բարեկամական կապերը, փոխադարձ հարգանքը և հոգևոր կապը: Այսօր երկկողմ հարաբերությունները բարձրացել են ստրատեգիական գործընկերության մակարդակի: Հայաստանը եղել և մնում է Ռուսաստանի հուսալի գործընկերը: Համագործակցությունը ամենատարբեր ոլորտներում, կառուցողական փոխգործողությունը ռեգիոնալ և միջազգային պրոցեսներում նոր խթան են ստանում: Վլադիմիր Պուտինը նշեց նաև հայկական համայնքի նշանակալի դերը Ռուսաստանի ինտելեկտուալ և հոգևոր կյանքում և ցանկացավ եղբայրական հայ ժողովրդին հաջողություն ու բարգավաճում»[74]:

[74] "Новое Время", 16. .X. . 2012, Ереван, с.1.

8. ԳՐԱՀԱՄ ՖՈՒԼԼԵՐ. ԵՎՐՈՊԱՆ ԿՕԳՏԱԳՈՐԾԻ ԹՈՒՐՔԻԱՅԻՆ ԵՎ ԴԵՆ ԿՇՊՐՏԻ

Գրահամ Ֆուլլերը ամբողջ աշխարհում հայտնի և մեծ հեղինակություն վայելող ՌԱՆԴ կորպորեյշնի առաջատար քաղաքագետ մասնագետներից, ԱՄՆ-ի ականավոր թուրքագետներից և վերլուծաբաններից մեկն է:Ես նրա հետ հանդիպել եմ բազմիցս իմ արտասահմանյան, մասնավորապես ԱՄՆ գիտական գործուղումների ժամանակ և նրա հետ քննարկել մերձավորարևելյան տարբեր խնդիրներ: Նա զրույցներից մեկի ժամանակ այն տեսակետը հայտնեց, որ Թուրքիան հեռանալու է քեմալականությունից և հաշվի առնելով աշխարհում տեղի ունեցող արմատական փոփոխությունները՝ որդեգրելու է կամ արդեն որդեգրել է նոր մոտեցումներ արտաքին քաղաքականության բնագավառում: Գրահամ Ֆուլլերը 1992 թվականին հրատարակել է մի աշխատություն, որը վերնագրված է՝ «Թուրքիան նայում է Արևելք: Նոր կողմնորոշում Մերձավոր Արևելքի և հին Խորհրդային Միության հանդեպ»[75]: Նա նշեց, որ Թուրքիայի անդամակցությունը ՆԱՏՕ-ին իր կնիքն է դրել Թուրքիայի արտաքին քաղաքականության վրա, և իրեն համարում է ԱՄՆ-ի նվիրված ռազմական դաշնակիցը: Գրահամ Ֆուլլերը ինչ-որ աղբյուրներից իմացել էր, որ ժամանակին Խորհրդային Միությունը ձգտում էր ամեն ինչ անել, որ Թուրքիան լքի ՆԱՏՕ-ն և ավելի մերձենա ԽՍՀՄ-ին: Նրա կարծիքով այդ տեսակետի կողմնակիցներից է եղել անգամ Ստալինը: Զրույցի ժամանակ Ֆուլլերը փորձեց իմանալ իմ կարծիքն այդ հարցի վերաբերյալ: Ես նրան պատասխանեցի, որ հազիվ թե նման բան տեղի ունենար: Թուրքերը առիթը բաց չեն թողնում բարձրաձայնելու, որ Օսմանյան կայսրության կործանման գործում մեծ դեր են խաղացել ցարական Ռուսաստանը և ռուս-թուրքական պատերազմները,

---

[75] Տե՛ս Graham E. Fuller, Turkey Faces East, New Orietations Toward the Middle East and the Old Soviet Union, RAND, Santa Monica , CA , 1992.

որոնք մշտապես ավարտվել են Թուրքիայի պարտությամբ: Եվ թուրքական վերնախավը չի մոռացել դա և չի ների Ռուսաստանին:

Գրահամ Ֆուլլերն ինձ տեղյակ պահեց, որ շուտով մրցակցություն է սկսվելու Թուրքիայի և Իրանի միջև, և մրցակցության հիմնական դաշտը լինելու է խորհրդային Միջին Ասիան: Դրան նպաստելու է նաև Միջինասիական հանրապետությունների, հատկապես Ուզբեկստանի ավելի ինքնուրույն լինելը:

Նա վստահորեն հայտնեց, որ Իրանը օգտագործելու է կրոնական և մշակութային գործոնը, այն հանգամանքը, որ մշակութային առումով Միջին Ասիան եղել է իրանական աշխարհի մի մասը կամ նրա ազդեցության ոլորտում: Իսկ Թուրքիան օգտագործելու է լեզվական և էթնիկական գործոնը և պանթուրանիզմի վերակենդանացումը Թուրքիայում: Եթե Քեմալը դրա վրա խաչ էր քաշել, ապա ներկա Թուրքիայում դրանք ուժեղացել են: **Իրանական կողմը համաձայնվել է պանթուրանական գործոնը համարել որպես 1915թ. Հայոց ցեղասպանության պատճառներից մեկը:**

Գրահամ Ֆուլլերը Թուրքիայի փոփոխված լինելը համարում է վիճելի: Նա գտնում է, որ Թուրքիայում պայքար է գնում երկու միտումների միջև՝ ա) Թուրքիայի հետագա եվրոպականացում, և բ) կրոնական և հին սոցիալական կառուցվածքների պահպանում:

Գրահամ Ֆուլլերը նշեց, որ Թուրքիան շատ է ձգտում մտնել եվրոպական տնտեսական համագործակցության մեջ: Բայց Եվրոպան հիմա դա թույլ չի տալու: Դա նրանց պետք չէ: Նրանք կօգտագործեն նրան և դեն կշպրտեն:Այդ դեպքում դա նոր վտանգավոր վիճակ կարող է ստեղծել այն առումով, որ Թուրքիան պետք է պայքարի իր տեղն աշխարհում որոշելու համար:

Գրահամ Ֆուլլերը մեզ հետ զրույցի ժամանակ շոշափեց նաև 1992 թ. Բաքվում Ադրբեջանի Ժողովրդական ճակատի իշխանության գլուխ գալու փաստը, որը, նրա կարծիքով, ավելի

բարդացրեց Ղարաբաղյան կոնֆլիկտի լուծման հարցը: Եվ այդ կապակցությամբ նա հիշեցրեց ռուսական բանակի շտաբի պետ Շապոշնիկովի նախազգուշացումը, որ «Եթե Թուրքիան մտնի կոնֆլիկտի մեջ, դա կարող է վերածվել Երրորդ Համաշխարհային պատերազմի»:

Այնուհետև Գրահամ Ֆուլլերը բառացիորեն ինձ ասաց հետևյալը. «Պրոֆեսո՛ր, աղրբեջանցիների համար Ղարաբաղյան տարածքի կորուստը վիրավորանք կլինի նրանց ազգային արժանապատվությանը, մի քաղցկեղ, իմպլանտացված Ստալինի կողմից 1920 -ականներին, երբ նա վերաձևում էր խորհրդային էթնիկական քարտեզը»:

Կարծում ենք, որ շատ դիպուկ է ասված:

Ահա այսպիսին են Գրահամ Ֆուլլերի մոտեցումները՝ 23.04. 1992թ.:

9. ԺՈԶԵՖ ԼԻԲԵՐՄԱՆ՝ ԱՄՆ-Ի ՍԵՆԱՏՈՐ. «ԲԱՆԱՁԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ»

«Պարո՛ն Նախագահ (Լիբերմանը դիմում է ԱՄՆ-ի Սենատի նախագահին-Ն.Հ.), պատմաբաններն իրավամբ կարող են արձանագրել, որ կոմունիզմի փլուզումը խորհրդային բլոկի ներսում սկսվեց ոչ թե Ռուսաստանի սրտից կամ Կենտրոնական Եվրոպայից, այլ Հայաստանից:

1988 թվականի փետրվարին հայ ժողովուրդը բողոքի խիզախ ալիք բարձրացրեց կոռումպացված կոմունիստական վարչակարգի դեմ, որը նրան պարտադրվել էր Կրեմլի կողմից (նկատի ունի Ղարաբաղյան շարժումը-Ն. Հ.): Կոմունիստական տիրապետության դեմ այս ըմբոստությունը որպես մոդել և ոգեշնչման օրինակ ծառայեց նույն տարում ավելի ուշ Կենտրոնական Եվրոպայում տեղի ունեցած ապստամբությունների համար:

Ոգեշնչելով Կենտրոնական Եվրոպայի ժողովուրդներին՝ հայերն իրենց հերթին քաջալերվեցին Բեռլինի պատի փլուզ-

մամբ: 1990 թ. օգոստոսին Հայաստանի՝ ժողովրդական հիմունքներով ընտրված խորհրդարանն ընդունեց երկրի անկախության հռչակագիրը: 1991-ի սեպտեմբերին հանրապետության ընտրողների ճնշող մեծամասնությունը կողմ քվեարկեց անկախությանը:

Պարո՛ն Նախագահ, հաշվի առնելով ժողովրդավարության և ինքնիշխանության նկատմամբ մեր հավատը, հայ ժողովրդի անկախ լինելու բացահայտ ցանկությունը, ինչպես նաև Նախագահ Տեր-Պետրոսյանի պատասխանատու քաղաքականությունը՝ ես, սենատորներ Փրեսլրի և Սայմընի հետ միասին այսօր Սենատի կարծիքն արտահայտող մի բանաձև եմ ներկայացնում, որի համաձայն՝ ԱՄՆ-ի կառավարությունը պետք է համապատասխան դիվանագիտական ճանաչում ապահովի Հայաստանի Հանրապետության համար և օժանդակի նրա՝ միջազգային կազմակերպություններին, այդ թվում՝ ՄԱԿ-ին և ԵԱՀԽ-ին անդամակցելու հայտերին:

Հայ ժողովուրդն արժանի է այդպիսի ճանաչման: Դեպի անկախություն նրա ընթացքը ապացույց է, որ նա նույնքան նվիրված է ազատությանը, որքան ԽՍՀՄ մյուս ժողովուրդները: Այդ նվիրումը և նպատակի գիտակցումը գոյություն են ունեցել դարեր ի վեր և կենդանի մնացել իր կամքից անկախ, ցարական, օսմանյան և կոմունիստական կայսրությունների կազմում հայտնված հայ ժողովրդի տառապանքների,այդ թվում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին կրած սարսափների ու ցեղասպանության երկարաձիգ ժամանակաշրջանում:

Այդ խիզախ ժողովրդին մենք պարտավոր ենք հայտնել մեր զորակցությունը, հիացմունքը և դիվանագիտական ճանաչումը:

Պարո՛ն Նախագահ, խնդրում եմ, որ ելույթիս կից այս բանաձևի ամբողջական բնագիրը տեղ գտնի Արձանագրության մեջ, և պաշտոնակից ընկերներիս կոչ եմ անում աջակցել դրան»:

Հայաստանի վերաբերյալ Ժ.Լիբերմանի նախաձեռնած բանաձևի նախագիծը ԱՄՆ-ի Սենատում ընդունվել է 1991թ. նոյեմբերի 12-ին:

10. ԵՎԳԵՆԻ ՊՐԻՄԱԿՈՎԻ ԱՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆ.ՆՐԱ ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆ ԵՎ ԿԱՐԾԻՔԸ ՀԱՅԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Արևելագետ-միջազգայնագետ Եվգենի Պրիմակովը երկար տարիներ գլխավորել է այնպիսի ակադեմիական գիտական կենտրոններ, ինչպես ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտը, ապա նաև Համաշխարհային տնտեսության և միջազգային հարաբերությունների ինստիտուտը: Խորհրդային Միության փլուզումից հետո զբաղեցրել է Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարարի, ապա նաև վարչապետի պաշտոնները:

Աշխատանքի բերումով նա առնչվել է նաև Հայաստանի և հայության տարբեր խնդիրներին, այդ թվում և նրա ողբերգական էջերին և արտահայտել իր տեսակետները դրանց վերաբերյալ: Նրա շրջապատում և մտերիմների շարքում մշտապես եղել են երևելի հայ գործիչներ՝ տնտեսագետներ, դիվանագետներ, պատմաբաններ, բժիշկներ, արվեստի գործիչներ, շնորհիվ որոնց նա լավատեղյակ է եղել հայության հիմնախնդիրներին և նրան հուզող հարցերին: Դրանց թվում պետք է նշել պատմաբան –միջազգայնագետ, ԽՍՀՄ Կոմունիստական կուսակցության Կենտկոմի միջազգային վարչության պետի տեղակալ Կարեն Բրուտենցին, տնտեսագետ, դոկտոր, պրոֆեսոր Ստեփան Սիտարյանին, որին Ե. Պրիմակովը համարում էր Խորհրդային Միության No 1 տնտեսագետը, դիվանագետ, Բեյրութում ռուսական դեսպանության աշխատակից Շիրինյանին, բժիշկ, դոկտոր, պրոֆեսոր Լևոն Բաղալյանին և շատ ու շատ ուրիշների: Դրան նպաստել են նաև նրա այցելությունները Հայաստան, շփումները հայ պետական և

կուսակցական ղեկավարների ու գործիչների, մտավորականության, հայ գիտնականների, այդ թվում և արևելագետների՝ դոկտոր Հովհաննես Ինճիկյանի, ակադեմիկոս Գագիկ Սարգսյանի, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, դոկտոր, պրոֆեսոր, արաբագետ Նիկոլայ Հովհաննիսյանի և այլոց հետ:

Եվգենի Պրիմակովը 1977-1988 թվականներին զբաղեցրել է ԽՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտի տնօրենի պաշտոնը: Այդ տարիները եղան գիտական սերտ համագործակցության տարիներ նրա գլխավորած ինստիտուտի և ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի միջև, մասնավորապես գիտական կադրերի պատրաստման, համատեղ գիտական աշխատանքների կատարման, գիտական համաժողովների անցկացման և այլ ոլորտներում:

Նա ղեկավարեց 1980թ. մարտին Տաշքենդում կայացած շատ կարևոր համամիութենական իսլամագիտական գիտաժողովը՝ կապված Իրանում իսլամական հեղափոխության հաղթանակի, շահի տապալման և Հոմեյնիի իշխանության գլուխ գալու հետ: Իսլամական հեղափոխությունը մեծ իրադարձություն էր, որը ցնցեց ոչ միայն իսլամական աշխարհը, այլև, այս կամ այն չափով, իր ազդեցությունն ունեցավ համայն աշխարհի վրա, այդ թվում և Խորհրդային Միության, մասնավորապես Միջինասիական համարյա բոլոր հանրապետությունների վրա: Ե.Պրիմակովը նշեց, որ իսլամական հեղափոխությունը և նրա հռչակած սկզբունքները լրջորեն անհանգստացրել են մեր երկրի բարձրագույն ղեկավարությանը: Մանավանդ իրանական իսլամագետ գաղափարախոսների այն տեսակետն առ այն, որ «եթե ԱՄՆ-ը «Սև շեյթան է», ապա ԽՍՀՄ-ը՝ «Կարմիր շեյթան»: Ե.Պրիմակովը մեր երկրի ղեկավարության անունից կոչ արեց արևելագետներին մերկացնել իսլամական հեղափոխության բացասական կողմերը, ուժեղացնել արևելագետների համագործակցությունը, գրել կոլեկտիվ աշխատություններ և ուժեղացնել համագործակցությունը միմյանց միջև:

Կոնֆերանսին, բնականաբար, մասնակցում էր նաև ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի պատվիրակությունը, որ գլխավորում էր ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Գագիկ Սարգսյանը, ինչպես նաև տողերիս հեղինակը: Ե.Պրիմակովն իր զեկուցման մեջ վերլուծեց ստեղծված բավականին ծանր իրադրությունը, իսլամական հեղափոխության բնույթը, պատճառները և նրա հնարավոր հետևանքները:Կոնֆերանսի մասնակից, պատմական գիտությունների դոկտոր Գ.Միրսկին նշեց, որ պետք է շնորհակալություն հայտնել այաթոլլահ Հոմեյնիին, որ նրա իրագործած հեղափոխության շնորհիվ արևելագետները կարողացան հավաքվել և կոլեկտիվ քննարկել «իսլամական հեղափոխություն» կոչվածը:

Կոնֆերանսում մեր պատվիրակության կողմից ելույթ ունեցավ նաև տողերիս հեղինակը: Իմ զեկուցման թեման էր՝ «Քաղաքականության իսլամացումը և իսլամի քաղաքականացումը»[76], որը, ներկաների վկայությամբ, նորություն էր և հետաքրքիր հարցադրումներ էր պարունակում: Իմ զեկուցման վերնագիրը դարձավ յուրատեսակ դարձվածք և հոլովվում էր գիտական և ոչ միայն գիտական շրջանակներում: Իմ այդ զեկուցումը հրատարակվեց Մոսկվայում և դարձավ խորհրդային արևելագետների սեփականությունը:

Ե.Պրիմակովը՝ որպես արևելագիտության գլխամասային ինստիտուտի տնօրեն, սովորաբար այցելում էր հանրապետական արևելագիտական գիտահետազոտական ինստիտուտներ և քննարկում նրանց առջև կանգնած խնդիրները: Դա արևելագիտական կենտրոնների համագործակցության ձևերից մեկն էր: Հենց այդ նպատակով նա 1985 թ. ժամանեց Հայաստան: Նա բազմաթիվ հանդիպումներ և զրույցներ ունեցավ ինչպես հանրապետության ղեկավարության, այնպես էլ գիտնականների հետ: Նա բարձր գնահատեց հայ արևելագետների աշխատանքները՝

[76] **Николай Оганесян**, Исламизация политики и политиьация ислама, Москва, 1983.

ընդգծելով նրանց ներդրումը գիտության այդ կարևոր ուղղության մեջ: Նա հանգամանալից ելույթ ունեցավ նաև ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի նիստում, որին ներկա էին նաև Հայաստանի տարբեր ինստիտուտների և գիտական կենտրոնների աշխատակիցները: Նա խոսեց արևելագիտության զարգացման հեռանկարների մասին՝ վստահություն հայտնելով, որ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտը կշարունակի կարևոր դեր խաղալ մեր երկրի արևելագիտական կենտրոնների շարքում:

Այդ նիստին մասնակցում էր և ելույթ ունեցավ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտաշխատող, ակադեմիկոս Սուրեն Երեմյանը, որն իր մի հարցադրումով զարմացրեց թե՛ Պրիմակովին և թե՛ մեզ բոլորիս, որոնք ներկա էին գիտական խորհրդի այդ նիստին: Նա, դիմելով ակադեմիկոս Եվգենի Պրիմակովին, ասաց՝ «Ինքը չի պատկերացնում, թե ինչ կպատահի Հայաստանի և հայության հետ, եթե Ռուսաստանը լքի և հեռանա Հայաստանից»: Նա այն աստիճանի հուզվեց, որ ընդհատումներով և գլուխը կախ էր շարունակում իր խոսքը և չկարողացավ ավարտին հասցնել այն: Նրա աչքերը թրջվել էին: Նա նկատի ուներ Հայոց ցեղասպանության նախադեպը, որը կարող էր կրկնվել, եթե ռուս զինվորները հեռանան: Ե.Պրիմակովը հենց այդպես էլ հասկացավ Սուրեն Երեմյանին և շտապեց հանգստացնել հայ ակադեմիկոս պատմաբանին, թե այդպիսի վտանգ Հայաստանին չի սպառնում, սովորաբար ռուս զինվորը չի հեռանում այնտեղից, որտեղ գտնվում է: Եվ դիմելով Ս.Երեմյանին՝ հարցրեց՝«Դուք այդպիսի բան հիշու՞մ եք»:

Երևան գալու նախօրյակին Մոսկվայում լույս էր տեսել Ե.Պրիմակովի նոր աշխատությունը՝«Մի դավադրության պատմություն. ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականությունը 70-ական թվականներին և 80-ականների սկզբներին»: Մեր ինստիտուտի տնօրեն ակադեմիկոս Գագիկ Սարգսյանի և ինձ հետ (ես այն ժամանակ ինստիտուտի տնօրենի գիտական գծով տե-

ղակալն էի և Արաբական երկրների բաժնի վարիչը) կայացած զրույցների ընթացքում հասունացավ Պրիմակովի այդ աշխատությունը հայերեն թարգմանելու և Երևանում հրատարակելու գաղափարը, որն արաբագետ Ե.Պրիմակովն ընդունեց մեծ ուրախությամբ, և դրա իրականացման պարտականությունները դրվեցին ինձ՝ որպես արաբագետի, վրա: Ես ստանձնեցի այդ հանձնարարությունը, քանի որ նշված աշխատության մեջ քննարկվող հարցերը շոշափում էին մերձավորարևելյան այն երկրների՝ առաջին հերթին Լիբանանի և Սիրիայի շահերը, որտեղ հանգըրվանել էին ցեղասպանությունից փրկված հայերի ժառանգները, և առնչվում էին նրանց անվտանգության խնդիրների հետ: Աշխատությունը թարգմանվեց հայերեն 1986թ. և լույս տեսավ 1987թ. Երևանի «Հայաստան» հրատարակչության կողմից իմ առաջաբանով: Սակայն նախքան հրատարակելը ես նամակով դիմեցի ակադեմիկոս Ե. Պրիմակովին՝ առաջարկելով նրան գրել հատուկ առաջաբան հայկական հրատարակության համար: Նա սիրով համաձայնվեց և ինձ փոստով ուղարկեց հայ ընթերցողին հասցեագրված իր առաջաբանը, որը ներկայացնում ենք այնպես, ինչպես ուղարկել է հեղինակը՝ ոչինչ չավելացնելով և ոչինչ չպակասեցնելով:

«Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանին

ՀԱՅ ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

Ես չափազանց ուրախ եմ, որ «Մի դավադրության պատմություն» գիրքը թարգմանվել է հայերեն և մատչելի կդառնա հայ ընթերցողների լայն շրջանակներին:

Հայաստանը կապված է Արևելքի հետ ոչ միայն իր աշխարհագրական դիրքով, այլև նրանով, որ մի ամբողջ շարք հիանալի հայ գիտնականներ, ճանապարհորդներ, վաճառականներ, միսիոներներ իրենց ժամանակի զգալի մասը, իսկ ոմանք ամբողջ կյանքը նվիրել են Արևելքի ուսումնասիրությանը, նրա վերաբերյալ տարատեսակ, հաճախ եզակի գիտելիքների կուտակմանը, որոնք ներկայացրել և ներկայացնում են անանց

արժեք: Իզուր չէ, որ հայկական ձեռագրերը եղել են և շարունակում են մնալ հետաքրքրական աղբյուրներ, որոնցով կարելի է բազմակողմանիորեն դատել Արևելքի կյանքի մասին միջին դարերում և նոր շրջանում: Հայաստանն ընդհանրապես մեծ դեր է խաղացել համաշխարհային քաղաքակրթության զարգացման մեջ:

Հայաստանը կապված է հատկապես Մերձավոր Արևելքի հետ նաև այն պատճառով, որ արյունալի ցեղասպանությունից հետո նրա բազմաթիվ դուստրեր և որդիներ ապաստան գտան այս շրջանի երկրներում: Ինչպես երևում է, կարելի է ընդհանրապես համարել, որ հայ ժողովրդի պատմությունը ներառել է Արևելքում տեղի ունեցած պատմական շատ պրոցեսներ: Հայաստանն այսօր Սովետական Միության անբաժան մասն է: Բնական է, որ հանրապետության հասարակայնությանը, ինչպես նաև սովետական ամբողջ հասարակայնությանը, խորապես հետաքրքրում և հուզում են այն իրադարձությունները, որոնք տեղի են ունենում Մերձավոր Արևելքում, մի շրջանում, որը գտնվում է ԽՍՀՄ սահմանների մոտ: Համարյա քառասուն տարի է, ինչ շարունակվում է մերձավորարևելյան կոնֆլիկտը, որն արդեն տարել է հազարհազարավոր մարդկային կյանքեր, պատճառել հսկայական նյութական վնաս: Ողբերգությունը, որի մեջ բոլոր ժամանակների ընթացքում ընկղմվել է արաբական աշխարհը, ԱՄՆ-ի կողմից պաշտպանություն գտնող Իսրայելի էքսպանսիոնիստական քաղաքականության հետևանքով, դարձել է մի ծանր էջ նաև տասնյակ հազարավոր հայերի, գլխավորապես Լիբանանի բնակիչների կյանքում:

Սովետական Միությունը հաստատակամորեն և հետևողականորեն հանդես է գալիս հանուն մերձավորարևելյան կոնֆլիկտի կայուն, արդարացի և համապարփակ կարգավորման: Դա միակ ուղին է, որով պիտի ընթանա մարդկությունը, եթե նա իսկապես շահագրգռված է

արդարությամբ, անվտանգությամբ և խաղաղությամբ, և որի իրավունքն ունեն մեր մոլորակի վրա բնակվող բոլոր ազգերը:Կցանկանայի սրտագին շնորհակալություն հայտնել պրոֆեսոր Ն. Հ. Հովհաննիսյանին և բոլոր նրանց, ովքեր օգնել են գրքի հայերեն լույսընծայմանը:

1987թ. Ակադեմիկոս Ե.Մ.Պրիմակով»:

11.ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ. ԱՍԻԱՅԻ ԵՎ ԱՖՐԻԿԱՅԻ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ. ԵՎԳԵՆԻ ՊՐԻՄԱԿՈՎԸ. ԹՈՒՐՔԻԱՅԻ ԼՐԱԳՐՈՂ ՄՅՈՒՄԹԱԶ ՍՈՅՍԱԼԸ

1980-ականների սկզբներին Հայաստան ժամանեց Ասիայի և Աֆրիկայի Համերաշխության Համաշխարհային Կազմակերպության (ԱԱՀՀԿ) պատվիրակությունը, որը գլխավորում էր Ասիայի և Աֆրիկայի համերաշխության խորհրդային կոմիտեի նախագահի տեղակալ ակադեմիկոս Ե. Պրիմակովը:

Պատվիրակության կազմում էին շուրջ 30 երկրների, այդ թվում՝ Հնդկաստանի, Հորդանանի, Սիրիայի, Թուրքիայի, Գանայի, Մալիի և այլ աֆրոասիական երկրների ներկայացուցիչներ՝ պետական, քաղաքական, հասարակական գործիչներ, մտավորականության ներկայացուցիչներ, լրագրողներ և այլն: Պատվիրակությանն ընդունեց և նրա անդամների հետ հանգամանալից զրույցներ ունեցավ Հայաստանի ղեկավարությունը:

Հայաստանում գտնվելու օրերին պատվիրակությանն ուղեկցում էի ես ոչ միայն որպես ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի ներկայացուցիչ, այլև որպես Ասիայի և Աֆրիկայի համերաշխության խորհրդային կոմիտեի, Համերաշխության Հայկական կոմիտեի նախագահության անդամ, Խորհրդա-արաբական երկրների բարեկամության և մշակութային կապերի ասոցիացիայի վիցեպրեզիդենտ, Հայ-արաբական բարեկամու-

թյան և մշակութային կապերի պրեզիդենտ:

Պատվիրակության՝ Հայաստանում գտնվելու ծրագրի թերևս ամենակարևոր կետերից մեկը այցելությունն էր Էջմիածին՝ Մայր աթոռ, և հանդիպումն Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի հետ: Պատվիրակության անդամները շատ գոհ էին, որ պետք է հանդիպում ունենան Վեհափառի հետ, որի կյանքի և գործունեության մասին նրանցից ոմանք ունեին որոշ տեղեկություններ:

Ե. Պրիմակովը նույնպես անհամբեր սպասում էր այդ հանդիպմանը և ասում, որ նա այն քչերից մեկն է, որին հանդիպելը մեծ պատիվ է յուրաքանչյուր մարդու համար: Եվ ահա մենք Էջմիածնում ենք՝ Կաթողիկոսական Վեհարանում: Պատվիրակության անդամներին դիմավորեց Վեհափառն իր սքանչելի ժպիտը դեմքին և մեկ առ մեկ ձեռքով բարևեց բոլորին: Նա ամբողջ զրույցը, որը տևեց երկու ժամից ավելի, վարեց շատ աշխույժ՝ իրեն հատուկ մտավորականին վայել ոճով: Երբ պատվիրակության բոլոր անդամները զբաղեցրին իրենց տեղերը, Վեհափառը, դիմելով ինձ, հարցրեց. «Պրոֆեսո՛ր, ո՞վ պետք է ներկայացնի պատվիրակությանը»: Ես պատասխանեցի, որ պատվիրակության ղեկավարը ակադեմիկոս Պրիմակովն է, ուստի և հարմար է, որ նա ներկայացնի բոլոր անդամներին: Վեհափառը համաձայնվեց: Ես նույն բանն ասացի նաև Ե. Պրիմակովին, և նա ևս համաձայնվեց: Դրանից հետո ես հակիրճ ներկայացրի Պրիմակովին, նրա ով լինելը, որից հետո նա ներկայացրեց պատվիրակության յուրաքանչյուր անդամին՝ երբեմն անելով համապատասխան և դիպուկ մեկնաբանություններ: Քանի որ Պրիմակովը ռուսերեն էր խոսում, ես ստիպված էի թարգմանչի դեր կատարել և նրա ասածները թարգմանել հայերեն և անգլերեն: Վեհափառը մեծ ուշադրությամբ էր հետևում նրա խոսքին, երբեմն նաև ինքն էր իր կողմից շատ յուրահատուկ միջամտում՝ մեկ բառով կամ նախադասությամբ: Երբ Պրիմակովը ներկայացրեց Հնդկաստանի ներկայացուցչին, որն Ազգային

կոնգրես կառավարող կուսակցության ղեկավարներից էր և երևելի անձնավորություն, Վեհափառը շատ բարի խոսքեր ասաց Հնդկաստանի հասցեին՝ հիշեցնելով հայ-հնդկական պատմական կապերի և հայ համայնքի մասին: Վեհափառը շատ ջերմ արտահայտվեց նաև արաբների մասին, երբ Պրիմակովը ներկայացրեց Հորդանանի Հաշիմյան թագավորության տեղեկատվության նախարարին՝ ընդգծելով, որ Հորդանանն արաբական այն երկրներից մեկն էր, որն ապաստան տվեց Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Օսմանյան կայսրությունում իրականացված Հայոց ցեղասպանությունից փրկված հայ բռնագաղթվածներին:

Սակայն բոլորն անհամբեր սպասում էին, թե ինչպես է Ե. Պրիմակովը ներկայացնելու Թուրքիայի ներկայացուցիչ, հայտնի լրագրող Մյումթազ Սոյսալին, որը շատ հաճախ էր թերթերում, այդ թվում և եվրոպական, հանդես գալիս հայ-թուրքական հարաբերություններին և հայ ու թուրք ժողովուրդների պատմական անցյալին նվիրված հոդվածներով: Նա շատ հետևողական էր Հայոց ցեղասպանությունը ժխտելու հարցում՝ չբավարարվելով միայն լրագրային հոդվածներով, այլև հրատարակելով հաստափոր գրքեր: Նախքան Հայաստան գալը նա թերթերում հերթական անգամ նույն ոգով տպագրել էր հոդվածաշար, որն առաջացրել էր հայ հանրության դժգոհությունը: Եվգենի Պրիմակովը, ներկայացնելով Սոյսալին, ուղղակի ասաց.«Նա ներկայացնում է Թուրքիան, գրում է տարբեր թերթերում զանազան, այդ թվում՝ քաղաքական և պատմական հարցերի վերաբերյալ»: Այսքանը: Ովքեր տեղյակ էին Սոյսալի մոտեցումներին Հայկական հարցին և Հայոց ցեղասպանության նկատմամբ, հասկացան, որ Ե.Պրիմակովի ակնարկն առ այն, որ Սոյսալը գրում է քաղաքական և պատմական հարցերի մասին խոսքերը նրբին ակնարկ էին Սոյսալի այն հոդվածների մասին, որոնցում նա ժխտում էր Հայոց ցեղասպանության փաստը: Դա այդպես ընկալեց նաև Վեհափառը: Նա ժպտաց և շատ քաղաքավարի ասաց. «Բարի եք եկել»,

ինչպես մյուսներին էր ասում:

Վեհափառն այնուհետև հակիրճ պատմեց Հայ եկեղեցու մասին, կանգ առավ նաև հայ ժողովրդի պատմության հիմնական դրվագների վրա՝ չխուսափելով խոսել նաև Թուրքիայի կողմից իրագործված 1915 թ. ցեղասպանության մասին: Այնուհետև սկսվեց շատ հետաքրքիր զրույց: Վեհափառին իր հարցն ուղղեց նաև Սոյսալը, որն ըստ էության ելույթ էր:Նա փորձում էր ոչ միայն Վեհափառին, այլև մյուս ներկաներին համոզել, որ հայերը Օսմանյան կայսրությունում լավ պայմաններում են գտնվել, որ թուրքական սուլթանները բարձր են գնահատել նրանց ունակությունները ու աշխատասիրությունը, հայերը բարձր պաշտոններ են զբաղեցրել Օսմանյան կայսրության մեջ, և որպես օրինակ նշեց, որ 1912-1914 թթ. Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարարի պաշտոնը զբաղեցրել է հայազգի Գաբրիել Նորատունկյանը և այլն:

Նրան Վեհափառի պատասխանը եղավ շատ հանգիստ ու տրամաբանական: Նա Սոյսալին բառացիորեն ասաց հետևյալը. «Ավելի լավ կլիներ սուլթաններն առանձին հայերի պաշտոններ չտային, քան կազմակերպեին զանգվածային կոտորածներ»: Ապա ժպտալով Ամենայն Հայոց Կաթողիկոսը դիմեց Սոյսալին՝ ասելով. «Ես հասկանում եմ, որ Թուրքիան դեռևս պատրաստ չէ ընդունելու Հայոց ցեղասպանությունը, դա ժամանակ է պահանջում, որպեսզի թուրքերի մտածողության ու հոգեբանության մեջ տեղի ունենա համապատասխան փոփոխություն, իսկ դա վաղ թե ուշ, տեղի է ունենալու»:

Պատվիրակության բոլոր անդամները մեծապես տպավորված էին Վեհափառի այդ խոսքերից և պահվածքից: Բաժանման պահը շատ հուզիչ էր: Պատվիրակության բոլոր անդամները մոտենում էին Վեհափառին, սեղմում ձեռքը, խոնարհվում և շնորհակալական խոսքեր ուղղում նրան՝ չթաքցնելով, որ այդ պահին շատ երջանիկ են:

Իսկ ես շատ հպարտ էի:

Շատ գոհ էր նաև Ռուսաստանի նախկին վարչապետ Եվգենի Պրիմակովը: Նա, ինչպես ասաց ինձ, խիստ տպավորված էր Վեհափառի այն բանաձևից, որ Թուրքիան դեռևս պատրաստ չէ ճանաչելու Հայոց ցեղասպանությունը և շատ խորիմաստ համարեց թուրքերի մտածողության և հոգեբանության մեջ համապատասխան փոփոխության անհրաժեշտության նրա տեսադրույթը: Իր հիացմունքը հայտնելով Վեհափառի հետ հանդիպմանը, Վազգեն Առաջինի խորիմաստ մտքերի, բարձր կուլտուրայի և ցուցաբերած դիվանագիտական մեծ տակտի վերաբերյալ՝ Ե. Պրիմակովը շեշտեց, որ «Հայոց Եկեղեցին կարող է հպարտանալ, որ նման ղեկավար ունի, իսկ հայ ժողովուրդը՝ նման բարձրակարգ մտավորական»:

12. ԿԱՐԵՆ ՍԵՐՈԲԻ ԴԵՄԻՐՃՅԱՆ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ (1974-1988 թթ.). ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ ՀԱՏՈՒԿ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐԵՑ ՀԱՋՈՂ

«Հայաստանի Հանրապետություն» թերթում (20 օգոստոսի 1991թ.) հրապարակված է Նիկոլայ Հովհաննիսյանի հոդվածը՝ «Մի դրվագ հայերի հանդեպ այաթոլլահ Հոմեյնիի դիրքորոշումից»: Այստեղ ասված է. «1978թ. հոկտեմբերին, երբ դեռևս 1975թ. Լիբանանում սկսված քաղաքացիական պատերազմը հասել էր իր բարձր լարվածությանը, լիբանանյան աջ ուժերը ուղղակի ճակատային հարված սկսեցին Լիբանանի հայ համայնքին, որը որդեգրել էր դրական չեզոքության քաղաքականություն: Իրավիճակին ծանոթանալու և Լիբանանի հայությանն անհրաժեշտ օգնություն ցույց տալու նպատակով Հայաստանի կառավարության որոշմամբ 1979թ. հունվարին Լիբանան մեկնեց մի պատվիրակություն, որի կազմում էր նաև տողերիս հեղինակը:

«Պատվիրակությունը,- գրում է Հայաստանի Կոմունիստական կուսակցության առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանը,- հաջողությամբ լուծեց իր առջև դրված խնդիրները: Բավական է նշել, որ մեկ ամսվա ընթացքում Հայաստանից Բեյրութ ուղարկվեց մոտ 30 տրանսպորտային ինքնաթիռ, որը տուժածներին հասցրեց պարեն, հագուստ, դեղորայք և այլ անհրաժեշտ իրեր»:

Ն. Հովհաննիսյանին մենք գործուղեցինք Լիբանան (այդ պատրվակի տակ նա պետք է այցելեր Մերձավոր Արևելքի նաև այլ երկրներ)՝ ավելի լայն շրջանակների խնդիրներ լուծելու համար (օգտագործելով նրա կապերը այդ ռեգիոնի բազմաթիվ հասարակական գործիչների հետ): **Այնպես որ նա պատվիրակության կազմում ընդգրկված է հատուկ նպատակների համար: Եվ ի պատիվ նրա պետք է ասել, որ նա հենց հատուկ առաջադրանքները կատարեց բավականին հաջող:**

Մեզ, Հայաստանի ղեկավարությանը շատ էր հետաքրքրում հենց Հոմեյնիի վերաբերմունքը հայերի նկատմամբ: Ն.Հովհաննիսյանը, իրոք լուրջ աշխատանք տանելով Իրանի տարբեր շրջանների հասարակական գործիչների հետ, մեզ հաղորդեց, որ այաթոլլահ Հոմեյնին կվարի համապատասխան քաղաքականություն: Հենց այդ նշված հոդվածում նա գրում է. «Իմ այն հարցին, թե կարո՞ղ եմ այաթոլլահ Հոմեյնիի այդ կարծիքի մասին տեղյակ պահել Հայաստանի բնակչությանը և ղեկավարությանը, Չամրանը (Հոմեյնիի ամենամոտ զինակից, հետագայում պաշտպանության մինիստր և այլն) պատասխանեց, որ «ոչ միայն կարող եմ, այլև դա այաթոլլահ Հոմեյնիի ցանկությունն է»:

Ն. Հովհաննիսյանը մեր իսկ առաջադրանքով Մուսթաֆա Չամրանի հետ զրույցում շոշափել է Հայաստանին Իրանի գազի մատակարարման հարցը և ստացել դրական պատասխան Հայաստանին 1979թ. գազ մղելու մասին (через общий газопровод конечно):

13.ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԵՎ ՄԱՅՐ ԹԵՐԵԶԱՆ

Վազգեն Առաջինի ընտրությունն Ամենայն Հայոց Կաթողիկոս, որը կայացավ 1955թ., հուզել և մեծ խանդավառություն էր առաջացրել համայն Հայաստանում, որը, հավանաբար, կապված էր երկու հանգամանքի հետ:

Առաջին, դա հետստալինյան շրջանում առաջին կաթողիկոսական ընտրությունն էր, որն անց էր կացվում համեմատաբար ազատ պայմաններում, մարդիկ կարող էին անկաշկանդ իրենց դիրքորոշումը և մոտեցումներն արտահայտել հայ ժողովրդի համար ազգային կարևոր նշանակություն ունեցող այդ երևույթի նկատմամբ:

Երկրորդ, նրա անձն էր: Վազգեն Ա-ի մասին արդեն հասցրել էին լեգենդներ պատմել, որը, ինչպես հետագայում հաստատվեց, բնավ էլ լեգենդ չէր, այլ հաճելի իրողություն: Նրա մասին բոլորը միաբերան կրկնում էին, որ նա շատ խելոք, կրթված, մեծ գիտելիքների տեր անձնավորություն է, նույնիսկ գիտնական, որը տիրապետում է բազմաթիվ լեզուների: Խոսում էին նրա բարի լինելու և անձնական հմայքի մասին:

Եվ ահա Էջմիածնում՝ հայոց հոգևոր կենտրոնում, տեղի է ունենալու Վազգեն Ա-ի օծումը՝ որպես Հայոց 130-րդ կաթողիկոս: Ժողովուրդը, նրա բոլոր խավերը՝մտավորականները, աշխատավորները, գիտնականները, գրողները, նկարիչները, երաժշտագետները, ուսանողությունը և այլք, վարար գետի նման հորդեցին Էջմիածին՝ ներկա լինելու պատմական մեծ նշանակություն ունեցող այդ արարողությանը: Դրանց մեջ էինք նաև մենք՝ Երևանի պետական համալսարանի մի խումբ ասպիրանտներ: Իհարկե, մեզ շատ բան չհաջողվեց տեսնել, քանի որ Էջմիածնում, էլ չենք խոսում վանքի տարածքի մասին, ասեղ գցելու տեղ չկար: Բոլորը ձգտում էին հայտնվել առաջին շարքերում, որպեսզի մոտիկից տեսնեն նորընծա Վեհափառին, գուցեն նրանից ինչ-որ խոսք

լսեն: Չգիտեմ ուրիշներն ինչպես, սակայն մեզ չհաջողվեց մոտենալ կաթողիկոսին, բայց մենք երջանիկ էինք, որ կարողացանք, թեկուզ և հեռվից, մի պահ տեսնել նրան: Մեզ վրա անջնջելի տպավորություն գործեց նրա իմաստուն հայացքը: Եվ մենք՝ ընկերներով, դատելով նրա հայացքից ու մեզ վրա թողած տպավորությունից, միակարծիք էինք, որ նա իսկապես գիտնական կարող էր լինել, և ափսոսեցինք, որ նա գիտության ասպարեզը չի ընտրել: Այդ տարիքում մեր դատողությունները շատ կտրուկ էին, և մենք համոզված էինք, որ գիտնականից բարձր որևէ այլ պաշտոն կամ կոչում աշխարհում ո՛չ գոյություն է ունեցել, ո՛չ գոյություն ունի և ո՛չ էլ կունենա: Բայց ներքուստ «ներողամիտ» գտնվեցինք Վազգեն Պալճյանի նկատմամբ, որը դարձել էր Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա, հավատացած լինելով, որ նրա գործը, բացի հոգևոր-կրոնական լինելուց, նաև գիտական է: Դրա ապացույցը եղավ և այն, որ նա հետագայում միաձայն ընտրվեց Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պատվավոր անդամ:

XXX

Հանգամանքների բերումով Վեհափառ Հայրապետ Վազգեն Առաջինի հետ ունեցել եմ մի քանի հանդիպումներ, որոնք հիմնականում կապված են եղել արտասահմանյան առանձին գործիչների և պատվիրակությունների այցելությունների հետ, որոնց նա հարկ է համարել ընդունել: Իսկ նման պատվիրակությունները շատ-շատ էին, և քանի որ Վազգեն Ա-ն միջազգային մեծ հեղինակություն էր վայելում, ուստի նրանք, առանց բացառության, բոլորը ցանկանում էին այցելել նրան, գեթ մեկ անգամ արժանանալ նրա հայացքին: Եվ եթե դա տեղի չէր ունենում, ապա նրանք անկեղծորեն վշտանում էին:

Նման այցելություններից կցանկանայի անդրադառնալ երկուսին:

Երևան էր եկել լիբանանահայ հայտնի բանաստեղծ, հասարակական-քաղաքական գործիչ, Լիբանանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ Գառնիկ Ադդարյանը: Մենք միմյանց գիտեինք վաղուց, բազմաթիվ անգամներ հանդիպել էինք Լիբանանում և Հայաստանում, մեզ կապում էր վաղեմի բարեկամությունը: Հայաստանի ղեկավարության հանձնարարությամբ նրա՝ հանրապետությունում գտնվելու ընթացքում ես ամենուր ուղեկցում էի նրան, այդ թվում և Սևանա լճի փրկության համար կառուցվող ստորգետնյա թունելում: Եվ, ահա, նշանակված էր այցելություն Էջմիածին և հանդիպում Վեհափառի հետ: Կիրակի օր էր և ինչ-որ եկեղեցական տոն: Պատարագը մատուցում էր Վեհափառը, հավարտ որի մի մեծ խումբ մարդիկ, որոնց թվում՝ Գառնիկ Ադդարյանը և ես ուղղվեցինք Վեհարան: Երբ մտանք ներս, արդեն մեծ հերթ էր գոյացել: Բոլորը ցանկանում էին մոտենալ Վազգեն Ա-ին և նրա օրհնությունը ստանալ: Մենք ևս համբերատար հերթի կանգնեցինք: Ինձ հետաքրքրում էր, թե ինչպես էր տեղի ունենալու Վեհափառի և կոմունիստ բանաստեղծի հանդիպումը, և նրանք ինչ էին ասելու միմյանց: Ես նույնպես մտածում էի, թե ինչ բառեր պետք է ասեմ Վեհափառին: Բայց ամեն ինչ այլ կերպ ստացվեց: Երբ հերթը հասավ մեզ, դանդաղ քայլերով մոտենում էինք Վեհափառին, իսկ նա կանգնած էր՝ ձեռքին խաչ, նա բոլորին այդպես էր դիմավորում, ապա երկուսն էլ՝ Վազգեն Ա-ն և Գ.Ադդարյանը, մի ներքին մղումով առաջ շարժվեցին և երկար ողջագուրվեցին: Հավուր պատշաճի բառեր փոխանակելուց հետո Վեհափառը տեսնելով, որ ես կանգնած եմ Գ.Ադդարյանի կողքին, դիմեց ինձ հարցումով. «Դուք միասի՞ն եք»: Նա կարծում էր, թե ես նույնպես Լիբանանից եմ: Ես ուզում էի պատասխանել, բայց Գառնիկը կանխեց ինձ և ասաց. «Նիկոլայ Հովհաննիսյանն է, պրոֆեսոր, արաբական երկրների մասնագետ, Ակադեմիայի արաբական երկրների բաժնի վարիչ և Հայ-արաբական բարեկամության ընկերության նախագահ»: Վեհափառը ժպտաց և ինձ մեկնեց իր աջը: Այդ կա-

պակցությամբ մինչ այդ ինձ մտատանջում էր հետևյալ հարցը: Երբ մեր առջև կանգնած մարդիկ մոտենում էին Վեհափառին, և նա նրանց մեկնում էր իր աջը, նրանք բոլորը, առանց բացառության, թեքվում և համբուրում էին նրա մեկնած ձեռքը: Ես մտածում էի, թե ես ինչ եմ անելու, քանի որ կուսակցության անդամ էի: Ժամանակները թեև մի փոքր փոխվել էին, բայց ոչ արմատապես, և վստահ էի, որ Վեհարանում կային նաև մարդիկ, որոնք այլ հանձնարարություններ ունեին: Ես չեմ ուզում հերոս խաղալ, բայց վերջին պահին որոշեցի, որ կանեմ այնպես, ինչպես մյուս բոլորը, այդ թվում և Գ.Ադդարյանը, որը նույնպես համբուրեց Վեհափառի ձեռքը: Սակայն տնօրինողը եղա ոչ թե ես, այլ Վազգեն Առաջին Վեհափառը: Նա իր ձեռքը մեկնեց ինձ ու անմիջապես, շատ արագ այն հետ քաշեց: Ես հազիվ հասցրի նրա ձեռքը բռնել և շնորհակալական ինչ-որ բառեր ասել: Վեհափառը՝ այդ իմաստուն մարդը, ով ամեն ինչ գիտեր և հասկանում էր, չթողեց, որ ես թեքվեմ և իր աջը համբուրեմ, երևի նա նույնպես այդ կարծիքին էր, որ կարող էր ինչ-որ բարդություններ ստեղծել ինձ համար: Դժվարանում եմ հիմա ասել, թե այդ պահին ինչ էր կատարվում իմ ներսում: Միայն կարող եմ ասել, որ շատ երախտապարտ էի հանդեպ Վեհափառը ու նրա արտակարգ նրբանկատությանը:

XXX

1988թ. դեկտեմբերի ահավոր երկրաշարժը Հայաստանում երևի պատկանում է այն հազվադեպ իրադարձությունների թվին, որն աշխարհն ընդունեց որպես իր սեփական ցավը: Բոլոր երկրները, տարբեր ռասայի և կրոնի պատկանող ժողովուրդները, միություններն ու կազմակերպությունները, բոլորը շտապեցին օգնության ձեռք մեկնել Հայաստանին: Օգնությունը և՛ նյութական էր, և՛ բարոյական: Գալիս ու գալիս էին, մուտքի վիզայով և առանց վիզայի, Երևանը վերածվել էր միջազգային մի յուրատեսակ կենտրոնի:

Այդ ծանր և ողբերգական օրերին Հայաստան ժամանած միջազգային ճանաչում ունեցող և մեծ հեղինակություն վայելող ականավոր մարդկանց և գործիչների թվում էր նաև Մայր Թերեզան: Ղեկավարվելով քրիստոնեական մարդասիրական վեհ սկզբունքներով՝ այդ կուսակրոն աշխարհահռչակ ալբանուհին, որը ծնվել էր Մակեդոնիայում, իր ամբողջ կյանքը նվիրել այդ սկզբունքները կյանքում կիրառելու վսեմ նպատակին, ստեղծել էր յուրօրինակ մի կրոնական-քրիստոնեական օրդեն, որը մշտապես օգնության էր հասնում վտանգի մեջ հայտնված ժողովուրդներին ու մարդկանց, հիվանդներին ու կարիքավորներին, աշխարհի որ ծայրում էլ որ նրանք գտնվեին: Նրա անձնուրաց գործունեությունը նրան մեծ փառք էր բերել: Նրա անունը և հեղինակությունը լայն տարածում էին գտել աշխարհում, և նա բազմաթիվ հետևորդներ ունեցավ: Նա ամենուր ընդունվում էր որպես սուրբ:

Մայր Թերեզան Երևան ժամանեց 1988թ. դեկտեմբերի կեսին՝ երկրաշարժից մի քանի օր անց: Ձևականորեն նա ժամանել էր Խորհրդային Միության Խաղաղության կոմիտեի հրավերով, որը գլխավորում էր Հենրիկ Բորովիկը: Հայաստանում ևս, բնականաբար, նրան հյուրընկալողը եղավ Հայաստանի Խաղաղության կոմիտեն: Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ն տեղյակ էր նրա այցի մասին, և այդ հարցը համաձայնեցված էր նրա հետ: Մենք՝ Խաղաղության հայկական կոմիտեի մի քանի աշխատողներս, Մայր Թերեզային դիմավորեցինք Զվարթնոցի օդանավակայանում:

Վեհափառ Հայրապետը սիրով համաձայնվեց Մայր Թերեզային օթևան տրամադրել Մայր Աթոռի հյուրանոցում, որը գտնվում էր Վանքի տարածքում: Եվ Հայաստանում գտնված երեք օրերին նա ապրում էր այնտեղ:

Նրա ժամանելու հաջորդ օրը՝առավոտյան, նշանակված էր Մայր Թերեզայի հանդիպումը Վեհափառ Հայրապետ Վազգեն Առաջին Կաթողիկոսի հետ: Ինձ էր վիճակված ուղեկցել նրան

Հայաստանում նրա գտնվելու ամբողջ ընթացքում, քանի որ ես Հայաստանի Խաղաղության կոմիտեի նախագահի տեղակալն էի և Խորհրդային Միության Խաղաղության կոմիտեի վարչության անդամ: Եվ ահա, Մայր Թերեզան իմ ուղեկցությամբ հյուրանոցից ուղղվեց Վեհարան, որտեղ արդեն սպասում էին մեզ: Ես անընդհատ մտածում էի, թե ինչպես է լինելու նրանց՝ Վազգեն Առաջինի և Մայր Թերեզայի հանդիպումը:

Երբ մենք ներս մտանք Վեհափառի ընդունարան-աշխատասենյակը, Վեհափառը դանդաղորեն բարձրացավ իր բազկաթոռից՝ նպատակ ունենալով ընդառաջ գնալ Մայր Թերեզային: Բայց ես ապշած տեսա, թե ինչպես Մայր Թերեզան պոկվեց տեղից և արագ մոտեցավ Վեհափառին ու բռնելով, կարելի է նույնիսկ ասել խլելով նրա աջը, կռացավ ու սկսեց համբուրել: Վեհափառի հայացքից երևաց, որ ինքը հայտնվել է ոչ այնքան հարմար վիճակում: Ապա նա մի թույլ փորձ կատարեց ազատելու իր ձեռքը, բայց դա նրան չհաջողվեց, քանի որ Մայր Թերեզան ամուր բռնել էր նրա աջը և շարունակում էր համբուրել: Այնժամ Վեհափառն իր ձախ ձեռքը դրեց Մայր Թերեզայի գլխին, դատելով նրա շրթունքների շարժումից՝ ինչ-որ բան էր շշնջում, ամենայն հավանականությամբ օրհնանքի խոսքեր, որոնք մենք չէինք լսում: Այդ դիրքով նրանք մնացին մի քանի վայրկյան: Ինչպիսի տեսարան: Մենք՝ հանդիպմանը ներկա արքեպիսկոպոս Ներսես Պոզապալյանը և ես, ոտքի կանգնած, ուղղակի ցնցված դիտում էինք երկու մեծությունների այդ անմոռաց հանդիպումը:

Այնուհետև Վեհափառը նստեց իր բազկաթոռին, իսկ նրա դիմաց նստեց Մայր Թերեզան: Վերջինս իր ցավակցությունը հայտնեց Վեհափառին և ամբողջ հայ ժողովրդին տեղի ունեցած աղետի կապակցությամբ և շատ համոզիչ շեշտեց, որ Աստծո օգնությամբ հայ ժողովուրդը կհաղթահարի այդ պատուհասը, ինչպես նա բազմաթիվ անգամներ հաղթահարել է իր պատմության ընթացքում:

Վեհափառը շնորհակալություն հայտնեց Մայր Թերեզային

նրա այցի կապակցությամբ՝ ընդգծելով, որ դա վկայում է քրիստոնեական համընդհանուր մարդասիրության մասին, որը ուժ է տալիս հայ ժողովրդին: Վեհափառը նաև համոզմունք հայտնեց, որ Աստծո օգնությամբ Հայաստանը դուրս կգա այս ծանր վիճակից: Զրույցի ընթացքում նրանք խոսեցին քրիստոնեական արժեքների, էկումենիկ շարժման, խաղաղության պահպանման, մարդկության հետագա ճակատագրի և նման այլ թեմաների շուրջ, որի ընթացքում երկու կողմերն էլ դրսևորեցին մեծ գիտելիքներ և քաջատեղյակություն մարդկության առջև կանգնած զանազան մարտահրավերների վերաբերյալ:Ես ենթադրում էի, որ Մայր Թերեզան որևէ որոշակի օգնություն կառաջարկի: Սակայն այդ մասին նա ոչ մի խոսք չասաց:

Երբ Մայր Թերեզայի հետ մենք մտանք ներս՝ Վեհափառի աշխատասենյակ, ու ես երկրաշարժից հետո առաջին անգամ տեսա Վեհափառին, ուղղակի ցավ զգացի՝ տեսնելով նրա դեմքի արտահայտությունը: Նրա դեմքի վրա դրոշմված էր խոր տառապանք, աչքերը փոս էին ընկած, և ձայնն էլ երբեմն դողում էր: Սակայն շուտով համոզվեցի, որ Վեհափառը թեև խորապես ազդված էր երկրաշարժի հետևանքներից, այնուամենայնիվ, ընկճված չէր:

Զրույցի ավարտին Վեհափառը խորհուրդ տվեց Մայր Թերեզային անպայման այցելել Լենինական (այժմ՝ Գյումրի), որը երկրաշարժի էպիկենտրոններից մեկն էր, և սեփական աչքերով տեսնել երկրաշարժի կատարած ավերածությունները:

Նախքան նրա՝ սենյակից դուրս գալը Վեհափառն ինձ մի կողմ տարավ և հասկանալ տվեց, որ լավ կլիներ, եթե Մայր Թերեզան ինչ-որ կերպ օգներ Լենինականի կործանված Ս.Փրկիչ եկեղեցու վերականգնմանը:Ես նրան խոստացա Լենինականում այդ հարցը շոշափել Մայր Թերեզայի հետ զրույցի ժամանակ: Ասեմ, որ նման առաջարկով ինձ դիմեց նաև Հայաստանի կառավարության ղեկավարությունը:

Վեհափառի և Մայր Թերեզայի հրաժեշտը նույնքան ջերմ էր, որքան և հանդիպումը:

Մայր Թերեզան մեծապես տպավորված էր Վեհափառից: Երբ մենք դուրս եկանք Վեհարանից, նա ինձ ասաց. «Հայերը բախտավոր են, որ Վազգեն Առաջինի նման իմաստուն հոգևոր առաջնորդ ունեն»:

Մենք անմիջապես նույն օրը մեկնեցինք Լենինական: Երբ հասանք քաղաք, խոշոր փաթիլներով ձյուն էր գալիս: Տպավորությունը սարսափելի էր: Լենինականում եղել էի երկրաշարժի առաջին օրը՝ երեկոյան, երբ Երևան հասավ երկրաշարժի մասին առաջին լուրը: Դա իմ հարազատ քաղաքն էր, որտեղ ես ծնվել էի և ավարտել դպրոցը: Այնտեղ բնակվում էին քույրս և բազմաթիվ բարեկամներ ու ընկերներ: Իմ հարազատներից և ընկերներից շատերը մնացին հիմնահատակ կործանված բնակարանների և շենքերի փլատակների տակ:

Իմ առաջին տպավորությունը Մայր Թերեզայից այն էր, որ նա շատ ամուր նյարդեր ունեցող անձնավորություն է, և թուլությունը, մանավանդ էմոցիոնալ բնույթի, նրան անծանոթ է: Սակայն մուտքը Լենինական, առաջին քանդված տների ու շինությունների փլատակները, անօթևան մնացած, հուսահատված մարդկանց կուտակումները, այստեղ ու այնտեղ վառվող կրակները, որոնց շուրջը բոլորել էին ցրտից տաքացող մարդիկ, տղամարդկանց չսափրված դեմքերը, այս բոլորը ցնցեցին անցնցելի թվացող Մայր Թերեզային: Ես հասկացա, որ մինչև Լենինական ժամանելը և երկրաշարժի զարհուրելի տեսարանները սեփական աչքերով տեսնելը, նա չէր պատկերացնում այդ արհավիրքի ծավալները և մարդկային ողբերգության չափերը: Նա տեսավ, ճանաչեց և չդիմացավ, թեև ամեն կերպ ջանում էր դա չցուցադրել և պահպանել սառնասրտությունը: Եվ եթե սկզբում դա ինչ-որ չափով նրան հաջողվում էր, ապա հետագայում, երբ մեր մեքենան դանդաղորեն ընթանում էր քաղաքի տարբեր փողոցներով ու թաղամասերով, որի ժամանակ նորա-

նոր, ավելի սահմռկեցուցիչ տեսարաններ էին երևան գալիս, այդ ժամանակ նա այլևս չէր փորձում թաքցնել իր զգացմունքները և «երկաթյա մարդ» երևալ: Նա անընդհատ ցածր ձայնով կրկնում էր «My God, My God»՝ «Աստված իմ, Աստված իմ»: Հատկապես երկու տեսարան նրա վրա շատ ուժեղ ազդեցություն գործեցին: Մեր մեքենան ընթանում էր քաղաքի Կալինին փողոցով: Հանկարծ նա պահանջեց կանգնեցնել մեքենան, ու տեսանք, որ հայացքը հառել է ինչ-որ կետի: Նա նայում էր, թե ինչպես մի զառամյալ մարդ, մեջքին հաստ պարանով մի կերպ կապված մի փոքրիկ դագաղ էր տանում: Նա հազիվ էր քայլում, բայց համառորեն առաջ էր գնում ուժեղացող ձյան փաթիլների տակ: Մայր Թերեզան ինձ չհարցրեց, այլ բացատրեց, որ այդ տարեց մարդու տանը հավանաբար բոլորը զոհվել են, և նա իր թոռնիկի համար է իր մեջքին կրում այդ դագաղը: Մայր Թերեզան այլայլված էր և հազիվ էր շնչում:

Մենք շարունակեցինք մեր ճանապարհը և հասանք այն հրապարակը, որի մի կողմում գտնվում էր քաղաքապետարանի, իսկ մյուս կողմում՝ տրիկոտաժի գործարանի շենքը, որի վրա գտնվում էր երկրաշարժի կայացման ճիշտ ժամանակը ցույց տվող ժամացույցը: Ժամացույցը կանգնեցրել էին, և նա այլևս չէր գործում: Կյանքը կանգ էր առել: Ահա այդ շենքերի առջև գտնվող հրապարակում, մեկը մյուսի վրա, բուրգի նման շարված էին դագաղներ՝ մեծ, միջակ և փոքր չափերի, տարբեր տարիքի զոհվածների համար, և մարդիկ կարող էին մոտենալ և անվճար տանել: Նրանց մի մասը ներկված չէր, ուղղակի տախտակների նախնական գույնն էր կրում, մենք տեսանք նաև սև գույնով ներկված դագաղներ, բայց ամենացնցողը դագաղների բուրգի ամենավերևում գտնվող փոքր, թող ներվի ասել, մանկական վարդագույն ներկված դագաղներն էին: Ես կյանքումս առաջին անգամ էի նման բան տեսնում: Հավանաբար Մայր Թերեզան նույնպես նման բան չէր տեսել: Տեսարանը ոչ թե սարսափելի էր, այլ անմարդկային, և Մայր Թերեզան չդիմացավ: Նա փղձկաց, ծանր հոգոց հանեց և

չկարողացավ զսպել իր արցունքները: Եվ դիմելով ինձ՝ ասաց. «Nikolay, it is enough, let us go back» (Նիկոլայ, բավական է, եկեք վերադառնանք), ու մենք բռնեցինք Երևանի ճամփան:

Բայց ես չէի մոռացել Վեհափառին տված խոստումս առ այն, որ Մայր Թերեզայի հետ խոսեմ Լենինականի Ս.Փրկիչ եկեղեցին վերականգնելու և նրանից համապատասխան օգնություն ստանալու մասին: Ի դեպ, նման խնդրանքով ինձ դիմել էին նաև մեր հանրապետության բարձրագույն ղեկավարությունից: Ուստի ես վարորդին ասացի, որ նախքան Լենինականից դուրս գալը՝ գնանք կենտրոնական հրապարակ, որտեղ կանգնած է եղել այդ հոյակերտ եկեղեցին, որից այժմ միայն փլատակներ էին մնացել: Իմ նպատակն էր ցույց տալ Մայր Թերեզային այդ բոլորը և հենց այդտեղ էլ խոսք բացել նրա վերականգնման մասին: Մեր մեքենան կանգ առավ Լենինականի կենտրոնական հրապարակում՝ Ս.Փրկիչի փլատակների մոտ: Մենք դուրս եկանք մեքենայից ու սկսեցինք դիտել այն, ինչ մնացել էր այդ գեղեցկուհի եկեղեցուց: Ես Մայր Թերեզային հակիրճ պատմեցի այդ եկեղեցու, նրա կառուցման, ճարտարապետի և կարևորության մասին: Դրանից հետո նրան ասացի, որ հիմա մեզ համար կարևոր նշանակություն ունի հայերի շրջանում մեծ համարում ունեցող այս եկեղեցու վերականգնումը, որը կարող է շատ դրական հոգեբանական ներգործություն ունենալ երկրաշարժի հետևանքով հոգևոր տրավմա ստացած մարդկանց վրա: Ես ուղղակի դիմեցի նրան՝ ասելով, որ «Եթե դուք նախաձեռնություն ցուցաբերեք նրա վերականգնման անհրաժեշտ դրամական միջոցների հավաքման համար, ապա դուք շատ մեծ և շնորհակալ գործ արած կլինեք, իսկ ձեր անունն էլ հավերժ կմնա երախտապարտ հայերի սրտում»: Ու սպասեցի նրա պատասխանին:Նա երկար սպասել չտվեց և համաձայնվեց ինձ հետ, որ «…իրոք, շատ կարևոր է Աստծո այս տան վերականգնումը: Եվ Աստված թող օգնի ձեզ այդ հարցում»: Այսքանը: Ես հասկացա, որ նա չի ցանկանում իր վրա որևէ պարտականություն վերցնել: Բարեբախտաբար ես չնշեցի,

որ կատարում եմ Հայոց կաթողիկոսի պատվերը կամ Հայաստանի ղեկավարության հանձնարարությունը, այլ ասացի, որ դա իմ անձնական առաջարկությունն է: Բայց կարծում եմ, որ Մայր Թերեզան գլխի ընկավ, թե որտեղից է գալիս այդ առաջարկությունը:

Մենք մեքենա նստեցինք և ուղևորվեցինք Երևան՝ ծանր ապրումներով ու հոգնած: Երևան հասանք ուշ երեկոյան: Ես ուզում էի նրան տանել Էջմիածին՝ հյուրանոց՝ հանգստանալու համար, բայց նա չուզեց, այլ առաջարկեց գնալ Երևանի մանկական հիվանդանոցներից մեկը, որտեղ գտնվում էին երկրաշարժից փրկված, վիրավոր և որբացած երեխաներ: Այդ հիվանդանոցում էին հաստատվել և շատ ակտիվ գործում էին Մայր Թերեզայի երկու օգնական կանայք, կամ ինչպես իրենք էին անվանում միմյանց՝ քույրերը, որոնք պատկանում էին Մայր Թերեզայի գթության օրդենին:

Մայր Թերեզան իմ ուղեկցությամբ մտավ հիվանդասենյակները, մոտեցավ մեկ առ մեկ բոլոր երեխաներին, ամեն մեկին հուսադրող խոսքեր էր ասում, երբեմն ձեռքը դնում նրանց գլուխներին և շոյում: Երեխաները, որոնց մեծ մասն արդեն որբացել էր, շատ լավ ընդունեցին Մայր Թերեզային, իսկ նրանցից ավելի մեծերը զրույցի բռնվեցին նրա հետ, անգամ պատմում էին իրենց հոգեվիճակի ու ապրումների մասին, իսկ ես դարձել էի նրանց թարգմանիչը: Նրանցից մեկը՝ մոտ տասներկու տարեկան մի տղա, որը Լենինականից էր, և որին հանել էին փլատակների տակից, գանգատվեց, որ չի կարողանում քնել, քանի որ հենց աչքերը փակում է, իրեն կրկին պատկերացնում է բետոնե ամրությունների տակ, շնչահեղձ է լինում և վեր է թռչում տեղից ու նստում անկողնում:

Այդ այցելության ընթացքում մեզ միացավ նաև միջազգային մեծ ճանաչում ունեցող մանկական բժիշկ, հայտնի պրոֆեսոր Ռոշալը, որը օգնության համար հատուկ եկել էր Մոսկվայից և անգամ գիշերները չէր հեռանում հիվանդանոցից ու անգնահա-

տելի օգնություն էր ցույց տալիս երեխաներին, որոնք միշտ մեծ վստահությամբ էին վերաբերվում նրան, շատ էին կապվել նրա հետ և շատ սիրում էին նրան:

Ինչպես նշեցինք, հիվանդանոցում էին գտնվում Մայր Թերեզայի օրդենի երկու քույրեր, որոնց Մայր Թերեզայի խնդրանքով երկու սենյակ էին հատկացրել, և նրանք գիշերում էին հիվանդանոցում: Նրանք սենյակներից մեկը դարձրել էին աղոթատեղի, որտեղ առավոտները երեխաները նրանց ղեկավարությամբ աղոթում էին: Եվ ինչպես նրանք էին ասում, դա հոգեբանական առումով շատ էր օգնում նրանց:

Կեսգիշերին մենք վերադարձանք Էջմիածին: Մայր Թերեզայի հետ ճշտելով հաջորդ օրվա մեր ծրագիրը՝ վերադարձա Երևան: Ես Վեհափառին ու Հայաստանի ղեկավարությանը տեղյակ պահեցի, որ Մայր Թերեզան հրաժարվեց նյութական օգնություն ցույց տալուց Ս.Փրկիչ եկեղեցին վերականգնելու հարցում:

Տարիներ անց, Հայաստանի պրեզիդենտ Ռոբերտ Քոչարյանի գլխավորած պատվիրակության կազմում լինելով Հնդկաստանում, Դելիում հանդիպեցի Մայր Թերեզայի օրդենի քույրերին և նրանց պատմեցի Ս.Փրկիչ եկեղեցու վերականգնման հետ կապված եղելությունը: Նրանք ինձ բացատրեցին, որ Մայր Թերեզան ընդհանրապես հրաժարվում է իր վրա որևէ որոշակի պարտականություն վերցնելուց, եթե դա կապված է նյութական օգնություն ցույց տալու հետ, և նախընտրում է հոգեկան աջակցությունը ու կոչ անում ապավինել միայն Աստծուն:

Իհարկե, վերոնշյալը չի կարող ստվեր գցել Մայր Թերեզայի՝ Հայաստանի այցի վրա մեր երկրի համար ծանր ժամանակաշրջաններից մեկում: Իսկ նրա հանդիպումը Վազգեն Առաջին Կաթողիկոսի հետ մնում է հայ հովվապետի առավել ուշագրավ հանդիպումներից մեկը, որը մի ավելորդ անգամ հաստատեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջին Վեհափառի բարձր միջազգային վարկն ու հեղինակությունը:

14. ՔՆՆԱՐԿՈՒՄ ՊՈԼ ԳՈԲԼԻ ՀԵՏ

1993 թ. հաղթելով Ֆուլբրայթի մրցանակաբաշխությունում (ԱՄՆ)՝ ես ավելի քան մեկ տարի՝ 1993թ. օգոստոսից մինչև 1994թ. հոկտեմբեր մեկնեցի ԱՄՆ գիտական գործուղման և Ջորջ Վաշինգտոն Համալսարանում աշխատում էի «ԱՄՆ-ի քաղաքականությունը Արաբական Արևելքում» թեմայի վրա: Դա շատ էլիտար համալսարան է, և մրցանակաբաշխության հաղթողների առջև բաց են գիտական և այլ հաստատությունների, ինչպես նաև Պետական դեպարտամենտի դռները, և նրանք օգտվում են մի շարք արտոնություններից:

1994թ. հունվարի 11-ին, նախօրոք պայմանավորվածության համաձայն, Վաշինգտոնում ես հանդիպեցի Միջազգային Խաղաղության Կարնեգիի Հաստատության ավագ աշխատակից Պոլ Գոբլի հետ (Paul A. Goble. Senioar Associate, Carnegie Endowment for International Peace): Դա շատ հեղինակավոր և ազդեցիկ հաստատություն է:

Զրույցին ներկա էր և ինձ ուղեկցում էր Ամերիկայի Հայկական Ազգային Կոմիտեի (ANCA) գործադիր տնօրեն Վիգեն Սոնենց Փափազյանը: Այդ կոմիտեում աշխատում են մի շարք լավ պատրաստված, ընդունակ և ձեռներեց մարդիկ, որոնց ղեկավարում էին Կարո Արմենյանը և նրա օգնական Արամ Համբարյանը:

Պոլ Գոբլը բավականին եռանդուն և աշխույժ գործիչ է և զրույցի ժամանակ չի սիրում տեղը նստել, անընդհատ շարժվում է, հուզվում և սկսում է արագ խոսել:Նա շատ հուզված էր, և երևի այդ պատճառով անընդհատ ինքն էր խոսում և փորձում իր տեսակետները բացատրել և ապացուցել իր ճշմարտացիությունը: Ես հարկադրված էի շատ հաճախ նրան ընդհատել:

Պոլ Գոբլն ինձ ընդունեց ջերմությամբ և նշեց, որ ես առաջին մարդն եմ Հայաստանից այդպիսի բարձր մակարդակով, որ ցանկություն է հայտնել հանդիպել իր հետ:

Ես- Հարգելի՛ Գոբլ, Դուք շատ պոպուլյար մարդ եք Հայաստանում, և Ձեր մասին շատ են խոսում:

Գոբլ- Հայաստանում ինձ ատում են և ինձ զգուշացրել են, որ եթե ես Հայաստանում հայտնվեմ, իմ կյանքը վտանգի տակ կարող է լինել:

Ես-Դա ճիշտ չէ: Ճշմարտությունն այն է, որ Ձեզ քննադատում են, հաճախ շատ խիստ, իսկ սպանելու մասին խոսակցություններն անհիմն են: Համենայն դեպս, Դուք բոլորովին այլ կողմից կմտնեք պատմության մեջ, և բացառված չէ, որ հայոց պատմության մեջ «Գոբլի պլանը» տեղ կգրավի «Մարշալի պլանի» կողքին:

Գոբլ-Ծիծաղում է, սակայն դառնությամբ նշում. ես Ամերիկայում առաջին էթնիկ ոչ հայն եմ, որ բացեիբաց ասել և ասում եմ, որ Արցախը հինավուրց հայկական հող է և պատկանում է հայերին և առաջարկել եմ Ղարաբաղի լուծման իմ պլանը: Սակայն, ինչպես երևում է քննադատությունից, ինձ քննադատողները Հայաստանում չեն կարդացել լրիվ իմ տեքստը, ուստի զարմանալի է, թե ինչպես են քննադատում:

Ես- Ես չեմ բացառում, որ լրագրողների ձեռքի տակ Ձեր լրիվ տեքստը չի եղել, քանի որ կապը Հայաստանում, այդ թվում և միջազգային, անմխիթար վիճակում է և հնարավոր չէ ամենաէական բաներն անգամ ժամանակին ստանալ:

Սակայն այժմ ես այստեղ եմ՝ Վաշինգտոնում, որպես Ֆուլբրայթ հաստատության այցելու պրոֆեսոր, և կցանկանայի, որ Դուք հնարավորության սահմաններում ներկայացնեք ձեր պլանը, որը ստացել է «Գոբլի պլան» անունը, հիմնական էությունը Գոբլը, ինչպես նկատեցի, չի կարողանում թաքցնել, որ իրեն շատ է դուր գալիս «Գոբլի պլան» հորջորջումը:

Գոբլ- Ես մի անգամ էլ ուզում եմ շեշտել, որ Ղարաբաղը հայկական է, որը Ստալինի նպատակամղված քաղաքականության հետևանքով հայտնվեց Ադրբեջանի տարածքում: Հիմա պետք է ելնել այդ իրողությունից և այն հանգամանքից, որ Ղա-

բաբաղի հարցը զենքի միջոցով հնարավոր չէ լուծել, որ դա շոշափում է բազմաթիվ երկրների, առաջին հերթին Ռուսաստանի, Թուրքիայի, Իրանի, ինչպես նաև ԱՄՆ-ի շահերը, ուստի պետք է փնտրել փոխզիջումային լուծում:

Սկզբունքորեն Լեռնային Ղարաբաղի հարցի «լուծման» երեք ուղի կա՝ ա/ այժմ այնտեղ գտնվող բորոր հայերի արտաքսում կամ սպանում, բ/ դրսի կամ մեծաթիվ ուժերի տեղադրում՝ կողմերին բաժանելու համար, գ/Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հսկողության տակ դնել:

Առաջին տարբերակը հնարավոր չէ բարոյական առումով, երկրորդը՝ ֆիզիկապես, երրորդը՝ քաղաքականապես, եթե այն իրագործվի առանձին, որովհետև Ադրբեջանը կկորցնի թե՛ տերիտորիա և թե՛ Բաքուն ջրով մատակարարելու պայմանները, քանի որ Բաքու հասնող ջրերն իրենց սկիզբն առնում են Ղարաբաղում: Ուստի ես կարծում եմ, որ պետք է մտածել այլ փոխզիջումային լուծման մասին, հիմնված տերիտորիալ փոխանակման սկզբունքի վրա: Ես առաջարկում եմ.

-Լեռնային Ղարաբաղի մի մասը, ներառյալ այն տարածքը, որ վերահսկում է Բաքուն, և Ադրբեջանի ձեռքում մնացող տերիտորիան ջրով մատակարարող գետերի ակունքները հանձնել Հայաստանին:

-Ադրբեջանի հսկողության տակ փոխանցել Հայաստանի հսկողության տակ գտնվող ցամաքակամուրջը, որը բաժանում է Ադրբեջանը և Նախիջևանը միմյանցից:

Ես- Ենթադրենք մի պահ, որ այս պլանը ընդունելի լինի սկզբունքորեն:

Բայց դա Հայաստանին կդնի ահավոր ծանր վիճակում, քանի որ Մեղրիի հանձնումը Ադրբեջանին կնշանակի Հայաստանը կտրել Իրանից: Մեր մեկ պատուհանը դեպի արտաքին աշխարհ Վրաստանն է, իսկ մյուսը՝ Իրանը: Այդ՝ իրանական պատուհանի փակումը շնչահեղձ կանի Հայաստանին, մանավանդ եթե նկատի ունենանք, որ վրացական պատուհանն այն-

քան էլ հաջող չի գործում:

Գոբլ- Ես համաձայն եմ Ձեզ հետ, հասկանում եմ Ձեզ և կիսում Ձեր մտահոգությունը: Այդ պատճառով էլ ես իմ, ինչպես դուք եք ասում, պլանում նախատեսում եմ Մեղրիից Հայաստանի և Իրանի միջև ստեղծել միջանցք, որտեղ պետք է տեղադրվեն միջազգային ուժեր Հայաստանի համար այդ կարևոր կենսական ճանապարհի անվտանգ ու անխափան գործունեությունն ապահովելու համար: Բայց ես գիտեմ, Հայաստանի կառավարությունն այդ քայլին չի դիմի: Նա անընդհատ հրաժարվում է իր սկզբունքներից և ավելի ու ավելի է կուլ գնում Ռուսաստանին և ԱՄՆ-ին: Հայերի և Հայաստանի գոյությունը վտանգի տակ է: Եթե այս քաղաքականությունը շարունակվի, ապա հայերը շուտով կկործանվեն:

Ես- Այդ դեպքում անկեղծորեն պատասխանե՛ք իմ հարցին. եթե Դուք լինեիք Լևոն Տեր-Պետրոսյանի փոխարեն Հայաստանի պրեզիդենտ, ի՞նչ կանեիք:

Գոբլ- Մի փոքր մտածելուց հետո նա պատասխանեց. Ես կփորձեի հարաբերությունները կտրուկ լավացնել, զարգացնել ու խորացնել Իրանի հետ: Կփորձեի կարգավորել հարաբերությունները նաև Թուրքիայի հետ, որը Հայաստանի համար, նույնիսկ ապագայում, կարևոր է: Ես կդիմակայեի բոլոր միջոցներով Ռուսաստանի և ԱՄՆ-ի ճնշմանը:

Հիշեցե՛ք իմ խոսքերը. Հայաստանին այսօր կործանում են նրա երկու «լավագույն» բարեկամները՝ Ռուսաստանը և ԱՄՆ-ը: Հայաստանը արյունաքամ է լինում, և դրա վերջը չի երևում, եթե Հայաստանի ղեկավարությունն իր քաղաքականությունը չփոխի և ազգային ինքնուրույն քաղաքականություն չվարի, կլինի Հայաստանի կործանումը և վերացումը:

Ես- Մի՛սթր Գոբլ, Դուք շատ հոռետեսորեն եք տրամադրված: Դրությունը, իհարկե, շատ բարդ է և լուրջ, բայց ոչ անհույս:

Գոբլ- Ես մնում եմ իմ տեսակետին: Ես գտնում եմ, որ

ԱՄՆ-Ի պրեզիդենտ Քլինթոնը և նրա գլխավոր խորհրդական Սթոբ Թալբոտը սխալ քաղաքականություն են վարում Ռուսաստանի նկատմամբ: Թալբոտը, որը դեսպանի աստիճանով պատասխանատու էր Ռուսաստանի համար, հետո դարձավ պետական քարտուղարի առաջին տեղակալ: Նրանք թույլ են տալիս, որ Ռուսաստանը վերականգնի իր տիրապետությունը նախկին խորհրդային հանրապետությունների վրա՝ այդ թվում և անդրկովկասյան:

Դրան հետևելու է Ռուսական կայսրության վերականգնումը և վերջանալու է նրանով, որ պայքարը սկսվելու է Մոսկվայի և Վաշինգտոնի միջև: Դուք՝ հայերդ, այս հանգամանքը նույնպես պետք է նկատի ունենաք:

Մենք պայմանավորվեցինք կրկին հանդիպել և շարունակել մեր զրույցը:

24 հունվարի 1994թ.

Վաշինգտոն

15. ՔՆՆԱՐԿՈՒՄ ԱՄՆ-Ի ՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՋՈԱՆ ԷԴԵԼՄԱՆ ՍՊԵՐՈՅԻ ՀԵՏ

1994 թվականի փետրվարի 8-ին Վաշինգտոնի Ջորջ Վաշինգտոն Համալսարանի Մարվին կենտրոնում դասախոսություն կարդաց ԱՄՆ-ի Պետական քարտուղարի տնտեսական գծով տեղակալ Ջոան Էդելման Սպերոն (Joan Edelman Spero, Undersecretary of State for Economic Affairs) «Արտաքին տնտեսական քաղաքականության նոր դերը» թեմայով, որին հրավիրված էի նաև ես: Նա տնտեսագետ է, ունի գիտական աստիճան և շատ ինքնավստահ կին է:

Նա ուրվագծեց ԱՄՆ-ի նոր տնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունները՝ ընդգծելով, որ մեծանում է տնտեսական քաղաքականության դերը ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության մեջ: Տիկին Սպերոն, ըստ գլխավոր երկրների և

շրջանների, բնութագրեց ԱՄՆ-ի տնտեսական քաղաքականությունը: Խոսելով Ռուսաստանի մասին՝ Սպերոն ընդգծեց, որ Ռուսաստանի հետ ԱՄՆ-ի տնտեսական հարաբերությունները զարգանում են երկու ուղղությամբ, առաջին՝ օգնել զարգացնելու Ռուսաստանի մակրոտնտեսությունը շուկայական հարաբերությունների հիման վրա և, երկրորդ, այդ նպատակով ֆինանսական օգնություն ցույց տալ նրան:

Նրա զեկուցումը տևեց ոչ երկար՝ հիմնական ժամանակը թողնելով հարցերին:

Օգտվելով այդ հնարավորությունից՝ ես հարցրի նրան. «Հարգելի՛ տիկին, Դուք խոսեցիք Ռուսաստանի հետ ԱՄՆ-ի տնտեսական քաղաքականության մասին, սակայն ոչինչ չասացիք ԱՄՆ-ի տնտեսական քաղաքականության մասին խորհրդային նախկին հանրապետությունների նկատմամբ: Դուք չէիք ասի, թե ինչպիսին է ԱՄՆ-ի տնտեսական քաղաքականությունը Անդրկովկասում, մասնավորապես Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հետ»:

Պետական քարտուղարի տեղակալի մոտեցումն իմ հարցին շատ լուրջ էր և հետաքրքիր: Ահա թե նա ինչ ասաց ի պատասխան իմ հարցին:

«Մենք գիտենք, որ Խորհրդային Միությունը միայն Ռուսաստանը չէ, որ կան նաև այլ հանրապետություններ, որոնց ԱՄՆ-ի պրեզիդենտ Քլինտոնի կառավարությունը մեծ ուշադրություն է դարձնում: Կա հանձնաժողով, որը գլխավորում է ԱՄՆ-ի վիցեպրեզիդենտ Ալ Գորը: Ինչ վերաբերում է Հայաստանին և Ադրբեջանին, ապա ԱՄՆ-ի կառավարությունը ձգտում է նպաստել նրանց տնտեսության զարգացմանը շուկայական հիմունքներով: Վրաստանի պարագան այլ է: Երկարատև քաղաքացիական, անկայուն և խառնաշփոթ վիճակի պատճառով այստեղ ոչինչ հնարավոր չէ անել»:

Տպավորությունն այնպիսին էր, որ ԱՄՆ-ի համար Վրաստանը որպես պետություն դեռ չի կայացել և տնտեսական առու-

մով առայժմ որևէ հետաքրքրություն չի ներկայացնում:

Այնուհետև ես առանձին մոտեցա տիկին Սպերոյին, ներկայացա, թե ով եմ ես, նշեցի, որ Հայաստանից եմ, ԱՄՆ-ում եմ որպես Ֆուլբրայթի մրցանակակիր և գիտական աշխատանքներ եմ կատարում: Պարզվեց, որ նա մեր բոլորի տվյալները, այդ թվում և իմ, ուներ: Ես նրան ասացի, որ ուզում եմ մի հարց տալ, եթե կցանկանա պատասխանել: Նա ասաց, որ սիրով կպատասխանի, և ո՞րն է Ձեր հարցը:

Ես-Ինչու՞ է Ձեր կառավարությունը դադարեցրել ֆինանսական օգնությունը Հայաստանին: Դուք չե՞ք գտնում, որ դրանով դուք կամա թե ակամա աջակցում եք Թուրքիայի և Ադրբեջանի բլոկադային, որ նրանք պարտադրել են Հայաստանին:

Սպերո-Մենք դադարեցրել ենք ֆինանսական օգնությունը, որովհետև դրությունը Հայաստանում կայուն չէ, և չենք կարող թույլ տալ, որ մեր փողերը կորչեն:

Ես-Բայց Ի՞նչ է ստացվում, դրությունը կայունացնելու համար դրամ է պետք, իսկ դուք դրամ չեք տալիս, որովետև դրությունը կայուն չէ:

Սպերո-Կրկնում եմ, մենք չենք կարող թույլ տալ, որ մեր հարկատուների փողերը զուր կորչեն: Դրության կայունացումը ձեր ժողովրդի գործն է, և դա դուք պետք է անեք: Մենք այդ մասին շատ որոշակի ասել ենք ձեր ներկայացուցիչներին այստեղ:

Պետք է ասեմ, որ Պետական քարտուղարի տեղակալ տիկին Սպերոյի տոնը բավականին սառն էր և վճռական: Իհարկե, նա արտահայտում էր իր կառավարության դիրքորոշումը:

Իսկ մեզ մոտ Հայաստանում, բանից անտեղյակ, ինչպիսի հույսեր ու ծրագրեր են կապում ԱՄՆ-ի տնտեսական օգնության հետ: Իհարկե, Սպերոյի պատճառաբանությունները լոկ պատըրվակ են: Իրականում դա ձև է, գործիք կամ խողովակ Հայաստանի վրա ճնշում գործադրելու:

15 փետրվարի 1994

Վաշինգտոն

16. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ՊՐՈՖԵՍՈՐ ՎԻԼՅԱՄ ՔՎԱՆԴՏԻ ՀԵՏ

Բրուկինգս ինստիտուտում

1994 թ. փետրվարի 17-ին Վաշինգտոնի Բրուկինգս ինստիտուտում (Brookings Institute) հանդիպեցի ամերիկյան հայտնի պատմաբան, Մերձավոր Արևելքի, ավելի նեղ առումով արաբա-իսրայելական կոնֆլիկտի հանրահայտ մասնագետ, պրոֆեսոր Վիլյամ Քվանդտի հետ: Նա 70-ական թվականներին ԱՄՆ-ի Ազգային անվտանգության խորհրդի (NSC) աշխատակից է և եղել է ԱՄՆ-ի Պետական քարտուղար, ԱՄՆ-ի պրեզիդենտի Ազգային անվտանգության գծով խորհրդական Հենրի Քիսինջերի օգնականը: Իսկ տվյալ պահին նա Բրուկինգս ինստիտուտի գիտական աշխատակից էր և վայելում էր շատ մեծ հեղինակություն:

Առաջին անգամ մենք հանդիպել ենք Երևանում 1977թ., երբ նա ղեկավարում էր ԱՄՆ-ի մերձավոր արևելագետների պատվիրակությունը և Հայաստանի ղեկավարությունն ինձ էր հանձնարարել աշխատել այդ պատվիրակության հետ: Մենք մի ամբողջ օր քննարկեցինք Մերձավոր Արևելքի կոնֆլիկտի հետ կապված զանազան հարցեր, այդ թվում և Մերձավոր Արևելքում հայերի և նրանց քաղաքական վիճակի և գոյության հեռանկարների հարցեր:

Երկրորդ անգամ հանդիպեցինք այստեղ՝ Վաշինգտոնում, Վուդրո Վիլսոն կենտրոնում, որտեղ նա Լիբանանում ԱՄՆ-ի նախկին դեսպան Ռիչարդ Պարկերի հետ միասին անցկացնում էր սեմինար «ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի սխալ հաշվարկները Մերձավոր Արևելքում» թեմայով: Նա ինձ էլ հրավիրել էր այս սեմինարին՝ հաշվի առնելով, որ ես Մերձավոր և արաբական Արևելքի մասնագետ եմ: Վիլյամ Քվանդտը ծանոթ էր իմ մի շարք աշխատություններին, որոնք հրատարակվել էին անգլերեն:

Մենք հիշեցինք մեր հանդիպումը Երևանում և պայմանա-

վորվեցինք կրկին հանդիպել, որը և կայացավ 1994 թ. փետրվարի 17-ին Վաշինգտոնում՝ Բրուկինգսի ինստիտուտում: Նա ինձ ընդունեց շատ լավ: Զրույցը կայացավ պրոֆեսոր Քվանդտի առանձնասենյակում շատ հանգիստ պայմաններում, և մենք քննարկեցինք զանազան հարցեր:

Ես - Նշեցի, որ հետևում եմ ամերիկյան թերթերին և գիտական գրականությանը և եկել եմ այն եզրակացության, որ ամերիկյան կառավարությունը կարծես թե չունի հստակ արտաքին քաղաքական կուրս, չի երևում, թե որն է նրա ստրատեգիան:

Քվանդտ- Նա անմիջապես և մեծ գոհունակությամբ արձագանքեց իմ դիտողությանը՝ ընդգծելով. «Դուք իրավացի եք, չի նկատվում համակարգ արտաքին քաղաքականության մեջ, ամեն ինչ կատարվում է կցկտուր, առանձին, անջատ՝ Բոսնիա, Սոմալի, Հայիթի և այլն: Քլինթոնի կառավարության համար արտաքին քաղաքականությունն առաջին տեղ չի գրավում, ավելի շատ ներքին հարցերն են նրան զբաղեցնում: Այդ պատճառով էլ նա շատ ուժեղ տնտեսագետների թիմ է ստեղծել, որոնք բարձրակարգ տնտեսագետներ են, և Քլինթոնը լսում է նրանց: Ինչ վերաբերում է արտաքին քաղաքականությանը, ապա թիմը շատ թույլ է, այստեղ չկան ուժեղ պրոֆեսիոնալներ:

Ես- Բայց ես տեսնում եմ, որ Վաշինգտոնում կան բազմաթիվ ինստիտուտներ և կենտրոններ, որոնք հատուկ զբաղվում են արտաքին քաղաքական հարցերով: Ինչպե՞ս դա բացատրել:

Քվանդտ- Ճիշտ է, և մենք ունենք շատ լավ փորձագետներ և ծրագիր մշակողներ: Բայց մեր դժբախտությունն այն է, որ նրանց կարծիքը կառավարությունը և Պետական դեպարտամենտը հաշվի չեն առնում, և մեր գրած գրքերն այնտեղ չեն կարդում:

ԱՄՆ-ը ունի մի յուրահատկություն: Նա, լինելով համեմատաբար երիտասարդ պետություն, արտաքին քաղաքականությանը մեծ տեղ չի հատկացնում: Փաստորեն մենք արտաքին քաղաքականությամբ լրջորեն զբաղվեցինք սառը պատերազմի տարիներին, կապված ռուսական սպառնալիքի հետ: Հիմա սառը

պատերազմը վերջացել է, և չկա հստակ ստրատեգիա, թե ինչ է լինելու, ինչպիսի քաղաքականություն պետք է վարել:

Ես- Բայց, միևնույնն է, Ռուսաստանը նորից կհայտնվի, այդ թվում և Մերձավոր Արևելքում:

Քվանդտ-Դա կարող է շատ ուշ լինել: Ռուսաստանն այժմ շատ թույլ է, և նրանից կպահանջվի 15-20 տարի՝ իր ռազմական ուժը վերականգնելու համար:

Ես- Դուք՝ ամերիկացիներդ, շատ սխալ հաշվարկներ եք կատարում և վատ գիտեք ռուսներին և Ռուսաստանը: Միշտ չէ, որ կա ուղղակի կապ տնտեսական վերակառուցման, եթե կուզեք տնտեսական հզորության և ռազմական հզորության միջև: Ռուսաստանը նախկինում երբեք չի ունեցել զարգացած և հզոր պետություն, նա չունի դա նաև այսօր, և ես չեմ հավատում, որ նա դա կունենա երբևիցե ապագայում: Ռուսաստանը ռազմական տեսակետից բազմաթիվ անգամներ հզոր է եղել, և աշխարհը նրանից վախեցել է: Այժմ ռուսները, ճիշտ է, գտնվում են սոցիալ-տնտեսական ծանր վիճակում: Բայց նրանք պատրաստ են էլ ավելի ծանր վիճակի հետ, միայն թե Ռուսաստանը չդառնա երկրորդական պետություն: Այ սա է, որ դուք այստեղ չեք հասկանում: Դուք չհասկացաք նաև Ժիրինովսկու ֆենոմենը: Բոլոր ամերիկացիները միաբերան նշում են, որ նրա հայտնվելն արդյունք էր ռուսների ծանր սոցիալ-տնտեսական վիճակի: Ես հեռու եմ դա ժխտելուց: Բայց համոզված եմ, որ Ժիրինովսկու հայտնվելը և ռուսական նացիոնալիզմի ռենեսանսը ավելի շատ կապված են Ռուսաստանի մեծ տերության ստատուսը կորցնելու, երկրորդական պետություն դառնալու հետ, որը ռուսները համարում են ազգային ստորացում: Եվ ռուսները երբեք չեն համաձայնվի դրա հետ: Նրանք պատրաստ են ավելի ծանր տնտեսական պայմանների, միայն թե Ռուսաստանը ռազմական տեսակետից դառնա հզոր և մեծ պետություն: Եվ դուք կտեսնեք, որ դա շուտով տեղի կունենա, Ռուսաստանը կսկսի ակտիվ դեր խաղալ աշխարհի տարբեր մասերում, այդ թվում և Մերձավոր

Արևելքում: Ըստ էության դա արդեն տեղի է ունենում: Բայց դուք դրան պատրաստ չեք:

Քվանդտ- Դուք ի՞նչ նկատի ունեք, որ Քլինթոնը պաշտպանում է Ռուսաստանի պրեզիդենտ Ելցինի՞ն, Դուք կարծում եք, որ դա սխա՞լ է:

Ես- Կարծում եմ, որ դուք այնպիսի քաղաքականություն վարեք Ռուսաստանի հետ, որը հիմնված լինի պարտնյորության և ոչ թե առճակատման վրա:

Ինչ վերաբերում է Ելցինին, ապա չի կարելի ասել՝ նրան օժանդակելը ճի՞շտ է, թե՞ սխալ: Դա պետք է կապված լինի նրա որոշակի քայլերի հետ: Երբ 1993 թ. սեպտեմբեր-հոկտեմբերի իրադարձությունների ժամանակ նրան էիք պաշտպանում, դա ճիշտ էր: Բայց սխալ է նրան ցույց տալ անսահմանափակ աջակցություն, նա պետք է դրվի որոշակի շրջանակների մեջ, որպեսզի չանի այն, ինչ թելադրում է նրա ֆանտազիան, և բացի այդ ԱՄՆ-ը պետք է հնարավորություն ունենա կապեր հաստատելու և համագործակցելու Ռուսաստանի ներսում գործող այլ քաղաքական ուժերի հետ:

Քվանդտ- Շատ հետաքրքիր դիտողություն է: Անկեղծ ասած, մենք այստեղ այդ ուղղությամբ չենք մտածում, իսկ Քլինթոնը ամբողջը կապում է Ելցինի հետ:

Այնուհետև ես Վիլյամ Քվանդտին պատմեցի իսլամագիտության բնագավառում իմ աշխատանքների մասին և նրա ուշադրությունը հրավիրեցի մասնավորապես իսլամի գլոբալ ստրատեգիայի հարցի վրա՝ նշելով, որ դա ինձ շատ է հետաքրքրում, հրատարակել եմ մեկ աշխատություն, սակայն քաղաքագետները կարծեք տեղյակ չեն դրա մասին, իսկ դա ապագայում կարող է մեծ վտանգ ներկայացնել:

Քվանդտ- Դա շատ կարևոր է: Իսկ ո՞ր պետությունը կարող է գլխավոր դեր խաղալ:

Ես- Պայքարը հիմնականում Թուրքիայի, Իրանի, Սաուդյան Արաբիայի և Պակիստանի միջև է:

Քվանդտ- Իսկ Ղարաբաղյան կոնֆլիկտում և հայ-ադրբեջանական առճակատման մեջ կա՞ արդյոք կրոնական գործոնը և եթե այո, ապա ի՞նչ դեր է խաղում դա:

Ես- Կրոնն այստեղ ոչ մի դեր չի խաղում, թեև կան ուժեր, որոնք կցանկանային դրան կրոնական բնույթ տալ:

Լեռնային Ղարաբաղի հարցը մաքուր էթնոտերիտորիալ հարց է: Ես խնդրում եմ, որ Դուք մշտապես այդ «տերիտորիալը» հիշեք: Ղարաբաղը հինավուրց հայկական տերիտորիա է, որը, ինչպես և Նախիջևանը, 1921-1923թթ. տրվեց Ադրբեջանին: Մյուս կողմից, Խորհրդային Ռուսաստանը 1921թ. Կարսի շրջանը զիջեց Թուրքիային: Այսպիսով, 1920-1923թթ. հայկական տերիտորիաները բաժանվեցին Թուրքիայի և Ադրբեջանի՝ երկու թուրքական պետությունների միջև: Հայաստանը զոհաբերվեց նրանց: Հայերն ուզում են իմանալ, թե իրենք իրենց ոտքի տակ պե՞տք է հող ունենան գոյության համար, թե՞ ոչ: Ես համոզված եմ, որ Դուք գիտեք 1915թ. ցեղասպանության մասին (Քվանդտը գլխով «այո»-ի նշան արեց): Այսպիսով, սա հայերի համար ոչ թե կրոնական, նույնիսկ ոչ թե էթնիկական պայքար է, այլ տերիտորիալ՝ ունենալ իրենց սեփական հողը, որը դարերով նրանցն է եղել: Նրանք ոչ մի թիզ հող, որ ուրիշինն է, չեն ուզում:

Քվանդտ- Հիմա ինձ համար շատ բան հասկանալի դարձավ, և ես ավելի լավ եմ պատկերացնում իրավիճակը:

Մենք պայմանավորվեցինք, որ ինքը կփորձի իմ դասախոսությունը կազմակերպել այդ նույն ինստիտուտում, և որ մենք կրկին կհանդիպենք: Բաժանվեցինք փոխադարձ մեծ համակրանքով: Նա ինձ ուղեկցեց մինչև վերելակ:

20 փետրվար 1994

Վաշինգտոն:

17. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ, ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԶՐՈՒՅՑՆԵՐ ՑՎԵՏԱՆԱ ՊԱՍԿԱԼԵՎԱՅԻ ՀԵՏ

2- 4 մարտի, 1994 թ., Վաշինգտոն

Բուլղարուհի Ցվետանա Պասկալևան հայտնի դարձավ Լեռնային Ղարաբաղի գործին իր նվիրվածությամբ և նրա ժողովրդի արդար պայքարի մասին տեսաժապավենների շարք ստեղծելով: Դրանք փաստագրական ֆիլմեր են, խոսուն փաստեր, որոնք մերկացնում են ադրբեջանական կողմի վայրագությունները: Նա փաստագրական ֆիլմ ստեղծող է (Filmmaker), որ 1991 թվականից անընդմեջ գտնվում է Արցախում՝ առաջավոր գծում և խրամատներում:

Ցվետանան եկել էր ԱՄՆ՝ Արցախին նվիրված իր ֆիլմերը ցուցադրելու համար: Իր այցելությունը սկսեց Կալիֆոռնիայից՝ մասնակցելով փառատոնի: Հայկական, ինչպես նաև ամերիկյան շրջանակներում նրա ֆիլմերը մեծ արձագանք գտան և ցնցող տպավորություն թողեցին:

Ամերիկյան Հայկական ազգային կոմիտեից (ANCA), որի ղեկավարը և աշխատանքների համակարգողը Կարո Արմենյանն է, մի հիանալի անձնավորություն, հայկական գործերին անմնացորդ նվիրված ազգային գործիչ, մտավորական, որի հետ, ինչպես և նրա բարեկիրթ տիկնոջ՝ Վրեժուհու հետ տարիներ շարունակ համագործակցել ենք ի սեր հայկական խնդիրների, ինձ տեղյակ պահեցին, որ Ցվետանան մարտի 2-ին ժամանելու է Վաշինգտոն և լինելու է ԱՄՆ-ի Կոնգրեսում: Ինձ խնդրեցին, որ ես ուղեկցեմ նրան և թարգմանեմ ռուսերենից անգլերեն և անգլերենից ռուսերեն, քանի որ Ցվետանան ռուսերեն էր խոսում, թեև մի քիչ գիտեր նաև անգլերեն, որը սակայն բավարար չէր լուրջ զրույցի, առավել ևս բանակցությունների համար:

Ես սիրով համաձայնվեցի, քանի որ շատ էի լսել այդ լեգենդար աղջկա մասին, որն արեց և անում էր այն, ինչ որ մենք

պետք է անեինք, բայց ծուլության, թե այլ, ինչ-ինչ պատճառներով չենք անում: Սիրում ենք խոսել, ուրիշներից պահանջել, ուրիշներին մեղադրել, սակայն, երբ հերթը հասնում է գործնական քայլերին, մարդիկ մի կողմ են քաշվում կամ թաքնվում:

Ես համաձայնվեցի նաև այն պատճառով, որ դա հնարավորություն կտար հանդիպելու ԱՄՆ-ի կոնգրեսականների հետ, որի ընթացքում կարելի կլիներ քննարկել Հայաստանին և Լեռնային Ղարաբաղին վերաբերող զանազան հարցեր:

Ցվետանա Պասկալևայի հետ ծանոթացանք 1994թ. մարտի 2-ին՝ օրվա վերջին, ԱՄՆ-ի Հայկական ազգային կոմիտեի (ANCA-ԱՀԱԿ) գրասենյակում: Նա իմացավ իմ ով լինելը, և մեր միջև հաստատվեցին շատ անմիջական հարաբերություններ: Նա շիտակ խոսող է, չի սիրում դիվանագիտական հորինվածքներ և այնպիսի տպավորություն է թողնում, կարծես թե բնիկ ղարաբաղցի լինի: Այդ տպավորությունն ավելի է ուժեղանում, երբ նա խոսակցության ընթացքում երբեմն-երբեմն օգտագործում է հայկական բառեր, նույնիսկ առանձին նախադասություններ կարող է ղարաբաղյան շեշտադրությամբ արտասանել: Շատ անմիջական է, մարդամոտ և ունի շատ ազնիվ ծիծաղ, առինքնող ժպիտ:

Նա նշեց, որ ինքը ոչ միայն ուրախ է, որ Կոնգրեսում ես եմ իր հետ լինելու, այլև պատիվ, որ նման բազմաթիվ տիտղոսներ ունեցող անձնավորությունը և մասնագետը համաձայնվել է այս գործին նվիրել իր թանկագին ժամանակը:

Ես պատասխանեցի, որ Ցվետանա Պասկալևան դարձել է լեգենդ, և ինձ համար շատ հաճելի են այս հանդիպումը և համատեղ աշխատանքը հանուն Արցախի:

Պայմանավորվեցինք հանդիպել հաջորդ օրը՝ վաղ առավոտյան:

Մարտի 3-ին՝ առավոտյան ժ. 9.30-ին, Ցվետանա Պասկալևան, ես և ԱՀԱԿ-ի գործադիր տնօրեն Վիգեն-Սոնենց Փափազյանը գնացինք ԱՄՆ-ի Կոնգրես՝ հանդիպելու կոնգրեսականների հետ: Հանդիպումներն ավարտվեցին երեկոյան ժ. 5-ի

մոտերքը: Մինչ այդ՝ նախորդ օրերին, կոնգրեսականներին էին ուղարկվել Պասկալևայի՝ Արցախին նվիրված ֆիլմերի տեսաժապավենները, որպեսզի զրույցն ընթանա որոշակի հիմքի վրա: Ինչպես երևաց հանդիպման ժամանակ, կոնգրեսականներից ոմանք հասցրել էին դիտել տեսաժապավենը, իսկ ոմանք խոստանում էին դրանք անպայման դիտել:

Մենք հանդիպեցինք հետևյալ կոնգրեսականների հետ՝ Պիտեր Բարկայի, Ֆիլների, Ռիչհարդ Լեհմանի, Աննա Էշհուի (նրա մայրը հայուհի է), Ֆրանկ Պալլոնեի հետ: Նրանք բոլորը մեզ ընդունում էին ընդգծված քաղաքավարությամբ, սիրով ու համբերատարությամբ լսում Ցվետանային, ինչպես նաև մեզ, որովհետև ես շատ հաճախ միջամտում և իմ տեսակետն էի արտահայտում: Նկատվում էր նրանց ջերմ վերաբերմունքը հայերի նկատմամբ, բայց և միաժամանակ աչքի էր զարնում, եթե չասեմ անտեղյակությունը, ապա ինֆորմացիայի խիստ պակասը, կապված կոնֆլիկտի, նրա արմատների բնույթի, տարածաշրջանի իրադրության հետ և այլն:

Ցվետանան շատ հստակ, առանց ավելորդաբանությունների ներկայացնում էր իր տեսակետները, որոնք համառոտակի հանգում էին հետևյալին:

Նա նշում էր, որ ինքը բուլղարուհի է և իր սրտի կանչով է մեկնել Ղարաբաղ և գտնում է, որ հայերի պայքարը և պահանջները միանգամայն արդարացի են: Նրա նպատակն է իր ֆիլմերի միջոցով ցույց տալ աշխարհին, թե ինչ է կատարվում Ղարաբաղում և համաշխարհային հանրային կարծիքը, պետություններին ոգեկոչել ակտիվորեն հանդես գալու հանուն հարցի արդարացի կարգավորման: Նա իր զարմանքն էր հայտնում, որ ԱՄՆ-ում լռության են մատնել Ղարաբաղի կոնֆլիկտը, այդ մասին ոչինչ չի գրվում, ոչինչ չի ասվում: Երբ միացնում ես հեռուստատեսությունը, խոսում են գլխավորապես Բոսնիայի, ինչպես նաև Սոմալիի կամ երբեմն Հայիթիի մասին: Ցվետանայի այս դիտողության հետ բոլոր ներկա կոնգրեսականները համաձայնվում էին:

Կոնգրեսմենների այն հարցին, թե դուք ինչ կցանկանայիք, որ ԱՄՆ-ը և նրա կառավարությունն անեին, Ցվետանան սովորաբար պատասխանում էր, որ ինքը կցանկանար, որ Ղարաբաղի մասին ավելի հաճախ և հանգամանորեն խոսվեր ԱՄՆ-ի զանգվածային լրատվության միջոցների կողմից, ԱՄՆ-ի կառավարությունն ավելի ակտիվ մասնակցեր կոնֆլիկտի լուծման պրոցեսին, թույլ չտար Թուրքիայի ակտիվ մասնակցությունը և նպաստեր հարցի արդար լուծմանը: Ցվետանան ընդգծում էր, որ ղարաբաղցիների համար այլևս անհնար է վերադարձը նախկին կարգավիճակին:

Ես այս բոլորը ոչ միայն թարգմանում էի, այլև իմ կողմից կատարում ավելացումներ և առաջարկություններ, անում մեկնաբանություններ: Կոնգրեսականներից ոմանք, ինչպես նշվեց, անկեղծորեն նշում էին, որ իրենք կամ հարցի պատմության հետ ծանոթ չեն, կամ էլ չունեն բավարար քանակությամբ ինֆորմացիա: Իսկ կոնգրեսմեն Ֆիլների քարտուղար-օգնականը նշեց, որ Ադրբեջանը, դեսպանատունը, կառավարությունը և այլ մարմիններ իրենց ուղղակի խեղդել են իրենց նյութերով՝ նամակներով, հեռագրերով, տեղեկանքներով և այլն: Ադրբեջանի դեսպանը շատ հաճախ այցելում է կոնգրեսմեն Ֆիլներին և երկար զրուցում նրա հետ: Իսկ հայերից և Հայաստանից, այդ թվում և հայկական դեսպանությունից, նշեց նա, մենք բացարձակապես ոչինչ չենք ստանում:

Նրա խնդրանքով ես տվեցի Ղարաբաղի հարցի հանգամանալից պատմությունը, պատճառները և բնույթը, որը նա շատ մեծ խնամքով գրի առավ:

Հանդիպման ժամանակ կոնգրեսական Բարկան առաջարկեց կազմել Ղարաբաղի վերաբերյալ տեքստ՝ հասցեագրված ԱՄՆ-ի պրեզիդենտ Բիլ Քլինթոնին, պահանջելով նրանից ճշտորոշել ԱՄՆ-ի դիրքորոշումը Ղարաբաղի նկատմամբ և գրավել ավելի վճռորոշ դիրք կոնֆլիկտի արդար լուծման հարցում: Այդ փաստաթուղթը պետք է ստորագրեն այդ օրը մեզ հետ հանդի-

պած մյուս կոնգրեսականները: Նա հանձնարարեց իր օգնականին կազմել համապատասխան տեքստ և հետո հարցրեց մեր կարծիքը դրա վերաբերյալ: Մենք լիովին համաձայնություն տվեցինք այդ գաղափարին:

Հանդիպումների մյուս արդյունքը եղավ այն, որ կոնգրեսմեն Էշհուն առաջարկեց Ցվետանայի տեսաժապավենը ցուցադրել ԱՄՆ-ի հեռուստատեսության որոշ ալիքներով, այսպես կոչված պետական-հասարակական ալիքով: Ինքն իր վրա վերցրեց այդ գործի կազմակերպումը:

Հաջորդ օրը՝ մարտի 4-ին՝ առավոտյան, եղանք Միջազգային ներման (Amnisty International) ամերիկյան բաժանմունքում, որտեղ մեզ ընդունեց նրա պատասխանատուներից մեկը, բավականին երիտասարդ մի աղջիկ՝ Քրիստին անունով: Ցվետանան մոտավորապես խոսեց նույն սխեմայով, ինչ որ Կոնգրեսում: Բայց այստեղ սրտաբաց և հաճելի զրույց չստացվեց: Քրիստինը սկզբից մեզ բաժանեց մի փաստաթուղթ՝ հավանաբար ամերիկացիների կողմից կազմված, ադրբեջանցի գերիների և առևանգվածների և նրանց վիճակի մասին: Ցվետանան հերքեց դրանք և ներկայացրեց հակափաստեր հայերի դրության մասին: Բայց այդ աղջիկը մնաց անտարբեր և ասաց, որ իրենց աղբյուրները հավաստի են: Ամեն ինչից երևում էր, որ ադրբեջանցիներն այստեղ ևս լավ էին աշխատել: Մենք նրան տվեցինք Ցվետանայի տեսաժապավենների մի կրկնօրինակը և հեռացանք:

Այնուհետև նստեցինք Կոնգրեսի շենքի մոտ գտնվող մի սրճարանում և նախաճաշեցինք ու զրուցեցինք: Ցվետանան սակավապետ էր, շատ ուտել չէր սիրում, սիրում էր հյուրեր: Շատ բարի էր, անընդհատ պատմում էր և ժպտում: Եվ իր ժպիտի մասին նա պատմեց հետևյալը: Երբ ծանր մարտեր են լինում, դրությունը լրջանում է, և մարդիկ դառնում են մռայլադեմ ու քչախոս, այդ ժամանակ հրամանատարը դիմում է Ցվետանային և ասում. «Ցվետանա ջան, մատաղ, մի հատ ժպտա, տղերքի տրամադրությունը թող բարձրանա»: Նա հիացած է դարաբաղցիներով,

նրանց մարդասիրությամբ և մարդկայնությամբ, անկոտրում կամքով:

Ցվետանան, որը Բուլղարիայի քաղաքացուհի է, հանդիպեց նաև Բուլղարիայի դեսպանության պաշտոնյաների հետ, որտեղ նա նրանց ասում է, որ անհրաժեշտ է աղրբեջանական ագրեսիայի միջազգային դատապարտում:

Ցվետանան անընդհատ շեշտում էր, որ չի թողնի Ղարաբաղը և գնա, քանի դեռ չի լուծվել նրա հարցը: Ինձ ասաց, որ նախորդ օրը զանգահարել է Ստեփանակերտ և խոսել գլխավոր հրամանատար Սամվել Բաբայանի հետ և ասել նրան, որ ինքը ուշանում է, և հանկարծ այնտեղ չմտածեն, թե ինքը փախել է Ղարաբաղից: Սամվել Բաբայանը նրան հանգստացրել է, սակայն ասել, թե ինչքան կարող է, թող շուտ վերադառնա:

Հենց այդտեղ Ցվետանան ցածր ձայնով երգեց մի մեղեդի և ասաց, որ դա ֆրանսիական մի ֆիլմից է, որտեղ գլխավոր դերում Ալեն Դելոնն է: Դիմելով ինձ՝ նա ասաց. «Դոկտո՛ր, ես ասել եմ, որ եթե ես զոհվեմ, և ինձ թաղեն Ղարաբաղում, ապա թաղման ժամանակ թող կատարեն միայն այս մեղեդին»:

Տխուր է:

Դուրս եկանք սրճարանից: Նա և Վիգենը պետք է գնային «Ամերիկայի ձայնի» հայկական հաղորդումների խմբագրություն ձայնագրման համար:

Ես հրաժեշտ տվեցի Ցվետանային՝ ցանկանալով, որ Աստված նրան լինի պահապան: Բայց Ցվետանան միտքը փոխեց: Նա ասաց, որ ինքն ինձ հրաժեշտ չի տալիս և խնդրում է, որ ես մնամ ԱՀԱԿ-ի գրասենյակում և սպասեմ իրեն, և որ իրենք կվերադառնան ամենաուշը ժամը 4-ին: Ես համաձայնվեցի և սպասեցի նրան այնտեղ: Բայց ձայնագրման հետ կապված ինչ-որ ձգձգումներ էին եղել, և «Ամերիկայի ձայնից» զանգահարեցին և ասացին, որ ժ. 4-ին նա չի հասցնի գալ, և իզուր չսպասեմ նրան: Նա ձայնագրումից հետո անմիջապես պետք է մեկներ Ռիչմոնդ, որտեղ նշանակված էր հանդիպում տեղի հայ համայնքի հետ:

Եվ, այսպես, մենք բաժանվեցինք առանց հրաժեշտի խոսք ասելու միմյանց: Բայց անկախ այս բոլորից, բուլղարուհի կինոփաստագիր և Ղարաբաղի բանակի գնդապետ Ցվետանա Պասկալևայի գործունեությունը և անձն արժանի են ամենաբարձր դրվատանքի:

17. 3. 1994.

Վաշինգտոն

18. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԱՄՆ-Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՎԻԼՅԱՄ ՊԵՐՐԻԻ ՀԵՏ

14 մարտի 1994թ.

1994թ. մարտի 14-ին Ջորջ Վաշինգտոնի համալսարանի Մարվին սրահում կայացավ ԱՄՆ-ի պաշտպանության նախարար Վիլյամ Պերրիի (Secretar of Defence William Perry) դասախոսությունը «ԱՄՆ-ի հարաբերությունները նախկին ԽՍՀՄ-ի ժողովուրդների հետ» թեմայով («USA Relations with the Nations of the Former USSR»):

Դասախոսությանը կարելի էր մասնակցել միայն հատուկ հրավերով և հատուկ ցուցակներով: Ես նույնպես հրավիրված էի մասնակցելու այդ դասախոսությանը: Ինչպես արդեն նշել եմ, բոլոր մասնագետները, որոնք Ֆուլբրայթի մրցանակիրներ էին, իսկ ես այդպիսին էի, օգտվում էին հատուկ արտոնությամբ, այդ թվում և ԱՄՆ-ի նախարարների ու այլ կարգի պետական գործիչների զեկուցումներին, դասախոսություններին, քննարկումներին մասնակցելու և այլն:

Վիլյամ Պերրին թողնում է կիրթ և լայն գիտելիքների տեր, ավելի շատ պրոֆեսորի տպավորություն, խոսում է՝ ամեն մի բառը կշռադատելով, և զգույշ է ձևակերպումների հարցում:

Նա ծանրացավ ԱՄՆ-Ռուսաստան հարաբերությունների վրա: Ըստ Պերրիի՝ այստեղ հնարավոր է երեք տարբերակ:

Առաջին. Ռուսաստանում, եթե հաղթում կամ իշխանու-

թյան գլուխ են մնում դեմոկրատները: Այդ դեպքում հնարավոր է բազմակողմանի համագործակցություն՝ հիմնված պարտնյորության վրա:

Երկրորդ. Ռուսաստանում իշխանության գլուխ են գալիս նացիոնալիստական, իմպերիալիստական ուժերը, որոնք հնարավոր է, որ վարեն էքսպանսիոնիստական, իմպերիալիստական քաղաքականություն: ԱՄՆ-ը պատրաստ է նաև այդ տարբերակին, ունի համապատասխան ծրագրեր և անակնկալի չի գա:

Երրորդ. Ռուսաստանում կարող է ստեղծվել իրավիճակ, որը հնարավոր չէ վերահսկել: Դա կարող է ստեղծել բարդություններ, և մենք այդ հեռանկարը նույնպես հաշվի ենք առնում:

Նա միաժամանակ նշեց, որ Ռուսաստանը մնում է հզոր պետություն: Նրա տրամադրության տակ կա 2500 միջուկային մարտագլխիկ, որը բավարար է ԱՄՆ-ը ոչնչացնելու համար: Ապա մի փոքր պաուզայից հետո ասաց. «հնարավոր է ոչնչացնել ամբողջ աշխարհը»: Այնուհետև նա հայտնեց, որ մարտի 17-ին մեկնելու է Ռուսաստան, Ուկրաինա, Բելառուս և Ղազախստան: Նա մյուս նախկին խորհրդային հանրապետություններին չանդրադարձավ և առաջարկեց հարցեր տալ:

Ես Պերրիին երկրորդ հարց տվողն էի: Իմ հարցը հետևյալն էր. «Պարոն մինիստր: Արդյո՞ք ԱՄՆ-Ռուսաստան հարաբերություններում Անդրկովկասը գրավում է որևէ տեղ և, եթե այո, ապա ինչպիսի՞: Եվ հետո, ինչպե՞ս եք Դուք տեսնում Ղարաբաղի պրոբլեմի լուծումը»:

Հարցը տալուց հետո ավելացրի.«Ես Հայաստանից եմ, Ֆուլբրայթի հաստատության գիտահետազոտող Ջորջ Վաշինգտոնի համալսարանի Էլլիոտի միջազգային հարաբերություններ ինստիտուտում»: Ամբողջ դահլիճը քար լռությամբ լսեց իմ հարցը, իսկ ինքը՝ Պերրին, համակ ուշադրություն էր: Նրա պատասխանը հանգում էր հետևյալին. «Ամբողջ Անդրկովկասում լարված իրադրություն է, որտեղ կան բախումներ, ինչպես Հայաստանի և Ադրբեջանի միջև: Շատ դժվար է վերահսկել դրությունը և ազդել

պրոցեսի վրա: Իմ կառավարությունը գտնում է, որ Ղարաբաղ և կոնֆլիկտային այլ վայրեր պետք է ուղարկել ՄԱԿ-ի խաղաղապահ ուժեր: Մենք կողմնակից ենք ՄԱԿ-ի խաղաղապահ ուժեր ստեղծելուն, նրանց միջոցով գործելուն: Դեմ չենք, որ Ռուսաստանն էլ գործի, բայց նրա ուժերը նույնպես պետք է հանդես գան ՄԱԿ-ի դրոշի ներքո և գործեն որպես ՄԱԿ-ի խաղաղապահ ուժեր»:

Պարզ էր, որ Պերրին խուսափում էր շատ ուղղակի խոսել այդ թեմայի շուրջ, բայց հասկանալ տվեց, որ ԱՄՆ-ը չի ցանկանում առանձին հանդես գալ կամ ցուցաբերել սեփական նախաձեռնություն:

Ընդամենը թույլատրվեց հինգ հարց, որից հետո կազմակերպվեց ընդունելություն:

Եվ ահա ինձ էին մոտենում պրոֆեսորներ և ասպիրանտներ (դասախոսությանը հրավիրել էին միայն դասախոս-պրոֆեսորներ և ասպիրանտներ), որոնք նշելով, որ իմ հարցը շատ հետաքրքիր էր, միաժամանակ ավելացնում էին, որ Պերրին խուսափեց հստակ պատասխաններից, իսկ ոմանք էլ նշում էին, որ իրենք չհասկացան, թե որն է ԱՄՆ-ի քաղաքականությունը Անդրկովկասում և Ղարաբաղի հարցում:

Ի պատասխան որոշ մարդկանց հետաքրքրության իմ կողմից բարձրացված հարցերի՝ ես պատմեցի նրանց Հայաստանի ներկա վիճակի և Ղարաբաղյան շարժման ու պայքարի մասին:

Հաջորդ օրը ԱՄՆ-ի լրատվական գործակալությունները համառոտակի տվել էին Պերրիի խոսքերը Անդրկովկասի և Ղարաբաղի մասին, որը լայն արձագանք էր գտել հասարակության մեջ:

19 մարտի 1994թ.

Վաշինգտոն

19. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԱՄՆ-Ի ՊՐԵԶԻԴԵՆՏ ՔԼԻՆԹՈՆԻ ՀԱՏՈՒԿ ՕԳՆԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ԱՎԱԳ ԴԻՐԵԿՏՈՐ ՊՐՈՖԵՍՈՐ ՄՈՐԹՈՆ ՀԱԼՊԵՐԻՆԻ ՀԵՏ

22 ապրիլի 1994

I

Մեր զրույցը կայացավ Ջորջ Վաշինգտոնի համալսարանի Մարվին կենտրոնի սրահում: Ներկա էին համալսարանի միջազգային հարաբերությունների Էլլիոտ դպրոցի (ֆակուլտետի) դեկան, պրոֆեսոր Մորիս Իստը, դիվանագետներ, պրոֆեսորներ, ասպիրանտներ, մոտ հարյուր մարդ: Հալպերինը խոսեց ընդհանրապես դեմոկրատիայի և նրա սկզբունքների մասին՝ շեշտելով նաև դրա նշանակությունը ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության մեջ, այլ պետությունների հետ նրա փոխհարաբերություններում: ԱՄՆ-ի համար կարևոր է, թե արդյո՞ք տվյալ պետությունը կառուցված է դեմոկրատիզմի հիմունքների վրա, թե ոչ: Նա ընդգծեց, որ դեմոկրատիան միայն սահմանադրությունը չէ, այլ նրա սկզբունքների կիրառումը: Նա առանձնացրեց որպես դեմոկրատիայի կարևոր դրսևորումներից ընդդիմության իրավունքը, ազգային փոքրամասնությունների իրավունքը պահպանելու իրենց ինքնությունը, իրավունքները և այլն: Միաժամանակ շեշտեց, որ ինքը համաձայն չէ նրանց հետ, ովքեր մարդու իրավունքների հարցը անջատում են դեմոկրատիայի հարցերից և դիտարկում առանձին: Ըստ նրա կարծիքի՝ անթույլատրելի է դրանք բաժանել միմյանցից և այլն, և այլն: Պետք է նշել, որ ելույթներում շատ էին ընդհանուր դատողությունները:

Այնուհետև սկսվեցին հարցերն ու պատասխանները: Որպես ոչ դեմոկրատական պետություններ, որտեղ ոտնահարվում են դեմոկրատիայի սկզբունքները և մարդու իրավունքները, Հալպերինը բազմիցս հիշատակեց Մոնղոլիան, Կամբոջան, Ալժիրը,

Հայիթին, Գվատեմալան, Սալվադորը և Ինդոնեզիան, բայց Թուրքիան ոչ մի անգամ չհիշատակվեց:

Ես տվեցի հետևյալ հարցերը:

Հարց առաջին: Պարո՛ն Հալպերին, Դուք ինչպես եք գնահատում ձեր կողմից նշված դեմոկրատիայի սկզբունքների տեսանկյունից ԱՄՆ-ի հարաբերությունները Թուրքիայի հետ, մի երկրի հետ, որը XX դարում իրագործված առաջին ցեղասպանության հայրենիքն է: Դուք, հավատացած եմ, որ գիտեք, որ երկու օր հետո՝ ապրիլի 24-ին, Հայոց ցեղասպանության օրն է: Բացի այդ, Թուրքիայում ոտնահարվում են մարդկային իրավունքները: Ձեզ հայտնի է, որ Թուրքիայում ձերբակալվել են թուրքական մեջլիսի՝ պառլամենտի վեց քուրդ անդամներ, և ճնշվում է քրդերի շարժումը: Կան նաև հարցեր՝ կապված հույների և այլ ժողովուրդների, մասնավորապես ասորիների հետ:

Հալպերին- Մենք մտահոգ ենք քրդերի կապակցությամբ և տեղյակ ենք պահել այդ մասին Թուրքիայի ղեկավարությանը: Սակայն ես ուզում եմ ասել, որ Թուրքիան շատ կարևոր ստրատեգիական նշանակություն ունեցող երկիր է մեր և ՆԱՏՕ-ի համար, և մենք մեր քաղաքականության մեջ հաշվի ենք առնում այդ հանգամանքը և ելնում ենք դրանից:

Հալպերինը ոչ մի խոսք չասաց և չշոշափեց անգամ հայկական գենոցիդի, հույների և ասորիների հարցը:

Իմ երկրորդ հարցը: Ինչպիսի՞ն է ձեր կարծիքը Վրաստանում, Ադրբեջանում և Հայաստանում գոյություն ունեցող ռեժիմների մասին:

Հալպերինը ծիծաղեց, և դահլիճն էլ, որտեղ կար մոտ հարյուր մարդ, շատ աշխուժորեն արձագանքեց իմ այդ հարցմանը:

Հալպերին-Մենք ուշիուշիով հետևում ենք նախկին խորհրդային հանրապետությունների զարգացմանը և նրանցում տեղի ունեցող իրադարձություններին: Մենք հուսով ենք, որ այդ հանրապետությունները մեծ տեղ կհատկացնեն դեմոկրատիայի հարցերին և ի վերջո կգնան կամ կդառնան դեմոկրատական:

Դրանից հետո նա ուզում էր ձայնը տալ հաջորդ անձնավորությանը, սակայն ես, խախտելով կարգը, տեղիցս հարցրի. «Իսկ Դուք ի՞նչ է, որևէ տարբերություն չե՞ք գտնում այդ երեք հանրապետությունների վարչակարգերի միջև»:

Հալպերին- Ես ունեմ իմ անձնական կարծիքը, որը մենք կարող ենք առանձին քննարկել:

Ինձ մոտեցան մի քանի պրոֆեսորներ և ասպիրանտներ: Գտնելով, որ իմ հարցերը շատ հետաքրքիր և տեղին էին, նրանք միաժամանակ իրենց դժգոհությունը հայտնեցին Հալպերինի պատասխաններից: Իսկ ոմանք, կարծես թե ինձ մխիթարելու համար, ասում էին, որ նա պետական պաշտոնյա է, ուզում է պահպանել իր պաշտոնը, ուստի և այլ կերպ չէր կարող պատասխանել: Սակայն մի կին պրոֆեսոր նկատեց, որ իրենք չէին եկել հանրահայտ ճշմարտություններ լսելու դեմոկրատիայի մասին, հարկ էր, որ հայ պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի հարցերին տրվեր ավելի որոշակի պատասխան:

Չնայած Հալպերինի գրաված դիրքին՝ ես զոհ էի, որ տվեցի իմ հարցերը, քանի որ մոտ հարյուր մարդ մտավորականության շրջանից լսեցին Հայոց ցեղասպանության և նրա արյունարբու իրագործողի՝ Թուրքիայի մասին: Նրանցից շատերի համար դա նորություն էր:

II

Ինչ վերաբերում է Հալպերինի խոստմանը, որ կան հարցեր, որ «մենք կարող ենք առանձին քննարկել», ցավոք դա տեղի չունեցավ Հալպերինի «զբաղվածության» պատճառով: Սակայն ինձ տվեցին նրա «Ինքնորոշումը նոր աշխարհակարգում» աշխատությունը, որի հեղինակակիցն էր Դ. Շեֆֆերը, որտեղ կային նոր մոտեցումներ ինքնորոշման հետ կապված հարցերին: Նրանք նշում են ինքնորոշման յոթ կատեգորիաներ: Դրանց մեջ թերևս ամենակարևորը «Անդրպետական ինքնորոշումն է»[77]:

---

[77] Halperin M., Scheffer D. with Small P., Self-Determination in the New World Order, Washington D.C. 1992, p.48.

(Трансгосударственное самоопределение): Այդ կատեգորիան կիրառելի է ժողովուրդների այն խմբի համար, որոնք ապրում են ավելի քան մեկ պետությունում: Մասնագետները որպես այդ երևույթի դասական օրինակ բերում են Լեռնային Ղարաբաղը, որի ժողովուրդը կարող է ձգտել խզել կապը գոյություն ունեցող մեկ պետության հետ և մտնել մյուս պետության մեջ: Դրա օրինակն են Լեռնային Ղարաբաղի հայերը, որոնք ձգտում են դառնալ Հայաստանի մի մասը»[78]:

Պետք է ընդունել, որ իրավացի են Հալպերինը և Շեֆֆերը, որ այդ մոտեցումը դեռևս չի դարձել տիրապետող միջազգային պրակտիկայում, բայց հին և քարացած մոտեցումներն արդեն ճեղքվածք են տվել, և դա անվիճելի փաստ է [79]: Եվ կարծում եմ, որ իրավացի են վերոնշյալ հեղինակները, երբ նշում են, որ ժամանակն է այլևս միմյանց չհակադրել երկու սկզբունքները՝ ազգերի ինքնորոշման իրավունքը և միջազգայնորեն ճանաչված պետական սահմանները:

20. ՀԱՐՑՈՒՄ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ (ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ) ՋԵՅՄՍ ԲԵՅՔԵՐԻՆ

9 մայիսի 1994

Վուդրո Վիլսոն Միջազգային կենտրոնը, որը ԱՄՆ-ի հռչակավոր գիտական կենտրոններից է, պարբերաբար կազմակերպում է լսումներ, քննարկումներ, դասախոսությունների շարք՝ հրավիրելով միայն ականավոր պետական գործիչների, գիտնականների, պրոֆեսիոնալ մասնագետների, քաղաքագետների և այլն: 1994թ. մայիսի 9- ին կայացած դասախոսության թեման էր «Վուդրո Վիլսոնի ամբողջական ժառանգությունը»՝ կապված այդ հանրահռչակ կենտրոնի ստեղծման 25-ամյակի հետ (1968թ.):

[78] Նույն տեղում:

[79] Նույն տեղում, էջ 49:

Նախորդ անգամ դասախոսել էր ՄԱԿ-ում մշտական ներկայացուցիչ Մադլեն Օլբրայթը, որն այնուհետև գրավեց ԱՄՆ-ի պետական քարտուղարի պաշտոնը:

Ինչպես արդեն նշել ենք, Վուդրո Վիլսոն միջազգային կենտրոնի դասախոսություններին կարող են մասնակցել միայն նախօրոք հրավիրվածները, որոնց անունները մտցվում են ցուցակի մեջ, և նրանք ներս մտնելիս ստուգվում են:

Ինձ՝ որպես պրոֆեսորի և Ֆուլբրայթի ֆոնդի գիտական հետազոտողի, այդպիսի հրավեր տրվեց, մանավանդ որ ես առաջին անգամ չէր, որ հրավիրվում էի Վուդրո Վիլսոն կենտրոն: Այդ օրվա զեկուցողը ԱՄՆ-ի 61-րդ պետական քարտուղար՝ արտաքին գործերի նախարար Ջեյմս Բեյքերն էր: Նա այդ պաշտոնը զբաղեցնում էր Ջորջ Բուշի պրեզիդենտության շրջանում՝ 1989-1993թթ.: Նրա զեկուցման թեման էր. «Արդյո՞ք պատմությունն ինքնին կրկնվում է Եվրոպայում» («Is History Reapiting Itself in Europe?»):

Ողջույնի խոսք ասաց Վուդրո Վիլսոնի միջազգային կենտրոնի դիրեկտոր Չարլզ Բլիցերը: Բեյքերին ներկայացրեց դեսպան Մաքս Մ. Կամպելմանը, որը շատ բարձր գնահատեց նրա կարողությունները և գործունեությունը:

Իր դասախոսությունը Բեյքերը հիմնականում նվիրեց Եվրոպայում ստեղծված նոր իրադրությանը և մեծ մասը հատկացրեց Ռուսաստանին, որոշ չափով Ուկրաինային, Լեհաստանին, Հունգարիային և Չեխիային: Նշեց նաև, որ ԽՍՀՄ-ի վերացումից հետո էթնիկական պատերազմներ են Մոլդավիայում, Վրաստանում, Հայաստանում և Ադրբեջանում: Նրա կարծիքով Ռուսաստանը չի կարելի համարել կորցրած՝ նկատի ունենալով ռեֆորմների կիրառման և դեմոկրատիայի զարգացման հեռանկարները: Ընդունեց, որ Ռուսաստանում գլուխ են բարձրացնում նացիոնալիստական -կայսերական ուժերը, որոնց առաջին զոհերը նախկին խորհրդային հանրապետություններն են: Նա կշտամբեց ԱՄՆ-ի ներկա կառավարությանը այդ հարցում

պասիվ դիրք գրավելու համար:Նա գտնում է, որ ՆԱՏՕ-ն պետք է պահպանել և նույնիսկ ընդլայնել և անհրաժեշտ է անհապաղ Լեհաստանը, Հունգարիան և Չեխիան ընդունել ՆԱՏՕ-ի լիիրավ անդամներ՝ առանց հաշվի առնելու Ռուսաստանի ռեակցիան: Ռուսաստանը չպետք է վետոյի իրավունք ունենա ՆԱՏՕ-ի նկատմամբ: ԱՄՆ-ը պետք է ուժեղ ճնշում գործադրի Ուկրաինայի վրա, որպեսզի վերջինս և միջուկային զենքերը փոխանցի Ռուսաստանին: Ուկրաինան չպետք է լինի միջուկային տերություն:

Ընդհանրապես Բեյքերի տոնը և ոճը շատ խիստ էին, և սառը պատերազմի դարաշրջանի շունչ էր փչում, որի մասին ես ուղղակի ասացի նրան:

Այնուհետև սկսվեցին հարցերը:

Ընդունված կարգի համաձայն՝ ելույթներ չեն թույլատրվում, կարելի է միայն հարց տալ, որը պետք է այնպես վարպետորեն ձևակերպել, որ տեսակետ պարունակի: Իսկ հարց տվողին ինքը՝ դասախոսն է ընտրում, տվյալ դեպքում Ջեյմս Բեյքերը: Վերջինը՝ հինգերորդը, նա ինձ ձայն տվեց իմ՝ բազմիցս ձեռք բարձրացնելուց և կանգնելուց հետո: Դահլիճը մեծ էր, երևի մոտ 700 մարդ կլիներ՝ պետական գործիչներ, նախարարներ, դիվանագետներ, պրոֆեսորներ և այլն: Բեյքերը ձեռքը մեկնեց իմ կողմը և ասաց՝ «Վերջին հարցը այս ջենտլմենին»:

Քանի որ ամեն մի հարց տվող, ըստ այդտեղ ընդունված կարգի, ինքն իրեն է ներկայացնում, ես նույնպես վարվեցի այդ կերպ՝ ասելով՝դոկտոր, պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյան, Հայաստանից, Ֆուլբրայթ ֆոնդի մրցույթի հաղթող, որից հետո տվեցի իմ հարցը:

Ես- Վուդրո Վիլսոնի քաղաքական ժառանգության մեջ կարևոր տեղ է գրավում ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքը: Սակայն այժմ առաջին պլան է դուրս եկել պետությունների տերիտորիալ ամբողջականության պահպանման և սահմանների անխախտելիության սկզբունքը: Դուք չե՞ք գտնում,

պարո՛ն պետական քարտուղար, որ դա, առաջին՝ դավաճանություն է Վուդրո Վիլսոնի քաղաքական ժառանգությանը կամ ինչպես Դուք ասացիք Ձեր դասախոսության մեջ, որը հետաքրքիր էր, թեև մի քիչ խիստ և կոշտ, Վիլսոնի քաղաքական երազանքներին և, երկրորդ՝ դա փակում է դռները այն ժողովուրդների առջև, որոնք ձգտում են ազատության, չեն ցանկանում մնալ մեկ այլ ավելի մեծ ժողովրդի տիրապետության տակ և ուզում են անկախ լինել:

Ես ցանկանում եմ շարունակել իմ հարցը և հատկապես նշել, որ այս երկրորդ սկզբունքը՝ տերիտորիաների և պետական սահմանների անխախտելիությունը, դարձել է միջազգային լարվածության աղբյուր և էթնիկական վեճերի լուծման խոչընդոտ: Սակայն Ջեյմս Բեյքերը սկսեց ինքը խոսել բավականին սրտնեղած, եթե չասեմ նյարդայնացած:

Ջեյմս Բեյքեր- Պետք է ասեմ, որ Ձեր հարցը կարևոր, շատ կարևոր հարց է, մանավանդ այժմ՝ մեր օրերում, երբ աշխարհի տարբեր մասերում ծավալվում են նման կոնֆլիկտներ: Այդ հարցի պատասխանը տրված է Հելսինկիի փաստաթղթերում, որտեղ ասված է, որ սահմանների ձևափոխությունը կարող է տեղի ունենալ միայն խաղաղ ճանապարհով և երկու կողմերի համաձայնությամբ:

Ես նստած տեղիցս ընդհատեցի նրան, որ չլսված բան էր նման մակարդակի հանդիպումներում և լսարաններում և բացականչեցի՝ եթե մյուս կողմը չի ցանկանում բանակցություններ վարել և հարցը խաղաղ ճանապարհով կարգավորել, ի՞նչ անել, ինչպե՞ս վարվել:

Ջեյմս Բեյքերը, ի պատասխան, դարձյալ պնդեց. «Հարցը պետք է լուծել Հելսինկիի փաստաթղթերում գծված սահմաններում և միջոցներով: Հակառակ դեպքում ամեն մի շրջան կամ մարզ կարող է հանդես գալ ինքնորոշման կամ նույնիսկ անկախության պահանջով:

Դրանից հետո նա անմիջապես շնորհակալություն

հայտնեց ներկաներին և բեմից իջավ դահլիճ:

Այսպես ավարտվեց մեր մենամարտը:

Երբ դահլիճից հեռանում էինք, ինձ առանձին-առանձին մոտեցան երկու կին պրոֆեսորներ, մեկն՝ ամերիկուհի, իսկ մյուսը՝ հույն, որոնք իրենց զոհունակությունը հայտնեցին իմ հարցի կապակցությամբ, պոլեմիկա վարելու իմ բարձր մակարդակի համար և դժգոհություն ԱՄՆ-ի պետական քարտուղարի պատասխանից:

21. ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՎ ՀԱՆԳԱՄԱՆԱԼԻՑ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԱՄՆ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՊՐԵԶԻԴԵՆՏ ՀԵՐՄԱՆ ՊԻՐՉՆԵՐԻ ՀԵՏ

8 սեպտեմբերի 1995 թ.

I

Դա կարևոր պաշտոն է և որոշակի դերակատարում ունի ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության որոշման և իրագործման մեջ:

Նա արդեն գիտեր իմ մասին, իմ մասնագիտության մասին, և որ ես Ֆուլբրայթի ֆոնդում գիտական աշխատանքներ եմ կատարում: Մեր զրույցի հենց սկզբում նա ասաց, որ իրեն շատ է հետաքրքրում Ռուսաստանի քաղաքականությունը և նախկին խորհրդային հանրապետությունների իրավիճակը: Իսկ ինձ էլ հետաքրքրում էր ԱՄՆ-ի դիրքորոշումն այդ հարցերում:

Հերման Պիրչներն ուղղակի ասաց, որ «Նրան շատ է հետաքրքրում Ռուսաստանի քաղաքականությունը Ադրբեջանի նկատմանբ ներկա փուլում: Մասնավորապես ի՞նչ է ցանկանում Ռուսաստանը, ո՞րն է նրա հիմնական նպատակը, նավթամուղի հարցը, և ի՞նչ հնարավորություններ ունի Ռուսաստանը ազդելու Ադրբեջանի վրա»:

Հասկանալի է, որ դա հետաքրքրում էր նաև ինձ և Հայաստանի ղեկավարությանը: Գտնվելով ԱՄՆ-ում՝ պետք է ասեմ,

որ ընդհանրապես նկատվում էր հետաքրքրություն Ադրբեջանի նկատմամբ, կապված նավթի շահագործման հետ, Ադրբեջանի նավթարդյունաբերության մեջ ամերիկյան ներդրումների, նավթամուղի և ընդհանրապես Անդրկովկասում Ռուսաստանի քաղաքականության հետ:

II

Շոշափվեց նաև Մերձավոր Արևելքի հարցը: Հերման Պիրչները քննադատական մոտեցում ուներ Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ի քաղաքականության նկատմամբ: Նա գտնում էր, որ Ուորեն Քրիստոֆերը թույլ պետական քարտուղար է, չունի ամբողջական և հստակ պատկերացում արտաքին քաղաքականության մասին, այդ թվում և Մերձավոր Արևելքում: Այստեղից էլ տարօրինակ քաղաքականություն: ԱՄՆ-ը կարող է ստիպել Իսրայելին և Պաղեստինին, որ բանակցություններ վարեն և համաձայնության գան, բայց դրանից այն կողմ կամ դրանից հեռու չունեն հստակ գիծ:

Ես դիտել տվեցի, որ երբ խոսքը մերձավորարևելյան քաղաքականության մասին է, սխալ կլինի հաշվից դուրս նետել Ռուսաստանին: Ճիշտ է, նա հիմա թուլացել է, և թուլացել են նրա դիրքերը Մերձավոր Արևելքում, բայց Ռուսաստանը վաղ թե ուշ կրկին հայտնվելու է Մերձավոր Արևելքում, և դա կարող է կրկին փոխել ընդհանուր դրությունը: Պիրչները համաձայնվեց ինձ հետ և գտավ դա միանգամայն բնական:

III

Շոշափվեց նաև ԱՄՆ-ի քաղաքականությունը Ռուսաստանի նկատմամբ: Իմ այն հարցին, թե արդյո՞ք ԱՄՆ-ը ձգտում է Ռուսաստանի տրոհմանը, ինչպես ԽՍՀՄ-ի, Պիրչները ուսերը շարժեց որպես նշան այն բանի, որ այդ հարցում հստակություն չկա: Ապա ընդունեց, որ հնարավոր է՝ ԱՄՆ-ը կցանկանար, որ ինչ-որ քառսային վիճակ ստեղծվի, սակայն դժվար թե ցանկանա նրա մասնատումը: Այդ կապակցությամբ նա ուշադրություն հրավիրեց երկու հանգամանքի վրա: Առաջին, Չինաստանի

հարցը. Ռուսաստանի տրոհման կամ թուլացման դեպքում գլուխ կբարձրացնի և կուժեղանա Չինաստանը, որը, ինչպես շեշտեց Հերման Պիրչները, ուղղակի հակասում է ԱՄՆ-ի ազգային շահերին: Եվ, երկրորդ, իսլամական ֆունդամենտալիզմի խնդիրը: Նրա կարծիքով Ռուսաստանը զսպիչ դեր է կատարում, որը կարևոր է:

IV

Վերջում կրկին անդրադարձանք Անդրկովկասի հարցին: Հերմանը հետաքրքրվեց, թե ինչով է Ռուսաստանը կարևոր Հայաստանի համար: Ես նրան պատասխանեցի՝ գլխավորապես Հայաստանի ազգային անվտանգությունն ապահովելու տեսակետից: Այդ հարցում Ռուսաստանի և Հայաստանի շահերը համընկնում են: Իմ այն հարցին, թե կարո՞ղ է պատահել, որ ԱՄՆ-ը իր վրա վերցնի Հայաստանի անվտանգության ապահովումն ընդդեմ թուրքական սպառնալիքի կամ ներխուժման, նա ժխտական պատասխան տվեց՝ ընդգծելով, որ ԱՄՆ-ը հեռվից չի զա պաշտպանելու Հայաստանին, ուստի և Հայաստանի դիրքորոշումը Ռուսաստանի նկատմամբ՝ կապված ազգային անվտանգության ապահովման հետ, ճիշտ է:

Հերման Պիրչներն ընդունեց նաև, որ Անդրկովկասը, վերջիվերջո, գտնվում է Ռուսաստանի ազդեցության գոտում:

Մերիլենդ
ԱՄՆ

22. ՀԱՆԴԻՊՈՒՄ ԼԻԲԱՆԱՆԻ ՊՐԵԶԻԴԵՆՏ ԱՄԻՆ ԺՄԱՅԵԼԻ ՀԵՏ. ԱՄԻՆ ԺՄԱՅԵԼ- «ՀԱՅԵՐՆ ՈՒ ԱՐԱԲՆԵՐԸ ԵՂԲԱՅՐՆԵՐ ԵՆ»

1995թ. հոկտեմբերի 16-ին հանդիպեցի և զրույց ունեցա Լիբանանի պրեզիդենտ Ամին Ժմայելի հետ: Նա ավագ որդին էր Լիբանանի ականավոր քաղաքական գործիչ, «Լիբանանյան փաղանգներ» կուսակցության հիմնադիր Պյեր Ժմայելի: Այդ կուսակցությունը հիմնվել էր 1934թ.:

Ամին Ժմայելը Լիբանանի պրեզիդենտ էր ընտրվել 1982թ.՝ իր եղբոր՝ պրեզիդենտ Բաշիր Ժմայելի սպանությունից հետո, և այդ պաշտոնը զբաղեցրեց մինչև 1988թ.:

Մեր հանդիպման պատեհ առիթը միջազգային գիտաժողովն էր՝ «IV Միջազգային դիալոգ, նվիրված գլոբալ հասարակության վերափոխմանը», որը գումարվեց ԱՄՆ-ի Մերիլենդի համալսարանում 1995թ. հոկտեմբերի 15-17-ը: Կազմակերպիչներն էին Մերիլենդի համալսարանը և նրա Միջազգային զարգացման և կոնֆլիկտների կառավարման կենտրոնը (Ես գտնվում էի ԱՄՆ-ում այդ Կենտրոնի հրավերով) և Շվեյցարիայի Լանդբերգ Ակադեմիան՝ Բահաիզմի Միջազգային կենտրոնի ակտիվ մասնակցությամբ: Այս երկխոսության դեվիզն էր՝«Բաժանարար բարբարոսությո՞ն, թե՞ համաշխարհային քաղաքակրթություն: Գիտության, Արվեստի, Կրոնի, Քաղաքականության էթիկական չափումները»:

Ամին Ժմայելը զեկուցումով հանդես եկավ պլենար նիստում հոկտեմբերի 15-ին: Զեկուցման թեման էր՝ «Համաշխարհային Կառավարում, Փոփոխություն և Արժեքներ»: Ես զեկուցումով հանդես եկա հաջորդ օրը՝ հոկտեմբերի 16-ին: Իմ զեկուցման թեման էր. «Ղարաբաղյան կոնֆլիկտի տեղը էթնոքաղաքական կոնֆլիկտների համակարգում»:

Այդ օրը՝ առաջին ընդմիջումից հետո, մենք մոտեցանք միմյանց և սկսեցինք մեր զրույցը, որին մասնակցում էին նրա տիկինը և մի քանի այլ մարդիկ, հավանաբար նրա օգնականները:

Իմանալով, որ ես հայ եմ, նա հարցրեց, թե որտեղի հայ եմ, Հայաստանի՞, թե՞ դրսի: Իմ պատասխանից հետո, որ ես Հայաստանից եմ, նա մեծ հետաքրքրություն ցուցաբերեց Հայաստանի, նրա ներկա վիճակի նկատմամբ: Այնուհետև նա նշեց, որ ինքը բազմաթիվ հայ բարեկամներ ունի՝ առանձնացնելով Գարեգին Ա-ին՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին՝ ընդգծելով, որ իրենք շատ մտերիմ են: Միաժամանակ նա հայտնեց, որ Գարեգին Ա

Կաթողիկոսը իրեն հրավիրել է Հայաստան, և ինքը պատրաստվում է այցելել Հայաստան, երբ որ հարմար լինի՝ կամ 1995թ. վերջին, որը քիչ հավանական է, կամ 1996թ., եթե ոչ սկզբին, ապա ընթացքում: **Ապա նա շեշտեց, որ հայերն ու արաբները եղբայրներ են: Նրա այդ միտքը եռանդուն պաշտպանեց նրա տիկինը:**

Խոսելով Մերձավոր Արևելքի և Լիբանանի մասին՝ պրեզիդենտն այն միտքն արտահայտեց, որ ԱՄՆ-ը պետք է ավելի ակտիվորեն միջամտի, և նա չթաքցրեց իր հակասիրիական տրամադրությունները: Նրա կարծիքով Սիրիան պետք է հեռանա, իր զորքերը դուրս բերի Լիբանանից, և դրանից հետո լիբանանցիները հեշտությամբ ընդհանուր լեզու կգտնեն:

Ամին Ժմայելը ընդգծված քաղաքավարի և սիրալիր էր:

Մեկ անգամ ևս մենք զրուցեցինք ռեստորանում, ափսեները ձեռքներիս՝ այսպես կոչված շվեդական սեղանից ուտեստեղեն էինք վերցնում: Երբ մի պահ մենք կողք կողքի էինք գնում, ես արաբերեն պրեզիդենտին ասացի. «Ի՞նչ համեմատություն այս կերակուրների և լիբանանյան մեզեի միջև»: Ամին Ժմայելը լիաթոք ծիծաղեց և ասաց. «Ինչ արած, եղածը պետք է ուտենք»:

Ամին Ժմայելը այդպես էլ չեկավ Հայաստան:

Բայց պաշտոնական այցով Հայաստան եկան Սիրիայի պրեզիդենտ Հաֆիզ Ասադը, այնուհետև՝ նրա մահից հետո՝ նրա որդին՝ Բաշար Ասադը՝ որպես Սիրիայի պրեզիդենտ:

Ինչ վերաբերում է սիրիական զորքերը Լիբանանից դուրս բերելուն, որի վերաբերյալ երազում էր պրեզիդենտ Ամին Ժմայելը և բազմաթիվ լիբանանցիներ, ապա դա, իրոք, տեղի ունեցավ:

2005 թ. ապրիլի վերջերին սիրիական վերջին զինվորը հեռացավ Լիբանանից:

23.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՐԵԶԻԴԵՆՏ ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պրեզիդենտ,

Թուրքիայի արտաքին գործերի նախարարության ստրատեգիական հետազոտությունների կենտրոնը 1996թ. մարտի 29-31-ը Անթալիայում հրավիրել էր սեմինար՝ նվիրված «Ռուսաստանը և նոր անկախություն նվաճած երկրները» պրոբլեմին:

Սեմինարին մասնակցում էին ականավոր պետական գործիչներ, գիտնականներ, դիվանագետներ ԱՄՆ-ից, Մեծ Բրիտանիայից, Ֆրանսիայից, Ռուսաստանից, Ուկրաինայից, Հայաստանից, Վրաստանից, Ադրբեջանից և Ղազախստանից:

Սեմինարի երրորդ նիստը նվիրված էր Կովկասին, որտեղ նախատեսված էին «Ռուսաստանը և Կովկասը» (Դավիդ Նիսման, ԱՄՆ), «Հայացք Հայաստանից» (Հայաստանի Հանրապետության ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Նիկոլայ Հովհաննիսյան), «Հայացք Ադրբեջանից» (Արազ Ազիմով, Ադրբեջանի Արտաքին գործերի նախարարի տեղակալ) և «Հայացք Վրաստանից» (Թամազ Գամկրելիձե, Վրաստանի ԳԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, Վրաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս) զեկուցումները:

Առանց չափազանցության կարելի է ասել, որ սեմինարների քննարկումների և արտասեմինարային բազմաթիվ զրույցների կենտրոնական հարցերն էին՝ Հայաստանը, հայ-թուրքական հարաբերությունների զարգացման հեռանկարներ և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կարգավորման հիմնախնդիրը:

Արտակարգ հետաքրքրություն էր ցուցաբերում թուրքական մեծաթիվ պատվիրակությունը, որի մեջ մտնում էին ոչ միայն և ոչ այնքան գիտնականները, որքան Թուրքիայի պետա-

կան, ռազմական և դիվանագիտական գործիչները, այդ թվում՝ Թուրքիայի պրեզիդենտի գլխավոր խորհրդական Չակար Նեզիհին, Թուրքիայի բանակի գլխավոր շտաբի նախկին պետ գեներալ Նեսիպ Թորումթայը, արտաքին գործերի նախկին նախարար, դեսպան Վահիդ Հալեֆօղլուն, արտաքին և պաշտպանական նախարարությունների պատասխանատու աշխատակիցներ, դեսպաններ, գեներալներ և այլն:

Հաշվի առնելով քննարկված հարցերի կարևորությունը և նրանց, մասնավորապես Թուրքիայի պրեզիդենտի գլխավոր խորհրդականի խնդրանքն իրենց տեսակետները փոխանցել Հայաստանի Հանրապետության պրեզիդենտին, ես, հարգելի՛ պրեզիդենտ, կատարում եմ այդ խնդրանքը և Ձեր ուշադրությանը ներկայացնում թուրքական կողմի արտահայտած առավել կարևոր տեսակետները:

Առաջին, իմ՝ Անթալիա ժամանելուց անմիջապես հետո ինձ հետ երկարատև և հանգամանալից զրույց ունեցավ Թուրքիայի արտաքին գործերի նախարարության Կենտրոնական Ասիայի, Կովկասի և սլավոնական երկրների դեպարտամենտի գլխավոր դիրեկտորի տեղակալ Հալիլ Ակինչին: Նա ինձ բառացիորեն ասաց հետևյալը . «Մենք գտնում ենք, որ Անդրկովկասում միակ պետությունը Հայաստանն է: Այդտեղ գոյություն ունեն կայուն վիճակ, կարգ ու կանոն: Վրաստանը և Ադրբեջանը թույլ կառույցներ են»: Նա ընդունեց, որ Ղարաբաղը միշտ էլ ինչ-որ ձևով անկախ է եղել, պետական ինքնուրույն կազմավորում է եղել, և նրա մելիքները կարողացել են պահպանել իրենց ինքնուրույնությունը: Բայց այդ մասին այստեղ, ավելացրեց նա, չես կարող խոսել և բացատրել, տեղացի ժողովուրդը դա չի հասկանում: Այնուհետև նա շեշտեց, որ պրեզիդենտ Սուլեյման Դեմիրելը լավ է հասկանում իրադրությունը և Լևոն Տեր-Պետրոսյանի վիճակը: Մնացածները չեն հասկանում, այդ թվում և Թանսու Չիլլերը և մնացած կուսակցությունները, որոնք պոլիտիկանությամբ են զբաղված:

Հալիլ Ակինչին շեշտեց, որ Թուրքիան ուզում է Ղարաբաղյան կոնֆլիկտի լուծմանը հասնել ոչ այն ձևով, ինչպես արվում է հրապարակային պաշտոնական հայտարարությունների ժամանակ, թեև խուսափեց որոշակիացնել իր միտքը: Միայն ասաց, որ ԼՂՀ-ն պետք է ինչ-որ ձևով զիջում, թեկուզ աննշան, կատարի, հակառակ դեպքում Թուրքիայի Մեջլիսը, կուսակցությունները և ժողովուրդը չեն հասկանա և չեն պաշտպանի Դեմիրելին:

Իմ այն հարցին, թե արդյոք հնարավոր չէ՞ ԼՂՀ-ի հարցը անջատել Հայաստանի և Թուրքիայի միջև պետական հարաբերությունների զարգացման հարցից և առանձին լուծել առևտրատնտեսական կամ ճանապարհների և հաղորդակցության ուղիների հարցը՝ նրան տեղյակ պահելով, որ Լևոն Տեր-Պետրոսյանն իր ամենավերջին ելույթում՝ մարտի 23-ին, առանձնահատուկ տեղ հատկացրեց Թուրքիայի ճանապարհների միջով արտաքին աշխարհ դուրս գալու խնդրին: Հալիլ Ակինչին պատասխանեց, որ, ցավոք, առայժմ հնարավոր չէ ԼՂՀ-ի և Հայաստանի հետ հարաբերությունների հարցը միմյանցից անջատել.«Մեզ կսկսեն մեղադրել, որ մենք դավաճանում ենք մեր եղբայր Ադրբեջանին»:

Այնուհետև Հալիլ Ակինչին նշեց, որ Թուրքիայի արտաքին քաղաքականության առջև երեք կարևոր հարցեր կան՝ ա/Ռուսաստանի հետ հարաբերություններ, բ/ հարաբերություններ Կովկասի հետ, թե՛ հյուսիսային, թե՛ հարավային (այսինքն՝ Անդրկովկասի) հետ և, գ/ միայն երրորդ տեղում է Մերձավոր և Միջին Արևելքը:

Երկրորդ, ինձ հետ երկրորդ զրույցն ունեցավ Թուրքիայի ԱԳՆ-ի պատասխանատու աշխատակից և Ստրատեգիական հետազոտական կենտրոնի կարգադրիչ-դիրեկտոր Գազնե Սոյսալը: Զրույցին մասնակցում էր նաև Հալիլ Ակինչին:

Սոյսալն ուղղակի ինձ դիմեց հարցումով, թե «Հայաստանը ինչպե՞ս կնայեր Ղարաբաղի անկախ պետություն լինելուն, պայմանով, որ նա չմիանա Հայաստանին»: Ակինչին ակտիվորեն միջամտեց՝ պաշտպանելով և շարունակելով այդ հարցը: Նրանց

կարծիքով չի բացառվում Ղարաբաղյան կոնֆլիկտի լուծման նման տարբերակ: Այնուհետև Սոյսալն ավելացրեց, որ, ըստ այդ տարբերակի, Ղարաբաղը չի միանում ո՛չ Ադրբեջանին, ո՛չ էլ Հայաստանին, սակայն անհրաժեշտ է միջազգային երաշխիք:

Ես իմ անունից (իսկ ես միշտ շեշտում էի, որ ես պրոֆեսոր եմ և խոսում եմ միայն և միայն իմ անունից) պաշտպանեցի այդ գաղափարը՝ ընդգծելով, կարծում եմ, որ դա ընդունելի տարբերակ կարող է լինել Հայաստանի և ԼՂՀ-ի համար:

Քննարկվեց նաև ԼՂՀ-ի անկախության երաշխիքի հարցը, այն առումով, որ որևէ կողմ, կոնկրետ Հայաստանը և Ադրբեջանը, չխախտեն ԼՂՀ-ի անկախությունը և հետագայում չփորձեն այն բռնակցել:

Այս առումով քննարկվեց երկու տարբերակ՝ ա/ երաշխավոր կարող են լինել Ռուսաստանը և Թուրքիան, բ/ երաշխավոր կարող են լինել միջազգային կազմակերպությունները՝ ՄԱԿ-ը, Անվտանգության խորհուրդը, ԵԱՀԿ-ն և այլն:

Կարծիքների փոխանակությունից պարզվեց, որ թուրքական կողմը ավելի հակված է միջազգային կազմակերպությունների կողմից ԼՂՀ-ի անկախությանը տրվող երաշխիքին:

Մենք պայմանավորվեցինք կրկին անդրադառնալ այդ խնդրին:

Եվ, իրոք, հաջորդ օրը Սոյսալը մոտեցավ ինձ և կրկին անդրադարձավ երաշխիքի հարցին, ոչ թե անկախության, այլ երաշխիքի: Ես այն տպավորությունը ստացա, որ նա զրուցել էր ավելի բարձր մակարդակի ղեկավարության հետ, և ամենայն հավանականությամբ նրանք անկախության հարցում երկմտանք չունեն, այլ նրանց հուզողը ինչ-որ ձևով ԼՂՀ-ի անկախության երաշխիք ապահովելն էր: Նա, դիմելով ինձ, ասաց. «Պրոֆեսո՛ր, մեզ համար ավելի նախընտրելի է միջազգային երաշխիքը, որևէ միջազգային կազմակերպության կողմից տրվող երաշխիքը»: Ես պատասխանեցի, որ չեմ կարծում, որ առարկություն լինի Հայաստանի կողմից այդ հարցում, որ կարելի է այն դարձնել քննարկ-

ման առարկա: Սոյսալն իր գոհունակությունը հայտնեց իմ պատասխանից:

Երրորդ, երկու կարևոր զրույց ունեցա Թուրքիայի պրեզիդենտ Սուլեյման Դեմիրելի գլխավոր խորհրդական Նեզիհի Չակարի հետ:

Առաջին զրույցի ընթացքում նա ուղղակի անդրադարձավ ԼՂՀ-ի հարցին՝ ասելով, որ «Հայերը պետք է ինչ-որ զիջում անեն, որպեսզի հնարավոր լինի հասնել համաձայնության»: Ես պատասխանեցի, որ հայերը սկզբունքորեն պատրաստ են փոխզիջման:

Չակար- Ի՞նչ փոխզիջման եք դուք, օրինակի համար, պատրաստ:

Ես- Վերադարձնել գրաված տերիտորիաները ԼՂՀ-ի ստատուսի դիմաց:

Չակար- Դա զիջում չէ, քանի որ դրանք ադրբեջանական տերիտորիաներ են:

Ես- Բայց դուք մի՛ մոռացեք, որ ադրբեջանական բանակը պարտություն է կրել և կորցրել է այդ տերիտորիաները: Եթե չլիներ Ռուսաստանի ճնշումը Ղարաբաղի վրա, և պատերազմը շարունակվեր, ապա Ղարաբաղի պաշտպանական ուժերը կգրավեին նոր տարածքներ, այդ թվում և Գյանջան: Հիմա ԼՂՀ-ն պատրաստ է դրանք վերադարձնել, եթե լուծվի նրա անվտանգության և ստատուսի հարցը:

Չակար-Ինչպե՞ս եք պատկերացնում ԼՂՀ-ի ստատուսի հարցը:

Ես- ԼՂՀ-ի անկախության ճանաչման ձևով: Նա թող ո՛չ մնա Ադրբեջանի կազմում և ո՛չ էլ միանա Հայաստանին: Եկեք այնպես լուծենք այդ հարցը, որ դա լինի ընդմիշտ, և այն չփոխանցենք հաջորդ սերունդներին:

Չակար- Համաձայն եմ: Սակայն դուք ինչպե՞ս եք նայում տերիտորիաների ինչ-որ ձևով փոխանակման հարցին, այդ տար-

բերակին՝ Ղարաբաղի դիմաց Նախիջևանի ինչ-որ տերիտորիալ կարգավորում».

Սակայն Թուրքիայի պրեզիդենտի ավագ խորհրդականը չցանկացավ որոշակիացնել կամ մանրամասնել իր այդ առաջարկությունը: Ես պատասխանեցի Չակարին, որ դա տարբերակներից մեկն է և որպես այդպիսին կարող է և քննարկման առարկա լինել, և ես այդ մասին կարող եմ տեղյակ պահել Հայաստանի պրեզիդենտին: Չակարը ուղղակի շեշտեց. «Ես շատ ուրախ կլինեմ»:

Այնուհետև մենք համաձայնվեցինք, որ պետք է համբերությամբ ճիշտ ուղիներ որոնել և ճիշտ քայլեր կատարել: Նա հավաստիացրեց, որ «Թուրքիան լավ է վերաբերվում Հայաստանին և հայ ժողովրդին»:

Նիստերից մեկի ժամանակ ինձ կրկին իր մոտ հրավիրեց Դեմիրելի գլխավոր խորհրդական Չակարը: Ներկա էր նաև թուրքական բանակի գլխավոր շտաբի նախկին պետ գեներալ Նեսիպ Թորումթայը, որի հետ մինչ այդ շատ կարճ զրույց էի ունեցել: Գեներալն ինձ հավաստիացրեց, որ «Մենք՝ թուրքերս և հայերս, Թուրքիան և Հայաստանը, բարեկամներ ենք»:

Դեմիրելի գլխավոր խորհրդականն ուղղակի ինձ դիմեց հարցումով.«Ինչու՞ դուք կանչեցիք օտար ուժեր Հայաստան»: Նա նկատի ուներ ռուսական ուժերը: Ես նրան ասացի, որ այդ հարցի պատասխանը տվեցի երեկվա իմ զեկուցման մեջ, որին դուք երկուսդ էլ ներկա էիք, որ մենք կնքել ենք համաձայնագիր Ռուսաստանի հետ իրավահավասարության հիմքի վրա և այլն, և այլն: Ավելացրի նաև, որ Թուրքիայի հանգուցյալ պրեզիդենտ Թուրգուտ Օզալը սպառնում էր՝ «Ժամանակն է, որ մենք ատամներ ցույց տանք հայերին»: Գեներալ Թորումթայը նկատեց, որ դա «Կատակ էր Օզալի կողմից»:

Այնուհետև նրանք երկուսն էլ նկատեցին, որ հայ-թուրքական սահմանի վրա կենտրոնացված թուրքական դիվիզիաները «ձեր դեմ չէին ուղղված, այլ Ռուսաստանի»: Գեներալը

կրկին հավաստիացրեց, որ «մենք բարեկամներ ենք, քանի որ հարևաններ ենք, իսկ հարևանները բարեկամներ են»:

Ապա Չակարը և Թորունթայը հանգամանորեն հետաքրքրվեցին Լևոն Տեր-Պետրոսյանի անձով, քանի տարեկան է, ինչ մասնագիտություն ունի, լեզուների, մանավանդ թուրքերենի իմացությունը և այլն: Հատկապես հետաքրքրվեցին Հայաստանում առաջիկա պրեզիդենտական ընտրություններով և Լևոն Տեր-Պետրոսյանի հաղթանակի շանսերով:

Ես նրանց բոլոր հարցերին տվեցի սպառիչ պատասխաններ:

Հրաժեշտի ժամանակ ինձ մոտեցավ Ստրատեգիական հետազոտությունների կենտրոնի պրեզիդենտ, դեսպան, Թուրքիայի ԱԳՆ ազդեցիկ ղեկավարներից մեկը՝ Էհրան Իյյիտ – Բաշիօղլուն, և ասաց. «Դուք հնարավորություն ունեցաք երկու անգամ հանդիպելու և զրուցելու Թուրքիայի պրեզիդենտի գլխավոր խորհրդական, բանակի գլխավոր շտաբի նախկին պետի և այլ բարձրաստիճան անձնավորությունների հետ: «Ես կցանկանայի իմանալ, թե դուք ում եք հասցնելու Ձեր ձեռք բերած ինֆորմացիան»: Ես պատասխանեցի, որ այն կհասցվի Հայաստանի Հանրապետության պրեզիդենտին:

Նա շատ գոհ մնաց և ինձ հայտնեց, որ մեր զրույցների մասին ինֆորմացիան կդրվի պրեզիդենտ Սուլեյման Դեմիրելի սեղանի վրա»:

Ամփոփելով կցանկանայի շեշտել, որ, ըստ իմ տպավորության, ա) Թուրքիան Հայաստանին համարում է լուրջ և արժանի պարտնյոր և գտնում է, որ Թուրքիա-Հայաստան մերձեցումը և համագործակցությունը կարող են լրջորեն փոխել իրադրությունն ամբողջ Անդրկովկասում և հարակից երկրներում, բ) Թուրքիան ձգտում է Ղարաբաղյան հիմնահարցը լուծել հնարավորինս արագ և անկախության կամ դրան մոտ այլ տարբերակով և ոչ անպայման որպես Ադրբեջանի անբաժան մաս: Այս փոփոխությունը, ինչպես երևաց զրույցներից, ակնհայտ է, սակայն Թուր-

քիան դա ուզում է իրագործել այնպես, որ փրկի նաև իր հեղինակությունը թուրքերի և ադրբեջանցիների աչքում, գ) Թուրքիան շտապում է, որովհետև զգում է, որ միակողմանիորեն իրեն կապելով Ադրբեջանի հետ՝ սահմանափակում է իր գործողությունների ազատությունը, մանևրելու հնարավորությունը և տուժում է, քանի որ գործունեության ազատ դաշտ է ստեղծվում Անդրկովկասում Իրանի և Ռուսաստանի՝ իր մշտական մրցակիցների համար:

Եվ եթե նկատի ունենանք նաև այն բարդությունները, որ Թուրքիան, ինչպես իմ զրուցակիցներն էին ասում, ունի Հունաստանի, Սիրիայի, Իրաքի և Իրանի հետ, ապա կարծում ենք, որ ավելի նպաստավոր պայմաններ են ստեղծվել ղարաբաղյան հարցի լուծման և հայ- թուրքական հարաբերությունների բարելավման համար:

Նիկոլայ Հովհաննիսյան
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի դիրեկտոր
4 ապրիլի 1996
Անթալիա-Երևան

24. Հ ՈՒ Շ Ա Գ Ի Ր
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՐԵԶԻԴԵՆՏ ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պրեզիդենտ, Ձեզ այս հուշագիրը ներկայացնելու անմիջական առիթը Նոր աշխարհաքաղաքական մակրոտարածաշրջանի կազմավորման վերաբերյալ քաղաքական նախագիծն է, որը, ինչպես մեզ հայտնի դարձավ, մշակվում է Իսրայելի և ամենայն հավանականությամբ ԱՄՆ-ի և Թուրքիայի գիտական կենտրոններում, որոնց հետևում, անկասկած, կանգնած են որոշակի քաղաքական ուժեր:

Հաշվի առնելով, որ այդ ծրագիրը, որի մասին ավելի հանգամանորեն կնշվի ստորև, անմիջականորեն կարող է ազդել

Հայաստանի միջազգային դրության և ազգային անվտանգության վրա, հարկ ենք համարում այն ներկայացնել ձեր ուշադրությանը:

1996թ. մայիսի 19-26-ը ես ԱՄՆ-ի Մերիլենդի համալսարանի և Երուսաղեմի հրեական համալսարանի Հարրի Տրումենի ինստիտուտի հրավերով գտնվում էի Երուսաղեմում, որտեղ մասնակցում էի «Պարտնյորներ կոնֆլիկտի գծով» ծրագրի երկրորդ փուլի քննարկմանը: Առաջին փուլը տեղի էր ունեցել 1995թ. օգոստոս-դեկտեմբեր ամիսներին ԱՄՆ-ի Մերիլենդի համալսարանի Միջազգային զարգացման և կոնֆլիկտների կառավարման կենտրոնում: Ծրագրի նպատակն է կոլեկտիվ աշխատության նախապատրաստումը «Էթնոքաղաքական կոնֆլիկտները Անդրկովկասում» թեմայով, որը պետք է լույս տեսնի ԱՄՆ-ում: Նրան մասնակցում են Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Աբխազիայի, Հարավային Օսեթիայի և Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչները: Ես ներկայացնում էի Հայաստանը, իսկ Ալեքսանդր Իսկանդարյանը՝ ԼՂՀ-ն:

Երուսաղեմում կայացած հանդիպման ժամանակ մենք ամփոփեցինք կատարված աշխատանքները և կանխագծեցինք մեր առաջիկա անելիքները:

Այս քննարկման ժամանակ, որին, բացի Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Աբխազիայի, ԼՂՀ-ի և Հարավային Օսեթիայի ներկայացուցիչներից, մասնակցում էին նաև քաղաքագետներ և գիտնական մասնագետներ ԱՄՆ-ից, Իսրայելից, Կանադայից, Ճապոնիայից, Ֆինլանդիայից և Հորդանանից, մեզ Երուսաղեմի հրեական համալսարանի Հարրի Տրումենի ինստիտուտի կողմից ներկայացվեց մի նոր ծրագիր՝ «Նոր աշխարհաքաղաքական մակրոշրջանի ձևավորումը և էթնոքաղաքական կոնֆլիկտները ԱՊՀ-ի հարավային տարածքում»:

Այս ծրագրի հիմնական բաղադրամասերն են:

1.Արմատապես փոխվել է ԱՊՀ-ի և նրա մի շարք հարևանների աշխարհաքաղաքական քարտեզը:

2. Ընթանում են կազմավորող գործընթացներ, որոնք դան-

դաղորեն ԱՊՀ-ի հարավային տարածքները՝ Կենտրոնական Ասիան և Կովկասը միավորում են Արևմտյան Ասիայի և Մերձավոր Արևելքի հետ:

3. Այս նոր աշխարհաքաղաքական մակրոշրջանը, որը կարելի է անվանել նաև Մեծ Միջին Արևելք (Greater Middle East), կազմված է չորս ենթաշրջաններից (subregion).

ա) Կենտրոնական Ասիա-Ղազախստան-Ղրղզստան- Տաջիկստան, Թուրքմենստան և Ուզբեկստան:

բ) Կովկաս-Հայաստան-Ադրբեջան և Վրաստան:

գ)Արևմտյան Ասիա-Իրան և Թուրքիա:

դ) Միջին Արևելք-Արաբական երկրներ-Իսրայել-Պաղեստինյան Ինքնավարություն

4.Իրանը և Թուրքիան մեծ ջանքեր են գործադրում երկկողմանի և բազմակողմանի կապերի միջոցով, որպեսզի ԱՊՀ-ի ենթաշրջանները՝ Կենտրոնական Ասիան և Կովկասը, ինտեգրացվեն նրանց հետ և դուրս գան ԱՊՀ-ից և դրանով իսկ Ռուսաստանի ուղղակի ազդեցությունից:

5. Արևմտյան Ասիայի, այսինքն՝ Իրանի և Թուրքիայի ազդեցությունը գերազանցում է Միջին Արևելքի ազդեցությանը ԱՊՀ-ի հարավային ենթաշրջանում: Իրանի և Թուրքիայի ստրատեգիական և աշխարհաքաղաքական դիրքը նրանց դարձնում է ԱՊՀ-ի հարավային ենթաշրջանի պետությունների համար ավելի ընդունելի, քան արաբական երկրները, որոնց հետ ԱՊՀ-ի պետություններն ունեն միայն պերիֆերիալ կապեր:

6. Վերջին շրջանում Թուրքիան հասել է առավելության Իրանի նկատմամբ, քանի որ ԱՊՀ-ի բազմաթիվ երկրների ղեկավարներ ուղղակի անհանգստացած են իրանական տիպի իսլամական ֆունդամենտալիզմի «արտահանումով»:

7. Այդուհանդերձ, հեռանկարում չպետք է թերագնահատել այսօրվա Միջին Արևելքի կարևորությունը Մեծ Միջին Արևելքի մակրոռեգիոնի զարգացման մեջ:

8. Նախագիծը շատ մեծ տեղ է հատկացնում կոնֆլիկտի

լուծմանը Անդրկովկասում: Նշվում է, որ Ղարաբաղյան կոնֆլիկտը մնում է գլխավոր ապակայունացնող գործոնը, որը Ադրբեջանի գոյատևությունը որպես անկախ պետություն դնում է վտանգի տակ: Շատ հավանական է, որ այս կոնֆլիկտը, այսինքն՝ ղարաբաղյան, ավելի կսրվի Չեչնիայի ճգնաժամի լուծման դեպքում:

9. Նախատեսվում է քննարկել Մեծ Միջին Արևելքի մեջ միավորվելու միտումները և Կենտրոնական Ասիայի ու Անդրկովկասի պետությունների զարգացման գլխավոր ուղղությունները՝ մակրոռեգիոնի մեջ ինտեգրացվելու պայմաններում:

Հակիրճ այսպիսին է նախատեսվող նախագծի հիմնական բովանդակությունը:

Մեր կարծիքով այն նախատեսված է երկարաժամկետ քաղաքականության համար և նպատակ ունի իրագործելու և հաստատելու քաղաքական ուժերի նոր հաշվեկշիռ մեր տարածաշրջանում: Եվ քանի որ դա շատ դժվար խնդիր է, ուստի վստահաբար կարելի է ասել, որ այս ծրագրերի հեղինակներին պետք է փնտրել ոչ միայն Երուսաղեմում, այլև Վաշինգտոնում և Անկարայում:

Նոր աշխարհաքաղաքական մակրոշրջանի կամ Մեծ Միջին Արևելքի կազմավորման նպատակն է, ինչպես մեզ թվում է՝

ա) ապահովել ԱՄՆ-ի, Թուրքիայի և Իսրայելի տիրապետող դիրքերը մակրոշրջանում,

բ) ուղղված է Ռուսաստանի և նրա շահերի դեմ,

գ)կանխել Արևմտյան Եվրոպայի ռազմաքաղաքական և առևտրատնտեսական և ֆինանսական ներթափանցումը և դիրքերի ամրապնդումը մակրոշրջանում,

դ) մեկուսացնել Իրանը և թուլացնել նրա դիրքերը,

ե) նսեմացնել արաբական երկրների դերը և նրանց դարձնել պերիֆերիա կամ առուսայդեր մակրոշրջանի ստրատեգիական և քաղաքական հարցերի լուծման տեսանկյունից,

զ) ձգտել Կենտրոնական Ասիան և Անդրկովկասը ներքաշել ԱՄՆ-Թուրքիա-Իսրայել առանցքի ազդեցության ոլորտը՝ թու-

լացնելով նրանց կապերը Ռուսաստանի և Արևմտյան Եվրոպայի հետ,

է) առավելագույն նպաստավոր պայմաններ ստեղծել դարաբաղյան կոնֆլիկտը թուրք-ադրբեջանական տարբերակով լուծելու համար:

Կարելի է ասել, որ այն, ինչին Թուրքիային չհաջողվեց հասնել հեծելազորային գրոհով ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, այն է՝ ուղղակիորեն դուրս գալ Անդրկովկաս և Միջին Ասիա, որը մեր կարծիքով ձախողվեց Ռուսաստանի, Հայաստանի և Իրանի համատեղ ջանքերով և հեռատես քաղաքականությամբ, այժմ փորձ է արվում իրագործել այս նոր ծրագրի օգնությամբ:

Մեր համոզմամբ, ուժերի նոր հավասարակշռություն և դասավորություն ստեղծելու չորս ենթաշրջանները մեկ մակրոշրջանի մեջ միավորելը, որտեղ տիրապետող դիրք կգրավեն Թուրքիան ու Իսրայելը, վայելելով ԱՄՆ-ի հովանավորությունը, չի համապատասխանում Հայաստանի պետական ազգային շահերին և լուրջ մարտահրավեր է նրա ազգային գոյությանը:

25. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՐԵԶԻԴԵՆՏ ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

1996 թ. հունիս ամսին ես ձեզ Հուշագիր էի ուղարկել այն մասին, որ Երուսաղեմի հրեական համալսարանի Հարրի Տրումենի անվան հետազոտական ինստիտուտը առաջ է քաշել «Նոր աշխարհաքաղաքական մակրոշրջանի՝ Մեծ Մերձավոր Արևելքի տեսությունը», որը ներառում է բուն Մերձավոր Արևելքը (արաբական երկրներ, Իսրայել և Պաղեստինի Ինքնավարություն), Արևմտյան Ասիան (Թուրքիա և Իրան), Անդրկովկասը (Հայաստան, Ադրբեջան, Վրաստան) և Կենտրոնական Ասիան (Ղազախստան, Ղրղզստան, Տաջիկստան, Թուրքմենստան և Ուզբեկստան): Միաժամանակ նշել էինք, թե ինչ ուժեր են կանգնած այդ ծրագրի հետևում, ում է ձեռնտու այն և Ձեր ուշադրությունը հրավիրել այն բանի վրա, թե այդ ծրագիրն ինչպիսի ազդեցու-

թյուն և հետևանքներ կարող է ունենալ Հայաստանի արտաքին քաղաքականության և ազգային անվտանգության վրա:

Օրերս ես ստացա նամակ համապատասխան փաստաթղթերով, Հարրի Տրումենի ինստիտուտից այն մասին, որ 1997թ. հունվարից սկսվում է այդ ծրագրի մշակման առաջին փուլը, և ինձ առաջարկում են մասնակցել դրան: Առաջին փուլն ավարտվելու է այս տարվա օգոստոսին, իսկ սեպտեմբերի սկզբին նրա կատարողները հրավիրվում են Երուսաղեմ՝ քննարկելու կատարվող աշխատանքի արդյունքները: Նկատեմ, որ Անդրկովկասից ես միակն եմ, որ ստացել է նման առաջարկություն և ներառվել այդ Ծրագրի մեջ:

Հաշվի առնելով այդ Ծրագրի կարևորությունը՝ հարկ եմ համարում կրկին Ձեր ուշադրությունը հրավիրել այս Ծրագրի վրա, մանավանդ որ այն այժմ որոշակիացվել է և պարունակում է նոր դրույթներ: Առաջին փուլում (1997թ. հունվար-օգոստոս) նախատեսվում է մշակել հետևյալ պրոբլեմը՝ «Մեծ Մերձավոր Արևելքը Գլոբալ աշխարհաքաղաքական համակարգի շրջանակներում»: Նախատեսվում են հետևյալ թեմաները:

1.Պրոֆեսոր Ջեկոբ Լանդաու, Երուսաղեմի հրեական համալսարանի Հարրի Տրումենի ինստիտուտի ղեկավարներից՝ «Հարաբերությունները Թուրքիայի և Կենտրոնական Ասիայի նորանկախ պետությունների և Ադրբեջանի միջև»:

2. Պրոֆեսոր, դոկտոր Նիկոլայ Հովհաննիսյան, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն՝ «Հայաստանի դիրքորոշումը տարածաշրջանային միջազգային հարաբերությունների համակարգում»:

3. Դր. Ղալի Օդեհ, Հորդանանի Արքայական գիտական ընկերություն՝ «Հարաբերությունները Արաբական երկրների՝ Սիրիայի, Եգիպտոսի, Հորդանանի, Լիբանանի և վերոնշյալ նորանկախ պետությունների միջև»:

4. Դր. Ռուվեն Ենոք, Հարրի Տրումենի ինստիտուտ, Իսրայել՝ «Միջազգային հարաբերություններըԿովկասում»:

5. Դր. Վլադիմիր Մեսամեդ, Հարրի Տրումենի ինստիտուտ, Իսրայել՝ «Հարաբերությունները Իրանի և Կենտրոնական Ասիայի նորանկախ պետությունների միջև»:

Միաժամանակ փաստաթղթում հանձնարարվում է. «Յուրաքանչյուր մասնակից պետք է ուշադրություն դարձնի տարածաշրջանի պետությունների հետ Իսրայելի հարաբերություններին»:

Սրան հետևելու են Ծրագրի գիտական մշակման հաջորդ փուլերը, որոնց արդյունքները և հանձնարարականները կտրվեն պետական համապատասխան մարմիններին:

Ինձ ուղարկված նամակի ուղեկցող համառոտ փաստաթղթում արտահայտվում են որոշ տեսակետներ, որոնցից մի քանիսի վրա կցանկանայինք հրավիրել Ձեր ուշադրությունը:

1. Փաստաթղթի հեղինակները՝ Լանդաուն, Մեսամեդը, Ենոքը և Օդեհը, Լեռնային Ղարաբաղի կոնֆլիկտի վերաբերյալ այն միտքն են արտահայտում, որ «Չնայած կոնֆլիկտը ժամանակավորապես և արհեստականորեն սառեցվել է, այդուհանդերձ, կոնֆլիկտը մնում է գլխավոր ապակայունացնող գործոնը, որը վտանգի տակ է դնում Ադրբեջանի գոյատևումը որպես անկախ պետություն»:

2.Նրանք նաև ընդգծում են. «Մենք կարևոր ենք համարում վերլուծել զանազան ռեգիոնալ և միջազգային տերությունների հարաբերությունները քննարկման ենթակա երկրների հետ՝ հասկանալու համար ենթատարածքում նրանց ուղղակիորեն կամ անուղղակիորեն ներգրավման չափերը, նրանց արտաքին քաղաքականության, բարոյական աջակցության և այլ խողովակներով»:

3. Փաստաթղթի հեղինակները տեղյակ են պահում, որ Ծրագիրը բաղկացած է լինելու հինգ թեմատիկ միավորից, որոնցից ամենակարևորը վերջինն է. «Վերջին կամ եզրափակիչ միավորը քննարկելու է Մեծ Մերձավոր Արևելքի մեջ միավորվելու ապագա միտումները և Կենտրոնական Ասիայի ու

Անդրկովկասի պետությունների զարգացման գլխավոր ուղղությունները համագործակցության և մակրոռեգիոնի ու գլոբալ ասպարեզում ինտեգրվելու պայմաններում»:

Այս փաստաթուղթը և կոնկրետ Ծրագիրն ուշագրավ են մի քանի առումով:

Առաջին, Ծրագրի հեղինակները, ավելի ճիշտ նրանց հետևում կանգնած ուժերը, Լեռնային Ղարաբաղի կոնֆլիկտը համարում են գլխավոր վտանգը Ադրբեջանի՝ որպես անկախ պետության գոյությանը: Դրանից տրամաբանորեն հետևում է, որ այդ կոնֆլիկտը պետք է լուծել՝ ելակետ ունենալով Ադրբեջանի՝ որպես անկախ պետության անվտանգության ապահովումը և գլխավոր ապակայունացնող գործոնից, այսինքն՝ Լեռնային Ղարաբաղի կոնֆլիկտից անպայմանորեն ձերբազատվելը: Հայերի ազգային շահերը մղվում են հետին պլան:

Երկրորդ, Ծրագրի հեղինակներն ըստ էության չեն թաքցնում «Մեծ Մերձավոր Արևելքի մակրոշրջանով» ոչ մերձավորարևելյան, միջազգային այլ ուժերի շահագրգռվածությունը: Այդ է վկայում Ծրագրի հեղինակների այն տեսակետը, որ իրենք կարևոր են համարում նաև պարզաբանել միջազգային ուժերի՝ պետությունների հարաբերությունները Մեծ Մերձավոր Արևելքի պետությունների հետ և այդ տարածաշրջանում նրանց ներգրավված լինելու աստիճանը: Մենք չենք կասկածում, որ տվյալ դեպքում խոսքը առաջին հերթին ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Չինաստանի, Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի մասին է:

Երրորդ, կասկած չի հարուցում, որ Ծրագրի հետևում կանգնած ուժերը լի են վճռականությամբ հասնել Մերձավոր Արևելքի, Արևմտյան Ասիայի, Անդրկովկասի և Կենտրոնական Ասիայի ինտեգրացմանը, ըստ երևույթին ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական, թեև վերջինս առայժմ շատ ամորֆ է ներկայացվում:

Մենք այն տպավորությունն ենք ստացել, որ ԱՄՆ-ում, թերևս նաև Արևմտյան Եվրոպայի որոշ երկրներում, Թուրքիա-

յում և Իսրայելում կան ուժեր, որոնք, ելնելով ուժերի նոր հավասարակշռությունից, գտնում են, որ եկել է քարերը հավաքելու ժամանակը:

Ձեզ, հարգելի՛ պրեզիդենտ, երկրորդ Հուշագիրը հղելու շարժառիթը նոր ձևավորվող «Մեծ Մերձավոր Արևելքի Մակրոռեգիոնում» Հայաստանի շահերի, նրա ազգային անվտանգության լավագույնս ապահովման մտահոգությունն է: Այդ նույն մտահոգությամբ ղեկավարվելով՝ մենք կմասնակցենք Ծրագրի մշակմանը և նրա արդյունքների քննարկմանը՝ հայկական տեսակետներ ներկայացնելու և հնարավորության սահմաններում հայկական շահերը պաշտպանելու, ինչպես նաև սույն Ծրագրի մասին ավելի մանրամասն և առարկայական պատկերացում կազմելու համար:

26. ԳԵՐՄԱՆԻԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՆ 1878 ԹՎԱԿԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ

Զեկուցագիր

1996թ. հոկտեմբերի 23-25-ը Գերմանիայում տեղի ունեցավ միջազգային գիտաժողով՝ նվիրված «Գերմանիան, Հայաստանը և Թուրքիան 1878 թ. մինչև մեր օրերը» հիմնահարցին:

Գիտաժողովի կազմակերպիչներն էին Գերմանիայի Բոխումի համալսարանը և Հայ-գերմանական ընկերությունը: Գիտաժողովին մասնակցում էին մասնագետներ Հայաստանից, ԱՄՆ-ից, Ադրբեջանից և Գերմանիայից, այդ թվում և գերմանահպատակ թուրք մասնագետներ:

Գիտաժողովում ընթերցվեց 25 զեկուցում, որից յոթը՝ Հայաստանի մասնագետների կողմից:

Գիտաժողովում քննարկված հարցերը կարելի է բաժանել երեք խմբի:

Առաջին. Հայ-թուրքական հարաբերությունները XIXդ. վերջում և XX դ. սկզբում և Գերմանիան:

Ուշադրության կենտրոնում Հայոց ցեղասպանության, թուրքական ղեկավարության հանցագործության, Թուրքիայի ղեկավարության կողմից այն չճանաչելու և հայերին փոխհատուցում տալու հարցերն էին:

Միաժամանակ նշվեց և դատապարտվեց կայզերական Գերմանիայի դերը Հայոց ցեղասպանության հարցում: Ընդգծվեց այն միտքը, որ Գերմանիան որպես Օսմանյան կայսրության դաշնակից միակ պետությունն էր, որ իրական հնարավորություն ուներ կանխելու կամ կանգնեցնելու այդ ոճիրը, սակայն ելնելով մերձավորարևելյան քաղաքականության իր շահերից՝ նա դա չարեց: Միաժամանակ նշվեց, որ Առաջին համաշխարհային պատերազմի վերջում որոշակի հակասություններ առաջացան Գերմանիայի և Թուրքիայի միջև Անդրկովկասի հարցում:

Այս խնդիրներին էին առնչվում Հայաստանի գիտնականների՝ Վարդգես Միքայելյանի, Հակոբ Հակոբյանի, Բաբկեն Հարությունյանի, ինչպես նաև ԱՄՆ-ից Ռիչարդ Հովհաննիսյանի զեկուցումները:

Կցանկանայինք առանձնացնել երկու զեկուցում:

Առաջինը Մուստաֆա Գենչերի՝ գերմանահպատակ երիտասարդ թուրք մասնագետի զեկուցումն էր՝ նվիրված հայ-թուրքական հակամարտության պատճառների բացահայտմանը: Դա օբյեկտիվ ուսումնասիրություն էր, անաչառ և նման չէր թուրքական պատմագրության մեջ տիրապետող այն տեսակետին, որը ժխտում է Հայոց ցեղասպանությունը: Մուստաֆա Գենչերը ընդունեց, որ տեղի է ունեցել Հայոց ցեղասպանություն, և դրա համար նա մեղադրեց թուրքական կառավարությանը: Ինչ վերաբերում է պատճառներին, ապա նա շատ հստակ ընդգծեց, որ հայերի ազատասիրական ձգտումները բախվեցին Օսմանյան կայսրության ամբողջականության պահպանման խնդրին: Եվ այդ հարցը, ինչպես ընդգծեց Մ.Գենչերը, լուծվեց հայերին ոչնչացնելու ուղիով:

Երկրորդը Արա Սարաֆյանի (ԱՄՆ) և Հիլմեր Կայզերի

(Գերմանիա) զեկուցումներն էին՝ խարսխված արխիվային, գլխավորապես թուրքական, նորահայտ փաստաթղթերի վրա: Հենց այս փաստաթղթերի հայտնաբերումը, ուսումնասիրությունը և վերլուծությունը նրանց հիմք տվեց վճռականորեն պնդելու, որ Հայոց ցեղասպանությունը ծրագրված բնույթ է կրել, և դա եղել է թուրքական կառավարության՝ հայերի նկատմամբ վարած քաղաքականության նպատակակետը:

Այս երկու երիտասարդ մասնագետները լուրջ աշխատանք են տանում արխիվային նյութերի հայտնաբերման և անաչառ ուսումնասիրության ուղղությամբ, և կասկած չկա, որ նրանց ուսումնասիրությունները ծանր հարված կլինեն թուրքական պաշտոնական տեսակետին և թուրքական պատմագիտության մեջ տիրապետող մտայնությանը, թե Հայոց ցեղասպանություն չի եղել:

Գիտաժողովում ըստ էության ոչ ոք չառարկեց, որ երիտթուրքերը 1915թ. իրագործել են հայերի ցեղասպանություն: Եվ դա հիմք տվեց պրոֆեսոր Բերդ Բոնվենչին ամփոփելիս եզրահանգում կատարելու, որ բոլոր մասնակիցներն ընդունում են, որ 1915թ. կատարվել է ցեղասպանություն: Եվ միայն մեկ մասնակից՝ պրոֆեսոր Ֆիքրեթ Ադանիրը, որը գերմանահպատակ թուրք է, տեղից թույլ ձայնով արձագանքեց, թե «ոչ բոլորն են դա ընդունում»:

Ինչ վերաբերում է Գերմանիայի մեղսակցությանը և պատասխանատվությանը, ապա գերմանացի պատմաբանները չփորձեցին դա հերքել: Նրանք դա ընդունեցին:

Հատուկ ուշադրություն դարձվեց պանթուրքիզմը և նրա նպատակները ժամանակակից փուլում հարցին: Այս հիմնահարցը հանգամանորեն լուսաբանվեց հայ գիտնականների՝ Հռիփսիմե Կորխմազյանի, Անուշ Հովհաննիսյանի և Նիկոլայ Հովհաննիսյանի զեկուցումներում և դրանց շուրջ ծավալված քննարկման ընթացքում:

Նշվեց, որ Թուրքիան ԽՍՀՄ-ի փլուզումից հետո խիստ ակ-

տիվացրել է իր քաղաքականությունը Անդրկովկասում և Միջին Ասիայում: Թուրքիան ձգտում է իրականացնել իր երազանքը՝ իր շուրջը համախմբել և իր հսկողության տակ պահել բոլոր թուրքալեզու ժողովուրդներին և ստեղծել մի անընդմեջ շղթա Բալկաններից Փոքր Ասիայով մինչև Չինաստան և Սիբիր: Դա մեծ վտանգ է ներկայացնում Ռուսաստանին, Իրանին, արաբական երկրներին, ինչպես նաև Չինաստանին: Պանթուրքիզմի վտանգն ակնհայտ է և խիստ մեծ է Հայաստանի համար, որը՝ որպես ոչ թուրք և ոչ մուսուլմանական երկիր, պատնեշի պես կանգնած է պանթուրքիզմի ճանապարհին: Ուստի պանթուրքիզմի գլխավոր խնդիրներից մեկը հայկական պատնեշի վերացումն է այս կամ այն ձևով, որը սպառնալիք է Հայաստանի ազգային անվտանգությանը:

Ընդգծվեց նաև այն միտքը, որ պանթուրքիստները XX դարը համարում են թուրքերի դար:

Գերմանացի մասնագետներն այս հարցում փաստորեն գրավեցին պասիվ, կարելի է ասել նույնիսկ չեզոք դիրք՝ թողնելով, որ վիճաբանությունն ընթանա մեր և գերմանահպատակ թուրք պատմաբանների միջև, որոնցից հատկապես ակտիվ էր Ֆիքրեթ Ադանիրը: Նա փորձում էր ժխտել ժամանակակից փուլում պանթուրքիզմի առկայությունը, նսեմացնել կամ արժեզրկել հայ մասնագետների կողմից օգտագործված աղբյուրները, վկայակոչումները և այլն: Դա նրան չհաջողվեց, ուստի Ադանիրը շեշտը դրեց այն մտքի վրա, թե Թուրքիան չի ծրագրում բոլոր թուրքական պետությունները, այդ թվում և Ադրբեջանն ու միջինասիական նախկին խորհրդային հանրապետությունները միավորել մեկ միասնական պետության մեջ:

Հայ մասնագետների կողմից ընդգծվեց, որ պանթուրքիզմը անպայման չի նշանակում մեկ միասնական թուրքական պետության ստեղծում, որ պանթուրքիզմը կարող է իրագործվել նաև աստիճանական ինտեգրացման, ինչպես նաև այլ ուղիով: Որպես տարբերակներից մեկն ընդգծվեց այն մոդելը, որ թուրքալեզու

հանրապետությունները ձևականորեն պահպանում են իրենց անկախությունը, սակայն Թուրքիան դառնում է քաղաքական ղեկավար կենտրոն, կոորդինատոր և Անկարան կորոշի թուրքական պետությունների քաղաքականությունը: Այս ձևակերպման դեմ որևէ առարկություն չեղավ:

Երրորդ- Գերմանիան, Թուրքիան, Ադրբեջանը և Հայաստանը:

Կարելի է ասել, որ այս թեման մշտապես շոշափվում էր գիտաժողովում, անկախ այն բանից, թե ինչ հարց էր քննարկվում: Քննարկումները հանգեցրին հետևյալ եզրակացություններին:

Գերմանիան շարունակում, խորացնում և ընդլայնում է իր ավանդական բարեկամական կապերը Թուրքիայի հետ: Դա կապված է այն մեծ նշանակության հետ, որ Գերմանիան տալիս է Մերձավոր և Միջին Արևելքին: Գերմանիան ձգտում է ունենալ ազդեցիկ դիրքեր այս տարածաշրջանում և ցանկանում է իր ներթափանցումը Մերձավոր Արևելք իրականացնել Թուրքիայի միջոցով:

Մյուս կողմից՝ Գերմանիան իր գլոբալ քաղաքականության մեջ այժմ մեծ տեղ է հատկացնում Անդրկովկասին և ձգտում է իր դիրքերն ամրապնդել նաև այստեղ: Այդ նպատակը Գերմանիան փորձում է իրականացնել՝ օգտագործելով Ադրբեջանին, ինչպես նաև Վրաստանին:

Այսպիսով, Թուրքիան և Ադրբեջանը դառնում են այն երկու հենասյուները, որոնց վրա հենվելով՝ Գերմանիան ձգտում է ամրապնդել իր դիրքերը և ազդեցությունը անդրկովկասյան- մերձավորարևելյան տարածաշրջանում:

Ընտրությունը կատարելով հօգուտ Թուրքիայի և Ադրբեջանի՝ Գերմանիան ըստ էության ունի հակահայկական դիրքորոշում: Գերմանական կողմի զեկուցումներում անվերապահորեն պաշտպանվում էին Ադրբեջանը և նրա դիրքորոշումը Հայաստանի նկատմամբ և Լեռնային Ղարաբաղի հարցում: Նրանց կողմից չդատապարտվեց Հայաստանի և ԼՂՀ-ի շրջափակումը

Թուրքիայի և Ադրբեջանի կողմից: Ըստ էության ոչ մի դրական խոսք չասվեց Հայաստանի և հայերի մասին: Պաշտպանվում էին թուրքական և ադրբեջանական կոնցեպցիաները:

Հայաստանի պատվիրակները, բանավիճելով Գերմանիայի պատվիրակների հետ, ապացուցում էին Ղարաբաղի հայ բնակչության պայքարի օրինաչափ և արդար լինելը:

Մյուս կողմից՝ հայ մասնագետները քննարկման առարկա դարձրին այն հարցը, որ Գերմանիան ուժեղ ճնշում է գործադրում Հայաստանի և ԼՂՀ-ի վրա՝ պահանջելով, որ նրանք զիջումների գնան և ընդունեն թուրք-ադրբեջանական պահանջները: Նշվեց նաև, որ արևմտաեվրոպական ոչ մի պետություն այդպես ճնշում չի գործադրում Հայաստանի և ԼՂՀ-ի վրա և այդպես անվերապահորեն չի պաշտպանում Թուրքիային և Ադրբեջանին, ինչպես Գերմանիան: Դրա հետ մեկտեղ հայ մասնագետները գերմանացի մասնագետների ուշադրությունը հրավիրեցին այն հանգամանքի վրա, որ Ադրբեջանում հայտնվել է մեծ քանակությամբ զենք՝ գերմանական արտադրության, որ իրագործվում է Թուրքիայի և թուրքական զանազան ֆիրմաների միջոցով:

Ընդհանուր տպավորությունն այն է, որ Գերմանիան մեծ հետաքրքրություն է ցուցաբերում մեր տարածաշրջանի նկատմամբ և առաջիկայում կակտիվացնի իր քաղաքականությունը՝ իր քաղաքական և ռազմաստրատեգիական դիրքերն ամրապնդելու համար: Սակայն մինչ այդ Գերմանիայի ղեկավարությունը, հավանաբար, ցանկանում է իմանալ մասնագետների կարծիքը նման գիտաժողովներ կազմակերպելու միջոցով:

31. X. 1996

27. ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՇՈՒՐՋԸ ԴԵՊՔԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1.Ամենայն հավանականությամբ 1997 թվականի առաջին կիսամյակը կդառնա Լեռնային Ղարաբաղի հարցի ուժային կարգավորման շրջան, որը պայմանավորված է տնտեսական՝ նավթային, և քաղաքական գործոններով: Այս հարցում համընկնում են և մերձեցել են հիմնական գործող պետությունների՝ ԱՄՆ-ի, Ռուսաստանի և Արևմտյան Եվրոպայի (Ֆրանսիայի, Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի) շահերը: Նրանք կփորձեն, Հայաստանի և Ղարաբաղի թևերը ոլորելով, ստիպել նրանց ընդունել Ղարաբաղի հարցի լուծման իրենց տարբերակը:

2. Կասպիական նավերի օգտագործման նախապատրաստական աշխատանքներն արդեն ավարտվել են, և նավթային հզոր մոնոպոլիաներն այլևս չեն կարող սպասել կամ հետաձգել այդ նավթի արդյունահանումը և արտահանումը, որը միլիարդավոր դոլարների շահույթ է բերելու: Նրանք այդ պատճառով պատրաստ են սրբելու և տանելու իրենց ճանապարհին կանգնած ամեն մի խոչընդոտ, այդ թվում և ռուսական ու ղարաբաղյան:

3. Ռուսական խոչընդոտը վերացվել է այն բանից հետո, երբ նավթային մոնոպոլիաները համաձայնվեցին թույլատրել Ռուսաստանին իր բաժինն ունենալ կասպիական նավթից, իսկ ապա նաև համաձայնվեցին, որ նավթն արդյունահանվի հյուսիսային կամ ռուսական նավթամուղով: Դրա համար որպես գին Ռուսաստանն Արևմուտքին և Ադրբեջանին վճարում է իր պատրաստակամությունը պաշտպանելու Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը ոչ միայն դեկլարացիաներով, այլև գործնականում, և չպաշտպանել Ղարաբաղի՝ Ադրբեջանից անկախանալու միտումները: Այլ կերպ ասած, հայերի՝ Հայաստանի և Ղարաբաղի վրա արևմտյան ճնշումին կավելանա ռուսականը:

4. Հայկական (ղարաբաղյան) խոչընդոտը ռուսական օգնությամբ կոտրելու դեպքում հնարավորություն կբացվի ձեռնամուխ լինելու հիմնական նավթամուղի՝ Կասպից ծով-Ղարաբաղ-Հայաստան-Թուրքիա- Միջերկրական ծով- Ջեյհան կառուցմանը: Արևմուտքը, Թուրքիան և Ադրբեջանը երբեք չեն հրաժարվի նավթամուղի այդ տարբերակից, որը նրանց համար ավելի կարևոր է, քան թե հյուսիսայինը՝ ռուսականը:

Սա Ղարաբաղյան կոնֆլիկտի լուծման արագացման դրդապատճառներից մեկն է:

Կա նաև հարցի քաղաքական կողմը:

5. ԱՄՆ-ի համար ղարաբաղյան հարցի շուտափույթ լուծումը կապված է քաղաքական հետևյալ ասպեկտների հետ:

ա) ԱՄՆ-ը դրանով փորձում է հաստատել իր դիրքերը և իմիջը որպես աշխարհի առաջատար պետություն, որը միակն է, որ կարող է լուծել բոլոր քաղաքական կնճռոտ հարցերն աշխարհի բոլոր մասերում: ԱՄՆ-ում երկար ժամանակ Բիլ Քլինթոնին մեղադրում են, որ նա թույլ պրեզիդենտ է, որը չի կարողանում հաստատել և իրականացնել ԱՄՆ-ի՝ որպես աշխարհի միակ առաջատար պետության առաքելությունը: Քլինթոնի արտակարգ եռանդուն և ուժային գործողությունները արաբա-իսրայելական և բոսնիական կոնֆլիկտի գործում պետք է ապացուցեին այդ տեսակետի սխալ լինելը և ցույց տային, որ ԱՄՆ-ը ի վիճակի է լուծելու ամեն մի կոնֆլիկտ: ԱՄՆ-ի դիրքորոշումը ներկա փուլում Ղարաբաղի հարցի նկատմամբ պետք է դիտարկել այդ կոնտեքստում: Դա է ապացուցում նաև ԱՄՆ-ի նոր պետական քարտուղար Մադլեն Օլբրայթի՝ հունվարի 9-ի հայտարարությունն այն մասին, որ ԱՄՆ-ը կենսական շահ ունի Եվրոպայում, Մերձավոր Արևելքում, Աֆրիկայում և անգամ Լեռնային Ղարաբաղում:

բ) Լեռնային Ղարաբաղի հարցի կարգավորումով ԱՄՆ-ը հույս ունի բարելավելու Հայաստանի և Թուրքիայի հարաբերությունները (բլոկադայի վերացում և այլն), դրանով թուլացնելու

Հայաստանի կախվածությունը Ռուսաստանից, Իրանից և իրանական միջանցքից, Իրանի քաղաքական և տնտեսական մեկուսացման ուժեղացում և Թուրքիայի՝ Անդրկովկաս և Միջին Ասիա ներթափանցելու պրոցեսի արագացում:

գ) Սակայն ԱՄՆ-ը Ղարաբաղի հարցը չի ցանկանում լուծել բացառապես, ըստ թուրք-ադրբեջանական տարբերակի, հօգուտ Ադրբեջանի և ամբողջովին ի վնաս Հայաստանի: ԱՄՆ-ում հասկանում են, որ հեռանկարի առումով դա իրենց այնքան էլ ձեռնտու չէ: Այդ պատճառով էլ ԱՄՆ-ը ձգտում է Ղարաբաղին տալ հնարավորին չափ բարձր ստատուս և հարաբերական անկախություն: Ըստ ԱՄՆ-ի պլանի՝ Ղարաբաղը միայն որոշ իմաստով է լինելու Ադրբեջանի տարածքում: Դա կոչվելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն՝ առանց նշելու կամ շեշտելու ինքնավարություն բառը: Նրա կապը Ադրբեջանի հետ լինելու է գլխավորապես հորիզոնական և ոչ թե ուղղաձիգ, ԼՂՀ-ն պահպանելու է իր զինված ուժերը, Լաչինի միջանցքը լինելու է այս կամ այն կերպ հայերի հսկողության տակ, նույնիսկ կարող է ունենալ իր ներկայացուցչությունները արտասահմանյան որոշ երկրներում և այլն:

Այս մասին ինձ ընդհանուր գծերով տեղյակ պահեց դեռևս 1995թ. դեկտեմբերին ԱՄՆ-ի պետական դեպարտամենտում մեր հանդիպման ժամանակ Հայաստանի և Ադրբեջանի գծով ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի պատասխանատու աշխատող (куратор) Քրիստոֆեր Սաբիլան: Դրանից հետո ԱՄՆ-ի դիրքորոշումը չի փոխվել:

6. Ռուսաստանը, Ադրբեջանից (և Արևմուտքից) ստանալով առավելագույնը նավթի հարցում, փոփոխության է ենթարկում իր քաղաքականությունը ԼՂՀ-ի, հետևաբար և Հայաստանի հարցում:

Սակայն հարկ է նշել, որ Ռուսաստանի ղեկավարությունն այնպես միաձույլ չէ, ինչպես ԱՄՆ-ինը: Ռուսաստանում կան իշխանության երեք-չորս կենտրոններ: Ներկա փուլում ԼՂՀ-ի

հարցում ամենայն հավանականությամբ հաղթանակ տարան այն ուժերը, որոնք ներկայացնում են նավթային կոմպլեքսը և դրա հետ կապված ֆինանսաբանկային շրջանները՝ օգտվելով Ելցինի հիվանդությունից և բացակայությունից:

Ռուսաստանում կան ուժեր, որոնք հասկանում են Հայաստանի ստրատեգիական կարևորությունը: Սակայն դրանք թույլ գտնվեցին և մղվեցին հետին պլան:

Առաջին պլան եկան այն ուժերը, որոնք գտնում են, որ Հայաստանը գտնվում է Ռուսաստանի գրպանում, այլընտրանք չունի և չի կարող այլ տեղ գնալ: Ուստի, ինչպես նրանք են կարծում, Հայաստանին և ԼՂՀ-ին լքելով՝ իրենք կարող են Ադրբեջանին վերադարձնել Ռուսաստանի գիրկը, Ադրբեջանում տեղակայել ռուսական զորքեր, կարկատել նրա՝ Ադրբեջանի արտաքին սահմանները և կանխել Ադրբեջանի մերձեցումը Արևմուտքի հետ:

Սակայն նրանք սխալվում են իրենց հաշիվներում:

Նախ, գնացքն արդեն մեկնել է, և Ռուսաստանին չի հաջողվի Ադրբեջանին հետ բերել և նրան դնել այնպիսի դրության մեջ, ինչպես Հայաստանը և Վրաստանն են: Ադրբեջանի մերձեցումը Արևմուտքի և Թուրքիայի հետ շատ հեռու է գնացել, Ադրբեջանն ավելի լայն հնարավորություններ ունի մանևրելու և ռուսական ճնշմանը դիմակայելու:

Երկրորդ, Ռուսաստանում սխալվում են, երբ կարծում են, որ Հայաստանում երկու ռազմական բազաներ ձեռք բերելուց հետո Թուրքիայի հարևանությամբ Հայաստանը տեղ չունի գնալու և ստրուկի նման կապված է լինելու Ռուսաստանի հետ, որը կարող է արհամարհել Հայաստանի ազգային շահերը:

Վերևում նշված Ղարաբաղի պրոբլեմի լուծման ամերիկյան տարբերակը, որը Ղարաբաղը ձևականորեն ճանաչում է Ադրբեջանի մաս, սակայն իրականում թողնում է հայերի և նրանց իշխանությունների ձեռքում՝ կապված Հայաստանի հետ, կարող է ազատել Հայաստանի ձեռքերը և նրան տալ գործո-

դությունների ազատություն: Այդ դեպքում անիմաստ է դառնում հայտարարել, թե Հայաստանի և Ռուսաստանի հարաբերությունները ստրատեգիական բնույթ են կրում, ինչպես նաև անիմաստ է դառնում ռուսական ռազմական բազաների հետագա գոյությունը Հայաստանում: Քանի որ սերտ հարաբերությունները Ռուսաստանի հետ չեն կարող երաշխիք լինել Ղարաբաղի ինքնուրույն, դե ֆակտո ինքնուրույն լինելուն, և հայերը կրկին արյունով ձեռք բերված տարածք են կորցնում, ապա տրամաբանական և անխուսափելի է դառնում Հայաստանի հեռացումը Ռուսաստանից և մերձեցումը Արևմուտքին, որը կբացի թուրքական միջանցքը Հայաստանի համար: Իսկ թուրքական միջանցքն ավելի կարևոր է, քան թե իրանականը: Համենայն դեպս, Հայաստանը կարող է օգտվել երկու միջանցքներից՝ իրանականից, որը Հայաստանը դուրս կբերի Պարսից ծոց և արաբական երկրներ, և թուրքականից, որը Հայաստանը դուրս կբերի Արևմտյան Եվրոպա և դարձյալ արաբական աշխարհ: Դրա շնորհիվ կնվազի Չեչնիայում ծեծ կերած և ստորացված Ռուսաստանի դերը, և Հայաստանի համար կստեղծվի նոր գեոպոլիտիկական իրադրություն, որից Հայաստանի ղեկավարությունը ճկունություն և հեռատեսություն ցուցաբերելու դեպքում կարող է վարպետորեն օգտվել և ծառայեցնել Հայաստանի պետական շահերին: Իսկ ռուսական գործոնին պետք է տալ այնքան նշանակություն, ինչքան նա իրոք արժանի է՝ առանց ավելացնելու կամ պակասեցնելու: Եվ այս մասին պետք է հասկացնել ռուսական կողմին: Այդ են պահանջում մեր ազգային անվտանգության, տնտեսական զարգացման և միջազգային հարաբերություններում արժանի տեղ գրավելու շահերը:

Ղարաբաղի հարցի լուծման՝ Արևմուտքի և Ռուսաստանի կողմից նախատեսված տարբերակը չի համապատասխանում Իրանի շահերին: Դա կհանգեցնի ԱՄՆ-Թուրքիա-Իսրայել խմբի դիրքերի ուժեղացմանը տարածաշրջանում և Իրանի հետագա մեկուսացմանը:

Բացի դրանից, Ադրբեջանի հետագա ուժեղացումը սպառնալիք է Իրանի տարածքային ամբողջականությանը՝ նկատի ունենալով Ադրբեջանի հավակնությունները Իրանական Ադրբեջանի նկատմամբ, նրանց միավորվելու ծրագրերը:

Եվ եթե Հայաստանը անվերապահորեն ընդունի կամ համաձայնվի Ղարաբաղի հարցի վերոհիշյալ տարբերակի հետ, ապա Իրանը ամենայն հավանականությամբ կփոխի իր քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ: Նա կփորձի ճնշում գործադրել Հայաստանի կառավարության վրա և ապակայունացնել ներքաղաքական վիճակը: Չպետք է բացառել նաև նրա կողմից Հայաստանի երկու կառավարություններին իշխանությունից հեռացնելու փորձերը:

Պարսիկներն այդ բնագավառում դարավոր հարուստ փորձ ունեն:

10 հունվարի 1997թ.

28. ԴՌՆԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ ԴԵՊԻ ՄԻՋԻՆ ԱՍԻԱ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍ

1997թ. ապրիլի 4-6-ը ԱՄՆ-ի Ինդիանայի համալսարանում՝ Բլումինգտոնում, կայացած «Դռների բացումը դեպի Միջին Ասիա և Անդրկովկաս. Հաջող գիտական փոխանակումների բանալիներ» գիտաժողովի և նրանում քննարկված հարցերի մասին:

I

ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի համապատասխան բաժինը և Ինդիանայի համալսարանի ղեկավարությունն ինձ հրավիրել էին մասնակցել և ելույթ ունենալ այդ գիտաժողովում: Թեման ինձ թվաց հետաքրքիր, և ես այդ մասին տեղյակ պահեցի Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին: Նշված թեման նրան նույնպես թվաց կարևոր, և ինձ խորհուրդ տվեց անպայման մասնակցել այդ կարևոր գիտաժողովին: Եվ ես մեկնեցի ԱՄՆ՝ Բլումինգտոն՝ Ինդիանայի հա-

մալսարան: Ես ծանոթ էի նրա ղեկավարությանը և մի քանի պրոֆեսորների:

Գիտաժողովը կազմակերպվել էր ԱՄՆ-ի Պրոֆեսորների միջազգային ասոցիացիայի (NAFSA) նախաձեռնությամբ:

Գիտաժողովին մասնակցում էին.

1. ԱՄՆ-ի մոտ քսան համալսարանների՝ Հարվարդի, Քեմբրիջի, Բոստոնի, Բրաունի, Պենսիլվանիայի, Վաշինգտոնի, Այովայի, Արկանզասի, Օկլահոմայի, Լա Վեռնի, Իլլինոյսի պրոֆեսորներ, քաղաքագետներ, պատմաբաններ, տնտեսագետներ, բանասերներ և այլն:

2. Միջազգային զանազան կազմակերպությունների՝ Համաշխարհային բանկի, ԱՄՆ- ի Ինֆորմացիոն գործակալության (USIA), որը շատ ազդեցիկ և մեծ ֆինանսական հնարավորություններ ունեցող կազմակերպություն է, Գիտության միջազգային հետազոտական և փոխանակման (IREX)[80] և այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ:

3. Միջին Ասիայի՝ Ուզբեկստանի, Թուրքմենիայի, Ղրղըզըստանի, Ղազախստանի, Անդրկովկասի՝ Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի (տողերիս հեղինակը) մասնագետներ:

4. ԱՄՆ-ում հավատարմագրված մի շարք երկրների դիվանագիտական ներկայացուցիչներ: Ներկա էր նաև Թուրքեստան հորջորջվող Չինաստանի Սինցզյան նահանգի՝ ազգությամբ թուրք պրոֆեսոր:

II

Գիտաժողովի կենտրոնական, եթե ոչ ամենակենտրոնական հարցերից մեկը դարձավ գիտաժողովի տարօրինակ անվանման՝ «Դռների բացում դեպի Միջին Ասիա և Անդրկովկաս», էության և դրա հետ կապված տվյալ երկու տարածաշրջանների նկատմամբ ԱՄՆ-ի քաղաքականության պարզաբանումը:

---

[80] Ես այդ կազմակերպության հրավերով 1990թ. մի քանի ամսով եղել էի ԱՄՆ-ի գիտական կենտրոններում:

Այդ հարցում որոշակի պարզություն մտցրեց ՆԱՖՍԱ-ի կողմից հրատարակված Ծրագիր-պրոսպեկտը, որտեղ տրված էր հետևյալ սահմանումը. «Նախկին Խորհրդային Միության կազմալուծումից ի վեր համագործակցության հնարավորությունները Միացյալ Նահանգների և Միջին Ասիայի ու Անդրկովկասի այժմ անկախ երկրների միջև հասել են վիթխարի չափերի»: Այս թեզը որպես ելակետային դրվեց առաջին նիստում, որը կոչվում էր «Հայացք Միջին Ասիայի և Անդրկովկասի վրա» քննարկվող հարցերի հիմքում: Ծրագրում նշված է, որ նպատակն է ներկայացնել «Ժամանակակից Միջին Ասիան և Անդրկովկասը պատմական կոնտեքստում և քննության առնել այդ տարածությունների քաղաքական, տնտեսական և սոցիալ-կուլտուրական խնդիրները»:

ԱՄՆ-ի ներկայացուցիչները գիտաժողովում միահամուռ այն տեսակետն արտահայտեցին, որ այդ երկու տարածաշրջաններն էլ շատ կարևոր և նշանակալից են ԱՄՆ-ի համար: Դա նրանց կարծիքով կապված է փոփոխված ռեգիոն աշխարհի և այն նոր կարևոր դերի հետ, որ արդեն խաղում են Միջին Ասիան և Անդրկովկասը:

Սակայն, ըստ նրանց, կա մի հանգամանք, որը խոչընդոտում է դոնների բացումը: Դա իզոլյացիոնիզմի որոշ դրսևորումն է երկուստեք՝ ԱՄՆ-ի և Միջին Ասիայի ու Անդրկովկասի կողմից, որն անվանվեց նեոիզոլյացիոնիզմ: Նեոիզոլյացիոնիզմը որպես մտածելակերպ և գործունեություն ամերիկյան քաղաքագետները բնութագրեցին ողբերգություն: Նրանք գտնում են, որ ԱՄՆ-ը և Միջին Ասիայի և Անդրկովկասի երկրները պետք է լայնորեն բացվեն միմյանց հանդեպ և աշխատեն համատեղ:

Սա «դոնների բացման» առաջին և կարևոր նպատակն է ԱՄՆ-ի քաղաքականության մեջ:

Մյուս կարևոր նպատակն է միջինասիական և անդրկովկասյան պետություններում արմատավորել դեմոկրատական համակարգ և այդ երկրները վերածել բաց հասարակությունների:

Վերոհիշյալի հետ միասին գիտաժողովում ամերիկյան

կողմից փորձ արվեց արժևորել և տալ ժամանակակից Միջին Ասիայի ու Անդրկովկասի կարևորության և դերի սահմանումը: Միջին Ասիայի վերաբերյալ հիմնական զեկուցող, Ինդիանայի համալսարանի կենտրոնական Եվրասիական ուսումնասիրությունների դեպարտամենտի պրոֆեսոր Դևին Դե Վեսսենը ասաց, որ Միջին Ասիան իսլամական քաղաքակրթության բաստիոնն է: Նա մի կողմից պատնեշի դեր է կատարում ընդդեմ ռուսական ներթափանցման, իսկ մյուս կողմից որոշակի իմաստով դիմակայում է իրանական ֆունդամենտալիզմի տարածմանը: Ադրբեջանն իր էթնիկական-թուրքական հանգամանքի բերումով հարում է այդ բաստիոնին:

Ինչ վերաբերում է Անդրկովկասին, ապա այն նմանվեց Սև և Կասպից ծովերի միջև ընկած մի կոկորդի, որը կարևոր է մի կողմից՝ Ռուսաստանի և Եվրոպայի, իսկ մյուս կողմից՝ Մերձավոր Արևելքի երկրների համար: Եվ այն պետությունը, որն ազդեցիկ դիրքեր կունենա այդ տարածաշրջանում, նա կտիրապետի նաև այդ կոկորդին և մատի մեկ սեղմումով կարող է տարածաշրջանի երկրներին շնչահեղձ անել:

Այս հարցերը քննարկելիս միջինասիական և ամերիկյան մասնագետների ելույթներում կարմիր թելի նման անցնում էր հակառուսական միտումը: Նրանց կողմից նկատվում էր անթաքույց միտում՝ այս երկու տարածաշրջանները լրիվ անջատել Ռուսաստանից, դուրս բերել ռուսական ազդեցության ոլորտից, հակադրել Ռուսաստանին և անքակտելի կապել ԱՄՆ-ի հետ և պահել նրա հովանու ներքո:

Գիտաժողովում մեր ելույթի կապակցությամբ շոշափվեց նաև պանթուրքիզմի հարցը: Այստեղ անսպասելիորեն դրսևորվեց մի մոտեցում: Պրոֆեսորներ Վիլյամ Ֆիերմանը, Դևին Դե Վեսսեն (Ինդիանայի համալսարան), Ջոել Ջենսվոլդը (Օկլահոմայի համալսարան), Ասուման Բաշկանը (ազգությամբ թուրք, Պենսիլվանիայի համալսարան) և ուրիշներ, գտնում են, որ այժմ իրադրությունը փոխվել է, և որ այն էյֆորիան, որ գոյություն

ուներ 90-ական թվականների սկզբներին, այժմ անցել է, և պանթուրքիզմն այնպիսի ուժգնությամբ և ցցուն չի դրսևորվում, ինչպես նախկինում: Բաշկանն ինձ հետ զրույցի ժամանակ ընդհանրապես մերժեց պանթուրքիզմը: Ջոել Ջենսվոլդի կարծիքով Թուրքիան հաջողություն չունեցավ և չի ունենա պանթուրքիզմի քաղաքականության մեջ, իսկ եթե նա փորձի այդ քաղաքականությունը շարունակել, ապա նա կմնա միայնակ, նրան ոչ մի պետություն չի միանա: Անդրկովկասի ժողովուրդը դեմ է թուրքերի քաղաքականությանը: Այլ բաներ են առևտուրը և տնտեսական գործունեությունը: Այդ բնագավառում նա կարող է հաջողություն ունենալ:

Հետաքրքիր բացատրություն տվեց գիտական ժողովի ղեկավար, թուրքագետ, ռուսերենին լավ տիրապետող և բազմիցս Թուրքիայում և միջինասիական երկրներում եղած Վիլյամ Ֆրիերմանը: Ելնելով իր շփումներից և հետազոտությունների դիտարկումներից՝ նա համոզված է, որ պանթուրքիզմը կամ թուրքլիկը միջինասիական ժողովուրդներն ընկալում են միանգամայն այլ կերպ և տարբեր Թուրքիայում բնակվող թուրքերից: Նրա կարծիքով թուրքլիկի տակ ուզբեկը հասկանում է առաջին հերթին ուզբեկ, ղրղըզը՝ ղրղըզ և այլն և ոչ մի դեպքում Թուրքիայի թուրք: Դեռ ավելին, ինչպես ընդգծեց Վ. Ֆրիերմանը, ուզբեկները և միջինասիական մյուս ժողովուրդները գտնում են, որ իսկական թուրքերն իրենք են, իրենք են նախաստեղծ, մաքուր թուրքերը, թուրքականության իսկական արմատներն իրենք են ներկայացնում:

Ամերիկյան թուրքագետների և քաղաքագետների այս, մենք կասեինք զգուշավոր մոտեցումը մտածելու տեղիք է տալիս և խոսում է ամերիկյան քաղաքականության ավելի հստակեցման և որոշակիության մասին: Հայտնի է, որ ԱՄՆ-ը ԽՍՀՄ-ի փլուզումից հետո փորձում էր Թուրքիային օգտագործել Անդրկովկաս և Միջին Ասիա ներթափանցելու, այնտեղից Ռուսաստանին արտամղելու և Իրանի ներթափանցումը կանխելու համար: Այդ

նպատակով նա ցուցադրաբար պաշտպանում և հովանավորում էր Թուրքիային: Մենք չենք ուզում ասել, որ ԱՄՆ-ը հրաժարվել է այդ քաղաքականությունից: Սակայն, ամենայն հավանականությամբ, հաշվի առնելով միջինասիական ժողովուրդների, առաջին հերթին քաղաքական կառավարող էլիտայի սառը վերաբերմունքը Թուրքիայի գերիշխող դիրքերի նկատմամբ տարածաշրջանում, որի անխուսափելի հետևանքը կլիներ տեղական ղեկավարների իշխանության սահմանափակումը, ԱՄՆ-ի կառավարող շրջաններն ինչ-որ չափով իրենց քաղաքականության շտկում են կատարում և չեն խրախուսում բացահայտ և անզուսպ պանթուրքիզմը:

Մյուս կողմից պետք է ենթադրել, որ մավրը՝ Թուրքիան, ինչ-որ չափով իր դերը կատարեց և այժմ այս հարցում, ընդգծում ենք, այս հարցում, և այն ձևով և այն չափով ԱՄՆ-ին պետք չէ, ինչպես նախկինում:

Եվ, վերջապես, ԱՄՆ-ը ինքն է ձգտում ամբողջությամբ իր վերահսկողության, քաղաքական և տնտեսական ազդեցության ոլորտում պահել Միջին Ասիան և Անդրկովկասը: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ նույնիսկ պանթուրքիզմի էյֆորիայի շրջանում ԱՄՆ-ը չի ենթադրել այդ տարածաշրջանները «հանձնել» Թուրքիային:

Կարծում ենք՝ առաջին հայացքից աննկատ այս փոփոխությունները ԱՄՆ-ի քաղաքականության մեջ և ամերիկա-թուրքական հարաբերություններում՝ կապված պանթուրքիզմի հետ, ուշադրության արժանի են Հայաստանի արտաքին քաղաքականության, հայ-թուրքական, ինչպես նաև տարածաշրջանում ձևավորվող ռեգիոնալ հարաբերությունների առումով:

Գիտաժողովն անդրադարձավ նաև ԱՄՆ-ի համար Անդրկովկասի ստրատեգիական կարևորությանը, երբ ես ուղղակի հարցով դիմեցի Առաջին նիստը վարողներին: Պրոֆեսոր Վիլյամ Ֆրիերմանը պարզաբանեց, որ Անդրկովկասի, ինչպես նաև Միջին Ասիայի ստրատեգիական և տնտեսական կարևորության

հարցում կա երկու Ամերիկա՝ պաշտոնական Ամերիկա, որը ներկայացնում է Սպիտակ տունը, և ֆինանսատնտեսական կամ ֆիրմաների Ամերիկա: Նրա կարծիքով Սպիտակ տունը որոշակի կարևորություն է տալիս Անդրկովկասի ստրատեգիական նշանակությանը, կուզենա ունենալ այնտեղ ուժեղ դիրքեր և չի ցանկանում որևէ մրցակցություն կամ մարտահրավեր իր ազդեցությանը:

Իսկ ինչ վերաբերում է ֆիրմաներին, ապա Անդրկովկասն առայժմ նրանց համար շատ մեծ հետաքրքրություն չի ներկայացնում: Նրանք ավելի շատ հետաքրքրվում են Միջին Ասիայով և այնտեղ հասել են որոշակի հաջողության, որի շնորհիվ կա փոփոխություն նաև ԱՄՆ-ի կառավարության քաղաքականության մեջ:

Կցանկանայինք անդրադառնալ մասնավոր զրույցների ժամանակ արտահայտված երկու կարևոր տեսակետի:

Ալմաթի համալսարանի Քաղաքագիտության ամբիոնի վարիչ Ազըն Կասիմջանովը երկարատև զրույցի ժամանակ փորձում էր այն տեսակետը հիմնավորել, որ Հայաստանը պետք է համագործակցի միջինասիական պետությունների հետ և հեռանա Ռուսաստանից: Նա ուներ խիստ ընդգծված հակառուսական դիրքորոշում: Նա նշում էր, որ նավթը Միջին Ասիայից և Կասպից ծովից չպետք է գնա Ռուսաստան: Ռուսաստանը ուժեղ է, և նավթամուղը տանել նրա տարածքով նշանակում է անձնատուր լինել նրան և թույլ տալ, որ նա մատը դնի նավթամուղի վրա և ուզած ժամանակ խեղդի մեզ: Հայաստանը պետք է պաշտպանի միջինասիական հանրապետություններին այս հարցում: Հայաստանին էլ է ձեռնտու, որ նավթը արտահանվի մի կողմից՝ դեպի Չինաստան, իսկ մյուս կողմից՝ դեպի Իրան և Մերձավոր Արևելք: Դրանից կօգտվի նաև Հայաստանը, նրա տարածքում կարելի կլինի կառուցել նավթավերամշակման գործարան և այլն:

Նա շոշափեց նաև Լեռնային Ղարաբաղի հարցը: Նրա կարծիքով պետք է պահպանել Աբխազիայի, Հարավային Օսեթիայի և

Լեռնային Ղարաբաղի ներկա վիճակը, նոր հաստատված ստատուս քվոն, պետք է երկարացնել ներկա վիճակը և չպետք է պատերազմ սկսել:

Ուշագրավ էր նաև Օհայոյի Կոլումբուս համալսարանի պրոֆեսորի ասիստենտ Էրիկ Լեպիստոյի արտահայտած հետևյալ տեսակետը: Նա լավ գիտեր Ադրբեջանը և անընդհատ շեշտում էր այդ հանգամանքը, բազմիցս երկար ժամանակով ապրել էր Ադրբեջանում, Բաքվի Արմենիքենդ հայկական թաղամասում, եղել էր Նախիջևանում և այլն:

Նա գտնում էր, որ Ադրբեջանի նավթը կարևոր գործոն է: Սակայն դրա հետ միասին նա շեշտեց, որ նավթի պաշարների հարցում կա չափազանցություն: Եվ դրանից հետո նա կատարեց անսպասելի պասաժ: Նա ընդգծեց, որ **այժմ արդեն գործոն է դառնում նաև հայկական ոսկին,** որի շնորհիվ բարձրանում են Հայաստանի կշիռը և նշանակությունը:

Որոշ իմաստով պրովոկացիոն բնույթ էր կրում Ադրբեջանի ներկայացուցիչ Չինգիզ Ահմեդովի ելույթը: Նա փորձեց քննարկման նյութ դարձնել Ռուսաստանի կողմից Հայաստանին գաղտնի զենք մատակարարելու հարցը: Սակայն դա շատ սառը ընդունելություն գտավ գիտաժողովի մասնակիցների կողմից, իսկ նախագահողն ուղղակի չթողեց, որ նա այդ թեման զարգացնի:

Պետք է ենթադրել, որ տվյալ պարագայում ամերիկյան կողմին այդ հարցը չէր հետաքրքրում, և նա չէր ցանկանում, որ գիտաժողովը շեղվի իր գլխավոր խնդրից՝ դռների բացումից դեպի Անդրկովկաս և Միջին Ասիա:

Ես իմ պատասխան ելույթում տվեցի անհրաժեշտ տեղեկություններ այդ հարցի վերաբերյալ՝ նշելով, որ մարտի վերջերին Մոսկվայում կայացած ԱՊՀ երկրների ղեկավարների գագաթաժողովում, չնայած Ադրբեջանի գործադրած ջանքերին, Հայաստանին զենք մատակարարելու հարցը չմտցվեց օրակարգ: Մեր կողմից նշվեց նաև Լևոն Տեր-Պետրոսյան- Հեյդար-Ալիև հանդիպման և նրանց համատեղ պրես-կոնֆերանսի մասին, որի

համար գիտաժողովի մասնակիցներն ինձ իրենց շնորհակալությունն էին հայտնում:

III

Գիտաժողովի կենտրոնական հարցերից մեկը դարձավ ԱՄՆ-ի համալսարաններում Միջին Ասիայի և Անդրկովկասի պետություններից երիտասարդներին ուսման հրավիրելու հարցը: Այդ երկրներից ոչ միայն գիտնականներին և ասպիրանտներին, այլև երկրորդ-երրորդ կուրսերի ուսանողներին երկու տարով ուսման հրավիրել ԱՄՆ՝ հոգալով դրա հետ կապված բոլոր ծախսերը, դռները դեպի Անդրկովկաս և Միջին Ասիա բացելու ամերիկյան քաղաքականության ամենակարևոր բաղադրամասերից մեկն է: Խնդիր է դրվում շեշտակի մեծացնել հրավիրվող ուսանողների քանակը, նրանց՝ ամերիկյան արժեքներին հաղորդակից դարձնելը և ինտեգրումը ամերիկյան համայնքին և առօրյային:Մեզ թվում է, որ նրանք Միջին Ասիայում և Անդրկովկասում, այդ թվում և Հայաստանում, ձգտում են ստեղծել ամերիկյան արժեքների վրա ձևավորված մի խավ, որը վճռական դիրքեր է գրավելու այդ երկրների պետական, քաղաքական, հասարակական և տնտեսական կյանքում: ԱՄՆ-ը, ամենայն հավանականությամբ, ակնկալում է, որ 10-15 տարի անց Միջին Ասիայի և Անդրկովկասի պետություններում պետական կառավարման ամենաբարձր պաշտոնների գլխավոր հավակնորդները լինելու են ամերիկյան համալսարաններում ձևավորված երիտասարդ մասնագետները, դրանից բխող բոլոր հետևանքներով:

Հետևաբար՝ այդ հարցը ոչ թե կրթական հարց է, ինչպես կարող է թվալ առաջին հայացքից, այլ պետական-քաղաքական, որը չի կարելի անուշադրության մատնել:

Այդ կապակցությամբ ցանկանում ենք ասել հետևյալը: Գիտաժողովի տարբեր երկրների ներկայացուցիչները, օգտվելով առիթից, նշում էին, թե որ երկրից քանի ուսանող է սովորում ամերիկյան համալսարաններում: Պարզվեց, որ Հայաստանն այդ

առումով գրավում է վերջին տեղերից մեկը: Ես նրանց հավաստիացրի, որ մեր երկիրն անպայման շտկումներ կմտցնի այդ հարցում:

IV

Գիտաժողովում քննարկված հարցերի բնույթը և ելույթների նախնական վերլուծությունը մեզ հանգեցրին հետևյալ եզրակացություններին:

1.Տեղի է ունենում և խորանում ուժերի նոր տեղաբաշխում Միջին Ասիայի և Անդրկովկասի տարածաշրջանում, որի հիմնական ուղղվածությունը ԱՄՆ-ի գերակայության հաստատումն է:

2. Դռների բացման քաղաքականությունը դեպի Միջին Ասիա և Անդրկովկաս ուղղակիորեն առնչվում է «Մեծ Մերձավոր Արևելքի» նոր աշխարհաքաղաքական մակրոշրջանի ձևավորման ծրագրի հետ: Այդ ծրագրի երկու ենթաշրջանները, ըստ նրանց հեղինակների, կազմում են Անդրկովկասը և Միջին Ասիան: Այդ ծրագրի հետևում դարձյալ կանգնած է ԱՄՆ-ը:

3. Նա ձգտում է Անդրկովկասը և Միջին Ասիան լրիվ մեկուսացնել Ռուսաստանից, ինչպես նաև Իրանի ազդեցությունից:

4. Հավանաբար սկսվել է կամ սկսվում է մի փուլ, երբ ԱՄՆ-ը, Թուրքիայի հնարավորությունները օգտագործելով հանդերձ, փորձում է սահմանափակել և նվազագույնի հասցնել նրա ազդեցությունն այդ երկու տարածաշրջաններում: ԱՄՆ-ը, համաձայնվելով նրան թույլ տալ տնտեսական ոլորտում, բայց ոչ քաղաքական, մանավանդ ինքնուրույնաբար և իր սեփական քաղաքական նպատակները հետապնդելով:

5. Ակնհայտ է դառնում ամերիկյան արտաքին քաղաքականությանը բնորոշ մի գիծ ևս՝ համբերատար և երկարատև աշխատանքով, կրթական համակարգի օգնությամբ պատրաստել ապագա պետական գործիչներ, որոնք որոշ ժամանակ անց կարող են գալ իշխանության գլուխ, և որոնք Միջին Ասիայի և Անդրկովկասի պետությունների քաղաքական կուրսը, ինչպես

ենթադրվում է, կհարմարեցնեն ԱՄՆ-ի քաղաքական կուրսի պահանջներին, որով նոր հնարավորություններ կստեղծվեն՝ երկուստեք դռները միմյանց առջև մինչև վերջ բացելու համար:

6. Համոզված ենք, որ Անդրկովկասյան և Միջինասիական տարածաշրջաններում ձևավորվում է նոր քաղաքական մթնոլորտ, որն ուղղակի առնչություն ունի Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության, նրա անկախ գոյության և քաղաքական մեծ խաղերում տանուլ չտալու հետ:

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյան:

4-6 ապրիլ 1997թ.

Բլումինգտոն

ԱՄՆ

29. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՆ՝ ՉԵԶՈՔՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

12 նոյեմբեր, 1997թ., տե՛ս «Республика Армения», с.1-2

Հարգելի՛ ընթերցող:

Այս ենթաբաժնի հեղինակը տողերիս գրողն է՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Գիտության վաստակավոր գործիչ Նիկոլայ Հովհաննիսյանը, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի նախկին տնօրենը (1995-2006թթ.), Հայ արաբագիտական դպրոցի հիմնադիրը և այլն, և այլն:

Նվաստս համարձակություն ունեցավ ներկայացնելու իր ուրույն տեսակետը Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի լուծման վերաբերյալ՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ այդ հարցի վերաբերյալ տարբեր մարմիններ և տարբեր հեղինակներ ներկայացրել են տարբեր տեսակետներ, որոնք շատ հեռու են իրատեսական լինելուց: Լեռնային Ղարաբաղի կոնֆլիկտի քաղաքական լուծման վերաբերյալ ներկայացվել են մոտ 15 տարբերակներ: Թվարկենք դրանք.

1.Ադրբեջանի դիրքորոշումը: 2. Հայաստանի դիրքորոշումը: 3. Լեռնային Ղարաբաղի դիրքորոշումը՝ կոնֆլիկտի անմիջական «հեղինակների» ու մասնակիցների դիրքորոշումը: 4.Փաթեթային կամ փուլ առ փուլ տարբերակը: 5. Տարածքների փոխանակություն: 6.Ասոսացված պետություն: 7.Սինթեզային տարբերակ : 8. Կիպրոսյան մոդել: 9.Չեչենական տարբերակ: 10. Ընդհանուր պետություն: 11.Փարիզ-Քեյ Վեստյան համաձայնագիր: 12.Մադրիդյան համաձայնագիր: 13. Պյեր Լելուշ- Աննա Պլաչիո առաջարկություն: 14.Անկախության տարբերակ: 15. Չեզոքության տարբերակ:

Մենք որոշեցինք թողնել այդ տարբերակը, թեև հիմա ժամանակները և մոտեցումները փոխվել են, և այլ տեսակետներ են այժմ շրջանառության մեջ դրվել, այդուհանդերձ, պատմագիտության առումով դա կարող է որոշակի հետաքրքրություն ներկայացնել: Ուստի մենք որոշեցինք այն ներկայացնել հայ և ոչ միայն հայ ընթերցողի ուշադրությանը՝ հուսալով, որ այն կարող է հետաքրքրություն ներկայացնել հասարակական որոշ խավերի համար:

Այժմ կանգ առնենք մեր կողմից ներկայացված «Լեռնային Ղարաբաղի չեզոքության կարգավիճակը» տեքստի լուսաբանության վրա:

Լեռնային Ղարաբաղի հարցի լուծմանը մոտենալիս հարկ է նկատի ունենալ երկու սկզբունքային իրողություն:

Առաջին, Լեռնային Ղարաբաղը, անցնելով հրի և կրակի միջով, գոյություն ունի **որպես պետական միավորում**: Նա ապացուցել է իր քաղաքական, տնտեսական և ռազմական կենսունակությունը և արդեն ապրում է իր սեփական օրենքներով:

Երկրորդ, աշխարհագրությունը կանխատեսել է մեր համատեղ գոյությունը Ադրբեջանի հետ որպես հարևաններ և անտեսել այդ հանգամանքը կամ վերանալ դրանից և տեսք ընդունել, որ այդպիսի գործոն գոյություն չունի, ոչ միայն լուրջ չէ, այլև վտանգավոր: Մենք դատապարտված ենք ապրելու մեկ միաս-

նական անդրկովկասյան տարածաշրջանում, որից տրամաբանորեն հետևում է կոնֆլիկտի այնպիսի լուծում, որը փակի առճակատման այդ գլուխը, չփոխանցի կոնֆլիկտի լուծումը մյուս սերունդներին և հաստատի խաղաղ գոյակցության modus vivendi, որը ժամանակին կվերածվի համագործակցության: Լուծումը պետք է լինի այնպիսին, որ որևէ մեկի ազգային արժանապատվությունը չանարգվի:

Այժմ Հայաստանում և Ղարաբաղում, ինչպես նաև Ադրբեջանում, թեև այնտեղ մի փոքր այլ կերպ, շարունակվում է բանավեճը Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի շուրջ:

Մենք մեր «Ղարաբաղյան կոնֆլիկտը. փուլերը, մոտեցումները և լուծման տարբերակները»[81] գրքում քննարկել ենք պրոբլեմի լուծման ինը տարբերակ, որ առաջարկել են տարբեր կազմակերպություններ և քաղաքական գործիչներ: Մենք հիմա էլ ենք գտնում, որ նրանք պարունակում են գաղափարներ, որոնք կիրառելի են այդ նպատակի իրականացման համար:

Սակայն այժմ, հաշվի առնելով նոր իրադրությունը, մենք առաջարկում ենք ղարաբաղյան կոնֆլիկտի լուծման մեր տարբերակը, որը հիմնված է չեզոքության սկզբունքի վրա: Մենք այնքան միամիտ չենք, որ չկարծենք, թե չեն լինի առարկություններ կամ քննադատություն այս տարբերակի հասցեին: Սակայն, ինչպես մենք ենթադրում ենք, նախ՝ նա կունենա նաև կողմնակիցներ, և ապա նա կարող է նպաստել, որ վիճաբանությունն ընդունի որոշակի բնույթ:

Մյուս կողմից՝ մենք մեզ հաշիվ ենք տալիս, թե որքան դժվար է վերակողմնորոշել արդեն գործող դիվանագիտական մեքենան մի ուղղությունից դեպի մյուսը: Բայց արժե դրան դիմել:

Եվ այսպես:

---

[81] **Николай Оганесян**, Карабахский конфликт. Этапы, Подходы, Варианты решения, Ереван, , 1997, с.50-68.

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՆ՝ ՉԵԶՈՔՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱ-ՎԻՃԱԿ» ՏԱՐԲԵՐԱԿԸ

I. ԿԱՐԳԱՎԻՃԱԿ (ՍՏԱՏՈՒՍ)

1.Հայաստանը, Ադրբեջանը և Լեռնային Ղարաբաղը հռչակում են Լեռնային Ղարաբաղի չեզոքությունը, որն այսուհետ կոչվելու է.

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՉԵԶՈՔ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ԼՂՉՀ):

2. ԼՂՉՀ-ի երաշխավորներն են ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հինգ մշտական անդամները՝ ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Չինաստանը. Ռուսաստանի Դաշնությունը և Ֆրանսիան, ինչպես նաև Ադրբեջանը և Հայաստանը:

3. ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն իրավասու է իրականացնելու քաղաքական, տնտեսական, ինչպես նաև ռազմական պատժամիջոցներ ԼՂՉՀ-ի չեզոքության կարգավիճակը խախտող կողմերի դեմ:

II. ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

1.Ադրբեջանն իր զորքերը դուրս է բերում ԼՂՉՀ-ի և Շահումյանի գրավված տարածքներից:

2. Իսկ Լեռնային Ղարաբաղի զորքերի դուրսբերման հարցը պետք է քննարկվի:

3. Լաչինի շրջանն արտաքին աշխարհի հետ ԼՂՉՀ-ի կապերն ապահովելու նպատակով համարել Լեռնային Ղարաբաղի հետ ասոցացված տարածք:

III. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳՈՏԻ

1.ԼՂՉՀ-ի շուրջը ստեղծվում է անվտանգության ապառազմականացված գոտի:

2. Անվտանգության գոտում տեղակայվում են խաղաղության և անվտանգության պահպանման միջազգային ուժեր, որոնք հաստատվում են ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կող-

մից և գործում ՄԱԿ-ի հովանու ներքո:

3. Միջազգային խաղաղապահ ուժերի թվաքանակը և իրենց ռազմական կոնտինգենտը տրամադրող պետությունների ցուցակը հաստատում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը՝ Ադրբեջանի, Հայաստանի և ԼՂՀ-ի համաձայնությամբ:

IV. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍՏԱՏՈՒՍ

1.ԼՂՀ-ն հայտարարվում է ազատ տնտեսական գոտի՝ հավասար հնարավորություններով բոլոր շահագրգիռ կողմերի համար:

V. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

1. ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը նրա հինգ մշտական անդամների առաջարկությամբ, Ադրբեջանի և Հայաստանի հավանությամբ և ԼՂՀ-ի համաձայնությամբ նշանակում է ԼՂՀ-ի գծով ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի Լիազոր ներկայացուցիչ:

2. ԼՂՀ-ի գծով ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի Լիազոր ներկայացուցչի պարտականությունների մեջ մտնում են.

ա) հետևել ԼՂՀ-ի չեզոքության ստատուսի պահպանմանը,

բ) հետևել մարդու իրավունքների պահպանմանը ԼՂՀ-ում,

գ) ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին յուրաքանչյուր տարի հաշվետվություն ներկայացնել ԼՂՀ-ի դրության մասին:

3. ԼՂՀ-ն ունի իր սահմանադրությունը, բարձրագույն օրենսդիր և գործադիր մարմինները:

ա) ԼՂՀ-ի պրեզիդենտ, որն ընտրվում է ԼՂՀ-ի քաղաքացիների ընդհանուր քվեարկությամբ,

բ) Ազգային ժողով (պառլամենտ),

գ) ԼՂՀ-ի կառավարություն, որը նշանակվում է պրեզիդենտի կողմից Ազգային ժողովի հավանությամբ:

ԼՂՀ-ի տերիտորիայում գործում են ԼՂՀ-ի պրեզիդենտի և Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքները, որոնք չեն հա-

կասում միջազգային իրավունքի նորմերին և ԼՂՀՀ-ի չեզոքության կարգավիճակին:

Պրեզիդենտը և Ազգային ժողովը իրավասու են ընդունելու օրենքներ և որոշումներ, ներքին քաղաքականության, տնտեսության, սոցիալական ապահովության, առողջապահության, լուսավորության, մշակույթի, գիտության, կրթության և այլ հարցերի վերաբերյալ:

ԼՂՀՀ-ն ունի իր ոստիկանական ուժերը՝ ներքին կարգուկանոնը պահպանելու համար:

ԼՂՀՀ-ն ունի իր զինված ուժերը, որի թվաքանակը և կազմը որոշվում են՝ ելնելով ԼՂՀՀ-ի անվտանգության ապահովման խնդիրներից, համաձայնեցված ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հետ:

VI. ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐ

1. ԼՂՀՀ-ի կարգավիճակի հաստատման հետ վերացվում է Հայաստանի և ԼՂՀՀ-ի շրջափակումը, և բացվում են բոլոր ցամաքային, ջրային և օդային ուղիները:

2. ԼՂՀՀ-ն ապահովում է նրա տարածքով անցնող կամ անցնելիք բոլոր տեսակի տրանսպորտային ուղիների՝ ավտոճանապարհների, երկաթուղիների, ավիաուղիների, նավթամուղների, գազամուղների և այլն անվտանգությունը և ազատությունը:

VII. ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ

ԼՂՀՀ-ի բնակիչները ստանում են ԼՂՀՀ-ի քաղաքացիություն, որը ճանաչվում է միջազգային հանրության կողմից:

ԼՂՀՀ-ի քաղաքացիներ կարող են լինել այն անձինք, ովքեր ծնվել են ԼՂՀՀ-ում, կամ որոնց ծնողներից մեկն ունի ԼՂՀՀ-ի քաղաքացիություն:

Այլ շրջաններից եկած անձանց ԼՂՀՀ-ի քաղաքացիություն է շնորհվում, եթե նրանք այնտեղ բնակվել են անընդմեջ, ոչ պակաս, քան հինգ տարի:

ԼՂՀՀ-ի քաղաքացիները, ըստ իրենց ցանկության, կարող են ստանալ Հայաստանի կամ Ադրբեջանի քաղաքացիություն:

VIII. ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ

1.ԼՂՀՀ-ում կարող են իրենց ներկայացուցչությունները բացել Ադրբեջանը, Հայաստանը, Վրաստանը, Իրանը, Թուրքիան, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հինգ մշտական անդամ-երկրները և այլ շահագրգռված պետություններ:

2. ԼՂՀՀ-ն իր հերթին կարող է իր ներկայացուցչությունները բացել Ադրբեջանում, Հայաստանում, Վրաստանում, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հինգ մշտական անդամ-պետություններում, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, այլ երկրներում:

3. ԼՂՀՀ-ն կարող է դառնալ տարածաշրջանային տնտեսական, էկոլոգիական, մշակութային, կրթական, առողջապահական և նման այլ կազմակերպությունների անդամ:

IX. ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐ

1.ԼՂՀՀ-ի մայրաքաղաքը Ստեփանակերտ քաղաքն է:

2. ԼՂՀՀ-ն ունի իր Դրոշը:

3. ԼՂՀՀ-ն ունի իր Օրհներգը:

4. ԼՂՀՀ-ն ունի իր Զինանշանը:

X .ԳՐԱՆՑՈՒՄ ՄԱԿ-ՈՒՄ

1. ԼՂՀՀ-ի կարգավիճակի վերաբերյալ սույն փաստաթուղթը գրանցվում է որպես ՄԱԿ-ի պաշտոնական փաստաթուղթ:

2. Նա ունի միջազգային իրավական ուժ:

Մենք այստեղ ներկայացրինք ընդհանուր գաղափարը՝ բնավ չցանկանալով մտնել առանձին դրույթների, հոդվածների և բաժինների մանրամասնությունների մեջ:

Մեր նպատակն էր Ղարաբաղյան կոնֆլիկտի լուծման վերաբերյալ մեր տեսակետը խտացված ներկայացնել Հայաս-

տանի, Ադրբեջանի և ԼՂՀ-ի հասարակության և կառավարության դատին և հարուցել շահագրգիռ, անկանխակալ քննարկում:

XI. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՉԵԶՈՔՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մեր կողմից ներկայացված Լեռնային Ղարաբաղի չեզոքության կարգավիճակն առաջացրեց լայն արձագանք թե՛ Հայաստանում և թե՛ արտասահմանյան մի շարք երկրներում, մասնավորապես ԱՄՆ-ում, Ռուսաստանում, Իսրայելում-Երուսաղեմում, Իտալիայում, Ադրբեջանում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Լեհաստանում, Ռումինիայում, Վրաստանում, Միջինասիական նախկին խորհրդային մի շարք հանրապետություններում և այլն:

Սկսենք Հայաստանից:

Հայկական մամուլը, հեռուստատեսությունը և ռադիոն լայնորեն լուսաբանեցին այդ նյութը: Հայ հասարակության տարբեր խավերը ոգևորված էին դրանով: Ինձ շատերն էին շնորհավորում: Մեծ ուշադրություն դարձրեց նաև Երրորդ հանրապետության ղեկավարությունը:

Մեր հոդվածը լույս էր տեսել 1997թ. նոյեմբերի 12-ին «Ռեսպուբլիկա Արմենիա» թերթում ռուսաց լեզվով, որն իր թարմությամբ և համարձակ հարցադրումներով ուղղակի սենսացիա առաջացրեց ոչ միայն Հայաստանում և Ադրբեջանում, այլև ԱՄՆ-ում, Իսրայելում, Ռուսաստանում և այլ երկրներում: Նա լույս տեսավ նաև հայերեն և անգլերեն (Status of Neutrality to Nagorno-Karabakh, «The Yerevan Times», November 22, 26, 1997):

Մեր հոդվածի լույս տեսնելուց երկու-երեք օր անց Հայաստանի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանն իր աշխատավայր հրավիրեց ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի բոլոր ակադեմիկոսներին, թղթակից անդամներին և ինստիտուտների տնօրեններին: Եվ մենք բոլորս ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս

Ֆադեյ Սարգսյանի գլխավորությամբ այցելեցինք Հանրապետության նախագահին: Նա մեզ ներկայացրեց հանրապետությունում տիրող իրավիճակը, հանգամանորեն կանգ առավ արտաքին քաղաքական հանգուցային հարցերի վրա, խոսեց հայ-ռուսական հարաբերությունների և նրանց հեռանկարների մասին՝ ընդգծելով, որ իր հարաբերությունները Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինի հետ շատ լավ են, իդեալական, բոլոր հարցերը լուծվում են սերտ բարեկամության մթնոլորտում, և պատրաստակամություն հայտնեց պատասխանել մեզ հուզող բոլոր հարցերին:

Առաջին հարց տվողը եղավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, **ակադեմիկոս Լևոն Հախվերդյանը**: Ինձ համար շատ անսպասելիորեն նա, դիմելով նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին, հարցրեց. «Երկու օր առաջ թերթում լույս է տեսել պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի հոդվածը «Լեռնային Ղարաբաղին չեզոք կարգավիճակ» տալու մասին»: Դուք, հարգելի՛ նախագահ, տեղյա՞կ եք այդ մասին: Եթե այո, ապա ի՞նչ կարծիքի եք»:

Նախագահ Լևոն Տեր-Պետրոսյան . «Ես ոչ միայն կարդացել եմ, այլև շատ լուրջ ուսումնասիրել: Ես պաշտպանում եմ դա զույգ ձեռքերով, եթե Ադրբեջանի պրեզիդենտ Հեյդար Ալիևը նույնպես պաշտպանի: Ես անգամ պատրաստ եմ Հայաստանի Սահմանադրության մեջ մտցնել հոդված Ղարաբաղի չեզոքության մասին»:

Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա նրա պատասխանը բացասական էր: Հեյդար Ալիևը հրապարակային ոչ մի հայտարարություն չարեց, և ինչպես նշում էր «Հայաստանի Հանրապետություն» պարբերականը. «Բաքվում որդեգրել են բացարձակապես ոչ կառուցողական դիրքորոշում»: Ադրբեջանի Մուսավաթ կուսակցության առաջնորդ Իսա Համբարը «Թուրան» գործակալությանը տված հարցազրույցի ժամանակ հայտարարել է, որ ինքը մերժում է «Հովհաննիսյանի մոդելը, քանի որ դա Լեռնային Ղարաբաղի անկախության մասին է» («Республика Ар-

мения», 21 ноября, 1997): Նույնպիսի ժխտողական դիրքորոշում ընդունեց Ադրբեջանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության ղեկավար Զարդուշտ Ալի-զադեն: Նրա կարծիքով. «Հովհաննիսյանի պլանի նպատակն է օրինականացնել Հայաստանի տարածքային անեքսիոնիստական, նվաճողական և ագրեսիվ քաղաքականությունը» (նույն տեղում):

Սակայն բոլորովին այլ, դրական կարծիքներ հնչեցին ԱՄՆ-ից և Իսրայելից: ԱՄՆ-ի Մերիլենդի համալսարանի առաջատար գիտաշխատող, «Գործընկերներ հանուն խաղաղության » ծրագրի ղեկավարներից մեկը, պրոֆեսոր Բարի Սանդերսը, ծանոթանալով Ղարաբաղի չեզոքության ստատուսի վերաբերյալ իմ առաջարկությանը, կարգադրում է այն մտցնել համակարգչային սերվիս. «…որպեսզի շատերը ծանոթանան և գնահատելու հնարավորություն ունենան»: Այնուհետև նա, դիմելով ինձ, գրում է. «Նիկոլա՛յ, ես տեսնում եմ, որ դու շատ ակտիվ ես եղել Լեռնային Ղարաբաղի կոնֆլիկտի լուծման քո առաջարկությամբ: Եվ ինչն է առավել հետաքրքիր, որ դրան աջակցել են զանգվածային լրատվամիջոցները, և դա հրատարակվել է: Շնորհավորանքներ: Ես չգիտեմ՝ դու կհամաձայնվես ինձ հետ, բայց ես կարևոր եմ համարում, որ մեր տեսակետը լայնորեն տարածվի: Յուրաքանչյուր գաղափարում կարելի է գտնել ինչ-որ բան, որն արժե, որ մտցվի այդ գաղափարի մեջ»:

Շատ կարևոր է նաև Երուսաղեմի հրեական համալսարանի Հարրի Տրումենի անվան խաղաղության ինստիտուտի գործադիր տնօրեն և «Գործընկերներ հանուն խաղաղության» ծրագրի ղեկավար, պրոֆեսոր Էդդի Կաուֆմանի նամակը՝ ուղղված ծրագրի բոլոր մասնակիցներին, որում ասված է. «Ես ակնկալում եմ, որ կկարդաք Հովհաննիսյանի հոդվածը: Հետո մենք պետք է նայենք հնարավոր առաջարկությունների ցանկին՝ արված Նիկոլայի կողմից նրա հոդվածում՝ գրքի համար (նկատի ունի մեր ութնյակի կողմից պատրաստվող գիրքը -Ն.Հ.): Միգուցե մենք խնդրենք նրան դա դնել քննարկման և տեսնենք, թե այլընտ-

ռանքային լուծումներից որը կարող է դառնալ առաջնային: Եկեք ընդունենք կոլեկտիվ որոշում»:

Այդ գիրքը, որի մասին խոսում են Բարի Սանդերսը և Էդդի Կաուֆմանը, և որը նախապատրաստվում էր «Գործընկերներ հանուն խաղաղության» Ծրագրի կատարողների կողմից, և որի մասնակիցներից մեկը ես էի, լույս տեսավ 1997 թ. ԱՄՆ-ում Մերիլենդի համալսարանի կողմից ռուսերեն՝ «Этнополитические конфликты в Закажказье: Их истоки и пути решения»- «Էթնոքաղաքական կոնֆլիկտները Անդրկովկասում: Նրանց ակունքները և լուծման ուղիները»[82]: Նրանում զետեղված էր նաև իմ հոդվածը»:

Այդ շրջանում մեկը մյուսի հետևից լույս տեսան Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին նվիրված իմ երեք մենագրությունները: Իսկ 2004թ. Երևանում անգլերեն հրատարակվեց իմ «Ղարաբաղյան հիմնախնդիրը: Ազատության և անկախության փշե ճանապարհը»՝ չորրորդ մենագրությունը, որում ուշադրության կենտրոնում էին Ադրբեջանին Ղարաբաղի բռնակցման պատճառները, մի պետության, որը մինչև 1918թ. ընդհանրապես գոյություն չի ունեցել: Ուստի և Ղարաբաղը լիիրավ իրավունք ունի միանալու մայր հայրենիքին:

Մեր այդ մենագրական ուսումնասիրությունները բարձր են գնահատել բազմաթիվ մասնագետներ, որոնք ազդվել են նրա այդ աշխատություններից, ինչպես Համբուրգի համալսարանի պրոֆեսոր, իրավագետ Օտտո Լուխտերհանդը, արաբ հեղինակներ Սալիհ Զահր ալ-Դինը (Լիբանան), Ֆուադ Հասան Հաֆիզը (Եգիպտոս) և այլն: Իսկ «Ղարաբաղի կոնֆլիկտը. Ազատության և անկախության փշե ճանապարհը» իմ մենագրությունը 2011թ. անգլերենից թարգմանվեց իտալերեն և հրատարակվեց Հռոմում Իտալիայի Արտաքին գործերի նախարարության Միջազգային

[82] Этнополитические конфликты в Закавказье: Их истоки и пути решения. Центр Международного развития и конфликтологии. Мерилендский университет, Колледж Парк, Мерилендм США, 1997, 177с.

դիվանագիտական ակադեմիայի առաջարկությամբ: Գիրքը թարգմանել է «Արտույտների ազարակը» հանրահայտ գրքի հայազգի հեղինակ Անտոնիո Արսլանի դուստրը՝ Սեսիլիա Վերոնեզեն:

2011թ. մայիսի 25-ին Հռոմում տեղի ունեցավ իտալերեն հրատարակված իմ վերոնշյալ հինգերորդ գրքի ներկայացումը Իտալիայի դիվանագիտական հանրությանը և պատմաբան-մասնագետներին՝ Իտալիայի Արտաքին գործերի նախարարության Միջազգային դիվանագիտական ակադեմիայի գիտաժողովների սրահում օտարերկրյա դիվանագետների, պատմաբանների, պրոֆեսորների և իմ մասնակցությամբ, իսկ մայիսի 28-ին Միլանում՝Իտալիայի հայերի միության կենտրոնատեղիում, որոնց իտալական կողմի հրավերով մասնակցեցի և զեկուցումով հանդես եկա ես:

Քննարկմանը ելույթ ունեցան Իտալիայի ականավոր գիտնականներ, պրոֆեսորներ Ա.Պոլիտին, Ա. Պոլիանդին և Մ.Բայսը: Նրանք շատ բարձր գնահատեցին իմ մենագրությունը, որը. «…ինչպես նրանք նշեցին, իտալերեն լեզվով հրատարակված առաջին գիտական աշխատությունն է Իտալիայում՝ նվիրված Արցախի հիմնախնդրին՝ ընդգծելով, որ այն պարունակում է շատ հարուստ, միանգամայն ճշգրիտ և վստահելի տեղեկություն, ինչը կնպաստի Իտալիայում գիտականորեն հիմնավորված կարծիք կազմելու հայերի մեծ հերոսամարտի,այդ կնճռոտ հարցի պատճառների, բնույթի, ընթացքի ու լուծման հեռանկարների մասին»: Նրանք միաժամանակ դատապարտեցին ադրբեջանցիների իրագործած հայկական ջարդերը Սումգայիթում, Կիրովաբադում և Բաքվում: Ա.Պոլիտին նշեց. «…միանգամայն համոզիչ են հայ գիտնականի հայեցակարգային եզրահանգումները՝ շեշտելով, որ հայ պատմաբանի աշխատությունը մեծ տպավորություն է գործում, և ինքը լավատես է և գտնում է, որ արդի քաղաքական զարգացումներն ունեն այնպիսի միտումներ, որ Ղարաբաղի քաղաքական անկախության միջազգային ճանաչումը կասկած չի հա-

րուցում»:

Պրոֆեսոր Ա.Պոլիանդին իմ աշխատության հրատարակությունը իտալերեն համարեց կարևոր իրադարձություն, որը նոր հորիզոններ է բացում հիմնահարցի ներքին ծալքերը բացահայտելու և հիմնավոր եզրակացություններ կատարելու համար: Իսկ պրոֆեսոր Մ.Բայսն ընդգծում է հայ գիտնականի օգտագործած սկզբնաղբյուրների կարևորությունը, որոնք վկայում են, որ «Արցախը պատմական Հայաստանի անբաժան մասն է, և լուծման միակ օրինական ու տրամաբանական տարբերակը նրա միավորումն է Հայաստանի հետ, և անհնար է նրան պատկերացնել Ադրբեջանի կազմում»:

Գրքի ներկայացումը մեծ արձագանք գտավ դիվանագիտական և գիտական հանրության մեջ, այդ թվում՝ իտալական մամուլում և այլ լրատվամիջոցներում, մասնավորապես Իտալիայի «Եվրասիա» ռազմավարական կենտրոնում և նրա համանուն լրատվական օրգանում: «Եվրասիա» պարբերականի՝ 2011թ. հոկտեմբերի 14-ի համարում գրախոսականով հանդես է եկել կենտրոնի առաջատար մասնագետ, Իտալիայի ականավոր քաղաքագետ Ջուլիանո Լոնգոն: Ահա նրա կարծիքը. «Սահմանամերձ շրջանի այն հիմնահարցը, որը մինչև օրս վշտացնում է հայ ազգին, կարծես անելանելի փակուղի լինի: ՀՀ ԳԱԱ պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանին «Արցախյան հիմնախնդիրը դեպի ազատություն տանող ուղին» 200 էջից պակասն էլ է բավականացրել, որպեսզի հեղինակը հիմնավոր և արդյունավետ կերպով ամփոփի վերոնշյալ տարածաշրջանի բնակիչներին դեպի ինքնորոշում և ազատություն տանող երկարաձիգ և վշտալի ուղու պատմությունը: Գրքի ողջ շարադրանքն իր իսկ պարզության մեջ ունի խոր բովանդակություն: Յուրաքանչյուր գլուխ ինքնին Արցախի պատմության առանձնահատուկ փաստերի վերաբերյալ խոր ուսումնասիրություն է: Գիրքը հիմնավոր պատասխանում է ադրբեջանական կողմի բոլոր հավակնոտ պահանջներին:

Գլխի գլխավոր թեմաներից մեկը իրականում ոչ միայն Բաքվի կառավարության դժգոհությունների անհիմն լինելը բացահայտելն է, այլև Ադրբեջանի՝ իբրև պետության գոյության պատմական հիմքերը կասկածի տակ դնելը: Գիրքն առավել արժևորվում է արծարծված թեմայով, որն անարդարացի անտեսվել է բազմաթիվ պատմաբանների կողմից, ինչպես նաև պատմական փաստերի վերակառուցման աննախադեպ ճշգրտությամբ, և, ի վերջո, այն ոճով, որով հեղինակը նկարագրում է պատմական փաստերը և դրանց հիմնավորումները:

Ողջ աշխատությունը, չնայած արձակի չեզոք ոճին, վկայում է բանիմաց և արհեստավարժ պատմաբանի օբյեկտիվության և գիտական մտքի ուշադրության մասին: Պրոֆեսոր Հովհաննիսյանը կենսունակություն է հաղորդում իր հայրենակիցների ազատության ձգտմանը՝ չանտեսելով գիտական վերլուծության մեթոդը, որն իր ուրույն տեղն է գտել վերոնշյալ աշխատության մեջ»:

Իտալացի դիվանագետների, քաղաքագետների և պրոֆեսորների տեսակետները հայ պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի աշխատության և նրանում տեղ գտած հայեցակարգային դրույթների մասին, կազմում են արցախագիտության օրգանական մասը և վկայում գիտական այդ նոր ուղղության, որի ակունքների մոտ կանգնած է հայ պատմաբանը, կենսունակության մասին:

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի Արցախի չեզոքության պլանի վերաբերյալ մեծ հետաքրքրություն է դրսևորում ԱՄՆ-ի Հյուստոնի, Տեխաս, Ռայս համալսարանի Ջեյմս Բեյքերի հանրային քաղաքականության ինստիտուտի ղեկավարությունը, մասնավորապես դոկտոր Էդվարդ Ջերեջյանը, որը հայ գիտնականին ուղարկած հեռագրում նշում է. «Ամերիկյան քաղաքագետները մեծապես հետաքրքրված են Լեռնային Ղարաբաղի կոնֆլիկտի լուծման հնարավորության ձեր ինքնատիպ ուսումնասիրությամբ» և «Հովհաննիսյանի նախագիծը» համա-

րելով Լեռնային Ղարաբաղի կոնֆլիկտի լուծման ստեղծագործական տարբերակ»՝ նրան «առաջարկում են մինչև 1998թ. մարտ ամիսը պատրաստել մի հոդված: Մենք կանխավայելում ենք Ձեզ հետ միասին այդ կարևոր նախագիծը»[83]: Ես ընդունեցի այդ առաջարկը և նշված ժամկետին ներկայացրի համապատասխան հոդված: Ինստիտուտի տնօրեն Էդվարդ Ջերեջյանը այդ հոդվածը «գնահատում է որպես ներդրում անդրկովկասյան և կասպիական արդի խնդիրների ուսումնասիրության մեջ»:

Ահա այսպիսին են Արցախի չեզոքության կարգավիճակի վերաբերյալ մեր առաջարկած տարբերակի շուրջ ծագած միջազգային արձագանքները:

1998 թ.՝ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հրաժարականից հետո, Հայաստանի Երրորդ հանրապետության նոր ղեկավարությունն անտարբեր գտնվեց չեզոքության հիմքի վրա Լեռնային Ղարաբաղի կոնֆլիկտի կարգավորման տարբերակի նկատմամբ և դրան չանդրադարձավ:

Ես գտնում եմ, որ այդ տարբերակին անդրադառնալը բնավ չէր վնասի ղարաբաղյան հիմնախնդրի արդարացի կարգավորմանը:

Բայց գնացքն այդպես էլ գնաց առանց ուղևորի:

Ափսոս:

[83] Интерес к предложениям армянского ученого растет. Американские политологи хотят сотрудничать в вопросе решения проблемы Карабаха, «Республика Армения», Ереван, 20 декабря 1997 г.

30 .ՔՆՆԱՐԿՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ԱՄՆ-Ի ՍԵՆԱՏՈՐ ՍԵՄ ԲՐԱՈՒՆԲԱԿԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ՔՐԻՍՏԻՆԱ ՌՈԿԿԱՅԻ ՀԵՏ

9 փետրվարի 1998թ.

Վաշինգտոն

I.

ԱՄՆ-ի պետական և քաղաքական գործիչների հետաքրքրությունը Հայաստանի վերջին իրադարձությունների նկատմամբ չի թուլացել: Նրանք մտահոգված են նաև էթնոքաղաքական կոնֆլիկտների լուծման հարցում նոր մոտեցումներ դրսևորելու խնդրով: Դրա վկայությունը հանդիսացավ իմ հանդիպումը Քրիստինա Ռոկկայի հետ, որը տեղի ունեցավ ԱՄՆ-ի սենատոր Սեմ Բրաունբակի նախաձեռնությամբ:

Սենատոր Սեմ Բրաունբակը հանրապետական կուսակցության անդամ է և Սենատի ամենաազդեցիկ գործիչներից: Նա Սենատի արտաքին քաղաքականության հանձնաժողովի ղեկավարներից է, ունի ադրբեջանամետ դիրքորոշում, կողմնակից է Կոնգրեսի 907 բանաձևի վերացմանը: Քրիստինա Ռոկկան հայտնեց, որ սենատորը պատրաստում է առաջարկությունների մի ամբողջ փաթեթ և կուզենար ինձ հետ զրուցել, թե ինչ կարելի է անել այդ բանաձևի վերացման համար:

ԱՄՆ-ի Կոնգրեսի 907 բանաձևն արգելում էր ԱՄՆ-ին ուղղակի օգնություն, այդ թվում՝ ռազմական, ցույց տալ Ադրբեջանին՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ նա, այսինքն՝ Ադրբեջանը, բլոկադայի է ենթարկել Հայաստանին և Լեռնային Ղարաբաղին:

Քրիստինա Ռոկկան զրույցի ընթացքում մի քանի անգամ ընդգծեց, որ **«Հայաստանը Կովկասի բանալի պետությունն է, և որ հնարավոր չէ Կովկասում որևէ հարց լուծել ու հասնել խաղաղության ու կայունության՝ առանց հաշվի առնելու Հայաստանի շահերն ու դիրքորոշումը և, առավել ևս, հակառակ**

Հայաստանի շահերի: Մենք դա լրիվ հասկացել ենք, և սենատորը փորձելու է այդ քաղաքականությունը կիրառել օրենսդրական ակտերի օգնությամբ»:

Նա նշեց, որ իրենք դժգոհ են Պետական դեպարտամենտի քաղաքականությունից, որը հիմնականում կողմնորոշվում է դեպի Ռուսաստանը և ըստ էության հաշվի չի առնում նախկին խորհրդային մյուս հանրապետությունների շահերը: Ըստ Ռոկկայի՝ սենատոր Բրաունբակը Պետական դեպարտամենտի քաղաքականությունը որակում է որպես ռուսակենտրոն և մտադիր է մի շարք օրինագծերի օգնությամբ ճնշում գործադրել կառավարության վրա:

Այնուհետև զրույցն ընթացավ Ղարաբաղի հարցի լուծման շուրջը:

Այն բանից հետո, երբ ես նշեցի, որ Ղարաբաղի հարցում ԱՄՆ-ը պետք է փոխի իր դիրքորոշումը և ընդունի, որ Ղարաբաղը չպետք է ուղղաձիգ ենթակայություն ունենա, նա ըստ էության համաձայնվեց դրա հետ և նշեց, որ այժմ սենատորն այդ ուղղությամբ է աշխատում: Սակայն նրանք կցանկանային ունենալ որոշակի, ճկուն և երկու կողմերի շահերը հաշվի առնող առաջարկություն: Այդ կապակցությամբ Քրիստինա Ռոկկան խոսեց իմ կողմից ներկայացված պլանի մասին, որը նախատեսում է Ղարաբաղին չեզոք կարգավիճակի տրամադրում: Գտնելով, որ այդ պլանը, որի մասին նա արդեն գիտեր, ոչ ստանդարտ ծրագիր է և արժանի լուրջ ուշադրության, Ռոկկան հետաքրքրվեց, թե ինչպիսին է Հայաստանի ղեկավարության և ԱՄՆ-ի հայ համայնքի դիրքորոշումն այդ ծրագրի նկատմամբ: Ես նրան հակիրճ տեղեկություն տվեցի՝ նշելով, որ Հայաստանի դիրքորոշումը դրական է: Ռոկկան դրսևորեց որոշակի տրամադրություն, դեռ ավելին, անհրաժեշտություն այդ հարցում՝ վերանայելու ԱՄՆ-ի կառավարության քաղաքականությունը, սակայն ոչինչ չասաց և չէր էլ կարող ասել, քանի որ դա դեռևս քննարկման և ճշգրտման պրոցեսում է:

Զրույցի ընթացքում Քրիստինա Ռոկկան ցուցաբերեց առանձնակի հետաքրքրություն Կոնգրեսի 907բանաձևի վերացման խնդրին: Նա ինձ ուղղակի դիմեց, թե ինչպես կարելի կլիներ այդ բանաձևի վերացումը կապել Ղարաբաղի հարցի լուծման հետ: Ի պատասխան ես նշեցի հետևյալը. Ադրբեջանը հրաժարվում է իր իրավասությունը Ղարաբաղի վրա տարածելուց և նրան կրկին իր ենթակայության տակ պահելուց, վերացնում է Հայաստանի և Ղարաբաղի բլոկադան, իսկ հայկական կողմը համաձայնվում է, որ վերացվի 907 բանաձևը: Դա ստորագրվում է որպես մեկ փաստաթուղթ: Կարող եմ ասել, որ իմ այս առաջարկությունն արժանացավ դրական գնահատականի:

Ես այս հարցի վրա կցանկանայի ձեր ուշադրությունը հրավիրել, քանի որ, ինչպես ցույց էին տալիս իմ հանդիպումները, ամերիկյան կողմը դրան առանձնակի նշանակություն է տալիս՝ հասկանալով, սակայն, որ այդ բանաձևը հենց այնպես վերացնելը դժվար է, ուստի այն անհրաժեշտ է կապել հայկական կողմի պահանջները ինչ-որ չափով բավարարելու հետ:

Ռոկկան ինձ տեղեկացրեց, որ սենատորը փաստաթուղթ է պատրաստում Հայաստանին տրվող ֆինանսական օգնությունը մեծացնելու համար, սակայն կցանկանային, որ ճշգրտվեր հայկական կողմի հետ, թե այդ հավելումը կոնկրետ ինչ աշխատանքների կատարման հետ պետք է կապված լինի: Մենք Ռոկկայի հետ նշեցինք որոշ բնագավառներ:

II.

Հաջորդ օրը՝ փետրվարի 10-ին, ես հանդիպեցի Gryphon International Միջնորդական կազմակերպության դիրեկտոր Վիլյամ Հոֆֆմանի հետ, վերջինիս խնդրանքով: Ներկայացնում եմ նրա հետևյալ առաջարկությունը՝ որպես Ղարաբաղի և ընդհանրապես Կովկասի հարցերի լուծման տարբերակ: Նա առաջարկեց Կովկասը վերակառուցել ֆեդերալիզմի հիմքի վրա, որի անդամներն են լինելու Հայաստանը, Վրաստանը, Ադրբեջանը, Ղարաբաղը, Աբխազիան և Հարավային Օսեթիան:

Այդ մասին ես հայտնում եմ, քանի որ այստեղ որոշ շրջանակներում սկսվել է զգուշորեն արծարծվել այդ խնդիրը:

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյան

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն: Կոնֆլիկտների Լուծման Հայաստանի Կենտրոնի տնօրեն: Փետրվարի 11, 1998, Վաշինգտոն:

III

ՊԱՐՈՆ ՇԱՀԵՆ ԿԱՐԱՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ

Հայաստանի կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար

Հարգելի՛ պարոն Կարամանուկյան,

1998թվականի մարտի 5-ին՝ ժ. 2.30-ին, նշանակված է իմ ունկնդրումը (Hearing) ԱՄՆ-ի Սենատում, Սենատի Արտաքին գործերի կոմիտեի, Եվրոպական գործերի ենթակոմիտեի և Մերձավորարևելյան և Հարավային Ասիայի գործերի ենթակոմիտեի համատեղ նիստում՝ նվիրված Հայաստանի իրադրությանը և Ղարաբաղի պրոբլեմի լուծմանը: Նախաձեռնությունն ամերիկյան կողմինն է, իսկ անմիջական նախաձեռնողները՝ հանրապետական սենատորներ Սեմ Բրաունբակը և Գորդոն Սմիթը:

Բրաունբակը շատ ազդեցիկ և հեռանկարային սենատոր է, աղրբեջանամետ և կողմնակից Կոնգրեսի 907 բանաձևի վերացմանը: Խնդրում եմ այդ մասին տեղյակ պահել Հայաստանի վարչապետ և նախագահի պաշտոնակատար պարոն Ռոբերտ Քոչարյանին: Եթե կան հարցեր, որ Դուք կցանկանայիք, որ ես ի նկատի ունենամ, ապա, խնդրեմ հայտնեք ինձ ֆաքսով մինչև փետրվարի 28-ը ԱՄՆ-ում Հայաստանի հյուպատոս Արմեն Մելքոնյանին, իսկ դրանից հետո՝ ԱՄՆ-ում մեր դեսպան Ռուբեն Շուգարյանին:

Ես մարտի 12-ին Նյու Յորքից կթռչեմ Մոսկվա, իսկ Երևանում կլինեմ մարտի 13-ին:

31. ԱՄՆ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XXI ԴԱՐԻ ՇԵՄԻՆ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՐՍԻ ՎՐԱ

1997 թ. հոկտեմբերի 16-ին ԱՄՆ-ի Տեխասի նահանգի Հյուստոնի Ռայս համալսարանի Ջեյմս Բեյքերի Հասարակական քաղաքականության ինստիտուտում տեղի ունեցավ գիտական ժողով՝ նվիրված «ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության նախապատվությունները XXI դարի շեմին» պրոբլեմի քննարկմանը:

Ես պաշտոնապես հրավեր էի ստացել Ջեյմս Բեյքերի ինստիտուտի տնօրեն, ականավոր դիվանագետ Էդվարդ Ջերեջյանի կողմից՝ մասնակցելու այդ կոնֆերանսին:

Հիմնական զեկուցողներն էին ինստիտուտի հիմնադիր տնօրեն Էդվարդ Ջերեջյանը, Ռայս համալսարանի պրեզիդենտ Մալքոլմ Գիլլիսը, ԱՄՆ-ի նախկին պրեզիդենտ Ջորջ Բուշը, ԱՄՆ-ի նախկին պետական քարտուղարներ (արտաքին գործերի նախարարներ) Ջեյմս Բեյքերը, Հենրի Քիսինջերը և Ուորրեն Քրիստոֆերը: Առանձին զեկուցումով հանդես եկավ ԽՍՀՄ նախկին պրեզիդենտ Միխայիլ Գորբաչովը:

Նրանցից մի քանիսին ես անձամբ ճանաչում էի ԱՄՆ կատարած իմ գիտական գործուղումների արդյունքում: Այսպես, Ջեյմս Բեյքերի հետ հանդիպել և զրուցել եմ Վաշինգտոնում՝ Վուդրո Վիլսոնի գիտական կենտրոնում, քննարկումների ժամանակ, ականավոր դիվանագետ, Ռայս համալսարանի հիմնադիր տնօրեն Էդվարդ Ջերեջյանի հետ հանդիպել եմ բազմիցս ԱՄՆ-ում և Արաբական Միացյալ Էմիրություններում, Հենրի Քիսինջերի հետ՝ ԱՄՆ-ի նախագահ Ռիչարդ Նիքսոնի հուղարկավորության արարողության ժամանակ և այլն:

Իսկ ԱՄՆ-ի պետական քարտուղար Մադլեն Օլբրայթը, որ այդ ժամանակ ուղեկցում էր Բիլ Քլինթոնին նրա՝ Լատինա-

կան Ամերիկա պաշտոնական այցելության ժամանակ, հատուկ ուղերձով դիմեց կոնֆերանսի մասնակիցներին, որը ցուցադրվեց երկու մեծադիր էկրանների վրա: Կոնֆերանսին մասնակցում էր մոտ 4 000 մարդ, այդ թվում՝ բազմաթիվ ուսանողներ ԱՄՆ-ի տարբեր համալսարաններից, որոնք ուսանում էին միջազգային հարաբերությունների բնագավառում: Նրանց հատուկ էին հրավիրել, որ, ինչպես նրանց դիմեց Ջեյմս Բեյքերը, իրականացնեն ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը XXI դարում:

Կոնֆերանսում քննարկվեցին ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները, խնդիրները և բնույթը XXI դարում, միջազգային հարաբերությունների զարգացման հեռանկարները և ԱՄՆ-ի դերը նրանց ձևավորման մեջ, նոր **մարտահրավերները** և այլ հարցեր:

1.Հիմնական գաղափարն այն էր, որ սառը պատերազմից ԱՄՆ-ը դուրս եկավ հաղթանակով և ըստ էության դարձավ միակ մեծ տերությունը, որը հնարավորություն է ստացել իր ցանկացած ձևով ներազդելու համաշխարհային իրադրության վրա և դառնալու աշխարհի ղեկավար պետությունը: «Հետսառըպատերազմյան աշխարհի գլխավոր գիծը,- նշեց Ուորրեն Քրիստոֆերը, - այն է, որ միջազգային ասպարեզում հաջողությունը կամ ձախողումը կախված է Միացյալ Նահանգներից»: Հենրի Քիսինջերի կարծիքով այսօր ԱՄՆ-ը չունի որևէ թշնամի, այդպիսի ուժ նրա դեմ գոյություն չունի: Նա կարող է ունենալ մրցակիցներ: Այդ կապակցությամբ մեկ առ մեկ քննարկվեցին հավանական թեկնածուները՝ Ճապոնիա, Չինաստան, Ռուսաստան և Արևմտյան Եվրոպա, և պետական քարտուղարները եկան այն եզրակացության, որ նրանցից ոչ մեկը չի կարող լուրջ մրցակից դառնալ ԱՄՆ-ին:

Ուրեմն ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության գլխավոր ուղղությունը հաջորդ դարում պետք է լինի պահպանել և ուժեղացնել ԱՄՆ-ի ղեկավար դերը աշխարհում, որին նրանք հասել են սառը պատերազմի ավարտից, ԽՍՀՄ-ի փլուզումից և Վար-

շավայի պակտի լուծարումից հետո: Աշխարհում գոյություն ունեցող զանազան բարդ խնդիրները և նրանց լուծումները հրամայական են դարձնում ԱՄՆ-ի ղեկավար լինելը:

2.Դրա հետ միասին Ջորջ Բուշը, Ջեյմս Բեյքերը և Հենրի Քիսինջերը գտան, որ ԱՄՆ-ի համաշխարհային ղեկավար դերին վտանգ կարող են ներկայացնել մեկուսացման, իզոլյացիոնիզմի կողմնակիցները ԱՄՆ-ում, որոնք դեմ են ԱՄՆ-ի ակտիվացմանը միջազգային ասպարեզում՝ պահանջելով, որ նա չխառնվի աշխարհի գործերին: Ջորջ Բուշը, դա բնութագրելով որպես վտանգավոր միտում, որը կարող է վնասել ԱՄՆ-ի ազգային շահերին, գտավ, որ դրա դեմ, նման մտադրությունների դեմ պետք է լայն պայքար ծավալել: Իսկ ԱՄՆ-ի երեք նախկին արտաքին գործերի նախարարներ Քիսինջերը, Բեյքերը և Քրիստոֆերն առաջարկեցին կրթական-դաստիարակչական աշխատանքներն ուժեղացնել ամերիկացիների շրջանում:

Իսկ լիդերությունը պահպանելը և նման քաղաքականություն վարելը Օլբրայթը իր ուղերձում որակեց որպես պատմական առաքելություն, որ կոչված է իրականացնել ԱՄՆ-ը:

Նրանք բոլորն ամերիկյան իզոլյացիոնիստների մոտեցումը բնութագրեցին XVIII-XIX դարերին հատուկ նացիոնալիստական մտածելակերպ:

3.Զեկուցողները գտան, որ սառը պատերազմից հետո ծագել են նոր պրոբլեմներ, որը նրանք անվանեցին **մարտահրավեր**: Տրվեց այդ մարտահրավերների դասակարգումը, և որոշվեց դրանց նախապատվելի լինելը ԱՄՆ-ի համար:

4.Ամենամեծ և ամենավտանգավոր մարտահրավերները համարվեցին էթնոքաղաքական կոնֆլիկտները: Այսօր դրանք են գլխավոր վտանգը գլոբալ անվտանգությանը և խաղաղությանը և ուղղակի շոշափում են ԱՄՆ-ի ազգային շահերը: Որպես էթնոքաղաքական կոնֆլիկտների գլխավոր կենտրոններ՝ թվարկվեցին Մերձավոր Արևելքը, Կովկասը, Կենտրոնական Ասիան, արաբա-իսրայելական կոնֆլիկտը, Բալկանները, Աֆրիկայի,

Հարավարևելյան Ասիայի և Լատինական Ամերիկայի որոշ շրջաններ:

Բոլորի կողմից ընդունվեց, որ ԱՄՆ-ի առաջնահերթ խնդիրն է միջամտել էթնոքաղաքական կոնֆլիկտներին, դրանք վերցնել ԱՄՆ-ի հսկողության ներքո և բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռնարկել դրանց կանխման և լուծման համար:

Դրա հետ միասին Բեյքերը շեշտեց, որ ԱՄՆ-ի մասնակցությունն այդ կոնֆլիկտներին պետք է լինի ընտրովի (selective): Մենք պետք է նայենք, ասաց նա, այս կամ այն կոնֆլիկտը հարվածո՞ւմ է մեր շահերին, անդրադառնո՞ւմ է գոյություն ունեցող ուժերի հավասարակշռությանը, և միայն դրանից հետո միջամտենք:

5. Որպես նոր և ինքնուրույն մարտահրավեր առանձնացվեցին այսպես կոչված կուլտուրական կոնֆլիկտները, որոնց դերը, ըստ զեկուցողների, մեծանում է արտաքին քաղաքականության բնագավառում: Դրա տակ հասկացվում են մշակութային, լեզվական և կրոնական տարբերություններ ժողովուրդների միջև և դրա հետ կապված էթնիկական ինքնության հարցը: Այդ հողի վրա ծագում են համայնքային կոնֆլիկտներ: Այս տիպի կոնֆլիկտները Քիսինջերը համարեց շատ բարդ ու վտանգավոր: Սակայն դա, ըստ նրա, տարածվում է ամբողջ աշխարհով մեկ՝ սկսած Մարոկկոյից, Ալժիրով, Մերձավոր Արևելքով մինչև աշխարհի մյուս մասերը:

6. Մարտահրավերների շարքում դասվեց աշխարհի տնտեսության գլոբալացումը: Բուշի կարծիքով ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության հիմնական խնդիրներից մեկը պետք է լինի նպաստել դեմոկրատական կապիտալիզմի կառուցմանը աշխարհում: Գլոբալացման մյուս դրսևորումը պետք է լինեն ամենուր ազատ ձեռներեցության և շուկայական հարաբերությունների հաստատումը, ազգային տնտեսությունների սերտաճումը և նրանց միջև ազգային պատնեշների վերացումը: Այս միտումին հակադրվում է ազգային տնտեսությունների զարգացման մի-

տումը, որը Քիսինջերի վկայությամբ դրսևորվում է Ասիայում, մասնավորապես Չինաստանում, Ճապոնիայում, Կորեայում, Տայվանում և այլուր: Ահա այս միտումը բախվում է համաշխարհային տնտեսության գլոբալացման հետ, որի ջատագովն է ԱՄՆ-ը:

Կոնֆերանսում այս խնդրի լուծումը համարվեց պրիորիտետային ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության մեջ:

7. Մեծ ուշադրություն դարձվեց իսլամական ֆունդամենտալիզմի վտանգին՝ որպես XXI դարի մեծագույն մարտահրավերներից մեկին:

Բոլոր զեկուցողները միակարծիք էին, որ իսլամական ֆունդամենտալիզմը մեծ վտանգ է ներկայացնում աշխարհում հաստատված դեմոկրատական կառույցներին, ապրելաձևին և հոգևոր ու մշակութային կյանքին: Նրան հակադրվելը և նրան զսպելը նույնպես համարվեցին ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններից մեկը:

Բայց և տարբերակում մտցվեց իսլամական ֆունդամենտալիզմի և այսպես ասած սովորական իսլամի միջև: Վերջինիս հետ կարելի է համագործակցել, և ԱՄՆ-ի կառավարողները այն վտանգավոր չեն համարում:

8.ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում պայքարը տեռորիզմի դեմ: Զեկուցողները ընդգծում էին, որ այդ հարցում ԱՄՆ-ը պետք է լինի անզիջում, մանավանդ այն երկրների նկատմամբ, որտեղ տեռորիզմը և նրան հովանավորելը բարձրացված էին պետական քաղաքականության մակարդակի: Որպես օրինակ նշվեց Իրանը:

9. Մարտահրավերների շարքում դասվեց նաև կոռուպցիան, որով տառապում են աշխարհի բազմաթիվ պետություններ, մասնավորապես Ասիայի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի երկրները և նախկին ԽՍՀՄ հանրապետությունները, ներառյալ Ռուսաստանը:

10. Հատուկ քննարկման առարկա դարձավ ՆԱՏՕ-ի հարցը:

Բոլորն էլ նշում էին ՆԱՏՕ-ի կարևորությունը, իսկ Ջեյմս Բեյքերը նրա ընդարձակումը համարեց ԱՄՆ-ի ստրատեգիական նպատակը: Քրիստոֆերը նույնպես այդ տեսակետը պաշտպանեց՝ շեշտելով, որ պետք է ՆԱՏՕ-ն ընդարձակելու ուղիով վերածել պետությունների կոալիցիայի:

Քիսինջերը դեմ արտահայտվեց նրա ընդարձակմանը՝ նշելով, որ ՆԱՏՕ-ն ստեղծվել է որպես ռազմական կազմակերպություն Եվրոպայի անվտանգության ապահովման համար և չպետք է մասնակցի Միջին Ասիայի, Մերձավոր Արևելքի և այլ տարածաշրջանների պրոբլեմներին: «Ես չեմ հավատում,- հայտարարեց նա,-թե Ռուսաստանին ՆԱՏՕ-ի մեջ մտցնելը ճիշտ քայլ է»: Նա չբաժանեց ՆԱՏՕ-ն ռազմական կազմակերպությունից պետությունների կոալիցիայի վերածելու գաղափարը: Այդուհանդերձ, ՆԱՏՕ-ի ամրապնդումը մնում է XXI դարի՝ ԱՄՆ-ի քաղաքականության նախապատվությունների շարքում:

11.ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության գլխավոր նպատակներից մեկը հայտարարվեց խաղաղ Եվրոպա կառուցելը՝ Ռուսաստանը եվրոպական համագործակցության մեջ ներգրավելու ճանապարհով: Քրիստոֆերի կարծիքով հարաբերությունները Ռուսաստանի հետ պետք է լինեն ֆունդամենտալ: Իսկ Բեյքերը հայտարարեց, որ ԱՄՆ-ը պետք է ճնշում գործադրի Արևմտյան Եվրոպայի վրա, որպեսզի նա ֆինանսական, տնտեսական և առևտրի բնագավառում ընդգրկի Ռուսաստանին: Այս կապակցությամբ Քիսինջերի կողմից հատուկ շեշտվեց այն գաղափարը, որ ԱՄՆ-ը և Եվրոպան պետք է միասին լինեն, և եթե նրանց միջև կոնֆլիկտ ծագի, ապա դա շատ բացասաբար կանդրադառնա ամբողջ աշխարհի վրա:

12. Նշվեց նաև, որ XXI դարում խիստ աճելու է Խաղաղօվկիանոսյան-Հարավարևելյան Ասիական տարածաշրջանի նշանակությունը, և ԱՄՆ-ը պետք է արդեն այժմ համապատասխան քայլեր կատարի այդ տարածաշրջանը, ինչպես նաև Լատինական Ամերիկան, ինչ-որ ձևով, քաղաքական և տնտեսական

առումով իրեն կապելու համար:

13. ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության ամենագլխավոր պրիորիտետներից համարվեցին համայն աշխարհում դեմոկրատիայի զարգացումը և ամրապնդումը և դիկտատուրաների վերացումը:

Վերջին զեկուցողը եղավ Միխայիլ Գորբաչովը, որին շնորհվեց հատուկ մրցանակ աշխարհի խաղաղության և անվտանգության գործում ունեցած պատմական ներդրումի և անձնական ու քաղաքական խիզախության դրսևորման համար: Գորբաչովը կոնֆերանսին տեղյակ պահեց, որ «Գորբաչովի ֆոնդը» սկսել է ուսումնասիրել «Մարտահրավերները XXI դարում» պրոբլեմը: Նա նշեց, որ սառը պատերազմի տարիներին քաղաքական հարցերն ավելի պարզ էին, ամեն ինչ լուծվում էր «մեծ մահակի» դիրքերից: Հիմա իրադրությունը փոխվել է, որը պահանջում է նոր մոտեցումներ: Տեղի է ունենում աշխարհի գլոբալացում, և հարցերը չեն կարող լուծվել զուտ ազգային շահերի տեսակետից: Դրանք պետք է լուծվեն գլոբալ տեսանկյունից: Սխալ են ոչ թե ազգային պետությունները, այլ կառավարությունները, որոնք վարում են նեղ ազգային քաղաքականություն: Գլոբալ հարցերը չի կարելի լուծել մեկ պետության կամ պետությունների խմբերի շահերից ելնելով: Նա դեմ արտահայտվեց ՆԱՏՕ-ի ընդարձակմանը և Եվրոպայի սահմանազատմանը: Ռուսաստանում ուզում են իմանալ, թե ինչ տիպի Եվրոպայի Միացյալ Նահանգներ են ուզում, և որն է ԱՄՆ-ի դիքորոշումը ԵՄՆ-ի նկատմամբ: Սրանք կարևոր են XXI դարի արտաքին քաղաքականության պրիորիտետների տեսանկյունից: Պրիորիտետների տեսանկյունից կարևոր են նաև Խաղաղօվկիանոսյան-ասիական տարածքը, Չինաստանը, Ճապոնիան և այլն: Ես դեմ եմ «խաղաքարտ օգտագործելու» և կոնֆրոնտացիայի քաղաքականությանը: ԱՄՆ-ում գտնում են, որ թույլ Ռուսաստանը, Ռուսաստանի թուլացումը ի շահ ԱՄՆ-ի է: Սակայն Ռուսաստանի թուլացումը կամ ուժեղացումը ձեզնից չի կախված: Ավելի լավ է

ճիշտ հասկանալ փոխադարձ շահերը և համագործակցել միմյանց հետ:

Ամփոփելով կարելի է ասել, որ ԱՄՆ-ը ձգտում է մոդելավորել մի աշխարհ, որի ղեկավարը լինելու է ինքը: Այդ աշխարհը գործելու և զարգանալու է ըստ ամերիկյան ծրագրերի:

Կոնֆերանսում արտահայտված քաղաքական տեսակետները, մեր կարծիքով, անխուսափելիորեն կազդեն Հայաստանի միջազգային դրության և արտաքին քաղաքական կուրսի վրա: Մենք նկատի ունենք հետևյալ հանգամանքները:

Առաջին, էթնոքաղաքական կոնֆլիկտները, ինչպես նշվեց, գլխավոր վտանգն են և պրիորիտետային են ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության մեջ: Իսկ Կովկասը, այդ թվում և Անդրկովկասը, էթնոքաղաքական կոնֆլիկտների կենտրոններից են: Ելնելով իր հռչակած դոկտրինայից՝ այդ կոնֆլիկտները սանձելու և լուծելու վերաբերյալ, ԱՄՆ-ը, պետք է ենթադրել, ուղղակիորեն կմասնակցի կովկասյան էթնոքաղաքական կոնֆլիկտների լուծմանը և նրանց սանձելը կվերցնի իր ձեռքը: Այդ պրոցեսն ըստ էության արդեն սկսվել է: Իսկ դա հաջողությամբ իրագործելու համար ԱՄՆ-ը կփորձի դուրս մղել այդ տարածաշրջանից Ռուսաստանին՝ պատնեշ կանգնեցնելու Իրանի դեմ և չափավորելու, նույնիսկ արգելակելու Թուրքիայի ներթափանցումը: Այս ենթադրությունն ուղղակիորեն բխում է լիդերության տրամաբանությունից:

Դրա հետևանքով Անդրկովկասում և Մերձավոր Արևելքում կարող է հաստատվել նոր գեոպոլիտիկ իրադրություն, որը պարտավոր է հաշվի առնել Հայաստանը:

Երկրորդ, ՆԱՏՕ-ի ընդարձակման և պետությունների կոալիցիայի վերածելու ծրագրի իրականացումը կարող է Հայաստանին կանգնեցնել այդ կոալիցիայի անդամ դառնալու անհրաժեշտության առջև: Այլապես Հայաստանը կարող է հայտնվել քաղաքական մեկուսացման մեջ, որը կհանգեցնի նրա միջազգային դիրքերի թուլացմանը: Ուստի, մեր կարծիքով, «Հայաս-

տան-ՆԱՏՕ» փոխհարաբերությունների հարցը պետք է գտնվի Հայաստանի ղեկավարության ուշադրության կենտրոնում:

Երրորդ, Հայաստանի ազգային շահերի տեսակետից նպաստավոր է ԱՄՆ-ի պայքարը իսլամական ֆունդամենտալիզմի դեմ: Հայաստանը քրիստոնեական անկլավ է տարածաշրջանում, որտեղ տիրապետողը իսլամական ժողովուրդներն են: Դա խոցելի է դարձնում Հայաստանին, մանավանդ եթե նկատի ունենանք Վրաստանի քաղաքականության ոչ հստակ լինելը, անորոշությունը և անհուսալիությունը:

Այս բնագավառում Հայաստանը կարող է համագործակցել ԱՄՆ-ի հետ, առանց թմբկահարելու:

Չորրորդ, հաշվի առնելով համաշխարհային տնտեսության գլոբալացման անխուսափելիությունը՝ Հայաստանը պետք է որոշի իր տնտեսության զարգացման և արտաքին տնտեսական կապերի հիմնական կամ պրիորիտետային ուղղությունները, որպեսզի չդառնա գլոբալացված համաշխարհային տնտեսության ծայրամասային գավառ:

Հինգերորդ, կոնֆերանսում քննարկված հարցերը և նրանում տիրող ոգին հստակ ցույց տվեցին, որ XXI դարում միջազգային համագործակցության մեջ հեղինակություն կարող են ունենալ, ձայն ու դիրք կարող են ունենալ միայն այն պետությունները, որոնց դեմոկրատական լինելը վիճահարույց չի լինի: Դեմոկրատիայի զարգացումը և քաղաքացիական հասարակության կառուցումը կարող են զորավոր կռվան լինել Հայաստանի համար միջազգային համայնքում շատ թե քիչ տեսանելի տեղ գրավելու համար:

Սրանք են Հյուստոնում գումարված կոնֆերանսի դասերը, որը բոլորի կողմից գնահատվեց Պատմական:

Հայաստանի ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյան

23.X. 1997

32. ՀՅՈՒՍՏՈՆԻ ՌԱՅՍ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ, ԱՄՆ, ՋԵՅՄՍ ԲԵՅՔԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԴԻՐԵԿՏՈՐ ԷԴՎԱՐԴ ՋԵՐԵՋՅԱՆԻ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐԸ՝ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ՀՀ ՆԱԽԱԳԱՀ ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Ջեյմս Բեյքերի ինստիտուտի հրավերով 1997թ. ապրիլի 16-18-ը մասնակցել եմ այդ ինստիտուտի գիտաժողովին, որի մասին բավականին հանգամանորեն խոսել եմ նախորդ հոդվածում:

Այժմ ցանկանում եմ Էդվարդ Ջերեջյանի մի քանի նկատառումները, դիտողությունները և առաջարկությունները փոխանցել նրա խնդրանքով ՀՀ նախագահ Լևոն Տեր- Պետրոսյանին:

Մենք Էդվարդ Ջերեջյանի հետ հանդիպեցինք հոկտեմբերի 17-ին, և մեր առանձնազրույցը՝ նվիրված Ղարաբաղյան խնդրին, Հայաստանում տիրող իրավիճակին և տարածաշրջանային հարցերին, տևեց մեկ ժամից ավելի:

Հարգելի՛ նախագահ, նա շատ լավ և մեծ գոհունակությամբ է հիշում իր հանդիպումը և զրույցը Ձեզ հետ:

Նրա կարծիքով Հայաստանը բաց թողեց Ղարաբաղի հարցի լուծման շատ լավ հնարավորություններ 90-ական թվականների սկզբներին, երբ Հայաստանն առավելություն ուներ, համակրանքը նրա կողմն էր, բանակները հաղթանակ էին տանում, և ԱՄՆ-ի դիրքորոշումն ավելի նպաստավոր էր Հայաստանի համար:

Անհրաժեշտ էր օգտվել այդ բարենպաստ դրությունից: Այդ ժամանակ՝ մինչև 1992թ. վերջերը, ԱՄՆ-ի պետական քարտուղարն էր Ջեյմս Բեյքերը, իսկ ես՝ պետքարտուղարի տեղակալն էի: Պետական դեպարտամենտն անցկացրեց հատուկ խորհրդակցություն՝ նվիրված Ղարաբաղի հարցին, և ինձ հանձնարարվեց դիմել Հայաստանին հետևյալ առաջարկությամբ. ԱՄՆ-ը պատրաստ է իր բարի ծառայություններն առաջարկել և ստանձնել միջնորդի դեր ու կազմակերպել Հայաստանի, Ադրբեջանի և Թուրքիայի ղեկավարների հանդիպում ԱՄՆ-ի մասնակցու-

թյամբ՝ քննարկելու Ղարաբաղի խնդրի կարգավորման հարցը: Ես այդ առաջարկը փոխանցեցի Հայաստանի արտաքին գործերի նախարար Ռաֆֆի Հովհաննիսյանին: Նախատեսվում էր հանդիպումը կազմակերպել Եվրոպայում՝ Լիսաբոնում:

Թուրքիան և Ադրբեջանը տվեցին իրենց համաձայնությունը մասնակցելու դրան: Ինչ վերաբերում է Ռաֆֆի Հովհաննիսյանին, ապա նա փոխանակ գար այդ հանդիպմանը, մեկնեց Ֆրանսիա՝ Փարիզ՝ նախընտրելով հանդիպել Ֆրանսիայի պրեմիեր մինիստր Ռոլան Դյումայի հետ: Իսկ թե ինչու նա այդպես վարվեց, ինձ համար մինչև հիմա մնում է անհասկանալի: Մի՞թե պարզ չէր, որ Ֆրանսիան այն պետությունը չէր, որը կարող էր լուծել այդ խնդիրը: Նա ոչ մի դեր չէր խաղում և չէր էլ կարող խաղալ Ղարաբաղի խնդրում:

Այժմ դրությունը փոխվել է, և ես խնդրում եմ Հայաստանի պրեզիդենտ Լևոն Տեր-Պետրոսյանին փոխանցել հետևյալը:

Ղարաբաղի խնդրի լուծման գործում պետք է ելնել արդեն ոչ թե զուտ Հայաստան-Ադրբեջան հարաբերություններից, այլ այն նոր գեոպոլիտիկ իրադրությունից, որ ստեղծվել է անդրկովկասյան-մերձավորարևելյան տարածաշրջանում կասպիական նավթի կապակցությամբ: Ինչ էլ գրեն կամ ասեն, այդ նավթն արդյունահանվելու և արտահանվելու է, իսկ նավթամուղները կառուցվելու են: Դրա հետևանքով ամենաուշը հինգ տարի հետո Ադրբեջանը տնտեսապես շատ է հզորանալու և ստեղծելու է նոր բանակ՝ շատ լավ սպառազինված: Եվ եթե ամեն բան մնա այնպես, ինչպես որ է այժմ, ապա հինգ տարի հետո կորցնողը լինելու է Հայաստանը:

Հարգելի՛ պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյան, ես խնդրում եմ՝ հաղորդեք պարոն Լևոն Տեր-Պետրոսյանին, որ ԱՄՆ-ը առայժմ ևս պատրաստ է իր բարի ծառայությունները առաջարկել Հայաստանին Ղարաբաղի խնդրում: Ջեյմս Բեյքերի Քաղաքականության ինստիտուտը հեղինակավոր ինստիտուտ է, որի կարծիքը հաշվի են առնում Սպիտակ տանը, Պետական դեպար-

տամենտում և ընդհանրապես ԱՄՆ-ի ղեկավարները: Ես շատ լավ հարաբերություններ ունեմ պետական քարտուղար Մադլեն Օլբրայթի և նրա տեղակալ Ստրոբ Թելբոթի հետ: Նրանք դեռևս պահպանում են ուշադրությունը Հայաստանի նկատմամբ և պատրաստ են օգտակար լինել (Էդվարդ Ջերեջյանը մի քանի անգամ շեշտեց այդ միտքը, հատկապես «ուշադրություն» `«attention» բառը): Ես կարծում եմ, որ Հայաստանը պետք է օգտվի այս հնարավորությունից:

Ես ասացի, որ Ջեյմս Բեյքերը կապված է կասպիական նավթով շահագրգիռ ամերիկյան նավթային ընկերությունների հետ և Ադրբեջանի հանդեպ բարենպաստ դիրք ունի: Է. Ջերեջյանը պատասխանեց, որ Բեյքերը ամերիկյան մի ընկերության խորհրդի անդամ է և չի կարող այլ կերպ վարվել: Բայց այնտեղ՝ այդ նավթային ընկերությունում, նա հանդես է գալիս որպես մասնավոր անձ: Դա իր անձնական գործն է, որը ոչ մի կապ չունի Ջեյմս Բեյքերի ինստիտուտի հետ: Այս ինստիտուտը լրիվ անկախ է գործում, և դա գիտի ու պաշտպանում է ինքը՝ Բեյքերը: Կրկնում եմ, ես շատ լավ կապեր ունեմ ԱՄՆ-ի կառավարող վերնախավի հետ և կարող եմ շատ օգտակար լինել Հայաստանին:

Այնուհետև նա նշեց, որ եղել է Թուրքիայում և թուրքական բանակի գլխավոր շտաբում զրույց է ունեցել Թուրքիայի զինված ուժերի հրամանատարության հետ: Նրանք նշել են, որ Թուրքիայի ռազմական ծրագրերով չեն նախատեսվում հարձակում և ներխուժում Հայաստան: Նրանք շահագրգռված են Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորումով: Թուրքիան կարող է հարձակվել Հայաստանի վրա, եթե Հայաստանը ինքը ռազմական գործողություններ սկսի, ասել են թուրքական բանակի հրամանատարները:

Էդվարդ Ջերեջյանը իմանալով, որ ես զբաղվում եմ կոնֆլիկտոլոգիայով և Հայաստանի կոնֆլիկտների լուծման կենտրոնի հիմնադիր տնօրենն եմ, առաջարկեց համագործակցել իր ինստիտուտի հետ: Ես նրա առաջարկությունը ընդունեցի մեծ

պատրաստակամությամբ և, և իրոք, մենք համագործակցել ենք: Մասնավորապես նա խնդրեց ինձ, որ ես գրեմ այն մասին, թե ինչպես եմ պատկերացնում Ղարաբաղի հարցի լուծումը և ինչ առաջարկություններ կարող եմ անել: Դրանք, ընդգծեց նա, չպետք է լինեն պաշտոնական տեսակետների կրկնություն, քանի որ իրենք այդ մասին տեղյակ են: Նա հայտնեց ինձ, որ նման առաջարկով դիմելու է նաև ադրբեջանական կողմին, որից հետո մեր երկու առաջարկությունները կհամեմատվեն միմյանց հետ:

Ես ընդունեցի նրա առաջարկությունը և վերադառնալով Հայաստան՝ նրան ուղարկեցի իմ տեսակետները:

Ես առաջարկեցի նրան այցելել Հայաստան, որը նա սիրով ընդունեց: Պայմանավորվեցինք, որ ես հրավերը կուղարկեմ նրան Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի անունից:

Նիկոլայ Հովհաննիսյան
ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն
Կոնֆլիկտների լուծման Հայաստանի կենտրոնի տնօրեն
21 հոկտեմբերի 1997թ.:

33. ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՄՆ-Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ, ՊԵՆՏԱԳՈՆԻ ԵՎ ԿՈՆԳՐԵՍԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ԷԴՆԵՍՏ ՎԻՄԲՈՒՇԻ ՀԵՏ
1998թ. փետրվարի 6

Մենք ծանոթացել էինք դեռևս 1996թ. մարտին Թուրքիայում, Անթալիայում, Թուրքիայի արտաքին գործերի նախարարության ստրատեգիական ուսումնասիրությունների կենտրոնի կազմակերպած միջազգային կոնֆերանսում:

Նա ինձ ընդունեց ջերմորեն՝ նշելով, որ անհամբերությամբ սպասում էր այս հանդիպմանը, որպեսզի ինձ հետ քննարկի Հայաստանում նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հրաժարականից հետո ստեղծված իրավիճակը և առաջիկայում ձեռնար-

կելիք անհրաժեշտ քայլերը:

Նրա խնդրանքով ես ներկայացրի ստեղծված ճգնաժամի պատճառները, իրավիճակը Հայաստանում և զարգացման հնարավոր ուղիները:

Ուշադիր լսելով և գրառումներ կատարելով՝ Վիմբուշն ուղղակի ինձ հարցրեց . **«Ի՞նչ կարող է անել ԱՄՆ-ի կառավարությունը Հայաստանի համար»**: Ես նրա ուշադրությունը հրավիրեցի երկու հանգամանքի վրա:

Առաջին, անհրաժեշտ է, որ ԱՄՆ-ը՝ որպես մեծ տերություն և Մինսկի խմբի համանախագահներից մեկը, ընդունի, որ Ղարաբաղյան խնդիրը հնարավոր չէ լուծել Մինսկի խմբի եռանախագահների առաջարկած սկզբունքների վրա, որը Ղարաբաղը թողնում է Ադրբեջանի կազմում և նրա իրավասության ներքո: Դա հարցի լուծում չէ, պայքարը կշարունակվի, և դուք չեք ունենա խաղաղ Կովկաս: Ուստի այժմ կարևոր է, որ ԱՄՆ-ը փոփոխություններ մտցնի իր դիրքորոշման մեջ Ղարաբաղի հարցում՝ հաշվի առնելով Ղարաբաղի պահանջը, որը ժխտում է ուղղաձիգ կապերը Բաքվի հետ:

Է. Վիմբուշը համաձայնվեց, որ անհրաժեշտ են որոշ փոփոխություններ ԱՄՆ-ի քաղաքականության մեջ, նա նույնիսկ օգտագործեց «մեղմացում» բառը և ինձ վստահեցրեց, որ ամենայն հավանականությամբ դա տեղի կունենա:

Երկրորդ, ես առաջարկեցի, որ ԱՄՆ-ը չփորձի, օգտվելով ստեղծված իրավիճակից, ճնշում գործադրել Հայաստանի վրա: Նրա ուշադրությունը հրավիրեցի այն հանգամանքի վրա, որ ամերիկյան որոշ թերթեր և ոչ միայն նրանք, նշում են, որ Հայաստանում իշխանությունն անցել է կոշտ քաղաքականության կողմնակիցների ձեռքը: Ընդգծեցի նաև, որ դա չի համապատասխանում իրականությանը, և որ եթե ԱՄՆ-ը դա դարձնի պաշտոնական տեսակետ, ապա դա ոչ միայն լարվածությունը չի մեղմի, այլև ավելի կսրի իրադրությունը:

Էռնեստ Վիմբուշը նշեց, որ սխալ է նման որակումներ տալ

Ռոբերտ Քոչարյանին և նրան շրջապատող մարդկանց, և ընդգծեց, որ ա/ ԱՄՆ-ի ղեկավարությունը չի կիսում այն տեսակետը, թե իշխանության գլուխ են եկել կոշտ քաղաքականությանը կողմնակից ուժերը, բ/ ԱՄՆ-ը կանի իրենից կախված ամեն ինչ, որպեսզի իրադրությունը չսրվի Հայաստանում, պահպանվի նորմալ իրավիճակ, ինչպես որ այն այժմ կա, և գ/ պահպանվի զինադադարը:

Այնուհետև նա ասաց, որ կցանկանար ներկայացնել ԱՄՆ-ի կառավարող շրջանների տեսակետը Հայաստանի մասին՝ խընդրելով այն փոխանցել պրեմիեր մինիստր Ռոբերտ Քոչարյանին:

Ահա այն.

1. Էռնեստ Վիմբուշը նշեց, որ վերջին շրջանում, մոտ մեկ-մեկուկես տարի, փոխվել է ԱՄՆ-ի դիրքորոշումը ոչ ի նպաստ Հայաստանի: Հայաստանը, նրա զարգացումը հետ են մնում, իսկ նրա վարած քաղաքականությունը հետ է քաշում Կովկասը: Հայաստանը խոչընդոտ է դարձել Կովկասի հարցերի լուծման ճանապարհին և չի նպաստում Կովկասի ընդհանուր քաղաքական, տնտեսական և ստրատեգիական կարևոր հարցերի լուծմանը: Նա փաստորեն իրեն հակադրում է ամբողջ Կովկասին: Ուստի անհրաժեշտ է, որ Հայաստանը վերանայի իր քաղաքական կուրսը և նպաստի Կովկասի ընդհանուր զարգացմանը և ինտեգրմանը:

2.ԱՄՆ-ը գտնում է, որ ճիշտ ուղու վրա է Վրաստանը՝ Շևարդնաձեի գլխավորությամբ: Շնորհիվ Շևարդնաձեի հեռատես քաղաքականության, Վրաստանն ուժեղացրել է իր դիրքերը Կովկասում, վերականգնում է իր տնտեսությունը և մեծ ազդեցություն ունի: ԱՄՆ-ը լիովին պաշտպանում է Վրաստանի քաղաքական կուրսը և Շևարդնաձեին, որը լավ լիդեր է: Նա ունի հեռուն գնացող ստրատեգիական ծրագրեր Կովկասի նկատմամբ, որոնք արժանացել են ԱՄՆ-ի հավանությանը, այդ թվում և Կովկասի համախմբման, եվրասիական միջանցքի և այլ հարցերում: Պատահականություն չէ, որ ԱՄՆ-ը Վրաստանին պաշտ-

պանում է և՛քաղաքական, և՛ տնտեսական առումով:

Է. Վիմբուշը հատուկ շեշտեց, որ Վրաստանը լավ հարաբերություններ ունի թե՛ Ադրբեջանի և թե՛ Թուրքիայի հետ, ըստ որում հաստատվել են լավ անձնական հարաբերություններ Շեվարդնաձեի և Թուրքիայի պրեզիդենտ Սուլեյման Դեմիրելի միջև:

Այդ բոլորից հետո Վիմբուշն առաջարկեց, որ Հայաստանի ղեկավարությունն ամրապնդի իր հարաբերությունները Վրաստանի հետ, որոշ հարցերի, այդ թվում և Ղարաբաղյան կոնֆլիկտի լուծման համար դիմի Վրաստանին: Նա համոզվածորեն ընդգծեց, որ Վրաստանն այդ հարցերում հնարավորություններ ունի ազդելու Ադրբեջանի վրա: Նա նշեց, որ վերջերս է եղել Վրաստանում, հանդիպում ունեցել Շևարդնաձեի և մյուս բոլոր առաջին դեմքերի հետ և իր զրույցների ընթացքում շոշափել է այդ հարցերը: Ըստ նրա խոսքերի՝ վրացական կողմը պատրաստ է այդ հարցերում օժանդակել Հայաստանին:

Միաժամանակ նա տվեց այն չորս վրացական պետական գործիչների անունները, որոնց հետ արժե խոսել այդ հարցերի շուրջը՝ խնդրելով դրանք փոխանցել Ռոբերտ Քոչարյանին. առաջին՝ Վրաստանի պառլամենտի նախագահ Զուրաբ Ժվանիա, երկրորդ՝ արտաքին գործերի նախարար, երրորդ՝ պառլամենտի ռազմական խորհրդի նախագահ Ռեզո Ադամիա, և չորրորդ՝ Կակա Չիտայա: Նա հայտնեց, որ դրանցից մեկը լինելու է Շևարդնաձեի հավանական հաջորդը՝ այդ ցանկին ավելացնելով նաև Վաշինգտոնում Վրաստանի դեսպան Ջափարիձեի անունը:

Իմ տպավորությունն այն էր, որ, ըստ Է. Վիմբուշի, ԱՄՆ-ը այժմ դնում է Վրաստանի և ոչ Ադրբեջանի վրա: Իմ այդ տպավորությունը ստացվեց նաև շնորհիվ այն բանի, որ Է. Վիմբուշը ընդգծված շեշտեց, թե նավթը միայն մի գործոն է, որ կան շատ ավելի կարևոր այլ քաղաքական և ստրատեգիական գործոններ:

3. Է.Վիմբուշի կարծիքով ԱՄՆ-ում հայկական լոբբիի դերը նվազել է և առաջիկայում ավելի կնվազի: Նա գտնում է, որ 1988թ.

անպայման կվերացվի Կոնգրեսի 907 բանաձևը, որն արգելք է դնում Ադրբեջանին պետական մակարդակով ֆինանսական-տնտեսական օգնություն ցույց տալու վրա: Դրանից հետո ԱՄՆ-ը կսկսի օգնություն ցույց տալ Ադրբեջանին, ինչպես նա այժմ անում է Վրաստանի և Հայաստանի համար:

Եվ քանի որ դա անպայման տեղի է ունենալու, ապա Է.Վիմբուշի կարծիքով Հայաստանը քաղաքական մեծ կապիտալ կշահեր, եթե ինքը հանդես գար Կոնգրեսի վերոհիշյալ 907 բանաձևը չեղյալ հայտարարելու առաջարկությամբ: Նա նույնիսկ ավելացրեց, որ լավ կլինի, եթե այդ հարցը բարձրացնի Ռոբերտ Քոչարյանը ԱՄՆ-ի պետական քարտուղար Մադլեն Օլբրայթի հետ հանդիպման ժամանակ: ԱՄՆ-ը հավանաբար պատրաստ էր նման մի հանդիպում կազմակերպելու:

Իմ ընդհանուր տպավորությունն այն է, որ Է. Վիմբուշը նախօրոք խնամքով պատրաստվել էր ինձ հետ այս հանդիպմանը և զրույցի ժամանակ արտահայտված կարծիքները, առաջարկությունները և տեսակետները համաձայնեցված էին պետական պատասխանատու մարմինների ղեկավարների հետ:

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյան, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստ-ի տնօրեն, Կոնֆլիկտների լուծման Հայաստանի կենտրոնի տնօրեն

7 փետրվարի 1998, Վաշինգտոն

34. ՔՆՆԱՐԿՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏՈՒՄ. ՀԱՅԱՍՏԱՆԸ, ԿՈՎԿԱՍԸ ԵՎ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

6 փետրվարի 1998թ.

ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի «Կովկասի անվտանգության հարցերի և Հայաստանի» բաժնի վարիչ Դեյվիդ Ռոդարմելի հրավերով ես այցելեցի ԱՄՆ-ի պետական դեպարտամենտ՝ քննարկելու, ինչպես նշեց նա, մի շարք շատ կարևոր հարցեր:

Դեյվիդ Ռոդարմելն անմիջապես ներկայացրեց ԱՄՆ-ի

դիրքորոշումը Հայաստանում տիրող իրավիճակի հանդեպ, կապված Լևոն Տեր-Պետրոսյանի հրաժարականի հետ: Նա նշեց, որ շատ մոտիկից ակնդետ հետևում է իրադրությանը Հայաստանում, և գոհ են, որ ամեն ինչ ընթանում է սահմանադրական հիմքի վրա, դեմոկրատիայի շրջանակներում:

Ես անակնկալի չեկա, քանի որ արդեն մի քանի օր էր՝ գտնվում էի Վաշինգտոնում և արդեն գիտեի, որ ԱՄՆ-ի ղեկավարությունը հետաքրքրվում է այդ հարցով և բավականին մտահոգված էր: ԱՄՆ-ը, ում որ հարկն էր, խրախուսում էր այս գործընթացը՝ ընդգծելով, որ շնորհիվ սահմանադրական նորմերի պահպանման, պրեզիդենտի հրաժարականը և նոր պրեզիդենտի ընտրությունը դարձան Հայաստանի ներքին գործ, և ԱՄՆ-ը չի միջամտի և չի ցանկանա, որ որևէ մեկը միջամտի Հայաստանի ներքին գործերին: Նա միաժամանակ ընդգծեց, որ ԱՄՆ-ը ուշադիր հետևում է իրադրությանը Ադրբեջանում, ամեն կերպ խրախուսում Ադրբեջանի ղեկավարությանը և պրեզիդենտ Ալիևին, որ նրանք հավատարիմ մնան կրակի դադարեցմանը և չգնան իրադրությունը սրելու ուղիով: Նա գոհունակությամբ նշեց, որ Ալիևը հավաստիացրել է ԱՄՆ-ին, որ Ադրբեջանը չի խախտի զինադադարը:

Այնուհետև նա շոշափեց ԵԱՀԿ Մինսկի խմբի եռանախագահների գործունեության հարցը՝ ընդգծելով, որ այդ գործունեությունը ժամանակավորապես կդանդաղի մինչև մարտի 16-ը, երբ կկայանան Հայաստանի նոր պրեզիդենտի ընտրությունները: Կպահպանվի նաև որոշ ժամանակ՝ նոր կառավարություն կազմելու համար: Ահա միայն դրանից հետո եռանախագահները կվերսկսեն իրենց աշխատանքները:

Ի պատասխան իմ հարցմանը, որ ԱՄՆ-ը, հաշվի առնելով ներկա իրավիճակը և Ղարաբաղի պրոբլեմը ընդմիշտ լուծելու հեռանկարները, պետք է փոփոխություն մտցնի իր քաղաքականության մեջ այդ պրոբլեմի լուծման հարցում, այլապես Կովկասում խաղաղություն չի լինի, մի ճգնաժամին կհաջորդի մյուսը:

Դեյվիդ Ռոդարմելը, թեև զգուշորեն, բայց այն միտքն արտահայտեց, որ հավանաբար դա տեղի կունենա և որ ԱՄՆ-ի կողմից Մինսկի խմբի նախագահ Պասկոն այդ ուղղությամբ որոշ աշխատանքներ է կատարում, նա զբաղված է այդ հարցով: Շարունակելով զրույցն այդ հարցի շուրջ, որին նա մեծ նշանակություն տվեց և մոտեցավ շատ լրջորեն, ես նրա ուշադրությունը հրավիրեցի հետևյալ հանգամանքի վրա. եթե Ղարաբաղը առաջին փուլում ամեն ինչ վերադարձնի Ադրբեջանին, բավարարի նրա բոլոր պահանջները, և միայն դրանից հետո քննարկվի Ղարաբաղի ստատուսի հարցը, ապա հայկական կողմը ոչ մի լծակ չի ունենա ազդելու Ադրբեջանի վրա, որպեսզի վերջինս բավարարի Ղարաբաղի պահանջը: Դեյվիդ Ռոդարմելը լրիվ համաձայնվեց ինձ հետ և ընդգծեց, որ պետք է լուծումն այնպես լինի, որ բավարարի ոչ թե մեկ կողմին, այլ երկու կողմին: Եթե լուծումը բավարարի միայն Ադրբեջանին, ապա հայկական կողմը չի ընդունի, մենք դա լավ ենք հասկանում, իսկ եթե լուծումը բավարարի միայն հայկական կողմին, ապա այս անգամ հրաժարականը կարող է տեղի ունենալ Ադրբեջանում, միայն այն տարբերությամբ, որ այնտեղ դա տեղի չի ունենա խաղաղ ձևով: Ահա այստեղ է ամբողջ դժվարությունը, և հիմա Պասկոն աշխատում է նաև այդ ուղղությամբ, որպեսզի լուծման ճանապարհ գտնվի այդ դժվարությունը հաղթահարելու ուղղությամբ:

Այս կապակցությամբ խոսք բացվեց իմ կողմից առաջարկված Ղարաբաղին չեզոքություն տալու ծրագրի մասին: Ես նրան ներկայացրի այդ ծրագրի անգլերեն տեքստը, որը հրատարակել էր «The Yerevan Times»-ը, և հակիրճ բացատրեցի նրա հիմնական հոդվածները: Ինքն արագորեն այն ընթերցեց և ընդունեց գոհունակությամբ՝ ասելով. «Ես այն կհանձնեմ Պասկոյին, թեև նա դա կարող է ունենալ, և մի քանի օրինակ էլ կուղարկեմ մի քանի անհրաժեշտ մարդկանց»: Նա չբացառեց այդ ծրագրի դրույթների օգտագործումը Մինսկի խմբի կողմից, որը, ինչպես նա կրկին

նշեց, հարկադրված է որոշ փոփոխություններ մտցնել իր նոր առաջարկությունների մեջ:

Ես այն տպավորությունը ստացա, որ Դեյվիդ Ռոդարմելը շատ լավ է պատկերացնում հարցը և նրա պատմությունը: Զրույցի ժամանակ նա ընդունեց, որ չի կարելի «տերիտորիալ ամբողջականության» սկզբունքը միշտ, ամենուր և բոլոր դեպքերում հակադրել ինքնորոշման սկզբունքին և բացահայտորեն դժգոհել, որ «ցավոք սրտի միջազգային հանրությունն այսօր առաջնայինը համարում է տերիտորիալ ամբողջականության սկզբունքը», և որ դրա հաղթահարումը մեծ դժվարությունների հետ է կապված:

Վերջում կրկին նշելով, որ անհրաժեշտ են որոշ փոփոխություններ դիրքորոշման մեջ, այդ թվում և ԱՄՆ-ի, Դեյվիդ Ռոդարմելը ավելացրեց, որ ԱՄՆ-ի համար այժմ կարևոր է նաև թույլ չտալ պատերազմի վերսկսումը Ղարաբաղում:

Պրոֆ. Նիկոլայ Հովհաննիսյան

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն
Կոնֆլիկտների լուծման Հայաստանի Կենտրոնի տնօրեն
Փետրվարի 7, 1998թ.
Վաշինգտոն

35. ՔՆՆԱՐԿՈՒՄ ԱՄՆ -Ի ՊԵՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԳԾՈՎ ՀԱՏՈՒԿ ԲԱՆԱԳՆԱՑԻ ՏԵՂԱԿԱԼ ՖԻԼԻՊ ՌԵՄԼԵՐԻ ՀԵՏ

Զրույցը կայացավ 1998թ. մարտի 6-ին՝ առավոտյան ժ.10.30-ին Վաշինգտոնում, ՀՀ դեսպանատանը: Զրույցին մասնակցում էր ԱՄՆ-ում Հայաստանի դեսպան պարոն Ռուբեն Շուգարյանը: Զրույցը կայացավ ԱՄՆ-ի հատուկ բանագնացի տեղակալ Ֆիլիպ Ռեմլերի հետ, քանի որ հատուկ բանագնաց Պասկոն գտնվում էր Մոսկվայում:

Քննարկվեցին հետևյալ հարցերը:

1.Ի պատասխան իմ այն դիտողությանը, որ հիմա ժամանակները փոխվել են, և ստեղծվել է նոր քաղաքական իրադրություն և ըստ այդմ հարկ է, որ ԱՄՆ-ը՝ որպես Մինսկի խմբի համանախագահ, վերանայի իր միակողմանի, ի նպաստ Ադրբեջանի դիրքորոշումը Ղարաբաղի հարցում, Ֆ.Ռեմլերը ժխտեց իրենց քաղաքականության միակողմանի լինելը և իրենց գործունեությունը ներկայացրեց որպես հավասարակշռված, որին նրանք հավատարիմ կմնան առաջիկայում ևս:

2. Իմ առաջարկությամբ քննարկվեց բանակցությունների ֆորմատի հարցը՝ ելնելով Ռոբերտ Քոչարյանի հայտարարությունից այն մասին, որ կոնֆլիկտի անմիջական մասնակիցները Ադրբեջանը և Լեռնային Ղարաբաղն են, և թող նրանք էլ անմիջականորեն բանակցեն, մինչդեռ Հայաստանը ներգրավված կողմ է: Ֆիլիպ Ռեմլերը նպատակահարմար չգտավ նման փոփոխությունը՝ նշելով, որ Հայաստանը պետք է մասնակցի բանակցությունների փուլերին: Դա նաև Ադրբեջանի ցանկությունն է:

Իսկ ինչ վերաբերում է Ղարաբաղին, ապա Ֆ.Ռեմլերը նշեց, որ իրենք դեմ չեն Ղարաբաղի մասնակցությանը բանակցություններին որպես երրորդ կողմ: Սակայն, ըստ Ռեմլերի հայտարարության, Ղարաբաղը փաստորեն ինքն է խուսափում բանակցություններից, թեև եղել են փորձեր:

Համաձայնվելով մեզ հետ, որ հիմա ժամանակները փոխվել են, և անհրաժեշտ են նոր մոտեցումներ, Ֆ.Ռեմլերն ասաց բառացիորեն հետևյալը. «Թող Ղարաբաղը գրավոր ներկայացնի իր առաջարկությունները և դրանք դնի սեղանի վրա»: Այս հարցում նրա դիրքորոշումը բարյացակամ էր:

3.Ղարաբաղի ստատուսի հարցը: Ֆ. Ռեմլերը նշեց, որ Հեյդար Ալիևը երբեք իր ստորագրությունը չի դնի այնպիսի փաստաթղթի տակ, որը ճանաչում է ԼՂ-ի անկախությունը:

Իսկ Ղարաբաղը դե յուրե Ադրբեջանի կազմում, դե ֆակտո անկախ հարցի վերաբերյալ Ռեմլերը տվեց հետևյալ բացատրությունը: Ալիևը գտնում է, որ եթե ԼՂ-ն իրավական տեսա-

կետից դե յուրե լինելու է Ադրբեջանի կազմում, ապա նա դե ֆակտո լինելու է Հայաստանի կազմում, ստացվում է յուրատեսակ հավասարակշռություն: Դրան հասնելու մեխանիզմը նա տեսնում է այն քայլերի մեջ, որ հերթականորեն ձեռնարկվելու են՝ զորքերի դուրսբերում գրաված տերիտորիաներից, փախստականների վերադարձ, խաղաղապահպան ուժերի տեղադրում և այլն:

Ընդհանրապես Ռեմլերը չէր թաքցնում իր համակրանքը քայլ առ քայլ տարբերակի նկատմամբ, թեև ուշադիր էր նաև փաթեթային լուծման նկատմամբ և չէր առարկում, եթե ստատուսի հարցը լուծվի մյուս հարցերի հետ համաժամանակյա, եթե դրա հետ համաձայնվի Ադրբեջանը:

4.Փոխզիջման հարցը: Մեր կողմից նշվեց, որ ԼՂ-ն, չնայած պատմական հայկական տարածք է և տարել է ռազմական հաղթանակ, պատրաստ է հանուն փոխզիջման համաձայնվել չմիավորվել Հայաստանի հետ և կամ չհռչակվել որպես անկախ և սուվերեն պետություն և այլն: Սակայն ո՞րն է փոխզիջումը Ադրբեջանի կողմից, ոչ ոք չգիտի այդ մասին: Ռեմլերը ընդգծեց, որ Ադրբեջանի պատրաստակամությունը քննարկել ԼՂ-ի ստատուսի հարցը Ադրբեջանի փոխզիջումն է:

5. Սահմանների կամ տերիտորիալ զիջումների հարցը: Ֆ. Ռեմլերն ընդգծեց, որ Լաչինի հարց գոյություն չունի, այդ տարածքը պետք է կապված լինի ԼՂ-ի հետ: Քննարկվեց նաև Քելբաջարի հարցը: Մենք այն տպավորությունը ստացանք, որ ԱՄՆ-ը պատրաստ է այդ հարցում ընդառաջելու Հայաստանին և ԼՂ-ին՝ զգուշորեն ընդունելով սահմանային այլ փոփոխությունների անհրաժեշտությունը:

6. 907 բանաձևի վերացման հարցը: Ֆ. Ռեմլերն ընդգծեց դրա վերացման անհրաժեշտությունը և չթաքցրեց, որ ԱՄՆ-ի կառավարությունը շարունակելու է իր ջանքերը՝ հասնելու դրան: Նա ուշադրություն դարձրեց հատկապես մեր առաջարկած երկու տարբերակի վրա՝ ա/907-ի վերացումը կապել բլոկադայի վե-

րացման և Ադրբեջանի համաձայնության հետ՝ հրաժարվել ԼՂ-ի վրա ուղղաձիգ տիրապետություն հաստատելու մտադրությունից, բ/907-ի վերացումը կապել միայն Թուրքիայի կողմից բլոկադան վերացնելու հետ: Ֆ.Ռեմլերը խոստացավ դրանք դարձնել ուշադրության առարկա:

Ֆիլիպ Ռեմլերի նախաձեռնությամբ քննարկման առարկա դարձավ Ղարաբաղին Չեզոքության կարգավիճակ տալու և այն չեզոք տարածք հայտարարելու իմ առաջարկությունը: Նա ընդգծեց, որ այն քննարկվում է պետական դեպարտամենտում և մասնավորապես Պասկոյի խմբի կողմից: Նա այդ ծրագիրը բնութագրեց որպես շատ հետաքրքիր («It is vcery interesting project») և հույս հայտնեց, որ դա որպես ոչ ստանդարտ առաջարկություն կարող է նպաստել հարցի լուծմանը: Նա հետաքրքրվեց, թե ինչպես են վերաբերվում այդ ծրագրին Հայաստանում, Ղարաբաղում և Սփյուռքում: Ռեմլերը միաժամանակ ինձ հետ համաձայնվեց, որ ծրագիրը կազմված է՝ ելնելով գոյություն ունեցող իրողություններից, և հաշվի է առնում յուրաքանչյուր կողմի արժանապատվությունը:

Ընդհանուր տպավորությունն այն էր, որ Ֆիլիպ Ռեմլերը հակված էր արդարացնելու Մինսկի խմբի քաղաքականությունը և ձեռնարկած բոլոր քայլերը՝ համարելով դրանք ճիշտ և հավասարակշռված: Մյուս կողմից ակնհայտ էր, որ նա հասկանում է փոփոխությունների և նոր մոտեցումների անհրաժեշտությունը, թեև դա արտահայտվում էր զգուշավորությամբ, որը սովորաբար բնորոշ է արտաքին գործերի մինիստրության պաշտոնյաներին:

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյան

36.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ ՊԱՐՈՆ ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ նախարար.

1998 թ. ապրիլի 27-28-ին Թեհրանում կայացավ Կենտրոնական Ասիային և Անդրկովկասին նվիրված Միջազգային սեմինար «Տարածաշրջանային պետությունների դերը կոնֆլիկտների լուծման և տնտեսական զարգացման մեջ» թեմայով:

Այն կազմակերպել էր Իրանի Արտաքին գործերի քաղաքական և միջազգային ուսումնասիրությունների ինստիտուտը, որին մասնակցում էին մոտ քսան երկրների՝ ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի, Շվեդիայի, Ռուսաստանի, Ուկրաինայի, Վրաստանի, Հայաստանի, Ադրբեջանի, Հնդկաստանի, Չինաստանի, Պակիստանի և այլն, մոտ 100 մասնագետներ:

Սեմինարի աշխատանքներին մասնակցում էինք նաև մենք՝ որպես Հայաստանի ներկայացուցիչ, և հանդես եկանք զեկուցումով՝ «Լեռնային Ղարաբաղի կոնֆլիկտի լուծման տարբերակների մասին»:

Ցանկանում ենք, պարո՛ն նախարար, ձեր ուշադրությանը ներկայացնել սեմինարի ընթացքում արտահայտված մի քանի տեսակետներ, որոնք կարող են հետաքրքրություն ներկայացնել Հայաստանի արտաքին քաղաքականության տեսակետից:

Սեմինարը Իրանի կառավարության ուշադրության տեսադաշտում էր և հովանավորվում էր նրա կողմից:

Սեմինարի մասնակիցների առջև հանդես եկավ Իրանի Արտաքին գործերի նախարար Քամալ Խարազին, որը չթաքցրեց իր երկրի մտահոգությունը տարածաշրջանում գոյություն ունեցող իրավիճակից: Նա մասնավորապես ընդգծեց Իրանի դիրքորոշման անփոփոխ լինելը ԱՄՆ-ի նկատմամբ: Միաժամանակ նա իր տարակուսանքը հայտնեց Ռուսաստանի քաղաքակա-

նության նկատմամբ, կապված Կասպից ծովի հարցում վերջինիս մոտեցմանը Ղազախստանի հետ և նրա դիրքորոշման փոփոխությունը Կասպից ծովի ջրային տարածքի բաժանման հետ: Դա անակնկալ է եղել Իրանի համար, և Խարազին առիթը բաց չթողեց նշելու, որ Իրանը մնացել է հավատարիմ Ռուսաստանի հետ որդեգրած քաղաքականությանը, մինչդեռ Ռուսաստանը, առանց հաշվի նստելու Իրանի հետ, միակողմանիորեն փոխել է իր քաղաքականությունը:

Խարազին անդրադարձավ Հայաստանում կատարված փոփոխություններին՝ ընդգծելով, որ «Իրանը շատ մոտիկից հետևում է դեպքերի զարգացմանը Հայաստանում»: Երբ ելույթի ավարտից հետո նա դուրս էր գալիս դահլիճից, մոտեցավ ինձ, ձեռքով բարևեց, մի պահ կանգ առավ, և մենք իրար հետ տեսակետներ փոխանակեցինք: Խարազին ինձ ասաց, որ իրենք պատրաստ են զարգացնելու հարաբերությունները Հայաստանի հետ և ակնարկեց այն մասին, որ «Իրանը պատրաստ է մասնակցելու Ղարաբաղյան կոնֆլիկտի լուծման պրոցեսին, սակայն պետք է ստեղծել համապատասխան մեխանիզմ»:

Ինձ հետ երկու անգամ զրույց ունեցավ Իրանի արտաքին գործերի նախարարի տեղակալ Խոշրոհին իր նախաձեռնությամբ: Նա, կարևորելով հայ-իրանական հարաբերությունները, այն միտքն արտահայտեց, որ այդ հարաբերությունները պետք է ընդգրկեն ոչ միայն տնտեսական, այլև գործնականում բոլոր ոլորտները, այդ թվում և քաղաքական: Քանի որ այդ մասին շատ էր խոսվում, ինձ մոտ այն տպավորությունը ստացվեց, որ դա Իրանի կառավարության նոր դիրքորոշումն է, որին այլևս չեն բավարարում միայն առևտրատնտեսական հարաբերությունները Հայաստանի հետ: Սակայն այդ հարցում, մեր կարծիքով, զգուշություն պետք է ցուցաբերել: Իրանը ռեժիմային երկիր է, փակ հասարակություն և հետապնդում է իր ուրույն նպատակները մեր տարածաշրջանում: Չժխտելով ինչ-որ չափով Իրանի հետ հարաբերությունների ընդլայնման անհրաժեշտությունը՝

միաժամանակ դա պետք է արվի որոշակի շրջանակներում, այնպես որ Հայաստանը կախման մեջ չընկնի Իրանից և ակամայից չհայտնվի Իրանի քաղաքական շահերի ոլորտում, որը կարող է բացասաբար անդրադառնալ այլ երկրների հետ Հայաստանի հարաբերությունների վրա:

Ադրբեջանի ներկայացուցիչը՝ սոցիալ-դեմոկրատական կուսակցության ղեկավար Զարդուշտ Ալի-զադեն, Ղարաբաղի վերաբերյալ Ադրբեջանի հանրահայտ տեսակետները կրկնելուց հետո, անդրադարձավ Ղարաբաղի բանակցային ֆորմատին: Նա պահանջում էր, որ բանակցային պրոցեսին մասնակից լինեն նաև Իրանը և Վրաստանը: Եթե Իրանի նկատմամբ դա ուղղակի ժեստ էր, ապա Վրաստանի առնչությամբ դա, ինչպես մեզ թվում է, արտահայտությունն էր այն նոր իրողության, որ Վրաստանն օրեցօր ավելի ու ավելի է ընկղմվում ադրբեջանա-թուրքական օվկիանոսը, և Բաքվում, ըստ երևույթին, ենթադրում են, որ Վրաստանի ձայնը իրենց գրպանում է:

Մենք առանձին զրույց ունեցանք Անկարայի համալսարանի դոկտոր Մուստաֆա Այդինի հետ: Շոշափելով թուրք-ադրբեջանական հարաբերությունները և Թուրքիայի կողմից Ղարաբաղի հարցում Ադրբեջանին անվերապահորեն պաշտպանելու հարցը՝ դոկտոր Այդինն ասաց բառացիորեն հետևյալը. «Թուրքիան Ադրբեջանի գերին է» («Turkey is the prisoner of Azerbaijan»): Նա նշեց, որ Թուրքիայում հասկանում են Հայաստանի հետ հարաբերությունները կարգավորելու անհրաժեշտությունը, այդ թվում և սահմանի բացման կարևորությունը: Սակայն նրա կարծիքով դա շատ դժվար է անել. «…քանի որ ազգային կրքերն այն աստիճանի են բորբոքված Թուրքիայում, թուրքական իշխանություններն այնքան շատ և շռայլորեն են խոստումներ տվել Ադրբեջանին, որ այսօր մեծ ռիսկի հետ է կապված նման փոփոխությունների դիմել առանց ղարաբաղյան հարցում որևէ առաջադիմության»:

Սեմինարում ուղղակի հարց բարձրացվեց որոշ երկրների,

այդ թվում և Հայաստանի կողմից Թուրքիայում ծավալված քրդական շարժմանն օժանդակելու և օգնություն ցույց տալու մասին: Մենք տվեցինք անհրաժեշտ բացատրություններ՝ նշելով նման մեղադրանքների անհիմն լինելն այնքանով, որքանով դա վերաբերում է Հայաստանին:

Սեմինարի որոշ մասնակիցներ, այդ թվում և Ռուսաստանի ներկայացուցիչը, Աֆրիկայի ինստիտուտի տնօրեն պրոֆեսոր Ալեքսեյ Վասիլևն այն տեսակետն արտահայտեցին, որ ԱՄՆ-ում հայկական լոբբին պարտություն կրեց նավթային ընկերությունների հետ մղված պայքարում, և՛ ԵԱՀԿ-ն, և՛ նրա Մինսկի խումբը որդեգրեցին նրանց տեսակետները: Դրանով են բացատրվում Մինսկի խմբի դիրքորոշման կոշտացումը և Հայաստանի վրա գործադրվող ճնշման սաստկացումը:

Պատվիրակությունների ճնշող մեծամասնության մոտ այն տեսակետն էր իշխում, որ շատ հնարավոր է պատերազմի վերսկսումը և ղարաբաղյան կոնֆլիկտի լուծումը պատերազմի միջոցով: Ընդ որում նրանք չեն կասկածում Ադրբեջանի հաղթանակի մեջ, և յուրատեսակ ճնշում էր գործադրվում Հայաստանի վրա՝ նրանից ակնկալելով լուրջ սկզբունքային զիջումներ, ի մասնավորի Ղարաբաղը ճանաչել որպես Ադրբեջանի անբաժան մաս, թեկուզ ինքնավարության կարգավիճակով:

Մենք մեր ելույթում ներկայացրինք Հայաստանի արտաքին քաղաքականության սկզբունքները և նոր մոտեցումները ղարաբաղյան հարցում՝ հենվելով նաև մեր հանդիպման ժամանակ ձեր կողմից արտահայտված մտքերի վրա: Ունկնդիրները դա ընդունեցին ամենայն լրջությամբ:

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյան

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն

Կոնֆլիկտների լուծման Հայաստանի Կենտրոնի տնօրեն:

37. ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ ՊԱՐՈՆ ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆՅԱՆԻՆ

«ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Մայիս 1998

Գիտաժողովը կազմակերպվել էր Ֆրիդրիխ Նաումանի և Ֆրիդրիխ Էբերտի ֆոնդերի նախաձեռնությամբ, որին մասնակցում էին Գերմանիայի, Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի մասնագետները, գիտնականները, պառլամենտականները և ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչները:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ թեև գիտաժողովը տեղի ունեցավ Սոֆիայում, սակայն դա համարվում էր գերմանական միջոցառում, և Գերմանիայի ներկայացուցիչներն էին տնօրինում բոլոր հարցերը:

Գիտաժողովում արտահայտվեցին մի շարք տեսակետներ, որոնցից ամենաուշագրավները ներկայացնում ենք ստորև:

1. Գերմանիայի արտաքին գործերի նախարարության՝ Կովկասի հարցերով պատասխանատու Յոզեֆ Վայսն ինձ հետ ունեցած առանձնազրույցում դրականորեն գնահատեց մեր այցը: Նա այդ այցը կարևորեց այն հանգամանքով, որ մինչ այդ Հայաստանը Գերմանիայի ղեկավարության կարծիքով իբրև թե անտեսում էր Գերմանիային, և գերմանական ղեկավարությունը, ըստ Վայսի, դրանից վիրավորված էր: «Հիմա լավ է, շարունակեց նա, որ դուք հաշվի եք առնում մեզ»:

Դրա հետ միասին Յոզեֆ Վայսը գիտաժողովում ունեցած իր ելույթներում բավականին կոշտ ձևով նշեց, որ Հայաստանը և Ադրբեջանը պարտավոր են համաձայնության գալ, հակառակ

դեպքում «Գերմանիան ՆԱՏՕ-ի հետ միասին իրենց ձեռքը կվերցնեն նավթամուղի պաշտպանությունը, նավթը կհոսի, ձեր կոնֆլիկտն էլ կշարունակվի անվերջանալիորեն»: Շարունակելով իր դատողությունները, որոնց մեջ նկատվում էին սպառնալի երանգներ, Վայսը հայտարարեց, որ «ՄԱԿ-ը չի ուզում ձեր հարցով զբաղվել: Եվ եթե Եվրոպան էլ մի կողմ քաշվի, ապա ձեզնով ոչ ոք չի զբաղվի»: Վայսն իր ելույթներից մեկում շատ կոպիտ ձևով, համարյա վերջնագրի տոնով հայտարարեց հետևյալը. «ՆԱՏՕ-ն և Գերմանիան չեն համաձայնվի, որ ԼՂՀ-ն դառնա անկախ պետություն: Նա պետք է Ադրբեջանի մասը կազմի»:

Հանուն ճշմարտության պետք է նշեմ, որ այդ տարիներին ես իմ բազմաթիվ հանդիպումների ժամանակ տարբեր երկրների ներկայացուցիչների, այդ թվում և բարձրակարգ ղեկավարների, անգամ առաջին դեմքերի հետ քննարկել եմ Ղարաբաղյան հարցը, սակայն նրանցից ոչ մեկն իրեն թույլ չի տվել նման տոնով խոսել: Ես այդ մասին ուղղակի ասացի Վայսին, որ ինքը թող չափավորի և զգույշ լինի իր արտահայտություններում:

Գիտաժողովի ավարտին՝ Վայսը ինձ հետ ունեցած առանձնազրույցում, խնդրեց Ձեզ, հարգելի՛ նախարար, փոխանցել հետևյալը. «Արդյո՞ք հնարավոր չէ, որ Հայաստանը վերացնի Նախիջևանի շրջափակումը»: Ըստ նրա՝ Հայաստանի այդ ժեստը դրական տպավորություն կթողներ համաշխարհային հասարակայնության վրա:

Այդ մասին ինձ հետ ունեցած զրույցում նշեցին նաև Ֆրիդրիխ Նաումանի ֆոնդի Ռեգիոնալ բյուրոյի խորհրդական Վոլֆգանգ Յոնը և Հայդելբերգի համալսարանի պրոֆեսոր Ռաուլ Մոտիկան:

Ինձ մոտ այն տպավորությունը ստացվեց, որ Գերմանիան սկսել է առանձնահատուկ ուշադրություն դարձնել Նախիջևանին: Ես չեմ բացառում, որ դա կապված է թուրք-գերմանական հարաբերությունների հետ, ձգտում են կատարել Թուրքիայի

պատվերը, քանի որ վերջինս նույնպես առանձնահատուկ վերաբերմունք ունի Նախիջևանի նկատմամբ: Միաժամանակ Գերմանիան դրանով ցանկանում է բարձրացնել իր դերն ու կշիռը և ազդեցությունը Անդրկովկասում:

Մյուս կողմից, գիտաժողովում գերմանական կողմը, այդ թվում և Բունդեսթագի դեպուտատ Դիտրիխ Շպերլինգը անընդհատ շեշտում էր «փոքր քայլեր» կատարելու անհրաժեշտությունը՝ ընդգծելով, որ եթե չի հաջողվում խոշոր քայլեր կատարել, ապա պետք է փորձել կատարել փոքր քայլեր: Նախիջևանի հարցը նրանք փորձում էին տեղավորել այդ սխեմայի մեջ:

2. Մի շարք սուր հարցեր առաջադրվեցին Հայդելբերգի համալսարանի պրոֆեսոր Ռաուլ Մոտիկայի ելույթում: Նա նշեց հետևյալը. «Առանց խաղաղության Անդրկովկասը ապագա չունի: Ղարաբաղյան կոնֆլիկտը խանգարում է Անդրկովկասի տնտեսական ինտեգրացմանը: Դրա հետևանքով փակված են առևտրատնտեսական ուղիները Հայաստանի, Ադրբեջանի, Նախիջևանի և Թուրքիայի միջև: Դրանից օգտվում են մյուս պետությունները՝ Ռուսաստանը Հայաստանի միջոցով, և Թուրքիան Ադրբեջանի միջոցով»: Նրա կարծիքով առկա են երկու պոտենցիալ կոնֆլիկտներ՝ Ադրբեջանը Իրանի հետ, և Հայաստանը Թուրքիայի հետ:

Մոտիկան նշեց, որ Ուկրաինա-Մոլդովա-Վրաստան - Ադրբեջան (ГУАМ) միջանցքը հեռանկար չունի: Այդ չորս պետությունների կողմնորոշումը դեպի Արևմուտք և թշնամական դիրքորոշումը Ռուսաստանի նկատմամբ հանգեցրել են այդ միջոցառման կամ ծրագրի ձախողմանը:

Նա ընդգծեց, որ Արևմտյան Եվրոպայի կարծիքով ուզածդ ինտեգրացիա կամ կոոպերացիա, որն ուղղված է Ռուսաստանի դեմ, չի կարող հաջողություն ունենալ:

3.Սրտաբաց զրույց տեղի ունեցավ Վրաստանի պատվիրակության հետ: Վրաստանի պառլամենտի անդամ, Վրաստանի սոցիալիստական կուսակցության նախագահ Վախթանգ Ռչեու-

շվիլին, որն անձնական մոտ հարաբերություններ ունի Էդվարդ Շևարդնաձեի հետ, ուղղակի ասաց, որ տերիտորիալ ամբողջականության հարցում նրանք լիովին պաշտպանում են Ադրբեջանին, այդ թվում և Ղարաբաղի հարցում:

Կարևոր էր Վրաստանի պառլամենտի Միջազգային հարաբերությունների կոմիտեի նախագահ Կախա Չիտայայի ելույթը: Նա չհամաձայնվեց հայերի մտավախության հետ, որ Վրաստանը փորձում է մեկուսացնել Հայաստանին, ընդգծեց Հայաստանի հետ հարաբերությունների կարևորությունը Վրաստանի համար, որ Վրաստանի հետ սերտ հարաբերությունները Ադրբեջանի և Թուրքիայի հետ ուղղված չեն Հայաստանի դեմ, և որ անդրկովկասյան տնտեսական ինտեգրացիան անհնար է առանց Հայաստանի:

Չիտայան նշեց Վրաստանի արտաքին քաղաքականության չորս սկզբունքները.

ա/ դեմոկրատիայի և դեմոկրատական ինստիտուտների զարգացում,

բ/ կոնֆլիկտների ոչ ուժային, խաղաղ լուծումներ՝ հաշվի առնելով բոլորի շահերը,

գ/ Վրաստանը չի ձգտում գերակայող կամ տիրապետող դիրքերի Անդրկովկասում,

դ/ Վրաստանը գտնում է, որ անդրկովկասյան բոլոր հանրապետությունները լիիրավ մասնակցություն պիտի ունենան ռեգիոնալ, տնտեսական, ինֆրաստրուկտուրային և այլ ծրագրերի:

Իսկ ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա ադրբեջանական պատվիրակությունը միահամուռ գտնում էր, որ ղարաբաղյան հարցի միակ և Ադրբեջանի համար ընդունելի լուծումը Ղարաբաղը Ադրբեջանի կազմ վերադարձնելն է: Մինչ այդ անհնար է տնտեսական համագործակցությունը: Նրանք կոչ էին անում Հայաստանին «ազատագրվել» միջնադարյան մենթալիտետից և հոգեբանությունից: Նրանց դիրքորոշումից տրամա-

բանորեն բխում էր, որ Ադրբեջանը չի բացառում ռազմական ուղիներով ղարաբաղյան հարցի լուծումը:

Այս կամ այն կերպ այդ փաստարկը, ինչպես նաև այն, որ Հայաստանը մեկուսացված է, ավելի կմեկուսանա և կհայտնվի ահավոր ծանր քաղաքական և տնտեսական վիճակում, օգտագործվում էր նաև գերմանական պատվիրակության կողմից:

Հարգելի՛ պարոն Վարդան Օսկանյան, ինչպես ես Ձեզ տեղյակ եմ պահել, մայիսի 31-ին մեկնում եմ Իսրայել և կվերադառնամ հունիսի 7-ին:

Խորին հարգանքներով՝

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյան

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն

27 մայիսի 1998թ.

38. ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ ՊԱՐՈՆ ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆՅԱՆԻՆ

ԻՍՐԱՅԵԼԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ ԶՐՈՒՅՑԻ ՄԱՍԻՆ

Երուսաղեմի հրեական համալսարանի Հարրի Տրումենի խաղաղության ինստիտուտի հրավերով 1998թ. մայիսի 31-ից հունիսի 7-ը գտնվում էի Երուսաղեմում և մասնակցեցի «Մեծ Մերձավոր Արևելքը Գլոբալ Աշխարհաքաղաքական Համակարգի Շրջանակներում» պրոբլեմի քննարկմանը: Այդ ծրագրի առաջին փուլը նվիրված էր «Կովկասի տեղը Մեծ Մերձավոր Արևելքում» հարցին:

Այդ պրոբլեմի մշակմանը մեր հեղինակային կոլեկտիվը ձեռնամուխ էր եղել 1996 թվականից: Նրա մշակումն իրականացվում էր Իսրայելի երեք, Հորդանանի մեկ և Հայաստանի մեկ՝ տողերիս հեղինակը, մասնագետների կողմից:

Ահա այդ ժամանակ ինձ զանգահարեցին Իսրայելի Արտա-

քին գործերի նախարարությունից և հայտնեցին, որ ինձ հետ ցանկանում են հանդիպել: Այդ մասին ինձ տեղյակ էր պահել նաև Իսրայելի դեսպանությունը Թբիլիսիից:

Հանդիպմանը իսրայելական կողմից մասնակցում էին ԱՊՀ-ի, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի Գլխավոր տնօրենի տեղակալ Շիմոն Շտեյնը և Արևելյան Եվրոպայի Երրորդ բաժնի տնօրեն Շմուելը Մեյրոնը, որը զբաղվում է Իսրայելի ԱԳՆ-ի Կովկասի և Կենտրոնական Ասիայի հարցերով:

Զրույցի սկզբում Շտեյնը խնդրեց, որ ես լուսաբանեմ Հայաստանի նոր ղեկավարության արտաքին քաղաքականությունը: Ես դա կատարեցի՝ հենվելով գլխավորապես 1998թ. հունիսի 21-ին Հայաստանի Ամերիկյան համալսարանում Հայաստանի արտաքին քաղաքականության մասին Ձեր ներկայացրած դրույթների հիման վրա: Ելնելով այդ դրույթներից և Իսրայելի նոր դեսպանի ընդունելության ժամանակ ձեր ելույթից՝ ես ընդգծեցի, որ Հայաստանը ցանկանում է զարգացնել և խորացնել իր հարաբերությունները Իսրայելի հետ՝ շեշտելով երկու տերությունների հարաբերությունների մեջ նոր էջ բացելու անհրաժեշտությունը:

Շտեյնը, շնորհակալություն հայտնելով իմ տված տեղեկության համար, շարադրեց Իսրայելի կառավարության տեսակետը հայ-իսրայելական հարաբերությունների ներկա վիճակի և զարգացման հեռանկարների մասին: Նա բառացիորեն ասաց հետևյալը. «Ես բավարարված չեմ հայ-իսրայելական հարաբերությունների ներկա մակարդակով: Հայաստանի հետ հարաբերություններին մենք անհրաժեշտ ուշադրություն չենք դարձրել: Ընդհանրապես մենք թերագնահատել ենք ձեր տարածաշրջանի գեոպոլիտիկ նշանակությունը: Մենք ուշացել ենք, բայց հիմա էլ ուշ չէ հարաբերությունները զարգացնելու համար: Իսրայելը չէր ցանկանա, որ անդրկովկասյան տարածաշրջանից որևէ երկիր, տվյալ դեպքում Հայաստանը, դուրս մնար իր հարաբերությունների ոլորտից: Այնուհետև նա նշեց, որ «Իսրայելը լավ հարա-

բերություններ ունի Ադրբեջանի և Թուրքիայի հետ: Սակայն ուզում եմ վստահեցնել ձեզ, որ դա չի կատարվում Հայաստանի հետ հարաբերությունների հաշվին, և, առավել ևս, ուղղված չեն Հայաստանի դեմ»: Այնուհետև Շտեյնը նշեց, որ իրենք Թուրքիայի հետ իրականացնում են ռազմական համագործակցություն: Դա պայմանավորված է Իսրայելի քաղաքական վիճակով: Եվ բացելով փակագծերը՝ Շտեյնը նշեց, որ իրենք շրջապատված են թշնամական որոշ պետություններով, այդ թվում՝ Իրանը: Ռազմական համագործակցությունը Թուրքիայի հետ ամրապնդում է Իսրայելի անվտանգությունը և ուղղված չէ Հայաստանի դեմ:

Այնուհետև նա անդրադարձավ Վրաստանի հետ Իսրայելի հարաբերություններին՝ նշելով, որ Իսրայելն ունի լավ հարաբերություններ Վրաստանի հետ, որը նույնպես չի իրականացվում Հայաստանի հաշվին: Շտեյնը ընդգծեց, որ այդ լավ հարաբերությունները պայմանավորված են մեր հարաբերությունների 2600-ամյա պատմությամբ և Վրաստանում հրեական ազդեցիկ համայնքի առկայությամբ: Շարունակելով իր վերլուծականը՝ Շտեյնն ասաց. «Մենք ուզում ենք, որ դուք իմանայիք այս մասին և ընդունեիք ի գիտություն, ինչպես մենք ենք ըմբռնումով ընդունում ձեր կողմից տրված այն բացատրությունը, որ Հայաստանի լավ հարաբերությունները Իրանի և արաբական երկրների հետ չունեն հակաիսրայելական ուղղվածություն: Մենք ցանկանում ենք Հայաստանի հետ մեր հարաբերություններում բացել նոր էջ, ոչ թե նոր գլուխ, այլ նոր էջ: Հայաստանն ունի իր ուրույն տեղը, և մենք պատրաստ ենք զարգացնելու և խորացնելու մեր հարաբերությունները Հայաստանի հետ պետական –կառավարական, պառլամենտական, գիտական, տնտեսական, մշակութային և այլ մակարդակներով»:

Այնուհետև, անսպասելիորեն Շտեյնը մի հետաքրքիր միտք արտահայտեց: Նա ասաց. «Մենք այստեղ՝ Իսրայելում, ոչինչ չգիտենք Հայաստանի մասին, բացի գենոցիդից»: Եվ նա առաջարկեց, որ Հայաստանը պետք է օգնի Իսրայելին, որ նա ճանաչի ձեզ,

թող Հայաստանը Իսրայել ուղարկի իր գործարարներին, թող գան նրանք Իսրայել, ծանոթանան մեզ հետ, իսկ մենք՝ նրանց հետ: Նա միաժամանակ առաջարկեց, որ հայկական կողմը պատրաստի նյութեր Հայաստանում կապիտալ ներդրումներ կատարելու պայմանների և հնարավորությունների մասին: Մասնավորը պետք է լավ իմանա, արժե՞ արդյոք ներդրում կատարել, թե՞ ոչ:

Ի պատասխան իմ այն դիտողությանը, որ Հայաստանում տարակուսանքով են ընդունում այն հանգամանքը, որ հրեա որոշ մասնագետներ Հայոց ցեղասպանության հարցում պաշտպանում են Թուրքիայի դիրքորոշումը: Շտեյնը տվեց հետևյալ պատասխանը: Իսրայելը բաց, դեմոկրատական հասարակություն է և չի կարող վերահսկել անհատների մտքերը և նրանց տալ համապատասխան ուղղվածություն: Դիմելով ինձ՝ նա ասաց, որ ինքը կառաջարկեր ինձ, որ ես խոսեի Հարրի Տրումենի ինստիտուտի գործադիր տնօրեն, պրոֆեսոր Էդդի Կաուֆմանի հետ, և պայմանավորվեինք Իսրայելում Հայոց ցեղասպանությանը նվիրված գիտաժողով անցկացնելու մասին: «Եկեք ինքներդ ներկայացրեք ձեր տեսակետները առանց միջնորդների»: Ես այդ մասին տեղյակ պահեցի Էդդի Կաուֆմանին: Մենք լավ գիտեինք միմյանց: Մենք ԱՄՆ-ի Մերիլենդի Համալսարանում համատեղ աշխատել ենք էթնոքաղաքական կոնֆլիկտները Ղարաբաղում, Աբխազիայում և Հարավային Օսեթիայում լուծելու ուղղությամբ, և ես դիմեցի նրան Շտեյնի առաջարկը կատարելու վերաբերյալ: Կաուֆմանը խոստացավ ինձ մտածել այդ առաջարկության մասին: Բայց ինձ անհայտ պատճառներով սայլը տեղից այդպես էլ չշարժվեց:

Շտեյնը շոշափեց նաև Հայաստանում իսրայելական դեսպանություն բացելու մասին: Ես պաշտպանեցի այդ առաջարկությունը՝ գտնելով, որ դա կհեշտացնի հայ-իսրայելական հարաբերությունների զարգացումը և խորացումը բոլոր ուղղություններով: Սակայն Շտեյնը հիասթափեցրեց ինձ, երբ նա, ի պատասխան իմ դրական մոտեցման, նշեց, որ դա այժմ

հնարավոր չէ, քանի որ Իսրայելն ունի ֆինանսական խնդիրներ և շատ երկրներում իր դեսպանությունները միավորում է: Սակայն Շտեյնը ինձ տեղյակ պահեց, որ կարգադրել է Թբիլիսիում իսրայելական դեսպանության թիվ 1 աշխատակցին յուրաքանչյուր ամիս լինել Երևանում և տեղում քննարկել երկու կողմերին հետաքրքրող հարցերը: Շտեյնը դեմ չարտահայտվեց Երևանի և Թել Ավիվի միջև ուղիղ օդային հաղորդակցություն հաստատելու գաղափարին, սակայն պետք է հաշվի առնել տնտեսական շահավետության հարցերը: Նա գտնում էր, որ դա կարելի է իրականացնել՝ միջանկյալ վայրէջք կատարելով, սակայն հրաժարվեց ճշգրտելուց, թե որ երկիրը կլինի ընդունելի նրանց համար՝ առաջարկելով, թե դա դուք պետք է լուծեք:

Շտեյնը միաժամանակ կարևորեց հարաբերությունների զարգացումը Ռուսաստանի հետ, նշելով, որ սխալ է Ռուսաստանին հաշվից դուրս նետելը:

Իմանալով, որ ես արաբական երկրների և Մերձավոր Արևելքի ժամանակակից հարցերի մասնագետ եմ, Շտեյնը խնդրեց ինձ լուսաբանել իրադրությունն այդ տարածաշրջանում, զարգացման միտումները Իրանում, Սիրիայում, Լիբանանում, Սաուդյան Արաբիայում և այլն: Ես նրան անհրաժեշտ բացատրություններ տվեցի նաև «Մեծ Մերձավոր Արևելք» ծրագրի վերաբերյալ: Նա միաժամանակ տեղյակ պահեց, որ աշնանը ինքը ամենայն հավանականությամբ կայցելի Երևան: Իսկ մինչ այդ, ընդգծեց Շտեյնը, մենք պատրաստ ենք կրկին ընդունել Ձեզ:

Զրույցին մասնակցող Շմուլել Մեյրոնը, կիսելով Շտեյնի արտահայտած մտքերը, ասաց. «Ես հարաբերությունները Հայաստանի հետ գնահատում եմ ոչ լավ: Երկուստեք հնարավորությունները չեն օգտագործվել: Մենք շատ սխալներ ենք թույլ տվել: Հավանաբար դուք էլ կընդունեք, որ սխալներ եք թույլ տվել՝ առանց նշելու, թե որոնք են այդ սխալները»:

Նա նույնպես կարևորեց հարաբերությունների զարգացումը Հայաստանի հետ: Ելնելով այն դրույթից, որ հայ-իսրայե-

լական միջպետական հարաբերություններն անհրաժեշտ է զարգացնել և բարձրացնել նոր մակարդակի, Մեյրոմն ընդգծեց, որ «Հարաբերությունների հետագա զարգացման համար պատվավոր հյուպատոսի պաշտոնը բավարար չէ, թեև պարոն Մոմջյանը՝ թե՛ որպես անձնավորություն և թե՛ որպես պաշտոնյա, իրեն շատ լավ է դրսևորում: Արդյոք հնարավոր չէ՞, որ Հայաստանը Իսրայելում նշանակի դեսպան համատեղության կարգով (Non-residental ambassador): Սակայն արաբական երկրներում, այդ թվում և Եգիպտոսում, Հայաստանի որևէ դեսպանի նշանակումը Իսրայել որպես Non-residental ambassador Իսրայելի համար ցանկալի չէ»:

Հետագա զրույցից հասկանալի դարձավ, որ Իսրայելի համար ընդունելի կլիներ Հայաստանի դեսպանը Հունաստանում:

Մեյրոմն իմ ուշադրությունը հրավիրեց հետևյալ հանգամանքի վրա: Իսրայելի մինիստրներից մեկն է նախկինում հայտնի այլախոհ Շչարանսկին: Հայաստանում կա նույնպես նախկին այլախոհ Պարույր Հայրիկյանը: Նրա կարծիքով վատ չէր լինի, եթե Պարույր Հայրիկյանն այցելեր Իսրայել, հանդիպեր և զրուցեր Շչարանսկու հետ: Մեյրոմը գտնում է, որ նման քայլեր նույնպես պետք է ձեռնարկել:

Վերջում, ամփոփելով մեր զրույցը, Մեյրոմը նշեց, որ հայ-իսրայելական հարաբերություններին պետք է հաղորդել դինամիզմ: Նա մեր զրույցը գնահատեց որպես հետաքրքիր, կարևոր և օգտակար, որի հետ համաձայնվեց Շտեյնը:

Իմ ընդհանուր տպավորությունը, պարո՛ն նախարար, այն է, որ Իսրայելը լրջորեն է մոտենում Հայաստանի հետ հարաբերությունները զարգացնելու և նոր մակարդակի բարձրացնելու խնդրին: Դա, ամենայն հավանականությամբ, կապված է մեր տարածաշրջանում Իսրայելի քաղաքականության ակտիվացման, իր քաղաքական կշռի բարձրացման, Անդրկովկասում ձևավորված երկու հակադիր ուժերի՝ Հայաստան և Ադրբեջան ու Թուրքիա, միջև ավելի հավասարակշռված քաղաքականություն վարելու ձգտման հետ: Իսրայելի այդ ձգտմանը Հայաստանի

դրական արձագանքը, կարծում ենք, համապատասխանում է Հայաստանի ազգային-պետական շահերին, կնպաստի նրա դիրքերի ամրապնդմանը անդրկովկասյան- մերձավորարևելյան աշխարհաքաղաքական տարածաշրջանում և կընդլայնի Հայաստանի գործունեության և մանևրելու քաղաքական դաշտը:

Հարգանքներով՝

Պրոֆ. Նիկոլայ Հովհաննիսյան,

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն,

15 հունիսի 1998

Երուսաղեմ-Երևան:

39. ՆՈՐ ՍԱՀՄԱՆՆԵՐ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՄԱՐ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍ

1998 թ. դեկտեմբերի 11-12-ին Վենետիկում տեղի ունեցավ միջազգային կոնֆերանս Եվրոպական միության և Իտալիայի արտաքին գործերի նախարարության նախաձեռնությամբ և հովանու ներքո՝ նվիրված «Նոր սահմաններ Եվրոպայի համար. Կենտրոնական Ասիա և Անդրկովկաս» հարցին: Նրան մասնակցում էին Եվրոպական միության զանազան կոմիտեների և 16 պետությունների՝ ԱՄՆ-ի, Անգլիայի, Չինաստանի, Հնդկաստանի, Ռուսաստանի, Իրանի, Ռումինիայի, Ֆրանսիայի, Հայաստանի, Վրաստանի, Ղազախստանի, Ուզբեկստանի և մի շարք այլ երկրների ներկայացուցիչներ և Եվրոպառլամենտի անդամներ:

Կոնֆերանսում փաստորեն ներկայացվեց նոր կոնցեպցիա Եվրոպայի քաղաքականության համար՝ հանդեպ Անդրկովկասը և Կենտրոնական Ասիան: Ընդգծվեց, որ այդ տարածաշրջանն ունի ստրատեգիական, քաղաքական և տնտեսական կարևոր նշանակություն Եվրոպայի համար, և այստեղ ուժեղ դիրքեր ունենալու համար ուժեղ պայքար է գնում: Մասնավորապես ԵՄ-ի բարձրաստիճան պաշտոնյա Գրիգորե Պոպեսկուն ընդգծեց, որ Կենտրոնական Ասիան և Անդրկովկասը մի մեծ շախմատային

տախտակ են: Ռուսաստանը ոչ միայն կողմնակի դիտորդ է, ինչպես ցանկանում են ոմանք, այլ ակտիվորեն գործող պետություն: Կենտրոնական Ասիան, նրա կարծիքով, ոչ միայն նավթ և գազ ստանալու աղբյուր է, այլև ելք Եվրոպայի համար դեպի նոր տարածաշրջան, երկու մշակույթների հանդիպում: Եվրոպան, ըստ նրա, նոր սահմաններ է ձեռք բերում Անդրկովկասում և Կենտրոնական Ասիայում:

Կոնֆերանսում բազմիցս հնչեց այն տեսակետը, որ Կենտրոնական Ասիայում և Անդրկովկասում Եվրոպայի շահերը ոչ միայն միշտ չէ, որ համընկնում են ԱՄՆ-ի կողմից տարվող քաղաքականության հետ, այլև հակասության մեջ են: Այդ միտքը շատ հստակ ձևակերպեց Մեծ Բրիտանիայի լեյբորիստական կուսակցությունից Եվրոպառլամենտի անդամ Պիտեր Տրասկոտրան: Նա որպես օրինակ նշեց ԱՄՆ-ի քաղաքականությունը Իրանի նկատմամբ՝ շեշտելով, որ Եվրոպան դեմ է Իրանին մեկուսացնելու ԱՄՆ-ի քաղաքականությանը և դեմ չէ, որ նավթամուղն անցնի Իրանի տարածքով:

Այս հարցին անդրադարձավ Իտալիայի Արտաքին գործերի նախարարի տեղակալ Վալենտինո Մարտելլին: Նա նշեց, որ Իտալիան հատուկ ուշադրությամբ է հետևում դեպքերի զարգացմանը Կենտրոնական Ասիայում և Անդրկովկասում: Այստեղ կան քաղաքական և էթնիկական հարցեր, որոնք ֆունդամենտալ նշանակություն ունեն մեզ համար: Նավթը և գազը մեծ դեր են խաղալու XXI դարում: Սակայն հարցը ոչ միայն արտադրելն է, այլև փոխադրելը: Այստեղ ուժեղ պայքար է գնում Ռուսաստանի, Թուրքիայի, Ադրբեջանի և ԱՄՆ-ի միջև: Ըստ նրա՝ գազամուղի և նավթամուղի ընտրությունը կարող էր լինել ամենապարզը՝ Կենտրոնական Ասիայից Իրանի վրայով արտաքին աշխարհ:

Մարտելլին իր ելույթում խիստ քննադատեց Թուրքիային, որը նույնպես հրավիրված էր մասնակցելու կոնֆերանսին: Սակայն վերջին պահին Անկարայի համալսարանի պրոֆեսոր Այդին Մուսթաֆան և Հռոմում Թուրքիայի դեսպանը հրաժարվեցին

մասնակցելուց և չժամանեցին Վենետիկ: Պատճառը Թուրքիայի վարչապետ Օզալանի՝ Իտալիայում գտնվելն էր և իտալական իշխանությունների հրաժարվելն էր Քրդական բանվորական կուսակցության առաջնորդին Թուրքիային հանձնելուց:

Վ. Մարտելլին նշեց, որ Թուրքիան ցանկանում է իր հեգեմոնիան հաստատել Կենտրոնական Ասիայում և Անդրկովկասում, ունի գեոպոլիտիկ հավակնություններ և ձգտում է ստեղծել թուրքական հանրապետությունների կոնֆեդերացիա:

Ընդմիջմանը ես առանձնազրույց ունեցա Իտալիայի ԱԳ նախարարի տեղակալ Մարտելլիի հետ և նշեցի, որ չի կարելի նավթի և գազի գործոնը դարձնել միակը և ամենագլխավորը ու անտեսել քաղաքական գործոնը և հավասարակշռված մոտեցումը տարածաշրջանային պրոբլեմներին: Նա համաձայնվեց ինձ հետ, սակայն նշեց, որ նավթի գործոնին կարող են հավասարակշռել դեմոկրատիայի զարգացումը և քաղաքացիական հասարակության կառուցումը: Նա շեշտեց, որ Հայաստանը պետք է այդ հարցերը համարի առաջնային և մեծ ուշադրություն դարձնի պրակտիկ քայլերի վրա: Եվ **երբ քննարկվում էր նավթամուղի հարցը, կապված ալտերնատիվ ուղիների հետ, ապա Իրանի հետ միասին խոսվեց նաև Հայաստանի տարածքով այն անցկացնելու մասին**: Բայց և ընդգծվեց նաև Ղարաբաղյան կոնֆլիկտը՝ որպես այդ տարբերակի խոչընդոտ ծառայող գործոն:

Հայաստանի և Ղարաբաղի հարցը շոշափվեց նաև տարածաշրջանի անվտանգության, ընդհանուր քաղաքական իրադրության և համագործակցության առումով: Այդ տեսակետից ուշագրավ էին երկու ելույթ:

Առաջինը ԱՄՆ-ի ներկայացուցիչ Ջանդոմենիկո Պիկկոյի ելույթն էր: Նա հայտարարեց, որ Իրանը Հայաստանին մատակարարել է 1,5 մլրդ դոլարի արժողությամբ զենք և զինամթերք, ինչն ուժեղ տպավորություն թողեց ներկաների վրա:

Այդ հարցի վերաբերյալ ես զրույց ունեցա Իրանի ներկայացուցիչների՝ Մուսթաֆա Զահրանիի և Նարսի Ղորբանիի հետ:

Նրանք երկուսն էլ, որոնք շատ մոտ են կանգնած կառավարող շրջաններին, նշեցին, որ իրենք այդ մասին ոչ մի տեղեկություն չունեն և այդ մասին առաջին անգամ են լսում:

Ես զրույց ունեցա նաև ԱՄՆ-ի ներկայացուցիչ Պիկկոյի հետ և հարցրի նրան, թե որքանով է ճիշտ նրա տեղեկությունը, և արդյո՞ք հուսալի են նրա աղբյուրները: Պիկկոն ինձ բառացիորեն պատասխանեց հետևյալը. «Հավատացնում եմ ձեզ, հարգելի՛ պրոֆեսոր, որ դրանք հարյուր տոկոսով վստահելի և բացառիկ աղբյուրներ են»:

Ես առանձնազրույց ունեցա նաև Իրանի ներկայացուցիչ, վերևում արդեն նշված Մուսթաֆա Զահրանիի հետ: Հիմնական թեման հայ-իրանական արդի հարաբերություններն էին: Նա բավականին զուսպ արտահայտվեց հայ-իրանական ներկա հարաբերությունների վերաբերյալ՝ իմ ուշադրությունը հրավիրելով երկու հանգամանքի վրա.

ա/ Իրանը կարևորում է հարաբերություններն առաջին հերթին իր անմիջական հարևանների հետ և կցանկանար, որ նույն կերպ վարվեր Հայաստանը, երբ կապի մեջ է մտնում այլ երկրների հետ: Նրա համար նույնպես հարևանների հետ հարաբերությունների հարցը պետք է լինի առաջնային,

բ/ Հայաստանը պետք է հաշվի առնի, որ Իրանի վրա ուժեղ ճնշում է գործադրվում, որ ինքը, լինելով իսլամական պետություն, պաշտպանում և աջակցում է քրիստոնյա Հայաստանին:

Կոնֆերանսում հնչեցին նաև այլ հարցեր: Մասնավորապես Հնդկաստանի ներկայացուցիչ Ֆանչոկ Ստոբդան նշեց, որ Հնդկաստանի համար Կենտրոնական Ասիան ոչ թե գեոպոլիտիկ, այլ ցիվիլիզացիոն հասկացություն է, և որ Կենտրոնական Ասիան Հնդկաստանի համար բացասական դեր է խաղացել և ծառայել որպես միջանցք քոչվոր ցեղերի՝ Հնդկաստան ներթափանցման համար և այլն:

Մենք կցանկանայինք ՀՀ արտաքին գործերի նախարա-

ության ուշադրությունը հրավիրել հետևյալ հանգամանքների վրա, որոնք, ինչպես կարծում ենք, կարևոր են Հայաստանի արտաքին քաղաքականության իրականացման տեսանկյունից:

1. Կասկածից վեր է, որ Եվրոպան մտնում է լուրջ քաղաքական խաղի մեջ անդրկովկասյան-կենտրոնական ասիական տարածաշրջանում իր ուրույն քաղաքական և տնտեսական շահերով, որոնք որոշ, այդ թվում և հանգուցային հարցերում, չեն հանընկնում ԱՄՆ-ի, Ռուսաստանի և Թուրքիայի շահերի հետ: Այդ հանգամանքը կարող է ընդարձակել Հայաստանի մանևրելու հնարավորությունները: Հայաստանը պետք է բոլոր դեպքերում հաշվի առնի եվրոպական գործոնը մեր տարածաշրջանում, որի դերն անպայման աճելու է գալիք XXI դարում:

2. Եվրոպայի համար խիստ կարևոր է դեմոկրատիայի զարգացման հարցը Անդրկովկասի և Կենտրոնական Ասիայի հանրապետություններում: Եվրոպական քաղաքական արժեքների հետևողական կիրառումը, իհարկե, հաշվի առնելով մեր պայմանները և ազգային շահերը, կարող է նպաստել Հայաստանի հեղինակության բարձրացմանը և եվրոպական աջակցության ուժեղացմանը Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող տարբեր հարցերում: Հայաստանը պետք է մեծ ուշադրություն դարձնի իր քաղաքականության եվրոպական ուղղությանը:

3. Իմ տպավորությունն այն է, որ անհրաժեշտ է տարբեր մակարդակներով Իրանի ղեկավարության և մասնագետների հետ հստակություն մտցնել երկու երկրների քաղաքականության որոշ ասպեկտների պարզաբանման մեջ և խուսափել թյուրիմացություններից և սխալ մեկնաբանումներից:

Պահպանելով Հայաստանի քաղաքականության վերաբերյալ Երևանում որոշումներ ընդունելու մեր անսասան իրավունքը և ազգային արժանապատվությունը՝ մյուս կողմից չպետք է թույլ տալ հարաբերությունների սառեցում Իրանի հետ՝ հաշվի առնելով նրա կարևորությունը թե՛ մեզ և թե՛ ամբողջ տարածա-

շրջանի համար: Իսկ որ Իրանի դերը տարածաշրջանում առաջիկայում մեծանալու է, դրանում կասկած չի կարող լինել:

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյան
ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի
տնօրեն:

40. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՐԵԶԻԴԵՆՏ ՊԱՐՈՆ ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ. ՄԵՐ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ ԱՄՆ-Ի ՆԱԽԿԻՆ ՊՐԵԶԻԴԵՆՏ ՋԻՄՄԻ ԿԱՐՏԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ԶԲԻԳՆԵՎ ԲԺԵԺԻՆՍԿՈՒ ՀԵՏ

Մեծարգո՛ պրեզիդենտ,

1999թ. սեպտեմբերի 17-18-ը Թբիլիսիում կայացավ «Խաղաղ Կովկաս և Եվրասիական միջանցք. Արևելք-Արևմուտք ինտեգրացման ասպեկտները» միջազգային կոնֆերանս Վրաստանի պրեզիդենտ Էդվարդ Շևարդնաձեի հովանու ներքո: Մասնակցում էին Ռուսաստանի, Անգլիայի, Գերմանիայի, Իտալիայի, Լեհաստանի, Ռումինիայի, Արաբական Միացյալ Էմիրությունների և այլ երկրների ներկայացուցիչներ: Հայաստանի Արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանի առաջարկությամբ ես մասնակցեցի կոնֆերանսին՝ ներկայացնելով Հայաստանի Հանրապետությունը:

Բացելով կոնֆերանսը՝ Վրաստանի պետական նախարար Վաժա Լորդկիպանիձեն նշեց, որ Կովկասը մասնատված է, և ինտեգրացիան դարձել է անհրաժեշտություն: Պետք է ուղի գտնել այս ծանր իրավիճակից դեպի խաղաղ Կովկաս:

Ընդարձակ ելույթով հանդես եկավ Է. Շևարդնաձեն: Նա ընդգծեց, որ ինտեգրացումը տնտեսապես և քաղաքականապես արդեն հասունացել է: Դա մի ուղի է, որտեղ չպետք է լինեն ավազներ և կրտսերներ, հրամայողներ և թելադրողներ և կատարող ենթականեր: Նա կանգ առավ Մետաքսի ուղու հարցի վրա և

նշեց, որ դա Վրաստանի համար ոչ թե նոր տրանսպորտային ուղի է, այլ նոր մտածելակերպ:

Կոնֆերանսում ես հանդես եկա «Ինտեգրացումը և կոնֆլիկտների կանխման ու լուծման հեռանկարները» զեկուցումով: Մեր կողմից նշվեց, որ այս հարցում գոյություն ունի երկու տեսակետ:

Առաջին, կոնֆլիկտները պետք է լուծվեն նախքան ինտեգրացիան, առանց կոնֆլիկտների լուծման չի կարելի և չպետք է ձեռնամուխ լինել ինտեգրացիայի: Այս տեսակետը ցայսօր տիրապետող է:

Երկրորդ, մենք պաշտպանում և փորձում ենք հիմնավորել այն տեսակետը, որ ինտեգրացումը հնարավոր է նաև նախքան կոնֆլիկտի լուծումը, քանի որ մեր կարծիքով ինտեգրացման դեպքում կարող են ստեղծվել ավելի բարենպաստ տնտեսական և քաղաքական պայմաններ, իսկ կոնֆլիկտի մասնակից երկրները չեն մնա մեն-միայնակ ի դիմաց կոնֆլիկտի: Դրա շնորհիվ հեշտ կլինի գնալ փոխզիջումների և գտնել ընդունելի լուծումներ:

Մեր այս տեսակետն ունեցավ իր պաշտպանները:

Կոնֆերանսի ավարտման հաջորդ օրը՝ սեպտեմբերի 19-ին՝ առավոտյան ժ. 8-ին, կայացավ իմ զրույցը Բժեժինսկու հետ՝ վերջինիս նախաձեռնությամբ: Նա ԱՄՆ-ի ամենաականավոր քաղաքական գործիչներից մեկն է, ում ձայնը ունկնդրում են ԱՄՆ-ի պրեզիդենտը և բարձրագույն ղեկավարությունը, ինչպես նաև աշխարհի բազմաթիվ երկրների պետական գործիչները: Նա ԱՄՆ-ի Միջազգային և ստրատեգիական ուսումնասիրությունների Կենտրոնի (Վաշինգտոն) ամենահեղինակավոր գործիչն է և Հոպկինսի համալսարանի պրոֆեսոր:

Զբիգնև Բժեժինսկին զրույցի ընթացքում շոշափեց ինչպես միջազգային հարաբերությունների մի շարք, նրա կարծիքով շատ կարևոր, այնպես էլ Հայաստանին և Ղարաբաղին վերաբերող հարցեր: Ի մասնավորի հետևյալ հարցերը:

1.Նա գտնում է, որ աշխարհում այժմ տեղի են ունենում արմատական փոփոխություններ, որոնց մեջ ամենակարևորն այն է, որ քաղաքական կենտրոնը Եվրոպայից տեղափոխվում է Եվրասիա: Այլևս Անգլիան, Ֆրանսիան և Գերմանիան չէ, որ որոշելու են եվրոպական և նրա միջոցով համաշխարհային քաղաքական հարցերը՝ ըստ իրենց հայեցողության և ելնելով իրենց շահերից: Եվրոպակենտրոն քաղաքականության դարաշրջանն ավարտվել է: Այժմ պետք է խոսել եվրասիական քաղաքականության մասին, որի բաղկացուցիչ մասն են կազմում Հարավային Կովկասը (Վրաստան, Ադրբեջան, Հայաստան) և Միջին Ասիան: Բժեժինսկու կարծիքով ԱՄՆ-ը պետք է ամենաակտիվ մասնակցությունն ունենա Եվրասիային, եվրասիական քաղաքականության ձևավորմանն ու իրականացմանը:

2. Եվրասիական նոր համակարգում այնուհանդերձ Եվրոպան տնտեսապես, ինչպես նաև քաղաքականապես, ծավալվելու է դեպի Արևելք՝ ներառելով նորանոր պետություններ, որի շնորհիվ ընդլայնվելու է Եվրոպական միությունը:

3. Զրույցի ընթացքում, ինչպես նաև մինչ այդ կոնֆերանսում, մեծ տեղ գրավեց Թուրքիան: Բժեժինսկին, ինչպես նաև կոնֆերանսին ամերիկյան մյուս մասնակից, Հարվարդի համալսարանի պրոֆեսոր, նախկինում հայտնի սովետոլոգ Ռիչարդ Փայփսը, անընդհատ ընդգծում և կարևորում էին Թուրքիայի դերը: Նրանք ուղղակի Թուրքիային յուրատեսակ պարտադրում, փաթաթում էին ներկաների վզին՝ անընդհատ շեշտելով, որ Թուրքիան տարածաշրջանի ամենակարևոր պետությունն է, և տարածաշրջանի մյուս պետությունները պետք է ձգտեն համագործակցել, սերտ հարաբերություններ հաստատել Թուրքիայի հետ: Այդ առումով Բժեժինսկին գովեստի խոսքեր շռայլեց Վրաստանի հասցեին՝ հավանություն տալով Վրաստանի մերձեցմանը Թուրքիայի հետ:

Ամփոփելով իր մտքերը՝ Բժեժինսկին իմպերատիվ տոնով

ասաց, որ ԱՄՆ-ը գտնում է, որ Թուրքիան անպայման պետք է մտնի Եվրոպական միության մեջ:

4. ՆԱՏՕ-ի հարցը: Բժեժինսկին գտնում էր, որ ՆԱՏՕ-ն ընդարձակվելու է, և Արևելյան Եվրոպայի բոլոր երկրները, նեբառյալ Մերձբալթյան երկրները, էտապ առ էտապ կդառնան ՆԱՏՕ-ի անդամ: ԱՄՆ-ը Եվրոպայի հետ կապված կմնա հիմնականում ՆԱՏՕ-ի խողովակով:

Վերջում Բժեժինսկին ընդգծեց, որ «Այս Նոր Եվրոպան շարժվելու է դեպի ձեզ» («And this new Europe will march towards you»):

5.Ռուսաստանի հարցը: Թե՛ կոնֆերանսում և թե՛ մեր զրույցի ժամանակ նշանակալի տեղ գրավեց Ռուսաստանի և նրա նկատմամբ որդեգրելիք քաղաքականության հարցը: Ընդհանրապես պետք է նշել, որ Բժեժինսկին չէր թաքցնում իր ընդգծված հակառուսական հայացքները:

Բժեժինսկու կարծիքով Ռուսաստանն այլևս չի կարող ծավալվել և վերականգնել իր գեոպոլիտիկ տիրապետությունը:Եվ նա դա հիմնավորեց հետևյալ կերպ: Ռուսաստանը չի կարող ծավալվել դեպի հարավ, որովհետև այստեղ առաջացել են անկախ պետություններ: Նա չի կարող ծավալվել դեպի Արևելք, որովհետև այստեղ Չինաստանն է, որի բնակչությունը մոտ 6 անգամ գերազանցում է Ռուսաստանի բնակչությանը, իսկ տնտեսությունը, արտադրությունը մոտ 5 անգամ գերազանցում են Ռուսաստանի արտադրությունը: Ռուսաստանը չի կարող ծավալվել նաև Արևմուտք, քանի որ այստեղ միավորված Եվրոպան է՝ կապված ԱՄՆ-ի հետ, և կա ՆԱՏՕ-ն: Բժեժինսկու արտահայտած մտքերի ենթատեքստն այն էր, որ Անդրկովկասի և Միջին Ասիայի պետությունները որևէ հույս չպետք է կապեն Ռուսաստանի հետ, քանի որ դա հեռանկարային չէ, այլ պետք է ձգտեն դառնալ Եվրասիական համակարգի անդամներ:

Այս առթիվ նշեմ, որ կոնֆերանսի քննարկումներից մեկի ժամանակ Ռիչարդ Փայփսը ուղղակի հայտարարեց, որ «Եթե

Ռուսաստանը վերականգնի իր տիրապետությունը Կովկասում, այդ թվում և Վրաստանում, ապա դա վատ կլինի մեր բոլորի համար»:

Պետք է ասել, որ կոնֆերանսում Բժեժինսկի-Փայփս տանդեմը գործում էր խիստ ներդաշնակորեն:

6. Այնուհետև Բժեժինսկին հետաքրքրվեց Հայաստանում տիրող վիճակով և ինձ հարցրեց, թե ինչպիսին է այն՝ համեմատած Վրաստանի հետ, և ասաց հետևյալը. «Հայաստանը պետք է մտածի ապագայի մասին և ավելի հեռուն նայի: Ադրբեջանը նավթից ստացվող եկամուտների հաշվին առաջիկա 3-5 տարիներում կդառնա հարուստ երկիր»: Իմ այն հարցին, թե արդյո՞ք չի չափազանցվում նավթի հարցը, Բժեժինսկին պատասխանեց. «Չափազանցություն իրոք կա: Սակայն չնայած դրան, եղածն էլ բավարար է, որ Ադրբեջանը հարստանա և ստեղծի ուժեղ և լավ զինված բանակ»: Այնուհետև նա ավելացրեց, որ Ադրբեջանը մեծ ջանքեր է գործադրում բարձրորակ կադրեր պատրաստելու ուղղությամբ, այդ թվում և ռազմական ասպարեզում: Եվ կրկին ընդգծեց, որ «Դա պետք է մտահոգի Հայաստանին: Հայաստանի ղեկավարությունը պետք է ձգտի կարգավորել իր հարաբերությունները թե՛ Թուրքիայի և թե՛ Ադրբեջանի հետ՝ լուծելով Ղարաբաղի հարցը»:

7. Բժեժինսկու կարծիքով Ղարաբաղի հարցը չպետք է այնպես լուծվի, որ դա ընկալվի որպես Ադրբեջանի կապիտուլյացիա: Նա շատ շեշտված ինձ զգուշացրեց. «Հարգելի՛ պրոֆեսոր Հովհաննիսյան, Դուք Ձեր ղեկավարությանն ասեք, որ Ադրբեջանը երբեք չի համաձայնվի դրա հետ»: Թեև պետք է ասեմ, որ նա համաձայնվեց ինձ հետ, որ Ղարաբաղը պատմականորեն միշտ եղել է հայկական տարածք: Բայց ավելացրեց նաև. «Հիմա իրողությունն այլ է, և դուք՝ հայերդ, պետք է ելնեք այդ իրողությունից»:

8. Զբիգնև Բժեժինսկին ինձ հարցրեց, թե ես ինչպես եմ պատկերացնում Ղարաբաղի հարցի լուծումը, և մենք նրա հետ

քննարկեցինք տարբեր մոդելներ, և նա ոչ մի անգամ չօգտագործեց «տերիտորիալ ամբողջականություն» ձևակերպումը: Ես ուշադրություն դարձրի, որ Բժեժինսկին առավել կարևորեց երեք տարբերակ.

ա/ ասոցացված պետություն,

բ/Ղարաբաղը որպես չեզոք տարածք կամ ամբողջություն, որը դեռևս 1997 թ. իմ կողմից առաջադրված պլանն է, որի վերաբերյալ նա ինձանից խնդրեց մանրամասներ,

գ/ ֆեդերատիվ կապ Ադրբեջանի հետ, և երբ ասացի, որ ոչ թե ֆեդերացիա, այլ կոնֆեդերացիա, նա անմիջապես համաձայնվեց դրա հետ:

Ես այն տպավորությունը ստացա, որ Բժեժինսկին ավելի համակրանքով վերաբերվեց Ղարաբաղի չեզոքության և կոնֆեդերատիվ տարբերակներին: Ըստ որում Բժեժինսկին անառարկելի համարեց Ղարաբաղի de facto անկախ լինելու հանգամանքը և խոսում էր հարցի իրավական կողմի մասին: Միաժամանակ նա չուզեց անդրադառնալ «ընդհանուր պետության» կոնցեպցիային՝ գտնելով, որ դա չունի որոշակի ձև և բովանդակություն, և թերևս հարմար է բանակցությունների մեջ մտնելու տեսանկյունից, սակայն անմիջապես թերահավատություն դրսևորեց:

9. Բժեժինսկուն շատ էր հետաքրքրում Լաչինի միջանցքի հարցը՝ գտնելով, որ Ադրբեջանը չի համաձայնվի, որ այն գտնվի բացառապես հայերի հսկողության ներքո: Սակայն տրամաբանական և հեռանկարային գտավ, եթե Լաչինի միջանցքում տեղադրվեն միջազգային խաղաղապահ ուժեր:

10. Ղարաբաղի անկլավ չլինելու հարցը: Երբ ես նշեցի, որ Ղարաբաղի հարցի լուծման կարևոր պայմաններից մեկն այն է, որ Ղարաբաղը չպետք է լինի անկլավ, և այդ պատճառով Լաչինը պետք է մնա հայերի հսկողության տակ որպես կամուրջ Հայաստանի հետ, Բժեժինսկին, ընդունելով դրա կարևորությունը, անմիջապես բարձրացրեց Նախիջևանի անկլավ լինելու հարցը: Նրա մոտեցումը հետևյալն էր . Հայաստանը չի կարող պահան-

ջել, որ Ղարաբաղը անկլավ չմնա՝ պահպանելով Նախիջևանի անկլավային կարգավիճակը: Նրա կարծիքով Ադրբեջանն անպայման այդ հարցը կբարձրացնի, և դուք՝ հայերդ, պետք է շատ հիմնավոր և միջազգային հանրությանը համոզող փաստարկներ գտնեք:

Հարգելի՛ պրեզիդենտ, Բժեժինսկին չառարկեց, որ մեր զրույցի բովանդակության մասին ես Ձեզ տեղյակ կպահեմ: Իսկ ինքն էլ իր կողմից խոստացավ, որ Ղարաբաղի հարցի երեք հնարավոր տարբերակների մասին՝ ասոցացված պետություն, չեզոք միավոր և Ադրբեջանի հետ կոնֆեդերացիա, կխոսի ԱՄՆ-ի պատասխանատու ղեկավարների հետ:

Այսպիսով, կոնֆերանսի քննարկումներից և Բժեժինսկու հետ ունեցած մեր զրույցից մենք եկանք հետևյալ եզրակացությունների:

Առաջին, տեղի է ունենում ուժերի նոր վերադասավորում մեր հարևան վիթխարի աշխարհատարածքում, և ձևավորվում է նոր քաղաքական աշխարհատարածք՝ Եվրասիա, երկրորդ պլան մղված Արևմտյան Եվրոպայով և թույլ Ռուսաստանով և իր դիրքերի ամրապնդմանը ձգտող ԱՄՆ-ով, որպես այդ տարածաշրջանի տնտեսական և ռազմական կենտրոն:

Երկրորդ, ԱՄՆ-ի քաղաքականության կարևոր նպատակն է դուրս մղել Ռուսաստանին կովկասյան-մերձավորարևելյան տարածաշրջանից: Կովկասը Միջին Ասիայի հետ միասին կազմելու է Եվրասիայի քաղաքական նոր համակարգի բաղադրամասը: Այս քաղաքականության անբաժանելի մասն են կազմում Իրանի մեկուսացումը և նրա քաղաքական ազդեցության խիստ սահմանափակումը:

Երրորդ, ԱՄՆ-ը ձգտում է ամեն կերպ նպաստել Թուրքիայի դիրքերի ամրապնդմանը՝ ի հակակշիռ Ռուսաստանի և Իրանի: Թուրքիան ԱՄՆ-ի կողմից դիտվում է աշխարհատարածքային փոփոխության իրականացման կարևոր գործոն:

Չորրորդ, Հայաստանի համար նոր աշխարհատարածքի

իրավիճակի ստեղծման հեռանկարը կարող է դառնալ իրական, որը պահանջում է խոր վերլուծություն և դրա վրա հիմնված համապատասխան որոշումների ընդունում:

Վերջում, հարգելի՛ պրեզիդենտ Ռոբերտ Քոչարյան, կցանկանայի ձեր ուշադրությունը հրավիրել մի հանգամանքի վրա ևս:

Կոնֆերանսում ես բազմաթիվ զրույցներ ունեցա իմ վրացի կոլեգաների հետ: Նրանց մի մասը խոր մտահոգություն էր արտահայտում Հյուսիսային Կովկասում ստեղծված իրավիճակի և հյուսիսային կովկասցիների՝ չեչենների և այլն, Վրաստան հնարավոր ներխուժման մասին: Նրանց կարծիքով նման մի բան տեղի է ունեցել XVIII դարում, երբ, ըստ նրանց խոսքերի, հյուսիսային կովկասյան ցեղերը միավորվեցին և ներխուժեցին Վրաստան՝ նրան պատճառելով, ինչպես իմ վրացի կոլեգաներն ասացին, ավելի մեծ ավերածություններ, քան թաթար-մոնղոլները: Այս կապակցությամբ նրանք բավականին թափանցիկ ակնարկում էին Հայաստանի և Վրաստանի գործնական մերձեցման և հնարավոր համատեղ գործողությունների մասին: Ես հարկ համարեցի այս մասին, հարգելի՛ պրեզիդենտ, Ձեզ տեղյակ պահել՝ նկատի ունենալով Ձեր առաջիկա հանդիպումը Վրաստանի պրեզիդենտ Էդվարդ Շևարդնաձեի հետ:

Խորին հարգանքներով

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյան

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն:

21. IX. 1999թ.

41. ՀԱՅ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԵՎԵԼԱՍԻԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ

1.Հայ արևելագիտությունը՝ Հայաստանի համար ստրատեգիական նշանակություն ունեցող ազգային գիտություն

Մինչև 2002 թ. հայ արևելագիտության գիտահետազոտա-

կան դաշտը պարփակված էր Մերձավոր և Միջին Արևելքի տարածաշրջանով: Եվ այդ հանգամանքն առաջին հերթին պայմանավորված էր այն իրողությամբ, որ Հայաստանը և հայերը պատմականորեն և աշխարհագրական առումով նույնպես պատկանում են նշված տարածաշրջանին՝ Մերձավոր և Միջին Արևելքին, իսկ հայ ժողովրդի պատմությունն անհիշելի ժամանակներից, անտիկ շրջանից մինչև մեր օրերը, սերտորեն միահյուսված է այդ տարածաշրջանի երկրների և ժողովուրդների պատմությանը: Հայաստանի գիտությունների ակադեմիայի կազմում 1958թ. ստեղծված արևելագիտական ակադեմիական առաջին կենտրոնը՝ Արևելագիտության սեկտորը, որը 1971 թվականի հուլիսի 28-ին վերակազմավորվեց ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի, գլխավորապես զբաղված էր նշված տարածաշրջանի երկրների և ժողովուրդների պատմության, ներքին և արտաքին քաղաքականության, տնտեսության, մշակույթի, ազգային փոքրամասնությունների և այլ հիմնախնդիրների ուսումնասիրությամբ: Նկատի ունենք առաջին հերթին արաբական երկրները, Օսմանյան կայսրությունը և Թուրքիան, Իրանը, Միջագետքի երկրների հնագույն շրջանը, քրդերին և այլն:

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտը դարձավ Խորհրդային Միության արևելագիտական կենտրոններից մեկը:

1991թ.՝ Խորհրդային Միության փլուզումից հետո, Հայաստանի Հանրապետությունը վերանվաճեց իր անկախությունը և միջազգային ասպարեզ մտավ որպես ինքնիշխան պետություն: 1995թ. փետրվարին Արևելագիտության ինստիտուտի տնօրեն ընտրվեց տողերիս հեղինակը՝ այդ պաշտոնում փոխարինելով ակադեմիկոս Գագիկ Սարգսյանին:

1990-ական թվականները շատ ծանր ժամանակներ եղան ընդհանրապես գիտության զարգացման համար Հայաստանում, ՀՀ Գիտությունների ակադեմիայի և նրա կազմի մեջ մտնող բոլոր ինստիտուտների համար: Բացառություն չէր նաև Արևելագիտության ինստիտուտը: Գլխավոր խնդիրներից մեկը դարձավ այդ

ինստիտուտի, հայ արևելագետների գենոֆոնդի պահպանումը, որն ընդհանուր առմամբ, շնորհիվ մեր ջանքերի, լուծվեց հաջողությամբ, և նոր փուլ սկսվեց ինստիտուտի գործունեության մեջ:

Մյուս կարևոր խնդիրը, որ հառնեց Արևելագիտության ինստիտուտի և իմ՝ որպես ինստիտուտի ղեկավարի առջև, և որն առանցքային բնույթ ուներ, կապված էր այն իրողության հետ, որ Հայաստանը դարձել էր անկախ պետություն, և դրան համապատասխան անհրաժեշտություն առաջացավ փոխել հայ արևելագիտության հայեցակարգը և ֆունկցիաները:

Խորհրդային Միության գոյության շրջանում նրա տարածքում գործող բոլոր արևելագիտական կենտրոնները, այդ թվում և ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտը, սպասարկում էին Խորհրդային Միության արևելյան քաղաքականության պահանջները: Խորհրդային Միության փլուզումից հետո այդ խնդիրը վերացավ, և նրա փոխարինելու եկավ նորը: Հայաստանը դարձել էր անկախ պետություն և որպես այդպիսին՝ անդրկովկասյան-մերձավորարևելյան աշխարհաքաղաքական տարածքի օրգանական մասը: Հայաստանն ուներ արդեն իր արևելյան քաղաքականությունը: Եվ հայ արևելագիտության խնդիրները համապատասխանաբար պետք է փոփոխության ենթարկվեին: Նա պետք է սպասարկեր Հայաստանի համար նոր՝ արևելյան քաղաքականությունը, մշակեր նոր մոտեցումներ, առաջարկներ, գտներ նոր լուծումներ և այլն: Մշակվեց նոր հայեցակարգ, ըստ որի՝ հայ արևելագիտությունը, որը Խորհրդային Միության գոյության ժամանակ **խորհրդային արևելագիտության** մի մասն էր, Խորհրդային Միության լուծարումից հետո դարձել էր, **առաջին՝ ազգային գիտություն Արևելքի մասին՝** կազմելով համաշխարհային արևելագիտության բաղկացուցիչ մասը, **երկրորդ՝** Հայաստանի Հանրապետության համար **ստրատեգիական նշանակություն** ունեցող գիտություն, և **երրորդ՝ Հայաստանի համար կիրառական նշանակություն ունեցող գիտություն,** որի արդյունքները կարևոր նշանակություն ունեն Հայաստանի Երրորդ

հանրապետության արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունների և ազգային անվտանգության հայեցակարգի մշակման տեսանկյունից: Եվ այդ համակարգը 1995թ. սկսած դրվեց Արևելագիտության ինստիտուտի գիտական գործունեության հիմքում: Ինստիտուտի հետազոտական աշխատանքները հանգեցրին այն եզրակացության, որ Հայաստանն անկախության նվաճումից հետո դարձել է մերձավորարևելյան և անդրկովկասյան աշխարհաքաղաքական շրջանի քաղաքական, ռազմական, տնտեսական և տարածաշրջանային-կոմունիկացիոն կարևոր գործոն, որն անհնար է անտեսել կամ հաշվից դուրս նետել:

Արևելագիտության վերածումը ստրատեգիական նշանակություն ունեցող գիտության բարձրացրեց նրա նշանակությունը հասարակական գիտությունների համակարգում:

Հայ արևելագիտությունը՝ որպես ազգային գիտություն, սպասարկում է հայոց պետության ոչ միայն գիտական, այլև քաղաքական պահանջները: Այդ բնագավառին վերաբերող հայ արևելագետների ուսումնասիրությունները, ինչպես նշվեց, խիստ կարևոր նշանակություն ունեն Հայաստանի արտաքին քաղաքականության և ազգային անվտանգության հայեցակարգի մշակման համար:

Հարկ է նշել, որ այդ հայեցակարգային շրջանակներում գործնական համագործակցություն հաստատվեց Արևելագիտության ինստիտուտի և Հայաստանի արտաքին քաղաքականությունն իրականացնող մարմինների՝ հանրապետության պրեզիդենտի աշխատակազմի, արտաքին գործերի նախարարության, Հայաստանի արտասահմանյան ներկայացուցչությունների, մասնավորապես Եգիպտոսում, Լիբանանում, Արաբական Միացյալ Էմիրություններում, Չինաստանում, Հնդկաստանում և այլ երկրներում Հայաստանի դեսպանությունների հետ: Ինստիտուտի մի շարք աշխատակիցներ՝ որպես մասնագետ-փորձագետներ, արտաքին գործերի նախարարության կողմից հրավիրվում են զանազան հարցերի քննարկմանը: Իսկ ինստիտուտի տնօրենը՝ որ-

պես պաշտոնական պատվիրակության անդամ, շատ հաճախ մասնակցում էր Հայաստանի պրեզիդենտ Ռոբերտ Քոչարյանի արտասահմանյան այցերին: Այդ առումով արժանի է հիշատակել պրեզիդենտ Ռոբերտ Քոչարյանի պաշտոնական այցելությունները Հնդկաստան 2003թ. և Չինաստան՝ 2004թ.: Իսկ 2006թ. փետրվարին ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտը Ալեքսանդրիա քաղաքում՝ Եգիպտոսում, Հայաստանի դեսպանության աջակցությամբ անցկացրեց հայ-եգիպտական գիտաժողով՝ նվիրված «Հայ-եգիպտական պատմաքաղաքական հարաբերություններին»: Դա առաջին դեպքն էր ինստիտուտի պատմության մեջ, երբ հայ-արաբական հարաբերություններին նվիրված գիտաժողով էր կազմակերպվում ուսումնասիրվող երկրում:

Արևելագիտության ինստիտուտի համագործակցությունը Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունն իրականացնող մարմինների հետ, որի հիմքերը դրվեցին 1990-ականների վերջերին և հետագա զարգացում ստացան XXI դարի սկզբներին, նոր երևույթ էր, որը նախկինում բացակայում էր: Նա եկավ ապացուցելու հայ արևելագիտության ներուժն ու կարևորությունը, նրա՝ ստրատեգիական բնույթի գիտական ուղղություն լինելը: **Արևելագիտության ինստիտուտը, հիրավի, «պետություն-գիտություն» համագործակցության հիանալի օրինակ է:**

Նոր ժամանակները և նոր պահանջները հրամայական դարձրին փոփոխություն մտցնել նաև մի այնպիսի սկզբունքային հարցում, ինչպիսին ինստիտուտի ուսումնասիրությունների արեալի հարցն է: Թե՛ սեկտորի հիմնադրման և թե՛ ինստիտուտի կազմավորման ժամանակ գիտական մարմինների կողմից հայ արևելագիտական կենտրոնի գիտահետազոտական ուսումնասիրությունների արեալ-տարածաշրջան էր հաստատված, ինչպես նշվել է, Մերձավոր և Միջին Արևելքը:

Անկախության նվաճումից հետո ընդլայնվեցին Հայաստանի արտաքին քաղաքական, տնտեսական և մշակութային

հարաբերությունները նաև աշխարհի տարբեր երկրների հետ, որոնք չէին մտնում «Մերձավոր և Միջին Արևելք» աշխարհագրական սահմանների մեջ: Հայաստանի համար կարևոր դարձան հարաբերությունների հաստատումն ու զարգացումն այնպիսի երկրների հետ, ինչպես Հնդկաստանը, Չինաստանը, Ճապոնիան և նախկին խորհրդային միջինասիական հանրապետությունները: Դա համապատասխան խնդիրներ առաջադրեց ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի առջև, նրանում կառուցվածքային փոփոխություն մտցնելու տեսանկյունից: Մերձավոր և Միջին Արևելքն այլևս նեղ էր գալիս հայ արևելագիտությանը, և նա չէր կարող տեղավորվել նրա զգեստում ու սահմանափակվել միայն այդ տարածաշրջանի հիմնախնդիրների ուսումնասիրությամբ: Այսպես հասունացավ Արևելագիտության ինստիտուտի ուսումնասիրությունների ոլորտում Արևելյան Ասիայի երկրների պատմության, քաղաքականության, տնտեսության և նրանց հետ Հայաստանի միջպետական հարաբերությունների ուսումնասիրությունը ներառելու գաղափարը: Նոր համապատասխան բաժնի բացելը դարձավ օրակարգի հարց: Արևելագիտության ինստիտուտը հանդես եկավ իր կազմում նման բաժին ունենալու նախաձեռնությամբ, որն արժանացավ ՀՀ ԳԱԱ նախագահության և ՀՀ արտաքին գործերի նախարարության ամենաակտիվ աջակցությունը: Հարցը քննարկվեց Հայաստանի կառավարության կողմից, որը 2002թ. սեպտեմբերի 18-ին որոշում ընդունեց ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի կազմում ստեղծել Արևելյան Ասիայի երկրների բաժին:

Այդ բաժնի գլխավոր խնդիրները համարվեցին՝ ա/ Արևելյան Ասիայի երկրների, առաջին հերթին Հնդկաստանի, Չինաստանի և Ճապոնիայի ժամանակակից պատմության, ներքին քաղաքականության, տնտեսության և մշակույթի արդիական հարցերի ուսումնասիրությունը, բ/ նրանց արտաքին քաղաքականությունը Հարավային Կովկասում, գ/ նշված երկրների արտաքին քաղաքականությունը Մերձավոր և Միջին Արևելքում,

ինչպես նաև Կենտրոնական Ասիայում, և նրանց հետապնդած աշխարհաքաղաքական նպատակները, դ/այդ երկրների հետ Հայաստանի միջպետական հարաբերությունները, ե/ հայերի պատմամշակութային հարաբերությունները վերոնշյալ երկրների հետ, զ/ այդ երկրներում հայ համայնքների պատմության ուսումնասիրությունը և այլն:

Բաժնի պարտականությունների մեջ մտնում է նաև ՀՀ կառավարության, արտաքին գործերի նախարարության և պետական այլ մարմինների համար վերլուծական համապատասխան նյութերի, առաջարկությունների և հանձնարարականների պատրաստումը: Դրա շնորհիվ հայ արևելագիտության ուսումնասիրության արեալը խիստ ընդարձակվեց, և այսօր այն ընդգրկում է մի վիթխարի տարածաշրջան՝ պատկերավոր ասված **Բոսֆորից մինչև Խաղաղ օվկիանոս: Այս տարածաշրջանի արևմտյան եզրը Թուրքիան է, իսկ արևելյանը՝ Ճապոնիան:** Դրանով ևս մեկ լուրջ քայլ կատարվեց հայ արևելագիտության՝ ավելի ամբողջական, բազմաշերտ և բազմաբնույթ դարձնելու ճանապարհին: **Շատ քիչ արևելագիտական կենտրոններ կան այսօր, որոնք ունեն ուսումնասիրության նման ընդարձակ, կարելի է ասել վիթխարի դաշտ:**

Հայ արևելագիտական կենտրոնն իր գոյության համարյա 50 տարիների ընթացքում հրատարակել է մոտ 350 մենագրական աշխատություն և ժողովածու ու մի քանի հազարի հասնող գիտական հոդված: Դրանց նշանակալի մասը օտար լեզուներով հրատարակվել է արտասահմանյան տարբեր երկրներում: Ուշագրավ է, որ հայ արևելագետների աշխատությունները թարգմանվել և տպագրվել են նաև Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում, այդ թվում՝ Արաբական Միացյալ Էմիրություններում, Եգիպտոսում, Թուրքիայում, Իրանում, Իրաքում, Լիբանանում, Սիրիայում, Քուվեյթում և այլուր: Դա վկայում է այն մեծ հետաքրքրության մասին, որ արտասահմանյան մասնագետները դրսևորում են հայ արևելագետների աշխատությունների նկատ-

մամբ, մի կողմից, և այն հանգամանքի մասին, որ հայ արևելագետների աշխատություններն ավելի ու ավելի լայնորեն են ներգրավվում միջազգային ոլորտի մեջ, մյուս կողմից:

Բովանդակային փոփոխության ենթարկվեցին Արևելագիտության ինստիտուտի գիտական համագործակցության ձևերը արտասահմանյան գիտական կենտրոնների հետ: Նախ, նշենք, որ խորհրդային տարիներին հանրապետությունների ինստիտուտները զրկված էին, ըստ իրենց հայեցողության, անմիջական գիտական կապեր հաստատել այս կամ այն արտասահմանյան գիտական կենտրոնի հետ: Այդ բոլորը գտնվում էին Մոսկվայի և նրա համապատասխան մարմինների իրավասության ներքո: Հայաստանի անկախացումից հետո այդ արգելքը վերացվեց, և նոր հնարավորություններ ու հեռանկարներ բացվեցին ինստիտուտների առջև:

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտը, պահպանելով համագործակցության հին ձևերը՝ մասնագետների փոխադարձ այցելություն, մասնակցություն գիտաժողովներին, գրքափոխանակություն և այլն, նախապատվությունը վերջին տարիներին տալիս է գիտական համագործակցության հաստատմանը պայմանագրային հիմքի վրա, որն ավելի հուսալի, որոշակի և արդյունավետ ձև է: Արևելագիտության ինստիտուտը գիտական համագործակցության վերաբերյալ պայմանագիր է ստորագրել Դամասկոսի արաբական հետազոտությունների ֆրանսիական ինստիտուտի (14.IV. 2000 թ.), Չանդիգարի (Հնդկաստան) հետազոտական կենտրոնի (16.V. 2003 թ.), Չինաստանի միջազգային ուսումնասիրությունների ինստիտուտի (5.XII. 2003թ.), Մերձավոր Արևելքի ֆրանսիական ինստիտուտի (15.VII. 2004թ.), իսկ 2006թ. մայիսի 16-ին Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի հետ: ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտը համագործակցում է նաև այլ գիտական կենտրոնների հետ:

Ուշադրության արժանի մի կարևոր փաստ ևս: Երբ

Հնդկաստանի Չանդիգարի ինստիտուտի տնօրեն Ռաշպալ Մալ-հոտրանի հետ Երևանում՝ ՀՀ արտաքին գործերի նախարա-րությունում ստորագրում էինք համագործակցության պայմա-նագիր, ապա հնդկական կողմի խնդրանքով պայմանագրում մտցվեց հատուկ հոդված այն մասին, որ Հայաստանի Արևե-լագիտության ինստիտուտը պարտավորվում է օգնել Չանդի-գարի կենտրոնին՝ նրա կազմում ստեղծելու Կովկասյան ուսում-նասիրությունների կենտրոն: Մենք սիրահոժար համաձայն-վեցինք այդ առաջարկության հետ, որն ամրագրվեց երկու կող-մերի ստորագրած Հուշագրում: Այդ Հուշագիրը ստորագրեցին Չանդիգարի ինստիտուտի տնօրեն Ռաշպալ Մալհոտրան և ես՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն Նիկոլայ Հով-հաննիսյանը: Մեր պարտականությունների մեջ մտնում էր օգնել հնդիկ գիտնականներին խորհուրդներով, տրամադրել անհրա-ժեշտ մասնագիտական գրականություն և այլն, որը մեր ինս-տիտուտը կատարեց մեծ պարտաճանաչությամբ: 2003թ. նոյեմ-բերի 1-ին՝ Հայաստանի պրեզիդենտ Ռոբերտ Քոչարյանի՝ Հընդ-կաստան կատարած պաշտոնական այցի ժամանակ, որի ծրա-գրում նախատեսված էր այցելություն նաև Չանդիգար, իսկ տո-ղերիս հեղինակը պատվիրակության անդամ էր, տեղի ունեցավ Կովկասյան ուսումնասիրությունների կենտրոնի հանդիսավոր բացումը, որը կատարեցին Հայաստանի պրեզիդենտ Ռոբերտ Քոչարյանը և Ռաշպալ Մալհոտրան: Դա համարվեց կարևոր իրադարձություն երկու երկրների գիտական կապերի զարգաց-ման բնագավառում:

Արտասահմանյան գիտական կենտրոնների համագոր-ծակցության ծրագրերի էական մասն են կազմում նաև համատեղ աշխատությունների կատարումը և դրանց հրատարակումը: Եր-կար տարիներ այդպիսի համագործակցություն է իրականաց-վում Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի արևելագի-տության ինստիտուտի (Մոսկվա) և Սանկտ Պետերբուրգի հա-մալսարանի, Լիբանանի, ԱՄՆ-ի, Եգիպտոսի և այլ երկրների

հետ: Հայաստանի արևելագետները Ճապոնիայի մասնագետների հետ համատեղ պատրաստեցին «Հայաստան-Ճապոնիա» աշխատությունը, որը «Ջպան ֆոնդի» ֆինանսական հոգածությամբ 2005թ. հայերենով և ճապոներենով հրատարակվեց Երևանում[84]: Դա առաջին դեպքն է պատմության մեջ, երբ Հայաստանում ճապոներենով՝ ճապոնական իմաստագրերով, գիրք է հրատարակվում:

Այդ համագործակցության արդյունքներից մեկն այն եղավ, որ ճապոնացի պրոֆեսոր Հիրոյոշի Սեգավան սկսեց զբաղվել Հայոց ցեղասպանության հարցերով: Նա 2006թ. անգլերենից ճապոներեն թարգմանեց և հրատարակեց պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի «Հայոց ցեղասպանությունը. Հայասպանությունը» աշխատությունը[85]:

Իսկ 2008թ. դարձյալ պրոֆեսոր Հիրոյոշի Սեգավայի ջանքերով ճապոներեն թարգմանությամբ Ճապոնիայում լույս տեսավ «1915թ. Հայոց ցեղասպանությունը թուրքական կայսրությունում» հոդվածների ժողովածուն, որում զետեղված էին հայ գիտնականներ Լ. Բարսեղյանի, Ն. Հովհաննիսյանի, Ռ.Մելիք-Օհանջանյանի, Ս.Միրզոյանի և իր՝ Հիրոյոշի Սեգավայի հոդվածները Հայոց ցեղասպանության տարբեր խնդիրների վերաբերյալ[86]:

Յուրատեսակ համագործակցություն է հաստատվել Արևելագիտության ինստիտուտի և ԱՄՆ-ի Կոնգրեսի գրադարանի միջև: Կոնգրեսի գրադարանը Արևելագիտության ինստիտուտին մտցրել է այն գիտական կարևոր կենտրոնների ցուցակում, որոնց նա յուրաքանչյուր տարի անվճար մատակարարում է որոշակի

---

[84] Ն.Հ. Հովհաննիսյան, Մ.Դ. Ամիրխանյան, Ռ.Կ. Կարապետյան, Հայաստան-Ճապոնիա. Քաղաքական, տնտեսական, մշակութային և գիտական հարաբերություններ, Երևան, 2005, հայերեն և ճապոներեն լեզուներով:

[85] Hiroyoshi Segawa- Nikolay Hovhannisyan . The Armenian Genocide. Armenocide, Published Aichi Sangyo University, ASU Business Review (No.9, 2006), Japan. p. 101-115.

[86] The 1915 Armenian Genoside in the Turkish Empire , Japan, 2005, 145 p. (in Japanese)

քանակությամբ մասնագիտական գրականություն, իսկ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտը նրան է ուղարկում իր հրատարակությունները:

Այս բոլորը վկայում է այն մասին, որ Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի արևելագիտության ինստիտուտը ձեռք է բերել որոշակի միջազգային ճանաչում և նվաճել կարևոր բնագծեր:

Դա է հաստատում նաև այն փաստը, որ արտասահմանյան բազմաթիվ գիտնականներ իրենց համար մեծ պատիվ են համարում դոկտորական ատենախոսություններ պաշտպանել ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող գիտական խորհրդում՝ «Համաշխարհային պատմություն» մասնագիտության գծով: Մեր ինստիտուտի գիտական խորհրդում են պաշտպանել և այդ գիտական աստիճանին արժանացել արտասահմանյան գիտնականներ ԱՄՆ-ից, Գերմանիայից, Իտալիայից, Եգիպտոսից, Իսրայելից, Իրանից, Լիբանանից, Սիրիայից, Ռուսաստանից, Վրաստանից և այլ երկրներից: Եվ եթե նախկինում հայերն էին գնում եվրոպական երկրներ՝ իրենց գիտական թեզը պաշտպանելու, ապա այժմ այդ նպատակով ոչ միայն արևելյան, այլև եվրոպական երկրներից են գալիս Հայաստան:

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտական բարձր հեղինակության մասին է խոսում նաև այն իրողությունը, որ 2000թ. սեպտեմբերին Մոնրեալում, որտեղ ընթանում էր Արևելագետների համաշխարհային XXXVI կոնգրեսը, մեր հանրապետության Արևելագիտության ինստիտուտը միաձայն ընտրվեց Արևելագիտական և ասիական ուսումնասիրությունների միջազգային կազմակերպության անդամ, որը գործում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո: Նշենք, որ նրա՝ այդ խստապահանջ միջազգային կազմակերպության **անդամ էր ընդամենը 13** երկիր, այդ թվում՝ արևելագիտության բնագավառում այնպիսի առաջատար և հեղինակություն ունեցող երկրներ, ինչպես ԱՄՆ-ը, Գերմանիան, Ֆրանսիան, Ռուսաստանը, Ճապոնիան,

Հնդկաստանը, Հունգարիան և այլն:

Այսպիսով, հետադարձ հայացք նետելով հայ արևելագիտության զարգացման ուղու և նրա նվաճումների վրա, այդ ուղին այլ կերպ, քան հաղթարշավ չի կարելի գնահատել:

Աշխարհն արագորեն փոխվում է, և նրա հետ փոխվում է նաև Արևելքը՝ լինի Հեռավոր, Մերձավոր, թե Միջին: Նա այլևս, միջնադարյան պատկերացումների համաձայն, քարացած, անշարժ կամ դանդաղաշարժ Արևելքը չէ, այլ վերածվել է վերին աստիճանի դինամիկ և արագ զարգացող աշխարհամասի: Փոխվում է նաև նրա տեղը միջազգային համակարգում, նա կրավորականից վերածվում է ակտիվ գործոնի և իր խոսքն է ասելու XXI դարում համաշխարհային քաղաքական եղանակի և տնտեսական համակարգի ձևավորման գործում: Հեռավոր Արևելքում բարձրանում են երկու այնպիսի գիգանտներ, ինչպես Չինաստանը և Հնդկաստանը, որոնց արագընթաց զարգացմանն ապշահար աշխարհը հետևում է շունչը պահած: Իր հետագա անակընկալներն աշխարհին կմատուցի Ճապոնիան: Մեծ փոփոխություններ տեղի կունենան Մերձավոր և Միջին Արևելքում: Նա ոչ միայն չի կորցնի իր դիրքերը, այլև ավելի ծանրակշիռ խոսք կասի XXI դարում և անվերջ արյունալի բախումների կենտրոնից կվերածվի միջազգային հարաբերությունների նոր կարևոր կենտրոնի: Բոսֆորից մինչև Խաղաղ օվկիանոս ձգվող տարածքը, շնորհիվ իր մարդկային և բնական անսպառ ռեսուրսների, մոդեռնիզացիայի և կատարելագործման, բարձր տեխնոլոգիաների բացառիկ դերակատարում կունենա և կդառնա համաշխարհային քաղաքականության և տնտեսության կենտրոններից մեկը: Եվ դա տեղի կունենա գլոբալիզացիայի դարաշրջանում՝ նրան հատուկ մարտահրավերներով հանդերձ:

Այդ փոփոխությունները նոր խնդիրներ կդնեն համաշխարհային գիտության և նրա անբաժան մասը կազմող արևելագիտության առջև:

Եվ մենք, սիրելի՛ ընթերցող, դույզն-ինչ կասկած չունենք, որ

ապագայում ևս՝ գլոբալիզացիայի և մարտահրավերների դարաշրջանում, հայ արևելագիտությունը կգտնվի խնդիրների բարձրության վրա և կկատարի ստրատեգիական ուղղության իր պատմական առաքելությունը:

2. Չինաստանի Ժողովրդական Հանրապետության նախագահ Մաո Ցզեդունը հայ գեներալին պարգևատրել է չինական շքանշաններով

Խոսքը Խորհրդային Միության պաշտպանության նախարարության հրթիռահրետանային վարչության ղեկավար աշխատակից (1946-1963թթ.), գեներալ-մայոր Ֆադեյ Սարգսյանի մասին է, ով հետագայում՝ 1977-1989թթ., զբաղեցրել է Հայաստանի Հանրապետության վարչապետի պաշտոնը, իսկ 1993-2006թթ. եղել է Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պրեզիդենտ:

1991թ.՝ Խորհրդային Միության փլուզումից հետո, տեղի ունեցան վիթխարի փոփոխություններ միջազգային հարաբերություններում: ԱՄՆ-ը մնաց միակ գերտերությունը, և աշխարհը դարձավ միակենտրոն: Համաշխարհային քաղաքականության մեջ տեղի ունեցան նաև այլ կարևոր, կարելի է ասել արմատական փոփոխություններ:

1999թ. սեպտեմբերին ինձ զանգահարեց Հայաստանի արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը և հաղորդեց, որ շուտով Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում Կովկասի հարցերով տեղի կունենա կարևոր միջազգային կոնֆերանս, և Վրաստանի ղեկավարությունը խնդրել է նրան, որ Հայաստանի ներկայացուցիչն անպայման մասնակցի և զեկուցումով հանդես գա այդ կոնֆերանսում: Արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը առաջարկեց ինձ՝ որպես ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրենի, համաձայնվել մասնակցելու այդ կոնֆերանսին և պատրաստելու զեկուցում: Նրա առաջարկու-

թյան հետ համաձայնվեց նաև ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանը, և ես մեկնեցի Թբիլիսի:

Կոնֆերանսին, որի թեման էր «Խաղաղասեր Կովկասը և եվրոպական միջանցքը: Արևելքի և Արևմուտքի ինտեգրացիան», մասնակցում էին 15 պետությունների ներկայացուցիչներ՝ պետական, քաղաքական և հասարակական գործիչներ, գիտնականներ, քաղաքագետներ և ուրիշներ: Կոնֆերանսն ընթանում էր Վրաստանի նախագահ Է.Շևարդնաձեի նստավայրում՝ Կրծանիսում, 1999թ. սեպտեմբերի 14-18-ը: Մասնակիցների մեջ էին ԱՄՆ-ի նախկին նախագահ Ջիմմի Կարտերի ազգային անվտանգության գծով խորհրդական պրոֆեսոր Զբիգնև Բժեժինսկին, ԱՄՆ-ի Հարվարդի համալսարանի պրոֆեսոր, հայտնի սովետագետ Ռիչարդ Փայփսը և մի շարք այլ մասնագետներ Մեծ Բրիտանիայից, Ֆրանսիայից, Գերմանիայից, Ռուսաստանից և այլ երկրներից: Կոնֆերանսի ուշադրության կենտրոնում էր Զբիգնև Բժեժինսկին, որի ելույթն ուղղակի սենսացիա առաջացրեց: Նա հայտարարեց. «Ավարտվել է կայսրությունների և փակ հասարակությունների դարաշրջանը, անցել է եվրոպական քաղաքական տիրապետության շրջանը: Մարդկության ճակատագիրն այլևս չի վճռվելու Լոնդոնում, Փարիզում և Բեռլինում: Միջազգային հարաբերությունների կենտրոնը Եվրոպայից տեղափոխվում է Եվրասիա»: Զբիգնև Բժեժինսկին նկատի ուներ Հարավարևելյան Ասիան, որտեղ գտնվում են երեք այնպիսի կետ ձկներ, ինչպես Չինաստանը, Հնդկաստանը և Ճապոնիան, ինչպես նաև նրանց հարևան երկրները, ինչպես Հարավային Կորեան, Սինգապուրը, Թաիլանդը, Մալազիան և այլն: Բոլոր ներկաներն ապշել էին և մի տեսակ կորցրել իրենց ամերիկացի գիտնականի հայտարարությունից:

Հետո հայտնի դարձավ, որ Եվրոպայից միջազգային կենտրոնի տեղափոխումը Հարավարևելյան Ասիա նման դիրքորոշում ունեն նաև անվտանգության գծով ԱՄՆ-ի պրեզիդենտ Ռիչարդ Նիքսոնի խորհրդական Հենրի Կիսինջերը, քաղաքա-

կրթությունների բախման տեսության հեղինակ, պետական քարտուղար Սեմյուել Հանթինգտոնը, ականավոր քաղաքագետ Ֆերգյուսոնը և քաղաքագիտության այլ ներկայացուցիչներ:

Վերադառնալով Երևան՝ ես կոնֆերանսի ընթացքի, Բժեժինսկու տեսակետի մասին մանրամասն պատմեցի ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանին՝ չթաքցնելով մեր՝ կոնֆերանսի մասնակիցների մտահոգությունները: Նա նույնպես մտահոգվեց և, դիմելով ինձ, հարցրեց. «Դու առաջարկություններ չունե՞ս»: Ես նրան առաջարկեցի ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի կազմում ստեղծել Հարավարևելյան Ասիայի երկրների ուսումնասիրությունների բաժին, որը հատուկ կզբաղվի նոր խնդիրների ուսումնասիրությամբ, այն հաշվով, որ Հայաստանը պատրաստ լինի նոր փոփոխություններին, մյուս երկրներից առաջ անցնելով՝ պատրաստ լինենք նոր փոփոխություններին և ապահովենք մեր տեղը նոր կառույցներում: Նա համաձայնվեց և առաջարկեց ինձ գրավոր ներկայացնել առաջարկություններ: Ես համաձայնվեցի և գրավոր ներկայացրի իմ առաջարկությունները, որոնց նա հավանություն տվեց: Այնուհետև պրեզիդենտ Ֆադեյ Սարգսյանը այդ հարցը ներկայացրեց վարչապետ Անդրանիկ Մարգարյանին, որն ինձ հետ հատուկ զրույց ունեցավ և համոզվեց, որ մեր առաջարկը շատ կարևոր է Հայաստանի արտաքին քաղաքականության տեսանկյունից և խոստացավ իր աջակցությունը: Այդ հարցը 2002թ. սեպտեմբերի 18-ին ներկայացվեց կառավարության քննարկմանը և ընդունվեց որոշում ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի կազմում ստեղծել Արևելյան Ասիայի ուսումնասիրության բաժին: Պրեզիդենտ Ֆադեյ Սարգսյանը պաշտոնապես ինձ հանձնեց կառավարության որոշումը: Ես այդ որոշումը համարում եմ պատմական, քանի որ այն ընդլայնում էր ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի ուսումնասիրության տարածքը: Եթե մինչ այդ տարածքն ընդգրկում էր միայն Մերձավոր և Միջին Արևելքը, ապա կառավարության այդ որոշումից հետո հայ արևելագիտությունն ընդգրկեց

վիթխարի մի տարածք՝ Բոսֆորից մինչև Խաղաղ օվկիանոս: ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտը միակն էր հետխորհրդային շրջանում, որն ուներ նման կառուցվածք:

Դրանից հետո որոշ ժամանակ անց Ֆադեյ Սարգսյանն ինձ տեղյակ պահեց, որ Չինաստանից մեզ մոտ է գալիս պատվիրակություն, և մենք պետք է երկուսով ընդունենք պատվիրակության անդամներին և զրուցենք նրանց հետ: Պատվիրակությունը բաղկացած էր Չինաստանի պետական և կուսակցական գործիչներից և գիտնականներից:

Չինական պատվիրակությանը հետաքրքրում էր Հայաստանի ներքին և արտաքին քաղաքականությունը, գիտության և կրթության հարցերը: Այդ մասին նրանց տվեցինք հանգամանալից պատասխաններ: Այնուհետև ես նրանց տեղեկացրի, որ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի կազմում ստեղծվել է Հարավարևելյան Ասիայի երկրների բաժին, որի խնդիրների մեջ մտնում է նաև Չինաստանի պատմության և քաղաքականության հարցերի ուսումնասիրությունը: Միաժամանակ մենք նրանց տեղյակ պահեցինք, որ դա միակ բաժինն է հետխորհրդային տարածքում: Պատվիրակության անդամները մեծ գոհունակությամբ ընդունեցին այդ լուրը և հաստատեցին իմ կարծիքն առ այն, որ, իրոք, նրանք չգիտեն, թե որտեղ նման բաժին գոյություն ունի: Եվ նրանք պատրաստակամություն հայտնեցին համագործակցելու այդ բաժնի հետ:

Զրույցի վերջում չին պատվիրակները հետաքրքրվեցին, թե արդյոք մենք եղե՞լ ենք Չինաստանում: Ես բացասական պատասխան տվեցի՝ հույս հայտնելով, որ անպայման կլինեմ նրանց գեղեցիկ երկրում:

Ինչ վերաբերում է ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանին, ապա նրա պատասխանն ուղղակի սենսացիա էր: «Ես,- ասաց նա,- բավականին երկար ժամանակով եղել եմ Չինաստանում»: Ակադեմիկոսի պատասխանը զարմացրեց ոչ միայն ինձ, այլև չինական պատվիրակության անդամներին: Նրանք հետաքրքրվեցին,

թե երբ է դա եղել և ինչ կապակցությամբ: Ի պատասխան, նա, ինչպես իմացանք, գեներալ-մայորի զինվորական կոչում ուներ, ասաց հետևյալը. «Ես եղել եմ Չինաստանում 1950-ական թվականների սկզբներին, երբ սկսվեց կորեական պատերազմը, և Չինաստանը ներգրավվեց այդ պատերազմում: Այդ ժամանակ ես աշխատում էի Խորհրդային Միության պաշտպանության նախարարությունում, որն ինձ գործուղեց Չինաստան: Ես աշխատում էի Չինաստանի ազգային-ազատագրական բանակի գլխավոր հրամանատար, մարշալ Չժու Դեի հետ՝ որպես նրա խորհրդական»:

Կարող եմ ասել, որ մենք՝ բոլորս, քարացանք: Չինացիներն առաջինն ուշքի եկան, ոտքի կանգնեցին և ծափահարություններով ողջունեցին իրենց գլխավոր հրամանատարի խորհրդականին: Կարող եմ ասել, որ ես նույնպես առաջին անգամ էի լսում այդ մասին: Դրանից հետո, ես հարցնում էի ավագ սերնդից շատերին, պարզվեց, որ այդ մասին ոչ ոք չգիտեր, որը վկայում է նրա արտակարգ համեստության մասին: Չինաստանի մասնակցությունը 1950-1953թթ. կորեական պատերազմին, որին հակառակ կողմից մասնակցում էին ԱՄՆ-ի ռազմական ուժերը, վճռական նշանակություն ունեցավ, որ Հյուսիսային Կորեան մնա սոցիալիստական լագերում:

Ինչպես պարզ դարձավ, Ֆադեյ Սարգսյանի մասնակցությունը եղել է այնքան նշանակալի, որ 1952թ. Չինաստանի պրեզիդենտ Մաո Ցզեդունի հրամանով Ֆադեյ Սարգսյանը պարգևատրվել է Չինաստանի երկու բարձրակարգ շքանշաններով:

Քանի որ Ֆադեյ Սարգսյանը զրույցի ժամանակ ոչինչ չասաց իր աշխատանքի բնույթի մասին որպես գլխավոր հրամանատար Չժու Դեի խորհրդական, մենք հասկանալով, որ դա եղել է գաղտնի աշխատանք, ոչ մի հարց չտվեցինք նրան, այնուհանդերձ, դրա մասին որոշակի պատկերացում տալիս է Մաո Ցզեդունի հրամանագիրը. «Ֆադեյ Սարգսյանն արժանացել է պարգևի «Չինական բանակի հատուկ զորատեսակների ստեղծ-

ման համար. Մաո Ցզեդուն»:

Հատուկ զորատեսակների ստեղծումը, հասկանալի է, շատ պատասխանատու և բարդ գործ է: Եվ մենք՝ հայերս, բնականաբար, հպարտանում ենք հայկական ռազմական գիտնականի կարևոր ներդրումով Չինաստանի ռազմական ուժերի զարգացման գործում:

42. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՐԵԶԻԴԵՆՏ ՊԱՐՈՆ ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

Հայաստանի Երրորդ հանրապետության երրորդ պրեզիդենտը դարձավ Սերժ Ազատի Սարգսյանը, որն այդ պաշտոնում 2008թ. փոխարինեց Ռոբերտ Քոչարյանին: Նա այդ պաշտոնը զբաղեցրեց մինչև 2018թ. ապրիլի 23-ը, երբ ներկայացրեց իր հրաժարականը:

2008թ. մարտի18-ին նա կարևոր հարցերի քննարկման և զրույցի համար իր աշխատասենյակ հրավիրեց մի քանի մտավորական գիտնականների, այդ թվում՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ Էմիլ Գաբրիելյանին և Կառլեն Ադամյանին, թղթակից անդամներ Հենրիկ Հովհաննիսյանին և Նիկոլայ Հովհաննիսյանին և ևս մի քանի հոգու: Նա այդ պատասխանատու պաշտոնը զբաղեցրեց բավականին բարդ և լարված ներհանրապետական պայմաններում և ցանկանում էր իմանալ մեր կարծիքը այդ բարդ իրադրությունից անկորուստ դուրս գալու և հետագա անելիքների մասին[87]: Մենք դրականորեն և պատրաստակամությամբ ընդունեցինք նրա հրավերը և առաջարկությունը: Քննարկումը տևեց մոտ երեք ժամ, և ելույթ ունեցան բոլոր հրավիրյալները,

[87] Խոսքը 2008թ. առաջին տասնօրյակում Երևանում երկու հակադիր կողմերի միջև տեղի ունեցած բախումների մասին է, որի ընթացքում եղան մարդկային զոհեր, վիրավորներ, և այդ հողի վրա ստեղծվել էր խիստ լարված մթնոլորտ, որը պահպանվեց բավական երկար ժամանակ:

որոնք անկաշկանդ ներկայացրին իրենց առաջարկությունները, տեսակետները և ցանկությունները: Մեր ելույթները գրի էր առնվում քարտուղարի կողմից: Ի տարբերություն մյուսների՝ իմ առաջարկությունները ես գրավոր էի բերել և տիար Սերժ Սարգսյանը ցանկություն հայտնեց, որ իմ գրածը և առաջարկությունները հանձնեմ իրեն, որը ես սիրով կատարեցի:

Ստորև ներկայացնում եմ իմ այդ առաջարկությունները և դրույթները:

X X X

Մեծարգո՛ Պրեզիդենտ,

Հանրապետությունում ստեղծված իրադրության կապակցությամբ և առկա դժվարությունները հաղթահարելու նպատակով Ձեր ուշադրությանն եմ ներկայացնում մեր որոշ նկատառումներ և առաջարկություններ:

Կարծում եմ, որ ելակետային են Ձեր ներկայացրած երկու հիմնադրույթները առ այն, որ ա/ Դուք պատրաստ եք համագործակցելու բոլոր ուժերի, այդ թվում և ընդդիմության հետ՝ ընդհուպ մինչև կոալիցիոն կառավարության կազմումը, բ/ Դուք բոլոր հայերի պրեզիդենտն եք, անկախ այն բանից, թե ընտրությունների ժամանակ նրանք ում օգտին են քվեարկել: Դրանք բավարար հիմք են և անհրաժեշտ շրջանակներ են ստեղծում համազգային կոնսենսուսի համար և դուռ են բացում քաղաքական բոլոր ուժերին համագործակցության նպատակով համախմբվելու պետության կառավարման հարցում:

Վերոնշյալ ելակետային հիմնադրույթների շրջանակներում և հաշվի առնելով Ձեր կողմից համագործակցության վերաբերյալ քաղաքական կամքի դրսևորումը՝ նպատակահարմար է հետևյալ քայլերի ձեռնարկումը, որոնց մի մասը պետք է կենսագործել հնարավորինս կարճ ժամկետում, իսկ մի մասն էլ աստիճանաբար:

Առաջին, նպատակահարմար է մինչև ապրիլի 9-ը, երբ Դուք պաշտոնապես կստանձնեք Հանրապետության

պրեզիդենտի պարտականությունները, Ձեր նախաձեռնությամբ կազմակերպել պրեզիդենտության բոլոր թեկնածուների հանդիպում-խորհրդակցություն, որի ընթացքում քննարկել հանրապետությունում տիրող իրավիճակը **և պարզաբանել նրանցից յուրաքանչյուրի մոտեցումները ստեղծված իրադրությունից դուրս գալու ուղիների վերաբերյալ:** Նման խորհրդակցություն -հանդիպումը կարող է նպաստել լարվածության լիցքաթափմանը՝ մի կողմից, և ծառայել պրեզիդենտության նախկին թեկնածուների կողմից ներկայացվող ուժերի միջև տարբեր մակարդակների վրա և ձևաչափով համագործակցության հաստատմանը կամ եզրերի հայտնաբերմանը՝ մյուս կողմից:

Երկրորդ, առաջնահերթ խնդիր համարել պառլամենտական և արտապառլամենտական ընդդիմությանը երկրի կառավարմանը ներգրավելու հարցը, դրա ուղիների որոնումը և ինստիտուցիոնալ կառույցների ստեղծումը: Այդ նպատակով առաջարկում եմ ՀՀ պրեզիդենտին կից ստեղծել «Ազգային համաձայնության և համագործակցության խորհրդատվական մարմին կամ խորհուրդ»՝ նրանում ընդգրկելով պառլամենտական և արտապառլամենտական բոլոր նշանակալի ուժերին, առաջին հերթին ազդեցիկ քաղաքական կուսակցություններին, ինչպես նաև որոշ ոչ կառավարական հասարակական կազմակերպություններին: Այդ խորհրդատվական մարմնում, որը գլխավորելու է պրեզիդենտը, նրա բոլոր մասնակից ուժերը պետք է ներկայացվեն իրենց առաջին դեմքերով: Խորհրդատվական մարմինը կարող է քննարկել Հայաստանի Հանրապետության առջև կանգնած կամ ծագող բոլոր հանգուցային հարցերը: Նա որոշումներ ընդունում է կոնսենսուսի հիման վրա, որոնք խորհրդատվական բնույթ ունեն և կարող են հաշվի առնել Ազգային անվտանգության խորհրդի և կառավարության կողմից և պրեզիդենտի վերջնական հավանությանն արժանանալուց հետո ընդունվել ի կիրառումն:

Ցանկալի է այդ մարմնի ստեղծումը նույնպես իրականացնել մինչև ապրիլի 9-ը:

Երրորդ, իշխանություն-ընդդիմություն շփումներին և համագործակցությանը կարող են ծառայել նաև **պաշտոնական, պառլամենտական և այլ բնույթի պատվիրակությունների, զանազան հանձնաժողովների և կոմիտեների կազմում ընդդիմության ներկայացուցիչների ընդգրկումը:**

Չորրորդ, թույլատրել Հայաստանի քաղաքացիներին առանց բարդությունների մասնակցել Ազգային ժողովի նիստերին, որոնք փակ բնույթ չեն կրում: Նրանց պառլամենտի նիստերի դահլիճում հատկացնել համապատասխան տեղեր: Այդ պրակտիկան վաղուց կիրառվում է աշխարհի մի շարք երկրներում, ինչպես, օրինակ՝ Մեծ Բրիտանիայի Պառլամենտում, Գերմանիայի Բունդեսթագում, որտեղ ես եղել եմ, ինչը համարվում է ժողովրդավարության կարևոր դրսևորումներից մեկը:

Հինգերորդ, օգտակար կլինի, եթե **Հանրապետության պրեզիդենտը յուրաքանչյուր տարվա սկզբին հատուկ ուղերձով դիմի ազգին,** ինչպես դա արվում է ԱՄՆ-ում և արդեն ինչ-որ չափով կիրառվում է նաև Ռուսաստանի Դաշնությունում: Սովորաբար այդ ուղերձի ժամանակ պրեզիդենտն ամփոփում է նախորդ տարվա արդյունքները, ձեռքբերումները, նվաճումները և նշում առաջիկա և ապագա անելիքները: Դա ժողովրդին ամենաբարձր մակարդակով իրազեկելու միջոց է և առանցքային տեղ է գրավում ժողովրդավարության հաստատման համակարգում:

Վեցերորդ, մարտյան իրադարձությունները վկայեցին այն խոր դժգոհության մասին, որ կուտակվել է երիտասարդության, հատկապես ուսանող երիտասարդության մեջ: Դրա գլխավոր պատճառներից մեկը բարձրագույն ուսումնական հաստատություններում խոր արմատներ նետած կաշառակերությունն է, որն անբավարարվածության և հակահիշխանական տրամադրությունների մշտական աղբյուր է և դյուրավառ նյութ զանազան քաղաքական արկածախնդիրների ձեռքում: Կոչերով վերացնել

կաշառակերությունը և արդարություն ու հավասարություն հաստատել ընդունելության ոլորտում գործնականորեն հնարավոր չէ: Անհրաժեշտ է սկզբունքային նոր մոտեցում: **Ժամանակն է փոփոխություններ մտցնել բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելու կարգում՝ նրա հիմքում դնելով առանց ընդունելության քննությունների բուհ ընդունելու սկզբունքը,** որը վաղուց է կիրառվում աշխարհի բազմաթիվ երկրներում: Այդ առումով անելիքներ կան նաև դպրոցական կրթական համակարգում:

Յոթերորդ. լուրջ անելիքներ կան այն բնագավառում, որը կոչվում է գաղափարական: Պատմական փորձը ցույց է տալիս, որ երբ անտեսվում է գաղափարական աշխատանքը, ապա դա անխուսափելիորեն հանգեցնում է ճգնաժամային իրադրությունների ստեղծման: Դա ապացուցեցին նաև մարտյան դեպքերը: Խոսքը նախկին խորհրդային-կոմունիստական ագիտպրոպին վերադառնալու մասին չէ: **Խոսքը աստվածաշնչային «ոչ միայն հացիվ, այլև բանիվ» աստվածատուր սկզբունքի մասին է:** Անհրաժեշտ է մշակել այնպիսի գաղափարախոսական համակարգ, որը հիմնված է ազգային արժեքների և ազգային ինքնության պահպանման ու զարգացման, պետականության պաշտամունքի արմատավորման, հպարտության և արժանապատվության, լայնախոհության և հանդուրժողականության վեհ և անանց սկզբունքների վրա:

Այդ ուղղությամբ հսկայական աշխատանք կա անելու շատ բնագավառներում, **որոնց մեջ առաջնայիններից են նաև մամուլը և մասնավորապես հեռուստատեսությունը:** Այդ վերջինը դարձել է անորակ «կադրերի» և շոուի «մասնագետների» պատանդը:

Ութերորդ. գաղափարական վակուումը լրացնելու գործում **բացառիկ դեր ունի մտավորականությունը:** Նրա վարկի և հեղինակության անկումը, ինչպես ցույց տվեցին վերջին իրադարձությունները, հղի է անկանխատեսելի բացասական հե-

տնանքներով հայ ազգի՝ որպես ինքնուրույն և ինքնատիպ էթնոսի գոյության համար: Գիտնականը, գրողը, արվեստագետը, նկարիչը, երաժիշտը իրենց պատվավոր տեղը պիտի ունենան հասարակության մեջ գլոբալացման դարաշրջանում: Դրա կոնկրետ ուղիները նշելու համար հարկ է անցկացնել խորհրդակցությունների, հանդիպումների և քննարկումների մի ամբողջ շարք, որի արդյունքների հիման վրա հնարավոր կլինի ընդունել իրատեսական ծրագիր:

Իններորդ. ընդունել համապատասխան օրենք, որով արգելվի ցույցերի, երթերի և այլ բնույթի զանգվածային միջոցառումների անցկացումն այնպիսի վայրերում, որոնք ունեն համազգային պատմական, մշակութային և գիտական նշանակություն (Օպերայի հրապարակ, Մատենադարանի մերձակայք, Հանրապետության հրապարակ, Համալսարանի տարածք և այլն): Ցույցերի համար հատկացնել հատուկ վայրեր, նախընտրելի է քաղաքների ծայրամասերում և այլն:

Տասներորդ. պահանջվում է նոր սկզբունքների վրա վերակառուցել Հայրենիք- Սփյուռք հարաբերությունները:

Մենք կառաջարկեինք **Հայաստանի Հանրապետությունը հռչակել Ամենայն Հայոց Պետություն՝ ամրագրելով այն Սահմանադրության մեջ:** Առաջնային համարել Հայաստան-Սփյուռք համատեղ մարմնի ստեղծումը, որի հարցում մենք շատ ենք ուշացել: Ուստի առաջարկում եմ ստեղծել նման մի մարմին, որը կարելի է կոչել **«Հայաստանի և Սփյուռքի Հարաբերությունները Համադրող Մարմին» /ՀՍՀՀՄ/** կամ **«Հայաստան-Սփյուռք Խորհրդատու Մարմին» / ՀՍԽՄ/: Այդ մարմնի նախագահ պետք է լինի Հայաստանի Հանրապետության պրեզիդենտը:** Այդ մարմինը համալրվում, ընտրվում կամ նշանակվում է Հայաստանի և Սփյուռքի ականավոր պետական, քաղաքական, հասարակական, կրոնական, մշակութային գործիչներից, գիտնականներից, ֆինանսիստներից և այլ խավերից հավասար ներկայացուցչության՝ պարիտետի սկզբունքի վրա: Նրա

որոշումներն ընդունվում են կոնսենսուսի սկզբունքով, և բացառվում է պարտադրանքը:

Համատեղ մարմինը քննարկում և ընդունում է համապատասխան որոշումներ Հայաստանի և Սփյուռքի կենսական ու առանցքային նշանակություն ունեցող բոլոր տիպի քաղաքական, տնտեսական, ռազմական, ազգային ինքնության պահպանման և այլ հարցերի վերաբերյալ, մոբիլիզացնում համայն հայության մարդկային, տնտեսական, ֆինանսական, ռազմապաշտպանական ռեսուրսները, սահմանում ընդունված որոշումների իրականացման ռազմավարությունը և մարտավարությունը:

Ահա այսպիսին են, հարգելի՛ պրեզիդենտ, մեր մի քանի նկատառումները:

Հարգանքներով՝
Նիկոլայ Հովհաննիսյան
ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ՀՀ ԳԱԱ Թղթակից անդամ
Գիտության վաստակավոր գործիչ
18 մարտի 2008թ.
Երևան

43. ՄԵՏԱՔՍԻ ՈՒՂՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍՏՐԱՏԵԳԻԱՆ . ՃԱՊՈՆԻԱՅԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

1999 թ. մարտի 9-ին Ճապոնիայի մայրաքաղաք Տոկիոյում տեղի ունեցավ «Մետաքսի ուղու ընդհանուր ստրատեգիան» Միջազգային սեմինար, որը հրավիրվել էր Ճապոնիայի արտաքին գործերի նախարարության նախաձեռնությամբ և հովանավորությամբ:

Նրա կազմը շատ ներկայացուցչական էր: Նրա աշխատանքներին մասնակցում էին մեկական ներկայացուցիչներ անդրկովկասյան հանրապետություններից՝ Հայաստանից,

Վրաստանից, Ադրբեջանից, մեկական ներկայացուցիչներ միջինասիական հանրապետություններից՝ Ղազախստանից, Ուզբեկստանից, Թուրքմենիայից, Ղրղզստանից և Տաջիկստանից, ապա նաև ԱՄՆ-ից, Անգլիայից, Գերմանիայից, Ռուսաստանից, Չինաստանից, Իրանից և Թուրքիայից:

Սեմինարի մասնակիցներին ուղերձով դիմեց Ճապոնիայի վարչապետ Օբուտին: Նա նշեց, որ «Թեև սառը պատերազմից անցել է ութ տարի, սակայն ցարդ չի ստեղծվել միջազգային նոր կարգ: Այդ իմաստով Մետաքսի ուղին շատ կարևոր է և կարող է իր ներդրումն ունենալ Նոր միջազգային կարգի ձևավորման գործում: Ճապոնիան մեծ ուշադրությամբ է հետևում Մետաքսի ուղու զարգացմանը»:

Կառավարության և Արտաքին գործերի նախարարության անունից կոնֆերանսի մասնակիցներին ողջունեց Ճապոնիայի Արտաքին հարաբերությունների պետական քարտուղար Կեյզո Տակեմին: Իր ելույթում նա նշեց. «Ճապոնիայի համար կարևոր է այս սեմինարը: Այստեղ առաջին անգամ մասնակցում են Կովկասի պետությունները: Այս ռեգիոնը ստրատեգիական կարևոր շրջան է, որն ընկած է Ռուսաստանի և Չինաստանի միջև: Եվ երբ խոսում են Մետաքսի ուղու մասին, ապա չենք կարող չխոսել նաև կոնֆլիկտների մասին, ինչպես Տաջիկստանի, Լեռնային Ղարաբաղի, Աբխազիայի և Հարավային Օսեթիայի: Դրանք բարդացնում են դրությունը և սպառնալիք են Մետաքսի ուղուն: Դա չի կարող չանհանգստացնել Ճապոնիային:

Այնուհետև Կեյզո Տակեմին, խոսելով Կասպից ծովի մասին, ընդգծեց, որ այստեղ գլխավորը տրանսպորտային ուղիների հարցն է, և Մետաքսի ուղին այնպես պետք է անցկացնել, որ նա ծառայի ինտեգրացմանը: Նրա կարծիքով, Մետաքսի ուղու զարգացման համար անհրաժեշտ է կապերի հաստատումը Իրանի, Թուրքիայի, ԱՄՆ-ի, Ճապոնիայի և Եվրոպական միության միջև: Մետաքսի ուղին կոչված է ստրատեգիական կապերի հաստատմանը նրա մասնակից պետությունների միջև:

Քննարկումները ցույց տվեցին, որ գոյություն չունի միասնական տեսակետ Մետաքսի ուղու, նրա խնդիրների և վերջնական նպատակների մասին:

Եթե Վրաստանը, Ադրբեջանը և Կենտրոնական Ասիայի բոլոր հինգ պետությունները խանդավառ էին, իրենց երկրների զարգացումը և բարգավաճումը զգալիորեն կապում էին այդ ուղու գործարկման հետ, և եթե նրանք Մետաքսի ուղին հասկանում էին առաջին հերթին նավթի տեղափոխման հնարավորություն, այսինքն՝ որպես մի տրանզիտ ուղի կամ խողովակ, ապա այլ էր մնացած պետությունների դիրքորոշումը:

Վերջիններս գտնում են, մասնավորապես Գերմանիան և Ռուսաստանը, որ Մետաքսի ուղին չի կարող լինել Արևելքի և Արևմուտքի միջև կոնտակտների միակ մոդելը, որ արդեն կան կապերի այլ ուղիներ ու ձևեր, և այդ դեպքում Մետաքսի ուղին ի՞նչ կարող է ավելացնել արդեն գոյություն ունեցող ձևերին: Այդ հարցերի պատասխանը քննարկումների ժամանակ չտրվեց:

Ճապոնիայի ներկայացուցիչ, բիզնեսմեն Կրոսակայը շեշտեց, որ Մետաքսի ուղու տարածքը դեռևս միասնական տարածք չէ, ապրանքների, դրամի և մարդկանց շարժը պետք է կապակցել տնտեսական հարցերի հետ: Սակայն պարզ չէ, թե ինչպիսի տնտեսություն է ստեղծվում, թե՞ Մետաքսի ուղին պիտի դիտել տարանցիկ ուղի: Քննարկման հատուկ առարկա դարձավ անվտանգության հարցը, քանի որ Մետաքսի ուղին անցնում է քաղաքական, էթնիկական և էթնոքաղաքական կոնֆլիկտների տարածքների միջով՝ հնդկապակիստանյան, աֆղանական, տաջիկական, Լեռնային Ղարաբաղի, Հարավային Օսեթիայի, Աբխազիայի, Թուրքիայի՝ քրդերով բնակեցված տարածքների և այլն: Մասնակիցները գտան, որ Մետաքսի ուղին չի ապահովում լրիվ անվտանգություն, իսկ առանց անվտանգությունը կարգավորելու բիզնեսը և տնտեսական կապերը չեն կարող զարգանալ:

Իր հերթին Իրանի ներկայացուցիչ Չարմին ավելացրեց, որ ԱՄՆ-ը երկու բան է միաժամանակ անում: Մի կողմից խոսում է

Իրանի հետ հարաբերությունները կարգավորելու մասին, իսկ մյուս կողմից՝ գործում ընդդեմ Իրանի, որը, բնականաբար, չի նպաստում Մետաքսի ուղու ձևավորմանը:

Նկատի ունենալով այս հարցի կարևորությունը՝ մենք առաջարկեցինք հաջորդ սեմինարը նվիրել անվտանգության ապահովման հարցերին՝ ձևակերպելով այն հետևյալ կերպ. «Էթնոքաղաքական կոնֆլիկտների ազդեցությունը Մետաքսի ուղու խնդիրների իրագործման վրա», որը պաշտպանություն գտավ առանց բացառության բոլոր մասնակիցների կողմից:

Ռուսաստանի ներկայացուցիչ Ալեքսեյ Մալաշենկոյի կարծիքով կասպիական նավթը ավելի շատ քաղաքական, քան թե տնտեսական հարց է, և կասպիական նավթը չի կարելի համեմատել ոչ՛ Հյուսիսային ծովի և ո՛չ էլ Մերձավոր Արևելքի հարցի հետ: Մետաքսի ուղին թեև կարևոր է, սակայն ճգնաժամից դուրս գալու միակ ելքը չէ: Այսօր ո՛չ Անդրկովկասը և ո՛չ էլ Կենտրոնական Ասիան պատրաստ չեն ո՛չ տնտեսապես և ո՛չ էլ քաղաքականապես ստեղծելու միասնական Մետաքսի ուղի: Նա շեշտեց, որ չի կարելի անտեսել Ռուսաստանի շահերը, որը մշտապես առաջարկում է իր այլընտրանքային ուղիները՝ ավելացնելով, որ Մետաքսի ուղին գոյություն ունի գաղափարական մակարդակով միայն:

Իրենց մտահոգություններն արտահայտեցին նաև Չինաստանի և Իրանի ներկայացուցիչները:

Սեմինարում փաստորեն բախվեցին երկու տեսակետներ:

Առաջին. Ադրբեջանի, Վրաստանի և Կենտրոնական Ասիայի հինգ հանրապետությունների ներկայացուցիչները մեծ ուրախությամբ, երբեմն էյֆորիայի աստիճանի, ողջունում էին Մետաքսի ուղին, դրա հետ կապված իրենց երկրների բարգավաճումը: Հարցը նրանք այնպես էին ներկայացնում, որ բավական է՝ Մետաքսի ուղին գործի, և նրանք իրենց պրոբլեմները շատ արագ կլուծեն: Ընդ որում նրանք Մետաքսի ուղու հարցում շեշտը դնում էին նավթամուղների կառուցման և նավթի տեղա-

փոխման վրա՝ մնացած հարցերը համարելով ստորադաս:

Երկրորդ. մասնակիցների երկրորդ խումբը ավելի սթափ, զգույշ և քննադատական մոտեցում ցուցաբերեց: Նրանք պահանջում էին տալ «Մետաքսի ուղու» սահմանումը, ի՞նչ բան է դա, ո՞րն է դրա վերջնական նպատակը: Միաժամանակ նշվում էր, որ դա լավ մոդել չէ Արևելքի և Արևմուտքի կապերի համար, արդեն կան կապերի այլ ձևեր, Մետաքսի ուղին ի՞նչ կարող է ավելացնել դրան:

Այս հարցերը հնչեցին Այզբների՝ Գերմանիա, Մալաշենկոյի՝ Ռուսաստան, Չարմիի՝ Իրան, Աին Գուանշենի՝ Չինաստան և այլոց զեկուցումներում:

Մենք, որ առաջին զեկուցողը եղանք, նույնպես անդրադարձանք այդ հարցերին: Մասնավորապես նշեցինք, որ Մետաքսի ուղին կարող է հաջողություն ունենալ, եթե հենվի ունիվերսալության սկզբունքի վրա և թույլ չտա մեկ կամ մի քանի պետությունների մոնոպոլիայի հաստատում և չծառայի միայն նավթի հարցին, որ չի կարելի հաշվից դուրս նետել Ռուսաստանին, Իրանին, արաբական երկրներին և վատ սքողված ձևով չեզոքացնել Հայաստանը:

Չինաստանի ներկայացուցիչ Սինգը ընդունեց, որ Կենտրոնական Ասիայում կա չինական գործոն, և որ այդ գործոնն ազդում է Կենտրոնական Ասիայի վրա: Չինաստանը ձգտում է պահպանել կայունությունը Կենտրոնական Ասիայում, որը կնպաստի կայունությանը Չինաստանի հյուսիսարևմտյան շրջաններում, որը ազգային փոքրամասնությունների շրջան է: Նա նկատի ուներ թուրքալեզու և մուսուլման ազգային փոքրամասնություններին, որոնք կապ ունեն Կենտրոնական Ասիայի թուրքալեզու իրենց արյունակիցների հետ: Այդ հարցը այսօր հուզում է Չինաստանին:

Խիստ կարևոր, ուշագրավ, կարելի է ասել միանգամայն անսպասելի և սենսացիոն էր ԱՄՆ-ի ներկայացուցիչ Գլեն Հովարդի ելույթը: Նա Գիտությունների կիրառման միջազգային

կորպորացիայի աշխատակիցն է: Այդ հաստատությունը, որը փակ հաստատություն է և խորհրդատու մարմին Սպիտակ տան, Պենտագոնի և Կոնգրեսի համար: Նա ասաց հետևյալը. «Վերջին վեց ամիսներին Կասպիական ռեգիոնը մտել է նավթամուղի զարգացման երրորդ փուլ: Նավթի ցածր գները հանգեցրին գլխավոր նավթամուղների մեծ մասի նախագծերի լճացման և պաուզայի, քանի որ բարձրացավ տեղափոխման արժեքը: Դա իր հերթին սառեցրեց Բաքու-Ջեյհան նավթամուղի կառուցման վերաբերյալ բանակցությունների և քննարկումների առաջընթացը: Նավթի գների անկման պատճառով նվազել է նավթի գեոպոլիտիկ նշանակությունը, և նավթի տեղը այժմ գրավում է գազի գեոպոլիտիկան: 1994-1998 թթ. այդ նավթամուղը դարձել էր ԱՄՆ-ի էներգետիկ քաղաքականության կենտրոնական հարցը Կասպիական ավազանում: Նա այժմ հեռանում է կասպիական նավթը կենտրոնական համարելուց, քանի որ այլ նախագծեր ավելի մեծ կարևորություն են ձեռք բերում: ԱՄՆ-ը շարունակում է Իրանին չեզոքացնելու իր քաղաքականությունը»: Շարունակելով իր դիտողությունները՝ Գլեն Հովարդը նշեց, որ այժմ առաջնային նշանակություն է ձեռք բերում Թուրքիան՝ որպես գազի սպառման գլխավոր շուկա, և այդ շուկային տիրանալու համար պայքարն ընթանում է ռուսական «Գազպրոմի», Իրանի և ԱՄՆ-ի միջև: Նրա կարծիքով ԱՄՆ-ը ամեն ինչ անելու է, որպեսզի Թուրքիան գազի հարցում կախման մեջ չընկնի Ռուսաստանից և Իրանից, և ինքը դառնա գլխավոր մատակարարողը:

Այնուհետև Գլեն Հովարդը ներկայացրեց իր և Է. Վիմբուշի մեկ այլ զեկուցումը (Վիմբուշը չէր ժամանել Տոկիո), որում նրանք նշում էին Կովկասի կարևորությունը ԱՄՆ-ի համար. «Կովկասը հետաքրքրում է ԱՄՆ-ին մի քանի պատճառներով:

Առաջին. Կովկասը սահմանակցում է ՆԱՏՕ-ին, և կովկասյան պետություններն ավելի ու ավելի են ներգրավվելու ՆԱՏՕ-ի ուղեծրի մեջ՝ Պարտնյորներ խաղաղության համար և այլ ծրագրերով:

Երկրորդ. կասպիական նավթի էներգիան հրապուրելու է ԱՄՆ-ից ներդրումներ, որոնք պետք է պաշտպանել:

Երրորդ. ուժեղ հայկական լոբբին ԱՄՆ-ում կպահի կովկասյան հարցերը ԱՄՆ-ի քաղաքականությունը մշակողների կենտրոնում»:

Սեմինարի շրջանակներում ես ունեցա երեք առանձնազրույց:

Առաջինը՝ Ճապոնիայի արտաքին գործերի նախարարության Եվրոպական գործերի բյուրոյի գլխավոր դիրեկտոր Մուցույոշի Նիշիմուրայի հետ՝ վերջինիս խնդրանքով: Նա իր գոհունակությունը հայտնեց սեմինարին Հայաստանի ներկայացուցչի, այսինքն՝իմ, մասնակցության առթիվ: Այնուհետև նա նշեց, որ Ճապոնիայի կառավարությունն այս սեմինարը համարում է կարևոր քաղաքական իրադարձություն, որ դրան մասնակցում են 200 ճապոնացի բիզնեսմեններ, քաղաքական գործիչներ և լրագրողներ, որոնք հետաքրքրվում են Հայաստանով, Վրաստանով և Ադրբեջանով: Նա նշեց, որ Ճապոնիան ակտիվացնելու է իր գործունեությունը Անդրկովկասում, այդ թվում և Հայաստանում, և որ կասպիական նավթը ոչ մի նշանակություն չունի Ճապոնիայի համար, իսկ Մետաքսի ուղին կարող է հաջողություն ունենալ, եթե ընդգրկի տնտեսական բոլոր ոլորտները և չդառնա որևէ պետության կամ պետությունների խմբերի մոնոպոլիան: Նա հատուկ ընդգծեց, որ մեր հարաբերությունները չեն կարող սահմանափակվել միայն տնտեսական ոլորտով, այն անպայման պետք է ներառի նաև քաղաքական և դիվանագիտական հարաբերությունները: Նրա կարծիքով, դա նոր հարաբերություններ կստեղծի Ճապոնիայի համար և նոր հեռանկարներ կբացի նրա առջև՝ նրա քաղաքական գործունեության դաշտը ընդարձակելու իմաստով: Այնուհետև նա անսպասելիորեն հայտնեց հետևյալ տեսակետը. «Ճապոնիայից չպետք է վախենալ, քանի որ Ճապոնիան չունի կայսերական հավակնություններ և չի ձգտում տիրապետող ուժ դառնալ այդ տարածաշրջանում, ինչպես Ռու-

սաստանը, ԱՄՆ-ը կամ Իրանը: Մենք ուզում ենք հավասար տնտեսական հարաբերություններ, կատարել կապիտալ ներդրումներ և զարգացնել քաղաքական և դիվանագիտական հարաբերություններ»: Շարունակելով ներկայացնել իր տեսակետները Հայաստանի նկատմամբ Մուցույոշի Նիշիմուրան հատուկ շեշտեց. «Ճապոնական կողմը մեծ նշանակություն է տալիս Հայաստանին, և նա մշտապես պատշաճ տեղ է գրավելու Ճապոնիայի անդրկովկասյան ծրագրերում»: Վերջում «Նիշիմուրան խնդրեց իր այս տեսակետը փոխանցել Հայաստանի ղեկավարությանը»: Զրույցից ես այն տպավորությունը ստացա, որ նա գիտակցում է Հայաստանի դերը և կարևորությունը Անդրկովկասում: Նա ինձ հետ համաձայնվեց, որ Հայաստանին հնարավոր չէ հաշվից դուրս նետել:

Երկրորդ. ինձ հետ առանձնազրույց ունենալու ցանկություն հայտնեց Կունիհիկո Ասամուրան՝ Ճապոնիայի արտաքին գործերի նախարարության Հայաստանի գործերով պատասխանատուն: Նա հավաստիացրեց, որ Ճապոնիան նախապատրաստվում է ակտիվացնել իր քաղաքականությունը Անդրկովկասում՝ լայնորեն ընդգրկելով նաև Հայաստանը: Ասամուրան ինձ վստահեցրեց, որ Ճապոնիան վճռականորեն դեմ է Հայաստանը մեկուսացնելու կամ չեզոքացնելու քաղաքականությանը: Դրա վկայությունն է լինելու այն, որ Ճապոնիան նախատեսում է բազմաբնույթ հարաբերությունների հաստատում Հայաստանի հետ:

Եվ, վերջապես, **Երրորդ.** ես առանձին զրույց ունեցա Ստամբուլի համալսարանի տնտեսագիտության պրոֆեսորի ասիստենտ Սամիլ Ունսալի հետ: Ինչպես նախորդները, սա նույնպես կայացավ վերջինիս խնդրանքով:

Նա փորձեց արդարացնել կամ բացատրել Հայաստանի շրջափակումը նրանով, որ դա ուղղված չէ Հայաստանի դեմ, այլ կապված է Լեռնային Ղարաբաղի խնդրի հետ՝ ավելացնելով, որ այսօր Թուրքիայում չկա որևէ քաղաքական ուժ կամ գործիչ, որն ի վիճակի լիներ անտեսել Ղարաբաղի հարցը: Դրա հետ միասին

նա ընդգծեց, որ տարածաշրջանի ոչ մի ժողովրդի հետ նրանք այնքան մոտ չեն, որքան հայերի հետ, և նրանք միմյանց գիտեն մեկ հազարամյակից ավելի:

Մյուս կողմից նա փորձեց Հայաստանին մեղադրել այն բանում, որ նա ռազմական համագործակցություն է հաստատել Ռուսաստանի հետ և շատ սերտորեն համագործակցում է Իրանի և Հունաստանի հետ: Եվ նա դիմեց ինձ հարցով, թե ինչու է Հայաստանն այդպես վարվում: Եվ երբ ես նրան բացատրեցի թուրքական սպառնալիքների մասին, նա խոստովանեց, որ ինքը տեղյակ է դրանից:

Ես այն տպավորությունը ստացա, որ Ունսալը լավատեղյակ է և կողմնակից է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանը և գիտակցում է Հայաստանի դերը Անդրկովկասում: Նա համաձայնվեց ինձ հետ, որ Հայաստանին հնարավոր չէ հաշվի չառնել:

Սեմինարի վերջում ես առաջարկեցի, որ հաջորդ սեմինարը նվիրված լինի «Էթնոքաղաքական կոնֆլիկտների ազդեցությանը Մետաքսի ուղու ծրագրի իրականացման վրա», որն արժանացավ սեմինարի մասնակիցների հավանությանը:

Ճապոնիայի արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչները խոստացան այդ հարցը քննարկել, որից հետո մեզ տեղյակ կպահեն:

XXX

Ամփոփելով կարելի է ասել, որ Մետաքսի ուղու, ինչպես նաև ՏՐԱՍԵԿԱՅԻ ծրագրերը դեռևս նախնական փուլում, ավելի ճիշտ թղթի վրա են գտնվում: Այդ հարցերը հեշտությամբ չեն լուծվելու, և դեռ պարզ չէ, թե ինչ կերպարանք են ընդունելու դրանք: Ադրբեջանը, Վրաստանը և Կենտրոնական Ասիայի հանրապետությունները փորձում են այդ ծրագրերի կենսագործումն ավելի շուտ և գործնական ներկայացնել, քան իրականում կա:

Դա յուրատեսակ բլեֆ է:

Հայաստանը պետք է օգտվի այս իրավիճակից՝ իր քաղաքականությունը ճշգրտելու և ավելի հստակ դարձնելու՝ կապված Մետաքսի ուղու և նրա ճյուղավորումների հետ: Մենք պետք է պարզենք նույնպես, թե ինչ ենք պատկերացնում Մետաքսի ուղի ասելով, տնտեսական համագործակցությու՞ն, թե՞ տրանզիտ ճանապարհ:

Հայաստանը պետք է ավելի ակտիվացնի իր համագործակցությունը Ռուսաստանի, Իրանի, Ճապոնիայի, Չինաստանի և այն երկրների հետ, որոնք դեմ են Մետաքսի ուղին Կենտրոնական Ասիայի և Ադրբեջանի ու նրանց հետևից գնացող Վրաստանի մոնոպոլիան դարձնելուն: Մենք այն տպավորությունը ստացանք, որ Ճապոնիան իրոք ցանկանում է զարգացնել իր հարաբերությունները Հայաստանի հետ և դեմ է նրա մեկուսացմանը:

Այդ կապակցությամբ նպատակահարմար կլիներ Հայաստանի կողմից ևս համապատասխան քայլեր ձեռնարկել և կազմակերպել հատուկ հանդիպում Հայաստանի և Ճապոնիայի համապատասխան մարմինների միջև, թերևս Արտաքին գործերի նախարարությունների մակարդակով:

Մեր կարծիքով ճիշտ կլիներ, եթե աշխատանքներ տարվեն Հայաստանում այլընտրանքային ուղիներ որոնելու և բացելու համար: Մեզ միանգամայն հեռանկարային է թվում Հայաստան-Իրան-Սիրիա ուղու զարգացումը այն հաշվով, որ Սիրիայի միջոցով Հայաստանը ելք ունենա դեպի Միջերկրական ծով: Կարելի է Սիրիայի Միջերկրական ափին վարձակալման կամ այլ հիմունքներով նավահանգստային գոտի ունենալ՝ բեռներ ընդունելու և առաքելու համար: Բազմազանությունը, այդ թվում և տրանսպորտային ուղիների հարցում, ժամանակակից միջազգային հարաբերությունների ամենաբնորոշ գծերից մեկն է: Հայաստան-Իրան-Սիրիա տրանսպորտային ուղու զործարկումը և զարգացումը, Միջերկրական ծով ելք ունենալով հանդերձ, շեշտակի կնվազեցներ թուրքական շրջապատման ազդեցությունը,

կթուլացներ Հայաստանի կախվածությունը Վրաստանից, և կբարձրացներ Հայաստանի նշանակությունը Թուրքիայի և Վրաստանի, ինչպես նաև տարածաշրջանի այլ երկրների աչքում:

44. ՄԵԾ ԵՂԵՌՆ - ԳԵՆՈՑԻԴ - ԱՐՄԵՆՈՑԻԴ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Խոնարհումով նվիրում եմ Էրզրումում ծնված մորս և 1915թ. Մեծ եղեռնի բոլոր Էրզրումցի և ոչ Էրզրումցի զոհերի խնկելի հիշատակին, բոլոր նրանց, ովքեր այս աշխարհը թողեցին կարոտով՝ անմոռաց «Էրզիրը» շուրթերին

Վերոնշյալ հարցերի լուսաբանությունից հետո միայն մենք նպատակահարմար գտանք անդրադառնալ Հայոց ցեղասպանության հարցին իր բոլոր կողմերով: Եվ դա պատահականություն չէր: Հայոց ցեղասպանությունը մի անբուժելի վերք է, որը չունի սպեղանի: Մենք այդ հարցին անդրադարձանք ոչ թե այս աշխատության սկզբներին կամ միջանկյալ մասում, այլ վերջում: Եվ դա պատահականություն չէր, այլ մտածված քայլ:

Շնորհիվ նման մոտեցման՝ հնարավոր եղավ Հայոց ցեղասպանությանը նվիրված հարցերը լուսաբանել ոչ թե մաս առ մաս, կցկտուր, այլ մեկ միասնական շարադրանքով, ինչը, վստահ եմ, հնարավորություն տվեց մեզ ցեղասպանության հարցերը ներկայացնելու մեկ ամբողջական պատկերով՝ հաշվի առնելով անգամ մանրուքները, թեև ցեղասպանության հարցում չկան և չեն կարող մանրուքներ լինել:

Հայոց ցեղասպանության ուսումնասիրության բնագավառում Հայաստանում, Սփյուռքում և արտասահմանյան մի շարք երկրներում մասնագետների կողմից կատարվել է վիթխարի աշխատանք: Աշխարհի բազմաթիվ լեզուներով հրատարակվել

են պաշտոնական, արխիվային արժեքավոր փաստաթղթեր, հուշագրություններ, մենագրական ուսումնասիրություններ, վերապրողների վկայություններ, հոդվածների ժողովածուներ և այլ բնույթի նյութեր ու գրականություն հայերեն, ռուսերեն, արաբերեն, անգլերեն, պարսկերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իտալերեն, հունարեն, ռումիներեն, անգամ թուրքերեն և բազմաթիվ այլ լեզուներով:

Սակայն, այնուհանդերձ, դեռ շատ անելիքներ կան, բազմաթիվ հարցեր դեռևս լուսաբանության կարոտ են, անհրաժեշտություն կա նորովի լուսաբանելու շատ ու շատ հարցեր՝ օգտվելով պատմագիտական մտքի նորագույն նվաճումներից:

Մենք առաջին հերթին նկատի ունենք վերջին տասնամյակներում ձևավորված գիտական նոր ուղղությունը՝ ցեղասպանագիտությունը, և նրա ընձեռած մեթոդաբանությունն ու հայեցակարգային հնարավորությունները:

Բացի այդ, դեռ կան չհայտնաբերված և չուսումնասիրված շատ նյութեր, որոնք, չենք կասկածում, կարող են նոր լույս սփռել XX դարի ամենամեծ ոճրագործություններից մեկի՝ Հայոց ցեղասպանության վրա:

Մյուս կողմից համաշխարհային պատմագիտական քննախույզ միտքը հայոց 1915թ. Մեծ եղեռնին հաջորդած տասնամյակներում հասել է մեծ նվաճումների տարբեր ժողովուրդների ջարդերի ու կոտորածների, ցեղասպանության օրինաչափությունների ուսումնասիրության բնագավառում, կուտակել վիթխարի փորձ նրանց դասակարգման և տիպաբանության որոշիչների ոլորտում, որոնք կիրառելի են նաև արմենոցիդի՝ հայասպանության ուսումնասիրության տեսանկյունից:

ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ

XX դարը մարդկության պատմության մեջ մտավ որպես

համընդհանուր առաջադիմության, գիտական մտքի աննախընթաց թռիչքի, մշակույթի մեծ վերելքի, ինֆորմատիկայի, համակարգիչների և ինտերնետային համակարգի ներդրման և կիրառման դարաշրջան: Նա միաժամանակ սոցիալական և քաղաքական մեծ ցնցումների, համաշխարհային երկու «տաք» (1914-1918թթ. և 1939-1945թթ). և մեկ «սառը» (1946-1991թթ.) պատերազմների, մարդկության պատմության մեջ առաջին անգամ միջուկային զենքի կիրառման (1945թ., ԱՄՆ) դարաշրջան է:

XX դարը պատմության մեջ մտավ նաև որպես ցեղասպանության դարաշրջան:

Առաջին ցեղասպանությունը հայերի ցեղասպանությունն էր, որն իրագործվեց Օսմանյան կայսրությունում, և որի սկիզբը դրվեց 1915թ. ապրիլի 24-ին, երբ Կոստանդնուպոլսում ձերբակալվեցին և Անատոլիայի խորքերն աքսորվեցին հայ գիտնականներ, գրողներ, լրագրողներ, հոգևորականներ, բժիշկներ, Թուրքիայի խորհրդարանի հայ պատգամավորներ, որոնք այնուհետև սպանվեցին [88]: 1915թ. մայիս-հունիս ամիսներին սկսվեցին Արևմտյան Հայաստանի՝ Վանի, Էրզրումի, Բիթլիսի, Խարբերդի, Սեբաստիայի, Դիարբեքիրի վիլայեթների (նահանգների), Կիլիկիայի, Արևմտյան Անատոլիայի և այլ վայրերի հայ բնակչության զանգվածային տեղահանությունն ու կոտորածը Թուրքիայում: ԱՄՆ-ի դեսպան Մորգենթաուն նշում էր. «Տեղահանության իսկական նպատակը կողոպուտն ու ոչնչացումն էր: **Դա իրոք կոտորածի նոր մեթոդ է: Երբ թուրքական իշխանությունները հրամաններ էին տալիս այդ արտաքսումների վերաբերյալ, նրանք փաստորեն մահվան դատավճիռ էին արձակում մի ամբողջ ազգի նկատմամբ, նրանք դա հիանալիորեն հասկանում էին և ինձ հետ զրուցելիս առանձնապես չէին փորձում թաքցնել այդ փաստը»**[89]:

Այդ բոլորի համար պատասխանատու էին երիտթուրքա-

---

[88] Հայկական Հարց: Հանրագիտարան, Երևան , 1996, էջ 305 :

[89] Նույն տեղում, էջ 305, 306:

կան կուսակցության պարագլուխները՝ վարչապետ, ներքին գործերի նախարար Թալեաթը, ռազմական նախարար Էնվերը, ռազմածովային նախարար Ջեմալը, Հատուկ կազմակերպության ղեկավար Շաքիր Բեհաէդդինը, նախկին վարչապետ Սայիդ Հալիմը, դոկտոր Նազիմը և ուրիշներ:

Մարդկության պատմության մեջ դեռևս չէր եղել այնպես, որ մեկ հարյուրամյակի ընթացքում բազմաթիվ ժողովուրդներ ենթարկվեին ֆիզիկական բնաջնջման կամ գտնվեին դրա վտանգի տակ, ինչպես XX դարում: Սակայն հարցը միայն դա չէ:

Պատմությունը վկայում է պատերազմների, կոտորածների կամ ջարդերի անհամար դեպքեր: Խոսքը տվյալ դեպքում այն մասին է, որ ազգերին ոչնչացնելու, այսինքն՝ ցեղասպանության քաղաքականությունը բարձրացվել է պետական քաղաքականության մակարդակի, այն նախօրոք և «խնամքով» ծրագրվում և նախապատրաստվում է, նրա «հիմնավորման» և «արդարացման» համար առաջ են քաշվում զանազան «տեսադրույթներ», իսկ իրագործման համար ստեղծվում են համապատասխան մեխանիզմներ:

Մինչև 1944թ. գիտությանը հայտնի չէր **«գենոցիդ»** եզրը, որի հայկական համարժեքը **«ցեղասպանությունն»** է: Մարդկությունը մինչ այդ օգտագործում էր գլխավորապես «ջարդեր» և «կոտորածներ» եզրերը: «Գենոցիդ» եզրը հայտնագործել և առաջին անգամ գիտական գրականության և քաղաքական բառարանում շրջանառության մեջ է դրել մասնագիտությամբ իրավաբան, լեհական ծագումով հրեա Ռաֆայել Լեմկինը 1944թ.: Այն արտակարգ հեշտությամբ ուղի հարթեց և առանց դժվարության ճանաչում գտավ գիտական աշխարհում, քաղաքականության բնագավառում և, որը շատ կարևոր է, միջազգային ամենահեղինակավոր կազմակերպության՝ Միավորված ազգերի կազմակերպության՝ ՄԱԿ-ի կողմից: ՄԱԿ-ը 1948թ. դեկտեմբերի 9-ին, այսինքն՝ աշխարհում առաջին ցեղասպանության՝ Արմենոցիդից ուղիղ 33 տարի անց, ընդունեց «Ցեղասպանության հանցագոր-

ծությունը կանխելու և պատժելու մասին» պատմական նշանակություն ունեցող բանաձևը:

Գենոցիդ եզրի հայտնագործումը լոկ առաջին քայլն էր: Երկրորդ քայլը հանդիսացավ նրա բովանդակային սահմանումն այնպիսի ձևով, որ ընդունելի լիներ բոլոր ժողովուրդների, քաղաքական ուժերի և պետությունների կողմից: Բարեբախտաբար դա լուծվեց դրականորեն:

Ցեղասպանությունը սահմանվեց որպես մի քաղաքականություն, որի նպատակն է բնակչության առանձին խմբերի ոչնչացումն ըստ ռասայական, ազգային-էթնիկական և կրոնական մոտիվների, ինչպես ուղղակի սպանության-ոչնչացման միջոցով, այնպես էլ այդպիսի խմբերի անդամներին մարմնական լուրջ վնասվածքներ հասցնելու և մտավոր խանգարումներ պատճառելու ճանապարհով: Այդ հասկացության մեջ մտնում է նաև կանխամտածված կյանքի այնպիսի պայմանների ստեղծում, որոնք նպատակաուղղված են այդ խմբերի լրիվ կամ մասնակի ոչնչացմանը, այնպիսի միջոցների կիրառում, որոնք հետապնդում են այդ միջավայրում ծննդաբերության կանխումը, երեխաներին բռնի կերպով մարդկանց մի խմբից մեկ այլ խմբի հանձնելը և այլն:

Ընդհանուր գծերով այդպիսին է Միավորված կազմակերպության կողմից ցեղասպանության ժամանակակից հասկացության սահմանումը:

Գենոցիդ եզրը գիտության մեջ դրեց գիտական մի նոր ուղղության՝ գենոցիդոլոգիայի - ցեղասպանագիտության առաջացման և զարգացման հիմքերը:

Մի քանի տասնամյակներ առաջ մենք դեռևս չէինք կարող խոսել ցեղասպանագիտության՝ որպես գիտական նոր ուղղության մասին, քանի դեռ Հայոց ցեղասպանությունը մնում էր XX դարի առաջին և միակ ցեղասպանությունը: Սակայն հետագայում, երբ համանման հանցագործություններ կատարվեցին նաև հրեաների, գնչուների, սլավոնների, Եվրոպայի, Ասիայի, Աֆրի-

կայի և Լատինական Ամերիկայի տարբեր ժողովուրդների նկատմամբ, ապա պարզ դարձավ, որ մի ժողովրդի կառավարողների կողմից մեկ այլ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման կազմակերպումը դարձել է մեր դարաշրջանի էթնոքաղաքական կյանքի ամենացավալի իրողություններից մեկը:

Ամերիկյան հայտնի ցեղասպանագետ Բարբարա Հարֆի հաշվարկներով Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո աշխարհում իրագործվել է մոտ 50 ցեղասպանություն, որոնք տեղի են ունեցել Կամբոջայում, Սուդանում, Արևելյան Թիմորում, Ռուանդայում, Բուրունդիում, Ուգանդայում, Հասարակածային Գվինեայում, Բալկաններում և այլ երկրներում[90]: Եվ եթե դրան ավելացնենք նաև հայերի, հրեաների, գնչուների և մի շարք այլ ժողովուրդների ցեղասպանությունը, ապա պատկերն ավելի սահմռկեցուցիչ է դառնում:

Երուսաղեմի հրեական համալսարանի պրոֆեսոր Ֆրանկլին Լիթթելի կարծիքով «Հայոց ցեղասպանությունը նոր դարաշրջանի սկիզբ է»[91]: Շարունակելով իր վերլուծական մոտեցումը՝ Ֆրանկլին Լիթթելն ընդգծում է. «Մենք կարող ենք խոսել այս XX դարի մասին, որը սկսվեց հայերի ցեղասպանությամբ, որպես ցեղասպանության դարաշրջան[92]: Իսկ ամերիկյան քաղաքագետ Մայքլ Բենկսը հատուկ նշում է, որ «Հայոց ցեղասպանությունը քսաներորդ դարի առաջին խոշոր գենոցիդն է»[93]: Հետաքրքիր է Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Համաշխարհային տնտեսության և միջազգային հարաբերությունների ինստիտուտի դոկտոր, պրոֆեսոր Վիկտոր Նադեին-Ռաևսկու տեսակետը: Ահա թե ինչ է գրում նա. «XX դարը վկան է մի քանի իրադարձությունների, որոնք որակվում են ցեղասպանություն: Նման տիպի առաջին և ամենամեծ ոճիրը հայերի և մյուս, գլխավորա-

---

[90] **Barbara Harff,** Rescuing Endangered Peoples: Missed Opportunities, Social Research. An International Quarterly of the Social Siences , New York, Spring 1995, p. 24,28.

[91] Franklin Littell, Problems of Genocide, p.29.

[92] Նույն տեղում:

[93] Michael Banks, Four Conceptionns of Peace, p.267.

պես քրիստոնյա, ազգային փոքրամասնությունների կոտորածներն էին Օսմանյան կայսրությունում»[94]:

Համանման կարծիքի էին նաև անգլիացի պատմաբան Քրիստոֆեր Վոկերը, ֆրանսիացի մասնագետ Իվ Տերնոնը և շատ ուրիշներ: Քրիստոֆեր Վոկերը եղել է Հայաստանում, այցելել Հայաստանի Հանրապետության Գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտ, զրուցել ինստիտուտի աշխատակիցների հետ, որոնք ուսումնասիրում էին Հայոց ցեղասպանության հետ կապված հարցերը: Ես, լինելով Արևելագիտության ինստիտուտի ղեկավարներից և ցեղասպանագիտության ուսումնասիրության համակարգողներից մեկը, նրա հետ մի քանի անգամ հանդիպել և երկար զրուցել եմ ինչպես Երևանում, այնպես էլ Լոնդոնում և օգնել նրան հայոց գիտական գրականության մեջ ցեղասպանության քննարկումների ժամանակ, նրան նվիրել իմ մի քանի աշխատությունները: Նա խստիվ դատապարտում էր Թուրքիայի կառավարությանը, որը ժխտում է Հայոց ցեղասպանության իրողությունը և հրաժարվում ճանաչել այդ անհերքելի փաստը:

2. ՌԱՖԱՅԵԼ ԼԵՄԿԻՆԸ, «ԳԵՆՈՑԻԴ» ԵԶՐԻ ԳՅՈՒՏԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱԽԱՆՅՈՒԹԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆՐԱ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

«Գենոցիդ» եզրը գիտական գրականության մեջ և քաղաքագիտական բառապաշարում առաջին անգամ հայտնվեց 1944 թ., որի հեղինակային իրավունքը պատկանում է լեհ իրավաբան, ծագումով հրեա Ռաֆայել Լեմկինին (Raphael Lemkin), (1900-1959թթ.): Ռաֆայել Լեմկինը, որին փոքր հասակում կոչում էին Ռաֆալ, ծնվել է 1900թ. հունիսի 24-ին ցարական Ռուսաստանի կազմի մեջ մտնող լեհական Բեզվոդնե գյուղում, որն այժմ Բելառուսի մասն է կազմում: Նրա վրա շատ մեծ ազդեցություն է

[94] Viktor Nadein-Raevski, Problems of Genocide, p. 201-202.

ունեցել մայրը և մեծապես նպաստել է նրա կրթությանը և դաստիարակությանը, մանավանդ օտար լեզուների տիրապետելու հարցում: Բավական է նշել, որ նա 14 տարեկան հասակում արդեն ազատորեն տիրապետում էր տասը օտար լեզուների՝ ֆրանսերենի, իսպաներենի, ռուսերենի, գերմաներենի, լեհերենի, եբրայերենի և այլն: Նա սովորել է Լվովի Յան Կազիմիրի, ապա Գերմանիայի Հայդելբերգի համալսարաններում և հիմնովին ուսումնասիրել իրավաբանությանը վերաբերող առարկաները: Նրա ընտանիքն անմասն չի մնում Հոլոքոստից և կորցնում է իր 49 հարազատներին: Նրան հաջողվում է 1941թ. ԱՄՆ մտնելու իրավունք ստանալ, որտեղ և հաստատվում է ընդմիշտ: Այստեղ նա չի դադարեցնում իր գիտահետազոտական աշխատանքները հատկապես ոճրագործության և նրա դրսևորման ուսումնասիրության բնագավառում:

1944թ. Ռաֆայել Լեմկինը Վաշինգտոնում հրատարակում է իր ամենագլխավոր աշխատությունը՝«Առանցքի երկրները (այսինքն՝ Գերմանիան և նրա դաշնակիցները-Ն.Հ.) կառավարում են օկուպացված Եվրոպան. Օկուպացիոն օրենքները, Կառավարման վերլուծությունը, Առաջարկություններ հատուցման վերաբերյալ»: ԱՄՆ-ի Միչիգանի համալսարանի դոկտոր Ջեյմս Մարտինն այդ աշխատության մասին գրել է. «Ռաֆայել Լեմկինը, որը մենակ ինքը, որ համարյա ամբողջովին անհայտ էր ԱՄՆ-ում, դարձավ XX դարի քաղաքական մտքի պատմության ամենաճակատագրական գրքի հեղինակը»[95]: Դա առաջին աշխատությունն էր, որտեղ Ռաֆայել Լեմկինն առաջին անգամ գրավոր օգտագործում է «գենոցիդ» եզրը:

Որտեղի՞ց է ծագում «գենոցիդ» եզրը, ի՞նչ բառերի համակցություն է դա և ի՞նչ է նշանակում: Այդ հարցերի պատասխանը կօգնի նաև ճիշտ որոշելու Ռաֆայել Լեմկինի դերը համաշխարհային պատմագրության մեջ՝ ի մասնավորի ցեղասպանությունը մարդկության դեմ հանցանք ճանաչելու հարցում և

[95] **Lemkin Raphael** , Axis Rule in Occupied Europe, Washington , 1944, p. 79-95.

ցեղասպանագիտությունը ձևավորելու գործում:

«Գենոցիդ» եզրը առաջացել է երկու բառերի միացությունից, և ստացվել է մի նոր բառ՝ իր նոր իմաստավորումով: Նրա առաջին մասը՝ «Genos»- «Գենոս», հունական ծագում ունի և նշանակում է ցեղ, ընտանիք, տոհմ, ռասա: Երկրորդ մասը սերում է լատինական «cide» բառից և նշանակում է սպանել, ոչնչացնել: Այդ երկուսի միացությունից հունալատինական լեզվամտածողության ֆակտուրայի հիման վրա ստեղծվել է genocide»՝ «գենոցիդ» եզրը, որի հայկական համարժեքը «ցեղասպանությունն» է:Այդ եզրի հայերեն թարգմանությունը թե՛ լեզվական և թե՛իմաստային առումով, մեր կարծիքով, անզուգական է և իր հավասարը չունի: Նշված եզրը Լեմկինն արդեն հայտնագործել էր 1943թ., սակայն գրավոր առաջին անգամ շրջանառության մեջ դրվեց 1944թ. լույս տեսած նրա «Առանցքը կառավարում է օկուպացված Եվրոպան» աշխատության մեջ, որի մասին նշվեց վերևում: Այդ դարակազմիկ աշխատության IX գլուխը հենց այդպես էլ վերնագրված է՝ «Գենոցիդ՝ նոր եզր և ազգերի ոչնչացման նոր հիմնադրույթ»[96]:

Այժմ կանգ առնենք այն հարցի լուսաբանության վրա, թե Ռաֆայել Լեմկինի «գենոցիդ» դարակազմիկ հայտնագործության համար ի՞նչն է նախադրյալ, հիմք հանդիսացել:

Ռաֆայել Լեմկինի մոտ որպես նախադրյալ հիմք են Հայոց ցեղասպանության ընձեռած նյութը և հարցերը: Հենց Հայոց ցեղասպանության ուսումնասիրությունից է Ռաֆայել Լեմկինի մոտ հղացել այն գաղափարը, որ Օսմանյան կայսրությունում 1915թ. իրագործված հայերի զանգվածային կոտորածները և բռնի տեղահանումը սովորական երևույթներ չէին, առօրյա ջարդեր կամ կոտորածներ չէին, այլ մի նոր հրեշավոր ոճրագործություն, որն արդեն չէր տեղավորվում հին, մինչ այդ տիրապետող պատկերացումների շրջանակներում, այլ որակապես մի նոր երևույթ, որը պահանջում էր սկզբունքային նոր մոտեցում և գնահատականներ: Այդ հարցում պարզություն մտցնելու տեսանկյու-

[96] «The Journal of Historical Review», Spring, Washingto n,1981, vol. 2 , No1, p. 1934.

նից առանցքային նշանակություն ուներ ԱՄՆ-ի ցեղասպանության ինստիտուտի գործադիր տնօրեն, ցեղասպանագիտության բնագավառում համաշխարհային հռչակ վայելող, ազգությամբ հրեա Էլեն Ֆայնի հիմնավոր տեսակետն առ այն, որ թեև Լեմկինը գենոցիդ հասկացությունը մտցրել էր 1944 թվականին, սակայն նա դեռևս «1933թ. առաջարկել է Ազգերի լիգային արգելել նման գործողությունները, ներառյալ այն, ինչ հայտնի է որպես «Հայկական կոտորածներ», որպես բարբարոսական ոճրագործություն»[97]:

Ուշագրավ է մի կարևոր հանգամանք ևս: Լեմկինը դա առաջարկել է դեռևս 1933թ., երբ դեռ չէր իրագործվել հրեաների ցեղասպանությունը՝ Հոլոքոստը, ուստի և այդ ժամանակ միակ և առաջին բարբարոսական գործողությունը կամ ժամանակակից տերմինաբանությամբ ասած ցեղասպանությունը հայերի՝ 1915թ. ցեղասպանությունն էր: Ուստի սխալված չենք լինի, եթե ասենք, որ լեհ հրեա իրավաբանի համար գենոցիդ հասկացության և եզրի ծագման համար նախանյութ, խթան և հիմք է ծառայել Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հայերի նկատմամբ երիտթուրքերի կատարած ոճրագործությունը[98]:

Հետագայում այդ հարցի վերաբերյալ հայտնվեցին նոր նյութեր և հրատարակություններ, որոնք ոչ միայն հաստատեցին Էլեն Ֆայնի տեսակետը, այլև եկան ցույց տալու, որ Ռաֆայել Լեմկինը լրջորեն հետաքրքրվել է Հայոց Մեծ եղեռնի պատմությամբ և նրա հարցերով ոչ թե 1933թ., այլ ավելի վաղ՝ դեռևս 1920-ական թվականներին: Այդ կապակցությամբ «Վիկիպեդիա» հանրագիտարանում կարդում ենք. «Նախքան Երկրորդ համաշխարհային պատերազմը Լեմկինը խորությամբ ուսումնասիրել է Հայոց ցեղասպանությունը և արշավ ծավալել Ազգերի լիգայում

---

[97] **Նիկոլայ Հովհաննիսյան**, Հայոց ցեղասպանությունը Ցեղասպանագիտության հայեցակարգային համակարգում, Երևան, 2002, էջ 11, 12:

[98] **Raphael Lemkin,** Wikipedia, the free encyclopedia, http;//en.wikipedia.org/wiki/ Raphael_Lemkin

արգելելու այն, ինչ նա անվանում էր «բարբարոսություն» և «վանդալիզմ»[99]: Լեմկինը 1920-ական թվականներին «լրջորեն հետաքրքրվում է հանցագործության տեսադրույթով, ինչը հետագայում նրան հանգեցրեց գենոցիդի գաղափարին, որը հիմնված էր օսմանյան թուրքերի ձեռքերով իրագործված հայերի տանջանքների վրա»[100]:

Այսպիսով, բերված նյութերը համոզիչ վկայում են այն մասին, որ Ռաֆայել Լեմկինը գիտնականին վայել լրջությամբ, խորությամբ և անաչառությամբ է մոտեցել Հայոց ցեղասպանության հարցի ուսումնասիրությանը: Հայոց ցեղասպանության մեջ նա փնտրել և գտել է բոլոր բաղադրատարրերը, որոնք հետագայում նա ներառել է ցեղասպանության վերաբերյալ իր տեսության մեջ: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ մինչև 1939թ. Հայոց ցեղասպանությունը, լինելով XX դարի առաջին ցեղասպանությունը, եղել է Ռաֆայել Լեմկինի գենոցիդի հայեցակարգային հիմնադրույթների գլխավոր մատակարարը: 1939թ. սկսվում է հրեաների գենոցիդը նացիստական Գերմանիայում, որն ավելի շատ հայտնի է «Հոլոքոստ» հորջորջումով: Լեմկինի պահպանված թղթերում շատ հստակ են սահմանված Հոլոքոստի ժամանակագրական շրջանակները՝ 1939-1945 թվականները:

Հայոց ցեղասպանությունը կամ Արմենոցիդը և հրեական ցեղասպանությունը կամ Հոլոքոստը ոչ թե մրցակիցներ են, այլ դաշնակիցներ: Անհեթեթություն է վիճել, թե ում ցեղասպանությունն է ավելի «լավը», կատարյալը և դասականը: Չմոռանանք, որ երկուսն էլ պետականորեն կազմակերպված հանցագործության արդյունք են: Առաջինը՝ իր դարն ապրած Օսմանյան ռազմաֆեոդալական բարբարոսական կայսրության, իսկ երկրորդը՝ հիտլերյան-նացիստական «քաղաքակիրթ» Գերմանիայի ոճրագործ հանցագործության:

---

[99] Նույն տեղում:
[100] «Europa World», 22. 06. 2001.

3.ԱՐՄԵՆՈՑԻԴԸ՝ «ՀԱՅԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ» ԱՄԵՆԱԳԵՆՈՑԻԴԱՅԻՆ ԳԵՆՈՑԻԴ

1960-ական թվականներից պատմագիտական գրականության մեջ «Հայոց ցեղասպանություն» դեֆինիցիային զուգահեռ սկսվեց կիրառվել «Արմենոցիդ» եզրը, որի համար պարտական ենք լիբանանցի հայտնի պատմաբան Մուսա Պրենսին: Դժվար չէ կռահել, որ այն ստեղծվել է Ռաֆայել Լեմկինի հեղինակած «գենոցիդ» տերմինի անալոգիայով, իսկ վերջինս իր հերթին «գենոցիդ» եզրը ստեղծելիս հենվել էր իրենից առաջ կիրառության մեջ գտնվող «Հոմոցիդ», «Ֆրատրիցիդ» և համանման այլ եզրերի նախափորձի վրա: Մուսա Պրենսն առաջինն էր, որ «Արմենոցիդ» եզրն օգտագործեց ոչ թե հայերի «ջարդեր, կոտորածներ, հալածանքներ», այլ «Հայասպանություն» իմաստով: Դրանով իսկ այդ եզրը դադարում էր առանձին հայերի ոչնչացման կամ սպանության դեպքի կամ դեպքերի իմաստ արտահայտելուց և ձեռք բերում ամբողջ ժողովրդի, տվյալ դեպքում հայ ժողովրդի ֆիզիկական լիկվիդացման իմաստ: Այդ պատճառով էլ «Արմենոցիդը» պետք է թարգմանել և օգտագործել «Հայասպանություն» իմաստով՝ որպես ցեղասպանության համարժեք տարբերակ: «Արմենոցիդի» օգտագործումը «Հայասպանություն» իմաստով գիտականորեն անխոցելի է:

Մուսա Պրենսը երկար տարիներ մեծ նվիրումով և հետևողականությամբ ուսումնասիրել է հայ ժողովրդի պատմության այդ ամենամռայլ էջերը: Նա այդ խնդրին անդրադարձել է իր մի քանի աշխատություններում, այդ թվում՝ ֆրանսերեն հրատարակված իր երկու մենագրություններում[101] և արաբերենով լույս

[101] **Moussa Prince** avec la collaboration de Marie- Ange m. Prince . Un genocide impuni. L'Armenocide.Introduction . Edition speciale numerotee (1 a 3000) al"occasion dulleme Congre International dePrpophy laxie Criminalle . Paris(10-14)Juillet 1967), Heidelberg Press-Lebanon, 103 p: Un Genocide impuni: L'Armenocide, 1975, 582p.

ընծայված մեկ մենագրության մեջ[102]:

«Արմենոցիդը ամենագենոցիդային գենոցիդն է» սահման-ման հեղինակային իրավունքը նույնպես պատկանում է Մուսա Պրենսին: Նա, չբավարարվելով լոկ «արմենոցիդ» եզրի ստեղծ-մամբ, միաժամանակ բացել է նրա բովանդակային փակագծերը, որը տվել է աննախադեպ, իր նմանը չունեցող արդյունքներ: Դա պարտադրել է հեղինակին նախ և առաջ արմենոցիդը համեմա-տել արմենոցիդից հետո տեղի ունեցած տարբեր ժողովուրդների գենոցիդների կամ գենոցիդի փորձերի հետ և արդյունքում ստա-ցել միանգամայն արմատական բնույթի հիմնարար արդյունք, այն է՝ արմենոցիդը XX դարի մարդկության պատմության մեջ կատարված բոլոր գենոցիդների հետ համեմատած ամենամեծ, ամենաածանր, ամենանողկալի, այսինքն՝ «ամենագենոցիդային գենոցիդն է»[103]:

Մուսա Պրենսը գտնում է, որ ցեղասպանությունը սովորա-բար ունենում է էթնիկական, աշխարհագրական, պատմական, տնտեսական և քաղաքական պատճառներ[104]: Անշուշտ, դա այս-պես է: Սակայն նա առաջիններից մեկն է, որ ուշադրություն է հրավիրում հոգեբանական և պաթոլոգիական գործոնների վրա, որոնք, ըստ նրա, առկա էին հայ-թուրքական փոխհարաբերու-թյուններում և ունեցան իրենց բացասական դերակատարումը Հայոց ցեղասպանության գործում: Այն սադիզմը, որ դրսևորվում էր Հայոց ցեղասպանության ժամանակ թուրքերի կողմից ընդդեմ հայերի, Մուսա Պրենսը բացատրում է թուրքերի մեջ հայերի դեմ ունեցած պաթոլոգիական հոգեբանությամբ: Այդ հարցի լուսա-բանությունը մեծապես օգնում է ճիշտ ըմբռնելու և բացատրելու թուրքիզմի հայասպան քաղաքականությունը:

---

[102] **Մուսա Պրենս**, Մաջազար ալ-Արման. Ջարաիմ դիդ ալ- Ինսանիյա -Հայերի ցեղասպանությունը: Հանցագործություն ընդդեմ մարդկության , Հալեբ, 1996, 157 էջ, **արաբերեն**:

[103] Նույն տեղում, էջ 18, 19:

[104] Նույն տեղում:

XXX

Ցեղասպանագիտության շնորհիվ ավելի ընդլայնվեցին ցեղասպանություն հասկացության սահմանները, և ավելի մանրամասնվեցին ու որոշակիացվեցին նրա հիմնադրույթները:

Հայոց ցեղասպանության խորքային լուսաբանության, թուրքերի վանդալիզմի ու բարբարոսական քաղաքականության հաջողությունների պատճառները բացահայտելու տեսանկյունից անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ երկու կարևոր հանգուցային հարցերի, որոնք սկզբունքային նորամուծություններ են:

Առաջին՝ հայ պոտենցիալ զինական ուժի ֆիզիկական ոչնչացումը: Օսմանյան կայսրության երիտթուրքական կառավարությունը, նրա ղեկավարությունը մեծագույն լրջությամբ էին վերաբերվել Հայոց ցեղասպանության նախապատրաստմանը և իրագործմանը: Շատ հստակ էին սահմանված կարևոր ռազմական և քաղաքական քայլերի հերթականությունը, նրա տակտիկան: Այդ տակտիկայում առաջնահերթությունը տրված էր հայ արական սեռի, զենք կրելու ընդունակ հայ տղամարդկանց ոչնչացմանը, որն իրականացվեց մի կողմից՝ խաբեբայությամբ, իսկ մյուս կողմից՝ սադիզմի բոլոր նրբություններով: Այդ արարքը համարձակորեն կարելի է ասել, որ իր նախադեպը չունեցող ոճրագործություն էր:

1914թ. հուլիսին Էրզրումում գումարվեց Հայ հեղափոխական դաշնակցության 8-րդ համագումարը: Համաշխարհային պատերազմը դեռ չէր սկսվել, բայց մարդկությունը գտնվում էր նրա շեմին, նրա շունչն արդեն զգացվում էր, և արդեն հայտնի էր երկու հակառակ բլոկների կազմը: Առաջին բլոկը Անտանտն էր, որի գլխավոր անդամներն էին Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Ռուսաստանը, իսկ երկրորդ բլոկը կազմված էր Գերմանիայից, Ավստրո-Հունգարիայից և Օսմանյան կայսրությունից: Մենք այստեղ նշում ենք գլխավոր անդամներին: Համագումարում պա-

տերազմի և դրա հետ կապված հայերի դիրքորոշման խնդիրը դարձավ նրա քննարկման կենտրոնական հարցը:

Այդ համագումարին և նրանում ընդունվելիք որոշումներին մեծ կարևորություն է տվել երիտթուրքերի ղեկավարությունը, որի վկայությունն է այն պարագան, որ նրա աշխատանքներին մասնակցել են երիտթուրքական կուսակցության՝ «Իթթիհադ վե Թերակկիի» ղեկավար ներկայացուցիչներ Շաքիր Բեհաէդդինը և Նաջի բեյը: Շաքիր Բեհաէդդինն այդ կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ էր, նրա լիդերներից մեկը և «Հատուկ կազմակերպության» ղեկավարը, կազմակերպություն, որը կազմված էր մարդասպաններից, բանտերից հատուկ հայերին կոտորելու համար ազատ արձակված քրեական հանցագործներից, արկածախնդիրներից և թուրքական հասարակության այլ տականքներից: Այդ կազմակերպությունը հայերի զանգվածային կոտորածների ամենաակտիվ իրագործողներից էր: Նրանք հանձնարարություն ունեին կուսակցության ղեկավարությունից հայերին պարտադրել մի որոշում, որը պետք է ծառայեր բացառապես Օսմանյան կայսրության շահերին և արմատապես հակասում էր հայերի ազգային շահերին:

Ահա թե ինչպես է նկարագրում Էրզրումի համագումարի ընթացքը, թուրքերի պահանջները և համագումարի որոշումները այդ հարցը հիմնավորապես ուսումնասիրած սիրիացի պատմաբան, պրոֆեսոր Մրվան ալ-Մուդավարը: Նա իր աշխատության մեջ գրում է, որ երբ երիտթուրքերի ղեկավարությունն իմացավ Հայ հեղափոխական դաշնակցության համագումարի մասին, ապա որոշեց համագումար ուղարկել իր ներկայացուցիչներ Շաքիր Բեհաէդդինին և Նաջի բեյին՝ նրանց հանձնարարելով հանդես գալ համագումարում և հայերին երիտթուրքական կուսակցության անունից ներկայացնել իրենց պահանջները: Նրանք այդպես էլ վարվեցին և պահանջեցին, որ Դաշնակցության կուսակցական համագումարը հայտարարի բոլոր հայերի՝ ինչպես թուրքահայերի, այնպես էլ ռուսահայերի հավատարմությունը

Թուրքիային պատերազմի դեպքում, կազմակերպի հայ ֆիդայիների ջոկատներ՝ ռուսների դեմ կռվելու համար և խռովություն բարձրացնի Կովկասում՝ ռուսական բանակների շարքերում[105]:

Հայերին գայթակղելու համար երիտթուրքերի ներկայացուցիչներն իրենց կուսակցության ղեկավարության անունից խոստանում են հայերին, որ «եթե նրանք նման դիրք գրավեն, ապա պատերազմի ավարտից հետո հայերին իրավունք կտրվի ստեղծելու իրենց անկախ պետությունը Թուրքիայի և Ռուսաստանի որոշ տարածքների վրա»[106]:

Ինչպիսի՞ որոշում ընդունվեց համագումարում, որը երիտթուրքական ղեկավարությունն ընկալեց որպես արևմտահայության պատասխան իրենց ներկայացրած պահանջներին:

Համագումարը գտավ, որ պատերազմի դեպքում Օսմանյան կայսրության և ցարական Ռուսաստանի հայերը կհայտնվեն տարբեր ճակատներում, քանի որ նրանք այդ երկու տարբեր պետությունների հպատակներն են և հավատարիմ են նրանց[107]: Դա նշանակում էր, որ այդ որոշումը կտրում էր ճանապարհը երիտթուրքերի առջև, և երիտթուրքերը զրկվում են արևմտահայերի օգնությամբ ռուսահայերին ընդդեմ Ռուսաստանի օգտագործելու հնարավորությունից:

Շատ հետաքրքիր է համագումարի որոշումների այն մասը, որը վերաբերում էր Օսմանյան կայսրության՝ պատերազմի մեջ մտնելու խնդրին: Հայ ղեկավարները համագումարում ներկա երիտթուրքական ներկայացուցիչների միջոցով հայտնում են օսմանյան ղեկավարությանը, որ «հօգուտ Թուրքիայի է ապագա պատերազմում պահպանել չեզոքություն»: Փաստորեն հայերը բաց տեքստով խորհուրդ են տալիս օսմանյան իշխանություններին չմտնել պատերազմի մեջ, որը չէր համապատասխանում

---

[105] **Մրվան ալ-Մուդավար**, Հայերը պատմության ընթացքում, Բեյրութ, 1982, էջ 407:

[106] Նույն տեղում:

[107] Նույն տեղում :

Օսմանյան կայսրության և նրա կազմի մեջ մտնող ժողովուրդների շահերին: Դա բավականին համարձակ առաջարկություն էր, որ հայերի կողմից արվում էր Օսմանյան կայսրության ղեկավարությանը՝ նկատի առնելով նրա հետապնդած նպատակները, այդ թվում և պանթուրքիզմի քաղաքականությունը, որի հաջողությունն ուղղակիորեն կապված էր Թուրքիայի հաղթական պատերազմի հետ:

Դրա հետ միասին Դաշնակցություն կուսակցության համագումարն ընդունում է վերին աստիճանի կարևոր մի որոշում, որը մեր կարծիքով տվյալ պարագայում առանցքային նշանակություն ուներ: «Բայց եթե,-ինչպես գրված է որոշման մեջ,- թուրքական կառավարությունը որոշի պատերազմի մեջ մտնել, ապա Թուրքիայի հայերը կկատարեն այն բոլոր պարտականությունները, որ կդրվեն նրանց վրա որպես Թուրքիայի հպատակներ՝ հայրենիքին բոլոր ասպարեզներում՝ և՛ բանակում, և՛ երկրի պաշտպանությանը, ծառայելու ուղիով, ինչպես կայսրության բոլոր քաղաքացիները»[108]:

Կրկնում ենք, սա շատ կարևոր որոշում էր, որտեղ հստակ ասված էր, որ հայերը Օսմանյան կայսրության հպատակներ էին և, որպես այդպիսիք, նրանք պատրաստ էին կատարել իրենց բոլոր պարտականությունները, այդ թվում և՛ ծառայել բանակում, և՛ երկիրը պաշտպանել:

Իսկ ինչ վերաբերում է երիտթուրքական ղեկավարության պահանջներին, որ հայտարարվի նաև ռուսահայերի հավատարմությունը Թուրքիային, և Ռուսաստանի դեմ Կովկասում ապըստամբություն բարձրացվի, ապա համագումարը մերժեց այդ պահանջը: Այդ հարցի վերաբերյալ համագումարի ընդունած որոշման մեջ ասված էր. «Համագումարը չի կարող խոսել Ռուսաստանի հայերի անունից, որոնք հանդիսանում են մեկ այլ պետության հպատակները»:

Հայերի՝ 1915թ. ցեղասպանությունն իրականացվեց նախա-

---

[108] Նույն տեղում:

պես մշակված ու հաստատված ծրագրի համաձայն: 1915թ. գումարված գաղտնի ժողովի որոշումները, որին մասնակցել է Օսմանյան կայսրության բարձրագույն ղեկավարությունը՝ վարչապետ Թալեաթը, ռազմական մինիստր Էնվեր փաշան, Շաքիր Բեհաէդդինը, Ահմադ Աղան և այլք, միաձայն ընդունվել է որոշում՝ «Ոչնչացնել հայերին Օսմանյան կայսրության մեջ»[109]: Այդ որոշման մասին Էնվերը տեղյակ է պահում Ստամբուլում Գերմանիայի դեսպան Վանգենհայմին: Վերջինս Բեռլին ուղարկած իր հեռագրում հաղորդում է իր կառավարությանը, որ «Էնվերը պահանջում է մեզանից արգելք չհանդիսանալ այդ միջոցառումներին»[110], այսինքն՝ հայերի ոչնչացմանը: Իսկ արաբ մեկ այլ հայտնի պատմաբան Նաիմ ալ-Յաֆին հավաստում է, որ «Հայերի ցեղասպանությունը իրագործվեց մտածված կերպով և հրահանգներով՝ համաձայն ընդունված ծրագրի»:

Այդ ծրագրի համաձայն՝ երիտթուրքերը կատարեցին հաջորդ տակտիկական քայլը, որն ունեցավ ստրատեգիական նշանակություն: Խոսքը մի այնպիսի առանցքային հարցի մասին է, ինչպես հայերին առանց զինական ուժի թողնելու երիտթուրքական տմարդի քաղաքականությունն է: Եվ երբ սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը, «1914 թվականին Թուրքիայում հայտարարվեց ընդհանուր զորահավաք, և բոլորը, 18-ից 45 տարեկան տղամարդիկ, առանց բացառության, բանակ զորակոչվեցին: Դրանց թվում էին նաև հայ տղամարդիկ, որոնք որպես Օսմանյան կայսրության հպատակներ մեկնեցին բանակ՝ իրենց պարտքը կատարելու: Այսպիսով, հայ տղամարդիկ, ինչպես այդ մասին վստահեցրել էին հայ ազգային գործիչները երիտթուրքական ղեկավարությանը, ծառայում էին թուրքական բանակում՝ հեռու իրենց գյուղերից ու քաղաքներից: Սկզբնական շրջանում

---

[109] **Ֆուադ Հասան Հաֆիզ**, Հայ ժողովրդի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Կահիրե, 1986, էջ 237, արաբերեն:

[110] **Ուսման ալ-Թուրք**, Էջեր հայ ազգի պատմությունից, Հալեբ, 1960, էջ 56, 57, արաբերեն:

նրանց օգտագործում էին շինարարական աշխատանքներում: Սակայն անցնելով ցեղասպանության իրագործմանը՝ օսմանյան կառավարության որոշումով նրանք զինաթափվեցին և ոչնչացվեցին: Սպանվեց մոտ 60 հազար հայ զինվոր[111]:

Արևմտահայությունը ռազմական առումով գլխատվեց: Հայկական զինական ուժի ոչնչացումից հետո արևմտահայությունը մնաց անպաշտպան:

Երկրորդ՝ «Պոլիտիցիդ» - «Քաղաքական սպանություն»:

Ոչ մի ցեղասպանություն չի կարող հաջողության հասնել առանց պոլիտիցիդի կամ քաղաքական սպանության կիրառման: Մինչ այդ ցեղասպանությունն ուսումնասիրվում էր բավականին ուղղագիծ, գլխավորապես «ջարդեր-բռնի տեղահանումներ» շրջանակներում: Մենք հեռու ենք թերագնահատելուց նման մոտեցման կարևորությունը և նրա խաղացած մեծ դերը: Դրա շնորհիվ ձեռք բերված արդյունքներն ավելի քան ակնհայտ են: Բայց վերոնշյալ նորամուծության շնորհիվ ցեղասպանության բնագավառում բացահայտվեցին նոր շերտեր, որի հետևանքով ավելի խորացան և կատարյալ դարձան մեր թե՛ գիտելիքները և թե՛ պատկերացումները մարդկության դեմ ուղղված ոճրագործության՝ ցեղասպանության մասին:

Ցեղասպանության շնորհիվ գենոցիդից անջատվեց պոլիտիցիդը և դարձավ ուսումնասիրության ինքնուրույն բնագավառ՝ որպես նրա մի բաղադրատարրը: Ըստ ցեղասպանագիտության, եթե ցեղասպանությունն իրականացվում է՝ ելակետ ունենալով ռասայական, էթնիկական և կրոնական որոշիչները, ապա պոլիտիցիդի պարագայում խմբերը նշանակետ՝ թիրախ են դառնում նախ և առաջ նրանց քաղաքական դիրքորոշման, տվյալ ժողովրդի կյանքում նրանց խաղացած քաղաքական առաջնային և ղեկավար դերի, ինչպես նաև տիրապետող ազգի վարչակարգի նկատմամբ նրանց գրված դիրքի պատճառով:

Եվ ցեղասպանության իրագործման ժամանակ, այսինքն՝

---

[111] **Ուսման ալ-Թուրք,** էջ 238; **Moussa Prince**, L'Armenocide, p. 32.

զանգվածային բնաջնջմանը զուգահեռ, իսկ շատ հաճախ նրանից առաջ, իրագործվում է պոլիտիցիդը. ոչնչացվում են տվյալ ժողովրդի ազգային-քաղաքական ղեկավարությունը, քաղաքական, ռազմական, կրոնական, հասարակական և մշակութային առաջնորդները, որոնք ընդունակ են կազմակերպելու դիմադրություն ցեղասպանության քաղաքականությանը, կանխելու կամ ձախողելու այն: Քաղաքական սպանության նպատակն է գլխատել ցեղասպանության ենթակա ազգին և կոտրել նրա դիմադրողական ոգին, որը գործողությունների ազատության լայն դաշտ է ստեղծում ցեղասպանությունը կիրառող պետությունների և կառավարությունների համար՝ կազմակերպելու և իրագործելու զանգվածային սպանդ:

Քաղաքական սպանության՝ պոլիտիցիդի դասական օրինակ է Հայոց ցեղասպանությունը՝ արմենոցիդը:

1915թ. ապրիլի 24-ին սկիզբ առավ հայոց պառլամենտական, քաղաքական, կրոնական, հասարակական և մշակութային գործիչների ընտրանու ոչնչացումը, որին հետևեց հայ ազգային կուսակցությունների ղեկավար գործիչների ֆիզիկական ոչնչացումը: Սպանվեցին թուրքական մեջլիսի հայ անդամներ, հայ գրականության դասական Գրիգոր Զոհրապը և Վռամյանը (Օնիկ Դերձակյանը), հայ պոեզիայի փայլուն աստղեր Դանիել Վարուժանը, Սիամանթոն, Ռուբեն Զարդարյանը, Ռուբեն Սևակը, Արտաշես Հարությունյանը, Թլկատինցին, Երուխանը, Տիգրան Չյոկյուրյանը, Սմբատ Բյուրատը և ուրիշներ, երևելի արվեստագետներ, հրապարակախոսներ ու խմբագիրներ Նազարեթ Տաղավարյանը, Տիրան Քելեկյանը, Գագիկ Օզանյանը և այլք: Ձերբակալվեցին 800 հայ ականավոր մտավորականներ, այդ թվում՝ Մեծն Կոմիտասը, որոնց մեծ մասը սպանվեց գաղթի ճանապարհին:

Դրան հետևեց հայ ազգային կուսակցությունների ղեկավար գործիչների ֆիզիկական ոչնչացումը: Կոստանդնուպոլսում կախաղան բարձրացվեցին Հնչակյան կուսակցության 20 գործիչներ Փարամազի (Մաթևոս Սարգսյանի) գլխավորությամբ, Զեյ-

թունում սպանվեց Նազարեթ Չաուշը, Վանում՝ Իշխանը և շատ ուրիշներ[112]:

Այսպիսով, պոլիտիցիդի՝ քաղաքական սպանության կիրառման հետևանքով հայությունը գլխատվեց և մնաց առանց քաղաքական ղեկավարության: Պոլիտիցիդի հիմնադրույթն օգնում է ավելի խորը հասկանալու ցեղասպանություն երևույթը, ցեղասպան ուժերի ստրատեգիան և տակտիկան, ինչպես նաև ցեղասպանության իրագործման մեխանիզմը: Այդ բոլորը շատ հստակ երևում է, երբ մենք Հայոց ցեղասպանությունը դիտարկում ենք պոլիտիցիդի պրիզմայով: Քաղաքական սպանության հիմնադրույթը կասկածի տեղ չի թողնում, որ այն, ինչ տեղի ունեցավ հայերի հետ 1915թ. Օսմանյան կայսրությունում, բացի ցեղասպանությունից, այլ անուն չունի:

Ժամանակն է, որ մենք հատուկ զբաղվենք ցեղասպանագիտության այդ կարևոր հիմնադրույթի ուսումնասիրությամբ: Նա կարող է նոր, դեռևս անհայտ շերտեր բացել Հայոց ցեղասպանության սև էջերում: Պոլիտիցիդի հիմնադրույթն աշխատում է Հայոց ցեղասպանագիտության միջազգային ճանաչման օգտին:

Այսպիսով, հայոց զինական ուժի և քաղաքական ղեկավարության սերուցքի ֆիզիկական ոչնչացման հետևանքով արևմտահայությունը գլխատվեց և մնաց անպաշտպան:

Նաև դրանով պետք է բացատրել երիտթուրքական դահիճների հաջողությունը իրենց մարդասպան քաղաքականության՝ Արմենոցիդի իրականացման գործում:

Հայերի մարդկային կորուստները կազմեցին ավելի քան մեկուկես միլիոն:

Աղետաբեր եղան տարածքային կորուստները: Սակայն դա, ըստ էության, ոչ թե **տարածքային** կորուստ էր, այլ հինավուրց **ՀԱՅՐԵՆԻՔԻ ԿՈՐՈՒՍՏ**: Հայերը կորցրին ամբողջ Արևմտյան Հայաստանը և Արևելյան Հայաստանի զգալի մասը: Եվ այսօր

---

[112] Հայկական հարց. Հանրագիտարան, Երևան , 1996, էջ 305:

Հայաստանի Երրորդ հանրապետությունը տնօրինում է պատմական Հայաստանի ընդամենը մեկ տասներորդը:

45.ԴԱՀԻՃ ԵՎ ԶՈՀ .
ՑԵՂԱՍՊԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՑԵՂԱՍՊԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԴՐՈՒՅԹԸ

Ցեղասպանագիտության երկրորդ նորամուծությունը, ինչպես նշվեց, զոհի կամ զոհի վերածվելու՝ վիկտիմիզացիայի հիմնադրույթն է:

Զոհ հասկացությունն անբաժան է ցեղասպանությունից: Սակայն այս տեսության բերած հիմնական նորությունն այն է, որ զոհը ցեղասպանության պահին չէ, որ դառնում է զոհ, և ոչ էլ դահիճն է դահիճ դառնում ցեղասպանության իրականացման ժամանակ: Իրականում դա մի բարդ գործընթաց է, որ սկսվում է շատ ավելի վաղ, քան բուն ցեղասպանությունը: Նա ունենում է նախապատրաստական մի ամբողջ շրջան, անգամ դարաշրջան: Այդ բանը շատ լավ է նկատել ամերիկացի հեղինակներից մեկը՝ Մայքլ Բենկսը, որն իր «Խաղաղության չորս տեսադրույթները» աշխատության մեջ, անդրադառնալով այս կամ այն ժողովրդին վիկտիմիզացիայի՝ զոհի վերածելու հարցին, որպես օրինակներ նշում է Հարավային Աֆրիկայի սևամորթներին, Մերձավոր Արևելքի քրդերին, լեհերին և հայերին[113]:

Որպես կանոն, հալածանքների, խտրականության և, ի վերջո, զոհաբերության նշանակետ դառնում են էթնիկական խմբերը: Կոնֆլիկտոլոգիայի կամ բախումնաբանության գծով ամերիկացի մասնագետ Ռոբերտ Գարրի հաշվարկներով 1945-1990թթ. Աշխարհում 233 էթնիկական խմբեր եղել են նման խտրականության առարկա, այսինքն՝ վիկտիմիզացիայի թեկնածու[114]: Իսկ Բար-

[113] Michael Banks, Four conceptions of Peace, p. 267.
[114] Ted Robert Gurr, Barbara Harff, Ethnic conflict in Wotld Politics, Westview Press, Boulder, San Fransisco, Oxford, p.5-6.

բարա Հարֆը, քննարկելով «ցեղասպանություն-զոհ» փոխկապակցվածության հարցը, գալիս է այն եզրակացության, որ «Ցեղասպանության ժամանակ զոհաբերության ենթակա խմբերը որոշվում են վարչակարգի կողմից առաջին հերթին ըստ նրանց համայնքային հատկանիշների, որպիսիք են էթնիկական պատկանելությունը, կրոնը կամ ազգությունը»[115]:

Նշենք, որ մենք պրոֆեսոր Թեդ Ռոբերտ Գարրի և նրա տիկնոջ պրոֆեսոր Բարբարա Հարֆի հետ 1993-1994թթ. միասին աշխատել ենք ԱՄՆ-ի Մերիլենդի համալսարանում և ուսումնասիրում էինք «Էթնոքաղաքական կոնֆլիկտները Անդրկովկասում: Նրանց ակունքները և լուծման ուղիները» թեման: Ես աշխատում էի «Լեռնային Ղարաբաղի կոնֆլիկտը և նրա լուծման տարբերակները» նախագծի վրա: Այդ կոլեկտիվ աշխատությունը հրատարակվեց ԱՄՆ-ում 1997թ.:

Զոհի վերաբերյալ ցեղասպանագիտության տեսադրույթը Հայոց ցեղասպանության նկատմամբ կիրառելու դեպքում ակնհայտ է դառնում, որ Օսմանյան Թուրքիայի ղեկավարությունը կայսրության տարածքում գտնվող հայությանը որպես զոհ ընտրել էր առնվազն XIX դարի 70-ական թվականների վերջերին, երբ կյանքի կոչվեց «Հայկական հարցի լուծման լավագույն ձևը հայերի ֆիզիկական ոչնչացումն է» բանաձևը, որը որդեգրվել էր սուլթան Աբդուլ Համիդ II -ի կողմից: Դրա զարգացման հաջորդ փուլը երիտթուրքերի կողմից առաջ քաշված «մաքուր թուրքական ազգի» ստեղծման ռասայական տեսակետն էր: Իսկ դա նախատեսում էր Օսմանյան կայսրության ոչ թուրք ժողովուրդների բռնի ուծացում կամ ֆիզիկական ոչնչացում:

Կարծում ենք, անհրաժեշտ է նաև այս շրջանակներում դիտարկել Հայոց ցեղասպանության հարցերը: Այս կապակցությամբ կարևոր ենք համարում ուշադրություն դարձնել երկու կարևոր հանգամանքի վրա:

Առաջին, ըստ ցեղասպանագիտության՝ վիկտիմիզացիայի

[115] Barbara Harff, Rescuing Endangered Peoples:Missed Opportunities, p24.

վերաբերյալ հիմնադրույթի, եթե կա զոհ, ապա անհրաժեշտաբար պիտի լինի նաև դահիճ, անկախ այն բանից, կատարվածը ջա՞րդ է, կոտորա՞ծ, թե՞ ցեղասպանություն: Հայոց ցեղասպանության դեպքում երկուսի հասցեն էլ շատ հստակ է: Զոհը հայությունը եղավ, իսկ դահիճը՝ Օսմանյան կայսրության սուլթանական-երիտթուրքական վարչակարգը, նրա ղեկավարությունը: Անկախ նրա գործադրած բոլոր ճիգերից, «փաստարկներից» և «բացատրություններից», նա մնում է դահիճ:

Երիտթուրքերի դահճի կարգավիճակն այլընտրանք չունի:

Երկրորդ, քանի որ ցեղասպանագիտությունն ընդունում է, որ զոհի ընտրությունը և նրան զոհաբերության ենթարկելը պատմական որոշակի պրոցես է, իսկ դա իրոք այդպես է, ապա դրանից տրամաբանորեն հետևում է, որ այստեղ հանկարծակիության կամ անսպասելիության պահը գոյություն չունի: Հետևաբար՝ զոհն իր զոհի վերածվելը չի կարող արդարացնել դրանով: Անպատրաստվածությունը և համազգային մասշտաբով դիմակայելու անկարողությունը որևէ արդարացում չեն կարող ունենալ, որովհետև դրա գինը տվյալ ժողովրդի կամ էթնոսի ոչնչացումն է:

Ասվածը հավասարապես վերաբերում է ցեղասպանության ենթարկված հայությանը, նրա ազգային, քաղաքական, կուսակցական և կրոնական գործիչներին:

Վիկտիմիզացիան ցեղասպանության մեդալի մյուս երեսն է:

XXX

Հայկական և հրեական, իսկ ապա նաև նրանց հաջորդած մյուս բոլոր ցեղասպանությունների վերլուծության հիման վրա 1970-ական թվականներին ցեղասպանագիտության կողմից առաջ քաշվեց **«ցեղասպան պետության»** և **«ցեղասպան հասարակության»** վերին աստիճանի կարևոր տեսադրույթը:

Այդ տեսակետը, որ մինչ այդ անհայտ էր գիտությանը,

առաջ է քաշվել հայտնի ցեղասպանագետ Իրվինգ Հորովիցի կողմից[116] և պաշտպանություն գտել մի շարք այլ մասնագետների կողմից, ինչպես Յուրի Բարսեղովը[117], Լեո Կուպերը, տոդերիս հեղինակը և այլք:

Ո՞րն է ցեղասպան պետության տեսադրույթի էությունը, և ի՞նչ սկզբունքների վրա է նա խարսխվում:

Առաջին, ցեղասպանությունները պատահական չեն լինում: Նրանք ունեն տվյալ հասարակության ծոցում ձևավորված նկատելի և աննկատ, լատենտ նախադրյալներ, որոնք ներքին և արտաքին բարենպաստ պայմանների դեպքում անխուսափելիորեն դրսևորվում և հանգեցնում են ցեղասպանության կամ ցեղասպանությունների փորձերի:

Երկրորդ, ցեղասպանությունը ոչ բոլոր պետություններում և հասարակություններում է դրսևորվում և հնարավոր լինում իրագործել: Դա հնարավոր է միայն յուրահատուկ կառուցվածք ունեցող հասարակություններում և այնպիսի պետություններում, որոնք տիպաբանորեն պատկանում են բռնատիրական վարչակարգ ունեցող երկրների շարքին: Այդ վարչակարգը կարող է լինել զարգացման տարբեր աստիճանների վրա գտնվող ռազմաֆեոդալական, դիկտատորական և կամ տոտալիտար՝ ամբողջատիրական պետություն: Սակայն այդ հանգամանքն ինքնին վերցրած դեռևս բավարար չէ ցեղասպանության համար:

Կարևոր հանգամանքներ են տեսական պոստուլատները, որոնց վրա խարսխվում են ցեղասպանություն իրագործող պետություն-հասարակությունը և նրա պաշտոնական քաղաքականությունն ու գաղափարախոսությունը: Դրանց մեջ առաջնային է տիրապետող ազգի գերազանցության գաղափարը տվյալ պետության շրջանակներում մնացած բոլոր ազգությունների նկատմամբ՝ մի կողմից, և «օտարածին» մարմիններից ազատվելու և

[116] Irwing Horowitz, State Power and Mass Murder, New Brunswick, 1976.
[117] Барсегов Ю. Геноцид армян преступление по международному праву, Москва "XXI век -Согласие", 2000.

էթնիկական առումով «մաքուր» ու միատարր երկիր ստեղծելու հիմնադրույթը՝ մյուս կողմից: Եվ, ինչպես վկայում է պատմական փորձը, էթնիկապես «մաքուր» երկիր ստեղծելու այլ ուղի, քան բռնությունն է, գոյություն չունի: Իսկ բռնությունից մինչև ցեղասպանություն ընդամենը մի քայլ է միայն:

Սակայն ցեղասպան պետության համար անհրաժեշտ է նաև մեկ այլ նախապայման: Կարևոր է, որ տվյալ հասարակությունը ոչ միայն չընդվզի էթնիկական մաքրման դեմ, այլև ընդունի և պաշտպանի այդ քաղաքականությունն ակտիվ կամ պասիվ կերպով, կամ թեկուզ անտարբերություն դրսևորելով: Այլ կերպ ասած, խիստ կարևոր է, որ տվյալ պետության ներսում չլինեն ցեղասպանությունը խոչընդոտող ռազմական, քաղաքական, կրոնական և հասարակական ուժեր:

Եթե այդ բոլոր նախադրյալներն առկա են, ապա տվյալ պետությունը դասվում է ցեղասպան պետությունների շարքում:

Երբ մենք ցեղասպան պետության այս հասկացությունը կիրառում ենք Հայոց ցեղասպանության և հրեական Հոլոքոստի առնչությամբ, ապա ակնհայտ է դառնում, որ դա միանգամայն սազում է XIX դարի և XX դարի առաջին քսանամյակի Օսմանյան կայսրությանը և XX դարի 30-40-ական թվականների հիտլերյան-նացիստական Գերմանիային:

Այս երկու պետություններն էլ բոլոր պարամետրերով համապատասխանում են ցեղասպան պետության տեսադրույթին:

Երկու երկրներում էլ գոյություն ուներ բռնատիրական ռազմաֆեոդալական (Օսմանյան կայսրություն) կամ դիկտատորական -տոտալիտար (նացիստական Գերմանիա) վարչակարգ:

Երկու երկրների համար էլ բնորոշ էին պաշտոնական ռասիստական զաղափարախոսության տիրապետությունը և համապատասխանաբար թուրքական և գերմանական ազգերի գերազանցության և բարձր լինելու, «օտար» ազգերից բռնությամբ Օսմանյան կայսրությունը և նացիստական Գերմանիան մաքրելու իշխանությունների հետադիմական քաղաքականությունը:

Երկու երկրներն էլ կուտակել էին զանգվածային սպանությունների հարուստ փորձ և այդ բնագավառում հասել «բարձր կուլտուրայի»:

Եվ, վերջապես, երկու երկրների համար բնորոշ էր տվյալ հասարակության կողմից նման քաղաքականության ընկալման ֆենոմենը:

Ցեղասպան պետությունը ողբերգություն է պատճառում ոչ միայն ենթակա ժողովուրդներին, այլև պատժում է սեփական հասարակությանը՝ նրան կամա թե ակամա ոճրագործության մեղսակից դարձնելով:

Այդ բանը շատ լավ գիտակցեցին և ընդունեցին հետհիտլերյան Գերմանիայում: Դրա վկայությունն էին հետհիտլերյան ղեկավարության կողմից Գերմանիայի մեղսակցության ճանաչումը և կանցլեր Ադենաուերի կողմից պաշտոնապես ներողություն խնդրելը հրեաներից Հոլոքոստի համար:

Այդ բանը դեռևս պետք է գիտակցեն և ընդունեն հետօսմանյան Թուրքիայում, որի ղեկավարությունը համառորեն ժխտում է Հայոց ցեղասպանության փաստը՝ դառնալով «Ցեղասպանության ժխտման ինդուստրիայի հիմնադիր»:

Սակայն ուզում ենք հավատալ, որ արդի Թուրքիայում, վաղ թե ուշ կհաղթանակի առողջ բանականությունը, և կհայտնվի թուրքական Քոնրադ Ադենաուերը, որը, իր մեջ ուժ գտնելով, կայցելի Էջմիածին և ներողություն կհայցի հայ ժողովրդից:

46. ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ՆՐԱՆՑ ԱՐԺԱՆԻ ՊԱՏԻԺԸ ՀԱՅ ՎՐԻԺԱՌՈՒՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Առաջին համաշխարհային պատերազմը սկսվեց 1914թ. օգոստոսի 1-ին: Օսմանյան կայսրությունը պատերազմի մեջ մտավ 1914թ. հոկտեմբերի 29-ին: Հանրահայտ է, որ գերմանական բլոկը՝ Գերմանիան, Ավստրո-Հունգարիան, Օսմանյան

կայսրությունը և Բուլղարիան, պարտություն կրեց: 1918թ. հոկտեմբերի 30-ին հնչեց Օսմանյան կայսրության վերջին ժամը:

Առաջին համաշխարհային պատերազմում ռազմական պարտություն կրած Օսմանյան կայսրության ներկայացուցիչները՝ Հուսեյն Ռաուֆը, Հիքմեթը և Սաադուլլան, հունական Լեմնոս կղզու Մուդրոս նավահանգստային քաղաքում՝ բրիտանական «Ագամեմնոն» ռազմանավի վրա, հրադադարի պայմանագիր ստորագրեցին հաղթանակած Անտանտի հետ, որը նրա անունից ստորագրեց բրիտանացի ծովակալ Կալտրոպը:

Դադարեց գոյություն ունենալ և պատմության արխիվ հանձնվեց մի արյունարբու կայսրություն, որը միջին դարերում և նոր շրջանում՝ մոտ VII դար, ճակատագրական բացասական դեր է խաղացել մարդկության պատմության մեջ:

Բարբարոսական այդ կայսրության, որն անվանվել է «զուլումի երկիր» և «Աբդուլ Համիդ II -ի բանտ», կործանումը և վերացումը զոհունակությամբ ընդունվեցին օսմանյան տաժանակիր լծի տակ տառապած բոլոր ժողովուրդների կողմից:

Օսմանյան կայսրության պարտությունն այլ կերպ ընկալվեց բուն Թուրքիայում թուրքերի կողմից: Դա նրանց համար սև օր էր, իսկական ազգային աղետ, մանավանդ այն բանից հետո, երբ նրանց ռազմական պարտությունը վերածվեց քաղաքական պարտության, և Թուրքիան վերածվեց մի սովորական պետության: Թուրքերը ցնցված էին: Ազգային արժանապատվության ստորացման զգացումի հետ միասին նրանց մեջ խոսում էին նաև հուսահատությունը՝ մի կողմից, և ցասումը՝ մյուս կողմից: Այդ զգացումները թուրքերի մոտ, աստիճանաբար բյուրեղանալով, կերպարանափոխվեցին «Ո՞վ է մեղավոր» և «Ո՞վ պետք է պատասխան տա» հարցի: Այդ հարցադրումների մեջ արտահայտվում էր ոչ միայն թուրքերին պատահած ազգային աղետի պատճառների բացահայտման ցանկությունը, այլև վրիժառության զգացումը, որը մշտապես այնքան ուժեղ և դաժան է եղել թուրքերի մոտ դարերի ընթացքում: Բայց այս անգամ վրիժա-

ռության զգացումի յուրահատկությունն այն էր, որ այն ուղղված էր առաջին հերթին ոչ թե օտարի, այլ իր երեկվա սեփական ղեկավարության՝ «Իթթիհադ վե Թերակկի»՝ «Միություն և Առաջադիմություն» երիտթուրքական կուսակցության ղեկավարության և կառավարության դեմ:

Մեղավորների և պատասխանատուների բացահայտման պահանջը խթանվում էր նաև միջազգային հանրության, առանձին պետական, քաղաքական ու մշակութային գործիչների պահանջներով և ճնշումով:

Ահա այսպիսի իրադրության պայմաններում կազմվեց Թուրքիայի նոր կառավարությունը Ահմեդ Թևֆիկ փաշայի գլխավորությամբ, որը 1918 թ. նոյեմբերին որոշում ընդունեց դատական պատասխանատվության ենթարկել և պատժել երիտթուրքական կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամներին, պառլամենտի և կառավարության ղեկավարությանը, ինչպես նաև Օսմանյան կայսրության իսլամական հոգևոր պետերին՝ շեյխ ուլ-իսլամին: Այդ կառավարությունն առաջինն էր, որ կազմվեց երիտթուրքերի տապալումից և նրա առաջնորդների՝ Թուրքիայից փախուստ տալուց հետո: Այդ քաղաքականությունից չշեղվեց Թևֆիկ Փաշային հաջորդած Դամադ Ֆերիդ փաշայի կառավարությունը, որը նույնպես որոշեց դատական գործ հարուցել և պատժել Օսմանյան կայսրության նախկին պետական, կուսակցական և հոգևոր առաջնորդներին:

Սուլթան Մեհմեդ VI Վահիդդինը պաշտպանեց նոր կառավարության որոշումը: Փադիշահի՝ 1919թ. մարտի 8-ի կայսերական հրամանով կազմվեցին երեք՝ Առաջին, Երկրորդ և Երրորդ Ռազմական արտակարգ ատյանները՝ դատարանները, օսմանյան կառավարությանը և երիտթուրքերի ղեկավարությանը դատելու համար: Ատյանների կազմը նույնպես հաստատեց փադիշահը:

Ձերբակալվեցին և ռազմական ատյանի առջև կանգնեցին Մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշան, Երիտթուրքական կուսակցու-

թյան կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար Միթհադ Շուքրի- բեյը, մեջլիսի նախագահ Իբրահիմ-բեյը, սենատի նախագահ Ռիֆաթ-բեյը, շեյխ ուլ-իսլամ Մուսա Քյազիմ էֆենդին, արտաքին գործերի, արդարադատության, կրթության և այլ նախարարներ:

Իսկ ինչ վերաբերում է բարձրագույն ղեկավարությանը և գլխավոր հանցագործներին՝ վարչապետ և ներքին գործերի նախարար Թալեաթին, ռազմական նախարար Էնվերին, ռազմածովային նախարար Ջեմալին, նախկին վարչապետ Սայիդ Հալիմին, կրթության նախարար Նազիմին, «Հատուկ կազմակերպության» հիմնադիր և ղեկավար Շաքիր Բեհաէդդինին, Տրապիզոնի նահանգապետ Ազմիին և ուրիշների, թվով 11 հոգի, ապա նրանք դատարան չներկայացան, քանի որ բացակա էին: Նրանք գերմանական սուզանավերով գաղտնի լքել էին Թուրքիան և Գերմանիայի կառավարության օգնությամբ ու թույլտվությամբ հանգրվանել Գերմանիայում: Նրանք, թվով 11 հոգի, Դամադ Ֆերիդ փաշայի կառավարության կողմից դատապարտվեցին մահվան: Բայց թուրքական դատարանի այդ որոշումը մնաց թղթի վրա և ի կատար չածվեց, քանի որ նրանք՝գլխավոր հանցագործները, Թուրքիայում չէին գտնվում:

Նրանք մահվան դատապարտվեցին երկու հանցանքի համար:

Առաջին, Օսմանյան կայսրությունն Առաջին համաշխարհային պատերազմի մեջ ներգրավելու համար՝ առանց այդ հարցը թուրքական պառլամենտում քննարկելու և նրա համաձայնությունը ստանալու, ինչը պահանջվում էր ըստ օսմանյան գործող սահմանադրության:

Երկրորդ, հայերի զանգվածային կոտորածների և տեղահանության համար, այսինքն՝ այնպիսի հանցանքի համար, որը կոչվում է Հայոց ցեղասպանություն:

Մեղադրական եզրակացության մեջ նշված է. **«Երիտթուրքերը սկսեցին ժողովրդին կոտորել, կողոպտել, ունեցվածքը**

այրել և շատերին տանջամահ անել: Չնայած ահաբեկման սլաքը հիմնականում ուղղված էր հայերի դեմ, այնուհանդերձ, տուժեցին նաև այլ տարրեր: Հայերի տեղահանության ընթացքում տարբեր ժամանակներում և զանազան վայրերում տեղի ունեցած հանցագործությունները և հատկապես յուրաքանչյուր հանցագործության նկատմամբ օրենքի հիման վրա կատարված քննությունները ցույց են տալիս, որ դրանք ոչ թե սահմանափակ կամ տեղական բնույթ են ունեցել, այլ կանխամտածված իրականացվել են վերոհիշյալ անձերից բաղկացած և միասնական ուժ հանդիսացող «Հատուկ կենտրոնի» բանավոր հրահանգներով ու գաղտնի հրամաններով: Լիովին ապացուցված է, որ այդ կոտորածները տեղի են ունեցել Թալեաթ, Էնվեր և Ջեմալ բեյերի անմիջական հրամաններով և գիտությամբ»[118]:

Ստեղծված պայմաններում այդ երկու հանցանքի համար, Թուրքիայի դատարանի օրինական որոշումն իրագործելու առաքելությունն իրենց վրա վերցրին հայ ժողովրդական վրիժառուները՝ «Նեմեսիս» գաղտնի գործողության նվիրյալները:

1921թ. մարտի 15-ին հայ վրիժառու Սողոմոն Թեհլիրյանը Բեռլինում սպանեց Թալեաթին և ինքնակամ հանձնվեց գերմանական դատարանին, որը, քննարկելով այդ հարցը և սպանության դրդապատճառները, անպարտ ճանաչեց նրան և ազատ արձակեց:

1921թ. դեկտեմբերի 6-ին Հռոմում հայ վրիժառու Արշավիր Շիրակյանի գնդակից սպանվեց նախկին վարչապետ Սայիդ Հալիմը:

1922թ. ապրիլի 7-ին դարձյալ Բեռլինում հայ վրիժառուներ Արամ Երկանյանի և Արշավիր Շիրակյանի գնդակներից ընկան

---

[118] Տե՛ս «Հայերի ցեղասպանությունն ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի»: Առաջաբանը, թարգմանությունը, ծանոթագրությունները՝ Ա.Հ. Փափազյանի, Երևան, 1988:Այդ փաստաթղթերը ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտին էր տրամադրել Կարպիս Ջրբաշյանը Փարիզից:

Շաքիր Բեհաէդդինը և Ազմի -բեյը:

1922թ. հուլիսի 21-ին Թիֆլիսում սպանվեց Ջեմալ փաշան, որն իրականացրին Պետրոս Տեր-Պողոսյանը և Ստեփան Ծաղիկյանը[119]:

Արդար պատժից չխուսափեց նաև երիտթուրքական եռապետության երրորդ անդամ, ռազմական նախարար Էնվերը, որը սպանվեց Կենտրոնական Ասիայում կարմիր բանակի զորախմբի հրամանատար Հակոբ Մելքումովի կողմից:

Բարեբախտաբար պահպանվել են նաև այլ նյութեր, որոնք արտացոլում են երիտթուրքերի եռապետության՝ Թալեաթի, Էնվերի և Ջեմալի տեսակետները հայկական սպանդի կամ արդի տերմինաբանությամբ՝ Հայոց ցեղասպանության վերաբերյալ: Ստորև բերում ենք այդ տեսակետները:

Օսմանյան կայսրության ռազմական նախարար և երիտթուրքական եռապետության անդամ Էնվերը 1916 թ. մայիսի 19-ին հայտարարել է. «Օսմանյան կայսրությունը պետք է մաքրվեր հայերից և լիբանանցիներից: Առաջիններին մենք ոչնչացրել ենք սրով, վերջիններին մենք կոչնչացնենք սովամահությամբ»[120]:

Օսմանյան կայսրության վարչապետ և ներքին գործերի նախարար, եռապետության անդամ Թալեաթը 1918թ., երբ Գերմանիայի դեսպանը նրա հետ հանդիպման ժամանակ բարձրացնում է Հայկական հարցը, նա, այսինքն՝ Թալեաթը, ժպտալով պատասխանում է. «**Ի՞նչ եք դուք ուզում: Հարցը լուծված է: Այլևս հայեր չկան**»[121]:

Այսպիսով, տվյալ հարցի վերաբերյալ առկա պաշտոնական փաստաթղթերն իրավունք են տալիս կիրառել հայեցակարգային նորություն և սահմանել:

Առաջին, Օսմանյան կայսրությունը ոչ միայն առաջին պե-

---

[119] Nikolay Hovhannisyan, The Armenian Genocide, Armenocide , Yerevan 102-103.

[120] Armenian Genocide Quotes . Turkish Quites. Enver Pasha http://www. armeniapedia.org/i titledexphp

[121] Armenian Genocide Quotes. Turkish Quotes. Talaat Pasha.

տությունն է, որն իրականացրել է XX դարի առաջին ցեղասպանությունը՝ Հայոց ցեղասպանությունը, այլև առաջին երկիրն է, որ ճանաչել է իր իսկ իրագործած ցեղասպանությունը և նրա կատարողներին այդ հանցանքի համար դատապարտել մահվան:

Երկրորդ, Օսմանյան կայսրության իրավահաջորդ Թուրքիայի Հանրապետության ղեկավարությունը թեև պաշտոնապես չի ճանաչում Հայոց ցեղասպանությունը, այնուամենայնիվ, չի բեկանել օսմանյան լեգիտիմ դատարանի՝ 1919-1920 թվականների որոշումները Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ: Դատարանի այդ որոշումներն իրենց ուժը չեն կորցրել: Լեգիտիմ դատարանի վճիռներն անբեկանելի են:

Արդի Թուրքիայի Հանրապետության կառավարությունը, պաշտոնապես չճանաչելով Հայոց ցեղասպանությունը, այդուհանդերձ չի ժխտում հայերի՝ 1915թ. տեղահանությունը Օսմանյան կայսրությունում, իսկ տեղահանությունը ցեղասպանության օրգանական մասն է:

Ուստի Թուրքիայի Հանրապետությունը ոչ թե պետք է ճանաչի, այլ վերաճանաչի իր նախորդի՝ Օսմանյան կայսրության կողմից ճանաչված Հայոց ցեղասպանությունը: Առաջարկում ենք այս հայեցակարգային նորությունները որպես ուղենիշներ նույնպես ընդգրկել Հայոց ցեղասպանության գնահատման և միջազգային ճանաչման ռազմավարությունում:

Երիտթուրքերի եռապետության անդամների խոստովանությունները, ինչպես նաև օսմանյան լեգիտիմ դատարանի կողմից ընդունված վերդիկտը հաստատում են, որ Հայոց ցեղասպանությունն իրագործել է օսմանյան պետությունը, որը և առաջին պետությունն է, որ ճանաչել է Հայոց ցեղասպանությունը: Ուստի աննրելի պատմական վրիպում պետք է համարել, այդ թվում և մեր՝ հայերի կողմից, այն տեսակետը, թե Թուրքիան չի ճանաչել Հայոց ցեղասպանությունը, և նա պետք է դա անի:

Հայոց ցեղասպանությունը չճանաչած հանրապետական

Թուրքիան չի բեկանել նաև 1919-1920 թթ. օսմանյան դատարանի որոշումները, որով ճանաչվել է հայերի նկատմամբ կատարված հանցանքը: Դատարանի այդ որոշումը մնում է ուժի մեջ: Օսմանյան դատարանի վճիռն անբեկանելի է:

47. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՆՑՈՒՄԸ ՀՈՒԶԱԿԱՆ - ԶԳԱՅԱԿԱՆԻՑ ԳԻՏԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ: ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ -ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

Ցեղասպանությունների, այդ թվում և Հայոց ցեղասպանության երևույթի գնահատման և ճանաչման հարցում շրջադարձային դեր խաղաց գիտական նոր ուղղության՝ ցեղասպանագիտության ձևավորումը XX դարի 60-80-ականներին և Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիայի (ՑՄԱ) հիմնումը 1994թ.: ՑՄԱ-ն աշխարհում ցեղասպանագիտության բնագավառում ամենահեղինակավոր կազմակերպությունն է, որի շարքերում համախմբված են միջազգային մեծ հեղինակություն վայելող աշխարհի բոլոր ականավոր ցեղասպանագետ- գիտնականները և պրոֆեսիոնալ մասնագետները[122]: Շնորհիվ դրա, ցեղասպանության ուսումնասիրությունը սիրողական մակարդակից և զգայական-հուզական դաշտից տեղափոխվեց գիտական-իրավական դաշտ:

Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիայի առաջին պրեզիդենտ ընտրվեց համաշխարհային հռչակ վայելող ցեղասպանագետ, Նյու Յորքի Ցեղասպանությունների ուսումնասիրության ինստիտուտի տնօրեն Էլեն Ֆայնը: ՑՄԱ-ն երկու անգամ՝ 1997 և 2005 թվականներին իր համընդհանուր ժողովներում ճանաչեց Հայոց ցեղասպանությունը: Իսկ 2005թ. հունիսի 4-7-ը Ֆլորիդայում (ԱՄՆ) գումարված վեցերորդ գիտաժողովը քննար-

[122] Տողերիս հեղինակը նույնպես նրա անդամն է, որի գիտաժողովներում բազմիցս հանդես է եկել ելույթներով:

կեց «Իննսուն տարի Հայոց ցեղասպանությունից հետո: Վաթսուն տարի Հոլոքոստից հետո» հարցը, ինչն ինքնին շատ խոսուն փաստ է, որով ճանաչվեց ոչ միայն Հայոց ցեղասպանությունը, այլև Հայոց ցեղասպանությունը հաստատվեց որպես XX դարի առաջին ցեղասպանությունը լինելու պատմական իրողությունը:

ՅՄԱ-ն ընդունել է մի շարք փաստաթղթեր՝ որոշումներ, հռչակագրեր, բանաձևեր, տարբեր երկրների ղեկավարներին հասցեագրված ուղերձներ, նամակներ, կոչեր և միջազգային նշանակության այլ փաստաթղթեր, որոնք կարևոր են նոր ցեղասպանությունները կանխելու, ցեղասպանությունների ճանաչման և դրանց ժխտման դեմ միջազգային հանրությանը համախմբելու գործում:

Այդ փաստաթղթերի մեջ իր հայեցակարգային կարևորությամբ բացառիկ նշանակություն ունի Հայոց ցեղասպանության վերաբերյալ ՅՄԱ-ի՝ 2005թ. հունիսի 7-ի թվակիր նամակը Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանին՝ ի պատասխան Ցեղասպանության միջազգային կազմակերպությանն ուղղված վերջինիս նամակի: Ասոցիացիայի անունից նամակը ստորագրել են ՅՄԱ-ի պրեզիդենտ, պրոֆեսոր Իսրայել Չարնին (Իսրայել), առաջին փոխպրեզիդենտ Գրեգորի Ստենտոնը (ԱՄՆ), երկրորդ փոխպրեզիդենտ Լինդա Մելվերնը (Մեծ Բրիտանիա) և քարտուղար Ստիվեն Ջեկոբսը (ԱՄՆ):

Նամակում մասնավորապես ասված է.

«Հարգելի վարչապետ Էրդողան: Մենք այս բաց նամակը գրում ենք Ձեզ ի պատասխան Ձեր կոչին առ այն, որ «պատմաբաններն անկողմնակալ ուսումնասիրեն Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի ճակատագրի վերաբերյալ հարցերը: **Մենք ներկայացնում ենք գիտնականների գլխավոր մարմինը, որն ուսումնասիրում է ցեղասպանությունը Հյուսիսային Ամերիկայում և Եվրոպայում:** Մենք մտահոգված ենք, որ կոչ անելով անկողմնակալորեն ուսումնասիրել Հայոց

ցեղասպանությունը՝ Դուք կարող է՝ լրիվ տեղյակ չեք Հայոց ցեղասպանության վերաբերյալ գիտական և ինտելեկտուալ ուսումնասիրությունների ծավալներից և թե ինչպես է այս իրադարձությունը հաստատում Միավորված ազգերի կազմակերպության՝ Ցեղասպանության վերաբերյալ կոնվենցիան: **Մենք ցանկանում ենք ընդգծել, որ միայն հայերը չէ, որ հաստատում են Հայոց ցեղասպանությունը, այլ դա գիտնականների մոտ տիրապետող կարծիք է, հարյուրավոր անկախ գիտնականների, որոնք ոչ մի կապ չունեն կառավարությունների հետ, և որոնց աշխատությունները տասնամյակների ընթացքում տարածվում են և ընդգրկում շատ երկրներ և ազգություններ»**[123]: ՑՄԱ-ի՝ Ցեղասպանագիտության Միջազգային Ասոցիացիայի ղեկավարներն այնուհետև նշում են, որ «գիտական ուսումնասիրությունը բացահայտել է, որ Օսմանյան կայսրության կառավարությունը 1915թ. ապրիլի 24-ին Առաջին համաշխարհային պատերազմի քողի տակ սկսեց հայ քաղաքացիների՝ բնակչության քրիստոնյա փոքրամասնության համակարգված ցեղասպանությունը, ավելի քան մեկ միլիոն հայեր ոչնչացվեցին ուղղակի սպանությունների, սովի, կոտանքների միջոցով, իսկ հայ բնակչության մնացած մասը մշտապես աքսորվեց, և այսպիսով մի հին քաղաքակրթություն վտարվեց իր 2500-ամյա հայրենիքից»[124]: Արժեքավոր է նաև նրանց դիտողությունն առ այն, որ «Հայոց ցեղասպանությունը փաստարկված է Միացյալ Նահանգների և աշխարհի ժողովուրդների, ներառյալ Թուրքիայի պատերազմի ժամանակվա դաշնակիցների՝ Գերմանիայի, Ավստրիայի, Հունգարիայի հազարավոր պաշտոնական փաստաթղթերով, օսմանյան ռազմական ատյանի արձանագրություններով, ականատես միսիոներների և դիվանագետների, վերապրողների վկայություններով և տասնամյակների ընթացքում կատարված

[123] No Place for Denial :IAGS Letter on the Calls for «Impartial Study». http://npfdino.blogspot.com/2005/06/iags-letter-on -calls-for-iimpartial.html

[124] Նույն տեղում:

պատմագիտական ուսումնասիրություններով»[125]:

Շարունակելով դաս տալ Թուրքիայի վարչապետին և քննադատելով նրա կառավարության քաղաքականությունը՝ ՑՄԱ-ի ղեկավարները բաց տեքստով հայտարարում են նրան. «Գիտնականները, որոնք խորհուրդ են տալիս Ձեր կառավարությանը, անկողմնակալ չեն: Այդ այսպես կոչված «գիտնականները» աշխատում են խճողել օրակարգում գտնվող պատմագիտական և բարոյական հարցերը, երբ նրանք խորհուրդ են տալիս Ձեզ և թուրքական պառլամենտին ինչպես ժխտել Հայոց ցեղասպանությունը»[126]:

Նամակի հեղինակները ևս մի նրբին դիտողություն են անում և Թուրքիայի վարչապետին բացատրում հետևյալ ճշմարտությունը. «Մենք հավատում ենք, որ ակնհայտորեն ի շահ թուրք ժողովրդի և նրա ապագայի է ճանաչել նախորդ կառավարության պատասխանատվությունը հայ ժողովրդի ցեղասպանության համար, ինչպես դա արեցին գերմանական կառավարությունը և ժողովուրդը Հոլոքոստի պարագայում»[127]:

Նամակում ներկայացված է Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիայի հայեցակարգային ամփոփիչ եզրակացությունը, որը համաժողովի մասնակիցներն ընդունել են միաձայն: Ահա այս պատմական և դարակազմիկ նշանակություն ունեցող եզրակացությունը՝ **«Հայոց ցեղասպանությունը հաստատված է միջազգային գիտական, իրավական և մարդու իրավունքների հանրության կողմից»[128]:**

Մենք առաջարկում ենք այս տեսաղրույթն ամբողջությամբ դնել Հայոց ցեղասպանության գնահատման և ճանաչման նոր ռազմավարության հիմքում և հետայսու ղեկավարվել դրանով:

---

[125] Նույն տեղում:
[126] Նույն տեղում:
[127] Նույն տեղում:
[128] Նույն տեղում:

48. ԹՈՒՐՔԻԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԽՏՄԱՆ ԻՆԴՈՒՍՏՐԻԱՅԻ ՀԻՄՆԱԴԻՐ

Ցեղասպանագիտության առջև այսօր կանգնել են մի շարք բարդ խնդիրներ, որոնց մեջ թերևս ամենագլխավորներից մեկը մարդկության դեմ հանցագործություն համարվող այդ ֆենոմենի ժխտման հարցն է: Սխալ կլիներ այդ խնդիրը համարել զուտ գիտական: Այդ հարցը քաղաքական, միջպետական, միջազգային և համամարդկային խնդիր է, որը պահանջում է համապատասխան մոտեցում: Կար ժամանակ, երբ աշխարհում եղել է ընդամենը մեկ ցեղասպանություն: Դա Հայոց Մեծ Եղեռնն էր, և կար ընդամենը ցեղասպանության մեկ ժխտում, որի կրողը Թուրքիան էր:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո պատկերը բոլորովին փոխվեց: Ավելացավ ցեղասպանության ենթարկված և կամ նրա սպառնալիքների տակ հայտնված ազգերի, ժողովուրդների և էթնիկական խմբերի թիվը: Դրան համապատասխան ավելացավ այդ ցեղասպանություններն իրագործած ու ժխտող երկրների և իշխանությունների թիվը: Դարձյալ հիշենք ամերիկացի ցեղասպանագետ Հելեն Ֆայնին, ով 1945-ականներին հաջորդած ժամանակաշրջանը դիտում է որպես գենոցիդի և պոլիտիցիդի դարաշրջան[129]: Ավելացնենք, որ դա ոչ միայն ցեղասպանության դարաշրջան էր, այլև ցեղասպանության ժխտման մի ուրույն դարաշրջան է:

Սակայն ամենահինը և առաջինը մնում է Հայոց ցեղասպանության ժխտումը: Թուրքիայի բոլոր պրեզիդենտները, կառավարությունները, մեկը մյուսին հաջորդող քաղաքական և ռազմական էլիտաները ոչ միայն ժխտում են, որ Օսմանյան կայսրությունում XX դարի առաջին քսանամյակում իրագործվել է պատմության մեջ Առաջին ցեղասպանությունը՝ Արմենոցիդ-

[129] Helen Fein, Accounting for Genocide after 1945. Theories and Some Findings . International Journal on Group Rights, 1993, p.1.

Հայասպանությունը, այլև լսել անգամ չեն ուզում այդ մասին: Նրանք անտեսում են այն կուտակված վիթխարի սկզբնաղբյուրները, որոնք պահվում են տարբեր երկրների գրապահոցներում: Դրանք հիմնավորապես ապացուցում են,, որ այն, ինչ կատարվեց Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Օսմանյան կայսրությունում արևմտահայության հետ, ունի միայն մեկ անվանում՝ հայության ֆիզիկական ոչնչացում, այսինքն՝ ցեղասպանություն: Ինչպես հայտնի է, ոչնչացվեց մեկուկես միլիոն հայ, և նրանից խլվեց նրա հայրենիքը՝ Արևմտյան Հայաստանը:

Սկսվեց նաև Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման փուլը, որը շատ չանցած տվեց անսպասելի արդյունքներ: Դա սարսափեցրեց Անկարային, որի արտաքին քաղաքականության կարևոր խնդիրներից մեկը դարձավ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման կանխումը՝ կանգ չառնելով անգամ Հայոց ցեղասպանությունը ճանաչած պետություններին ահաբեկելու, շանտաժի ենթարկելու և սպառնալիքների առջև:

Ցեղասպանությունների ժխտման հարցը մտահոգում է համայն մարդկությանը: Ժխտման էությունը և նրա վտանգը հիանալի է ձևակերպել ցեղասպանագիտության բնագավառում մի այնպիսի հեղինակավոր մասնագետ, ինչպես Իսրայելի Հոլոքոստի և ցեղասպանագիտության ինստիտուտի գործադիր տնօրեն, ՅՄԱ-ի նախկին տնօրեն Իսրայել Չարնին: Ահա նրա տված սահմանումը. **«Ցեղասպանության ենթարկված ժողովրդի ցեղասպանության ժխտումը հավասար է նրա նկատմամբ նոր ցեղասպանություն կիրառելուն»:**

Հաշվի առնելով ցեղասպանության ժխտման երևույթի գնալով ավելի մեծ ծավալները և այն վտանգը, որ նա ներկայացնում է մարդկությանը, Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիան նպատակահարմար գտավ այդ հարցը հատուկ քննարկման ենթարկել 2005թ. հունիսի 4-7 -ը Ֆլորիդայում գումարված Ասոցիացիայի վեցերորդ կոնֆերանսում: Նրա սեկցիաներից մեկը հատուկ նվիրված էր «Ցեղասպանությունների ժխտման հար-

ցի» քննարկմանը: Մենք միաձայն այդ սեկցիայի նախագահ ընտրեցինք թուրք հայտնի ցեղասպանագետ, պրոֆեսոր Թաներ Աքչամին, որը մեծ ներդրում ունի Հայոց ցեղասպանության հիմնահարցերն ուսումնասիրելու մեջ և գտնում է, որ այն, ինչ պատահեց արևմտահայության հետ, անհերքելի ցեղասպանություն է: Ես՝ որպես կոնֆերանսի մասնակից, կարող եմ վկայել, որ այդ սեկցիան կոնֆերանսի հիմնական և կարևոր սեկցիան էր, որը հիանալի ղեկավարեց Թաներ Աքչամը: Այդ օրը, երբ քննարկվում էր ցեղասպանության ժխտման հարցը, դահլիճում ասեղ գցելու տեղ չկար:

Քննարկումն անցավ շատ բարձր մակարդակով: Բոլոր ելույթ ունեցողները, անկախ նրանից, թե նրանք որ մայրցամաքը կամ երկիրն էին ներկայացնում, խստորեն դատապարտեցին Թուրքիային Հայոց ցեղասպանությունը ժխտելու նրա դիրքորոշման համար: Դարֆուրի, Ռուանդայի, Բուրունդիի, հրեաների և ցեղասպանության ենթարկված այլ ժողովուրդների ներկայացուցիչները միակարծիք էին այն հարցում, որ եթե Հայոց ցեղասպանությունը կանխված լիներ 1915թ. և դատապարտված ժամանակին, իսկ նրա հանցագործները պատժված, ապա հետագայում անհնար կլինեին նոր ցեղասպանություններ, այդ թվում և իրենց երկրներում: Նրանք թուրքական հակափաստարկները համարում էին անհիմն, նույնիսկ անհեթեթ: Նշվեց, որ Թուրքիան այլընտրանք չունի, նրա ղեկավարությունը պետք է խիզախություն դրսևորի և ընդունի, որ Օսմանյան կայսրությունը կատարել է նման հանցանք, և ներողություն խնդրի հայությունից: Ելույթ ունեցողները բացեիբաց ասում էին, որ ինչպես Գերմանիայի կանցլեր Կոնրադ Ադենաուերն ընդունեց հրեաների նկատմամբ նացիստական դահիճների կատարած ոճրագործությունը և Գերմանիայի ժողովրդի անունից ներողություն խնդրեց հրեաներից, նույնը պետք է կատարի ժամանակակից Թուրքիայի պրեզիդենտը կամ վարչապետը և, ընդունելով սուլթանական-երիտթուրքական վարչակարգի կատարած հանցագործությունը,

ներողություն խնդրի հայերից:

Շատ կարևոր էր «Ցեղասպանությունների ժխտման հարցի» սեկցիայի նախագահողի՝ թուրք պատմաբան, պրոֆեսոր Թաներ Աքչամի եզրափակիչ խոսքը: Հենվելով իր դիտարկումների և քննարկումների ընթացքում արտահայտված մտքերի ու տեսակետների վրա՝ **Թաներ Աքչամը ներկաների բուռն ծափահարությունների ներքո շատ հուզված հայտարարեց. «Ցեղասպանության ժխտման ինդուստրիայի հիմնադիրը Թուրքիան է»:**

Այսպիսով, Թուրքիան միջազգային հանրության առջև կանգնեց ոչ միայն որպես XX դարում իրականացված առաջին ցեղասպանության՝ Արմենոցիդի հանցագործ, այլև մի նոր հանցագործության հեղինակ՝ ցեղասպանության ժխտման ինդուստրիայի հեղինակ: Երկու դեպքում էլ առաջնության «դափնին» պատկանում է նրան, որն ավելի է խորացնում մարդկության դեմ իրագործած նրա հանցանքը:

Կոնֆերանսը Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիայի նախագահ ընտրեց Իսրայել Չարնիին: Շնորհավորելով նրան՝ ես՝ որպես Ասոցիացիայի անդամ և ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, Իսրայել Չարնիին առաջարկեցի Երևանում հրավիրել ցեղասպանության ենթարկված բոլոր այն ժողովուրդների միջազգային համաժողով, որոնց ցեղասպանությունն այս կամ այն կերպ մերժվում է, և դրանով ցեղասպանությունը ժխտողների միջազգային ճակատին հակադրել ցեղասպանության զոհ դարձած ժողովուրդների ճակատ:

Ցեղասպանագետ-փորձագետների միջազգային ամենաբարձր ֆորումը ցույց տվեց, որ Հայոց ցեղասպանությունը ժխտելու հարցում Թուրքիան մեկուսացված է, նա միայնակ է և չունի դաշնակիցներ:

49. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ

Թուրքիայի բոլոր ջանքերը խափանել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը և այդ հարցը պահպանել սառեցման վիճակում, խայտառակ կերպով տապալվեցին: Ճանաչման գործընթացը, ի հեճուկս Թուրքիայի, քանի գնում, այնքան ավելի ու ավելի է նոր թափ ստանում: Հայոց ցեղասպանությունն արդեն ճանաչվել է Երկիր մոլորակի բոլոր մայրցամաքներում, մեր մոլորակի համարյա բոլոր էթնիկական խմբերի և տարալեզու ժողովուրդների, մեծ և փոքր երկրների, հզոր և թույլ պետությունների կողմից:

Անհերքելի փաստերի և իրողությունների վերլուծությունն ու լուսաբանությունը հիմք են հանդիսացել միջազգային գիտական, իրավական և մարդկային իրավունքների հանրության համար Հայոց ցեղասպանությունը համարելու **որպես միջազգայնորեն ճանաչված ցեղասպանություն**: Հայոց ցեղասպանությունը ճանաչած միջազգային կառույցները բաժանվում են երկու խմբի՝ **Ինստիտուցիոնալ- պետութենական** և **հասարակական ոչ կառավարական**: Ըստ այդմ, ճանաչումը կատարվել է ինստիտուցիոնալ և ոչ կառավարական մակարդակներով:

Ինստիտուցիոնալ խմբի մեջ մտնում են պետական, կառավարական և օրենսդիր մարմինները, միջազգային հեղինակավոր կազմակերպությունները, պետական պատասխանատու գործիչները, առաջին հերթին երկրների ղեկավարները՝ պրեզիդենտները և այլն:

Ա. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ ՊԵՏԱԿԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ

1. Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչել են հետևյալ պետությունները.

Օսմանյան կայսրություն- 1919թ., սուլթան Մեհմեդ Վահիդդին VI -ի հրամանով ստեղծված լեգիտիմ արտակարգ ատյանների՝ դատարանների վերդիկտով:

Ուրուգվայ-1965թ., ա/Պառլամենտական բանաձև, բ/ 2004թ., ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենք:

Կիպրոս- 1982թ., Պառլամենտական բանաձև:

Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն, Գերագույն խորհրդի՝ «1915թ. Օսմանյան Թուրքիայում Հայոց ցեղասպանությունը դատապարտող օրենք», 30 նոյեմբերի 1988թ.:

Արգենտինա-1993թ., ա/ Պառլամենտական բանաձև, բ/ 2004թ., քրեականացնող օրենք:

Ռուսաստանի Դաշնություն-1995թ., Պետական դումա:

Հունաստան- 1996թ., ա/ Պառլամենտական բանաձև, բ/ 2014թ., քրեականացնող օրենք:

Կանադա- 1996թ. - Պառլամենտական բանաձև, 1996, 2002, 2004թթ.:

Լիբանան-1997թ.,Դեպուտատների պալատի բանաձև:

Բելգիա-1998թ., Սենատի բանաձև:

Ֆրանսիա- ա/Պառլամենտական բանաձև՝ ընդունված 1998 և 2000թթ., բ/ 2001թ. քրեականացնող:

Վատիկան -2000թ.:

Իտալիա-2000թ., Պառլամենտական բանաձև:

Շվեյցարիա-2003թ., ա/ Պառլամենտական բանաձև, բ/ ժխտումը քրեականացնող օրենք:

Սլովակիա-ա/ 2004թ., Պառլամենտական բանաձև,

բ/ ժխտումը քրեականացնող օրենք:

Նիդեռլանդներ-2004թ., Պառլամենտական բանաձև:

Լեհաստան-2004թ., Սեյմի բանաձև:

Վենեսուելա- 2005թ., Պառլամենտի բանաձև:

Գերմանիա- 2005թ., Բունդեսթագի բանաձև:

Լիտվա-2007թ., Պառլամենտի բանաձև:

Չիլի-2007թ., Պառլամենտի բանաձև:

Շվեդիա-2010թ., Ռիկսդագի բանաձև[130]:

Բոլիվիա-2014թ., Պառլամենտի և Սենատի բանաձևեր:

Բրազիլիա-2015թ.:

Լյուքսեմբուրգ-2015թ.:

Պարագվայ-2015թ.:

Չեխիա-2015թ., 2017թ.:

Պորտուգալիա- 2019թ.:

Լիբիա- 2019թ.:

ԱՄՆ-ի Կոնգրեսը - ա/ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատը՝ 29 հոկտեմբերի 2019թ., բ/ Սենատը՝ 12 նոյեմբերի 2019թ., գ/ ԱՄՆ-ի 50 նահանգների օրենսդիր մարմինները:

Սիրիա- Խորհրդարան, Հայոց ցեղասպանությունը ճանաչող և դատապարտող բանաձև, 13 փետրվարի 2020թ.:

Այսպիսով, Հայոց ցեղասպանությունը ճանաչել են 31 պետություն, այդ թվում՝ 18 եվրոպական, 8 ամերիկյան, 5 ասիական:

Երկու պետություն՝ Ռուսաստանի Դաշնությունը և Ֆրանսիան, Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի մշտական անդամ են, իսկ Վատիկան պետությունը՝ կաթոլիկ աշխարհի կենտրոնը:

Հայոց ցեղասպանության ճանաչումն իրականացվել է Դատաիրավական վերդիկտի (Օսմանյան կայսրություն), բարձրա-

---

130 **Ն.Հովհաննիսյան**, Արմենոցիդը ճանաչված ցեղասպանություն է, Երևան, 2010, էջ 176, 177; // Armenian Genocide -Recognition of the Armenian Genocide http: // genocide.am/article/recognition _of_the_ armenian_genocu/hml

գույն օրենսդիր մարմինների՝ պառլամենտի, Ազգային ժողովի, Սենատի, Սեյմի, Պետական դումայի, Դեպուտատների պալատի Բունդեսթագի, Ռիկսդակի բանաձևերի ընդունման հիման վրա:

Ֆրանսիան, Ուրուգվայը, Արգենտինան, Հունաստանը և Սլովակիան ճանաչման հետ միասին ընդունել են նաև համապատասխան օրենքներ ցեղասպանության ժխտման քրեականացման վերաբերյալ, պատիժներ սահմանել բոլոր այն դեպքերի համար, երբ այս կամ այն պատրվակով ցեղասպանությունը ժխտելու փորձեր են արվում, այդ թվում և Հայոց ցեղասպանությունը: Ընդ որում այդ օրենքները գործող օրենքներ են: Օրինակ, հայտնի թուրք ազգայնամոլ Դոդու Փիրինջիկին շվեյցարական դատարանը (Լոզանի շրջան), 2007թ. մարտի 8-ին դատապարտեց Հայոց ցեղասպանությունը ժխտելու համար, որը հաստատեց Շվեյցարիայի դաշնային դատարանը:

2.Հայոց ցեղասպանության ճանաչումը ինքնավար, նահանգային և ռեգիոնալ միավորների օրենսդիր և կառավարող մարմինների կողմից

Մեր գիտահետազոտական աշխատանքների ընթացքում ի հայտ եկավ, որ Եվրոպայի, Ասիայի և Ամերիկայի 31 պետությունների հետ միասին կամ նրանց զուգահեռ Հայոց ցեղասպանությունը ճանաչել են նաև մի շարք պետական ինքնավար կազմավորումների, միավորների և նահանգների օրենսդիր և գործադիր մարմինները: Այդ հարցը մինչև այժմ հանգամանորեն չի ուսումնասիրվել:

Նրա առանձնահատկությունն այն է, որ տեղական, շրջանային կամ նահանգային օրենսդիր մարմինները Հայոց ցեղասպանությունը շատ հաճախ ճանաչել են անկախ այն բանից, թե «մայր» երկրի որի կազմում են նրանք գտնվում, պառլամենտը ճանաչե՞լ է Հայոց ցեղասպանությունը, թե՞ ոչ:

Հաշվի առնելով հարցի կարևորությունը և մեծ հետա-

քրքրությունը նրա հանդեպ՝ ստորև ներկայացնում ենք Հայոց ցեղասպանությունը ճանաչած այդ ինքնավար մարմինների լրիվ ցանկը:

1.Ավստրալիա՝

ա/ Նոր Հարավային Ուելս նահանգի պառլամենտը՝ 2007թ.:

բ/ Հարավային Ավստրալիա նահանգի պառլամենտը՝ 2009թ.:

Նրանք միաժամանակ պահանջել են մայր երկրի՝ Ավստ-րալիայի կառավարությունից ճանաչել և դատապարտել Հայոց ցեղասպանությունը:

2. Բրազիլիա՝

ա/ Սան Պաուլոյի Նահանգային ասամբլեան՝ 2003թ.:

բ/ Սեարայի նահանգի Օրենսդիր խորհուրդը՝ 2000թ.:

գ/ Պարանայի նահանգի Օրենսդիր իշխանությունը՝ 2013թ.:

3. Իսպանիա՝

ա/Բասկերի երկրի պառլամենտը՝ 2007թ.:

բ/ Կատալոնիայի պառլամենտը՝ 2010թ.:

գ/Բալեարյան կղզիների պառլամենտը՝ 2010թ.:

4. Իտալիա՝ Լոմբարդիա նահանգի Օրենսդիր մարմինը:

5. Կանադա՝

ա/ Քվեբեկ նահանգի Օրենսդիր մարմինը՝ 2001թ.:

բ/ Օնթարիոյի նահանգի պառլամենտը՝ 2001թ.:

6. Մեծ Բրիտանիա՝

ա/ Ուելսի Ազգային ասամբլեան՝ Պառլամենտը՝ 2002թ.:

բ/Հյուսիսային Իռլանդիայի Օրենսդիր մարմինը:

գ/ Շոտլանդիայի պառլամենտը՝ 2013թ.:

7. Մեքսիկա՝

Միչոական նահանգի Օրենսդիր մարմինը՝ 2019թ.:

8. Շվեյցարիա՝

Բեռնի Կանտոնի Օրենսդիր մարմինը:

Այսպիսով, Հայոց ցեղասպանությունը ճանաչել են 16 վարչատարածքային և ինքնավար պետական կազմավորումներ: Եթե դրանք ավելացնենք Հայոց ցեղասպանությունը ճանաչած 31 պետություններին, ապա կստացվի, որ Հայոց ցեղասպանությունն արդեն ճանաչել են մոտ 50 պետություններ և պետական կազմավորումներ, ինչը շատ տպավորիչ է:

Նշենք, որ Ավստրալիան, Բրազիլիան, Իսպանիան և Մեծ Բրիտանիան, որոնց կազմի մեջ մտնում են վերոնշյալ ինքնավար պետական կազմավորումները, դեռևս պաշտոնապես չեն ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Նրանց կազմի մեջ մտնող ինքնավար պետական կազմավորումները, ճանաչելով Հայոց ցեղասպանությունը, որպես կանոն դիմում են «մայր» երկրներին՝ կոչ անելով նրանց նույնպես ճանաչել հայերի՝ 1915թ. ողբերգությունը որպես ցեղասպանություն:

Այդ տեսանկյունից զավեշտական է Մեծ Բրիտանիայի պարագան: Ինչպես նշվեց, Մեծ Բրիտանիան կազմված է չորս ինքնավար երկրներից՝ Անգլիա, Շոտլանդիա, Ուելս և Հյուսիսային Իռլանդիա: Դրանցից վերջին երեքը՝ Շոտլանդիան, Ուելսը և Հյուսիսային Իռլանդիան, ինչպես նշվեց, արդեն ճանաչել են Հայոց ցեղասպանությունը, մինչդեռ բրիտանական կառավարությունը, որը տվյալ դեպքում ավելի շատ արտահայտում է Մեծ Բրիտանիայի չորրորդ երկրի՝ Անգլիայի շահերը, քան թե համընդհանուր բրիտանական շահերը, համառորեն շարունակում է Հայոց ցեղասպանությունը չճանաչելու և թուրքական իշխանություններին չդատապարտելու իր քաղաքականությունը՝ անտեսելով անգամ բրիտանական արխիվներում պահվող վիթխարի քանակությամբ արժեքավոր փաստաթղթերը, որոնք վկայում են կատարված ցեղասպանության իրողության մասին: Շատ կարևոր է նաև հետևյալ փաստը:

Խոսքը 1915թ. մայիսի 13-ի (24) Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կառավարությունների համատեղ հայտարարության մասին է, որը նույն օրը միաժամանակ հրապարակվեց նրանց մայրաքաղաքներում՝ համապատասխանաբար Լոնդոնում, Փարիզում և Սանկտ Պետերբուրգում: Նրանում ասվում էր. «Վերջին ամիսներում Հայաստանի քրդերը և թուրքական բնակչությունը զբաղված են հայերի կոտորածներով: Օսմանյան իշխանությունների թողտվությամբ և հաճախ նրանց օգնությամբ նման կոտորածներ են տեղի ունեցել ապրիլի կեսերին Էրզրումում, Դերջանում, Ակնում, Բիթլիսում, Սասունում, Մուշում, Զեյթունում և ամբողջ Կիլիկիայում: Վանի մերձակա 100 գյուղերի համարյա ամբողջ բնակչությունը ոչնչացվել է: Վան քաղաքի հայկական թաղերը շրջապատվել և դեռևս շրջապատված են քրդերի կողմից: Միաժամանակ դատապարտելի է Կոստանդնուպոլսում օսմանյան կառավարության պահվածքը հայ բնակչության նկատմամբ: Ի տես Թուրքիայի կողմից այս թարմ ոճրագործությունների՝ դաշնակից կառավարությունները հայտարարում են Բարձր դռանը, որ օսմանյան կառավարության բոլոր անդամները, ինչպես նաև դրանց մասնակցած նրանց գործակալները, անձնապես պատասխանատու են հայկական կոտորածների համար»[131]: Անտանտի առաջատար երեք երկրների այդ հայտարարությունը, այն երկրների, որոնք տարիներ շարունակ ուղղորդել են համաշխարհային զարգացումները և միջազգային հարաբերությունները, **նորություն էր միջազգային դիվանագիտության պրակտիկայում**: Առաջին անգամ որևէ երկրում կատարված ոճրագործության համար պատասխանատու էր համարվում տվյալ կառավարությունն իր ամբողջ կազմով: Դա խիստ մեղադրանք էր, որն օրակարգի հարց դարձրեց կառավարությունների կոլեկտիվ մեղավորության և պատասխանատվության խնդիրը: Հիշենք, որ այդ մեղադրանքը ներկայացվել է

[131] British Documents. From Foreign Office Press office for Publication in Monday Morning Papers (23 May 1915\); "Свет", Санкт-Петербург, No 124, 23 мая 1915.

թուրքական կառավարությանը ոչ թե Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո, այլ հենց պատերազմի ժամանակ, ինչը, անշուշտ, բարձրացնում է նշված հայտարարության կարևորությունը: Դա չի կորցրել իր նշանակությունը նաև մեր օրերում և մեծապես նպաստել է Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացին: Հետագայում, հատկապես ՄԱԿ-ի ստեղծումից հետո, այդ սկզբունքը դարձավ միջազգային հարաբերությունների անկյունաքարային նորմերից մեկը՝ ցեղասպանությունը դիտարկելով ոչ միայն ոճիր և հանցագործություն տվյալ էթնոսի, ժողովրդի կամ ազգի դեմ, այլև ընդհանրապես ոճրագործություն ու հանցանք համայն մարդկության դեմ:

3. Հայոց ցեղասպանության ճանաչումը Եվրամիության երկպալատանի օրենսդիր մարմնի՝ Եվրոպական պառլամենտի և Եվրոպայի խորհրդի կողմից

Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացում բացառիկ է Եվրոպական միության (ԵՄ) դերակատարումը: Պատմության մեջ իր նախադեպը չունեցող եվրոպական այդ կառույցն այսօր իր շարքերում միավորում է 28 եվրոպական պետություն: Նա ունի իր կառույցները, այդ թվում՝ գործադիր և օրենսդիր մարմինները: ԵՄ օրենսդիր մարմինը նրա պառլամենտն է, որը կազմված է երկու պալատից[132]:

Առաջին պալատը կոչվում է Եվրոպական պառլամենտ (European Parliament), որը հիմնվել է 1979թ. և կազմված է 700 անդամներից:

Երկրորդ պալատը՝ Եվրոպայի խորհուրդն է (Council of Europe), որը կազմված է 47 պետություններից՝ 800 միլիոն բնակչությամբ, գոյություն ունի 1949թ. ի վեր[133]: Հայաստանի Հանրապետությունը նրա անդամ է 2001թ. հունվարի 25-ից:

---

[132] European Parlament -http://en.wikipedia.org/wiki/European _Parlament:

[133] Նույն տեղում:

Եվրապառլամենտը Հայոց ցեղասպանությունը ճանաչել է 1987թ. հունիսի 18-ին՝ ընդունելով հատուկ բանաձև, որտեղ ամրագրված է.

«Եվրապառլամենտը

Համոզված է, որ հայ ժողովրդի ինքնության ճանաչումը Թուրքիայում որպես էթնիկական, մշակութային, լեզվական և կրոնական փոքրամասնություն, բխում է սեփական պատմությունից,

-նկատի առնելով, որ հայկական կողմը 1915թ. իրադարձությունները համարում է ծրագրված ցեղասպանություն՝ ՄԱԿ-ի՝ 1948թ. կոնվենցիայի իմաստով,

-նկատի առնելով, որ թուրքական պետությունը ժխտում է ցեղասպանության մեղադրանքը՝ որպես անհիմն,

-նկատի առնելով, որ թուրքական կառավարությունը, այսօր ժխտելով 1915թ. ցեղասպանությունը, շարունակում է զրկել հայ ժողովրդին իր պատմությունն ունենալու իրավունքից,

-նկատի առնելով, որ պատմականորեն ապացուցված Հայոց ցեղասպանությունը չի արժանացել ո՛չ քաղաքական դատավարության և ո՛չ էլ ստացել է փոխհատուցում,

-նկատի առնելով, որ Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը կդիտվի որպես հեռատես մարդասիրական գործողություն հայերի ռեաբիլիտացիայի նկատմամբ, որը կարող է միայն պատիվ բերել թուրքական կառավարությանը, հավատացած է, որ 1915-1917 թվականների ողբերգական իրադարձությունները, որոնք իրենց մեջ ներգրավեցին Օսմանյան կայսրության տարածքում բնակվող հայերին, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի՝ 1948թ. դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանությունը կանխելու և ցեղասպանության ոճիրը պատժելու կոնվենցիայի իմաստով» ցեղասպանություն են»[134]: Բանաձևը ներկա թուրքական կառավարությունից պահանջում է ճանաչել Հայոց ցեղասպա-

[134] European Parliament Resolution on a Political Solution to the Armenian Question . Doc. A2- 33 /87.

նությունը և երկխոսություն սկսել Թուրքիայի և Հայաստանի ներկայացուցիչների միջև:

Համանման որոշում ընդունեց Եվրապառլամենտի Երկրորդ պալատը՝ Եվրոպայի խորհուրդը 2001թ. մայիսի 14-ի գրավոր Հռչակագրով: Նրանում ասված էր.

«Այսօր, հիշելով 20-րդ դարի առաջին ցեղասպանության՝ Հայոց ցեղասպանության տարեդարձը և արժանին մատուցելով զոհերի հիշատակին՝ դատապարտելով ցեղասպանության ոճրագործության բոլոր դրսևորումները՝ որպես մարդկության դեմ կիրառված ոճրագործություն:

- Գտնելով ցեղասպան գործողությունների հստակ մերժումը որպես գործիք՝ օգնել կանխելու նրանց կրկնումը:

Նկատի առնելով այն փաստը, որ եվրոպական տարբեր հաստատություններ, Եվրոպական խորհրդի մի շարք անդամ-երկրների պառլամենտներ ընդունել են բանաձևեր և հայտարարություններ՝ ճանաչելով Հայոց ցեղասպանությունը, իսկ Ֆրանսիայի Ազգային ժողովը՝ նաև օրենք:

- Հաշվի առնելով, որ Հայոց ցեղասպանության ճանաչումը միջազգային հանրության կողմից էականորեն կօգնի թուրքական իշխանություններին՝ ընդունելու համանման որոշում, և արդյունքում կհանգեցնի Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների բարելավմանը:

Պառլամենտական ասամբլեայի ներքոստորագրյալներս կոչ ենք անում Եվրոպայի խորհրդի պառլամենտական ասամբլեայի բոլոր անդամներին անհրաժեշտ քայլեր ձեռնարկել՝ ճանաչելու հայերի դեմ 20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրության իրականացրած ցեղասպանությունը»[135]:

Ինչպես տեսնում ենք, Եվրոպական միության պառլամենտի երկու պալատների բնութագրումները Հայոց ցեղասպանու-

[135] European Parliamentary Assambly.Doc. 9056 2nd Edition 14 May 2001. Recoginition of the Armenian Genocide . Written Declaration . http:/assembly. coe. int/Documents /WorkingDocs/Doc01/EDOC 9056.htm

թյան վերաբերյալ շատ հստակ են, ոչ երկիմաստ և թուրքական արդի կառավարության ժխտողական դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հարցում խիստ դատապարտող: Այդ իմաստով դժվար է գերագնահատել նրանց միջազգային կարևորությունը Հայոց ցեղասպանությունը 20-րդ դարի առաջին ցեղասպանություն ընդունելու և մարդկության դեմ ոճրագործություն ճանաչելու հարցում: Իսկ Թուրքիան չունի այլ ընտրություն, քան ընդունել և ճանաչել Հայոց ցեղասպանության պատմական իրողությունը:

Եվրամիության պառլամենտի երկու պալատների որոշումները Հայոց ցեղասպանությունը ճանաչելու վերաբերյալ դրականորեն փոխեցին միջազգային քաղաքական մթնոլորտը:

Բ. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ ՈՉ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ

Ինչ վերաբերում է ոչ կառավարական կազմակերպություններին, ապա դրանք շատ են, բազմազան են և տարաբնույթ՝ կոմիտեներ, ասոցիացիաներ, միություններ, խորհուրդներ, ընկերություններ և այլն, և այլն: Նրանց դերը նույնպես շատ էական է: Եվ անհնար է խոսել Հայոց ցեղասպանության միջազգային լայնածավալ ճանաչման գործընթացի մասին՝ առանց հաշվի առնելու հասարակական բազմաթիվ կազմակերպությունների դիրքորոշումը: Ոչ կառավարական կազմակերպություններն ավելի ու ավելի կարևոր դեր են խաղում աշխարհում ոչ միայն հասարակական կյանքում, այլև քաղաքական, գիտական, մարդու իրավունքների, անգամ միջազգային հարաբերությունների ոլորտներում: Եվ նրանց կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումն ու թուրքական ժխտողականության դատապարտումը ցեղասպանության երևույթի ճանաչման ու գնահատման ուշագրավ գործոններից է:

Հայոց ցեղասպանությունը ճանաչել է Խաղաղության կողմնակիցների Համաշխարհային կոնգրեսը

Խաղաղության կողմնակիցների Համաշխարհային կոնգրեսն իր ժամանակի համար մեծ դերակատարում ունեցող կազմակերպություն էր: Նա իր աշխարհագրական, էթնիկ, քաղաքական, գիտական և հասարակական ընդգրկումներով միավորել էր գրեթե բոլոր մայրցամաքների խաղաղասեր ուժերին և ակտիվ գործունեություն էր ծավալել հանուն խաղաղության ամրապնդման, ընդդեմ պատերազմների, ոճրագործությունների, զանազան սպառնալիքների՝ հանուն արդարության, մարդկային և ժողովուրդների արժանապատվության և անվտանգ գոյության հաստատման: Նա իր մասնաճյուղերն ուներ համարյա բոլոր երկրներում, այդ թվում և Հայաստանում: Նրա գործունեության դաշտը շատ լայն էր և բազմազան՝ միջազգային համաժողովների հրավիրում, ցույցերի և միտինգների կազմակերպում և այլն:

1965թ. հուլիսի 15-ին Ֆինլանդիայի մայրաքաղաք Հելսինկիում բացվեց Խաղաղության կողմնակիցների Համաշխարհային կոնգրեսը, որը շատ ներկայացուցչական էր և համարվում էր միջազգային նշանակության կարևոր երևույթ: Կոնգրեսը, ի շարս այլ հիմնախնդիրների, անդրադարձավ նաև Հայոց ցեղասպանության հարցին: Կոնգրեսը ճանաչեց Հայոց ցեղասպանության փաստը՝ գտնելով, որ 1915թ. Օսմանյան կայսրությունում հայերի հետ տեղի ունեցածը ցեղասպանություն էր[136]: Կոնգրեսը դատապարտեց երիտթուրքական ոճրագործների բարբարոսական արարքները, ինչպես նաև ժամանակակից թուրքական իշխանություններին, որոնք հրաժարվում են ճանաչել պատմական արդարությունը: Հելսինկյան Համաշխարհային կոնգրեսի որո-

[136] **N.Hovhannisyan**, The Armenian Genocide , Armenocide-the Most Genocidal Genocide . In Ten Languages of the World. In English , French, Russian, German, Turkish, Japanese, Hungarian, Armenian, Arabic, Persian, Yerevan, 2009, p.572.

շումն իր ժամանակի համար մեծ իրադարձություն էր, քանի որ արտահայտում է երկրագնդի միլիոնավոր մարդկանց կամքն ու տեսակետը:

Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը և Հայոց ցեղասպանության ճանաչումը

Շատ կարևոր է Եկեղեցիների համաշխարհային խորհրդի (World Council of Ghurches) դիրքորոշումը: Դա համաշխարհային նշանակության շատ հեղինակավոր միջազգային էկումենիկ կազմակերպություն է: Նրա հիմնումը տեղի է ունեցել 1948թ. օգոստոսին Ամստերդամում՝ 147 եկեղեցիների ներկայացուցիչների մասնակցությամբ, որի մեջ միավորված են կաթոլիկ, ուղղափառ, բողոքական, Հայ առաքելական, Արևելյան քրիստոնեական, անգլիկան, լութերական, ավետարանական, բապտիստական և այլ 349 եկեղեցիներ՝ իրենց 2 մլրդ հավատացյալներով: Այլ կերպ ասած, նրանում ներկայացված է քրիստոնեական հոգևոր աշխարհն իր ամբողջ սպեկտրով:

Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը պարբերաբար գումարում է իր համաժողովները՝ ասամբլեաները, որտեղ քննարկվում են ոչ միայն զուտ կրոնական, էկումենիկ հարցեր, այլև համամարդկային խնդիրներ, մարդու իրավունքների, քրիստոնյաների դեմ կիրառվող ոճրագործությունների, բռնարարքների, այդ թվում և ցեղասպանությունը կանխելու, դրա հետևանքները վերացնելու և քրիստոնեական մարդասիրական սկզբունքները կյանքում ավելի հետևողականորեն կիրառելու խնդիրներ:

1983թ. հունիսի 24-ից օգոստոսի 10-ը Վանկուվերում՝ Կանադա, կայացավ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի VI ասամբլեան, որի օրակարգի կարևորագույն հարցերից մեկը

Հայոց ցեղասպանության հարցն էր[137]: VI ասամբլեայի ընդունած բանաձևը ճանաչեց Թուրքիայում հայերի հետ պատահած ողբերգությունը, մեկուկես միլիոն հայերի բնաջնջումը և կես միլիոն հայերի բռնի տեղահանումն իրենց պատմական հայրենիքից այս դարի սկզբներին՝ որպես ցեղասպանություն, ընդգծելով. «Այդ իրադարձությունների հասարակական ճանաչումը էական է, որպեսզի դրանց հանցագործները չկարողանան շարունակել ծնել դատապարտման արժանի բռնարարքներ, և որպեսզի հայ ժողովրդի պատմությունը հիշելով՝ մյուս ժողովուրդները կարողանան խուսափել նման ճակատագրից»[138]: Ասամբլեան անթույլատրելի համարեց համաշխարհային հանրության լռությունը նման հարցերի, այսինքն՝ ցեղասպանությունների շուրջ, որի հետևանքով տեղի են ունենում անընդունելի բռնարարքներ, և իր մտահոգությունը հայտնեց Միավորված ազգերի կազմակերպությանը, նրա Գլխավոր քարտուղարին՝ Ցեղասպանության ոճրագործությունը կանխելու և պատժելու մասին ՄԱԿ-ի համապատասխան կոնվենցիայի դրույթները հետևողականորեն կիրառելու և համապատասխան տեղեկատվություն ապահովելու կապակցությամբ: Եկեղեցիների Համաշխարհային խորհուրդը միաժամանակ դատապարտեց, այդ թվում և Հայոց ցեղասպանությունը ժխտելու բոլոր փորձերը:

Ահա այսպիսին էր Եկեղեցիների համաշխարհային խորհրդի դիրքորոշումը առաջինն աշխարհում՝ 301թ. քրիստոնությունը պաշտոնապես ընդունած հայ ժողովրդի ցեղասպանության հանդեպ:

---

[137] Official Report VI Assambly World Council of Churches, Vancouver , Canada, 24 July-10 August 1983. 5.11 Minutes on Public Issues of Continuing Concern to the WCC . Minutes on the Armenian Genocide.

[138] World Council of Churches . August 10 , 1983.http:// www. armenian genocide .org/ Affirmation 65/ current_category.5/ affermation_det

3. Երիտասարդ մարդկանց քրիստոնեական ասոցիացիան (ԵՄՔԱ)
Հայոց ցեղասպանության ճանաչումը

Հաջորդ և ամենահին ոչ կառավարական կազմակերպությունը՝ կապված Հայոց ցեղասպանության ճանաչման հետ, Երիտասարդ մարդկանց քրիստոնեական ասոցիացիան է, որը հիմնվել է Լոնդոնում դեռևս 1844թ.: Այն աշխարհում լայն տարածում ստացած շարժում է, որն ունի 45 միլիոն անդամ ԵՄՔԱ-ի համաշխարհային ալյանսի 124 դաշնային բաժանմունքներում[139]: ԵՄՔԱ-ն դաշնային միություն է՝ ձևավորված տեղական և ազգային կազմակերպություններից՝ կամավորության սկզբունքով և բաց է բոլորի համար, անկախ նրանց սոցիալական պատկանելությունից, տարիքից և սեռից: Նրա հիմնական նպատակն է քրիստոնեական սկզբունքների ներդրումը կյանքում՝ ելնելով «առողջ հոգի, միտք և մարմին» սկզբունքից:

2002թ. հուլիսի 14-20-ը գումարվեց ԵՄՔԱ-ի 15-րդ կոնգրեսը Օքսթեփեկում (Մեքսիկա): Հենց այդ կոնգրեսում ասոցիացիան սահմանեց իր դիրքորոշումը Հայկական հարցի նկատմամբ, ի մասնավորի՝ Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում: Նա 2002թ. հուլիսի 20-ին ընդունեց բանաձև Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ: Ահա այդ բանաձևի ամբողջական տեքստը:

«ԵՄՔԱ-ի հայկական բաժանմունքի հետ աշխատելու ընթացքում ԵՄՔԱ-ի եվրոպական ալյանսը խորապես ըմբռնեց այն տրավման, որ ապրում է հայ ժողովուրդը՝ որպես արդյունք շարունակվող աշխարհի մեծ մասի այն անտարբերության՝ հանդեպ ցեղասպանության, որն իրագործվել է նրա նկատմամբ 20-րդ դարի սկզբներին:

Որպես քրիստոնեական երիտասարդական շարժում՝ ԵՄՔԱ-ի համաշխարհային ալյանսը հավատում է, որ անցյալի

[139] YMCA http://www. en. wikipedia .orgwiki, YMCA

անարդարությունների ճանաչման ձախողումը նպաստում է ապագայում նրանց կրկնվելուն:

Այս համոզմունքով ԵՄՔԱ-ի համաշխարհային ալյանսի Համաշխարհային խորհուրդը՝ գումարված 2002թ. Օքսթեփեկում, (Մեքսիկա) ճանաչում և դատապարտում է հայ ժողովրդի դեմ իրագործված ցեղասպանությունը և կոչ անում բոլոր ազգային ԵՄՔԱ-ներին նման ճանաչում և դատապարտում[140]:

Կարծում ենք, որ այդ փաստաթուղթը՝ հավելումն Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդունած բանաձևի, ավելի հստակ և ամբողջական պատկերացում է տալիս Հայոց ցեղասպանության հարցում աշխարհի քրիստոնյաների դիրքորոշման մասին: Դա ավելի համոզիչ է դարձնում «Հայոց ցեղասպանության ճանաչումը որպես միջազգայնորեն ճանաչված ցեղասպանություն» տեսակետը:

4 . Ժողովուրդների մշտական տրիբունալի դատավճիռը երիտթուրքերի գլխավոր հանցանքի՝ Հայոց ցեղասպանության կապակցությամբ

Ժողովուրդների մշտական ատյանը (Permanent Peoples' Tribunal) միջազգային կարծիքի ատյան է և նշանակալի դեր է կատարում միջազգային իրավական համակարգում: Նրա որոշումները, գործողությունները, դիրքորոշումները և կարծիքը բարձր է գնահատում միջազգային հանրությունը:

Ժողովուրդների մշտական տրիբունալը կամ ատյանը հիմնվել է 1979թ. Բոլոնիայում, Իտալիա: Նրա հիմնադիրն է իտալացի սենատոր Լեսլիո Բասսոն: Դա, ինչպես նշված է նրա Կանոնադրության մեջ, Միջազգային կարծիքի ատյան է: Իր գոյության ընթացքում նա անդրադարձել է Տիբեթի, Էրիտրեայի,

---

[140] European Alliance of YMCAs, July 20, 2002. 15th World Council of YMCAs, Oaxtepec , Mexico , 14th-20th July, 2002, http;//www. armenian genocide .org/Affirmation .271 current_category.5/affirmation_d...

Ֆիլիպինների, Արևելյան Թիմորի, Արգենտինայի, Զաիրի, Նիկարագուայի, Գվատեմալայի, Արևմտյան Սահարայի, Սալվադորի և այլ երկրների հարցերի և խնդիրների քննարկմանը:

Այն իր գործունեության մեջ հատուկ տեղ է հատկացրել նաև Հայկական հարցի քննարկմանը՝ հանգամանորեն անդրադառնալով, ինչպես նշված է ուղեկցող փաստաթղթում, Հայոց ցեղասպանությանը: Հիմնովին ուսումնասիրելով Հայկական հարցը, այդ թվում և պատմական կտրվածքով, և նրա դրսևորումները պատմական տարբեր փուլերում՝ **Ժողովրդական մշտական տրիբունալը հայ ժողովրդի պատմության ամենասարսափելի շրջանը համարում է Օսմանյան տիրապետության շրջանը, երբ երիտթուրքական դահիճներն իրագործեցին իրենց գլխավոր հանցագործությունը՝ Հայոց ցեղասպանությունը**: 1984թ. ապրիլի 16-ին ընդունված վերդիկտում՝ դատավճռում, Ժողովրդական մշտական տրիբունալն արձանագրում է, որ երիտթուրքերի ոճրագործության արդյունքում «Արևելյան Անատոլիայում ամբողջ հայ ժողովուրդն անհետացավ»[141]: Դա իրավական և գիտական առումով Հայոց ցեղասպանության բուն էությունը հիմնովին բացահայտող և, որ ամենագլխավորն է, անառարկելի գնահատական է: Դատավճռում նաև ասված է. «Յուրաքանչյուր ժողովուրդ գոյության իրավունք ունի խաղաղորեն պահպանելու իր տարածքի սեփականությունը և վերադառնալու այնտեղ, եթե նա դրանից վտարվել է»[142]: Սակայն օսմանյան կառավարությունը, ինչպես ասված է դատավճռում, զրկեց Օսմանյան կայսրության հայերին այդ իրավունքից: Ատյանը դատապարտեց հայերի նկատմամբ երիտթուրքերի նման բարբարոսական քաղաքականությունը:

Վերդիկտում կա մի նրբին դիտարկում, որ թուրքական կառավարությունը ոչ միայն ինքն է փորձում ժխտել Հայոց

---

[141] Permanent Peoples' Tribunal. Verdict of the Tribunal, 16 Apri, 1984/Affirmation 66/current_ category, ,5/affirmation_det

[142] Նույն տեղում:

ցեղասպանությունը, այլև մեծ ճիգեր է գործադրում, որպեսզի այլ երկրներ և կազմակերպություններ նույնպես ժխտեն Հայոց ցեղասպանության փաստն իսկ: Ահա դատավճռի այդ հատվածը. «Թուրքական յուրաքանչյուր կառավարություն, 1915թ. սկսած, հրաժարվում է համաձայնել գենոցիդային դեպքերի համար պատասխանատու լինելու հետ: Թուրքական կառավարությունը մեծ ջանքեր է գործադրում՝ խափանելու Հայոց ցեղասպանության ճանաչումը: Տրիբունալն այն տեսակետին է, որ ցեղասպանության հանցանքի համար պատասխանատվությունը մնում է իրողություն»[143]:

Այսպիսով, Ժողովրդական մշտական տրիբունալի՝ 1984թ. վերդիկտը, օսմանյան ռազմական ատյանի՝ 1919թ. վերդիկտի և Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի՝ 2002թ. որոշման հետ միասին, երեք իրավական գլխավոր փաստաթղթերն են, որոնք հիմք են տալիս եզրակացնելու, որ Հայոց ցեղասպանությունն իրավական առումով ճանաչված ցեղասպանություն է:

5.Նոբելյան մրցանակակիրները Հայոց ցեղասպանությունը Թուրքիայի կողմից ճանաչելու, հայ-թուրքական հաշտեցման և հայ-թուրքական սահմանները բացելու մասին

Հայոց ցեղասպանության ճանաչման գիտական ասպեկտը, ինչպես նշել ենք, չի կարող սահմանափակվել միայն Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիայի ղեկավարության նամակով Թուրքիայի վարչապետ Էրդողանին, նրա այլ որոշումներով և փաստաթղթերով: Կան նաև միջազգային մեծ ճանաչում ունեցող այլ գիտական հաստատություններ, որոնք նույնպես անդրադարձել են Հայոց ցեղասպանությանը և իրենց հեղինակավոր տեսակետն արտահայտել դրա վերաբերյալ:

---

[143] Նույն տեղում:

Դրանց մեջ իր նշանակությամբ առանձնանում է Նոբելյան մրցանակի դափնեկիր, Հոլոքոստը վերապրած Էլի Վեսելի «Հանուն հումանիզմի» հիմնադրամը, որը պատրաստել է հատուկ փաստաթուղթ Հայոց ցեղասպանության և հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ: 2007 թվականի ապրիլի 9-ին այդ փաստաթուղթն ընդունել և ստորագրել են Նոբելյան մրցանակի 53 դափնեկիրներ՝ աշխարհահռչակ ակադեմիկոս գիտնականներ, գրողներ, ֆիզիկոսներ, մաթեմատիկոսներ, տնտեսագետներ և Նոբելյան մրցանակների արժանացած այլ գիտնականներ, որոնք աշխարհում գիտական այդ ամենաբարձր պարգևը շահել են վերջին երեսուն տարիների ընթացքում:

Այդ Հատուկ փաստաթղթում «Կոչ է արվում Հայաստանին և Թուրքիային դիվանագիտական հարաբերություններ հաստատել առանց նախապայմանների, բացել սահմանները և հաստատել քաղաքակիրթ հասարակությանը վայել շփումներ»[144]: Աշխարհի այդ խոշոր գիտնականները «պարտավորեցնում են թուրքական կառավարությանն ընդունել, որ հայերի՝ 1915-1918 թվականների զանգվածային սպանությունները և բռնի տեղահանումներն Օսմանյան կայսրությունում ցեղասպանություն են»[145]:

Շատ կարևոր է նաև Նոբելյան մրցանակի դափնեկիրների փաստարկներն առ այն, որ «…նրանք հավանություն են տալիս 2003 անկախ ուսումնասիրություններին, որոնք եզրակացրել են, որ 1,5 մլն օսմանյան հայերի սպանությունը լրիվ համապատասխանում է ցեղասպանության միջազգայնորեն ընդունված սահմանումին»[146]:

Նրանց կարծիքով. «Բաց սահմանները մեծապես կբարելավեն սահմանի երկու կողմերի համայնքների տնտեսական պայմանները և կհեշտացնեն մարդկային փոխհամագործակ-

---

[144] Nobel Laureates Call for Armenian-Turkish Reconciliation, http://www.rferl .org/content//article /1075779.html

[145] Նույն տեղում:

[146] Նույն տեղում:

ցությունը, որը էական է փոխհասկացման համար»[147]:

Նոբելյան մրցանակակիրները գտնում են, որ թուրքական և հայկական կառավարությունները պետք է մեղմացնեն իրենց ձգձգվող լարվածությունը «լրացուցիչ պայմանագրերի և լրիվ դիվանագիտական հարաբերությունների միջոցով», ինչը, հավատացած են նրանք, կնպաստի երկկողմանի գիտական կապերին և ուսանողության փոխանակմանը:

Շարունակելով իրենց պահանջները՝ Նոբելյան մրցանակակիրները կոչ են անում թուրքական կառավարությանը՝ վերացնել թուրքական քրեական օրենսգրքի այն հոդվածը, որը հանցագործություն է դիտում թուրքիզմի ապաինտեգրացումը և օգտագործվում ընդդեմ այլախոհ մտավորականների, որոնք հարց են բարձրացնում պաշտոնապես հրաժարվել Հայոց ցեղասպանության ժխտումից:

Նոբելյան մրցանակակիրների այս փաստաթուղթն աննախադեպ երևույթ էր, կարևոր ներդրում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացում, ամրապնդում էր այդ գործընթացի գիտական հիմքերը, ոչ մի տեղ չէր թողնում Հայոց ցեղասպանության փաստը կասկածի տակ դնելու՝ մի կողմից, և անելանելի դրության մեջ դնում Թուրքիայի՝ ցեղասպանության ժխտման քաղաքականությունը՝ մյուս կողմից:

Իսկ թուրք ականավոր ցեղասպանագետ պրոֆեսոր Թաներ Աքչամը, ինչպես արդեն նշել ենք, Թուրքիան համարում է «Ցեղասպանության ժխտման ինդուստրիայի հիմնադիր»:

---

[147] Նույն տեղում:

6. Թուրքիայի Մարդու իրավունքների ասոցիացիայի Ստամբուլի բաժանմունքի դիրքորոշումը՝ «Խոնարհում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին»

Հայոց ցեղասպանության վերաբերյալ արտասահմանյան աղբյուրների փնտրտուքի ընթացքում մենք գտանք մի նյութ, որը մեծապես մեզ զարմացրեց, և մենք որոշեցինք անպայման այդ նյութը ներառել մեր ուսումնասիրություններում, այդ թվում և սույն աշխատության մեջ: Խոսքը «Թուրքիայի Մարդու իրավունքների ասոցիացիայի Ստամբուլի բաժանմունքի դիրքորոշման» մասին է հանդեպ Հայոց ցեղասպանության, որը, չենք թաքցնում, իրոք, խիստ զարմացրեց մեզ: Հասկանալի է, պետք չէ ծայրահեղության մեջ ընկնել և գերագնահատել այդ նյութի կամ փաստաթղթի նշանակությունը, սակայն ճիշտ չի լինի նաև, եթե մենք անտեսենք այն և լռությամբ անցնենք նրա կողքով:

Եվ այսպես...

Ամենայն հավանականությամբ Թուրքիայում տեղի են ունենում որոշակի, թերևս սաղմնային վիճակում, խմորումներ, և դրսևորվում միտումներ, հատկապես մտավորականության շրջաններում, ինչը կարող է նոր հեռանկարների հույսեր բացել: Թուրքիայում զգալի թիվ են կազմում այն մտավորականները, որոնք համարձակորեն հանդես են գալիս երկրում քաղաքական փոփոխություններ կատարելու, Հայոց ցեղասպանությունը ճանաչելու և իր պատմության, նրա սև էջերի հետ հաշտվելու պահանջներով: Դրանց թվում են Ռազիպ Զարաքոլուն, որը բազմիցս եղել է Հայաստանում, հանդիպել ինձ և այլ արևելագետների ու պատմաբանների հետ, մեր որոշ աշխատություններ թարգմանել թուրքերեն, Թաներ Աքչամը, որը հետևողական դիրքորոշում ունի ընդդեմ Հայոց ցեղասպանության ժխտման հարցում և հեղինակն է «Թուրքիան ցեղասպանության ժխտման ինդուստրիայի հիմնադիրն է» բանաձևի, Այշեն, Օրհան Փամուկը, Մու-

ռատ Բելգեն, Անկարայի, Ստամբուլի և Թուրքիայի այլ համալսարանների պրոֆեսորներ, գրողներ, հրատարակիչներ և այլն: Իսկ պրոֆեսոր Մուրատ Բելգեն և այլ մասնագետներ Թուրքիայից ու այլ երկրներից Հայաստանի կառավարության հրավերով 2006 թվականին մասնակցել են Երևանում Հայոց ցեղասպանության 90-ամյակին նվիրված հանդիսավոր միջոցառումներին: Տողերիս հեղինակը Հայաստանի Հանրապետության պրեզիդենտ Ռոբերտ Քոչարյանի հրամանագրով նշանակվել էր Հայոց ցեղասպանության 90-ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպման պետական հանձնաժողովի անդամ: Այդ առիթով ելույթ ունեցավ նաև թուրք պրոֆեսոր Մուրատ Բելգեն, որը գրավեց ներկաների ուշադրությունը: Նա իր ելույթում ասաց հետևյալը. **«Ես պատասխանատու չեմ 1915թ. Թուրքիայում իրագործված Հայոց ցեղասպանության համար, քանի որ ես այդ ժամանակ դեռևս ծնված չէի: Բայց ես պատասխանատու եմ այսօր Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանությունը ժխտելու համար»,** որը ներկաների կողմից արժանացավ բուռն ծափահարությունների:

Թուրքիայի Մարդու իրավունքների ասոցիացիան հիմնվել է 1986թ., նրանում մեծ դեր ունեն իրավաբանները, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչները, մտավորականության տարբեր խավերը և քաղաքական բանտարկյալների ազգականները: Նրա շտաբ-կայանը գտնվում է Անկարայում, ունի 34 մասնաճյուղ Թուրքիայի 81 նահանգներում, իսկ անդամների ընդհանուր թիվը հասնում է 17 հազարի:

Թուրքական կառավարությունը մշտապես խառնվում է ասոցիացիայի գործերին, հետապնդում է նրա գործունյա անդամներին, որոնցից 14-ը սպանվել են: Ասոցիացիան իր տեսադաշտում է պահում մարդու իրավունքների պաշտպանության և քրդական հարցերը, բանտարկյալների, նրանց նկատմամբ կտտանքներ կիրառելու, կանանց իրավունքների, երեխաների պաշտպանության և համանման այլ հարցեր:

Մարդու իրավունքների ասոցիացիան անդրադառնում է նաև Հայոց ցեղասպանության ճանաչման հարցին: Այդ տեսանկյունից ուշագրավ են Թուրքիայի Մարդու իրավունքների ասոցիացիայի Ստամբուլի բաժանմունքի դիրքորոշումը և գործունեությունը:

Նա 2006թ. ապրիլի 24-ին անդրադարձավ Հայոց ցեղասպանության 90-ամյա տարելիցին, որի վերաբերյալ մամուլի հատուկ թողարկում (Press Release) է եղել: Ահա այդ փաստաթղթի հիմնական հարցադրումները և բնորոշումները.«Այս օրը՝ ապրիլի 24-ը, համայն աշխարհում ճանաչված է որպես մի տարեթիվ, որը խորհրդանշում է Հայոց ցեղասպանությունը: Միայն Թուրքիայում է, որ դրա վրա տաբու է դրված: Թուրքական պետությունը զորակոչում է իր բոլոր ռեսուրսները՝ ժխտելու այս օրվա իմաստը»[148]: Ասոցիացիան հավաստում է, որ ցեղասպանության ժխտումն ինքնին մարդու իրավունքների կոպիտ խախտում է, որը «…անհատներին զրկում է իր նախնիներին սգալու իրավունքից՝ ազգի էթնիկական զտման, բոլոր տարիքի մարդկանց, բոլոր մասնագիտությունների, սոցիալական բոլոր խավերի, կանանց՝ միայն այն բանի համար, որ նրանք հայեր էին»[149]:

Այնուհետև Ստամբուլի բաժանմունքի հրապարակած փաստաթղթում ասվում է. «Ամեն առիթով Թուրքիայում ժըխտվում է ոչ միայն հայ ժողովրդի հոգեվարքը, այլև փորձեր են կատարվում արդարացնելու ցեղասպանությունը: Ժխտումն ինքնին ցեղասպանության բաղկացուցիչ մասն է և ցեղասպանության շարունակության արդյունքը»[150]:

Մարդու իրավունքների Ստամբուլի բաժանմունքի անդամները, միանալով հայ սգակիրներին, հայտարարում են. «Այսօր մենք՝ որպես մարդու իրավունքների պաշտպաններ, կցան-

---

[148] Human Rights Association of Turkey . Istanbul Branch , Press Release . 24th April 2006, http:// en.wikipedia.org/wiki/Human_Rights _Assosiation _ (Turkey)

[149] Նույն տեղում:

[150] Նույն տեղում:

կանայինք դիմել բոլոր հայերին Թուրքիայում և աշխարհի բոլոր մասերում և ասել նրանց՝ մենք ցանկանում ենք կիսել ձեր սրտի ցավերը և խոնարհվել ձեր կորուստների հիշատակի առջև: Նրանք նաև մեր կորուստներն են: Մեր պայքարը Թուրքիայում մարդու իրավունքների համար միևնույն ժամանակ մեր սուգն է մեր ընդհանուր կորուստների համար և հարգանք ցեղասպանության զոհերի հանդեպ»[151]:

Մարդու իրավունքների ասոցիացիայի Ստամբուլի բաժանմունքի գլխավոր կարգախոսը դառնում է՝ «ԱՅԼԵՎՍ ԵՐԲԵՔ»:

Չենք կարծում, որ թուրքական այս փաստաթուղթը մեկնության կարիք ունի: Ամեն ինչ ասված է հստակ: Միայն կցանկանայինք շեշտել, որ այս փաստաթուղթն արդի թուրքական կառավարության քաղաքականությունը Հայոց ցեղասպանության ճանաչելու հարցում իր ճշմարտությամբ, անողոք քննադատությամբ, իրերն ու դեպքերն իրենց անուններով կոչելու, թուրքական նախորդ և ներկա ղեկավարությանը մեղադրանք ներկայացնելու առումով աննախադեպ մերկացնող փաստաթուղթ է:

Մյուս կողմից, առանց չափազանցության գիրկն ընկնելու, կարելի է խոսել թուրքական հասարակության ներսում նոր միտումների երևան գալու և քաղաքական նոր մթնոլորտի ձևավորման հնարավորության մասին: Եվ ապագան ցույց կտա, թե արդյո՞ք Թուրքիան պատրաստ է մինչև վերջ այդ ուղիով ընթանալու:

Դժբախտաբար ժամանակակից Թուրքիան դեռևս պատրաստ չէ դրան:

---

[151] Նույն տեղում:

50. Ա Մ Փ Ո Փ ՈՒ Մ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ -ԱՐՄԵՆՈՑԻԴ-
ՀԱՅԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԴԵՆ ՄԻՋԱԶԳԱՅՆՈՐԵՆ
ՃԱՆԱՉՎԱԾ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ Է

Եվ այսպես, Հայոց ցեղասպանությունից անցել է ավելի քան 100 տարի: Այդ ժամանակահատվածը համարձակորեն կարելի է ասել, որ եղել է Հայոց ցեղասպանության ճանաչման հաղթարշավի անընդմեջ տարիներ:

Կային ժամանակներ, երբ «Հայոց ցեղասպանությունը համարվում էր մի մոռացված ցեղասպանություն»: Բայց «Մոռացության գնացքն արդեն գնացել է»: Այսօր Հայոց ցեղասպանությունը հայտնի է համաշխարհային հանրությանը, այդ մասին գիտեն բոլորը՝ ահելները և ջահելները, տղամարդիկ և կանայք, անգամ դեռահասները: Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչել են աշխարհի մոտ հիսուն պետություններ և պետական կազմավորումներ, անթիվ պետական այրեր, ականավոր գիտնականներ, արվեստագետներ և արվեստաբաններ, մշակույթի գործիչներ, այդ մասին գիտեն տարբեր ռասաների, էթնոսների, ազգերի ու ազգությունների պատկանող հարյուր միլիոնավոր մարդիկ և այլն, և այլն:

Միայն մի պետություն կա, որը չի ճանաչել և շարունակում է համառորեն չճանաչել Հայոց ցեղասպանությունը: Դա Օսմանյան կայսրության ժառանգորդ «Թուրքիա» կոչեցյալ պետությունն է, որը թուրք պատմաբան Թաներ Աքչամի կողմից ստացել է «Ցեղասպանության ժխտման ինդուստրիայի հիմնադիր» ստորացուցիչ հորջորջումը: Իսկ Ֆրանսիայի պրեզիդենտ Մակրոնը, նկատի ունենալով Հայոց ցեղասպանության ժխտումը արդի Թուրքիայի կողմից, նշել է, որ «Ժխտողականությունը չի կարող լինել կառուցողական»: Հայտնի է, որ Օսմանյան կայսրությունը և նրա ժառանգորդը՝Թուրքիան՝ թուրանիզմի բաստիոնը, պատմության մեջ մտել են որպես հետամնաց, ավելի ճիշտ՝ ամենա-

հետամնաց, բարբարոսական, արյունռուշտ պետական կազմավորումներ: Եվ մինչև այսօր Թուրքիան չի ցանկանում իր վրայից դեն նետել հետամնացության իր հնաոճ զգեստը, քանի որ նա այդ «հնամաշ» շորի մեջ իրեն շատ հարմար է զգում:

Ստացվում է, որ համարյա ամբողջ աշխարհը Հայոց ցեղասպանության հարցում մի կողմ է, այսինքն՝ ճանաչում է այն, իսկ հետամնաց, բարբարոս Թուրքիան՝ մեկ այլ կողմ: Ծիծաղելի է, չէ՞, հարգելի՛ ընթերցող:

Հանրահայտ է, որ պատմաբանները, բախումնաբանները, քաղաքագետները և մշակութաբանները վիթխարի աշխատանք են կատարել Հայոց ցեղասպանության ուսումնասիրության ուղղությամբ, բազմաթիվ գիտական լուրջ մենագրություններ են հրատարակվել Հայաստանում, ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում, Ռուսաստանում, Ֆրանսիայում, Կանադայում, Իտալիայում, Լիբանանում, Սիրիայում, Եգիպտոսում, Իսրայելում, Իրանում, Արգենտինայում, Ուրուգվայում, Բրազիլիայում և շատ այլ երկրներում: Կցանկանայինք հիշատակել և մեր աշխատությունը, որը թարգմանվել է հայերենից թուրքերեն և լույս տեսել Ստամբուլում[152]: (Տե՛ս Նիկոլայ Հովհաննիսյան, Հայերի ցեղասպանությունը. Հայասպանություն):

Կուտակված հսկայածավալ այդ տարաբնույթ նյութերի ուսումնասիրությունն ու վերլուծությունը և հայեցակարգային նոր մոտեցումների ու հիմնադրույթների արդյունքների ամփոփումը գալիս են հաստատելու Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիայի անառարկելի, դարակազմիկ ամփոփիչ եզրակացությունն առ այն, որ **«Հայոց ցեղասպանությունը հաստատված է միջազգային գիտական, իրավական և մարդու իրավունքների հանրության կողմից»**[153]: Իսկ «Միջազգային գիտական,

---

[152] **Nikolay Hovhannisyan,** Ermeni Soykirimi. Ermenikirim, Istanbul, 2005, s.120, թուրքերեն.

[153] International Assosiation of Genocidal Scholars' Letter on calls for «Impartial Sudy» http:// նշված է Ցեղասպանագետների միջազգային

իրավական և մարդու իրավունքների հանրություն» հասկացության ամբողջությունն արդի աշխարհի ամենաբարձր արժեքային համակարգի հիմքն է: Արժեքային այդ համակարգը իրեն արժանի մրցակից չունի և ելակետային է համարվում արդի աշխարհի տարբեր բնույթի երևույթների և իրադարձությունների, այդ թվում և ցեղասպանության գնահատման խիստ պատասխանատու հարցում:

Միաժամանակ վերոնշյալ փաստերը հաստատում են նաև այն տեսակետի ճշմարտացիությունը, որ **«Միայն հայերը չէ, որ հաստատում են Հայոց ցեղասպանությունը, այլ դա գիտնականների մոտ տիրապետող կարծիք է»,** ինչպես նշված է Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիայի նամակում՝ հասցեագրված Թուրքիայի վարչապետ Էրդողանին:

Այսպիսով, ցեղասպանագիտությունը, պաշտոնական փաստաթղթերը և նյութերը, զանազան բանաձևերը, հռչակագրերը և տեսադրույթները հաստատում և հիմք են տալիս հայտարարելու, որ Հայոց ցեղասպանություն-Արմենոցիդ –Հայասպանությունն արդեն միջազգայնորեն ճանաչված ցեղասպանություն է: Դա անժխտելի ճշմարտություն և նույնպիսի անհերքելի իրողություն է, ինչպես հրեական «Շոա- Հոլոքոստ- գենոցիդը», ինչպես XX-XXI դարերում Եվրոպայում, Ասիայում և Ամերիկայում իրագործված մյուս բոլոր ցեղասպանությունները:

Հայոց ցեղասպանության հիմնախնդիրը դուրս է եկել զուտ հայ-թուրքական շրջանակներից և ձեռք բերել միջազգային կարգավիճակ:

ասոցիացիայի նամակում՝ հասցեագրված Թուրքիայի վարչապետ Էրդողանին:
npfdinfo.blogspot .com/2005.06/iags-letter-on-calls-for-impartial .html

51. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԻՍՐԱՅԵԼԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ: ԱԶԳԱՅԻՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ. ՀԱՅԱՍՏԱՆ – ԻՍՐԱՅԵԼ. ԳԻՏԱԺՈՂՈՎ

2018թ. դեկտեմբերի 14-ին կայացավ Հայաստանի հրեական համայնքի և Հայաստան-Իսրայել հասարակական ֆորումի գիտական համաժողովը՝ նվիրված Հայաստանի և Իսրայելի պատմական փոխհարաբերություններին և նրանց անցած պատմական ուղուն: Համաժողովի թեման էր «Ազգային աղետներից մինչև պետականության վերածնունդը»: Այդ ինքնատիպ գիտաժողովին մասնակցում էին և զեկուցումով հանդես եկան ակադեմավոր գիտնականներ Հայաստանից ու Իսրայելից: Ողջույնի խոսքով ներկաներին դիմեց Հայաստանի հրեական համայնքի նախագահ Ռիմա Վարժապետյանը:

Ստորև ընթերցողին ենք ներկայացնում մեր զեկուցումը, քանի որ նրանում քննարկվող հարցերն ուղղակի առնչություն ունեն ընթերցողի դատին հանձնվող մեր սույն մենագրական ուսումնասիրությանը, որը թվով մեր 97-րդ մենագրությունն է:

Հայաստանը և Իսրայելը, հայերը և հրեաներն անցել են պատմական երկար ուղի, և շատ հաճախ խաչվել են նրանց ճակատագրերը: Նրանք ունեցել են վերելքներ և անկումներ, երբեմն հայտնվել են օտար նվաճողների տիրապետության ներքո, բայց մշտապես պահպանել են իրենց ազգային ինքնությունը, դիմապատկերը, լեզուն, մշակույթը և կրոնական պատկանելությունը, մի խոսքով, իրենց ազգային «եսը»: Դա պատմության հրաշքներից մեկն է: Պատմական-քաղաքական տեսանկյունից Հայաստանն ու Իսրայելն ունեցել են ինչպես ընդհանրություններ, այնպես էլ առանձնահատկություններ:

Նախ՝ ընդհանրությունների մասին:

Առաջին, Հայաստանը և Իսրայելը պատկանում են միևնույն աշխարհաքաղաքական արեալին, որը հնում կոչվում էր Առաջավոր Ասիա, իսկ XIX դարի սկզբներից՝ Մերձավոր Արևելք: Այդ արեալը իր կարևորությամբ բացառիկ դերակատարում է ունեցել համաշխարհային պատմության մեջ:

Երկրորդ, հայերը և հրեաները նշված տարածքի հնաբնակներն են: Նրանք ոչ թե եկվորներ, այլ բնիկ, ավտոխտոն ժողովուրդ են: Առաջավոր Ասիան նրանց բնօրրանն է, որտեղ նրանք ձևավորվել են որպես ժողովուրդ և ազգ: Այստեղ են կերտվել նրանց պատմությունը, մշակույթը և նրանց բնորոշ ազգային սովորույթները:

Երրորդ, Առաջավոր Ասիայում է դեռևս հնագույն ժամանակներում՝ մեր թվարկությունից առաջ, ստեղծվել հրեաների ու հայերի պետականությունը: Եղել է հրեական երկու պետություն՝ **Իսրայել** և **Իուդեա (Judea)** անվանումով:

Հայկական պետությունը կրել է **Հայաստան և Արմենիա** անվանումները, և այժմ ընդունելի է դառնում Արմենիայի նույնականացումը **Ուրարտուի և Նաիրիի** հետ[154]:

Սակայն պետականության հարցում կա մի նրբություն: Խոսքը Հայաստանում Արտաշիսյան դինաստիայի և նրա ամենափայլուն ներկայացուցչի՝ Տիգրան Մեծի մասին է: Արքայից արքա Տիգրան Մեծը թագավորել է մ.թ.ա. 95-55 թվականներին, մոտ քառասուն տարի: Նրա օրոք հայոց թագավորությունը, տանելով փառապանծ հաղթանակներ, մ.թ.ա. 83թ. վերածվեց կայսրության, որի կազմում մտնում էին Առաջավոր Ասիայի բազմաթիվ երկրներ, այդ թվում՝ Սիրիան, Լիբանանը, Իրաքը, Հորդանանը, Պաղեստինը, Լիբիան, Փյունիկիան, Հայաստանից վասալական կախման մեջ էին գտնվում Եգիպտոսը, Վրաստանը, միջինասիական մի շարք երկրներ և այլն: Հռոմի սենատոր և համաշխարհային հռչակ վայելող փիլիսոփա Ցիցերոնը Տիգրան

[154] Տե՛ս **N. Hovhannisyan,** King of Kings Tigran the Great and the Armenian Empire as Evaluated by Modern Arab Historiography, Yerevan, p.11-12.

Մեծին համարել է **«Ասիայի ամենահզոր կայսրը»**[155]: Մի շարք հեղինակներ մանրամասն անդրադարձել են հայոց կայսրության սահմաններին: Ըստ Մուդավարի. «Տիգրան Մեծի կայսրությունը տարածվում էր արևելքում՝ Կասպից ծովից մինչև Միջերկրական ծով՝ արևմուտքում, և հյուսիսից՝ Կովկասից մինչև Պաղեստին և Կիլիկիա հարավ և հարավ-արևմուտքում»: Մեկ այլ հեղինակ նշում է, որ հարավում Հայոց կայսրության ազդեցությունը հասնում էր մինչև հրեաների երկիրն այն բանից հետո, երբ Տիգրան Մեծը գրավեց Փյունիկիան և Սիրիան: Որոշ աղբյուրներում նշվում է, որ Իուդեայի թագուհին՝ Սալոմե (Sholomzion) Ալեքսանդրան, որը կառավարում էր երկիրն իր ամուսնու մահվանից հետո՝ մ.թ.ա. 76-67թթ., դիմել է հայոց արքայից արքա Տիգրան Մեծին Հայոց կայսրության մեջ մտնելու խնդրանքով և արժանացել դրական պատասխանի: Սալոմեն այդ քայլին, ըստ աղբյուրների, դիմել է Իուդեայի անվտանգությունն ապահովելու նկատառումներով՝ հաշվի առնելով Տիգրան Մեծի կայսրության՝ Առաջավոր Ասիայում ամենահզոր պետությունը լինելու իրողությունը և հայոց կայսրի մեծահոգությունն ու հանդուրժողականությունը գրված տարածքների և երկրների ժողովուրդների և ղեկավարների հանդեպ:

Մեր թվարկության 63-330 թվականներին Պաղեստինը գտնվում էր Հռոմի տիրապետության տակ: Հրեաները կորցրին իրենց պետականությունը և պայքարում էին ազատագրվել հռոմեական տիրապետությունից: Այդ առումով ամենից նշանակալին թերևս հրեաների՝ 132-136 թթ. ապստամբությունն էր Բառ Կոխբայի ղեկավարությամբ: Ճնշելով ապստամբությունը՝ Հռոմն արտաքսեց հրեաներին Իուդեայից և Իսրայելի այլ շրջաններից: Պաղեստինից հրեաների արտաքսումը կրեց շարունակական բնույթ, որի հետևանքով Պաղեստինը համարյա լրիվ դատարկվեց հրեաներից: 1800 թվականին Պաղեստինի բնակչությունը չէր գերազանցում երեք հարյուր հազարը, որից միայն հինգ հազարն

[155] Նույն տեղում, էջ 22:

էր հրեա, մնացածը մուսուլմաններ և քրիստոնյաներ էին: XIX դարի կեսերին Պաղեստինում բնակվում էր ընդամենը 12 հազար հրեա, իսկ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին՝ 1914թ.՝ 85 հազար կամ Պաղեստինի բնակչության ընդամենը 8 տոկոսը:

Այլ ուղղությամբ ընթացավ հայերի և Հայաստանի զարգացումը: Եվ դա Հայաստանի և Իսրայելի զարգացման թերևս ամենակարևոր առանձնահատկություններից մեկն է: Եթե հրեաների պետությունը կործանվեց, և նրանք արտաքսվեցին Պաղեստինից, ապա հայերը կարողացան պահպանել իրենց պետականությունը, որի հիմնական բնակչությունը մշտապես հայերն են եղել: Արտաշիսյան դինաստիային (մ.թ.ա.189-մ.թ.-1թվականներ) հաջորդեց Արշակունիների դինաստիան (66 -428 թվականներ), ապա Բագրատունիների դինաստիան (885-1045 թվականներ): Հետո համաշխարհային պատմության մեջ տեղի ունեցավ մի իսկական հրաշք: Հայաստանից Կիլիկիա գաղթած հայերը 1080թ. Կիլիկիայում հիմնեցին հայկական նոր պետություն՝ Կիլիկիայի Ռուբինյանների իշխանապետությունը, որը 1198թ. հռչակվեց Կիլիկիայի հայկական թագավորություն: Կիլիկիայի հայկական պետությունը գոյատևեց ավելի քան 300 տարի՝ 1080-1385 թթ.:

1517 թ. Օսմանյան կայսրությունը նվաճեց Առաջավոր Ասիայի արաբական երկրները, այդ թվում՝ այն տարածքները, որոնց վրա գոյություն էր ունեցել հրեական Իսրայել պետությունը: Օսմանյան տիրապետությունը տևեց 400 տարի, մինչև 1918թ.:

XVII դարի առաջին կեսին օսմանյան տիրապետության տակ հայտնվեց նաև Հայաստանը, ավելի կոնկրետ Արևմտյան Հայաստանը: Այսպիսով, թե՛ Պաղեստինը, որի տարածքում ժամանակին եղել են հրեական երկու պետությունները՝ Իսրայելը և Իուդեան, ոչ մեծաքանակ հրեաներով հանդերձ, թե՛ Արևմտյան Հայաստանն ամբողջապես և իր հայ բնակչությամբ, հայտնվեցին

հետամնաց, բարբարոսական օսմանյան Թուրքիայի լծի ներքո իր բոլոր հալածանքներով և բռնակալությամբ: 1915թ. երիտթուրքերի մարդասպան քաղաքականության առաջին զոհը եղավ արևմտահայությունը, որը հետագայում հրեա Ռաֆայել Լեմկինի դարակազմիկ հայտնագործությամբ կոչվեց «գենոցիդ»՝ ցեղասպանություն: Դա մարդկության պատմության մեջ առաջին ցեղասպանությունն էր, որի զոհերը դարձան մոտ մեկուկես միլիոն հայեր: Օսմանյան կայսրությունը դարձավ առաջին ցեղասպան պետությունը, իսկ արևմտահայությունը՝ ցեղասպան քաղաքականության առաջին զոհը:

1917 և 1918 թվականները բախտորոշ եղան հրեաների և հայերի համար: 1917թ. նոյեմբերի 2-ին հռչակվեց Բալֆուրի դեկլարացիան, որն ըստ էության Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Արթուր Բալֆուրի նամակն էր՝ ուղղված հրեա մեծահարուստ լորդ Ռոտշիլդին այն մասին, որ Մեծ Բրիտանիայի «Նորին մեծության կառավարությունը բարեհաճորեն է դիտարկում Պաղեստինում հրեա ժողովրդի համար մի Ազգային տուն հիմնելը և կգործադրի իր լավագույն ջանքերը՝ հեշտացնելու այդ նպատակին հասնելը»: Մինչ այդ Մեծ Բրիտանիան առաջարկում էր հրեաներին տեղափոխել Ուգանդա, Աֆրիկա կամ Արգենտինա և այլն, որը մերժվում էր հրեաների կողմից: Բալֆուրի դեկլարացիան նոր հեռանկարներ բացեց հրեաների առջև՝ վերադառնալ Պաղեստին և վերականգնել իր պետականությունը: Եվ, իրոք, աստիճանաբար սկսեց ավելանալ հրեաների թվաքանակը Պաղեստինում:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա Թուրքիան, 1915թ. իրականացնելով Արևմտյան Հայաստանի հայության ցեղասպանությունը, 1918թ. մայիսի վերջերին ներխուժեց Արևելյան Հայաստան՝ նպատակ ունենալով կոտորել նաև արևելահայությանը: Բայց այստեղ տեղի ունեցավ հրաշք: 1918 թ. մայիսի վերջերին հայկական բանակը կարողացավ ջախջախիչ հարված հասցնել թուրքական զորքերին և նրանց դուրս շպրտել Արևելյան Հայաս-

տանից: 1918 թվականի մայիսի 28-ին հռչակվեց Հայաստանի անկախությունը՝ Հայաստանի Առաջին հանրապետությունը:

Իսկ հրեաները կարողացան օգտվել Պաղեստինում Ազգային տուն ստեղծելու Մեծ Բրիտանիայի ընձեռած հնարավորություններից և աստիճանաբար ընդլայնեցին հրեաների ներգաղթը Պաղեստին: Դրան մեծապես նպաստեց նաև 1920-1948թթ. անգլիական մանդատի հաստատումը Պաղեստինում: Կարևոր նշանակություն ունեցավ սիոնիստական ղեկավարների կոնգրեսը 1945թ. Նյու Յորքի «Բիլթմոր» հյուրանոցում, որտեղ որոշում ընդունվեց «Պաղեստինը դարձնել հրեական հայրենիք»: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի՝ 1947թ. նոյեմբերի 29-ի 181/II բանաձևով Պաղեստինը բաժանվեց երկու մասի, որտեղ պետք է ստեղծվեր երկու՝ հրեական և արաբական պետություն: Հրեական պետությանը հատկացվեց 14,1 հազար քառ.կմ կամ Պաղեստինի տարածքի 56% -ը, իսկ արաբական պետությանը՝ 11,1 հազ.քառ կմ կամ 43%-ը: Անգլիան հայտարարեց. որ ինքը կհրաժարվի Պաղեստինի մանդատից 1948 թ. մայիսի 15- ին: Եվ, իրոք, այդպես էլ եղավ: Հրեական ժամանակավոր պետական կոմիտեն 1948թ. մայիսի 14-ին հռչակեց Պաղեստինում հրեական պետության ստեղծումը, որը կոչվելու էր Մադինաթ Իսրայել՝ Իսրայելական պետություն: Իսրայել պետության ստեղծման տարեթիվն է 1948թ. մայիսի 15-ը:

Այսպիսով, հայոց պետականության կորստից 533 տարի անց վերականգնվեց հայոց պետականությունը՝ Հայաստանի Հանրապետությունը, իսկ հրեական պետականության կորստից 1618 տարի անց վերականգնվեց հրեական պետությունը՝ Իսրայելը:

Այժմ կանգ առնենք գենոցիդ -Հոլոքոստ հարցի վրա, որոնք հայերի և հրեաների բազմադարյան պատմության թերևս ամենառողբերգական էջերն են:

Ինչպես արդեն նշեցինք, «գենոցիդ» եզրի հեղինակը լեհ իրավաբան, ծագումով հրեա Ռաֆայել Լեմկինն է, որը այդ դա-

ռակազմիկ հայտնագործությունը կատարել է 1943թ. և առաջին անգամ գրավոր շրջանառության մեջ դրել 1944թ.: Այդ հայտնագործությունը նա կատարել է հայկական նյութի, այսինքն՝ 1915-1923թթ. Օսմանյան կայսրությունում իրագործված հայկական ցեղասպանության ուսումնասիրության հիման վրա: Նա այդ ուսումնասիրությունը սկսել էր դեռևս XX դարի 20-ական թվականների վերջերից: Այդ մասին բազմիցս գրել է Ռաֆայել Լեմկինը: «Ես,-գրում է Ռաֆայել Լեմկինը-, սկսեցի հետաքրքրվել գենոցիդով, քանի որ դա պատահել էր հայերի հետ: Ես սկսեցի ավելի ու ավելի ինձ նույնացնել զոհերի տառապանքների հետ: Իսկ հետո հայերի հետ շատ կոպիտ վարվեցին Վերսալի կոնֆերանսում, քանի որ նրանց ոճրագործները մեղավոր էին գենոցիդի համար, սակայն չպատժվեցին: **Ես մտածեցի, որ ոճրագործությունը չպետք է պատժվի զոհերի կողմից, այլ պետք է պատժվի դատարանի կողմից»**: Այսպիսով, մինչև 1939 թվականը Հայոց ցեղասպանությունը, լինելով քսաներորդ դարի առաջին և միակ ցեղասպանությունը, Ռաֆայել Լեմկինի համար հանդիսացել է միակ և գլխավոր աղբյուրը «գենոցիդ» եզրի հայտնագործման և նրա հիմնադրույթների բացահայտման ու սահմանման հարցում: 1939թ. սկսվում է հրեական գենոցիդը՝ Հոլոքոստը նացիստական Գերմանիայում: Լեմկինի պահպանված թղթերում շատ հստակ են սահմանված Հոլոքոստի ժամանակագրական շրջանակները՝ 1939-1945 թվականներ:

Հետագայում՝ 1967 թվականից, «Հայոց ցեղասպանություն» դեֆինիցիային զուգահեռ սկսվեց կիրառվել նաև «Արմենոցիդ՝ «Հայասպանություն» եզրը, որի համար մենք պարտական ենք հայտնի պատմաբան Մուսա Պրենսին: Նա ապացուցեց, որ «Արմենոցիդը ամենագենոցիդային գենոցիդն է»:

Արմենոցիդը և Հոլոքոստը համարվում են դասական ցեղասպանություններ: Բայց ունեն նաև առանձնահատկություններ և տարբերություններ: Դրանք ակնհայտ են դառնում նրանց համեմատությունից:

Առաջին, հայերի ցեղասպանությունն իրագործվել է նրանց բնօրրան-հայրենիքում՝ Արևմտյան Հայաստանում: Հոլոքոստն իրականացվել է Գերմանիայում և նրա արբանյակ եվրոպական երկրներում, որը հրեաների ո՛չ բնօրրանն է և ո՛չ էլ պատմական հայրենիքը:

Երկրորդ, հայերի ցեղասպանությունը կատարվել է եկվորների՝ թուրքերի կողմից, որոնք ներխուժել էին Ալթայից և Միջին Ասիայից դեռևս XI դարում և իրագործել նրա բնիկների՝ հայերի ֆիզիկական ոչնչացումը: Հրեաների պարագայում եկվորներն իրենք՝ հրեաներն էին, որոնք հաստատվել էին Գերմանիայում, և նրանց Հոլոքոստը կամ ողջակիզումն իրականացվել է բնիկների՝ գերմանացիների կողմից:

Երրորդ, արմենոցիդի հետևանքով հայերը կորցրին իրենց հայրենիքը՝ Արևմտյան Հայաստանը: Հրեաները Հոլոքոստի հետևանքով հայրենիք չկորցրին, քանի որ նրանք եկվորներ էին, և Գերմանիան նրանց հայրենիքը չէր: Հրեաների հայրենիքը գտնվում էր Եվրոպայից դուրս: Նրանց պատմական հայրենիքը գտնվում էր Մերձավոր Արևելքում: Հոլոքոստից հետո կենդանի մնացած հրեաների մեջ ուժեղացան սեփական հայրենիք ունենալու գաղափարը և ձգտումը, որը 1948թ. պսակվեց հաջողությամբ:

Չորրորդ, արմենոցիդից հետո հայերի փրկված բեկորները ցրվեցին աշխարհով մեկ: Այդպես ձևավորվեց հայկական նոր Սփյուռքը, որտեղ հայերի թվաքանակն ավելի շատ է, քան Հայաստանի Երրորդ հանրապետությունում: Հրեաների մոտ հակառակ գործընթացը սկսվեց: Հրեական ստվար սփյուռքը գոյություն ուներ և մինչև Հոլոքոստը: Հոլոքոստից և Իսրայել պետության կազմավորումից հետո սկսվեց հրեաների ազգային համահավաքը: Միլիոնավոր սփյուռքահրեաներ աշխարհի տարբեր ծայրերից վերադարձան, և սկսվեց հրեական ազգի կազմավորման պրոցեսը:

Այժմ կանգ առնենք Հայաստանի և հայերի կողմից հրեա-

կան Հոլոքոստի և Իսրայելի ու հրեաների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման հարցի վրա: Հայերը սկզբից կեթ ճանաչել են հրեական Հոլոքոստը: Իսկ 1991թ. Խորհրդային Միության փլուզումից հետո, երբ 1991թ. դեկտեմբերի 21-ին Հայաստանը դարձավ անկախ պետություն և հռչակվեց Հայաստանի Երրորդ հանրապետությունը, ապա նա պաշտոնապես ճանաչեց հրեական Հոլոքոստ-շոան:

Ինչ վերաբերում է Իսրայելի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանը, ապա այստեղ դրությունը միանգամայն այլ է: Երբ վերականգնվեց Հայաստանի անկախությունը, և հռչակվեց Հայաստանի Երրորդ հանրապետությունը, հայերի մոտ ոչ մի կասկած չկար, որ Հայոց ցեղասպանության առաջին ճանաչողների շարքերում կլինի Իսրայելը: Նրանց այդ վստահությունը հիմնված էր երկու գործոնների վրա:

Առաջին, հայերը ցեղասպանության հարցում իրենց և հրեաներին համարում էին բախտակից ժողովուրդներ: Ուստի նրանք գտնում էին, որ միմյանց ցեղասպանության ճանաչումը միանգամայն բնական էր: Ճանաչելով հրեական Հոլոքոստը՝ հայերն ակնկալում էին համանման դիրքորոշում Իսրայելի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում: Երկրորդ, հայերը շատ լավ տեղյակ էին, որ գենոցիդ եզրի հեղինակը հրեա Ռաֆայել Լեմկինն է, որն այդ գյուտը կատարել էր՝ ելնելով բացառապես Հայոց ցեղասպանության իրողությունից և անժխտելի փաստից: Ռաֆայել Լեմկինի պարագան հայերին վստահություն էր ներշնչում Իսրայելի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման խնդրում: Բայց այդպես չեղավ:

Այստեղ կա մի շատ կարևոր նրբություն:

Հայոց ցեղասպանությունը հրաժարվում են ճանաչել Իսրայելի կառավարությունը, Կնեսետը՝ պառլամենտը, և այլ պաշտոնական պետական մարմիններ: Սակայն, հանուն ճշմարտության, պետք է նշել, որ Իսրայելի թե՛ կառավարության և թե՛ Կնեսետի կազմում կան պետական գործիչներ, նախարարներ և

պառլամենտականներ, որոնք հանդես են գալիս հանուն Հայոց ցեղասպանության ճանաչման:Դրանց մեջ առաջին հերթին պետք է նշել Իսրայելի կրթության նախարար և Մերեց կուսակցության ղեկավար Յոսի Սարիդին, որը դատապարտում էր Իսրայելի դիրքորոշումը Հայոց ցեղասպանությունը չճանաչելու հարցում: Համաձայն չլինելով Իսրայելի կառավարության այդ քաղաքականության հետ՝ նա հրաժարական տվեց Իսրայելի Կրթության նախարարի պաշտոնից[156]:

Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում իր սեփական դիրքորոշումն ունի հրեական-իսրայելական մտավորականությունը, որը ոչ միայն կանգնած է Հայոց ցեղասպանության ճանաչման դիրքերում, այլև պահանջում է, որ Իսրայելի Կնեսետը և կառավարությունը ճանաչեն Հայոց ցեղասպանությունը: Այդ իմաստով արժանին պետք է մատուցել Իսրայելի Բաց համալսարանի պրոֆեսոր Յաիր Օրոնին, որի՝ Հայոց ցեղասպանությանը նվիրված արժեքավոր աշխատությունը թարգմանվել է հայերեն և հրատարակվել Երևանում: Նա իր անհամաձայնությունն է արտահայտում նաև այն իրողության կապակցությամբ, որ թեև Իսրայելում դասավանդում են Հոլոքոստի հետ կապված հարցերը, «…սակայն Իսրայելում կրթական համակարգը և համալսարանները սովորաբար խուսափում են գործ ունենալ այլ ցեղասպանությունների հետ»[157]: Նա նկատի ունի նաև Հայոց ցեղասպանությունը: Իսկ Յեհուդա Բաուերը (պրոֆեսոր, Յադ Վաշեմ), Իսրայել, խստիվ դատապարտում է «ցեղասպանության ժխտումը, որը հատկապես աղաղակող է հայկական ցեղասպանության պարագայում»[158]: Նրա այդ տեսակետն ուղղված է Իսրայելի կառավարության վարչապետի՝ Բենիամին Նաթանյահուի քաղաքականության դեմ, որը զանազան պատր-

---

[156] Ultimate Crime, Ultimate Challenge Human Rights and Genocide. An International Conference, April 20- Yerevan, 2005, p.24.

[157] Նույն տեղում, էջ 11:

[158] Նույն տեղում, էջ 13:

վակներով հեռու է Հայոց ցեղասպանությունը ճանաչելու մտադրությունից:

Շատ կարևոր է նաև մի այնպիսի ականավոր և համաշխարհային հռչակ վայելող ցեղասպանագետի դիրքորոշումը, որպիսին Նյու Յորքի ցեղասպանության ուսումնասիրությունների ինստիտուտի տնօրեն, ազգությամբ հրեա Էլեն Ֆայնն է: Նա հենց սկզբից՝ քսանականների վերջերից և երեսունականների սկզբներից, կանգնած է եղել գենոցիդ եզրի հեղինակ Ռաֆայել Լեմկինի կողքին, ոգևորել է նրան, պաշտպանել նրա տեսակետը Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում: Եվ երբ 1994թ. ստեղծվեց Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիան, ապա Էլեն Ֆայնն ընտրվեց նրա առաջին պրեզիդենտը: Ասոցիացիայի մեջ ընդգրկվեցին համաշխարհային մեծ ճանաչում ունեցող տարբեր ազգությունների և երկրների ականավոր ցեղասպանագետները, քաղաքագետները, իրավաբանները, պատմաբանները և այլք: Տողերիս հեղինակը նույնպես նրա անդամներից է: Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիան (ՑՄԱ) երկու անգամ՝ 1997 և 2005թվականներին, անտեսելով Իսրայելի կառավարության և պառլամենտի բացասական դիրքորոշումը, ճանաչեց Հայոց ցեղասպանությունը: Դա համարձակ քայլ էր և ուներ համաշխարհային պատմական ու քաղաքական մեծ նշանակություն:

Այդ քաղաքականությունը շարունակեց ՑՄԱ-ի նախագահի պաշտոնում Էլեն Ֆայնին փոխարինած Երուսաղեմի Հոլոքոստի և ցեղասպանության ինստիտուտի գործադիր տնօրեն, Ցեղասպանագիտության հանրագիտարանի գլխավոր խմբագիր պրոֆեսոր Իսրայել Չարնին: Նա գտնում է, որ «Ժամանակն է ճանաչել Հայոց ցեղասպանությունը և նրա զոհերին»[159]: Այդ փիլիսոփայության շրջանակներում ՑՄԱ-ն 2005թ. հունիսի 4-7-ը Ֆլորիդայում՝ ԱՄՆ, գումարեց վեցերորդ գիտաժողովը, որում քննարկվեց «Իննսուն տարի Հայոց ցեղասպանությունից հետո: Վաթսուն

[159] Նույն տեղում, էջ 15:

տարի Հոլոքոստից հետո» հարցը, որին մասնակցելու և զեկուցումով հանդես գալու պատիվն ենք ունեցել մենք: Այդ գիտաժողովում ոչ միայն կրկին ճանաչվեց Հայոց ցեղասպանությունը, այլև հաստատվեց Հայոց ցեղասպանությունը XX դարի առաջին ցեղասպանությունը լինելու իրողությունը: Ավելացնենք, որ երբ 2005թ. Երևանում գումարվեց Հայոց ցեղասպանության 95-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով, Իսրայել Չարնին ժամանեց Երևան, մասնակցեց գիտաժողովին և փայլուն ելույթ ունեցավ ի պաշտպանություն Հայոց ցեղասպանության ճանաչման[160]: Մենք միասին աշխատում էինք այդ գիտաժողովի ամենակարևոր սեկցիայում: Ես նրան նվիրել էի իմ «Հայոց ցեղասպանությունը՝ Արմենոցիդը ամենագենոցիդային գենոցիդ» մենագրությունն աշխարհի տասը լեզուներով, որը նա բարձր գնահատեց: 2010թ. նոյեմբերի 30-ին ինձ հասցեագրված նամակում պրոֆեսոր Իսրայել Չարնին գրել է. «Իմ թանկագին պրոֆ. Նիկոլայ Հովհաննիսյան: Ես խորապես շնորհակալ եմ ձեզ ձեր շատ կարևոր և տպավորիչ գիրքն ինձ նվիրելու համար: Ես շնորհակալ եմ ձեզ ձեր շատ բարի մակագրության համար: Բայց ամենից շատ ես շնորհավորում եմ ձեզ և շնորհակալություն հայտնում Հայոց ցեղասպանության պատմական հիշողության մեջ ձեր շատ ինքնատիպ ներդրման համար: Ջերմագին հարգանքներով, Իսրայել Չարնի»[161]:

Բավարարվենք վերոնշյալ բարձրահարգ մտավորականներին և գործիչներին նշելով և ավելացնենք, որ Իսրայելի և հրեական սփյուռքի ամենահոծ հրեական զանգվածները նույնպես համաձայն չեն, որ Իսրայելի ղեկավարությունը չի ճանաչում Հայոց ցեղասպանությունը: Մեր արտասահմանյան այցելությունների ժամանակ հրեա քաղաքական գործիչների, մտավորա-

---

[160] **Ն. Հովհաննիսյան**, Հայոց ցեղասպանությունը հաստատված է միջազգային գիտական, իրավական և մարդու իրավունքների հանրության կողմից, Երևան, 2015, էջ 5, 6:

[161] To Professor Nikolay Hovhannisyan, Jerusalem, November 30, 2010. With Warm Regards **Israel W. Charny.**

կանության և հասարակ մարդկանց հետ հանդիպումների ժամանակ, որպես կանոն, հրեաներն իրենց զարմանքն էին արտահայտում, որ Իսրայելի կառավարությունը դեռևս չի ճանաչել Հայոց ցեղասպանությունը, և վստահ էին, որ այդ ճանաչումը վաղ թե ուշ կայանալու է:

Իսրայելի ղեկավարության կողմից Հայոց ցեղասպանությունը չճանաչելը ջուր է լցնում Թուրքիայի ջրաղացին, որը նույնպես չի ճանաչում Հայոց ցեղասպանությունը: Թուրք հայտնի պատմաբան, ԱՄՆ-ի Մինեսոթայի համալսարանի պրոֆեսոր Թաներ Աքչամը նշում է, որ «Թուրքիան ցեղասպանության ժխտման ինդուստրիայի հիմնադիրն է»[162]: Ընդ որում ժխտվում է ոչ միայն Հայոց ցեղասպանությունը, այլև կան Հոլոքոստը ժխտողներ: Այդ հարցին Ցեղասպանության միջազգային ասոցիացիայի նիստերից մեկում 2005թ., անդրադարձավ հրեա պրոֆեսոր, Դանիայի Միջազգային ուսումնասիրությունների ինստիտուտի պրոֆեսոր Էրիկ Մարկուզեն: Նա այդ հարցին անդրադարձավ հակասեմիտիզմի ակտիվացման հարցի քննարկումների համատեքստում՝ նշելով, որ մի շարք երկրներում, հատկապես եվրոպական, այն տեսակետն է արտահայտվում, որ Հոլոքոստի ժամանակ չի սպանվել վեց միլիոն հրեա, որ այդ թիվը չափազանցված է հրեաների և Իսրայելի կողմից: Ինչպես նշեց պրոֆեսոր Մարկուզեն, Հոլոքոստի ժխտման կողմնակիցները գտնում են, որ երբեք Եվրոպայում վեց միլիոն հրեա չի եղել, որ այդ թիվը հրեաները միտումնավոր ուռճացնում են: Ինչպես տեսնում ենք, ցեղասպանության ժխտման ինդուստրիան զորեղ է և իր ալիքների մեջ է առնում ոչ միայն Հայոց ցեղասպանությունը, այլև հրեական Հոլոքոստը և առանց բացառության մյուս բոլոր ցեղասպանությունները: Սա շատ վտանգավոր ահազանգ է, որը պետք է հաշվի առնեն Իսրայելի անհեռատես ղեկավարները, որոնք չեն հասկանում, որ Հայոց ցեղասպանությունը և հրեական

---

[162] **Ն.Հովհաննիսյան**, Արմենոցիդը ճանաչված ցեղասպանություն է, Երևան, 2010, էջ 159:

Հոլոքոստը ոչ թե մրցակիցներ, այլ դաշնակիցներ են: Մեկի թուլացումն անխուսափելիորեն կթուլացնի մյուսի դիրքերը: Իսրայելի ղեկավարությունը պաշտպանում է Թուրքիային, որը հրեա ցեղասպանագետներ Իրվինգ Հորովիցի, Լեո Կուպերի և այլոց տեսակետով «Ցեղասպան պետություն» է:

Վերադառնանք Հայոց ցեղասպանության ճանաչման հարցին:

Մենք ավելի քան կես դար զբաղվել և շարունակում ենք զբաղվել Հայոց ցեղասպանության հարցերով: Եվ եկել ենք այն եզրակացության, **որ Հայոց ցեղասպանությունը կամ Արմենոցիդն արդեն միջազգայնորեն ճանաչված ցեղասպանություն է**[163]:

Նման եզրակացության հանգելու համար շատ կարևոր է պետությունների կողմից ցեղասպանության ճանաչումը: Հայոց ցեղասպանությունը ճանաչել են աշխարհի 31 պետություն՝ 1.Ավստրիան, 2.Արգենտինան, 3.Բելգիան, 4.Բոլիվիան, 5.Բրազիլիան, 6.Բուլղարիան, 7.Գերմանիան, 8.Դանիան, 9.Իտալիան, 10.Լեհաստանը, 11.Լիբանանը, 12.Լիտվան, 13.Կանադան, 14.Կիպրոսը, 15.Հայաստանը, 16.Հունաստանը, 17.Նիդեռլանդները, 18.Շվեդիան, 19.Շվեյցարիան, 20.Չեխիան, 21.Չիլին, 22.Պարագվայը, 23.Ռուսաստանի Դաշնությունը, 24.Սիրիան, 25.Սլովակիան, 26.Սլովենիան, 27.Վատիկանը, 28.Վենեսուելան, 29.Ուրուգվայը (որն առաջինն է ճանաչել Հայոց ցեղասպանությունը 1965թ.), 30.Օսմանյան կայսրությունը և 31. Ֆրանսիան: Նշված պետություններից երկուսը՝ Ռուսաստանի Դաշնությունը և Ֆրանսիան, մտնում են աշխարհի հինգ խոշոր կամ մեծ տերությունների շարքը, Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի մշտական անդամներ են և ունեն վետոյի

---

[163] Տե՛ս **Ն.Հովհաննիսյան,** Արմենոցիդը ճանաչված ցեղասպանություն է, Երևան, 2010, 262 էջ: Նույնի՝ Հայոց ցեղասպանությունը հաստատված է միջազգային գիտական, իրավական և մարդու իրավունքների կողմից: Հրատարակված է երեք լեզուներով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն, Երևան, 2015, 179 էջ:

իրավունք:

Այս կապակցությամբ կցանկանայինք հետևյալ դիտողությունն անել: Դեռ սահմանված չէ, թե քանի պետությունների կողմից տվյալ ցեղասպանությունը ճանաչելուց հետո, կարելի է ասել, որ այն արդեն միջազգայնորեն ճանաչված է: Այդպիսի կարգ չկա սահմանված: Հետևաբար՝ այս կամ այն պետության կողմից տվյալ ցեղասպանությունը չճանաչելը չի կարող հիմք հանդիսանալ ասելու, որ տվյալ ցեղասպանությունը ճանաչված չէ: Այդ սկզբունքը միանգամայն կիրառելի է բոլոր ցեղասպանությունների, այդ թվում և Հայոց ցեղասպանության պարագայում:

Հայոց ցեղասպանությունը ճանաչած երկրորդ խումբը կազմում են պետական ինքնավար կազմավորումները կամ նահանգները, նրանց օրենսդիր կամ գործադիր մարմինները: Մենք, ըստ էության, առաջինն էինք, որ Հայոց ցեղասպանության ճանաչման համակարգում ներառանք այս կամ այն պետության կազմում գտնվող տարածքային ինքնավար մարմիններին: Նույնիսկ այն պարագայում, երբ մետրոպոլիան կամ մայր պետությունը դեռ չի ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Եվ այսպես, Հայոց ցեղասպանությունը ճանաչել են Ավստրալիայի 2, Բրազիլիայի 4, Իսպանիայի 4, Իտալիայի 1, Կանադայի 2, Մեծ Բրիտանիայի 3, Շվեյցարիայի 1, այսինքն՝ 17 վարչատարածքային ինքնավար մարմիններ՝ ի դեմս նրանց օրենսդիր մարմինների և կառավարությունների: Այսպիսով, Հայոց ցեղասպանությունը միասին ճանաչել են աշխարհի 48 պետություն և ինքնավար պետական կազմավորում:

Հայոց ցեղասպանությունը ճանաչել են Եվրամիության երկպալատանի օրենսդիր մարմինը՝ Եվրոպական պառլամենտը և Եվրոպայի խորհուրդը, որը կազմված է 47 պետությունից՝ 800 միլիոն բնակչությամբ[164]:

Ուշագրավ է ևս մեկ հանգամանք: ԱՄՆ-ի 50 նահանգներից

[164] European Parliament-http://en.wikipedia.org/wiki/European_Parliament.

Հայոց ցեղասպանությունն արդեն ճանաչել են 49-ը: **Հայոց ցեղասպանությունը ճանաչել են ԱՄՆ-ի չորս պրեզիդենտներ՝ Վուդրո Վիլսոնը, Ջիմի Կարտերը, Ռոնալդ Ռեյգանը և Բարակ Օբաման՝ ամեն մեկը յուրահատուկ կերպով և ձևակերպումով:** Այսպես, **Վուդրո Վիլսոնի** պրեզիդենտության շրջանում, երբ դեռևս հայտնագործված չէր «գենոցիդ» եզրը, նա օգտագործել է «Հայերի զանգվածային ջարդեր» և **«Հայերի անիհիլացում (annihlation, անէացում)»** սահմանումը, **պրեզիդենտ Ջիմի Կարտերը** 1978թ. մայիսի 16-ին հայտարարել է, որ «1916թ. նախորդած տարիներին **փորձ արվեց ոչնչացնելու (eliminate) ողջ հայ ժողովուրդը»**, **պրեզիդենտ Ռոնալդ Ռեյգանը** 1981թ. ապրիլի 22-ին՝ Հոլոքոստի զոհերի հիշատակի օրը հանդես եկավ հատուկ Հռչակագրով և հայտարարեց. **«Ինչպես Հայոց ցեղասպանությունը մինչ այդ, և կամբոջացիների ցեղասպանությունը դրանից հետո, ինչպես նաև շատ այլ ժողովուրդների հալածանքները, Հոլոքոստի դասերը երբեք չեն մոռացվի»**[165]: Իսկ **պրեզիդենտ Բարակ Օբաման** 2009 և 2012 թվականներին ամերիկյան ժողովրդին հասցեագրված իր ուղերձներում ցեղասպանության փոխարեն օգտագործեց **«Մեծ եղեռն» ձևակերպումը**, ինչպես դա ի սկզբանե ընդունված է հայերի կողմից՝ **ընդգծելով, որ «Մեծ եղեռն կշարունակի ապրել մեր հիշողությունում»**[166]:

Հայոց ցեղասպանությունը ճանաչել են Խաղաղության կողմնակիցների Համաշխարհային կոնգրեսը, Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը, Երիտասարդների քրիստոնեական ասոցիացիան, Ժողովուրդների մշտական տրիբունալը, Նոբելյան մրցանակակիրների «Հանուն հումանիզմի» Հիմնադրամը, ինչպես արդեն նշել ենք, Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիան, Թուրքիայի Մարդու իրավունքների Ստամբուլի բա-

---

[165] **President Ronald Reagan,** Proclamation 4838 0f April 22, 1981. Days of Remembrance of Victims of the Holocaust by the President of the United State of America.

[166] Statement of **President Barack Obama** on Armenian Remembrance Day, 2009. The White House Office of the Press Secretary, April 24, 2009.

ժանմունքը, Հրեական հակազրպարտչական լիգան, Երուսաղեմի Հոլոքոստի և ցեղասպանության ինստիտուտը, Նյու Յորքի ցեղասպանության ուսումնասիրության թանգարանը, Վաշինգտոնի Հոլոքոստի թանգարանը և այլն, և այլն:

Հարկ ենք համարում անդրադառնալ նաև Ցեղասպանագետներ միջազգային ասոցիացիայի՝ 2005թ. հունիսի 7-ի նամակին Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանին՝ ի պատասխան նրա նամակի, որով նա կոչ էր անում ՑՄԱ-ին Հայոց ցեղասպանության հարցում լինել անկողմնակալ: Էրդողանին ուղղված նամակում, որը ստորագրել էին ՑՄԱ-ի պրեզիդենտ Իսրայել Չարնին (Իսրայել), փոխպրեզիդենտ Գրեգորի Ստենտոնը (ԱՄՆ), երկրորդ փոխպրեզիդենտ Լինդա Մերվերնը(Մեծ Բրիտանիա) և քարտուղար Ստիվեն Ջեկոբսը (ԱՄՆ), ասվում է, որ նրանք համաձայն չեն Թուրքիայի վարչապետի հետ, որ նրանք անկողմնակալ չեն: Նրանք Էրդողանին են ներկայացնում ասոցիացիայի միաձայն ընդունված հայեցակարգային ամփոփիչ եզրակացությունն առ այն, որ **«Հայոց ցեղասպանությունը հաստատված է միջազգային գիտական, իրավական և մարդու իրավունքների հանրության կողմից»**: Եվ վերջ:

Վերոշարադրյալի հիման վրա կարելի է ասել, որ մենք իրավացի ենք, երբ ասում ենք, որ **Հայոց ցեղասպանությունն արդեն միջազգայնորեն ճանաչված ցեղասպանություն է**[167]: Այս ֆոնի վրա Իսրայելի կողմից Հայոց ցեղասպանությունը չճանաչելը դառնում է երկրորդական-երրորդական կարգի երևույթ: Իսրայելը կճանաչի՝ լավ, ոչ ոք նրան չի խնդրում, չի ճանաչի՝ դա արդեն նրա գործն է, որը միջազգային որևէ նշանակություն չունի և բնավ չի անհանգստացնում Հայաստանին և հայությանը:

Ցեղասպանության վերաբերյալ հայկական նյութի հիման վրա հրեա Ռաֆայել Լեմկինի դարակազմիկ հայտնագործությունն անմահացրեց նրան:

---

[167] **Նիկոլայ Հովհաննիսյան**, Արմենոցիդը ճանաչված ցեղասպանություն է, Երևան, 2010, 263 էջ:

Ռաֆայել Լեմկինը կյանքից հեռացավ 1959թ.՝ 59 տարեկան հասակում, սրտի կաթվածից: Վիճակագրության սիրահարները հաշվել են, որ այդ ժամանակ աշխարհում ցեղասպանությանն ընդհանուր առմամբ զոհ էր գնացել մոտ 20 մլն մարդ:

Ռաֆայել Լեմկինի թաղմանը ներկա է եղել ընդամենը յոթ մարդ:

14 դեկտեմբերի 2018 թ.

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ

Գիտության վաստակավոր գործիչ

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Միջազգային հարաբերությունների

Բաժնի վարիչ

52. ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Հայոց ցեղասպանության ճանաչման փուլից հետո Միջազգային գիտական, իրավական և մարդու իրավունքների պաշտպանության հանրության կողմից սկսվում է նոր փուլ, որը կարելի է կոչել Օսմանյան կայսրության իրագործած ոճրագործության ծանր հետևանքների վերացման և Հայոց ցեղասպանության արդարացի հատուցման փուլ:

Հայոց բազմադարյան պատմության բնութագրումը որպես մեկ ամբողջություն, որպես մեկ անընդմեջ շղթա, կարելի է ասել, որ միանգամայն ճիշտ է և համոզիչ: Այդ շղթան հայոց պատմության աննկարագրելի բեռի տակ ոչ միայն չի կոտրվել, այլև նրա ծանրությունից չի ճկվել և չի խոնարհվել ու անցնելով հազար ու մի խութերով ու փորձություններով, արհավիրքներով, զրկանքներով ու ողբերգություններով՝ ի վերջո հայությանը բարեհաջող հասցրել է մինչև մեր օրերը՝ որպես մեր դարաշրջանին վայել էթնոս՝ իր վեհաշուք պետականությամբ:

Հայոց պատմության շղթան և նրա օղակները չեն կոտրվել կամ ճկվել, քանի որ դրանք գերազնիվ մետաղներից են, ինչը ոչ մի պարագայում և երբեք չի ժանգոտվում, աջ ու ձախ չի ծռմռվում և իր ազնիվ մետաղ լինելու որակները, փայլը և կերպարանքը երբեք չի կորցնում:

Այսպիսին, այսինքն՝ մաքրամաքուր է եղել հայոց պատմական ուղին, ուղի, որը հանգիստ խղճով կարող ենք որակել որպես վեհ, վսեմ, ազնիվ ու հերոսական: Հայոց արքաները, սպարապետները և հոգևոր հայրերը եղել են վեհանձն անձեր, բայց ոչ երբեք բարբարոսներ ու դահիճներ: Ուստի և պատահական չէ, որ բազմաթիվ երկրների ղեկավարներ ու թագավորներ, աղաչել-պաղատել են Հայոց արքայից արքա Տիգրան Մեծին թույլ տալ իրենց երկրները մտցնել նրա կայսրության հովանու ներքո, վայելել նրա պաշտպանությունն ու մեծա-

հոգությունը, վայելել հայոց ինքնատիպ և անկրկնելի մշակույթի վսեմ բարիքները:

Հայոց շղթայի օրգանական մասն է կազմել հայոց արքայական դինաստիաների հաջորդականությունը, որը տեղի է ունեցել ոչ թե մեկը մյուսի տապալումով, այլ մեկը մյուսին քաղաքակիրթ ձևով հաջորդելով: Հայոց պետականության դարավոր գոյության ընթացքում երբեք չեն եղել նենգ դավադրություններ, ինտրիգներ՝ գահը գրավելու և թագավորական գահին բազմելու համար, որը սովորաբար բնորոշ է եղել եվրոպական, ասիական, ամերիկյան և աֆրիկյան երկրներում, ինչպես նաև ռուսական ցարական արքունիքում: Թույնը, թունավորումը և սուրը երբեք իրենց դերակատարումը չեն ունեցել հայոց արքունիքում: Հայոց արքունիքում տիրապետել է ասպետականությունը: Դրանով են նաև ապահովվել հայոց պատմության ադամանդյա շղթայի անընդմեջության հանգամանքը և նրա լայնածավալ արեալը:

Հայոց պատմության ադամանդյա շղթան իր արարչագործությամբ ոչ միայն ծառայել է հայությանը, այլև իր մեկ այլ ծայրով նպաստել ուրիշ ժողովուրդների պետականությունների ստեղծմանը և պահպանմանը, ինչը եզակի երևույթ է համաշխարհային պատմության մեջ: Մենք սույն աշխատության համապատասխան բաժիններում անդրադարձել ենք այդ հարցին և փաստերով հիմնավորել, որ հայերը պետութենաստեղծ ազգ են, և մեկ առ մեկ նշել այն երկրները, որոնց ժողովուրդները ըմբոշխնել են հայ ժողովրդի այդ աննախադեպ մեծահոգությունը և պարգևը, ուստի անհրաժեշտ չենք համարում կրկին թվարկել դրանք:

Մենք կցանկանայինք մասնագետների, մտավորականների, պատմագետների, շարքային ընթերցողների ուշադրությունը հրավիրել մի շատ կարևոր հանգամանքի վրա: Խոսքն այն բարձր գնահատականների մասին է, որ ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Չինաստանի, Ճապոնիայի և աշխարհի այլ երկրների պետական ղեկավարները,

առաջին դեմքերը, ականավոր քաղաքական գործիչները, գիտնականները, պատմաբանները, միջազգայնագետները տվել են Հայաստանին՝ որպես յուրահատուկ, կարող ենք ասել բացառիկ շնորհալի երկրի և պետության, ըստ արժանվույն գնահատելով նրա դերը միջազգային հարաբերություններում և նրա ներդրումը համաշխարհային պատմության մեջ: Ընթերցողը սույն աշխատության տարբեր բաժիններում և գլուխներում հեշտությամբ կարող է գտնել այդ հատվածները:

Համաշխարհային հանրությունն ընդունում է, որ մեր աշխարհում եղել են, կան և կլինեն աշխարհաքաղաքական ռեգիոններ, տարածաշրջաններ, որտեղ առկա խնդիրները հնարավոր չէ լուծել առանց Հայաստանի դիրքորոշման, առավել ևս անտեսել Հայաստանի Հանրապետությունը, հայկական պետականությունը, հայկական ազգային շահերը:

Սույն աշխատության ոչ թե առանձին էջեր, այլ ամբողջ բաժիններ և գլուխներ նվիրված են նմանատիպ հիմնախնդիրների լուսաբանմանը:

Ահա այսպիսին է հայոց պատմության անընդմեջ շղթայի փիլիսոփայությունը:

Ամեն:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ի. ԱՌԱՋԻՆ ՄԱՍ. ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ .ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔ 5
ՄՈՒՏՔ 6
1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՆԻ ԻՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ 11
2. ՊԱՏՄԱՀԱՅՐ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՀԱՆՃԱՐԵՂ ԲԱՆԱ-ՁԵՎԸ 15
3. «ՏԻԳՐԱՆ ՄԵԾՆ ԱՍԻԱՅԻ ԱՄԵՆԱՄԵԾ ԱՐՔԱՆ Է- ՅԻ-ՅԵՐՈՆ» 18
4. ՍՊԱՐԱՊԵՏ ՎԱՍԱԿ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԸ- ՊԱՐՍԻՑ ԱՐՔԱ ՇԱՊՈՒՀ ԵՐԿՐՈՐԴԸ – ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴԸ 20
5. ՀԱՅԵՐԸ ՊԵՏՈՒԹԵՆԱՍՏԵՂԾ ԱԶԳ 21
1.Բյուզանդական կայսրություն: Հայկական դինաստիա 25
2. Ռուսիայի ուղղափառության ընդունումը և հայազգի Աննա իշխանուհու դերը 25
3. Ֆաթիմյան խալիֆայություն: Բադր Գամալ ալ-Արմանին 26
4. Կիլիկիայի հայկական թագավորությունը: Ռուբինյաններ և Հեթումյաններ 29
5. Հայազգի Միքայել Լոռիս-Մելիքովը՝ Ռուսաստանի վարչա-պետ, դիկտատոր 30
6. Հայերի նշանակալի դերը շահական Իրանի պետական և քաղաքական կյանքում 31
7. Լիբանանահայերի ներդրումը Լիբանանի անկախ պետու-թյան ստեղծման և պահպանման գործում 34
6. ՀԱՅԱՍՏԱՆՆ ՕՏԱՐ ՆՎԱՃՈՂՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿ 38
1.Պարսկա-օսմանյան բախումները և Հայաստանի տրոհումը Արևմտյան և Արևելյան հատվածների 38
2.Օսմանյան սուլթանական իշխանությունների քաղաքակա-նությունը Արևմտյան Հայաստանի վարչատարածքային հատ-վածում 41
7.ԼԵՌՆԱԼԻԲԱՆԱՆԻ ՄՈՒԹԱՍԱՐԻՖԻԱՆ. ՍԱՆ ՍՏԵՖԱՆՈ-ՅԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ. ԲԵՌԼԻՆԻ ԿՈՆԳՐԵՍԸ ... 48
8.ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՈՑ ԿԱ-ԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ և ՑԱՐԱԿԱՆ ԿԱՌԱ-

ՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ …….. 56

II. ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՅՑՆԵՐՈՒՄ..... 65
1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՀՈՇՈՏՈՒՄԸ ՔԵՄԱԼԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿՈՂՄԻՑ (1918- 1920թթ.) 66
1.Բարենորոգումների մոդելը 66
2.Լամարքազիայի՝ ապակենտրոնացման մոդելը …..... 67
3.1918թ. մայիսի 28-ը: Հայաստանի անկախության հռչակումը .. 67
4. Քեմալական Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի դիրքորոշումը Հայաստանի նորաստեղծ հանրապետության հանդեպ. 71
2.ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ 74
1.Հայաստանի խորհրդայնացումը 74
2. Ստալինի գանգատը Լենինին Չիչերինի դեմ 75
3.Ռուս -թուրքական երկրորդ կոնֆերանսը 77
4.Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության ստեղծումը (ԱՍՖԽՀ) 78
5. ԱՍՖԽՀ-ի լուծարումը և ԽՍՀՄ-ի կազմավորումը 79
6.Հայկական հարցի քննարկումը Պոտսդամի կոնֆերանսում՝ 1945 թ. հուլիսի 17- օգոստոսի 2 83
7.Հայկական տերիտորիաները Հայաստանին վերադարձնելու հարցի քննարկումը ԽՍՀՄ արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Վյաչեսլավ Մոլոտովի և Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Անտոնի Իդենի միջև 84
8. ԽՍՀՄ արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Մոլոտովի զրույցը Մոսկվայում Թուրքիայի դեսպան Սարպերի հետ: Հունիս, 1945թ. 86

III. ԵՐՐՈՐԴ ՄԱՍ. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՓԼՈՒԶՈՒՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ (1990-2018) 89
ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՅԹՈՒՄ 90

ՀԱՅ ԱՐԵՎԵԼԱԳԵՏԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՐԱ-ՌՈՒՄՆԵՐԸ 19 9 0 - 2018 թթ. ապրիլ 90
1. ԽՍՀՄ-Ի ՓԼՈՒՋՈՒՄԸ ԵՎ «ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԸ» ԸՍՏ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՊԱՏՄԱԲԱՆ ՖՈՒԿՈՒՅԱՄԱՅԻ - «The End of History»- Fukuyama 90
2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿԱԳԻՐԸ. 23 ՕԳՈՍՏՈՍԻ 1990 ԹՎԱԿԱՆ 95
3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՔՎԵՆ, 1991Թ. 101
4.ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ 104
5. ՀԱՅԱՍՏԱՆ-ՌՈՒՍԱՍՏԱՆ. ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 111
6.ԳՅՈՒՄՐԻՈՒՄ ՌՈՒՍԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՀԻՄՆՈՒՄԸ 120
7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՄԵԿԸ 121
8.ԳՐԱՀԱՄ ՖՈՒԼԼԵՐ - ԵՎՐՈՊԱՆ ԿՕԳՏԱԳՈՐԾԻ ԹՈՒՐՔԻԱՅԻՆ ԵՎ ԴԵՆ ԿՇՊՐՏԻ 133
9. ԺՈԶԵՖ ԼԻԲԵՐՄԱՆ. ԱՄՆ-Ի ՍԵՆԱՏՈՐ- «ԲԱՆԱԶԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» 135
10. ԵՎԳԵՆԻ ՊՐԻՄԱԿՈՎԻ ԱՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆ.ՆՐԱ ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆ ԵՎ ԿԱՐԾԻՔԸ ՀԱՅԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 137
11.ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ. ԱՍԻԱՅԻ ԵՎ ԱՖՐԻԿԱՅԻ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ. ԵՎԳԵՆԻ ՊՐԻՄԱԿՈՎԸ. ԹՈՒՐՔԻԱՅԻ ԼՐԱԳՐՈՂ ՄՅՈՒՄԹԱԶ ՍՈՅՄԱԼԸ 143
12. ԿԱՐԵՆ ՍԵՐՈԲԻ ԴԵՄԻՐՃՅԱՆ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ(1974-1988 թթ). ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ ՀԱՏՈՒԿ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐԵՑ ՀԱՋՈՂ 147
13.ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԵՎ ՄԱՅՐ ԹԵՐԵԶԱՆ ... 149
14. ՔՆՆԱՐԿՈՒՄ ՊՈԼ ԳՈԲԼԻ ՀԵՏ 161

15. ՔՆՆԱՐԿՈՒՄ ԱՄՆ-Ի ՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՋՈԱՆ ԷԴԵԼՄԱՆ ՍՊԵՐՈՅԻ ՀԵՏ 165
16. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ՊՐՈՖԵՍՈՐ ՎԻԼՅԱՄ ՔՎԱՆԴՏԻ ՀԵՏ 168
17. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ, ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԶՐՈՒՅՑՆԵՐ ՑՎԵՏԱՆԱ ՊԱՍԿԱԼԵՎԱՅԻ ՀԵՏ 173
18. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԱՄՆ-Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՎԻԼՅԱՄ ՊԵՐՐԻԻ ՀԵՏ 179
19. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԱՄՆ-Ի ՊՐԵԶԻԴԵՆՏ ՔԼԻՆԹՈՆԻ ՀԱՏՈՒԿ ՕԳՆԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ԱՎԱԳ ԴԻՐԵԿՏՈՐ ՊՐՈՖԵՍՈՐ ՄՈՐԹՈՆ ՀԱԼՊԵՐԻՆԻ ՀԵՏ 182
20. ՀԱՐՑՈՒՄ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ (ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ) ՋԵՅՄՍ ԲԵՅՔԵՐԻՆ 185
21. ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՎ ՀԱՆԳԱՄԱՆԱԼԻՑ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԱՄՆ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՊՐԵԶԻԴԵՆՏ ՀԵՐՄԱՆ ՊԻՐՉՆԵՐԻ ՀԵՏ 189
22. ՀԱՆԴԻՊՈՒՄ ԼԻԲԱՆԱՆԻ ՊՐԵԶԻԴԵՆՏ ԱՄԻՆ ԺՄԱՅԵԼԻ ՀԵՏ. ԱՄԻՆ ԺՄԱՅԵԼ- «ՀԱՅԵՐՆ ՈՒ ԱՐԱԲՆԵՐԸ ԵՂԲԱՅՐՆԵՐ ԵՆ» 191
23.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՐԵԶԻԴԵՆՏ ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ 194
24. ՀՈՒՇԱԳԻՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՐԵԶԻԴԵՆՏ ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ 201
25. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՐԵԶԻԴԵՆՏ ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ 205
26. ԳԵՐՄԱՆԻԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՆ 1878 ԹՎԱԿԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ. 209
Զեկուցագիր 209
27. ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՇՈՒՐՋԸ ԴԵՊՔԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 215
28. ԴՌՆԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ ԴԵՊԻ ՄԻՋԻՆ ԱՍԻԱ ԵՎ ԱՆԴԿՈՎԿԱՍ 220
29. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՆ՝ ՉԵԶՈՔՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ 230

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՆ՝ ՉԵԶՈՔՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ» ՏԱՐԲԵՐԱԿԸ 233
I. ԿԱՐԳԱՎԻՃԱԿ (ՍՏԱՏՈՒՍ) 233
II. ՍԱՀՄԱՆՆԵՐԸ 233
III. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳՈՏԻ 233
IV. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍՏԱՏՈՒՍ 234
V. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 234
VI. ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐ 235
VII. ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ 235
VIII. ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ 236
IX. ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐ 236
X .ԳՐԱՆՑՈՒՄ ՄԱԿ-ՈՒՄ 236
Միջազգային արձագանքներ Լեռնային Ղարաբաղի չեզոքության կարգավիճակի վերաբերյալ 237
30. ՔՆՆԱՐԿՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ԱՄՆ-Ի ՍԵՆԱՏՈՐ ՍԵՄ ԲՐԱՈՒՆԲԱԿԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ՔՐԻՍՏԻՆԱ ՌՈԿԿԱՅԻ ՀԵՏ 245
31. ԱՄՆ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XXI ԴԱՐԻ ՇԵՄԻՆ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՐՍԻ ՎՐԱ 249
32. ՀՅՈՒՍՏՈՆԻ ՌԱՅՍ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ, ԱՄՆ, ՋԵՅՄՍ ԲԵՅՔԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԴԻՐԵԿՏՈՐ ԷԴՎԱՐԴ ՋԵՐԵՋՅԱՆԻ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐԸ՝ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ՀՀ ՆԱԽԱԳԱՀ ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ 258
33. ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՄՆ-Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ, ՊԵՆՏԱԳՈՆԻ ԵՎ ԿՈՆԳՐԵՍԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ԷՌՆԵՍՏ ՎԻՄԲՈՒՇԻ ՀԵՏ 261
34. ՔՆՆԱՐԿՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏՈՒՄ. ՀԱՅԱՍՏԱՆԸ, ԿՈՎԿԱՍԸ ԵՎ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ 265
35. ՔՆՆԱՐԿՈՒՄ ԱՄՆ-Ի ՊԵՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԳԾՈՎ ՀԱՏՈՒԿ ԲԱՆԱԳՆԱՑԻ ՏԵՂԱԿԱԼ ՖԻԼԻՊ ՌԵՄԼԵՐԻ ՀԵՏ 268
36.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ ՊԱՐՈՆ ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆՅԱՆԻՆ 272
37. ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ ՊԱՐՈՆ ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆՅԱՆԻՆ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԱ-
ՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ», ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ …… 276
38.ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ ՊԱՐՈՆ ՎԱՐԴԱՆ ՕՍ-
ԿԱՆՅԱՆԻՆ. ԻՍՐԱՅԵԼԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒ-
ԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ ԶՐՈՒՅՑԻ ՄԱՍԻՆ 280
39.ՆՈՐ ՍԱՀՄԱՆՆԵՐ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՄԱՐ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԱՍԻԱ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍ 286
40. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՐԵԶԻԴԵՆՏ ՊԱՐՈՆ
ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ. ՄԵՐ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ ԱՄՆ-Ի
ՆԱԽԿԻՆ ՊՐԵԶԻԴԵՆՏ ՋԻՄՄԻ ԿԱՐՏԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ
ԶԲԻԳՆԵՎ ԲԺԵԺԻՆՍԿՈՒ ՀԵՏ 291
41. ՀԱՅ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԵՎԵԼԱԱՍԻԱԿԱՆ ՈՒՂ-
ՂՈՒԹՅՈՒՆԸ 298
1.Հայ արևելագիտությունը՝ Հայաստանի համար ստրատեգիա-
կան նշանակություն ունեցող ազգային գիտություն 298
42. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՐԵԶԻԴԵՆՏ ՊԱՐՈՆ
ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր 315
43.. ՄԵՏԱՔՍԻ ՈՒՂՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍՏՐԱՏԵԳԻԱՆ . ՃԱՊՈ-
ՆԻԱՅԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ 321
44. ՄԵԾ ԵՂԵՌՆ - ԳԵՆՈՑԻԴ - ԱՐՄԵՆՈՑԻԴ 331
Հայոց ցեղասպանությունը ցեղասպանագիտության հայեցա-
կարգային համակարգում ……... 331
1. Ցեղասպանագիտությունը՝ որպես գիտական նոր ուղղու-
թյուն ……. 332
2. Ռաֆայել Լեմկինը, «Գենոցիդ» եզրի գյուտը և հայկական նա-
խանյութի նշանակությունը նրա հայտնագործության մեջ ……. 337
3. Արմենոցիդը՝ «Հայասպանության» ամենագենոցիդային գե-
նոցիդ ……..... 342
Առաջին՝ հայ պոտենցիալ զինական ուժի ֆիզիկական ոչնչա-
ցումը 344
Երկրորդ՝ «Պոլիտիցիդ» - «Քաղաքական սպանություն …… 349
45.ԴԱՀԻՃ ԵՎ ԶՈՀ . ՑԵՂԱՍՊԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՑԵՂԱ-
ՍՊԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԴՐՈՒՅԹԸ 352
46. ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒ-
ԹՅՈՒՆԸ, ՆՐԱՆՑ ԱՐԺԱՆԻ ՊԱՏԻԺԸ ՀԱՅ ՎՐԻԺԱՌՈՒՆԵՐԻ
ԿՈՂՄԻՑ 357

47. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՆՑՈՒՄԸ ՀՈՒԶԱԿԱՆ - ԶԳԱՅԱԿԱՆԻՑ ԳԻՏԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ: ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ - ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ 364
48. ԹՈՒՐՔԻԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԽՏՄԱՆ ԻՆԴՈՒՍՏՐԻԱՅԻ ՀԻՄՆԱԴԻՐ..... 368
49. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ 372
Ա. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ ՊԵՏԱԿԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ 373
1. Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչել են հետևյալ պետությունները 373
Հայոց ցեղասպանության ճանաչումը ինքնավար, նահանգային և ռեգիոնալ միավորների օրենսդիր և կառավարող մարմինների կողմից 375
Հայոց ցեղասպանության ճանաչումը Եվրամիության երկպալատանի օրենսդիր մարմնի՝ Եվրոպական պառլամենտի և Եվրոպայի խորհրդի կողմից 379
Բ. Հայոց ցեղասպանության ճանաչումը ոչ կառավարական կազմակերպությունների մակարդակով..... 382
Հայոց ցեղասպանությունը ճանաչել է Խաղաղության կողմնակիցների Համաշխարհային կոնգրեսը 383
Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը և Հայոց ցեղասպանության ճանաչումը 384
Երիտասարդ մարդկանց քրիստոնեական ասոցիացիան (ԵՄՔԱ) Հայոց ցեղասպանության ճանաչումը 386
- Ժողովուրդների մշտական տրիբունալի դատավճիռը երիտթուրքերի գլխավոր հանցանքի՝ Հայոց ցեղասպանության կապակցությամբ 387
Նոբելյան մրցանակակիրները Հայոց ցեղասպանությունը Թուրքիայի կողմից ճանաչելու, հայ-թուրքական հաշտեցման և հայ-թուրքական սահմանները բացելու մասին 389
- Թուրքիայի Մարդու իրավունքների ասոցիացիայի Ստամբուլի բաժանմունքի դիրքորոշումը՝ «Խոնարհում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին» 392
50. Ա Մ Փ Ո Փ ՈՒ Մ. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ –ԱՐՄԵՆՈՑԻԴ-- ՀԱՅԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԴԵՆ ՄԻՋԱԶԳԱՅՆՈ-

ՐԵՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ Է 396
51. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԻՍՐԱՅԵԼԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՐՈՒ-ԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ: ԱԶԳԱՅԻՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱ-ԾՆՈՒՆԴ. ՀԱՅԱՍՏԱՆ - ԻՍՐԱՅԵԼ . ԳԻՏԱԺՈՂՈՎ 399
52. ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ 417

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՆԸՆԴՄԵՋ ՇՂԹԱՆ ԴԱՐԵՐԻ ԽՈՐՔԻՑ ՄԻՆՉԵՎ XXI դ. ՍԿԻԶԲ

ՊԱՏՄԱԲԱՆ-ՄԻՋԱԶԳԱՅՆԱԳԵՏԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Խմբագիր՝ Ա. Սահակյան
Համակարգչային էջադրումը՝ Վ. Պապյանի

Հրատ. պատվեր № 1048
Ստորագրված է տպագրության՝ 27.10. 2020թ.:
Չափսը՝ 60 x 84 1/16, 26,75 տպագր. մամուլ:
Տպաքանակը՝ 200 օրինակ:
Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24: